ԿՑԱՆՔԻ ԲՈՎԻՑ

ԴԵՊԻ ՊԱՆԴԽՏՈՒԹՑՈՒՆ

Մայրս վերջին անգամ գրկեց ինձ, համբուրեց և ասաց.

— Գնաս բարով, թող հանապարհդ փուշեր չտեսնի:

Հայրս չհամբուրեց ինձ: Այդ լռին և ինքնամփոփ մարդը երբեմ իր հայրական սերը չէր արտահայտում սովորական գուրգուրանքով: Բայց, նայելով նրա մռայլ և հուժկու դեմքին, ես զգացի՝ որքան խոր է նրա վիշտը: Կյանքի դաժանությունը ստիպել էր նրան բռնել իր միակ որդու ձեռը և գցել անհայտության ծովը, լավ զգալով, որ նա լողալու համար չունի ոչ մի փորձ:

Ես գնում էի մի երկիր, ուր գնում էին շատ-շատերը բախտ որոնելու: Այնտեղ մարդկային մտքի ու ձեռքի աշխատանքը նոր միայն սկսել էր գնահատվել որպես շուկայի ապրանք և հարստահարվել: Ես գնում էի ոչ բախտ որոնելու, ոչ հարստություն ձեռք բերելու և ոչ անուն վաստակելու, այլ մի կտոր հաց շահելու մորս և երկու քույրերիս համար: Հորս անսպասելի սնանկությունը մեզ վերցրել էր թանկագին գորգերից և գցել չոր գետնի վրա:

Ես չունեի գոյության կովի համար ոչ մի միջոց և ոչ մի պատրաստություն, բացի իմ պատանի հասակից և պողպատյա առողջությունից: Ես չունեի ոչ մի նպատակ, ոչ մի երազ, բացի օրվա պարենս վաստակելուց և հորս պարանոցի վրա մի ավելորդ լուծ չդառնալուց: Միակ փափագս շարունակել ուսումս՝ արդեն մեռել էր այն օրը, երբ հայրս ասաց. «Որդի, ուսումը հարուստների որդկերանց համար է, ֆո հայրն այժմ ոչինչ չունի»:

Ազատվելով մորս խանդավառ գրկից, ես սրբեցի երեսս նրա ջերմ արցունքներից և նստեցի կառք:

Կառք: Դա մալականի մի մեծ փուրգոն էր՝ մինչև կամարածև ծածկոցը լի զանազան ապրանքներով: Ես բարձրացա ահագին հակերի վրա և ինձ համար ընտրեցի մի հարմար անկյուն: Բացի ինձանից, այնտեղ կային երեք ճամփորդներ՝ մի գիհեվաճառ, որ գնում էր Բաքու գինետուն բանալու, մի շատ գեր և շատ գեղեցիկ կին տեղական զգեստով և սրա պատանի որդին՝ իր նման գեղեցիկ:

Կառավար մալականը, իր տեղը հարմարեցնելով, բարձրացրեց երկայն մտրակը և սուլեց: Նախ շարժվեց մեջտեղի ձին, պարանոցը երկարացնելով, ապա մյուս երկուսը: Կառքը ճոճոաց և հետո արձակեց մի այնպիսի դղրդյուն, որ, կարծես, մի մեծ տուն էր խորտակվում:

Մենք հեռացել էինք բավական, բայց ծնողներս դեռ կանգնած էին միևնույն տեղում: Մայրս շարունակ հեկեկում էր: Այդ երևում էր նրա ուսերի վար ու վեր շարժումից: Հայրս չոխայի երկայն թևերի տակից բարձրացրեց իր ձեռները դեպի երկինք և խնդույն գցեց վայր: Արդյոք նա իմ ճանապա՞րհն է օրհնում, թե՞ իր բախտն անիծում: Բայց զգում, էի, որ իմ ներկայությամբ զսպված արցունքը այժմ հեղեղում է առատորեն նրա հուժկու դեմքը:

Ես շարո ւնակ նայում էի դեպի ետ, ինչպես մերձավորներից բաժանվող ախորակաև, որ հույս չունի երբևէ նրանց նորեն տեսնելու: Կառքն իր ետևից բարձրացնում էր նոսր փոշի, որ օծանվում էր մայր մտնող արեգակի նարնջագույն շողերով: Երբ բարձրահասակ հորս երկայն փափախի սուր ծայրը չքացավ այդ ոսկեզօծ փոշու մեջ, ինձ պաշարեց արտասովոր տրտմություն: Ես գցեցի հրաժեշտի մի թախծալի հայացք իմ ծննդավայրի վրա: Այնտեղ էի անցկացրել իմ մռայլ մանկությունը և վաղաժամ տվայտանքներով լեցուն պատանեկությունը:

Թշվառ և այնուամենայնիվ զմայլելի բաղամ: Վերջին զարհուրելի երկրաշարժից այնտեղ քար քարի վրա չէր մնացել, բայց դարձյալ գեղեցիկ էր նա արտաքուստ, ինչպես գեղեցիկ է գեղեցկուհին նույնիսկ ցնցոտիների մեջ: Նրա փլատակներն անթիվ բարդիների, կաղամախիների ու թթենիների միջից նայում էին որպես միջնադարյան շքեղ դղյակներ: Նրա խորտակված եկեղեցիների ու մզկիթների կանգուն պատերը նմանվում էին հոյակապ աշտարակների, ուր, կարծես, գերված էին առասպելական գեղեցկուհիներ իրանց ողբերգական ճակատագրով: Ամեն ինչ ողողվել էր

թաղվող արեգակի հեղեղուն ճառագայթներով: Հեռվից լսվեց երեկոյան զանգերի ձայնը: Ինձ թվաց, որ այդ ձայնը գալիս է երկնից որպես աներևույթ ոգիների երգեհոն,-այնման ախորժալուր էր նա և այնման մելոդիկ: Մերձակա մզկիթի կիսավեր աշտարակից լսվեց թուրք մոլլայի ազանը: Նրա մթին ստվերը բոսորագույն երկնակամարի վրա նկարվել էր որպես մի թևատարած և անշարժ թռչուն: Ձեռներով ականջները հովանավորած՝ զիլ ձայնով կոչ էր անում հավատացյալներին՝ կատարել երեկոյան սրբազան նամազը, աղոթել և փառաբանել երկնավորին: Մարդկային մտքի ու բնության զարմանալի հակասություն. սոսկալի աղետը վերագրելով աստծուն, մարդիկ դարձյալ պաշտում էին նրան և այնման ջերմեռանդորեն, որքան շատ էին տառապում նրանից:

Լռեցին զանգերը, կամաց-կամաց թուլանալով՝ չմացավ մուեզզինի ձայնը: Արեգակը, դաշտերից ու ձորերից բաշելով ոսկեգույն շղարշը թաթխվեց մանիշակագույն լեռների ետևում:

Մնա՜ս բարով, անգին ծննդավայր: Այսօր ավելի բան կես դար է ես չեմ տեսել, և, ով գիտե, կունենա՞մ և բախտ նորեն տեսնելու Ֆո փաղաքուշ կերպարանքը, որ այնման պայծառ է իմ հոգնած հիշողության մեջ և այնման խեղճ, որքան խեղճ էր իմ մանկությունը:

Կուչ գալով ֆուրգոնի մի խորշում, գինու երկու տակառների միջև՝ ես ճիշ արի զսպել արտասուս անարդար պատժված մանկան պես: Եվ զուր, շատով իմ դառը հեծկլտանքը խառնվեց անիվների սուր դղրդոցի և կառավարի սուլոցների հետ: Ա՜խ, զանգերի այդ վերջին ղողանջյունի, արեգակի այդ վերջին շողերի հետ, կարծես, իմ էությունից անջատվեց ինչ-որ թանկագին մի կտոր, ընկավ ապագայի մթության մեջ և մեռավ: Ձկա այլևս մարդու համար անապական երջանկություն այն օրից, երբ նա բաժանվում է ծննդների գուրգուրանքից:

Ինչ փույթ, որ այժմ ես ազատ եմ, իմքնագլուխ, իմ առջև կանգնած էր անհայտ ճակատագիրը, ի՞նչ ապագա է հյուսում արդյոք այս սֆինքսն ինձ համար, և այսուհետև ո՞վ պիտի պաշտպանի ինձ կյանքի ասպարեզում:

Արցունքներիս միջից մի անգամ ևս նայեցի դեպի ետ: Մութն արդեն կլանել էր կիսավեր բաղաքն իր շրջակա լեռներով ու ձորերով: Երկինքը զարդարվեց աստղերով: Այդտեղ էր, որ ես առաջին անգամ մտածեցի իմ տասնյոթամյա փոքրիկ անցյալի մասին: Եվ նա պատկերացավ իմ առջև իր ամբողջությամբ:

Վեց տարեկան էի, երբ մի օր, առանց իմ ծնողներին հարցնելու, վազեցի մեր դրացի Սարգիս վարպետի ուսումնարանը: Այդտեղ էին ոմանք իմ հասակակիցներից: Ես չուզեցա նրանցից ետ մնալ, թեև չգիտեի՝ ինչ տարբերություն կա փողոցի և դպրոցի մեջ:

Սարգիսը բողոքականների պարագլուխն էր: Դա մի հեզահամբույր ծերուկի էր, բարձրահասակ, առույգ, ժպտուն: Երբ նա փողոցով անցնում էր, մի տարօրինակ հաճույք էի զգում, նայելով նրա ճերմակ մորուքով զարդարված բարի դեմքին: Ինձ թվում էր, որ նա մի առանձին սեր է զգում դեպի մանուկները, թեև իմքը չուներ զավակներ, ամուրի լինելով: Նա հարգված էր ամենքից, նույնիսկ ոչ բողոքականներից:

Բարեբախտաբար, հայրս այդ ժամանակ բացակա էր բաղաքից, ապա թե ոչ անկասկած պիտի ինձ պատժեր ըմբոստ վարմունքիս համար, մանավանդ որ նա առհասարակ բողոքականներին չէր սիրում և նրանց անվանում էր «Հուդայի ծնունդ»:

— Ի՞նչ ես ուզում, զավակս, — հարցրեց Սարգիս վարպետը գլուխս փաղաքշաբար շոյելով:

— Ուզում եմ կարդալ ու գրել սովորել, — պատասխանեցի ես իմ ամաչկոտ բնույթին անսովոր համարձակությամբ:

— Ծնողնե՞րդ են ինձ ուղարկել ինձ մոտ:

— Այո՛, — ստեցի ես, վախենալով՝ միգուցե հակառակն ասեմ, չընդունվեմ:

— Ապրե՛ս, այսօրվանից դու իմ աշակերտն ես: Անո՞ւնդ:

— Ալեքսանդր:

— Ազգանունդ գիտեմ, դու ուստա Միհասի որդին ես: Ասա ծնողներիդ, որ ես բեզ կսիրեմ հարազատ հոր պես: Տեսնո՞ւմ ես, այդ բոլոր մանուկները իմ զավակներն են:

Մայրս զարմացավ իմ հանդգնության վրա, բայց չընդդիմացավ իմ ցանկության: Ավելին, նա մինչև անգամ պարծեցավ, որ իր որդին իմ կամքով «ուզում է մարդ դառնալ»: Նա իմը թեև անգրագետ էր, բայց հասկանում էր ուսման արժեքը:

— Այդ լավ է, — ասաց նա, — երբ դու գրել ու կարդալ կսովորես, էլ ես ուրիշներին չեմ տալ կարդալու հորդ նամակները: Իմ նամակներն էլ դու կգրես:

Եվ առանց տատանվելու նա գնեց մի այբբենարան և մի օրվա մեջ մետաքսյա կտորից կարեց մի գեղեցիկ «հաբզյա» (երկբերան տոպրակ), որի մեջ պիտի պահեի դպրոցական պիտույքներս:

Մի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ Ղուբայից, ուր նա լինում էր տարվա մեծ մասը: Նա, իհարկե, բարկացավ ինձ վրա, երբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուգն արարքի մասին, բայց ոչ այնչափ, որչափ կարծում էի: Միայն խստիվ պատվիրեց ինձ Սարգիս վարպետից գրել-կարդալ սովորել, բայց նրա հեթանոսական բարոզները չլսել: Երբ խրախուսված բաց արի այբբենարանս և կարդացի մի քանի տող, այն ժամանակ նա ավելի մեղմացավ: Պարզ էր, որ նա էլ, անգրագետ լինելով, հասկանում էր գրագիտության արժեքը: Հետևյալ օրը, ինձ ճանապարհ դնելով ուսումնարան, նա ասաց.

— Գնա՛, ավելի լավ է ուսումնարանում նստել, քան շուն-շան որդիների հետ փողոցում վազվռտել:

Եվ դառնալով մորս՝ ավելացրեց:

— Հը, ի՞նչ կասես, Սոնա, լակոտդ հետո մեզ էլ գրել-կարդալ կսովորեցնի, հե՞: Բայց առաջ իր բույրերին, հետո ծնողներին:

— Ես բույրերին էլ ուզում եմ ուսումնարան ուղարկել:

— Թող նրանք կույսի մոտ գնան, աղջիկները տղերանց հետ չպիտի խառնվեն, թե չէ, ճանաչո՞ւմ ես ինձ:

Եվ, այս ասելով, հայրս իր կապույտ աչքերն այնպես ոլորեց, որ ես սարսափեցի մորս մասին: Թեև երբեք նա իր կնոջ վրա ձեռք չէր բարձրացրել: Առհասարակ նա այնքան դաժան մարդ չէր, որքան կարելի էր կարծել՝ նայելով նրա չափազանց բարձր հասակին և խոժոռ դեմքին:

Չեմ հիշում՝ տարի ու կես թե երկու տարի մնացի Սարգիս վարպետի ուսումնարանում: Հիշում եմ այն երջանիկ օրը, երբ ծնողներս բարեկամների խորհրդով ինձ տեղափոխեցին եկեղեցական դպրոց: Դժբախտաբար, այդտեղ էլ երկար ժամանակ չպահեցին: Հայրս ուզում էր, որ ես ավելի ռուսերեն սովորեմ, քան հայերեն: Նա ասում էր.

— Հայերեն լեզվի մեջ հաց չկա. եթե չես ուզում տերտեր կամ վարդապետ լինել, գնա ռուսերեն սովորիր: Երբ այդ օրհնված լեզուն սովորես, ես բեզ կուղարկեմ Մոսկով, որ դու ինքդ ծախես իմ տորոնը Մառոզովին: Այդ ջհուդ Մարդախայը ամեն տարի ինձ խաբում է՝ հաշիվներս խառնելով:

Ես անցա քաղաքային դպրոց և երջանիկ էի, որ շուտով պիտի խոսեմ ռուսերեն, ինչպես մեր հարևան պրիստավ Միխայել-բեգ Ավշարովը: Ես, իհարկե, չէի երազում պրիստավ կամ չինովնիկ դառնալու, որովհետև հայրս ավելի լավ ապագա էր խոստանում: Նա ասում էր.

— Աշխարհի տերը հիմի վաճառականն է. թագավորին ծառայելով՝ մինչև կյանքիդ վերջը ծառա էլ կմնաս, մեջքդ մեծերիդ մոտ ծռած:

Խե՛ղճ մարդ, չէր գուշակում, որ մի քանի տարուց հետո իմն էլ շատերի հետ պիտի սնանկանա և ընկնի ծայր աստիճան չքավորության մեջ:

Ա՛հ, բախտավոր չի եղել ոչ իմ մանկությունը և ոչ էլ պատանեկությունը: Այն օրից, երբ սկսել եմ բայլել, ծծել եմ կյանքի դառնությունները: Միջավայրը, ո՞ւր ծնվել եմ, անթափանցելի խավար էր, ուր կարող էր խեղդամահ լինել նույնիսկ իմնից շատ պակաս զգայուն հոգին: Ես ունեի մի մայր, որ հեզության տիպարն էր, մի զմայլելի գեղեցկուհի, որ ծնվել էր ճակատագրի հալածանքը լռությամբ կրելու համար: Եվ մի հայր, որ որբահաս արտաքուստ դաժան էր, նույնքան բարի էր իր հոգու խորքում: Որպես զավակ ես սիրված ու փայփայված էի, հետևաբար նրանց վերաբերմամբ ես գանգատ չունեմ: Իմ մանկական և պատանեկան տվայտանքների աղբյուրը միջավայրն էր, մթնոլորտը, որ ես շնչում էի, և այն, ինչ որ տեսնում ու լսում էի ոչ միայն դրսերում, այլև տանը: Ծնողներիս հոգեկան հանգստությունը խափանված էր հորեղբորս ժպիրի բնույթով և անգուսպ վարք ու բարքով: Այդ մարդը մեր գերդաստանի չար ոգին էր, մի անվերջ սպառնալիք իր մերձավորների համար: Որբահաս հայրս աշխատասեր էր, ժուժկալ, ամոթխած և հավատարիմ ամուսնի պահանջներին, նույնքան նրա կրտսեր եղբայրը խռովարար էր և ենթակա իր անձնական կրքերին: Ատելով աշխատանքը, նա սիրում էր վայելել կյանքի հաճույքները, որ նրա համար ամփոփված էին թղթախաղի, հարբեցողության և իգամոլության մեջ: Գրեթե օր չէր անցնում, որ ես չտեսնեի նրա գժտությունը հորս հետ կամ լսել նրա անիրավ պահանջները և փողոցային հայհոյանքները: Նա անարգում էր ոչ միայն իր ավագ եղբորը, այլև նրա անմեղ կնոջը, իմ սիրեցյալ մորը: Քանի-քանի անգամ երկու եղբայրների կռիվների ժամանակ իմ մեջ միտք է հղացել հորս պաշտպանելու համար հարձակվել կատաղած կատվի պես նրա խռովարար եղբոր վրա և եղունգներով դուրս գջլել նրա արյունալի աչքերը: Բայց տատս պաշտպանում էր իր անգուսպ որդուն, իսկ ես սիրում էի տատիս իմ մատաղ հոգու ամբողջ զորությամբ: Խե՛ղճ պառավ, հիշում եմ ֆո դառն արցունքները և կսկծալի ճիչերը, երբ կրտսեր որդիդ բռնում էր մեծ որդուդ կոկորդը և, բռունցքը բարձրացնելով, գոռում էր.

«Փող տուր, թե չէ շանսատակ կանեմ»:

Հայրս հասակով կես արշին բարձր էր իր եղբորից և կրկնակի ուժեղ: Եթե կամենար, մի հարվածով կարող էր նրան գետին տապալել, բայց նա այդ չէր անում, նա թե՛ խնայում էր իր մոր արցունքները և թե՛ ամաչում էր կուռքերից նայող հարևաններից:

Ես գիշերում էի տատիս հետ առանձին սենյակում: Ամեն գիշեր, երբ նրա անառակ որդին ուշանում էր դրսերում, լսում էի նրա աղոթքի մրմունջները. «Տեր, դու նրան պահիր, պահպանիր չար փորձանքներից»: Երևի նրա մայրական սիրտը նախազգում էր, որ մի օր, վերջապես, գալու է մեկն այդ չար փորձանքներից:

Եվ եկավ: Ուշ գիշեր էր: Ես վաղուց պառկել էի անկողին: Տատս այս անգամ անհանգիստ էր սովորականից ավելի, ես էլ նրա պատճառով չէի կարողանում քնել, թեև պառավին խաբելու համար խռմփացնում էի, վերմակիս տակից վախկոտ կատվի պես դիտելով նրա շարժումները:

Վերջացնելով իր սովորական աղոթքը, տատս միհնդարի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց, որի մեջ նա պահում էր մի բուռը սևացած սիսեռներ և գետնի վրա դարսելով նրանց՝ սկսեց համարել: Այդ սիսեռները թե՛ նրա զվարճությունն էին և թե՛ միակ միջոցը իր սանձարձակ որդու բախտը գուշակելու: Երկար ժամանակ նրա ոսկրոտ մատները նորեն խառնում ու նորեն բաժանում էին սիսեռները: Նայում էր նրանց խորասուզված, շարունակ մրմնջալով մերթ աղոթք, մերթ անեծք: Վերջապես, նա սիսեռները ժողովեց կապոցի մեջ, դեն շպրտեց, պահելով միայն մի հատ: Այդ մի հատիկ սիսեռը նա դրեց հատակի վրա, դուրս բերեց իր բարձի տակից մի փունջ ասեղներ: Երեք անգամ երեսը խաչակնքելով նա ասեղները մեկիկ-մեկիկ տնկեց սիսեռի շուրջը և սկսեց նորեն աղոթել: Ջմայլելի միամտություն, պառավի սնոտի հավատով ասեղները պիտի պաշտպանեին նրա որդուն չար փորձանքներից:

Հանկարծ գիշերային լռությունն ընդհատվեց մի անսովոր դղրդյունով:

Տատս ցնցվեց, ես նույնպես: Ոտքի ելանք և դուրս վազեցինք, կարծելով, որ երկրաշարժ է: Լուսին գիշեր էր: Իր ննջարանի դռների առջև բակում երևաց հորս բարձր կերպարանքը առանց վերնազգեստի: Նրա ետևից երևաց մայրս, ոտաբոբիկ, կիսամերկ, բայց շալի մեջ փաթաթված: Զգացի, որ երկրաշարժ չէ, այլ մի ուրիշ պատճառ:

Զորս անծանոթ մարդ իրանց ուսերի վրա բերում էին հորեղբորս անշունչ մարմինը, որի գանգատն մասերից արյունը հոսում էր աղբյուրի պես, ինչպես հարյուր տեղից վիրավորված մի ցուլից:

— Ամա՜ն, բալիս սպանել են, — աղաղակեց տատս մի տարօրինակ ձայնով, որ ինձ թվաց ոչ մարդկային:

— Սպանված չէ, Ծաղիկ բաջի, մի՛ վախեճար, — ասացին չորս անծանոթները միաբերան և հորեղբորս մարմինը տարան հորս սենյակը և դրեցին հատակի վրա:

— Թող ձեզանից մեկը վազի ուստա Պետրոսին կանչելու, — ասաց հայրս:

Զորսից մեկը անմիջապես վազեց փողոց՝ բաղմի միակ և նշանավոր վիրաբույժին կանչելու: Մյուսները պատմեցին եղելությունը, աշխատելով ուշի բերել հորեղբորս: Պատահել էր հետևյալը: Հորեղբայրս, մի գիհետնից հարբած դուրս գալով, հանդիպում է իր մեծ բրոջ որդուն, որ գրեթե նրա հասակակիցն էր: Զգիտեմ ինչ պատճառով, նրանք վաղուց ատում էին իրարու: Նրանք կռվում են, հորեղբայրս չարաչար ծեծում է իր բեռորդուն, տապալելով նրան գետին, ապա բայլերը նորեն ուղղում է գիհետուն: Բեռորդին վազում է տուն, վերցնում է իր դաշույնը, վերադառնում է և, ետևից հարձակվելով իր բեռու վրա, յոթ տեղից վիրավորում է նրան:

— Անիծվի՜ նրա ծնունդը, անիծվի՛, — գոռաց տատս, — ես նրա մոր արգանդը դանակով կպատռեմ:

Եկավ վիրաբույժը, կապեց հորեղբորս վերքերը: Ուշի գալով, նա, չգիտեմ ինչ մեղքի համար, մի բանի անգամ հայհոյեց հորս: Մի բան, որի պատճառով ես հոգուս խորքում նրան մահ ցանկացա:

Մոտ երկու ամիս մարդը տառապեց անկողնում: Տատս նրա բովից չէր հեռանում և ամբողջ խնամքն իր վրա էր վերցրել: Նա այժմ ավելի հանդիստ էր, քան պղետը պատահելուց առաջ, ինչպես հիվանդն անխուսափելի անդամահատությունից հետո: Երբ վիրավորը ցավերից գանգատվում էր, պառավը հանդիմանում էր նրան:

— Տե՛ս, — ասում էր նա, իր կողը բանալով և ցույց տալով մի թիզ երկայնությամբ և երկու մատ խորությամբ մի սպի: — Իմ յարան ֆո յարից պակաս չի, ես կնիկ տեղովս բեզ նման չէի տեմտեմում: Ամո՜թ է:

Պետք է ասեմ, որ իմ տատը իր մարմնավոր ուժով մի բացառիկ կին էր: Սա բարձրահասակ էր, հաղթանդամ, թիկնավետ, ինչպես մի լմբիճ: Նրա կողմի վերքն ուներ իր պատմությունը: Մի գիշեր լեզգի ավազակները հարձակվում են նրա աղջկա տան վրա՝ կողոպտելու նպատակով: Այդ գիշեր պատահաբար տատս իր աղջկա մոտ է լինում: Ամառվա շոգի պատճառով նրանք բնած են լինում պատշգամբի վրա: Աղմուկից զարթնելով, տատս աներկյուղ դիմադրում է ավազակներին: Նրանցից երեքին մեկը մյուսի ետևից բռնում է և պատշգամբից վար գցում: Չորրորդը կարողանում է դաշույնով վիրավորել նրան և փախչել:

Այդ դեպքից հետո ազգաբնակչությունը հերոսացնում է տատիս, անվանելով նրան «ղաչաղների հոգեհան»:

Հազիվ անցել էին մի բանի ամիսներ այն պահից, երբ հորեղբայրս վեր կացավ անկողնից, նա վիրավորվեց երկրորդ անգամ մի ուրիշ իր նման մեկի հետ կռվելիս: Այս անգամ վերքը եղավ մահաբեր: Տասնյոթ օր տանջվելուց հետո նա վախճանվեց: Արյունը, որ հոսել էր նրա վերքերից, խորապես ազդել էր ինձ վրա, այնչափ, որ գիշերները երազումս անգամ նա հալածում էր ինձ: Եվ այդ պահից է, որ ես չեմ կարողանում տեսնել մարդու արյուն, առանց սարսուռ զգալու:

Հորեղբորս աղբերգական մահից հետո իրարու հետևից եկան մի շարք դժբախտություններ: Նախ 1872 թվականի երկրաշարժը գրեթե հիմնից ավերեց մեր տունը, և մենք ստիպվեցինք ամբողջ ընտանիքով տեղավորվել խոհանոցում և

ախոռատանը, որ մի հրաբխով փրկվել էին ավերումից: Ապա մի բանի ամիս անցած մեռավ տատս, որ ինձ համար մի զգալի կորուստ էր: Այնուհետև մեռավ չորս տարեկան եղբայրս՝ Գաբրիել անունով, որին սիրում էի հոգուս ամբողջ զորությամբ: Այդ բոլորին հետևեց հորս անսպասելի սնանկությունը և կատարյալ չքավորությունը:

Վերջացնելով բաղաքային դպրոցի դասընթացքը, ես ստիպված եղա խեղդել իմ մեջ ուսման ծարավը և մի որևէ գործի մտնել: Բայց ի՞նչ գործ կարող էի գտնել մի կիսավեր բաղաքում, որ ոչ արդյունաբերություն ուներ և ոչ էլ ինչ թե շատ խոշոր վաճառականություն:

Մեկը մեր հարևաններից ուներ աղի պահեստ: Նա ինձ հրավիրեց իր մոտ ծառայելու աղ կշռողի պաշտոնով: Ուրախությամբ ընդունեցի նրա հրավերը, բայց ամսականի մասին խոսք չեղավ: Ավելի բան մի ամբողջ տարի աղ կշռելով, ես ոչ մի վարձ չստացա, բացի ձեռներիս կոշտերից: Աղի պահեստանոցից անցա տեղական ոստիկանություն, նույնպես առանց որևէ ամսականի: Ինձ խոստացան ավագ գրագրի հեռանալուց կամ մեռնելուց հետո նրա պաշտոնն ինձ տալ, բայց մարդը, որ դեռ երիտասարդ էր, բնավ մտադիր չէր մեռնելու և ոչ էլ իր պաշտոնից հրաժարվելու: Ութ-ինը ամիս ծառայելուց հետո հուսահատվեցի և դուրս եկա ոստիկանատնից:

Մինչ իմ մտերս զբաղված էին անցյալովս, լսեցի գեղեցիկ ուղեկցուհուս փաղաքուշ ձայնը.

— Բալա՛ս, ինչ ֆիքր արա, ուրախ պահի ֆեզ, մենք ավելի լավ բաղաք ենք գնում, Բաքու:

— Այնտեղ ծով կա, գիտե՞ս, ծո՛վ, — ավելացրեց նրա պատանի որդին, ապա, դառնալով գինեվաճառին, հարցրեց, — այնպես չէ՞: Բալասի ապեր, Բաքուն հրաբխալի բաղաք է:

Բալասի ապերը պատրաստվում էր ընթրիք անելու: Դա մի շատ ճիւար և երկարահասակ մարդ էր, փորը մեջքին կպած, մեծ բթով և շատ մեծ բեղերով, որոնք միանգամայն ծածկում էին նրա բերանը: Նախքան պատանու հարցին պատասխանելը նա դուրս բերեց իր խուրջինից վարունգներ, մոթալի պանիր, ապխտած ձուկ, խաշած ձվեր, զանազան կանաչեղեն և մի տկճոր գինի և մեզ հրավիրեց իր սեղանին մասնակցելու: Ես ախորժակ չունեի. պատանին նույնպես հրաժարվեց: Եվ երբ գեղեցկուհին երկար թախանձանքներից հետո, վերջապես, համաձայնվեց նրա դանակի ծայրից վերցնելու կեսված վարունգի շերտը, այն ժամանակ միայն Բալասի ապերը հազաց, բեղերը սրբեց գույնզգույն թաշկինակով և ասաց Շամախու բարբառով.

— Բաքուն ես հարցնում, բալաս, Բաքուն բաղաք չէ-հրաբխ է: Հնդստան, Զինումաչին էլ որ գնաս, նրա նման բաղաք չես գտնիլ:

Եվ մի բաժակ գինի կոնծելով, բեղերը նորեն սրբեց և շարունակեց.

— Տես, մի կողմում ջուր — դա ինքը ծովն է, մյուս կողմում կրակ — դա Սուրախանիի գազն է, երեքինջի կողմն էլ նոթ — դա Բալախանի-Սաբունչին է: Ջուր, գազ, նոթ, երեքի մեջտեղում պպզած է Բաքուն: Քաղաք չի է, բաղաք, ալամաթ է:

— Ծովը մե՞ծ է, — հարցրեց պատանին:

— Վերջ չունի:

— Քանի՞ կուժ ջուր կլինի նրա մեջ, — հետաքրքրվեց պատանին, որի անունը Ստեփան էր:

Բալասի ապերը, մի մեծ կտոր պանիր դնելով բեղերի տակ, դանակը բարձրացրեց և ասաց.

— Բալամ, ի՞նչ ասեմ, հազար ասեմ, ինչ է, տասը հազար - էլի ինչ է, հազարան հազարներից խոսիր:

Հետո շարունակեց նկարագրել նավթային հանքերը, գործարանները, ծուխը, փոշին, մոծակների բազմությունը, մկների խոշորությունը և երկար կանգ առավ տների բարձրության, վողոցների լայնության և խանութների մեծության ու հարստության վրա:

Նա թե պատմում էր և թե ուտում, մերթ ընդ մերթ աչքի տակով նայելով գեղեցկուհուն, որ, հակառակ իր ծննդավայրի ավանդության, չէր էլ մտածում գայթակղեցուցիչ երեսը շալով ծածկելու: Ուտելիս ու խմելիս Բալասի ապոր նիհար կոկորդի ցցված ոսկրը շարունակ ներս էր մտնում ու դուրս գալիս, ինչպես ծոի գլուխը բնից:

Վրա հասավ գիշերը, մեր կառքը կանգ առավ առաջին կայարանում: Կառապանը մեզ առաջնորդեց մի մալականի տուն, իսկ ինքը գնաց ձիերը կերակրելու: Ինձ զարմացրեց, որ նա չգանգատվեց, թե ճանապարհը շատ դժվար էր, թե ձիերը անչափ հոգնել են, թե ինքը անոթությունից մեռնում է և այլն և այլն, այն բոլորը, ինչ որ ասում են հայ և թուրք սայլապանները մի երեք-չորս վերստ անցնելուց հետո:

Ֆուրգոնն այնպես էր ջարդոտել ինձ, որ մարմնիս բոլոր մասերը ցավում էին: Պառկելով տախտակյա մերկ բազմոցի վրա, անմիջապես ննջեցի: Ամբողջ գիշեր երազում տեսնում էի ջուր, կրակ, նավթ, մոծակներ, մկներ և Բալասի ապոր կոկորդի մեծ ոսկրը:

Արևելքն արդեն շառագունել էր, երբ Ստեփանն ինձ արթնացրեց:

— Արի՛, արի դուրս, — շտապեցրեց նա ինձ, — տես Բալասի ապերն ինչ է արել:

Դուրս եկա գավիթ և ի՜նչ տեսնեմ, գիհեվաճառն իր երկայն չուխայի լայն փեշերը կապել է մեջքին, փորի վրա կախել է մի արծաթակոթ դաշույն մի մետր երկայնությամբ և ուսովը գցել մի չախմախի հրացան, ծայրին մի զույգ երկաթե եղջյուր: Այդ տեսակ եղջյուրավոր հրացաններ ես շատ էի տեսել մեր Բաղոմում: Մեր Բաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի հանդիպելիս հրացանը հենում էին գետնի մեջ տնկած եղջյուրների վրա և այնպես կրակում, որպեսզի գնդակը չվրիպեր հրացանի շարժումից:

Բալասի ապոր դեմքը շատ խորհրդավոր էր և լուրջ: Ուսիները խոժռած և աջ ձեռը դաշույնի կոթի վրա դրած նայում էր հեռավոր հորիզոնին: Կարծես, ինչ-որ փոթորիկ էր սպասում այնտեղից:

— Ի՞նչ է պատահել, — հարցրի ես:

Ստեփանը, ձեռը դնելով բերանիս վրա, շշնջյունով արտասանեց.

— Սուս, կամաց խոսիր, Բալասի ապերը բարկանում է: Հէ՞տո, բերանը մոտեցնելով ականջիս, ավելացրեց.

— Ասում է ճանապարհի վրա ավազակներ են երևացել: Ես վախեցա, բայց շուտով հետաքրքրությունս հաղթեց երկյուղս: Այնքան բաներ էի լսել ավազակների մասին, որ փափագեցի գոնե նրանցից մեկին տեսնել մեծ ճանապարհի վրա, թեկուզ կողոպտվելու պայմանով:

Կառքը ճանապարհ ընկավ: Բալասի ապերը, լուռ, ձեռով մեզ նշան արավ ոտով իրեն հետևելու: Միայն գեղեցկուհին կառք նստեց: Ճանապարհը ծածկված էր խորդուբորդներով և դերբուկներով, ուստի մենք գնում էինք նրա եզրով: Ա՜խ, այլևս չկային իմ ծննդավայրի կանաչազարդ թփերը, ծաղկավետ հովիտները, դալարը, սառնորակ աղբյուրները, թռչունների երգեհոնը: Աջ ու ձախ մռայլ ու մերկ բլուրներ, ավազոտ տափաստաններ, աղային լճեր, ցամաքած և ճեղրակ, որպես ձյունապատ դաշտեր: Որքան մոտենում էին Բաֆվի գավառին, այնքան երկիրը մերկանում էր բուսականությունից, և երկինքը կորցնում իր հստակությունը:

Ես ու Ստեփանը հետևում էինք Բալասի ապորը, ինչպես որսորդական շներ: Նա շարունակ նայում էր մերթ հորիզոնին, մերթ աջ ու ձախ, մերթ դեպի ետ, միշտ աջ ձեռը դրած դաշույնի վրա. Մեր առջևից գնում էր ֆուրգոնը, գեփյունը շարժում էր նրա ճերմակ ծածկոցը: Ժամանակ առ ժամանակ գեղեցկուհին գլուխը դուրս էր բերում ծածկոցի տակից և

դեպի ետ նայում, մայրական ժպիտներով լուսավորելով իր զավակի ուղին: Այդ միջոցներին Բալասի ապերը, երևի, մտածելով, որ այդ ժպիտների մի մասն էլ իրեն է ուղղված, ոլորում էր գարիի հասկերի պես երկայն բեղերը և աշխատում իր նիհար կուրծքը կարելույն չափ ուռցնել: Եվ այդ վայրկյաններին նա իմ աչքում մեկն էր այն հերոսներից, որոնց տատս նկարագրել էր իր հեքիաթների մեջ:

Իսկ ավազակները տակավին չէին երևում: Կառապանը շարունակ սուլում էր՝ հանգիստ և անհոգ շարժելով իր երկայն մտրակը: Եվ նրա հանգստությունը խրախուսում էր մեզ, պատանիներիս: Աշխույժ և վառվռուն Ստեփանը, որ հինգ տարով փոքր էր ինձնից, այծյամի արագությամբ թռչկոտում էր չոր տատասկների վրայով, մերթ սուլելով, մերթ երգելով: Իսկ մայրը շարունակ ժպտում էր երջանիկ մոր ժպիտներով: Ստեպ-ստեպ Բալասի ապերը բարկանում էր Ստեփանի վրա և հրամայում կառքից չհեռանալ:

— Մորդ հույսը ինձ վրա է, — ասում էր նա, — եթե ես քեզ մի բան պատահի, քեղերս պիտի կտրեմ:

Հանկարծ փուրգոնը կանգ առավ: Բալասի ապերը հրացանը ուսից վերցրեց, առաջ վազեց: Բալասի ապերը աջ նայեց, ձախ նայեց: Ոչ ոք և ոչինչ չկար: Պարզվեց, որ կառապանը կառքը կանգնեցրել է, որ ծխերին թույլ տա ջուր թափելու: Բալասի ապերը մոտեցավ կառքին և ասաց գեղեցկուհուն,

— Ոսկի խանում, իսկի չվախենաս, ես էստեղ եմ:

Եվ հրացանը ուրեն կախեց ուսին ու ձեռը ուրեն դրեց դաշույնի վրա: Այդ բոլորը նա անում էր այնպիսի լուրջ դեմքով և խորհրդավոր ձևերով, որ ինձ վրա թողեց շատ խորը տպավորություն:

Սակայն այդ օրը ես հանույթ չունեցա ավազակներ տեսնելու և ոչ հետևյալ և ոչ երրորդ օրը, ճանապարհին հաճախ հանդիպում էինք ուղտապանների, որոնք տակառներով ճավիթ էին տանում Բաքվից Շամախի: Հեռվից նրանց տեսնելիս, չգիտեմ ինչու, Բալասի ապերը հրացանը գցում էր փուրգոնի մեջ, դաշույնն էլ թաքցնում էր չուխայի փեշերի տակ և ինքն էլ մի տեսակ խեղճանում էր:

Չորրորդ օրը միջօրեին մենք մոտեցանք Բաքվին: Երբ բարձրանում էինք «Գայլի բերան դռներ» կոչված զառիվայրով, որի գլխից պիտի երևար ծովը, Բալասի ապերը գետնից վերցնելով երկու հատ ինչ-որ ոսկրներ և մեկն ինձ, մյուսը Ստեփանին տալով՝ ասաց.

— Դրեք ատամներիդ մեջ:

— Ինչո՞ւ, — հետաքրքրվեցի ես:

Նա պատասխանեց, թե ով առաջին անգամ ծով է տեսնում, պետք է իր բերանը ոսկր դնի, այլապես եթե մի օր կամենա ծովում լողանալ, կխեղդվի: Ես հավատացի Բալասի ապոր կատակին, այնքան դեռ միամիտ էի տասնյոթ տարեկան հասակում:

Ահա և ծովը, ահա վերջապես Բաքուն իր տափակ կտուրներով, նավերի կայմերով, հանքերի բուրգերով և գործարանների թանձր ծխով: Ինձ պաշարեց մի տարօրինակ տրտմություն: Զառիվայրից իջնելով, թվաց ինձ, որ իջնում եմ մի տեսակ գեհեն, ուր պիտի հավիտենապես տանջվեմ այդ թանձր ծխի ու մրի մեջ:

Ես բաժանվեցի իմ ուղեկիցներից: Որովհետև այլևս նրանց չենք հանդիպելու, պետք է մի քանի խոսք ասեմ նրանց մասին:

Շատ տարիներ հետո ես իմացա, որ Բալասի ապերը այդ երեքօրյա ճամփորդությունից մի ահագին հերոսություն է հյուսել իր համար և պատմել է շատերին: Նրա ասելով ավազակները եկել են թվով տասներկու, յոթը ձիավոր, հինգը հետևակ, մեկը կաղ, մեկը մի աչքանի և այլն և այլն: Այսպես թե այնպես, ես այսօր էլ կարող եմ վկայել Բալասի ապոր քաջությունը, նաև նրա ջերմ փափագը՝ մեր գեղեցիկ ուղեկցուհու սիրտը գրավելու:

Տասնյոթ տարի հետո մի օր հանդիպեցի այդ կնոջը միանգամայն կերպարանափոխված: Նա իր որդուն բերել էր Բաֆու ուսում տալու համար: Մի մետաքսյա սև շալ գլխին նա դանդաղ քայլերով դուրս էր գալիս եկեղեցուց, կիրակնօրյա պատարագից հետո: Ես նրան չճանաչեցի: Մոտով անցնելիս նա կանգ առավ և հարցրեց.

— Դու Միհասի տղան չե՞ս:

— Այո՛, մայրիկ, Միհասի որդին եմ: Դուք ո՞վ եք:

— Ստեփանիկի մայրը, մխիթ չէ՞: Բաֆու եկանիք միասին, — պատասխանեց նա և ուժգին հեկեկաց:

Ես զգացի, որ նրան մի մեծ դժբախտություն է պատահել: Խե՜ղճ կին, նրա գեղեցկությունից ոչինչ չէր մնացել, բացի մի զույգ տակավին վառվռուն աչքերից: Հիշեցի նրա զվարթ ու աշխույժ որդուն, և չար կասկածը պաշարեց ինձ:

— Ստեփ... — սկսեցի ես և կանգ առա:

Թշվառ մայրը, աչքերը սրբելով, պատմեց բոլորը: Նրա որդին կարողացել էր ավարտել ռեալական դպրոցի դասընթացքը և անմիջապես մտել էր նավթային գործերի մեջ: Հարստացել էր իր բեռիների աջակցությամբ: Բայց, ընկնելով գեշ շրջան, խայխայել էր իր առողջությունը, վարակվելով սոսկալի ախտով: Հինգ տարի տանջվելուց հետո ցնորվել էր ու մեռել...

Ես լուռ համբուրեցի անբախտ մոր ձեռքը և շտապեցի հեռանալ՝ ծանր տպավորությունս փարատելու համար...

II

ԻՄ ԽՆԱՄԱՏԱՐԸ

Բավում ես իջևանեցի իմ մորաքրոջ՝ Մարիամ Աբելյանի մոտ, մինչև վիճակս իչ թե շատ կպարզվեր: Արդեն Բաֆու տեղափոխվելուս գլխավոր դրդիչը եղել էր նրա որդին՝ Ներսես Աբելյանը:

Անսահման բարի և զգայուն մորաքույրս պանդխտությանս մեջ եղավ ինձ համար երկրորդ մայր: Հիշում եմ այն ջերմ գուրգուրանքը, որով նա, սեղմելով ինձ նիհար կրծքին, իր հինգ զավակներին ավելացրեց վեցերորդը: Տասնյակ տարիներ հետո, երբ մի աշնանային օր այցելեցի նրա գերեզմանը, որ գտնվում է մորս գերեզմանի ֆով, ինձ պաշարեց կրկնակի վիշտ: Մարդիկ մի անգամ են զրկվում իրենց մորից, ես զրկվել եմ երկու անգամ:

Ես ունեի մի մորեղբայր՝ Հակոբ Բաբախանյան անունով նա պիտի զբաղվեր իմ վիճակով, ուրիշ հովանավորող չունեի: Նա մի հասարակ դերձակ էր, սակայն ուներ բազմաթիվ բարեկամներ և վայելում էր նրանց հարգանքը, որպես ազնիվ մարդ և ընտիր ընկեր:

Որոշվեց, որ ես կարող եմ ծառայել կամ մի մասնավոր գրասենյակում, կամ որևէ պետական հիմնարկության մեջ, որպես գրագիր: Չէ՞ որ ոստիկանատանը ծառայելով՝ ես առւսերեն ձեռագիրս բավական մշակել էի:

Մորեղբայրս պատվիրեց ինձ մի որևէ բան գրել խնամքով և տալ իրան: Ես տողացույցը դրեցի մի մեծ թերթի տակ և ամենայն զգուշությամբ ընդօրինակեցի գեղագրական տետրակի ամենագեղեցիկ էջերից մեկը:

— Ափարի՛մ տղա, ափարի՛մ, մարգարիտներ ես շարել, — գոչեց մորեղբայրս, ձեռագիրս տեսնելով, — ես ֆռ մասին արդեն խոսել եմ Համբարձում-բեգի հետ: Գիտե՞ս, նա մեծ պաշտոն ունի նահանգական ատյանում:

Բաֆուն հափշտակել էր ինձ: Ամբողջ օրերով թափառում էի նրա փողոցներում և ողորմելի պարտեզներում: Ամենից դուրեկանն ինձ համար ծովափն էր: Ժամերով պտտում էի նավամատույցները, դիտում էի լայնատարած ծովը և նրա վրա սփռած անթիվ նավերն ու նավակները: Ամեն ինչ ինձ համար նոր էր, տարօրինակ, գրավիչ և ինչպես մի երազ, նայում էի մեղմիկ սահող մակույկներին, որ կարապների պես լուռ ու մունջ լողում էին դես ու դեն: Նայում էի

հեռացող նավերի փխված առագաստներին, և նրանք ինձ հիշեցնում էին ծննդավայրիս թևատարած ուրուրները ջինջ երկնքի վրա: Եվ իմ մտքերը սլանում էին հեռու ու հեռու, անծանոթ երկրներ, ուր մարդիկ մանուկ հասակում մարդկային արյուն չեն տեսնում և ոչ էլ իրանց մերձավորների տառապանքներն ու մահը, ուր ամենքը հավասար երջանիկ են: Պատանեկան մոլի երազնե՛ր, որ ապագայում պիտի անողոքաբար խորտակվեին:

Ես նախանձում էի ամենքին, ով գնում էր այդ նավերով, մանավանդ շոգենավերով: Ինձ թվում էր, որ գնացողները խղճում են մնացողներին, որպես բախտից զրկվածներին, որոնց թվումն էի և ես: Ես նախանձում էի անգամ նավերի աշխատավորներին, որոնց նավթոտ ու մրոտ բազուկները փայլփլում էին կեղտոտ տախտակամածների վրա, և որոնց լայն թիկունքին անամոթաբար ժպտում էր գերմարդկային աշխատանքը, որպես անողոք բռնակալ: Ի՜նչ փույթ, որ նրանք տնքում են իրենց ծանր լծի տակ, չէ՞ որ նրանց համար է ստեղծված այդ լայնածավալ ծովն իր խորհրդավորությամբ և հեռավոր երկրների գեղեցկությամբ: Իսկ այդ անթիվ ու անհամար ճայերի տարմերը, որ կարկաչելով թառ են լինում նավերի խաչածև կայմերի վրա, մի՞թե ավելի բախտավոր չեն, քան ես:

Մի օր մի խումբ աշակերտներ ռեալական դպրոցի համազգեստով շոգենավով գնում էին չգիտեմ ուր: Ես կանգնած էի նավամատույցի ծայրում և նայում էի, թե ինչպես նավի հեռանալով խարխխը կամաց-կամաց դուրս էր գալիս ծովից: Երբ երկաթե շղթան վիթխարի օձի պես փաթաթվեց նավի կտուցին, աշակերտներն սկսեցին խմբովին երգել: Բոլորն էլ իմ տարիքի պատանիներ էին, բոլորն ուրախ, իսկ ես նրանց հասակում արդեն կյանքի հոգսերով ծանրաբեռնված: Սիրտս թնդաց, աչքերս լեցվեցին արցունքով, մի վայրկյան գլուխս պտտվեց, և գուցե ինձ ծովը նետեի, եթե լինեի բավականաչափ քաջ և բավականաչափ հիմար:

Պետք է վերջապես մի գործ գտնել: Այս հույսով ամեն օր գնում էի մորեղբորս մոտ: Ոչ նրա տունը, այլ արհեստանոց, որովհետև նրա կինը մի անբարեհամբույր արարած էր: Նա չէր սիրում իր մարդու ազգականներին, և ինքն էլ սիրված չէր նրանցից:

Արհեստանոցը գտնվում էր ծովափի մոտ, մի կիսախարխուլ բարվանսարայի նեղ անցքի մեջ: Այնտեղ ես ծալապատիկ նստում էի միդդարի վրա, չմուշկներս դնելով բովս, ինչպես մի պարսիկ դեղավաճառ: Ես անտարբեր դիտում էի խանութներն ու անցորդներին: Երբեմն նիրհում էի, որպես վայել է անգործ արհեստագուն:

Մի զվարթ և կատակասեր մարդ էր Բեռիս: Փիլիսոփա էր, ինչպես առհասարակ բոլոր դերձակները, բայց ոչ հոռետես, չնայելով կնոջ հետ ունեցած ամենօրյա ընդհարումներին: Հիշում եմ նրա կարճլիկ ու հաստ բեղերը, ժպտուն շրթունքները, լիք-լիք կարմրախայտ այտերը և հեգնանքով լի սևորակ աչքերը: Նա գիտեր ծաղրել և՛ մարդկանց, և՛ կյանքը: Եվ հաճախ նրա անփույթ ձևով արտասանած խոսքերը նույնիսկ սուր էին, որքան նրա ասեղի ծայրը, և թունավոր, բայց ոչ չարամիտ:

Նա սիրում էր հաճախ իր բարեկամների հետ բաժակ-բաժակի զարկել և երգել «Բաժակներ առնունք, եղբա՛յր» կամ «Ի նիջմանե» ոչ հանուն ամենազոր Բաքոսի, այլ չոր ու ցամաք Բաքվում Շամախու ծաղկավետ հովիտները և սառնորակ աղբյուրները հիշելու համար: Տանը նա հյուրեր չէր ընդունում, դարձյալ իր անհյուրընկալ կողակցի շնորհիվ: Եվ ինքն էլ ոչ մի ընտանեկան հյուրասիրություն չէր ընդունում:

Մի բան, որ ես առանձնապես սիրում էի այդ գեր ու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբեմ ինձ խրատներ չէր տալիս: Այդ ինձ համար մի հազվագյուտ շնորհ էր, վասնզի ամեն ոք, որ ճանաչում էր հորս, սրբազան պարտականություն էր համարում գլխիս ավետարան կարդալու, նույնիսկ ճշտավոր կոնծաբան Մուշկենց Ալեքսանը:

Բեռիս միայն ասում էր.

— Մեծ տղա ես, աչքերդ բաց արա, ինքդ տես ու մտածիր, ինչ որ վատ է, երես դարձրու նրանից, ինչ որ լավ է, օրինակ վերցրու:

Իսկ տեսնելու և մտածելու շատ բան կար այդ միջավայրում, և ես ամեն բանից ազդվում էի այս կամ այնպես, ինչպես նորածին կատու: Քեռուս արհեստանոցի դռները միշտ բաց էին, և ամեն ոք անցնելիս կանգ էր առնում և մի բանի խոսք փոխանակում նրա հետ մեծ մասամբ կատակներով: Բայց կար մեկը, որ շուտով պիտի դառնար իմ համակրանքի առարկան, բարեկամը և խնամատարը: Քեռիս ամենից ավելի նրա հետ էր սիրում կատակաբանել և բաժակ-բաժակի զարնել:

Դա մի արագաշարժ և արագախոս մարդ էր, որին կոչում էին Կարկուտ Գասպար: Տարօրինակ էր այդ մարդու արտաքինը: Նրա ածուխի պես սև ու խիտ մորուքն սկսվում էր ուղիղ աչքերի տակից և ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը: Նրա արծվային բիթն անգամ ծածկված էր մազերով, իսկ գլխի մազերը նեղ ճակատի վրա գրեթե միանում էին թավ հոնքերի հետ, նույնիսկ նրա խոշոր ականջների ծակերը լիքն էին մազերով: Մի խոսքով՝ եթե չլինեին պսպղուն աչքերը և լայն բերանի մեջ փայլող խոշոր ատամները, կարելի էր կարծել, որ բացի բրդից ոչինչ չկա այդ մարդու վրա:

Կարկուտ Գասպարի գլխավոր զբաղմունքն էր միջնորդությունը: Նա ապրանքատերերի համար նավեր էր վարձում: Բայց նա պարապում էր և՛ ուրիշ գործերով, նավավարներից գնում էր Պարսկաստանից բերած չոր մրգեղեն, նարինջներ և շահով վաճառում էր մանր նպարավաճառներին: Երբեմն ես նրան տեսնում էի ուսի վրա ապակիներով լեցուն մի կիսարկղ դրած դեպի նավահանգիստ վազելիս: Այնտեղ նա նավերի վրա ապակիներ էր զցում կամ նորոգում:

Օրն առնվազն երկու անգամ Կարկուտ Գասպարն անցնում էր մորեղբորս արհեստանոցի առաջով: Եվ միշտ կանգ էր առնում և հաղորդում նորություններ ծովից ու ցամաքից այնպիսի արագությամբ, որ խոսքերն իսկապես կարկտի նման էին տեղում բեռուս գլխին: Նա հիմն երբեմ չէր ճամփորդում, բայց գիտեր բոլորը, ինչ որ անցնում էր Կասպից ծովի վրա և նրա նավամատույցներում, սկսած Բաքվից մինչև Ռուսաստան, Պարսկաստան և Թուրքեստան:

Մի օր Կարկուտ Գասպարն իր բարեհաճ ուշադրությունը դարձրեց ինձ վրա:

— Մի՞ տղան է:

— Քրոջս, — պատասխանեց բեռիս:

— Նո՞ր է եկել:

— Հա:

— Չի՞ համար, — հետաքրքրվեց Գասպարը, ապակիների կիսարկղը դնելով բեռուս դազգահի վրա:

— Եկել է գործի մտնելու:

Առանց մի վայրկյան խորհելու՝ Կարկուտ Գասպարը խորհուրդ տվեց ինձ ծովային ծառայության մեջ մտնել:

— Ի՛նչ է, ուզում ես, որ մատրոս դառնա՞, — հարցրեց բեռիս հեգնական ժպիտով:

— Չէ՛, նավի գործակատար, ապրանք գրող:

Եվ իսկույն խոստացավ ինձ համար պաշտոն գտնել լավագույն շոգենավերից մեկի վրա:

— Շնորհակալ եմ, — ասաց բեռիս իր սովորական հեգնանքով, — դեռ թող ցամաքը վերցնեմ, հետո ծովերը կգրավեմ մինչև Հնդստան:

Բայց ես բեռուս հետ համաձայն չէի: Ծովն էր ինձ համար դրախտը: Ես հափշտակվեցի Կարկուտ Գասպարի խորհրդով և այդ րոպեից սիրեցի նրան: Երբ նա, ապակիների կիսարկղը ուսերի վրա դնելով, հեռացավ, վազեցի նրա ետևից և, հազիվ կարողանալով հասնել, հարցրի.

— Գասպար ապեր, դու իսկապես կարո՞ղ ես ինձ համար պաշտոն գտնել որևէ շոգենավի վրա:

Նա ներողամտաբար ժպտաց, հասկացնելով ինձ, թե դրանից ավելի դյուրին բան չկա իր համար:

— Լող տալ տե՞ս, լող տալ, — հարցրեց նա:

— Ո՛չ չգիտեմ:

— Դու լող տալ սովորի, մնացյալը հեշտ է, շատ հեշտ,- ասաց Գասպարը և, ապակիների կիսաբկղը մի ուսից մյուսի վրա դնելով, հեռացավ:

Նրա խոստումն ինձ միանգամայն ոգևորեց: Ես հավատացի նրա կարողությանը: Թվում էր ինձ, որ այդպես արագ խոսող և արագ բայլող մարդու համար կյանքի մեջ անկարելի բան չի կարող լինել:

Ես վճռեցի լող տալը սովորել, թեև ոչնչից այնքան մեծ երկյուղ չունեի, որքան ծով մտնելուց: Բայց ես լսել էի, որ գեր մարդիկ շատ դյուրին են սովորում լողալը: Որովհետև այն ժամանակ ես բավական գեր էի, ուստի վճռեցի փորձել: Մի օր լողարանում պարանը բաց թողեցի, հուսալով, որ ջրի երեսին կմնամ ուրիշի պես, և իսկույն արճճի գնդակի պես ընկա ծովի հատակը: Բարեբախտաբար, սանդուղքը մոտ էր. բռնեցի և վեր բարձրացա:

Հետագայում շատ անգամ եմ փորձել, և երբեմ չկարողացա լողալ սովորել:

Ամեն անգամ Կարկուտ Գասպարին հանդիպելիս հիշեցնում էի նրան իր խոստումը: Եվ նա ազնվաբար ոչ միայն ետ չէր կանգնում իր խոսքից, այլև ավելի հուսադրում էր ինձ, ամեն անգամ հավատացնելով, թե իր համար անկարելի բան չկա ծովային աշխարհում: Եվ երբեմ չէր մոռանում հարցնել.

— Լող տալ սորցի՞ր, լող տալ:

— Այո — ստեցի ես մի օր վերջապես ամաչելով խոստովանել իմ անշնորհիմությունը:

— Ափարի՛մ, ափարի՛մ, — գովեց ինձ Կարկուտ Գասպարը, իր մազմազոտ ձեռը ուսիս զարկելով, — դե՛ հիմի շորերդ փոխիր, շորերդ:

Նա ուզում էր ասել, որ հագուստս անվայել է ապագա պաշտոնս ստանալու համար: Բանն այն է, որ ես Բաքու եկել էի Շամախու հագուստով, այն է՝ արխալուղով, չուխայով, չմուշկներով և Բուխարայի մորթուց կարած գդակով: Հայրս ատելով ատում էր նորածև հագուստները և հագնողներին անվանում էր «հողկաբազ», որ շատ մեծ վիրավորանք էր:

Մի օր մորեղբայրս հեգնանքով հարցրեց.

— Հը՛, ի՞նչ է ասում Կարկուտը, տեղ գտա՞վ ֆեզ համար նավի վրա:

Ես ամաչեցի, որ բանակցությունս Գասպարի հետ ֆեռուցս թաքցրել էի:

— Դու գիտես ֆո գործը, — ինձանից պատասխան չստանալով շարունակեց ֆեռիս և գլուխը թեքեց կրծքին, — բայց իմացիր, որ Կարկուտը մի ֆիչ փչող է:

Ես վշտացա, որովհետև իմ հավատը դեպի Կարկուտը շատ մեծ էր: Մի օր նրա հեղինակությունը շատ բարձրացավ իմ աչքում, երբ տեսա նրան երկու նավաստիների հետ մտերմաբար զրույց անելիս: Բայց, ավա՜ղ, հետևյալ օրն իսկ այդ հեղինակությունը բավական նսեմացավ: Պատմեմ եղելությունը: Ես անցնում էի ծովափով, միշտ երազելով ինձ ծովի վրա, միշտ երևակայությամբ սլանալով անծանոթ աշխարհներ: Հանդիպեցի Կարկուտ Գասպարին: Կռնատակին երկու հատ ապխտած ձուկ դրած գնում էր տուն: Ես մոտեցա նրան և, հարկավ, նորեն խոսք բաց արի պաշտոնի մասին: Խնամատարս ասաց.

— Մի ֆիչ էլ համբերիր, մի ֆիչ էլ, էսօր էգուց «Ցեսարևիչ»-ի վրա տեղ է բացվելու, շատ լավ տեղ, ամիսը հարյուր ռուբլի:

Եվ սկսեց նկարագրել իմ մոտակա վիճակն այնպիսի փայլուն գույներով, որ ես արդեն երջանիկ զգացի ինձ և պատրաստ էի համբուրել նրա մշտապես խնճված մորուքը: Ապա ինձնից անմիջապես իրան անցավ և սկսեց թվել իր զորավոր կապերը ծովային մեծամեծների հետ: Նրա ասելով ոչ մի նավավար չի կարող համարձակվել նրա խնդիրը մերժելու, իսկ եթե մերժե, այն ժամանակ… Այստեղ Կարկուտ Գասպարը աչքերը փակեց, թշերն ուռցրեց և բեղերի տակից արձակեց մի երկարատև «փո՜ւռռ»:

Այդ միջոցին մեր դեմուդեմը երևաց հարբած նավաստիների մի խումբ, որ երգելով, պարելով և «զարմոն» ածելով առաջ էր գալիս: Ես նկատեցի, որ Կարկուտ Գասպարն ուզում է ծլկվել, բայց չեղավ: Նավաստիներն անմիջապես շրջապատեցին նրան և սկսեցին հետը կատակներ անել, սկզբում անմեղ, հետո ավելի ու ավելի անվայել: Բանն այնտեղ հասավ, որ մեկը բարձրացավ խնամատարիս ուսերին և նստեց նրա պարանոցի վրա ձիավորի պես: Գասպարը կմտեց նրա մարմնի նուրբ մասը, ուսերը թափահարեց և վար գցեց նրան: Մի ուրիշը խլեց նրա կոնատակից «քյուրյումը» և սկսեց կրծոտել: Մի երրորդը կռնակի կողմից իր գլուխը մտցրեց նրա ոտների արանքը և բարձրացրեց նրան իր պարանոցի վրա:

Ես շատ զարմացա: Բարեկամս ոչ միայն չէր վիրավորվում այդ կոպիտ կատակներից, այլև, կարծես, սիրում էր:

Երբ նավաստիները, վերջապես, հեռացան, խնամատարս ասաց.

— Տեսա՛ր, ինչպես են սիրում ինձ, տեսա՛ր: Թե հրամայեմ ծովը ընկնել, կընկնեն:

Ես բաժանվեցի նրանից բավական անախորժ տպավորության տակ: Ծանր էր ինձ համար տեսնել այդպես ծաղրված մի մարդու, որին ուժ էի համարում, և որն այնքան պատրաստակամ հանձն էր առել իմ խնամատարը լինելու:

Բայց և այնպես հավատը դեպի Կարկուտ Գասպարը չմեռավ իմ մեջ: Շուտով ինքս ինձ մխիթարեցի, նավաստիների անվայել վարմունքը վերագրելով նրանց հարբած դրությանը:

Շաբաթվա վեց օրերը Կարկուտ Գասպարը հագնվում էր շատ հասարակ, նույնիսկ կեղտոտ: Նրա սև փուրաժկան այնքան յուղոտ էր, որ փայլում էր սափրիչի կաշվե սրոցի պես, նրա արխալուղի և պիջակի կուրծքն ու փեշերը ծածկված էին խեժի և ներկերի անթիվ բծերով, իսկ կապտած գույն վարտիքի զգզված եզրերի տակից երևում էին հնամաշ կոշիկների միջից դուրս ցցված բրդյա գուլպաները:

Այլ մարդ էր նա կիրակիները: Այդ օրերը նա աղա էր, այն ժամանակվա կատարյալ իմաստով: Նա ուներ չգիտեմ՝ գայլի թե աղջի մորթուց կարած մի մեծ մուշտակ, որի երկայն կինամոնագույն մազերը ծածկում էին նրա կուրծքը փառավորապես, և նույն մորթուց կարած մի վիթխարի կլոր գդակ, որ խախալի էր նման: Իսկ երկայնավիզ, մաքուր սրբած կոշիկները փայլում էին հայելու պես:

Ես մտքումս պարծենում էի բարեկամովս, երբ տեսնում էի, թե ինչպես նա, ձեռները մուշտակի թևերի մեջ խոթած, մտնում էր եկեղեցու գավիթը: Այդ ժամանակ նրա քայլվածքը բոլորովին տարբեր էր սովորականից, հանդարտ, ծանր և հանդիսավոր: Աջ ու ձախ իր ծանոթներին բարևում էր հպարտ, որպես վայել էր սեփական արժանապատվությունը զգացող մի նշանավոր քաղաքացու: Իսկ իմ անմստահ բարևներին հազիվ պատասխանում էր խախալի թեթև շարժումով: Կիրակի օրերը ես չէի համարձակվում նրան մոտենալ, վախենալով շարժել նրա զայրույթը:

Այդպես էր իմ խնամատարը:

Մի օր հանկարծ Կարկուտ Գասպարը չքացավ և ամբողջ մի շաբաթ չերևաց մորեղբորս արհեստանոցի առջև: Վերջին անգամ նա ինձ լիովին ապահովել էր՝ ասելով.

— Տեղ «Ցեսարևիչ»-ի վրա պատրաստ է հա՛, դո՛ւ էլ պատրաստ կաց:

Հարցրի մորեղբորս, ասաց թե Գասպարը հիվանդ պառկած է տանը:

— Ես կգնամ նրան տեսնելու, — ասացի ես, վախենալով՝ մի գուցե տեղս «Յեսարևիչ»-ի վրա կորցնեմ:

— Լավ էլ կանես, — համաձայնվեց Բեռիս, — բարեկամը բարեկամին ձախորդ օրերին է հարկավոր: Ասեճի Գասպարը մի ինչ օյինբազ մարդ է, բայց չեմ կարծում, որ սուտ է հիվանդացել: Գնա՛, Ալեքսան՛, գնա տես: Ինձանից էլ բարևիր նրան: Ասա, թող շուտ առողջանա, չոլախ Բախիշը Սազյանի լավ գինի է ստացել, բարեկեցդանն էլ մոտենում է...

Ես, առանց հետածգելու, վազեցի խնամատարիս տունը: Ա՛հ, երանի չգնայի, գոնե այդ օրը:

Նա պրում էր Բաղաբի հին արվարձաններից մեկում, մի շատ նեղ փողոցում, սեփական տանը: Ես մտա մի փոքրիկ, կեղտոտ և խոնավ գավիթ՝ լի տնայինի թռչուններով, շներով ու կատուներով: Շներն ու կատուներն ուշ չդարձրին ինձ վրա, հավերը կչկչալով ցրվեցին այս ու այն կողմ, իսկ մի մեծ սագ, ինձ տեսնելով, անմիջապես թևերը բարձրացրեց և կղկղալով վազեց դեպի ինձ: Կարծես գալիս էր անցագիր պահանջելու. երկու բադ ծանրաբարո անցուդարձ էին անում, իրանց ծուռ ոտներով ցեխոտ գետն ի վրա եռաճյուղ նախշեր դաջելով:

Ես անցա աստղածև կապված պարանների վրա փռված լվացքի տակով, փափախս ձեռով պահելով, որ չընկնի: Մոտ գավթին հավասար մի նեղ պատշգամբ: Այստեղ երկու գրեթե տարեկից մանուկներ, կեղտոտ, ինչպես թափառաշրջիկ գիչուներ, խաղում էին նեխված հատակի վրա: Երկուսի էլ երեսը մածուկոտ էր:

Ինձ դիմավորեց հնամաշ շալն ուսերին գցած անորոշ տարիքի մի կին տգեղ ու թթված դեմքով և հարցրեց՝ ում եմ կամենում:

— Գասպար Մարտինիչ Խիգիրովին, կարելի՞ է նրան տեսնել:

Կինը նայեց ինձ ոտից մինչև գլուխ անբարեհամբույր հայացքով, առանց մի խոսք ասելու, բաց արավ դեպի պատշգամբ նայող դռներից մեկը և ձեռով նշան արավ, որ ներս մտնեմ:

Ես մտա. ինքն էլ հետևեց ինձ:

Առաջին հայացքով ոչինչ չկարողացա նշմարել. սենյակը մութ էր ինչպես գիշեր: Հետո մի անկյունից լսեցի ծանր տնքտնքոցի ձայն: Զգուշությամբ մոտեցա: Այնտեղ, պատի տակ մի մեծ թախտի վրա պառկած էր Կարկուտ Գասպարը: Բարեկամս թաղված էր բազմաթիվ վերմակների տակ, որոնց վրա թագավորում էր նրա նշանավոր մուշտակը:

— Ալեքսան, դու ե՞ս, — արտասանեց նա, կապույտ թաշկինակով կապած գլուխը դուրս բերելով մուշտակի մազերի միջից, ինչպես մի կոտր բուրդ՝ մի ջվալ բրդից: — Բարով ես եկել: Տեսնում ես էլի՛, մրսել եմ, սաթլջամ եմ, վա՜յ մեջքս, ա՛ կնիկ, չայ բեր, մուրաբա բեր: Ակոբի բրոջ տղան է... Շատ լավ տղա է, շատ եմ սիրում: Վա՜յ, ո՜ւֆ, գլուխս տրաճում է: Զէ՛, հաջամաթ պետք է առնել, հաջամաթ: Նա՛, չայ բեր երեխայի համար, մուրաբա...

— Որ գլուխդ տրաճում է, ինչո՞ւ ես ավելորդ խոսում, — արտասանեց թթված դեմքով կինը և, մի կատաղի հայացք գցելով հիվանդի վրա, երեսը դարձրեց դեպի պատշգամբը ու էթի տակ ինչ-որ մրթմրթաց:

— Ի՞նչ է պատահել, Գասպար Մարտինիչ, — հարցրի ես՝ կամենալով թեյի և մուրաբայի խնդիրը դուրս գցել ասպարիզից:

— Նավի վրա եմ մրսել... ջերմ ու տենդ է, վա՜յ, շուռ է տալիս սաթլջամի, կարող է տիֆ էլ լինի կամ խալերա, ո՛վ գիտե: Ա՛ կնիկ, աղյուս տաքացրու, դիր փորիս վրա, վա՜յ, ո՜ւֆ, մեռա...

Կինը դարձյալ անշարժ մնաց: Ինձ համար պարզ էր, որ նա հիվանդի խոսքերին ճշտակություն չէր տալիս, կարծես նույնիսկ չէր հավատում նրա հիվանդությանը:

Ես մորեղբորս պատվերը բարեկենդանի մասին հայտնեցի խնամատարիս: Երբ խոսքս հասավ Սազյանի գինուն, հանկարծ թթված դեմքով կինը փոթորկվեց:

— Հա՞, — գոչեց նա սուր և անախորժ ձայնով, — հիմա էլ Սաղյանի գիհի: Մադրասիհից կըտացա՞ր, հա՞: Խմի՛ր, խմիր, տեսնենք՝ վերջդ ինչ է լինելու:

— Ա՛ կնիկ, մի տաբանար, դու գիտես, որ ուստա Ակոբը հանճարչի է, — փորձեց մեղմացնել կնոջ բորբոքը խնամատարս:

Բայց երևում էր, որ կնոջ սիրտը վաղուց է լցվել թույնով և ատելի էր սպասում, որ ժայթքի: Եվ սկսեց, աստվա՛ծ իմ, ինչե՜ր չասաց նա իր խեղճ մարդուն: Դուրս եկավ, որ արագախոս և ճեպընթաց բարեկամս, որին ես մարմնացած էտանդ էի համարում, և՛ ծույլ է, և՛ ձրիակեր, և՛ արբշիռ, և՛ մեծախոս, և՛ ստախոս, մանավանդ մեծախոս ու ստախոս: Ինչպես երևում էր, իմ ներկայությունը նրա համար ոչինչ նշանակություն չուներ, կամ մարդու տեղ չէր դնում ինձ:

Խեղճ ամուսինը մուշտակը բաշել էր գլխին և աշխատում էր չլսել նրան: Երբ կինը դուրս թափեց իր ամբողջ մաղձը, այն ժամանակ Գասպարը մուշտակը ետ գցեց և ասաց.

— Պրծա՞ր, հիմի մուրաբա բեր երեխայի համար.

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, — կրկնեցի ես, դրականապես հրաժարվելով դառնացած կնոջ բաղցր հյուրասիրությունից:

Ինձ համար անսահման վշտալի է բարեկամիս խեղճությունը: Միևնույն այդ ժամանակ իմ ճանաչած ընտանիքներում մարդն էր հալածել կնոջը, այդ օրը հակառակն էի տեսնում: Ի՞նչ, Կարկուտ Գասպարը, որ խոսելիս կրակ էր թափում բերանի՞ց, այդպես ընկճված իր տանը մի տգեղ կնոջից: Դա ավելի բան վիրավորական է մի պատվասեր տղամարդի համար, և ես զարմանում էի, որ խնամատարս չհարձակվեց անամոթ կնոջ վրա ու չխեղդեց նրան: Բայց մի բան, որ ինձ ամենից ավելի վշտացրեց, հետևյալն էր, երբ ես ասացի Գասպարին, թե արդեն նոր զգեստ եմ պատվիրել և պատրաստ եմ ծովային ծառայության համար նավապետին ներկայանալու, չար կինը նորեն կատաղեց,

— Ի՞նչ, — գոչեց նա, ձեռը ձեռին զարկելով, — ուրեմն դու այդ տղային է՞լ ես խելքից հանել:

Եվ, դառնալով ինձ, ավելացրեց.

— Ա՛ տղա, մի հավատար այդ մարդուն, նրա խոսքը մեջը փուչ ընկույզ է, ումին ասես բաժանում է: Գնա ջեզ համար ուրիշ գործ ճարիր, դրա ձեռից բան չի դուրս գալ:

Ա՛հ, որքա՜ն խղճալի էր այդ պահին իմ բարեսիրտ խնամատարը և որքան ողորմելի նրա փառահեղ մուշտակը, որ այնքան պատկառանք էր ներշնչել ինձ:

Ես հրաժեշտ տվեցի նրան դառնացած սրտով: Երբ տեսած ու լսածս պատմեցի մորեղբորս, նա հառաչեց և խորհրդավոր եղանակով ասաց.

— Կնիկ կա, որ անուշ, վարդ է, կնիկ էլ կա, որ ցավ ու դարդ է:

Ես զգացի, որ ինքն էլ մոտավորապես Կարկուտ Գասպարի վիճակումն է կնոջ վերաբերմամբ, և հասկացա նրանց բարեկամության հոգեբանական պատճառը:

Քիչ անցած, մորեղբայրս ասաց.

— Ջեռագիրդ տվեցի Համբարձում-բեգին: Վաղը գնա նրա մոտ նահանգական ատյան, նա ջեզ կընդունի:

Եվ այսպես, երազս չիրագործվեց, ես չարժանացա ծովային ծառայության:

Մնաս բարով, լայնատարած ծով, ֆո համայիչ նավերով ու նավակներով, ֆո կանաչ մակերեսով և խորհրդավոր հեռանկարներով: Մնաք բարով, անուշ երազներ, որ ինձ ալացնում էիք հեռու, անծանոթ աշխարհներ, ուր իմ պատանեկան վառ երևակայությունն ստեղծել էր այնքան հեմմներ...

Մնաս բարով և դու, իմ բարի խնամատար, ֆո պարծանքներով, ֆո ապակիների կիսապահարանով և ֆո փառավոր մուշտակով, որ այնքան խեղճացած տեսա կեղտոտ վերմակների վրա: Քո խոստումները սուտ էին, բայց ոչ չարամիտ: Գիտեմ, որ դու անկեղծորեն ուզում էիր ինձ բարություն անել և, ստելով, ինքդ էլ հավատում էիր ֆո ստերին:

Տասնյակ տարիներ անցան: Բախու գալով՝ մի օր հանդիպեցի Կարկուտ Գասպարին: Ո՞րքան փոխվել էր նա: Նրա զզգզված մորուքը ճերմակել էր բամբակի պես, արագաշարժ ոտները թուլացել էին: Նա մեջքից կորացել էր, վառվռուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես: Բայց նա դարձյալ հպարտությամբ պատասխանեց իմ բարևին, և ես զգացի, որ դարձյալ հարգում ու սիրում եմ նրան, ինչպես մարդը սիրում ու հարգում է իր անցյալը:

Ես հարցրի նրա առողջությունը: Ձգանգատվեց, մխայն ասաց.

— Մի ֆիչ ծերացել եմ:

Տկար այլևս նրա ձայնի մեջ խրոխտություն և խոսքերի մեջ արագություն: Կարկուտը հալվել էր տարիների սառնության մեջ: Փափագեցի հարցնել կնոջ մասին, շատ էի հետաքրքրվում:

— Ընտանիդ ողջ-առո՞ղջ է, — հարցրի վախվխկոտությամբ:

— Շնորհակալ եմ, կինս անցյալ տարի վախճանվեց: Քիչ էր մնում ասեի՝ «Փա՛ռք աստծու, ազատվեցիր»:

Հանկարծ տեսա մի անսպասելի և անբացատրելի բան. Գասպարը լաց եղավ:

— Լավ կնիկ էր, — արտասանեց նա, աչքերը սրբելով, — կարող եմ պարծենալ: Լավ էր պահպանում ինձ: Մեռավ, մնացի անտեր...

Ասաց մարդը և, գլուխը երերալով, հեռացավ...

III

ՊԱՇՏՈՆԱԿԻՑՆԵՐԸ

Հայտնվեց, որ ձեռագիրս բանի պետք չէ: Գոնե այսպես ասաց իմ անմիջական իշխանավորը, Համբարձում -բեգը, երբ մի բանի թղթեր արտագրեցի:

— Շամախու ռստիկանատանը բան չէիր կարող սովորել, — ասաց նա,- նահանգական ատյանն ուրիշ բան է: Այստեղից մեճ, բրատես մոյ, ամեն օր թղթեր ենք ուղարկում նորին բարձրության փոխարքայի անունով, տառերը պիտի մարգարիտների պես շարես, որ բարեհաճե կարդալ, թե չէ՝ մեկ էլ տեսար, նահանգապետից վիգովոր ստացա:

Եվ ինձ պարտավորեցրին մի բանի ամիս ծառայել առանց որևէ ամսականի, մինչև որ ձեռագիրս կշտկեմ:

Երբ ես իմ դժգոհությունը հայտնեցի ատյանի հատակները լվացող Հովակիմին, նա ասաց.

— Վնաս չունի, զատո առաջ դու Ալեքսան էիր, հիմա Ալեքսան-բեգ ես:

Նոր միջավայրը թեև ծանծրալի, բայց հետաքրքիր էր ինձ համար: Օրը 7 ժամ արտագրելով իմ իշխանավորների ստեղծագործությունները բնավ չէի մտածում, որ իմ միտքն ու զգացումները կարող են օր-օրի վրա բթանալ, ես մի անծանոթ մեխենայի չնչին մասնիկներից մեկն էի: Թե ինչ էր շինում այդ մեխենան և ինչու համար էր գործում — բոլորովին չէի հետաքրքրվում: Ինձ համար անհասկանալի, նույնիսկ ծիծաղալի էր այն լրջությունը, որով իմ

պատոնակիցները կատարում էին իրենց պատոնը, մտազբաղ դեմքերով վազելով մի սեղանից մյուսը: Արդեն իմ միտքն սկսել էր զբաղվել այնպիսի բաներով, որոնք ոչ մի կապ չունեին պատոնիս հետ: Պետք է ասեմ, որ իմ մոբաքրջ զավակները զարմանալի ընթերցասեր էին: Նրանք այստեղից-այնտեղից բերում էին լրագրեր ու գրքեր, որոնք վերջ ի վերջո ինձ ևս հետաքրքրեցին: Լավ էին թե վատ այդ գրքերը, չէի կարող որոշել, բայց բոլորն էլ կարդում էի անխտիր հավասար հետաքրքրությամբ: Առանձին ուշադրությամբ ես կարդում էի «Մեղու Հայաստանի» և «Մշակ» լրագիրը և «Հյուսիսափայլ»-ի ու «Կռունկ Հայաստանի»-ի համարները, մանավանդ «Քնար հայկական»-ը: Ավելի ուշ կարդում էի «Փորձ» ամսագիրը:

Հարատև ընթերցանության ազդեցությամբ կյանքը հետզհետե փոխվում էր իմ աչքում կամ, ավելի ճիշտ ասած, ևս գունավորվում էր: Մինչ առաջ ինձ թվում էր, որ ևս բաղկացած էր երկու ծայրերից — երջանկությունից ու դժբախտությունից, այժմ իմ աչքի առջև պարզվում էին նրա միջին խավերը, և ես տեսնում էի, որ իրոք ևս ծայրեր չունի, որ անպայման ոչինչ չկա, ոչ երջանկություն, ոչ դժբախտություն: Եվ ահա ես, որ ինձ համարում էի ճակատագրի խորթ զավակ, գտա իմ բարձրագույն սփոփանքը՝ գիրքը: Այնտեղ ես մոռանում էի իմ անցյալի տվայտանքներն ու իմ ներկայի հոգսերը:

Իմ անմիջական մեծավոր Համբարձում-բեգը շատ սահմանափակ, բայց և շատ բարի ու ազնիվ մարդ էր: Նա իմ մոբեղբոր բաժակակիցներից էր, սիրում էր հառաչանքներով հիշել Շամախու էֆֆերը: Այնտեղ էր նա անցկացրել իր «գիժ» ջահելությունը: Ա՛հ, այժմ էլ աչքիս առջև է այդ մարդն իր ձմերուկածև փորով, կարճ վզով, մաքուր սափրած կլորիկ երեսով, փոքրիկ ու սև բեղերով, որ բզեզների էին նման: Երբ նա նստած էր, թվում էր, թե պարթևահասակ մեկն էր, երբ ոտքի էր ելնում — փոքրանում էր, երբ մահ էր գալիս — կարճլիկ ոտները լայն պանթալոնի մեջ, կարծես, չէին բաժանվում իրարուց: Նա ստեպ-ստեպ իր փափուկ ու մազմազոտ մատներով շփում էր մսալի ճակատը, մանկական աչքերը և կոկորդի եռյակ ծալքերը, կարծես ինչ-որ հարթելու համար: Հետո նայում էր իր կրծքին, փորին, ոտներին և մելամաղձոտ հայացքը գցում հեռու, չգիտեմ ուր:

Երբ նա խմում էր մի բանի բաժակ Մադրասու գինի, ամբողջ երեսուն տարով երիտասարդանում էր, կարող եմ ասել, ուղղակի մանկանում էր: Նրա կլորիկ թշերը կարմրում էին Ախալցխայի խնծորների պես, նրա հյութալի աչքերը պսպղում էին մանկական փայլով: Նա չէր կարողանում պաղարյուն լսել թառի ձայնը, իսկ երբ դուդուկ էր նվագում, գլուխը հենում էր ձեռքի ափին և երգում, իսկ զուռնա ածելիս պարում էր ու թոչկոտում խելագարի պես: Երբեմն լալիս էր, փաթաթվելով սրա ու նրա պարանոցին: Մեծ խնջույքներում ու հարուստ ընտանիքներում Համբարձում-բեգն ամենացանկալի հյուրն էր ամենքի համար: Հաճախ թամադա էր ընտրվում, և միշտ կենացները շփոթում էր կամ մոռանում:

Այնուամենայնիվ, ամենքին ոգևորում էր և ամենքին վարակում իր զվարթությամբ:

Ծառայության մեջ Համբարձում-բեգը չգիտեր ոչ մեծերին ծծել և ոչ փոքրերին ճնշել կամ արհամարհել: Մի ահագին պատիժ էր նրա համար նահանգապետին կամ փոխնահանգապետին ներկայանալը, որովհետև այդ ժամանակ նա պիտի հագներ իր պատոնական մունդիրը, իր բարեհամբույր դեմքին տար ստորադրյալի հանդիսավոր լրջություն և մանավանդ զսպեր իր մտտական փուստոցն ու բխկոցը: Բայց որ ամենագլխավորն էր, նա պետք է ռուսերեն խոսեր անաղարտ, այնինչ սովոր էր խոսքի տակին-գլխին ավելացնել. «Ադա՛» — «ախար, ցեցը, բա-բա, նահլաթ բեզ, չար սատանա» և այլն և այլն, բառեր, որ միանգամայն անհասկանալի էին ռուս մեծավորի համար:

Գրագիրները սիրում էին Համբարձում -բեգին, մինչև անգամ թույլ էին տալիս իրանց նրա հետ կատակելու: Եվ նա ոչ միայն չէր վիրավորվում իր մասին արտասանած սրախոսություններից, այլև ձեռը դնելով կլորիկ փորի վրա, կուշտ-կուշտ ծիծաղում էր երբեմն այնպես ուժգին, որ աչքերից արցունք էին թափվում:

Ես սովորաբար նստում էի մի շատ մեծ գրասեղանի հով երկու ռուս գրագիրների հետ: Մեկը դրանցից մի սևահեր, թխադեմ, գիհատասարդ էր, որ շարունակ հրեաների կյանքից անհամ անեկդոտներ էր պատմում և լսողներից առաջ ինքն էր ծիծաղում: Ես չէի սիրում այդ երիտասարդին, նրա լեզուն կեղտոտ էր, ինչպես և ինքը մարմնով:

Ավելի հետաքրքրական էր մյուսը: Նրա անունն ու ազգանունը այսօր էլ միտս է. Սերգեյ Պոլիկարպովիչ Դրյագին: Նա մոտ հառասուն տարեկան մի տղամարդ էր՝ կանաչ-դեղնագույն դեմքով, նոսր մազերով և ցանցառ մորուքով: Հաճախ նրանից օդու հոտ էր փչում: Նա երբեք չէր խոսում ոչ ոքի հետ: Առաջ ես կարծում էի, թե նա ամենքի հետ կռված է, բայց հետո տեսա, որ նույնիսկ Համբարձում-բեգի հետ չի խոսում: Առավոտները նա ատյան մտնելիս մի բանի վայրկյան կանգ էր առնում դռների առջև, նայում էր մի տեսակ երկչոտ հայացքով աջ ու ձախ, արագ ֆայլերով մոտենում էր գրասեղանին և արագ նստում իր տեղը: Եվ գլուխը կրծքին թեքած գրում էր ու գրում մինչև պաշտոնավարության վերջը, տեղից չշարժվելով: Գրելիս նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում, կրծում էր գրչի կոթը և բարկացած թքում հատակի վրա: Նրա բոլոր գրչակոթները կրծոտած էին մինչև կեսը: Մի բանի անգամ փորձեցի խոսել հետը՝ գիտենալու համար արդյոք հա՞մր է: Նա աչքերը պլշում էր, նայում էր երեսիս ապուշի պես, ապա ժպտում էր և նորեն գլուխը կրծքին թեքելով՝ շարունակում էր իր գործն ինչպես մի լարված մեքենա: Եվ գրում էր այնպես, ինչպես սինեմայիի էկրանի վրա, խոշոր տառերով և արագ:

Դրյագինը ոչ միայն չէր խոսում, այլև խուսափում էր ամենքից: Կարծես նա միակ առողջ մարդն էր, որ ընկել էր բորոտների շրջանը: Երբ որևէ մեկը փորձում էր նրա հետ կատակ անել, իսկույն տեղից վեր էր թռչում կարիճից խածվածի պես, ձեռն ուժգին զարկում էր սեղանին, դարձյալ առանց մի բան արտասանելու և նորեն նստելով սկսում էր գրել, գրել, անվերջ գրել: Նա առնվազն երեք անգամ ավելի թղթեր էր արտագրում, քան ես: Նրա ձեռագիրը մաքուր էր:

Ամենակարևոր թղթերը նրան էին տալիս արտագրելու, նույնիսկ ատյանի ուրիշ բաժանմունքներից:

Այդ զարմանալի մարդն իր լռությամբ ու մռայլությամբ ինձ մի տեսակ երկյուղ էր ներշնչում: Կարծես նա մի անբան գազան էր, մի օր պետք է հարձակվեր մեկի վրա: Եվ թվում էր ինձ, որ նա մտքում ինչպես ամենքի, նույնպես և իմ դեմ վտանգավոր դավ է լարում:

Երբեմն ամիս ծառայեցի այդ մարդու հետ մի սեղանի հով և միայն մի անգամ լսեցի նրա ձայնը: Դա մի տարօրինակ դեպք էր: Այսօր էլ սարսափով եմ հիշում նրան: Ահա եղելությունը:

Օրը կիրակի էր, ես ատյանում հերթապահ էի, ասել է, ամբողջ օրն այնտեղ պետք է մնայի ու այնտեղ էլ գիշերեի: Դեռ օրը չէր մթնել, պատշգամբի վրա կանգնած դիտում էի հեռավոր ծովը և սմռնչանում արեգակի վերջին խաղերով ջրի և ամպերի հետ: Հանկարծ լսեցի դռների մի արտասովոր դղրդյուն: Մոտ սենյակ և ինչ տեսնեմ. Դրյագինը, շապիկի օձիքը պատառոտած, կուրծքը բաց, բազուկները հոլանի, կանգնած էր սենյակի մեջտեղում և բարձրածայն բղավում էր դիվահարի պես: Ինձ տեսնելով՝ նա լռեց, մռայլեց, հետո գլխով նշան արավ, որ մոտենամ իրեն, ես տեղիցս չշարժվեցի: Վախենում էի, որ նա հարձակվի ինձ վրա, այնքան կասկածելի էր նրա տեսքը: Բայց նա, ըստ երևույթին, մտադիր չէր ինձ վրա հարձակվելու:

— Այստեղ նայիր, — ասաց նա մի տեսակ խուլ ձայնով, որ կարծես գետնի տակից էր գալիս:

Նա իր հնամաշ և կարկատած վերարկվի տակից դուրս բերեց մի սատկած կատու, բարձրացրեց գլխից վեր և շարունակեց.

— Այս իմ փոքրիկն է, իմ զավակիկը: Կինս չի ծնել սրան, բայց սպանել է շան աղջիկը: Սպանել է իմ զավակին: Այնպես չէ՞, Մուսիա, միու, կու, կու, սառել ես, տաքացիր ծոցումս:

Եվ նա համբուրեց սատկած կատվի դունչը, շոյեց նրա մազերը և սեղմեց իր կրծքին:

— Է՛յ, արմյաշկա, ես սրան սիրում էի աչքիս լուսի պես, — շարունակեց նա, - ամեն օր իմ ձեռքով կերակրում էի երեք անգամ: Գիտե՞ս ինչ էի տալիս ուտելու, — գառան թոքեր, օրը մեկը: Լսի՛ր, արմյաշկա, ֆեզ ասած կլինեն, որ Սերգեյ Պոլիկարպովիչ Դրյագինը շատ հարբեցող է: Ո՞վ է վիճում դրա դեմ, խմում եմ, բայց ես սկանդալիստ չեմ, ոչ ոքի չարություն չեմ անում, այո՛, չեմ անում: Իմ հոգին այս ձեռքս ափի մեջ է, հայելու պես մաքուր: Ոչ ոքի չեմ խաբում, սատանան տանի, սուտ չեմ ասում: Կյանքումս չեմ դավաճանել կնոջս, այ Քրիստոսի խաչելությունը վկա, չեմ դավաճանել:

Նա մի վայրկյան կանգ առավ, ոտն ուժգին զարկեց հատակին և շարունակեց.

— Բայց Անաստասիա Ֆեդորովնան, իմ օրինական ամուսինը, շատ չար կին է: Լսիր, էլ թաքցնել չեմ կարող, ուժ չունեմ: Լսիր, քաղ ամբողջ ատյանը գիտենա, թե ուզում ես, կարող եմ Ամբարձում Իվանիչին էլ պատմել: Լսիր, կինս լիքը է, հասկանո՞ւմ ես, լիքը: Նա ինձ դավաճանում է: Այո՛, այո, դավաճանում է, այն էլ գիտե՞ս ում հետ, թուրքի հետ, հա՛, հա՛, հա՛, մի ինչ-որ մաշադու հետ, հինցած մորուքով, սափրած գլխով... Եթե աչքովս տեսած չլինեի, չէի ասիլ: Բայց տեսա, ա՛յ, հենց այդպես, ինչպես ֆեզ եմ տեսնում: Շան որդին գցել էր նրան իմ անկողնակալի վրա և, հա՛, հա՛, հա՛, բտրբտում էր, բտրբտում, կարծես խմոր էր հունցում շան որդին: Ես դռների արանքով տեսնում էի ետևից, կինս ձյունի պես ճերմակ, իսկ նա սև, խոսող: Մի անգամ չէ, էլի եմ տեսել պատահաբար: Մեկ-մեկ էլ հյուրանոց էր տանում շան ֆածին: Շատ եմ ծեծել, շատ եմ մազերը քաշել սատանան տանի, բայց չի օգնում: Հիմա պատմեմ երեկվանը: Ես կնոջս խաբել էի, թե հերթապահ եմ, պիտի գիշերեմ ատյանում: Ուզում էի մեկ էլ փորձել, սատանան տանի, որ էլ ոչ մի կասկած չմնա: Դռները հրելով ներս մտա, երբ նրա սիրականը դուրս փախավ: Իհարկե, ասիացի էր, վայրենի, կարող էր դաշույն բերել: Բայց ես չվախեցա: Ես առհասարակ վախկոտ մարդ չեմ, ես զինվոր եմ եղել, ֆելթֆեբել, կռվել եմ լեռնականների դեմ: «Լսի՛ր, - ասում եմ կնոջս, - ինչո՞ւ ես այդ անում, Անաստասիա, մի՞թե ես ֆեզ չեմ կերակրում, չեմ հագցնում ինչպես հարկն է»:Նա ինձ չպատասխանեց: Նայում եմ՝ անկողնի վրա մի զույգ նոր կոշիկներ: Փայլուն կոշիկներ: «Այդ ի՞նչ է, ասում եմ, դրա համա՞ր ես պառկում, ֆած շուն»: Ասում եմ ու կոշիկները տալիս գլխին: Էլի չի խոսում: Մահմեդականի հետ, աա՜», լսո՞ւմ ես, իմ օրինական կինն ուղղափառ եկեղեցու օրենքով:

Նա լռեց, ձեռով դարձյալ մի ուժեղ շարժում արավ օդի մեջ և շարունակեց,

— Մտածեցի՝ ինչպե՞ս պատժեմ անպատկառին: Գոտս միջոցը: Գիտես ինչ, օ՛, օ՛, ես հնարագետ եմ: Լսիր, ես բռնեցի լրբին ու մազերից քաշելով տարա խոհանոց: Նա գոռում էր, բայց զուր. դռները փակել էի, հարևանները չէին կարող լսել: Ես գցեցի նրան հատակի վրա, բերանը փակեցի իր գլխի թաշկինակով, ձեռները կապոտեցի վարտիքիս կաշվե գոտիով: Հետո, գիտե՞ս ինչ արի, հա՛-հա՛ հա՛, սատանան տանի, ծիծաղելի է, վերցրի այս սիրուն կատվին, իմ Մուսիայիս, գցեցի նրա շրչազգեստի տակ, հետո շրջազգեստը ամուր կապեցի ետևից, հա՛-հա՛-հա՛, երևելի միջոց էր: Եվ, մի պինդ ափացի տալով լրբին, դուրս եկա խոհանոցից, դռները կողպեցի, բանալին գցեցի գրպանս: Թող, ասացի, իմ ողորմելի Մուսիան էլ համը տեսնի, հա՛-հա՛-հա՛, բայց սատանան տանի, արմյաշկա, դու կարծես ինձ խելագար ես համարում: Ամենևի՛ն, խելքս գլխիս է...

Դրյագինը դարձյալ լռեց մի ֆանի վայրկյան, երկու անգամ անցավ ետ ու առաջ և շարունակեց.

— Այսօր առավոտ, հագիվ լույսը բացված, մտա խոհանոց՝ տեսնեմ ինչ է պատահել: Անառակը լաց էր լինում: Ես ուրախացա, մի լավ ծիծաղեցի երեսին: Նա առհասարակ լալկան չէր, առաջին անգամ տեսա նրա աչքերում արտասուք: «Հըը, ո՞րն էր լավ, - հարցրի ես, - կատո՞ւն, թե մաշադի՞ն«: Բաց արի շրջազգեստը, ծնկներից արյուն էր գալիս, վերբերով ծածկված էր, բայց խեղճ Մուսիան սատկել էր: Անխիղճ լիրբը, նրան իր տակը ճզմելով, սպանել էր... Ա՛յ, դու մի օր կլսես իմ մասին, ես այնպես պատժեմ նրան, այնպես որ...»:

Եվ, սպանված կատվին նորից համբուրելով, տարօրինակ մարդը նորից դրեց վերարկուի տակ, նստեց աթոռի վրա և սկսեց հեկեկալ:

Ես կանչեցի ատյանի ծառաներին և պատվիրեցի, որ Դրյագինին դուրս տանեն, նա ինձ համար խղճալի չէր, այլ զազրելի:

Մյուս օրը նա սովորական ժամին ներս մտավ այնպես, որ կարծես ոչինչ չէր պատահել: Դռների առջև կանգնելով՝ նայեց աջ ու ձախ, վազեց նստեց և շարունակեց գրել, գրել, անվերջ գրել: Ես սարսուռ էի զգում նրան նայելիս:

Վերջապես Համբարձում-բեգը մի առավոտ ինձ ասաց.

— Այժմ ձեռագիրդ բավական լավացել է: Ատյանում շինարարական բաժնում Աղասի-բեգի տեղանում տեղ է բացվել: Վաղվանից դու այնտեղ պետք է ծառայես, ամսական ռոճիկով:

Ա՛հ, որքա՜ն ուրախ էի, որ ազատվեցի Դրյագինի հարևանությունից: Բայց իմ մեծավորն այլևս բարեսիրտ Համբարձում-բեգը չէր, և դա ինձ համար զգալի կորուստ էր: Բոլորովին տարբեր մարդ էր Աղասի-բեգը: Առաջին իսկ օրից ես զգացի դեպի նա մի անզսպելի հակակրանք: Իր ստորադրյալների վերաբերմամբ գոռոզ ու կոպիտ՝ նա դառնում էր պոչը փորի տակ թաքցրած աղվես, հենց որ դիմում էր իր մեծավորներին: Ես չէի կարողանում պաղարյուն տեսնել նրա հաստ պարանոցը, լայն թիկունքները, անտաշ կազմվածքը և լսել նրա սուր, անախորժ ձայնը, որ ագռավի կռկռոցի էր նման: Երբ նա առավոտները ներս էր մտնում, գրագիրները պարտավոր էին ոտի ելնել և գլուխ տալ նրան: Հակառակ Համբարձում-բեգի համեստ սովորության, նա ոչ ոքի ձեռը չէր սեղմում: Գլուխը թեթևակի շարժելով իբրև պատասխան մեր բարևին՝ փխված հնդկահավի պես անցնում էր մեր մոտով, նստում էր և, թղթապանակը բանալով, անմիջապես սկսում էր նկատողություններ անել մեկին կամ մյուսին, ինչ էլ որ լիներ, ամեն օր մեզնից որևէ մեկը նրա թթու տրտունջների զոհն էր:

Գրագիրներից մեկը մի երիտասարդ թուրք էր: Նա ամեն օր ասում էր ինձ.

— Քու արևը վկա, Ալեքսան, մի օր այդ խոզի գլուխը պիտի կտրեմ:

Մի անգամ մի հատիկ սխալիս համար ինձ հանդիմանելիս թույլ տվեց իրեն արտագրածս թուղթը երեսիս շպրտել: Այնուհետև ես վճռեցի երբեմ ոտի չելնել այդ ամբարտավանի համար: Սկզբում նա կարծես ուշադրություն չէր դարձնում իմ ըմբոստության վրա: Բայց մի առավոտ նա դարձավ ինձ և արտասանեց հետևյալ ատենաբանությունը,

— Հայ ազգը աշխարհիս երեսին ամենամեծամիտ, ամենամամբարտավան ազգն է: Դա է պատճառը, որ նա այսօր թագավորություն չունի: Տեսնո՞ւմ եք ինձ, ես էլ ձեզ նման գրագիր եմ եղել, այսօր, գոհությունն աստծո, ունեմ հինգերորդ աստիճանի չին, երկու շքանշան, երրորդին սպասում եմ առաջիկա հունվարին: Ինչո՞ւ, որովհետև ես հայի պես չեմ պահել ինձ, պարտքս ճանաչել եմ ու կատարել: Ով ուզում է բարձրանալ, պետք է խոնարհվի իր մեծավորների առաջ:

Բայց ես իմ հոր ժառանգն էի. ինքնասեր, հպարտ և ինքնակամ: Ես «չխոնարհվեցի» և այս պատճառով չդարձա հինգերորդ աստիճանի չինովնիկ: Տարին չլրացած, բախտս ինձ հաջողեց մի ուրիշ պաշտոն գտնել և մի առավոտ հաճույք ունեցա իմ մեծամիտ մեծավորին ասելու.

— Մնացեք բարով, պարոն Կոլլեժսկի Սովետնիկ:

Ես կանգնած էի, նա՝ նստած: Առանց գլուխը բարձրացնելու հարցրեց.

— Ի՞նչ է պատահել:

— Ես թողնում եմ ծառայությունս:

Աղասի-բեգը գրիչը դրեց սեղանի վրա, նայեց ինձ վարից վեր հեգնական հայացքով և ծիծաղեց: Երևի չէր հավատում, որ մի որևէ մահկանացու կարող էր ինքն իրեն կամավոր զրկել նրա անբարեհամբույր կերպարանքն ամեն օր տեսնելու հաճույքից:

— Մնաք բարով, — կրկնեցի ես և կամեցա հեռանալ:

— Կացեք, — ասաց Աղասի-բեգը և, մի սևագիր շպրտելով իմ կողմը՝ ավելացրեց. — իսկույն ևեթ արտագրեցեք այդ թուղթը:

Նրա արհամարհանքը գրգռեց իմ սրտում կուտակված մաղձը: Վերցնելով հատակից սևագիրը՝ իսկույն արհամարհանքով շպրտեցի իր կողմը և ասացի.

— Ո՛չ, պարո՛ն, այս անգամ ձեր հրամանը կարող եք ինքներդ կատարել. ես ազատ եմ:

— Ուրեմն ձերդ գերազանցությունը բարեհաճում է գնալ, այո՞, — ծաղրեց նա իմ պաշտոնի չնչինությունը:

— Այո՛, ձերդ բարձրություն, գնում եմ, — ծաղրեցի ես նրա տիտղոսը:

Աղասի-բեգը կատաղեց: Նրա սափրած շրթունքները ուռան, փխվեցին ռետինե գնդակների պես, ապա տափակեցին ու նորից ուռան:

— Տեսնո՞ւմ եք, — ասաց նա մյուս գրագիրներին, որ հայեր չէին. — ես չէի՞ ասում, որ հայից երբեք օրինավոր մարդ չի դուրս գա: Ա՛խ, ցավում եմ, որ ես էլ հայ եմ ծնվել:

Մինչև այդ վայրկյանը մենք հայերեն էինք վիճում, որովհետև նա դարձավ ռուսերենի, ես էլ նույն լեզվով գոչեցի:

— Ես էլ ցավում եմ, որ դուք հայ եք: Որքան ինչ լինեն ձեզ նմանները, այնքան լավ...

Բեգը կատաղեց, կապտեց: Նրա դուրս ընկած գորտային աչքերը արյունով լցվեցին: Ջեռն ուժգին զարնելով սեղանին գոռաց.

— Ադա՛...

— Ադան դուք եք, պարոն, — ընդհատեցի ես և, սեղմելով իմ պաշտոնակիցների ձեռքը, դուրս եկա:

Ա՛հ, իմ սրտի վրայից մի ծանր բար ընկավ կարծես, երբ զգացի, որ այլևս չպետք է ոտք դնեմ այդ նեխված մթնոլորտը: Որքան ես անփորձ էի, գիտեի, որ այդտեղ պիտի թմրեր առնիշտ իմ արթնացած մխիթը: Ա՛հ, այլևս ստիպված չէի օրը վեց, յոթ ժամ արտագրել մի բթամիտ պաշտոնյայի բորբոսնած ուղեղի արտադրությունները մի հսկայական ժանգոտ մեքենայի համար:

Նոր պաշտոնս մասնավոր էր, մի նորակազմ նավթային ընկերության մեջ: Մեծ չէր ամսականս — հսանհինգ ռուբլի, բայց գործս կենդանի ու հետաքրքրական էր գոնե առաջին հայացքից, նոր մեծավորս ինժեներ էր, ազգով լեհ, գոռոզ էր, բայց բարեկիրթ, հաղաքավարի: Առաջին եվրոպացին էր, որին հանդիպում էի: Նա ամեն բանով տարբերվում էր տեղական ինտելիգենտներից, սկսած իր վարվողությունից մինչև իր արտաքինը և նույնիսկ հագուստը: Առաջին իսկ օրից ես զգացի դեպի նա խորին պատկառանք, թեև երիտասարդ էր: Ի՞նչ գիտեի, որ շուտով պիտի հիասթափվեմ: Նրա բնակարանը ընկերության գրասենյակին կից էր: Հաճախ գործերով նրա առանձնասենյակը մտնելով, ես նորելուկի հետաքրքրությամբ և նախանձով դիտում էի շեղ պահարանների մեջ կանոնավոր դարսված փառակազմ գրքերը: Մի օր ինժեները այդ նկատեց և ասաց.

— Դուք գրքեր կարդալ ուզո՞ւմ եք:

— Այո:

— Ի՞նչ լեզվով եք կարդում:

— Ռուսերեն և հայերեն:

— Հայերեն, — կրկնեց նա տարակուսանքով, — այդ լեզվով գրված կարդալու գրքեր կա՞ն:

— Իհարկե, — պատասխանեցի ես մի տեսակ վիրավորված:

— Բացի ռուսերենից ուրիշ մի օտար լեզու գիտե՞ք:

— Ուրիշ ոչ մի լեզու:

— Ջուր, շատ ջուր, անհրաժեշտ է գիտենալ որևէ եվրոպական լեզու:

— Բայց մի՞թե ռուսական լեզուն եվրոպական լեզու չէ:

— Այո, իհարկե, — պատասխանեց լեհացին կիսաբերան, — բայց ոչ կատարելապես…

— Դուք ունե՞ք ռուսերեն գրքեր, Ստանիսլավ Սիգիզմունդովիչ:

— Ոչ, — պատասխանեց իշխանավորս մի այնպիսի արհամարհական եղանակով, որ կարծես ես նրան մի վիրավորական հարց տվեցի:

Ես վարում էի հաշվապահի պաշտոն, բայց օրը հազիվ երկու ժամ: Մնացած ժամանակը իմ ծառայությունը ևվիրված էր ուրիշ գործերի: Գնում էի հանճերը, գործարանները, զանազան հանձնարարություններով, դրամ էի ստանում, վճարում էի գնված իրերի համար, մի խոսքով՝ փոքրիկ լիազոր էի ընկերության կողմից:

Հազիվ երկու ամիս ծառայել էի, երբ վարիչը մի օր հանկարծ ինձ հարցրեց.

— Քանի՞ տարեկան եք:

— Տասն և ինը:

— Ծովով երբևէ ճամփորդե՞լ եք:

— Երբեք:

— Կարո՞ղ եք ճամփորդել:

— Ինչո՞ւ չէ:

— Ուրեմն պատրաստվեցեք: Վոլգա գետի վրա սառույցը կոտրվել է: Վաղն առաջին նավը գնում է Հաշտարխան: Դուք պիտի երթաք այդ նավով:

— Բայց ինչո՞ւ համար, — հետաքրքրվեցի ես, առժամանակ ուրախությունս զսպելով:

— Դուք պետք է մեր հանքերի համար գնեք փայտեղեն և չորս ձի: Գիտեմ, դուք առևտուրի մեջ անփորձ եք, բայց փույթ չէ, ձեզ կօգնի իմ բարեկամներից մեկը, որի անունով ես ձեզ կտամ մի նամակ:

Ահա թե ինչ. ուրեմն երազս, վերջապես, իրականանում է, ես պիտի ճամփորդեմ ծովով, նոր երկիրներ տեսնեմ: Երբեք, երբեք այդպիսի երջանիկ օր չէի ապրել: Ուրախությունիցս չգիտեմ ինչ շարժումներ արի, բայց պետք է դեմքս կոմիկական լիներ այդ պահին, fանի որ լրջախոհ լեհը ծիծաղեց բարձրաձայն:

Շտապեցի տուն՝ ուրախալի լուրը Մարիամ մորաքրոջս հայտնելու: Փողոցներում ում հանդիպում էի, հաղորդում էի ցնծությունս: Ոմանք փորձեցին սառը ջուր ածել իմ բորբոքված երևակայության վրա՝ ասելով, թե ծովը մարտ ամսին

վտանգավոր է, և թե ես կարող եմ նավի հետ միասին ծովի երեսից ծովի տակը գնալ: Բայց ի՜նչ փույթ, ես պատրաստ էի շուտով կործանվել, քան հրաժարվել մի այդպիսի ճամփորդությունից:

IV

ԾՈՎԻ ՎՐԱ

Հետևյալ օրը երեկոյան բարձրացա շոգենավ: Եղանակը հանգիստ էր, ծովը՝ խաղաղ: Բայց երկինքն ամպամած էր, ոչ մի աստղ չէր երևում: Նավաստիները երգելով ու կատակներ անելով վերջին պատրաստություններն էին տեսնում. մի մասն զբաղված էր գինու տակառները երկաթյա բառնիչով վեր բարձրացնելով և նավի ամբարանոցն իջեցնելով, մյուս մասը տախտակամածն էր լվանում: Ամենքնուրախ էին ու գվարթ, որ նավագնացությունը, վերջապես, բացվել է, իսկ ամենից ավելի՝ ես: Մերթ ընդ մերթ լսվում էին կոպիտ դարձվածքներ, գոռում-գոչյուններ, փողոցային հիշոցներ, բայց այդ բոլորը կատակի ձևով: Երկու, նավաստիներ թևերից բռնած բարձրացրին մի երրորդին, որ հարբած էր ու ճիգ էր անում ազատվել ու փախչել: Հանկարծ բարձրացավ միահամուռ մի բրիջ. բառնիչն օդն էր բարձրացրել մի ուղտ: Նրա ծուռ ոտներն ու երկայն վիզը, խաչածև միահյուսով, մի բանի վայրկյան նկարվեցին մոխրագույն երկնակամարի վրա, մի ակնթարթ կանգ առան, ապա վար իջան և անհետացան նավի խորքում: Նրա ետևից երկրորդը, երրորդը, չորրորդը: Մեկի գլուխն ուժգին զարկվեց լյուկի երկաթե դռնակին, և թշվառ կենդանին խուլ բառաչելով՝ գնաց իր վիճակը ողբալու ընկերների մոտ: Ինչո՞ւ էին հրակեզ անապատների ապաբախտ աշխատավորներին տանում հյուսիսի սառնամանիքները — չգիտեմ, գուցե կենդանաբանական պարտեզները զարդարելու համար:

Նավապետն իր կամուրջի բարձունքից արձակում էր խրոխտ հրամաններ այն առնական բիրտ ձայնով, որ միայն ծովային մարդկանց է հատուկ և որ փոթորկալի տարերքների հնչյունն է կրում իր մեջ:

Ես վարից վեր դիտում էի նրա կերպարանքը: Նա լուսավորվում էր կայմից կախված մեծ լապտերի նարնջագույն լույսով: Դա միջին տարիքի մի տղամարդ էր՝ լայն թիկունքով և ադեղնածև ոտներով: Նրա արևից կիզված և հողմերից խանձված դեմքը պղնձի գույն ուներ: Այս փոքրահասակ մարդը կոպիտ ուսերի վրա կոճղի պես ամուր հաստատված պարանոցով ինձ հիշեցնում էր մեր հարյուրամյա թթենին: Եվ թվում էր իմ անփորձ մտքին, որ ոչ տարերքների ցասումը, ոչ մարդկային սպառնալիքը չեն կարող կասեցնել նրա անպարտելի ուժը:

Ես մտա շոգենավի երկրորդ կարգը և իմ փոքրիկ ճամփարկղը տեղավորեցի մի անկյունում: Առանձին հյուղեր չկային, կարգն ընդհանուր էր: Ինքը շոգենավը հին էր և բայբայված: Վտանգավոր մարտ ամսին Շոգենավային ընկերության վարչությունն իր նորագույն նավերը չէր վստահում «գիժ» Կասպյանի բմահաճույքին հանձնելու և միայն իր հին ու անպետք նավերն էր ծով նետում: Այսպես էին ասել նրանք, որոնք ինձ զգուշացնում էին առաջին նավով չգնալ:

Ճամփորդների թիվը փոքր էր. մի չափազանց նիհար ծերունի և երկու աշակերտներ ռեալական դպրոցի, որ գնում էին Դերբենտ՝ զատկի տոներն իրենց ծնողների հետ անցկացնելու: Կար և մի մարդ ծուռ աչքերով և ջարդված տանձի պես տափակ բթով: Նա ընդհանուր սեղանի բոլ նստած, խաղաթղթերի վրա գուշակում էր՝ արդյոք ճամփորդությունը հաջո՞ղ է լինելու, թե ոչ:

— Աջո՛ղ, աջո՛ղ, — գոչեց նա, փաթաթվելով բովը նստած ծերունու պարանոցին:

Լսվեց սուլիչի վերջին բառաչյունը, ապա խարխոխի զարկը շոգենավի կողերին:

Ես բարձրացա տախտակամած: Շոգենավը մեղմիկ անջատվում էր կայարանից, նրա կողերի անիվներն ալեկոծում էին ջուրը, աղմկելով ծովի կապարյա լռությունը:

Ես նայեցի ետ: Որքան տխուր և անբարեհամբույր է բուսականությունից զուրկ Բաքուն ցերեկը, նույնքան գեղեցիկ է գիշերը ծովից: Նրա գորշագույն կմախքը, սխողվելով խավարի շղարշով, արյուն ու մարմին է ստանում ու

կենդանանում: Փողոցային լապտերների ու տնային ճրագների դեղնագույն բծերը մթին տարածությունը զարդարում էին ոսկեղեն աստղերով, որոնք պլպլում էին նորահարսի աչքերի պես:

Ահա մի լույս ամենից բարձր, խոշոր ու փայլուն: Քանի բաղաքից հեռանում եմ, այնքան նա պայծառանում է: Նա անընդհատ պտտվում է ինքն իր շուրջը, արձակելով դեպի ծովը շլացուցիչ նետեր: Դա փարոսն է՝ հաստատված բաղաքի բարձրագույն շինության վրա: Այն նշանավոր աստղակի գագաթին, որին դարերի ուժը պարգևել է մի արյունոտ առասպել: Ահա ինչ է ասում այդ առասպելը.

Անհայտ ժամանակներում մի արևելյան բռնակալ՝ իր կանանց փաղաքշանքներից հղփացած՝ վառվում է հանցավոր կրքով դեպի միակ դուստրը, ամենագեղեցիկը գեղեցիկների մեջ: Թշվառ աղջիկը դիմադրում է ամոթով, գարշանքով: Սակայն վավաշոտ բռնակալը հանգիստ չի թողնում նրան, հալածում է գիշեր-ցերեկ: Որքան աղջիկը ուժգին է դիմադրում, նույնքան հայրն ավելի է բորբոքվում:

— Համաձայնվիր անձնատուր լինել, — ասում է նա մի գիշեր, — ապա թե ոչ, դու ճանաչում ես ինձ:

— Հա՛յր, գիտեմ ես կամքի զորությունը: Քո հակառակորդների ոտներին ծանր բարեր ես կապել տալիս և հրամայում նրանց ծովը նետել: Գիտեմ, որ դու ոչ մի օրենք և ոչ մի սրբություն չես ընդունում, բացի ես ցանկությունից, բայց ինձ խնայիր, մի պահանջիր, որ ես գործեմ մեծագույն ոճիրը բնության դեմ:

Սակայն աղջկա աղերսը չի հանգցնում հոր կիրքը: Այն ժամանակ աղջիկը հուսահատված ասում է.

— Լավ, թող ես ասածը լինի, բայց միայն մի պայմանով:

— Հրամայիր, ամեն բան կանեմ:

— Հա՛յր, ես պահանջը մի ոճիր է, որ ոչ հողը կարող է տանել, ոչ ջուրը: Հրամայիր ես հպատակներին ծովի մեջ կառուցանել մի աստարակ այնքան բարձր, որ թռչունները չկարողանան մերձենալ նրա գագաթին: Երբ աստարակը կավարտվի, այնտեղ նրա բարձունքի վրա անձնատուր կլինեմ ես, որպեսզի ոչ հողը լինի վկա իմ անպատվությանը և ոչ ջուրը՝ ու միայն երկինքը:

— Լավ, ես ցանկությունը կկատարվի, — համաձայնում է բռնակալը: Մյուս օրը նա հրաման է արձակում երկրի բոլոր բնակիչներին մի-մի բար բերել և գործի է կանչում բոլոր որմնադիրներին:

Կարճ միջոցում ծովի մեջ բարձրանում է հոյակապ աստարակը: Ավարտման օրն աղջիկը խնջույք է տալիս իր հասակակիցներին, վերջին անգամ համբուրվում է նրանց հետ որպես անարատ կույս: Ոչ ոք չգիտե նրա գաղտնիքը:

— Հա՛յր, ես բարձրանում եմ աստարակ՝ իմ խոստումը կատարելու, — ասում է նա բռնակալին խնջույքից հետո, — կգաս այնտեղ մի ժամից հետո:

Աղջիկը բարձրանում է աստարակի գագաթն ու այնտեղից նետվում ծովը:

Ահա ինչու հոյակապ շինությունը կոչվում է «Կույսի աստարակ»: Նա մի ժամանակ ջրի մեջ է եղել, հետզհետե ծովը ցամաքելով, հեռացել է նրանից:

Փարոսը չհացավ երկնքի մթին տարածության մեջ: Շոգենավն անզգալի արագությամբ վազում էր դեպի ծովի խորքերը: Տախտակամածի վրա ցրտեց: Ես իջա վար: Այնտեղ աչքերը ծուռ ճամփորդը թուղթ էր խաղում դպրոցականների հետ: Ծերունի վաճառականը հեռու կանգնած կտամբալի հայացքով նայում էր պատահիներին: Նրանք շարունակ տանուլ էին տալիս, տանում էր միայն աչքերը ծուռ մարդը:

— Եղուջ, բավական է, — չհամբերեց, վերջապես, ծերունին, — թող այդ երեխաներին, ամոթ է:

— Հիմի բավական է, — ասաց Եղուսն իր խաղակիցների վերջին կոպեկները գրպանը կոխելով, և ոտքի ելավ:

— Ցուլեր է, — ըընջաց ծերունին ականջիս, — զգուշացեք:

Մոտ կեսգիշերին ճամփորդները պառկեցին քնելու, բացի ինձնից և Եղուսից: Ըստ երևույթին թղթամոլը գոհ չէր իր ավարով: Նա փափագեց ինձ էլ կողոպտել: Երևի զուշակել էր, որ քովս բավական մեծ գումար կա: Մի քանի անգամ նա խաղաթղթերը դրեց սեղանի վրա, ծուռ աչքերը հառեց երեսիս, բայց իզուր: Ես նորեն բարձրացա տախտակամած: Եղանակը տակավին խաղաղ էր: Շոգենավը հանդարտիկ լողում էր առաջ, իր եռանկյունի լանջով նեղքելով ծովն ինչպես փիրխարի կարապ: Ծանր ու տաղտկալի տպավորություն էին գործում ինձ վրա մեքենայի միապաղաղ թնդյուններն ու ջրերի ըփըփոցը:

Մերթ ընդ մերթ մոտենում եոք ամայի ափերի ավազներին: Տեղ-տեղ երևում էին ինչ-որ զունատ լույսեր: Երևի ձկնորսների նավակներն էին:

Մոտովս անցան երկու սիլուետներ: Մեկը ձգեց տախտակամածի վրա պարանի մի մեծ օղակ, բաց արավ, քաշեց այս կողմ, այն կողմ:

— Դու կտեսնես, Ֆոմա, այս անգամ Զեչենը մի լավ տրորելու է մեզ:

— Թքիր, նրա բերանը պատռելով կանցնենք:

— Պետք է քնել, ուժ ժողովել առավոտվա համար: Զեչեն... մանկությունիցս հաճախ լսել էի հորիցս, որ Դաղստանի ահռելի ժայռերի մեջ պատսպարված է այդ անունով մի հերոսական ցեղ: Նրա քաջությունների մասին ամբողջ առասպելներ էին պատմում իմ ծննդավայրում: Ես մոտեցա նավաստիներին, հարցրի.

— Մի՞թե չեչենները ծովի վրա են հարձակվում: Լսվեց մի բարձրաձայն քրքիջ:

— Ֆոմա, լսեցի՞ր ինչ մոմոաց այդ պատանին:

— Ցամաքի մկներն ի՞նչ հասկացողություն կարող են ունենալ ծովի կատուների մասին, — ծաղրեց Ֆոման իմ միամտությունը:

— Ուրեմն դուք չե՞ք վախենում Դաղստանի լեռնականներից, — շարունակեցի ես իմ անփորձությունը:

— Է՜յ, երիտասարդ մարդ, հասկացի՛ր, կասպյան ջրերի վրա ծովահեններ չկան:

— Բայց ի՞նչ բան է այդ Զեչենը, որի մասին խոսում էիք:

— Զեչենն այն է, որ նավերը խախալում է և քեզ նմաններին պատերին է զարկում սիսեռի հատիկների պես:

— Զեչենն ասում է. «Բիչ կեր, որ չփսխես, պառկիր որ չզլորվես», — ավելացրեց երկրորդ նավաստին:

Եվ նրանք քրքջալով չքացան խավարի մեջ:

Գիշերն անցկացրինք հանգիստ: Հետևյալ առավոտ շոգենավը կանգ առավ Դերբենտի առջև, ափից հեռու: Ռեալական դպրոցի աշակերտներն անզոր ատելությամբ լի մի հայացք գցեցին Եղուսի վրա, վերցրին իրենց իրերը և իջան նավից: Եղուսը նրանց գրպանում մակույկի վարձն էլ չէր թողել:

Ես մի մակույկ վարձելով գնացի դիտելու փոքրիկ քաղաքը, որ «Արևելքի դուռ» է կոչվում: Հետաքրքիր ոչինչ չտեսա: Երբ վերադարձա շոգենավ, հանդիպեցի երկու նոր ճամփորդների, երկուսն էլ ազգով հայ էին, թեև լեզու հագուստով:

Դա վերին աստիճանի զբաղեցուցիչ մի զույգ էր: Այսօր էլ նա կենդանի է իմ աչքերի առջև: Մեկը փոքրահասակ էր, խոժոռած, բարկացած դեմքով և թանձր ու երկայն մորուքով, որ հասնում էր մինչև նրա պորտը: Երկայն ու լայն

չուխայի տակ մեջքին կապած էր արծաթապատ պատյանով մի լայնաբերան դաշույն, որի սիսեռածև ծայրը ֆիչ էր մնում հատակին դիպչեր: Այս պստիկ մարդու շարժումները խոշոր էին, ձևերը հպարտ ու ծանրաբարո, իսկ հայվածքը լուրջ և հանդիսավոր: Ինձ թվում էր, որ նա ճիգ է անում իր հասակից բարձր երևալ: Ապագայում ես դիտել եմ, որ բոլոր փոքրահասակ մարդիկ այդպես են: Երևի դա էր պատճառը, որ այդ մարդը գլխին դրել էր լեզգու մի շատ մեծ ու շատ բարձր շուլլայի: Նրա կարճլիկ ոտներն ամեն մի քայլափոխում խճճվում էին երկայն չուխայի փեշերի մեջ, ինչպես ճանճերը լյարդի ոստայնի մեջ:

Մյուսն, ընդհակառակը, մի վիթխարի էր բառիս բուն նշանակությամբ, բարձրահասակ, հաղթանդամ, մեծ փորով, հաստ պարանոցով և շատ երկայն բեղերով: Չնայելով իր մարմնի չափերին նրա դեմքի արտահայտությունը վերին աստիճանի մեղմ էր, իսկ ձայնը գրեթե մանկական: Տեղավորելով իր անթիվ կապոցները այս ու այնտեղ, նա շարունակ տնքտնքում էր և ինչ-որ բառեր արտասանում, որոնց իմաստը դժվար էր ըմբռնել: Երբ, վերջապես, ավարտեց իր գործը, նստեց սեղանի ֆով և երեսի էրտիճը սրբեց շուլլայի մազերով, հետո, հերթով նայելով աջ ու ձախ բոլորի երեսին, ժպտաց խիստ բարեկամաբար: Այնուհետև, դառնալով իր ընկերոջն՝ ասաց.

— Ոսկան, եկ մի բան ուտենք:

Ոսկանը կրթիչ մի հայացք գցեց նրա վրա և գլխով բացասական շարժում արավ, ասել էր թե՝ սպասիր, դեռ ուտելու ժամանակը չէ:

— Հապա ի՞նչ անենք:

Եղուշն իսկույն ևեթ նստեց նրա ֆով և առաջարկեց թուղթ խաղալ: Անմիջապես նրա առջևը ցցվեց Ոսկանն օրինակելի ոստիկանի պես:

— Թաթոս աղան թուղթ խաղալ չի կարողանում, — արտասանեց նա, աչխատելով իր տենորը բարիտոն դարձնել:

— Ես թուղթ խաղալ չեմ կարողանում, — կրկնեց Թաթոս աղան և ժպտաց, լայն բերանը բանալով մինչև ականջները:

— Վեր կաց գնանք, վեր կաց, — դարձավ Ոսկանը Թաթոսին մի տեսակ դայակի եղանակով:

Վիթխարին հեզ երեխայի պես լուռ վեր կացավ, գցեց ուսերի վրա մազմազոտ տառատոկը և հետևեց ընկերոջը որպես մի խորտակված առագաստանավ մի փոքրիկ շոգեմակույկի ետևից:

Այս անգամվա անհաջողությունը զայրացրեց Եղուշին:

— Ադա՛, մեկ դրան մտիկ արեք հա՛, — ասաց նա Բաֆվի բարբառով, — ադա՛ դա իր բոյ ու բուսաթից չի ամաչում, էդ ֆոթոթի խոսքով է ժաժ գալիս: Բեղերին մտիկ ես անում, կասես Ռուստամ Զալն է, հը՛, տոմբալան:

Եվ, իրավ, անհասկանալի էր այդ թզուկի իշխանությունը վիթխարիի վրա: Սկզբում ես կարծում էի՝ վիթխարին թզուկի գործակատարն է: Պարզվեց, որ երկուսն էլ անկախ առևտրականներ են, և ոչինչ կապ չկա նրանց մեջ, բացի համաձաղաձայնությունից:

Ամբողջ ժամանակ նրանք անբաժան էին: Հրամայողը շարունակ թզուկն էր, հպատակվողը՝ հսկան: Ուր գնում էր մեկը, մյուսը հետևում էր նրան ձեռնասուն փղի պես: Մի բանի անգամ ես փորձեցի Թաթոսի հետ անմիջական խոսակցություն սկսել՝ անհաջող, միշտ մեջ էր ընկնում Ոսկանը միջակեսի պես և մեզ բաժանում:

Ճաշի միջոցին ես նրանց դիտում էի հիացմամբ: Դա ինձ համար մի տեսակ զվարճության էր: Չգիտեի՝ ծիծաղեմ, թե խղճամ, կամ արհամարհեմ այդ հսկային, որ յուրաքանչյուր պատառը բերանը դնելիս տատամսոտ հայացքով նայում էր թզուկի երեսին:

Դատարկելով երկու շիշով գինու առաջին շիշը, Թաթոսը վեր կացավ, որ երկրորդը դուրս բերի խուրջինից:

— Ավելորդ է, — սաստեց նրան Ոսկանը, — ծովի վրա պիտի բիչ խմել և բիչ ուտել:

Նավաստիները փոթորիկ էին գուշակում, սակայն այդ օրն էլ անցավ խաղաղ: Երկրորդ գիշերն անցկացրինք Պետրովսկի նավահանգստում: Մինչև լույս Թաթոսն այնպես էր խոմփացնում, որ ես հազիվ կարողացա լուսադեմին մի բիչ քնել: Առավոտյան շոգենավը կայարանից անջատվեց թանձր մառախուղի մեջ: Կեսօրին բարձրացավ ճերեկակ բամին: Նավն սկսեց երերալ, կարծես մեզ նախազգուշացնելու համար, բայց այդ մեզ չխանգարեց ժամանակին ճաշի նստելու և ախորժակով ուտելու:

Եղուշը և շոգենավի գործակատարը հարբեցին ու սկսեցին կատակներ անել Ոսկանի և Թաթոսի հետ, պարզ ակնարկներով ծաղրելով թե մեկին և թե մյուսին: Թաթոսը բարեսրտաբար ժպտում էր, ցույց տալով ձիու խոշոր ատամները, իսկ Ոսկանը վիրավորվում էր ու զայրանում: Մի անգամ նա ոտքի ելավ, ձեռքը դրեց դաշույնի վրա և գլուխը ցցեց կովի պատրաստ ախտղողի պես: Եղուշն ու գործակատարը բրբջացին:

Բարեբախտաբար, բնությունը ժամանակին միջամտեց, թե չէ չգիտեմ ինչ պիտի պատահեր: Լսվեց մի խուլ թնդյուն, ամեն ինչ երերվեց, և Դաղստանի հերոսը արմատից կտրված սունկի պես ընկավ Թաթոսի գիրկը:

— Սկսվե՜ց, — գոչեց ծերունի վաճառականը:

— Ոսկան, վեր կաց, սիրտս խառնեց, — ասաց Թաթոսը, ձեռը դնելով բերանի վրա, դեմքը ծռելով:

— Ես քեզ չէի ասում՝ բիչ կեր, — գոչեց Ոսկանը, հազիվ կարողանալով ոտքի կանգնել:

Եվ արխալուղի գրպանից դուրս բերավ մի բուռ չորացրած հոն, առաջարկեց ընկերոջը: Այդ վայրկյանին շոգենավը դարձյալ ցնցվեց, չորացրած հոնը թափվեց հատակի վրա, Ոսկանը դարձյալ ընկավ Թաթոսի գիրկը:

Ծերունի վաճառականը պառկեց թավշյա բազմոցի վրա երեսնիվեր և մեզ էլ խորհուրդ տվեց նույնն անել:

Ես բարձրացա տախտակամած: Ոչինչ առայժմ չէի զգում, բացի անզուսպ հետաքրքրությունից — տեսնել վերջապես ծովի արհավիրքը, որի մասին այնքան լսել ու կարդացել էի:

Նավապետը կանգնած էր կամրջակի վրա. նա հագած էր ռետինե անթափանցելի վերարկու, որի սրածայր գլխանոցը նրան աբեղայի տեսք էր տալիս: Մրրիկից հալածվող անձրևի շիթերը ճիպոտում էին նրա պղնձյա դեմքը, բայց նրա տարերային անհողդողդ ձայնը հնչում էր մետաղի պես: Մի տարօրինակ հանգստություն էի զգում, վարից վեր նայելով նրա ինքնավստահ կերպարանքին, որ մոխրագույն երկնակամարի վրա նկարվել էր ինչպես պահապան հրեշտակ:

— Օ՛, երիտասարդ պարոն, դա Ջեչենն է, — գոչեց մոտովս անցնող մի ծերունի նավաստի, — հանաք անել չի սիրում:

Եվ նա բացատրեց ինձ, որ այդ անունով է կոչվում ծովի ամենախոր տեղը, ուր կա ջրապտույտ:

— Մենք կործանվո՞ւմ ենք, — հարցրի ես միամտաբար:

— Դեռ ոչ, — ասաց ծերունին և չմացավ նավի ծայրում, մառախուղի մեջ:

Ծովը մռնչում էր ամեհի գազանի պես, կարծես մահացու վերք էր ստացել: Մրրիկն ուժեղ զարնվելով կայմերի պարանոցներին արձակում էր սուր սուլոցներ, որոնք թափանցում էին մարդու ուղեղի մեջ ասեղների պես: Մոլար ճայերի մի երամ հետևում էր շոգենավին, աշխատելով պատսպարվել նրա վրա: Ներհակ բամին նրանց ետ էր մղում, թշվառներն անզոր պտտում էին մրրիկի մեջ, ծառերից պոկված աշնանային տերևների նման: Վերջապես, երկար ճիգերից հետո, նրանք կարողացան թառ լինել կայմերի խաչածև թևերի վրա միմյանց ամուր կպած, ինչպես որբացած հույզեր:

Շոգեճավի կողմից բարձրացավ մի հսկա կռնակ, ընկավ տախտակամածի վրա և մոնչալով խորտակվեց ինչպես մի ուժանակ: Գոյացան բյուրավոր պղպջակներ: Ջուրը մի վայրկյան կանգ առավ, կարծես մտածելով դեպի ուր հոսել, ապա վազեց տախտակամածի դեպի մյուս կողմը, հետը տանելով պարանների մի օղակ և մի բանի փայտյա նստարաններ:

— Է՛յ, ո՞վ է այդտեղ, — գոռաց նավապետը, — հեռացե՛ք, ոչ ոքի մի թողնեք տախտակամած բարձրանալու:

Հրամանն ինձ էր վերաբերում, ես անշարժ էի: Քանի արհավիրքը սաստկանում էր, այնքան ես գրավվում էի նրանով, թեև փոթորիկն արդեն սկսել էր ազդել ինձ վրա:

— Անցեք ցուցակի կողմը, այնտեղ մի կերպ թաքնվեցեք, որ նավապետը ձեզ չտեսնի, — խորհուրդ տվեց ինձ մի երիտասարդ նավաստի, — իսկ եթե ալիքները ձեզ տանեն, ես մեղավոր չեմ:

Երերվելով և սայթաքելով լպրծուն տախտակամածի վրա՝ հասվեցի դեպի նավի ծայրը: Մառախուղն ինձ թաքցրեց նավապետից: Երկու ձեռներով ամուր բռնելով մի երկաթե հաստ գլանից, որի վրա փաթաթված էր խարիսխի շղթան, նայեցի դեպի վեր, և սարսուռը պաշարեց ինձ: Ալեկոծված ծովը բոպե առ բոպե իմ առջև բաց էր անում մթին և անհատակ մի անդունդ՝ վիթխարի ձագարի ձևով: Նավը բարձրացնում էր ցուցակը, ցցվում էր հետույքի վրա և կառանչում որպես հարձակվելու պատրաստ վիրավոր վագր: Եվ թվում էր, որ, ահա, նա պիտի գլխիվար թավալվի իր առջև բացված վիհի մեջ և անհետանա կատաղի ջրերի տակ: Բայց ամեն անգամ դեմուդեմ վազում էին նորանոր ալիքների հսկա դեզեր և, ինքն իրենց ուժից խորտակվելով, լցնում էին անդունդը: Նավը ետ էր ցատկում, կարծես, շունչ առնելու համար, որպեսզի նորեն դիմադրի զայրացած թշնամուն: Երբեմն վայրագ կռնակները ուժգին թափով բարձրացնում էին նրան իրենց բաշերի վրա և մի կոթ տաշեղի պես նետում այս ու այն կողմը: Դա տարերքների ցասկոտ հեգնանքն էր: Թվում էր, թե ծովն իր դեպի վեր ցատկող հորձանքներով թքում է երկնքի երեսին: Մի պահ թվաս նավն այնպես բարձրացավ, որ նրա անիվները դուրս եկան ջրերից և պտտվում էին օդի մեջ: Ապա, վար իջնելով, տնքաց այնպես, որ կարծես նրա ողնաշարը կոտրվեց: Ես նայեցի մի վայրկյան. տախտակամածի վրա ոչինչ չէր մնացել, ալիքները ամեն ինչ ծով էին տարել: Ճարճատելով խորտակվեց երկու կայմերից մեկը և տեղ-տեղ՝ կողերի պատնեշները: Տախտակամածի վրա երևացին մթին ծերպեր, որոնցով ջուրը թափանցում էր դեպի նավի ներսը:

-Է՛յ, կորե՛ք վերջապես այդտեղից, - գոռաց միևնավաստի, — մենք չենք կարող ամեն մի կաթնակերի համար պատասխանատու լինել:

Արդեն բավական էր: Հետաքրքրությունս չէր կշտացել, բայց ներվերս հոգնել էին: Գլուխս պտտում էր, սիրտս խառնում: Թվում էր ինձ, որ աղիքներս ձգտում են պոկվել արմատից:

Սահելով ու սայթաքելով, պատնեշների օգնությամբ անցա տախտակամածը, իջա վար:

Թրջված էի մինչև ոսկրներիս ծուծը, հագուստս կպել էր մարմնիս, բայց ցուրտ չէի զգում արյանս ջերմությունից:

Ուղեկիցներս ողորմելի վիճակում էին, բացի վաճառականից: Ծերունին, մեջքի վրա պառկած, հանգիստ ժպտում էր, փոթորիկը նրա կիսակմախք մարմնի վրա չէր ազդել, ինչպես հողմերը չեն ազդում տերևաթափ և չորացած կաղնու վրա: Եղուշը, որ սկզբում ցինիկաբար ծաղրում էր բնության արհավիրքը, ընկած էր սեղանի տակ իր փսխոցի մեջ, մյուսները նույնպես պառկած էին զանազան դիրքերի մեջ: Տիրում էր անտանելի գարշահոտություն, հատակը ծածկված էր փշրված բաժակների, շշերի, ափսեների կտորներով ու չմարսված կերակուրներով: Ջուրը տախտակամածից սանդուղքով հոսում էր ներս, երբ ամեն անգամ բարձրանում էր շոգենավի կողերից:

— Ոսկան, — լսեցի Թաթոսի աղերսական ձայնը, — ես մեռնում եմ:

Նա պառկած էր երեսնիվար և տնքում էր ծանր հիվանդի պես: Նրա հսկայական թիկունքը բարձրանում ու իջնում էր դարբինի փուխի պես:

Մի փոքր հեռու նշմարեցի Ոսկանին: Նա նստած էր հաստակի վրա, մեջքը կոթնած նավի կողմին, ոտները տարածած աջ և ձախ: Ջորացած սալորը նրան չէր օգնել, թեև, ինչպես երևում էր շուրջը թափված կորիզներից, շատ էր կերել: Նրա փոքրիկ գլուխն անզոր ընկել էր կրծքի վրա և օրորվում էր աջ և ձախ՝ թելի վրա կախած տանձի նման: Սակայն դեմքը չէր կորցրել սովորական հպարտությունը, իսկ դաշույնի արծաթապատ կոթը ցցվել էր փորի վրա, որպես հավիտենական սպառնալիք աներևույթ թշնամիներին:

— Ոսկան, Ոսկան, — դարձյալ լսվեց Թաթոսի ձայնը, — ես մեռնում եմ, տերտեր...

Մի վայրկյան Ոսկանը գլուխը բարձրացրեց, նայեց պղտոր հայացքով աջ ու ձախ, ուժգին բխկաց և գլուխը թեքեց դեպի հատակը:

Այս տեսարանը պղտորեց իմ սիրտը: Ուժասպառ ընկա բազմոցի վրա: Ապագայում ես բավական ճամփորդել եմ մեծ ու փոքր շոգենավերով, բայց ոչ մի անգամ փոթորիկն ինձ այդքան չի խառնարկել նույնիսկ Ատլանտյան օվկիանոսի վրա:

Փոթորիկը տևեց երկու գիշեր և երկու օր, բանն այն է, որ շոգենավի կողմնացույցը ջարդուփշուր էր եղել, նավապետն ինքն էլ չգիտեր՝ ուր ենք գնում թանձր մառախուղի մեջ: Նրա ձայնն այլևս նախկին վստահությամբ չէր հնչում: Մարդն ընկճվել էր նկատվելու չափ:

Երկու անգամ սխալմամբ վերադարձանք գրեթե մինչև Պետրովսկ և նորեն կտրեցինք նույն ճանապարհը, միշտ պտտելով փոթորկի սահմաններում: Վերջապես, չորրորդ օրը եղանակը փոքր-ինչ մեղմացավ: Ես կարողացա տախտակամած դուրս գալ: Ջուրը փոխել էր իր գույնը: Հոգնած և կիսով չափ ջախջախված նավն այլևս երկյուղ չուներ նրանից: Մահից ազատվել էր, բայց դեռ տնքում էր իր մարմնի բոլոր մասերով: Երկինքը տակավին ամպամած էր, մառախուղը փարատվում էր դանդաղությամբ:

— Ի՛նը փուտը, ի՛նը փուտը, — գոռացին հանկարծ մի քանի նավաստիներ ուրախ ձայնով:

«Ինը փութը» կոչվում է այնտեղ, ուր Վոլգա գետը խառնվում է ծովին և ջրերին տալիս է դեղին սեխի գույն իր հետ բերած տիղմի շնորհիվ:

Ջորս նավաստիներ, նավապետի հրամանով, ծով իջեցրին մի մակույկ, վերցրին երեք ահագին շիշեր օղիով և հեռացան: Մի մղոն հեռու երևում էր ձկնորսային նավերի մի ամբողջ երամ: Նավաստիները գնում էին ձկնորսներից իմանալու գետաբերանի ուղղությունը:

Մի ժամ անցած մեր շոգենավը մտավ Վոլգայի մեջ: Ճամփորդներն սթափվեցին և դուրս եկան տախտակամած մաքուր օդ շնչելու:

Թաթոսի առաջին խոսքը եղավ.

— Ոսկան, ես քաղցած եմ:

— Ուտենք, — պատասխանեց թզուկը և կերավ հսկայի չափ:

Ամենքի ախորժակը բացվել էր:

Երբ Թաթոսը կշտացավ, նրա լուսանման երեսը նորեն սկսեց փայլել բարի և անխմաստ ժպիտով, նորեն Ոսկանը նրան վերցրեց իր խնամքի և հսկողության տակ:

V

ԱՌԱՋԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

ԴԵՄՔԵՐ

Կյանքի պարգևներին արժանանալու համար պետք է մարդկանց սիրտը շահելու շնորհքն ունենալ: Վա՛յ նրան, ով չգիտե, թե ինչ եղանակ է հաճելի դիմացինի լսելիքին: Ավելի վայ նրան, ով գիտե և չի ուզում կամ չի կարող երգել: Եթե շրթունքներդ մեղրածոր չեն մարդկային թուլությունների վերաբերմամբ, գոնե աշխատիր փականք դնել նրանց վրա, այլապես կտուժես: Ի՞նչն է մարդկանց աչքում մեզ համակրելի և սիրելի դարձնում, եթե ոչ մեր խունկ ծխելը նրանց չունեցած առաքինություններին: Շողոքորթիր՝ և կհաղթես, վասնզի չկա ավելի զորավոր զենք, քան ֆծիճքը: Նույնիսկ հանճարները չեն կարողացել դիմադրել նրա զորությանը: Ինքը Քրիստոսն անգամ ենթարկվեց նրան, թույլ տալով Մարիամ Մագթաղինացուն իր ոտները յուղով օծանելու...

Մանուկ հասակից եմ հասկացել այս գործնական ճշմարտությունը, բայց չեմ կարողացել հետևել նրա ձայնին: Ես ունեի հայր, որին հարգում էին, որից վախենում էին, իր ճշմարտասիրության համար, և որին, սակայն, շատ շատերը չէին սիրում նույն պատճառով: Նա հպարտ էր և ստի ու կեղծիքի թշնամի: Զափազանց զորեղ էր նրա ըմբռնած արյունն երակներիս մեջ, որպեսզի ընդունակ չլինեի իրերն իսկական անունով անվանել: Ահա ինչու մի՛շտ տուժել եմ, մի՛շտ հալածվել նույնիսկ բարեկամներից:

Այն անձը, որի անունով հանճնարարական նամակ էի բերել իմ մեծավորից, առաջին իսկ հայացքով ինձ հակակրանք ներշնչեց: Դա մի կարմիր երեսով, կարմիր ականջներով, դեղնագույն փոքրիկ աչքերով երիտասարդ էր, որի ամեն մի ձևից ու շարժումից մեծամտություն էր բուրում, ներկված, հղկված մի պաճույճ, ներսը լեցուն փուչրով ու ասեղներով:

Երբ ներկայացա նրան, ոչ բարևիս պատասխանեց, ոչ երեսիս նայեց, շարունակելով ինչ-որ հրամաններ տալ իր շուրջը ժողոված մի խումբ երիտասարդների, որ երևի նրա փոքրավորներն էին: Իսկ երբ կարդաց իմ բարեկամի նամակը, նրա առաջին հարցն էր.

— Դուք ի՞նչ ազգից եք:

— Հայ:

— Հա՛յ, լիը՛, հա՛յ, — կրկնեց նա մի քանի անգամ և ապա դարձավ իր նման մի երիտասարդի. — Վյաչեսլավ, ի՞նչ բան է հայը:

— Շիշլիկ, բոզբաշ, Կարապետ, — պատասխանեց Վյաչեսլավ կոչվածը:

Եվ երկուսն էլ ծիծաղեցին իրենց սրախոսության վրա:

— Պարո՛ն, — ասացի ես դեղնագույն աչքերով երիտասարդին, — նախքան սրախոսելը բարի եղեք կատարելու ձեր բարեկամի հանձնարարությունը:

— Դուք շտապո՞ւմ եք:

— Ձեմ շտապում, բայց քանի որ դուք թույլ տվիք ձեզ ծաղրելու իմ ազգությունը, բարվոք եմ համարում որքան կարելի է շուտ հեռանալ այստեղից:

Ըստ երևույթին դիմացինիս բաջությունն այնքան հանդուգն չէր, որքան լրբությունը, որովհետև նա ոչինչ չասաց: Պարզ էր, որ նա իմ խորապես հուզված ձայնի մեջ և գունատված դեմքի վրա զգաց ինչ-որ սպառնալիք: Արդարև, ես այնքան վիրավորված ու վշտացած էի, որ եթե նա շարունակեր իր լրբությունը, պետք է հարձակվեի նրա վրա, առանց հաշվի առնելու մեր ուժերի չափը: Եվ այսպես, հենց առաջին օրից մենք ատեցինք իրարու:

Հետագայում իմացա նրա ստորադրյալից, թե ինչից է առաջացել նրա ատելությունը դեպի իմ ազգությունը, երկու տարի առաջ մի ինչ-որ վաճառական հայ խաբել է նրան հաշիվների մեջ:

Այսպես թե այնպես, մեծավորիս բարեկամը կատարեց նրա հանձնարարությունը, միշտ չթաքցնելով արհամարհանքը դեպի ինձ, գնեց ինչ որ հարկավոր է, և ես բոլորն ուղարկեցի Բաքու: Այնուհետև մի բանի օր թափառեցի Հաշտարխանի փողոցներում ու վերադարձա Բաքու: Այս անգամ ծովը խաղաղ էր, և շոգենավը ավելի լավը:

— Գի՞տեք ինչ, — ասաց իշխանավորս հենց առաջին օրը, երբ ներկայացա նրան, — դուք շատ ազնիվ երիտասարդ եք, բայց ծառայելու համար պիտանի չեք:

— Ինչո՞ւ:

— Դուք չափազանց հպարտ եք և զգայուն:

— Մի՞թե հպարտությունն ու զգայունությունը դատապարտելի ախտեր են մարդու համար:

— Ոչ, իհարկե, բայց մի համեստ գործակատարի համար որոշ դեպքերում ավելորդ են: Դուք չգիտեք մարդկանց հետ վարվել, ինչպես պահանջում է դիրքը: Դա մի մեծ թերություն է գործնականի տեսակետից:

— Սովորեցրեք ինձ վարվելու ձևը, ես մի անփորձ աշակերտ եմ:

— Այդ իմ գործը չէ, կյանքն ինքը ձեզ շատ բան կսովորեցնի, իսկ առայժմ...

— Առայժմ ի՞նչ:

— Դուք ինձ հարկավոր չեք, դուք վիրավորել եք իմ բարեկամիս:

— Ինչո՞վ արդյոք:

— Չգիտեմ, միայն նա գանգատվում է ձեզ վրա և խնդրում է, որ այլևս ձեզ չուղարկեմ նրա մոտ:

— Բայց արդյոք գրո՞ւմ է, որ հենց առաջին օրը նա թույլ տվեց իրեն իմ ազգությունը ծաղրելու:

— Երևի կատակ է արել:

— Պարոն, կան բաներ, որոնց վերաբերյալ կատակը ներելի չէ:

— Ի՞նչ թունդ ազգասեր եք, երիտասարդ, — հեգնեց լեհացին:

— Ինչպես և դուք՝ լեհացիներդ, — գոչեցի ես գրգռված: -Մնացեք բարով:

Դա մի թշվառ օր էր ինձ համար: Մեկն այն դառն օրերից, որ մարդու սրտի վրա խոր ակոսներ են գցում հավիտյան չջնջվելու համար:

Տխուր, հուսահատ՝ ես ամբողջ օրը թափառեցի ծովափում: Չէի ուզում նայել ծովին, որ այնքան երազներ էր ներշնչել ինձ և այնպես հուսախաբ արել:

Գալով տուն, բաջություն չունեցա եղելությունը մորաքրոջս հայտնելու: Գիտեի, որ նա պիտի վշտանա ավելի, քան ես:

Քիչ ժամանակ անց Շամախուց եկան մայրս և հույսերիցս մեկը. մյուսն ամուսնացել էր: Մորաքույրս գրել էր նրանց իմ պաշտոնի ու երջանիկ ճամփորդության մասին, և նրանք շտապել էին տեղափոխվել Բաքու:

Փողոցում դռների առջև կանգնած էր ֆուրգոնի տեր մալականը, երկու մետր բարձրությամբ մի երիտասարդ հսկա: Մտրակը ձեռին նա սպասում էր իր վարձին:

— Ինչքա՞ն պիտի վճարել, — հարցրի ես, հազիվ ազատվելով մորս գրկից:

— Տասն և յոթ ռուբլի: Գրպանումս ունեի բառասուն կոպեկ:

— Մենք շատ էժան եկանք, — ավելացրեց մայրս ուրախ ժպիտը երեսին: — Ինչ ունեինք — հավաքել բերել ենք:

— Սոնա, — դու փողի մասին մի մտածիր, — միջամտեց միամիտ մորաքույրս, գրկելով իր բոջը, — Ալեքսանը հիմա լավ գործի է, Հաշտարխան է գնացել:

Ես, իհարկե, դրությունս թափցրի, ի՞նչպես ասեի, որ անգործ եմ: Շրջունքներս կրծոտելով դուրս եկա փողոց: Հարկավոր էր փող գտնել մալականին վճարելու համար: Օրն արդեն մթնել էր: Ո՞ւր գնայի, ո՞ւմ դիմեի - չգիտեի: Ոչինչ չունեի գրավ դնելու, բացի իմ ինքնասիրությունից: Բայց բանի գրոշ արժե մեկի ինքնասիրությունը մի ուրիշի աչքում, այդ «ապրանքը» կյանքի շուկայում արժեք չունի:

Երկար ժամանակ թափառում էի հարուստ բաղաքի փողոցներում: Մալականը բայլ առ բայլ հետևում էր ինձ ստվերի պես, մերթ ետ մնալով, մերթ հավասարվելով ինձ: Սկզբում նա լուռ էր, բայց շուտով սկսեց տրտնջալ: Երբեմն գլխիցս վեր լսում էի նրա մտրակի շառաչյունը, դա նրա անհամբերության նշանն էր: Մարդը երեք օրվա ճամփորդությունից հոգնել էր, պետք է հանգստանար, ձիերին կերակրեր, իսկ ես նրան ստիպում էի բայլել, շարունակ բայլել մի բարեկամի կամ ծանոթի հանդիպելու և նրանից փոխառություն վերցնելու կասկածելի հույսով: Մի բան, որ ինձ տանջում էր ամենից ավելի, մորս ու բոջս ուրախությունն էր: Նրանք եկել էին «հանգիստ ապրելու» և շուտով պիտի հուսախաբ լինեին, իմանալով, որ անգործ ու անփող եմ, թվում էր ինձ, որ ես տմարդաբար խաբել եմ նրանց:

— Պարո՛ն, — գոչեց վերջապես մալականը, — Բաքո՞ւն ես ուզում ցույց տալ ինձ: Շնորհակալ եմ, ես շատ անգամ եմ տեսել, վարձս տվեք: Ձիերս սպասում են:

— Համբերիր, համբերիր, ահա այս փողոցն էլ անցնենք:

Ես չգիտեի՝ փողոցներից որի վրա է իմ բախտը. գնում, էի, գնում:

Մտրակը շարունակ շառաչում էր իմ գլխից վեր խավարի մեջ և ավելի ու ավելի ուժգին ու սպառնալի: Ոտքե առ ոտքե սպասում էի նրա հարվածին: Մի անգամ իմ մեջ ծագեց մի հանցավոր միտք՝ դիմել իմ ոտների զորությանը, փախչել ու ձկվել նեղ ու մթին փողոցներից մեկում: Հետո՞, իսկ մա՞յրս, բո՞ւյրս, նրանց ենթարկեմ պարտատիրոջս սպառնալիքի՞ն: Ո՛չ, հեռու ինձնից նման մտքեր, ինչ լինելու է, թող ինձ լինի:

— Եկ գնանք ոստիկանատուն, — գոչեց մալականը, կանգ առնելով, — ես հոգնեցի: — Նա թևս բռնեց իր ուժեղ ձեռքով: Մթության մեջ փայլատակեցին նրա աչքերը:

Ես ցնցվեցի, կարծես իմ աչքի առջև ծառացավ մի կատաղի գայլ:

— Գնանք, — ասացի ես, երեսս շուռ տալով:

Ավելի լավ է բանտ նստել, հաճ ստել, խաբել մարդուն:

— Ես կտանեի ձեզ ոստիկանատուն, եթե ձիերս փողոցում թողած չլինեի: Նրանք անոթի են, ես հոգնած եմ, դու ամոթ չունես:

«Դու ամոթ չունես»: Ապագայում կյանքի բովի մեջ ես շատ անգամ եմ լսել մեկի կողմից մյուսի երեսին գցված այդ դարձվածքը, և ինձ միշտ թվացել է, որ մարդու ինքնասիրության համար ավելի մեծ անարգանք չի կարող լինել:

Ի՞նչ կարող էի պատասխանել կառապանին, նա ուներ իրավունք ինձ անարգելու: Բայց ես ամոթ ունեի, և այդ էր, որ ինձ տանջում էր: Այդ էր, որ ես յոթ անգամ անցա ետ ու առաջ մի աղոտ լուսավորված խանութի առջևով և չհամարձակվեցի ներս մտնել:

Խանութի տերերն էին մորս ամենամեծ բոջ որդիները, որոնց հետ իմ հարաբերությունները շատ էլ բարեկամական չէին: Սակայն դա իմ միակ փրկությունն էր: Ես նորից լսեցի երկայն մտրակի շաչյունը, որ ինձ համար հավասար էր

ետևիցս սողացող օձի վշտացին: Ես խեղդեցի իմ մեջ ինքնասիրությունս, սրբազնագույնը բոլոր զգացումներից: Մոտ խանութ:

Առաջին փոխառությո՞ւն: Ես չգիտեմ, կա՞ արդյոք դրանից ավելի վիրավորական զգացում մարդկային ինքնասիրության համար: Որքան անբարեհամբույր և դաժան երևացին ինձ այն մարդիկ, որոնք իսկապես դաժան չէին, այլ միայն վաճառականներ: Մի պահ կամեցա դուրս գալ, փախչել, բայց արդեն ուշ էր: Դռների մեջ կանգնած էր մալականի սպառնալի կերպարանքը: Նա փակում էր իմ փախուստի ճանապարհը:

Ով չի կրել այդ վայրկյանները իմ հասակում, չի կարող երևակայել նրանց դառնությունը: Սիրտս բաբախում էր արագ-արագ, կարծես մտել էի հիվանդանոց՝ մի ծանր գործողության ենթարկվելու համար: Երբ բերանս բաց արի խնդիրս արտահայտելու համար, ձայնս հուզումից դողդողաց, և նրա հնչյունն ինձ օտարոտի թվաց, իբր մի ուրիշ մարդ էր խոսողը:

Անցավ մի ամբողջ հավիտենականություն, մինչև որ երեք եղբայրներ, յուրաքանչյուրն առանձին-առանձին ստիպեցին ինձ կրկնել միևնույն խնդիրը, և իրենք էլ մոտեցան, նայեցին մալականին: Վերջապես մեկը երեխից, ուսերը կիտելով, բաց արավ դրամարկղը և խորը նայելով երեսիս, դրեց իմ առջև խնդրածս գումարը: Ես շտապեցի դուրս: Այդ թղթադրամները կարծես այրում էին ձեռներս: Տալով նրանց կառապանին, ես բաշխեցի նեղ փողոցներից մեկի անկյունը և ազատություն տվեցի երկար ժամանակ զսպված արցունքներիս: Տանջվում էի ոչ միայն բարոյապես, այլև ֆիզիկապես, կարծես իմ կենդանի մարմնից կտրվել էր մի մասը և գցվել խարույկի մեջ: Ա՛հ, իհարկե, այժմ աղոտ լուսավորված այդ խանութի մեջ ինձ ծաղրում են ու հայհոյում, և վաղն իմ ստորանալը հայտնի է դառնալու բոլոր մեր ազգականներին, որ՛ճ պիտի դառնանա մայրս, լսելով իր որդու ապիկարությունը:

Երբ վերադարձա տուն, մայրս ու քույրս ննջած էին: Նայեցի նրանց ժպտուն դեմքերին և մի տեսակ թեթևություն զգացի: Իմ ստորացումը նրանց համար էր...

Շուտով ես գտա պաշտոն և մտա մի նոր միջավայր: Այս անգամ իմ տերը հայ էր, այն ժամանակվա խոշոր գործարանատերերից մեկը:

Հաշտարխան գնալուց առաջ «Մշակ» լրագրին ուղարկել էի մի փոքրիկ անստորագիր թղթակցություն: Ուրախացա, երբ տպագրված տեսա իմ գրչի առաջին փորձը: Գրեցի մի բանի թղթակցություններ Պետերբուրգի և Թիֆլիսի ռուս լրագրերին զանազան ստորագրություններով: Բոլորը տպագրվեցին: Ուղարկեցի իմ իսկական անունով երկու հոդված «Մեղու Հայաստանի» լրագրին-նույնպես տպվեցին: Այս բոլորն ինձ ոգևորեց: Մի բսան տարեկան տղայի համար այսքանը բիչ էր կյանքի դառնություններեի հետ հաշտվելու համար: Բայց այն օրից, երբ իմ անունը տպագրված տեսա, այլևս ճակատագիրն ինձ համար խորթ մայր չէր, ինչպես կարծում էի առաջ: Թվում էր ինձ, որ ես ոչինչ էի, այժմ մի բան դարձա:

Մեր գրասենյակը գտնվում էր խաչաի կենտրոնական մի հրապարակի վրա: Շատերն էին գալիս այնտեղ թե՛ գործով, թե՛ այնպես, զրույց անելու և ժամանակ անցկացնելու համար:

Հիշում եմ նախկին գավառապետ Սամսոն-բեգին — նրա ճակնդեղի պես կարմիր երեսը, մեծ ականջները, կապտագույն բիթը, որ պշկած բադրջանի էր նման: Նախկան գրասենյակ մտնելը կանգ էր առնում դռների առջև, հազում էր և, կոկորդավոր ֆուրաժկան վերցնելով, թաշկինակով սրբում էր ճաղատ գլուխը: Նա սպասում էր, որ իրեն ներս հրավիրեն և աթոռ առաջարկեն: Երբ վերջապես բարեհաճում էր նստել, գորշագույն մուշտիրի փեշերը ետ գցելով, սպասում էր, որ մեկն ու մեկը հետաքրքրվի իր փառավոր անցյալով: Եվ զանազան փոփոխություններով ամեն օր գրեթե նույնն էր կրկնում՝ երեսուն ու հինգ տարի նա ծառայել է ռուսաց թագավորին խղճմտանքով և ազնվությամբ: Այսօր ոչ մի «շուն-շան տղա» չի կարող ասել, թե Սամսոն-բեգը «հայ ազգի անունը չի պահել, պահպանել»: Ժողովուրդը նրան սրբի պես է պաշտել:

— Ճշմարիտ է, շատերին եմ ոգզգու տակ ճղճղացրել, մի բանիսն էլ մեռել են: Իհարկե, եթե դիմանային, չէին մեռնիլ. թակել եմ տվել, իհարկե, էշ, ավանակ գյուղացիներին, ինչ անեմ, անօրենները հարկը ժամանակին չէին տալիս, ինձ էլ հրամայված էր խրատել: Խոսքով կարելի՞ էր նրանց բան հասկացնել: Բայց դուք իմ մասին հարցրեք օրինավոր մարդկանց, կալվածատերերին, վաճառականներին, բեգերին: Նրանց խոսքն է խոսք, թե չէ բուի շինականն ինչ մարդ է: Ինձ նախանձողներն էստեղ ու էնտեղ ասում են՝ «Սամսոն-բեգը կաշառք է կերել»: Ջրպարտություն, ուրիշ ոչինչ: Բեգի ձին հավանել եմ ու գովել, առավոտը զարթնել ու տեսել եմ իմ գոված ձին դռներիս առաջ կապված: Ես մեղավոր եմ, վաճառականին պատիվ եմ արել նրա տանը ճաշելու, խալի եմ տեսել, հավանել եմ ու գովել, եկել տեսել եմ հավանածս խալին տանս: Հնտանիքի տեր մարդ եմ, ամսականով չէի կարող ապրել, փողի պակասություն ունենալիս բառաստւն տոկոսով պարտք եմ վերցրել, ժամանակն չլրացած՝ պարտատերս վեհսիլս պատռել է ու ետ ուղարկել: Դա կաշա՞ռք է, մարդ աստծու, դա փեշբեշ է, մեր հայրերից ու պապերից մնացած օրենք... Դե՛ ես՛ էլ իմ պարտքս եմ կատարել, ինձ պաշտողներին ազատել եմ անպատվությունից, մեկին՝ տուգանքից, մյուսին՝ բանտից և այլն...

Մղդսի Խաչանը ներս էր մտնում թե չէ, յուրաքանչյուրին հերթով հարցնում էր նրա առողջության մասին և բոլորից գոհացուցիչ պատասխան ստանալով էթախոտ էր առաջարկում: Եվ էթախոտի զորությունը ցույց տալու համար մի անգամ փուշտալով՝ զարմանալի վարպետությամբ խոսք էր բաց անում իր դեպի Երուսաղեմ ուխտագնացության մասին:

— Հենց որ նավը մոտեցավ Յաֆային, զալըմ փալլահները մորեխների պես թափվեցին մեզ վրա, Կապչոնցի շամմահի նման լղար, ածուխ ծախողների պես մրոտ ու սև՝ նրանք դժոխքից փախած սատանաների էին նման, ձեր արևը. Կապիտանը հրաման տվեց ոչ մեկին չթողնել նավի վրա բարձրանալու, բայց ո՞վ հնար ուներ նրանց առաջը կապելու: Մեկը խուրջինս խլեց, մյուսը մաֆռաշս, ինչ էր մնում փափախս էլ վերցնեն: Երուսաղեմ գնացողը հազար ու մի միլլաթի երես է տեսնում օսմանլվից ու ռումիից սկսած մինչև ղարաչինն ու հաբաշը: Արաբստանն աշխարհի պորտն է, Բաղդադն էլ գլուխը, ով չի տեսել, համարյա թե աշխարհ չի տեսել: Օրհնվի Երուսաղեմի զորությունը, նա ինձ ֆաշեց տարավ, հիմի կարող եմ ասել, որ ապրել եմ, կյանք եմ տեսել: Ի՞նչ կասես, Սահակ դայի:

Սահակ դային մղդսի Խաչանին չէր սիրում և օրոշտում էր, երբ նա խոսում էր: Բարձրահասակ, առույգ էր կենսախինդ ծերունին կարճլիկ ճերմակ մորուքով: Փիլիսոփա էր իր տեսակի և ուներ կյանքի մասին իր սեփական սկզբունքները: Տաղտկանում էր, երբ լսում էր կրոնի ու բարոյականության մասին դատողություններ, ոգևորվում էր, երբ խոսք էր լինում կանանց և սեռական կրքերի մասին: Վավաշոտ իգամոլ էր, ինչպես կապիկ, չնայելով իր վաթսունհամյա հասակին: Շամախում նա մեր հարևանն էր, պարապում էր չիթ ու կտորի առևտրով: Հիշում եմ, երբ առաջին կինը թոռախտից մեռավ, անմիջապես սափրեց կիսով չափ ճերմակ մորուքը, բեղերը ճերկեց թանձր հինայով, ձի նստեց, գնաց մի գյուղ և երկու-երեք օր անցած վերադարձավ, բերելով իր հետ ձիու բամակին դրած մի երիտասարդ կին՝ Դուրսուն անունով: Այս առթիվ չափահաս որդիները կռիվ հայտարարեցին իրենց հորը, բայց շուտով այդ երկրորդ կինն էլ չդիմացավ Սահակի բուռն կրքերին և մեռավ: Այն ժամանակ կրկնակի այրին խանութը հանձնեց որդկերանց, ճորեն մորուք թողեց և տեղափոխվեց Բաքու: Հենց առաջին օրը, երբ Սահակ դային Բաքվում հանդիպեց ինձ, ասաց.

— Լսեցի, որ էստեղ սիրուն խանումներ կան, եկել եմ տեսնելու. էլ չեմ պսակվելու, տերտերների օրհնությունից խեր չտեսա: Հիմի ուզում եմ տեսակ-տեսակ կնիկների հետ ֆեֆ ֆաշել:

Նա ամեն օր գալիս էր գրասենյակ, նստում էր դրսում և կրճոտ աչքերով նայում էր անցնող կանանց: Երբեմն աչքով էր անում նրանց: Նրա խոսակցության գլխավոր նյութը կանայքն էին և սեռական հարաբերությունները: Նա ասում էր, թե կինն է կյանքի միակ երջանկությունը: Ոգելից ըմպելիքներ չէր գործածում, շաբաթ էր խմում: Նա ասում էր.

— Գինին ինձ թուլացնում է, իսկ շաբաթը Մեջնունի նման մեջքս պնդացնում է:

Մեր գրասենյակի հով շաբար ու թեյի մի խանութ կար: Նրա տերերը երկու ռուս ներքինիներ էին, մեկը՝ շատ գեր, մյուսը՝ շատ նիհար, երկուսն էլ վաղաժամ թառամած դեմքերով: Նրանց մազազուրկ երեսները սերկևիլի գույն ունեին, իսկ կաշին նմանվում էր խորոված խնձորի կեղևին:

Սահակ դայիս ասում էր.

— Ա՛յ անխելքներ, դուք, որ ձեզ կոտել եք, աշխարհից ի՞նչ լազար եք տեսնում:

Եվ ներքինիները կատաղելով՝ թքում, փախչում էին իրենց խանութի ետև: Նրանք Սահակ դայիին խելագար էին համարում: Ես նրանց հետ համաձայն չէի:

Սահակ դայիս ասում էր.

— Գիտե՞ս, Միհասի տղա, ես Մահամմադիս ավելի եմ սիրում, քան Քրիստոսին: Ղուռանն ասում է. «Ինչքան կնիկ ուզում ես, վերցրու բեվի արա»: Քո Քրիստոսն ի՞նչ է ասում. «Տանջվիր, տապակվիր, չեմ թողնիլ, որ մեկից ավելի կնիկ առնես»: Մի հարցնող լինի՝ «ա՛ Քրիստոս, բե՞զ ինչ: Մարդուն դո՞ւ ես ստեղծել, որ նրա մեջքի զորությունն իմանաս: Ի՞նչ ես կոտրած գդալի պես մեջտեղ ընկնում բո ավետարանով: Փա՜ռ, «աստծու որդին եմ»: Հա՛, ինչպե՞ս չէ: Աստված պսակվա՞ծ էր, որ որդի ունենար: Ո՞ւմ ես ուզում խաբել, ա՜ Քրիստոս: Չէ, մի հատիկ կնիկ պետք է ունենաս, էն էլ կուզ է, կաղ է, բաչալ է, պիտի մինչև մահ պահես»: - Տե՛ս, Միհասի տղա, օրինակի համար եմ ասում: Եթե ես մեկի տեղ վեց կնիկ ունենայի, ոչ մինը չէր մեռնիլ, որովհետև եթե մեկ շապիկ ունես, իհարկե, կմաշվի, բայց որ շատ ունենաս, ամեն օր մեկը կհագնես - չի մաշվիլ:

Մի օր Սահակ դայիս ներս մտավ շատ հուզված, գրասենյակում ոչ ոք չկար, բացի ինձանից:

— Գիտե՞ս որտեղից եմ գալիս, Միհասի տղա, — ասաց նա գրասեղանիս մոտ նստելով:

— Ո՞րտեղից:

— Թուրբեթի հին գերեզմանատնից, որ հիմի բանդում են: Ա՛յ, տես:

Աջ ու ձախ նայելով՝ նա արխալուղի գրպանից դուրս բերեց մի մարդու գանգ և դրեց գրասեղանի վրա:

— Այդ ինչո՞ւ համար ես բերել, Սահակ դայի:

— Համբերիր, կասեմ: Էդ անօրեն ռուսները ոչ խղճմտանք ունեն, ոչ ամոթ: Թուրբեթի գերեզմանատունը բանդում են, որ տեղը ռուսաց եկեղեցի շինեն, կասես մարդու գերեզմանն իրենց ծուռ խաչից պակաս սրբություն է: Էս գլուխն ընկած էր ցեխի մեջ: Վերցրի տարա աղբյուրի տակ լավ լվացի ու գրպանս դրեցի: Տես, Միհասի տղա, դու էլ դրա նման ես լինելու հա՜, լավ իմացիր: Մազերդ ու ունքերդ թափվելու են, մխդ փտելու է ու թափվելու, բիթդ ընկնելու է ու տեղը դրա նման մի այլանդակ ծակ է երևալու, ատամներդ բացվելու են: Մտիկ արա դրան, կասես հարամզադան ծիծաղում է մեզ վրա:

Եվ, գանգը ձեռքերի մեջ պտտցնելով, շարունակեց.

— Հը՛, ասա՛ մա՛րդ, դու ո՞վ ես եղել, ի՞նչ, բե՞զ, թաջի՞ր, նազի՞ր, վեզի՞ր, ո՞վ է իմանում, կարելի է շահզադա: Ասա, բանի սիրուն-սիրուն կնիկներ ունեիր, բանիսի՞ն էիր... Հը՛հ, պաչ արա խաթունիներիդ, էլի՛: Չես կարող, հա՞: Դե՛, իհարկե, պռոշներ չունես, փտել են ու թափվել: Կեր, էլի, կեր, տոլմա, փլավ, յախնի, խմիր շարբաթ, մեջտուն կեր, որ կնիկներդ չծիծաղեն բեզ վրա: Դե՛հ, գնանք, բեզ պիտի տանեմ, ցույց տամ մեր հարուստներին, թող տեսնեն նրանք, թե իրենք ինչ են լինելու ու խելքի գան, իրարու միս չուտեն:

Եվ, գանգը թաշկինակի մեջ փաթաթելով ու գրպանը դնելով, Սահակ դայիս հեռացավ:

Տարիներ անցած ինձ ասացին, որ այդ տարօրինակ մարդը մեռնելիս պատվիրել է, որ իր դագաղի վրա ոչ ոք չարտասվի, բացի գեղեցիկ կանանցից:

Մեր գրասենյակի անգործ հաճախորդների մեջ ամենահետաքրքիրը միրզա Սերոբն էր, և ես ամենից ավելի նրա հետ էի բարեկամ: Նիհար, բարձրահասակ, տակավին երիտասարդ, բայց արդեն թառամած և մազերը բունիների մոտ ներմակած մի մարդ էր երկայնաձև երեսով: Մերթ մասնավոր դասատու, մերթ հաշվապահ, նոտարի մոտ կամ դատարաններում գրագիր, նա ոչ մի տեղ երկար ծառայել չէր կարողանում իր անհանգիստ բնավորության շնորհիվ: Խռովարար չէր, միայն սիրում էր վիճաբանել ամենքի հետ և այնքան ջերմ ու գրգռված, որ տեսնողը կարծում էր, թե նա ահա պիտի հարձակվի դիմացինի վրա ու իր երկաթ ոսկրոտ ձեռներով խեղդի նրան:

Միրզա Սերոբի վիճաբանության հյութը միշտ համամարդկային էր: Քաղաքագետ, իմաստասեր, պատմագետ, նա փիլիսոփայորեն ճնշում, վերաճնում էր ազգերի ու պետությունների վիճակը և յուրաքանչյուրի տեղը որոշում անցյալ, ներկա և մանավանդ ապագա պատմության մեջ: Ցինիկ չէր Սահակ դայիի պես, բայց չէր հարգում ոչ օրենքներ, ոչ կրոն, ոչ ավանդություններ: Բացարձակապես ժխտում էր հոգու գոյությունը: Նրա կրոնն ու հավատը դրական գիտություններն էին: Նոր խաղալիք ստացած երեխայի պես ուրախանում և հափշտակվում էր, երբ լրագրերում կարդում էր գիտական կամ գործնական մի նոր գյուտի մասին: Իսկ երբ միրզա Սերոբը ոգևորվում էր, հնար չկար նրան լռեցնելու, վա՛յ այն մարդուն, որ այդ միջոցներին կփորձեր որևէ կասկած հայտնել գիտության զորության մասին: Այդպիսուն բառի բուն նշանակությամբ սեղմում էր պատին, բռնում էր նրա այրուտուկի կամ պիջակի օձիքը, այնքան խարոզում, որ հակառակորդը թափահարված և ուժասպառ՝ կամ համոզվում էր, կամ, օձիքն ազատելով, փախչում էր, մտքում երդվելով այլևս չվիճաբանել նրա հետ: Այդ պահերին միրզա Սերոբը հոգեկան խորին հաճույքից ձեռները կցում էր իրարու, մոտեցնում էր իր երկարավուն սրածայր բթին և տրորում, կարծես ափերի մեջ մի բան էր ոլորում: Եվ սկսում էր մի բանի րոպե անցուդարձ անել խոշոր բայլերով, ամբողջ իրանով երերվելով, ինչպես ուղտի վրա արշավող մեկը:

Միրզա Սերոբն ամուրի էր: Նա ամուսնությունը հերքում էր: Կանանց մասին շատ քիչ էր խոսում, այն էլ միշտ բացասաբար: Թե ինչպես էր ապրում անձնապես՝ չգիտեմ: Նա երբեմ չէր խոսում կյանքի առօրյա պիտույքների մասին: Նրա հագուստն ամառ-ձմեռ միևնույնն էր -երկայն փեշերով մոխրագույն սյուրտուկ, կարկատած կոշիկներ, հնամաշ ֆուրաժկա, մի կտոր սև ժապավեն, իբր թե փողկապ:

Միրզա Սերոբը լավատես էր անսահման: Նրա իդեալն էր ընդհանուր մարդկության մերձավոր երջանկությունը, որին հավատում էր խորապես: Նա աստվածացնում էր բնությունը, պաշտելով նրա անխախտելի օրենքները: Տիեզերքի անհունության մեջ մարդն էր գերագույն ստեղծագործությունը: Եվ միրզա Սերոբը սիրում էր մարդուն, միևնույնն է՝ ինչ դիրքի էլ նա լիներ: Բողոքում էր նրա կյանքի կարճատևության դեմ: Չհավատալով անդրգերեզմանյան կյանքի գոյությանը՝ ներկայի համար պահանջում էր ավելի, բան սահմանել էր բնությունը: Նա ասում էր.

— Ընդունում եմ, մահն անխուսափելի է, և ոչ մի գիտություն չի կարող երբևէ մարդու կյանքին հավիտենականություն պարգևել: Բայց ինչո՞ւ բնությունն իր գլուխ-գործոցի համար բացառություն չի արել: Մեռնում ենք — լավ, բայց ինչո՞ւ միայն մի անգամ ենք ծնվում: Ես կկամենայի այսօր մեռնել, մի երկու դար հետո նորեն աշխարհ գալու պայմանով, որպեսզի արժանանամ տեսնելու ինչ նորանոր հաղորդություններ են տարել գիտությունները:

Ինձ վրա միրզա Սերոբն ունեցել է որոշ ազդեցություն: Նրա ցուցմունքով ես կարդացել եմ մի շարք գրքեր, որ հետագայում ինձ համար եղել են օգտակար: Ահա ինչու այսօր սիրով և երախտագիտությամբ եմ հիշում նրա անունը:

VI

ԳՐՔԵՐ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ես ունեի մի խումբ ընկերներ, բոլորն էլ ընթերցասեր: Հիշում եմ նրանցից ոմանց անունը — Ալեքսանդր Նաջարյան, Ալեքսանդր Աբելյան, Աբել Ապրեսյան, Արշակ Քալանթար: Մի օր որոշեցինք դիմել Մարդասիրական ընկերության և խնդրել, որ նա իր շինության մեջ հատկացնի մի սենյակ: Մտադիր էինք այնտեղ հավաքել մեր ունեցած գրքերը և, միջոցներ ձեռք բերելով, հետզհետե կազմել գրադարան-ընթերցարան:

Բարեբախտաբար, վարչության նախագահն իմ պատրոնն էր, Սամվել Բաղիրյան, թեև ոչ այնքան գրասեր, բայց շատ պայծառամիտ մարդ, մեր խնդիրը հարցվեց ավելի, քան կարող էի սպասել:

Մարդասիրական ընկերությունը ոչ միայն սենյակը տվեց, այլև որոշեց տարեկան վճարել 500 ռուբլի գրադարանի ծախքերի համար:

Ես հրավիրվեցի գրապահ:

Երջանիկ էի, որ վերջապես ընկա իմ սիրած տարերքի մեջ, ինչպես ցորենի շտեմարան գցված հավ: Առաջին 500 ռուբլով մենք Մոսկվայից բերել տվեցինք մի շարք ընտիր գրքեր, մեծ մասամբ գիտական, բաղաքատնտեսական և փիլիսոփայական բովանդակությամբ: Ցուցակը կազմելու մեջ ինձ օգնել էր պետական ժողովրդական դպրոցների վերատեսուչ Բեզլար Ստեփանյանը — մի շատ զարգացած մարդ: Այդ ժամանակ էր, որ ես նորադարձի ջերմեռանդությամբ ընկերացա ընթերցանության: Որոշ ծրագիր կամ ուղեցույց չունեի, կարդում էի՝ ինչ որ տեսնում էի, այսօր Հերբերտ Սպենսեր, վաղը Լասսալ, Ռիկարդո, Սեն-Սիմոն, Պրուդոն և այլն:

Հեղափոխական գրականությանը ծանոթացել եմ մեջ առ մեջ: Գեղեցիկ գրականության ընթերցումն սկսել եմ արկածային կամ բրեական արյունոռուշտ վեպերից, հետո միայն անցել լուրջ վիպասանության և բանաստեղծության:

Բայց ինձ վիճակված չէր երկար ժամանակ մնալ իմ պաշտոնում: Մի օր ինձ անսպասելի կանչեցին տեղական ժանդարմերիայի գնդապետի մոտ: Հիշում եմ նրա անունն այսօր էլ — Տալդրեն: Մեկի խմիչ ես դուր չէի եկել, և նա ինձ մատնել էր: Այդ օրն առաջին անգամ մեծ զարմացմամբ իմացա, որ ես առանց ինքս գիտենալու, հեղափոխական եմ եղել, ցարին անարգել եմ: Ես գնդապետին միամտաբար ասացի.

— Ես ցարի դեմ ոխ չունեմ:

— Բայց դուք ի՞նչ գործ ունեք Կովկաս աքսորված ուսանողների հետ, — հարցրեց գնդապետը:

— Ներեցեք, ես չգիտեի, որ ուսանողների հետ ծանոթանալը բաղաքական հանցանք է:

— Այո իհարկե, քանի որ այդ ուսանողները հեղափոխականներ են:

— Ես այդ չգիտեի, — ասացի ես, թեև շատ լավ գիտեի, թե ինչու համար են իմ ծանոթները Կովկաս աքսորվել:

Ես ձերբակալությունից ազատվեցի, բայց Մարդասիրական ընկերության վարչությունը շատ բաղաքավարի ձևով ինձ հասկացրեց, որ գրադարանում մնալս կարող է կասկածի տակ գցել ընկերության «բարեհուսության» վրա:

Ես վերադարձա իմ նախընթաց ծառայության: Այդտեղ ևս երկար չմնացի, տեղափոխվեցի մի ուրիշ գրասենյակ, նորեն վերադարձա, որպեսզի դարձյալ հեռանամ: Եվ այսպես, տեղից-տեղ փոխվելով, հանգիստ չէի գտնում: Պատճառն ամենուրեք նույնն էր — միջավայրը: Այլևս ես պիտանի չէի նրա համար և զգում էի, որ Բաֆվում բարոյապես խեղդվում եմ:

Գրականությունն արդեն ամբողջովին կլանել էր իմ միտքն ու հոգին: Ոչ մի ուրիշ զբաղմունք այլևս չէր հետաքրքրում ինձ: Գրում էի առայժմ հոդվածներ թե հայ և թե ռուս լրագրերում: Նյութի պակասություն չկար - նավթային արդյունաբերությունը, հանքերը, բանվորները, գործարանները, նավագնացությունը — այդ բոլորը մի ամբողջ աշխարհ էր դիտողի համար, թեև Բաքուն ինքնըստինքյան հրապույր չուներ այլևս: Մի բանի գրքերի ազդեցությամբ առանձնապես հետաքրքրվում էի բանվորների կյանքով: Որքան մոտիկ էի ծանոթանում այդ կյանքին, այնքան ավելի ու ավելի նողկանք էի զգում դեպի հանքատերերն ու գործարանատերերը: Այդ մասին այն ժամանակվա «Մշակում» ունեմ մի շարք հոդվածներ: Այժմյան ընթերցողները գաղափար անգամ չեն կարող ունենալ այն ժամանակվա բանվորության վիճակի մասին: Այդ այն խավար ժամանակաշրջանն էր, երբ ամբողջ Անդրկովկասում չկար ոչ բանվորական որևէ կազմակերպություն, ոչ գործադուլ և մի ուրիշ միջոց աշխատավոր դասակարգի պաշտպանության համար: Բանվորը

հարստահարվում էր նույնիսկ երեկվա բանվորից, որ այսօր գործատեր է դարձել, և հարստահարվում էր ոչ միայն նյութապես, այլև բարոյապես ու ֆիզիկապես:

Այստեղ ես ավելորդ չեմ համարում առաջ բերել մի հանի կրճատումներով և առանց փոփոխելու իմ այն ժամանակվա պրիմիտիվ ոճն ու լեզուն՝ հառասուն և ութ տարի սրանից առաջ գրված իմ մի ակնարկը: Թող այժմյան բանվորը տեսնի, թե ինչ ողբալի դրության մեջ են եղել իր նախորդները:

«Ամենայն տեղ ամենայն հասարակություններուն մեջ մշակների տնտեսական դրության բարվոքման հարցը վաղուց արդեն մտել է հասարակական ամենակարևոր հարցերի շրջանը, և այժմ գրեթե չկա մի փոքրիշատե առաջադեմ ազգ կամ ժողովուրդ, որը իիչ թե շատ, այսպես թե այնպես չզբաղվեր մարդկության այդ ամենաթշվառ դասակարգի վիճակով, չաշխատեր գոնե ժամանակ առ ժամանակ, նորոգելով նրա անթիվ վերքերի սպեղանին, թեթևացնել նրա դառնակսկիծ ցավերը: Միայն մեզանում է, որ խեղճ մշակը մի չինական պատով հասարակությունից անջատված, զուրկ նրա հոգացողությունից, ենթարկված ֆիզիկական ծանր և անտանելի աշխատանքներին, օրըստօրե բարոյապես և ֆիզիկապես մաշվում է ու մահանում առանց արժանանալու մեր ուշադրությանը, մինչև անգամ առանց շարժելու մեր բնական մարդասիրական զգացումները:

Ո՞ւմ չէ պատահում ամենայն օր տեսնել թշվառ բեռնակրին ծածկված ցնցոտիներով, որոնք հազիվհազ պաշտպանում են նրա կաշվից ու չոր ոսկորներից բաղկացած մարմնի կեսը ձմեռը ցրտերից, ամառը արեգակի կիզիչ ճառագայթներից, ահագին համեստը շալակին և չվանն ուսին գցած, փողոցի այս կամ այն անկյունում շլինքը ծռած սպասելիս, մինչև որ մեկը նրա մեջքը բարձելով 7 — 8 փութանոց բեռը, բարբ տա բաղաքի մի ծայրից մյուսը և տա նրան մի հանի կոպեկ: Ո՞ւմ չէ պատահել տեսնել մշակին մուրճը ձեռքում փողոցներում արեգակի, անձրևի և ձյունի տակ, տկլոր բարի վրա շերտած հարուստ բաղաքի սալահատակի համար գետնաբարեր ջարդելիս: Ո՞վ չէ տեսել այդ միևնույն մշակին ահագին բարը կամ ծանր գերանի ծայրն ուսն առած մի հանի տասնյակ աստիճաններով այս ու այն աղայի շինության երկրորդ, երրորդ հարկը բարձրանալիս: Նրա նիհար երեսից անձրևի նման հեղում է բրտինքը, նրա կրծքի ոսկորներն ուժեղ ճնշողությունից դուրս են ցցվում, աչքերն արյան հոսումից սաստիկ կարմրում են, ծնկերը, չդիմանալով վերուժ ծանրության, ծալվում են, բայց նա ստոյիկյան համբերությունով տանում է այդ ծանրությունը, ըստ որում նրա անհատ բշնամին՝ բաղցը ստիպում է նրան տանել:

Նայիր խորն ուշադրությունով այդ բոլորի վրա, սիրելի ընթերցող, և դու սարսափ կզգաս, եթե ունես փոքր ի շատե զգայուն սիրտ:

Մշակը հալածվում է մարդկանց գազանային անխղճությունից: Տուր ինձ ձեռդ, սիրելի ընթերցող, հետևիր ինձ և տես, թե այդ ինչպես է կատարվում, թե մինչև որ աստիճան մշակի մարդկային նույնիսկ բնական իրավունքները ոտնակոխ են լինում զանազան շահախնդիրների ձեռքում: Միայն մի պահանջիր ինձնից համառ ուղեցույցի խորը տեղեկությունները, ըստ որում կանխապես խոստովանում եմ, որ այդ իմ ուժից բարձր է. ես միայն մատնացույց կանեմ քեզ այն անկյունները, ուր կատարվում են աղետալի անցքեր, որոնց մասին գուցե դու կյանքումդ լսած էլ չլինես: Ես քեզ չեմ տանիլ վերև ասված փողոցային բեռնակրի կամ շինության մշակի մոտ, որոնց դու ամենայն օր աչքի առաջ ունես և այնքան տեսել ես, որ բո աչքերը բթացել են, այլ քեզ կտանեմ մի ուրիշ տեղ, ուր մշակի դրությունը առավել տխուր, առավել սարսափելի է: Այս տեղերը Բաքվի հռչակված նավթային հանքերը և այսպես անվանված Սև բաղաքի գործարաններն են:

Վերջին երկու տասնյակ տարիները Բաքվի նավթային արդյունաբերության արագ զարգացումը բաշեց քերավ այդ բաղաքը Անդրկովկասի զանազան անկյուններից, Սիսականի, Տաթևի, Ղարաբաղի, Շամախու և ուրիշ շատ գավառներից, Ռուսաստանի և Պարսկաստանի խորքերից բազմատեսակ բախտախնդիրների շարքում, և բանվորներ, որոնք իրանց օրական ապրուստը հայթայթելու նպատակով, թողնելով իրանց հայրենի հողը, սիրելի ընտանիքը, եկած այժմ կենտրոնացած են այստեղ, Բալախանի-Սաբունչյան նավթային հանքերում և Սև բաղաքում:

Սև Քաղաք անվանվում է այստեղ հավթային գործարանների խումբը, որ սփռված մոտավորապես վեց հառակուսի վերստաչափ տարածության վրա, հեռվից մարդու աչքին ներկայացնում է մառախուղով պատած մի փոքրիկ հաղաք, որը սև մակաճուրը կրում է այն պատճառով, որ այստեղ ամենայն բան սև է՝ սկսած անշունչ առարկաներից մինչև տնային կենդանիներն ու մարդը: Բավական է այստեղ, այդ բազմաթիվ գործարաններից դուրս եկող հավթային մնացորդի թանձր ծխով վարակված օդի մեջ մի երկու ժամ մնալ, և մարդ միանգամայն կերպարանափոխվում է՝ ոտից մինչև գլուխ ծածկվելով սև մուրով: Անսովոր մարդը չի կարողանում այս մառախուղում երկար մնալ, ուր իստակ օդի բացակայությունից խանգարվում է նրա շնչառությունը: Զնայելով որ գործարանները միմյանցից բավականին տարածութեամբ հեռու են, ծխերը իրարու խառնվելով, կազմում են մի այնպիսի թանձրություն, որի մեջ հազիվհազ թափանցում են արեգակի ճառագայթները:

Ահա այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները Բաֆու գաղթող բանվորների մեծամասնությունը, խմբերով տեղավորված այս ու այն գործարանում և հենց այստեղ պիտի ծանոթանաս, որ՛ան անտանելի է այդ վիճակը: Հեռու չգնանք, մտնենք հենց առաջին պատահած գործարանը և տեսնենք՝ ինչ է կատարվում այնտեղ: Նախ և առաջ ինչ թե շատ ծանոթանանք բանվորների կացարանի հետ: Երևակայեցեք, ընթերցող, երկու սաժեն լայնութեամբ, չորս սաժեն երկայնութեամբ և 5-6 ֆուտ բարձրութեամբ մի խրճիթ, կամ ճիշտն ասած՝ մի կեղտոտ, մութ ու խոնավ նկուղ, ուր կարող են կենալ միայն անասունները: Այստեղ, ուր ապրում են 10-15 մշակներ, օդը տարիներով չի փոխվում, այստեղ հատակը հողային է, պատերը խոնավությունից բորբոսնած, առաստաղը սարդի թանձր ոստայնով սխոդված, այստեղ անկարելի է երևակայել անգամ առողջապահական որևէ կանոնի հնարավորությունը: Այն միակ լուսամուտը, որ կարծես շինված է նկուղին ավելի մոայլ տեսք տալու համար, այնքան փոքր է և այնքան մուրոտված, որ ոչ լույս է տալիս և ոչ օդ: Տիրում է մարդու շնչառությունը խափանելու չափ գարշահոտություն, որ առաջանում է օրերով չմաքրվող հատակից և թափված կերակուրներից: Ավելացրեք դրան և մշակների անհոգությունը մաքրության վերաբերմամբ: Այո՛, շատ անգամ նրանք չեն օգտվում այն էլով, որ ունեն, շաբաթներով չեն մաքրում ոչ կացարանը, ոչ իրանց, անկողին համարված, ապականված ցնցոտիները: Հաճախ նրանք ծուլանում են ողորմելի կացարանի լուսամուտը բանալու, և դրսի օդը ներս է թափանցում միակ դռնակով: Այդ ծայրահեղ անփութությունն առաջանում է նախ, իհարկե, տգիտությունից, ապա սովորությունից: Հիրավի, գյուղի առողջարար կլիմայից եկած մշակը այստեղ առաջին օրերը զգում է օդի գարշահոտությունը, բայց շուտով աստիճանաբար ընտելանում է մթնոլորտին և դառնում է անտարբեր դեպի մաքրությունը: Կարիք չկա բժիշկ լինելու, որպեսզի գիտենալ, թե մշակն իր կյանքի որպիսի գնով է ձեռք բերում այդ սովորությունը և այդ անտարբերությունը: Ահա ինչ է ասում այդ մասին ճշմարիտ Լուխսը. «Մենք տեսնում ենք, թե ինչպես անմահուր բնակարանների ապականված օդում սովոր են հետտութեամբ և իբրեթ անվնաս ապրել զանազան խեղճեր առանց զգալու այդ ապականությունը, մինչդեռ մեզանից ամեն մեկը երբ ոտ է դնում այդտեղ, իսկույն զգում է, թե օդը փչացած է, բայց որովհետև մենք ևս հետո փոքր առ փոքր սովորում ենք նրան, այնուհետև մեզ ևս թվում է, թե դրանից վնասակար հետևանքներ չեն առաջանում: Ահա ինչումն է կայանում մեր մոլորությունը: Մենք բավականանում ենք ապականված օդով, որովհետև սովորում ենք նրա պայմաններին, բայց գիտե՞ք ինչ գնով, ինչ միջոցներով ենք ձեռք բերում այդ պայմաններին ընտելանալու հնարավորությունը: Մեր օրգանիզմի բոլոր սննդական մասերի և զգայարանքների թուլանալով, որը մեզ համար առաջացնում է թթվածնի համեմատաբար պակաս քանակության ներշնչելը: Ապականված օդը բավարար է միայն հիվանդ օրգանիզմ ունեցող մարդուն, ինչպես և նրանով բավականանում են պաղարյուն կենդանիները: Երբ մենք մտնում ենք ապականված մթնոլորտ, մեր շնչառությունը դժվարանում է, և այդ պատճառով թուլանում են և՛ մեր զգայարանները, որից հետո կրկին մեր շնչառությունը թեթևանալով, թթվածնի ավելի մեծ քանակի կարիք չենք զգում և այդ ժամանակ ներս ենք շնչում թթվածնի համեմատաբար շատ պակաս քանակ, քան մաքուր օդի մեջ: Առանց այդ սովորության, այսինքն՝ առանց մեր օրգանիզմի բոլոր կենսական վարումների թուլացման, մեզ համար անկարելի է մնալ ապականված մթնոլորտի մեջ:

Ահա մի գեղեցիկ պատասխան այն կարճամիտ և բարեսիրտ բուրժուաներին, որոնք միշտ, երբ ես խոսք եմ ունեցել նրանց հետ գործարաններում բանվորների բնակարանների մասին, չեն ամաչել արտահայտել այն եզվիտական միտքը, թե մշակն առողջ բնակարանի կարիք չունի, թե նա սովոր է իր կյանքը անցկացնել խոնավ ու կեղտոտ նկուղներում:

Ինչպես ասացինք, այդ 4 սաժեն երկայնություն, 2 սաժեն լայնություն և 5-6 ֆուտ բարձրություն ունեցող խուցի մեջ զետեղված են 10-15 բանվորներ: Եթե այդ թվերը բազմապատկենք, կստանանք 2,352 խորանարդ ֆուտ օդի պարունակություն, Բավակա՞ն է արդյոք օդի այդ չնչին ֆանակը եթե ոչ 15, գոնե 10 մարդու համար, հազար անգամ ոչ: Եթե զանազան փորձառու բժիշկների, օրինակ, Գուբերի, Ջեֆթլեբենի, Ռեկլամի և ուրիշ երևելի հեղինակների գրության համեմատ մի չափահաս մարդուն անհրաժեշտ է 4-ից մինչև 8 հարյուր խորանարդ ֆուտ օդի պարունակություն փոքր ի շատե առողջարար բնակության համար, կնշանակե 10 մարդու համար անհրաժեշտ է միջին թվով 6,000 խորանարդ ֆուտ: Սրանից, սիրելի ընթերցող, կարող ես եզրակացնել, թե որպիսի կործանիչ ներգործություն ունի 2,352ֆ. ֆուտ օդի պարունակությունը մի տասնյակ թշվառների օրգանիզմի համար նույնիսկ այն ժամանակ, եթե այդ օդը լիներ մաքուր, բայց նա, ինչպես վերև ասացինք, մաքուր չէ: Կան և այնպիսի գործարաններ, ուր մշակների կացարաններն ավելի անձուկ են: Մի թուրքի գործարանում ես տեսա մի գետնափոր խրճիթ, որի երկայնությունը 5 ու կես ֆուտ էր: Այդտեղ բնակվում էին 6 մշակներ:

Շատ գործարաններում բանվորների բնակարաններում չկան մահճակալներ, իսկ եթե կան էլ այդ մի բանի նավթոտ տախտակներ են միմյանց կողմում շարած և մի բանի կեղտոտ ու պատառոտված փսխաթներով ծածկված, որոնք միևնույն ժամանակ բանվորներին ծառայում են անկողնի փոխարեն, իսկ գիշերները վերմակի փոխարեն նրանց ծառայում են այն ցնցոտիները, որ կրում են ցերեկներն իրանց վրա որպես հագուստ: Այն գործարաններում, ուր այդ նավթոտ տախտակներն էլ չկան, բանվորները գիշերները ճնում են հողի հատակի վրա, որ միշտ խոնավ է գործարանների ծովի ափին մոտ լինելու պատճառով, այնպես որ շատ տեղերում երկու-երեք արշին խորությեամբ գետնից ծովի ջուր է դուրս գալիս: Թե որքան վնասակար է մարդու առողջության համար մի այդպիսի խոնավություն, այդ կարող է իմանալ ամենատգեսը մեզնից: Հոդացավ, ոսկրացավ, դեղնացավ ստամոքսի կատար, որը շատ դեպքերում թոքախտի է վերափոխվում-ահա խոնավության հետևանքները: Նամանավանդ բանվորները տառապում են զանազան ցավերով ծմեռը ցրտերից: Վառարաններ շատ բնակարաններում չկան, կան մանղալներ: Բայց առավել լավ կլինի, եթե բանվորները բնավին կրակ չվառեն իրանց բնակարաններում, որովհետև կրակի գործությունից խոնավ պատերի միջից տոմկությունը դուրս գալով օդը լցնում է նեխյալ գոլորշիներով և գարշահոտությունը սաստկացնում:

Անուշադիր թողնվելու չէ և այն հանգամանքը, որ Պարսկաստանից եկող բանվորներն իրանց հետ բերում են զանազան հիվանդություններ: Շատ հասկանալի է, որ այդ ախտավորները ապրելով միևնույն բնակարաններում ամբողջ բանվորների հետ, հետզհետե վարակում են նրանց:

Պակաս չեն և բարոյական ախտերը: Շամախու կամ Ղարաբաղի գյուղերից եկած մի բանվոր մի բանի ամսվա ընթացքում այնպես է անբարոյականանում, որ շատ անգամ սոդոմական ախտը սովորական բան է դառնում նրա համար: Բայց պետք է նկատել, որ այդչափ անբարոյականանում են միայն անչափահասները, այսինքն նրանք, որոնք դեռ պատանեկան հասակի մեջ են: Ինչ վերաբերում է չափահասներին, սրանք անխախտ պահում են գյուղացու առաքինի կենցաղավարությունը: Երիտասարդ մշակները հեռու չեն հարբեցողությունից, գողությունից, միմյանց դեմ թշնամական դավեր լարելուց, շռայլ և աննպատակ ծախքերից... Պատահում է, որ ամիսը 10-12 ռուբլի ռոճիկ ստացող բանվորը, ամսականը մի օրում վատնելով, մնում է ֆաղցած: Սակայն այդ անում են ամուրի բանվորները, իսկ ընտանետեր բանվորներն իրենց կոպեկները խնայում են, որպեսզի տուն վերադառնալիս մի բան տանեն իրանց զավակների համար: Բայց երբեմն այն սև կոպեկներն էլ, որ բանվորի մի բանի տարվա դառն աշխատանքի գինն է, իր ընկերների գողության զոհն են դառնում, և բանվորն ստիպված է լինում այնուհետև մի բանի տարիներ էլ ավելի մնալ պանդխտության մեջ կորցրածը ձեռք բերելու համար: Անցյալ տարի ես տեսա մի բանվոր, որի երեք տարվա աշխատանքի պտուղ 75 ռուբլին գողացել էր նրա ընկերն այն օրը, երբ նա պատրաստվում էր հայրենիք վերադառնալ: Մարդը հուսահատությունից ծեծում էր իր գլուխը; լիզում էր գողացողի ոտները, աղաչելով նրան, որ գողացածի մի մասը գոնե վերադարձնի, բայց գողը հանճն չէր առնում իր գողությունը:

Ես վերև ասացի, թե բանվորների բնական մարդկային իրավունքները ոտնակոխ են լինում: Առաջ եմ բերում մի բանի փաստեր, որոնք կարող են հաստատել իմ խոսքերը: Առաջին աչքի ընկնող փաստը այն է, որ գործարանատերերն ու

հանքատերերը չեն որոշում բանվորների աշխատանքի ժամերը: Շատ էշերն են բանվորներին բանեցնում օրական 12-13 ժամ: Մանր գործարաններում, որոնց տերերն իրանց շահի համար օրական վախճանակ մի անգամ, երկու-երեք անգամ են ֆոտոգեն ածում, բանվորներն աշխատում են առավոտյան 3 ժամից սկսած մինչև գիշերվա 10-11-12 ժամը, այն էլ առանց հանգստի, անընդհատ: Շատ անգամ բանվորն իր ցամաք հացն ուտում է աշխատանքի ժամանակ: Օրական 19 ժամվա անընդհատ աշխատանքը շատ արագ էայխայում է բանվորի առողջությունը: Եթե մենք ունենայինք ստատիստիկական տեղեկություններ, կարող էինք իմանալ, թե Բաքվում տարեկան հինչ անագին տոկոս է կազմում հիվանդների և մեռնողների թիվը: Դուք, ընթերցող, հազիվ թե կարողանաք ցույց տալ մի բանվոր, որն այստեղից հայրենիք վերադառնար այն առողջությամբ, որով եկել էր այստեղ: Պետք է նկատի ունենալ և այն հանգամանքը, որ նավթային գործարաններում աշխատող բանվորների գործը համեմատաբար ավելի ծանր և վտանգավոր է, քան մի ուրիշ ֆիզիկական աշխատանք: Թե ինչումն է կայանում այստեղ բանվորների գործը և նրա ծանրությունը ու վտանգավորությունը - այս մասին ես կգրեմ մի ուրիշ ընդարձակ հոդված: Առայժմ առաջ կբերեմ մի քանի կետեր: Բանվորի առաջին գործն է, երբ առավոտյան արթնանում է 2-3 ժամյա քնից, նավթային կաթսաները սև նավթով լեցնելը: Այդ գործը տևում է մեկից մինչև երկուկես ժամ, նայելով կաթսայի մեծությանը: Եթե կաթսան պարունակում է 500 փութ նավթ, բանվորին հարկավոր է առնվազը 2 ժամ շարունակ պտտեցնել նասոսի կռնակը մինչև կաթսայի բոլորովին լեցվելը: Այս առաջին երկու ժամը բանվորը գործում է միշտ մինանույն դիրքում, այն է՝ ոտքի վրա, մեջքից կռացած: Սրանից առաջանում է արյան հակահոսում, որի հետևանքն էլ մեջքացավ, գլխացավ և այլն: Մի քանի գործարաններում, ուր նրանց տերերի ժլատության պատճառով նասոսներ չկան, բանվորները նավթը պահեստից կաթսաները են տեղափոխում դույլերով կամ բարդաղ ասված կավից շինած մի տեսակ անոթով: Այդ միջոցը, իհարկե, առավել դժվարացնում է բանվորի գործը, որովհետև եթե կաթսան 200 դույլ է տեղավորվում, նա այդքան անգամ էլ կռանում է ու բարձրանում: Պատահում է, որ բանվորի ձեռքից բարդաղը դուրս է պրծնում ու նրա ողը ջարդում, այդ ժամանակ նա մտածում է ոչ իր ցավի, այլ այն մասին, թե ինչ պիտի պատասխանի տիրոջը, իսկ տերը մի քանի հիւոցներից հետո բարդաղի ու նրա միջից թափված նավթի արժեքը դուրս է բերում բանվորի ռոճկից:

Բանվորի երկրորդ գործն է՝ հորից ջուր դուրս բերելը: Այս գործը միևնույնն է, ինչ որ առաջինը:

Երրորդ գործն է՝ արդեն եփված նավթը կաթսաներից չաների մեջ տեղափոխելը: Այդ գործը նույնպես կատարվում է նասոսով կամ դույլերով: Սակայն պետք է նկատել, որ կաթսաները չաներից բավական հեռու են, և շատ անգամ բանվորը, նավթը դույլերով փոխադրելու ժամանակ, հանապարհի լպրծուն լինելու պատճառով սայթաքում է ու, վայր ընկնելով, թե իրան վնասում և թե անոթն է կոտրում, որ նրա համար ավելի մեծ դժբախտություն է, քան մարմնապես վնասվելը:

Բանվորի չորրորդ գործն է՝ եփված նավթը, որ այժմ չզտված ֆոտոգեն է, չաներից դարձյալ մի ուրիշ տեղ տեղափոխելը: Այդտեղ նա պիտի զտվի, կալամարի հետ ձուլվելով: Վերջին նյութի վտանգավոր բնույթը հայտնի է, և բանվորը պետք է նրա հետ մեծ զգուշություններով վարվի, ըստ որում բավական է, որ կուպարոսի մի կաթիլն ընկնի նրա մարմնի վրա, և նա կայրվի: Բայց որքան էլ բանվորն զգույշ լինի, այնուամենայնիվ շատերն են վնասվում: Մի օր ես դժբախտություն ունեցա տեսնելու մի մշակ, որ իր մեջքի վրա մի պուդանոց մեծ շիշ կուպարոս տանելու ժամանակ շիշը տրաքվեց և մշակին հեղեղեց: Ողբալի էր մշակին տեսնել: Նա այրվում էր խելագարի նման վազելով այս ու այն կողմ ու գոռալով, մինչև որ ներկա եղողներն օգնության հասան և ջուր թափեցին նրա վրա: Բայց զարմանալին այն է, որ կուպարոսի տերն այդ ժամանակ զբաղված էր իր կոշիկով, որի վրա ընկել էր այրող հյութից մի կաթիլ:

Ահա այս տեսակ և նման ծանր ու վտանգավոր գործ է կատարում գործարանի բանվորը օրվա մեջ 18-19 ժամ: Տեսնենք այժմ, թե ինչպես է վարվում նրա հետ գործարանատերը և թե որքան է վարձատրումնրան: Առաջինը՝ բոլոր գործարաններում բանվորները միաչափ չեն վարձատրվում: Մեծ գործարաններում նրանց վարձը համեմատաբար բարձր է, 12, 16-18 ռուբլի ամսական, մինչդեռ փոքրգործարաններում վարձն է 10 — 14 — 16 ռուբլի: Շատ անգամ այդ չնչին վարձն էլ բանվորը լիովին չի ստանում: Այս դեպքում մի առանձին գաբեջի դեր են կատարում գործակատարները: Նրանք հազարու մի տեսակ պատրվակներով ու խարդախություններով պահում են բանվորի

ամսականի մի մասը և յուրացնում: Ահա ինչու ամսական հազիվ 25-30 ռուբլի աշխատավարձ ստացող գործակատարը մի բանի տարվա մեջ որոշ կապիտալ է ձեռք բերում և սկսում է պարապել սեփական գործերով... Թե ինչպես են խարդախ գործարանատերերը հարստահարում բանվորին — ահա ձեզ մի օրինակ: Դիցուք նա բանվորին վարձել է ամսական 16 ռուբլով: Նախ՝ նա առաջին 3 — 4 օրը կամ մի ամբողջ շաբաթ ստիպում է աշխատել անվարձ, իբրև թե նրա աշխատելու ընդունակությունը փորձելու համար: Երկրորդ՝ գործարանատերը բանվորի հետ ոչ մի գրավոր պայմանագրություն չի կապում: Եվ իրավ, ի՛նչ հարկավոր է գրավոր պայմանագրություն, բանի որ նա իրան ապահովում է, ամեն ամիս բանվորի ամսականի որոշ մասը պահելով: Բանվորն ուզենա էլ հեռանալ գործից, չի կարող, որովհետև այդ դեպքում պիտի գրկվի գործարանատիրոջ մոտ գտնված դրամից: Անցնում են տարիներ, վերջապես բանվորը կարոտում է իր ընտանիքին և ուզում է վերադառնալ հայրենիք: Այդ դեպքում գործարանատերը գիտե, թե ինչ պիտի անե. նա իր դերը սերտած ունե...

— Ի՛նչ հաշիվ, ի՛նչ բան, ես ձեզ չեմ արձակել, դու պարտավոր էիր մի ամիս առաջ հայտնել ֆո դուրս գալը, որ ես ֆո տեղը մարդ վարձեի: Դու գիտե՞ս ինչ վնաս կարող է բերել ինձ ֆո դուրս գալը գործի տաք ժամանակ:

Գործարանատերը գիտե, որ մի հասարակ մշակի գործից հեռանալն իրեն ոչ մի նյութական վնաս չի կարող հասցնել, բայց նա այդ ասում է ուրիշ մտքով: Մշակը հասկանում է այդ միտքը և սկսում է խնդրել, աղաչել, որ ինչպես և իցե հաշիվը վերջացնելով արձակի իրան: Գործարանատիրոջ սիրտը փոքր-ինչ կակղում է մշակի աղաչանքներից, և տալիս է նրա վերջնական հաշիվը, բայց վա՛յ այն տալուն:

— Քեզ պատկանում է, — ասում է նա, — տարի ու կես գործելուդ համար այսքան գումար, սրանից ստացել ես այսքան, տասը շուշա ես կոտրել, դրա համար դուրս եմ բերում այսքան, այդինչ ժամանակ չես գործել, ֆո վարձից դուրս եմ բերում այսքան և, վերջապես, մնում է այս, առ, ստացիր ու կորիր ջհանննամը:

Հազար գոռա մշակը, հազար աղաչի ու արտասուք թափի, ո՛վ է լսելու նրան: Շատ կերկարացնե, օլինքին կտան ու ցեխի մեջ կգլորեն: Ճարահատյալ նա վերցնում է վերջին կոպեկներն ու աչքերը սրբելով հեռանում է:

Մշակի ֆիզիկապես հարստահարվելու մասին, կարծեմ ավելորդ է խոսել վերև բերած մի բանի տեղեկություններից հետո: Բայց ոչ, դա բիչ է մշակի համար, նա գուցե իրան բախտավոր համարեր, եթե թողնեին օրվա այդ 18-19 ժամերը հանգիստ գործեր... Ես չեմ խոսի այդ մասին երկարորեն, ես չեմ պատմի այն թակի, ծեծի և փողոցային ամենագարշելի հիշոցների մասին, որոնցով գործարանատերն ամենայն օր վարձատրում է խեղճ մշակին, այլ կարճառոտ կպատմեմ երկու դեպքեր, որոնց նմանը հազվագյուտ չեն մշակների կյանքում, և վերջ կտամ իմ ներկա հոդվածին: Այդ երկու դեպքերից մեկը պատմել է ինձ մի հայ գործարանատեր՝ Ալեքսանդր Նաջարյան անունով, իսկ մյուսն արդեն հայտնի է Բաքվի հասարակությանը և տեղական լրագիրների միջոցով ուրիշ տեղեր էլ:

Ահա Ա. Նաջարյանի պատմածը. մի գործարանատեր վարձում է մի մշակ ըստ սովորության առանց գրավոր պայմանագրության: Անցնում են ամիսներ, և մշակը, որ ամենայն օր ծեծի ու հիշոցների է ենթարկված լինում գործարանատերից, վերջապես մի օր կամենում է թողնել վերջինին և վարձվել մի ուրիշ գործարանատերի մոտ: Գործարանատերը չի ուզում արձակել մշակին, իսկ վերջինն առանց իր վարձին սպասելու կամենում է հավաքել իր շորերն ու դուրս գալ: Այն ժամանակ գործարանատերը հրամայում է մյուս մշակներին՝ կապել նրան մի այուն ու ծեծել, սկսվում է ինկվիզիցիան, և փայտի անխնա հարվածներից մշակի մարմնի զանազան տեղերից արյուն է հոսում: Գոռոցների վրա վազում են հարևանները, որոնց թվում և Նաջարյանը, և մշակին մերձիմահ խլում են գործարանատիրոջ ձեռից: Մշակը չորս ամիս հիվանդանոցում բժշկվելուց հետո միայն առողջանում է:

Երկրորդ դեպքը պատահում է Բալախանիում և ահա ինչպես: Ադամյան ազգանունով մի հայ հանքատիրոջ նավթահորի երկաթե խողովակը, որի տրամագիծը լինում է 16 դյույմ վեց սաժեն խորությունում ծռվում է, որ սովորական է նոր բանդվող հորերի համար: Հանքահորի վարիչ գործակատարը փոխանակ այդպիսի դեպքերի համար նշանակված գործիքի, մի թուրք պատանի մշակի ձեռը տալով պարանի ծայրը՝ հրամայում է նրան իջնել խողովակի ներսը և ուղղել նրան:

Պատահին, պարանի ծայրից բռնած, իջնում է: Հորի մեջ գոյացած գազը խեղդում է նրան, և նա, պարանի ծայրը ձեռից բաց թողնելով, գլորվում է հորի հատակը: Հանճարեղ գործակատարը մնում է շվարած, մի ուրիշ մշակ համաձայնվում է 50 ռուբլով իջնել հորը պատանուն դուրս բերելու համար: Փորձում է, բայց նրա մարմինը խողովակի նեղության պատճառով ներս չի գնում, այն ժամանակ հորի միջից դուրս են հաշում երկաթե խողովակը, հորը փոքր-ինչ լայնանում է, և երկրորդ մշակի մեջքին կապելով պարանի ծայրը գլխիվար բաց ենթողնում հորի մեջ՝ առանց մտածելու, որ հորի հողե պատերը կարող են փլվել և երկու մշակներին էլ կենդանի թաղել: Երկրորդ մշակը երկաթե կեռը գցում է պատահի մշակի մեջքին: Դրսում լինողները հաշում են պարանը, և երկու մշակներին էլ դուրս են բերում անշնչացած:

Զարմանալին այն է, որ գործակատարը հիմարի մեկը չէ: Նա հոսոս ազգասերներից մեկն է, անունը Նազարեթ Առավելյանց, որ մի ժամանակ հայերեն մի բրոշյուր էր հրատարակել, եթե չեմ սխալվում, «Ջայն բարբառս վաճեցվույն առ ամենայն հույս» վերնագրով: Երևի նրա արարքը հենց իր ազգասիրության արգասիքն է եղել, և նա կամեցել է Հայաստանի էյուրդերի վրեժը Բաֆու գալով մի թուրք պատահի մշակից լուծել:

Բաֆվի բանվորների այս դրությունը, որ ես նկարագրել եմ սրանից հառասուն և ութ տարի առաջ, այն ժամանակ այնքան բնական էր համարվում, որ ոչ ոքի չէր զայրացնում, նույնիսկ ամենաառաջադեմ կոչված ինտելիգենտին: Ապագայումն էլ այդ դրությունը գրեթե չփոխվեց, մինչև որ եկավ Հոկտեմբերյան հեղափոխությունը և կերպարանափոխեց բանվորների կյանքը կատարելապես:

Արդեն նավթային աշխարհն ինքնըստինքյան դարձել էր մի ընդարձակ ասպարեզ մարդկային գերագույն բնազդների զարգացման համար:

Դուրս գալով մի գրասենյակից և անցնելով մյուսը որպես հաշվապահ կամ վարիչ, որքան գնում, այնքան ավելի ու ավելի համոզվում էի, որ ընդհանուր ապականության մեջ աեսք է ունենալ հակաթույն չվարակվելու համար ամենուրեք տարածված ախտով: Այդ հակաթույնը ես ունեի իմ հոգու մեջ-դա իմ սերն էր դեպի գրականությունը և գրագետի համբավը: Կյանքի մեջ լինելով՝ ես կյանքից դուրս էի, ոսկին ինձ չէր հափշտակում, իմ միտքն զբաղեցնողը մարդկային սիրտն ու հոգին էին: Ես արդեն միջավայրը դիտողի և ուսումնասիրողի դերի մեջ էի, ուստի իմ թույլ ձեռները ապահովված էին կեղտից: Դա բավական չէր. տեղն եկած ժամանակ ես չէի վարանում հարվածել ապականությունը նույնիսկ այդ մարդկանց մեջ, որոնցից էր կախված իմ նյութական վիճակը: Հակառակ իմ տակավին արտասովոր միամտության, թե՝ բարին պետք է լինի սիրելի և չարը զազրելի, ես տեսնում էի, որ, ընդհակառակը, նա է ավելի սիրված և հարգված, ով ամենից ֆիչ է իր եսի հետ հաշվի նստում: Իմ աչքերի առջև մարդ էակն իր նմանի կոկորդը բռնած, պատիճ սեղմելով, խեղդում էր, և ոչ մի անցորդ չէր փորձում խեղդվողին ազատել: Իրարու բոթելով ու հրելով, յուրաքանչյուրն աշխատում էր իր տեղը լայնացնել մրցման ասպարեզում, և, իհարկե, տուժում էին նրանք, որոնք անզոր էին իրենց ոտների վրա կանգնելու: Թավալելով տկարների, զորավորների անցնում էին առաջ առանց ետ նայելու, շատ անգամ իրանց զոհերի դիակը կոխկրտելով երկաթե կրունկներով: Կատարվում էր այն, ինչ որ տեղի ուներ մի ժամանակ Կալիֆորնիայի և այժմ Ալյասկայի ոսկեհանքերում՝ մինչև ավազակային կողոպուտ ու մարդասպանություն:

Վերջին չորս տարիները Բաֆվում ես ընկել էի մի միջավայր, ուր ընկերոջ վերջին կոպեկը գողանալը և նրա գավակներին մի կտոր հացից զրկելը համարվում էր խելքի և եռանդի ապացույց և ոչ միայն չէր դատապարտվում, այլև դառնում էր նախանձի առարկա: Հարյուրավոր դեպքեր են անցել իմ աչքերի առջև միմյանցից այլանդակ, միմյանցից զազրելի: Նրանցից եմ ես ընտրել Անդրեաս Էլիզբարովին ու Սաղաթելին՝ «Պատվի համար»-ի մեջ: Այսօր ես մի առ մի մտաբերում եմ այդ տիպերը և սոսկումով եմ պատկերացնում այն խավարը, ուր ես անցուցել եմ իմ երիտասարդության լավագույն տարիները:

VII

ԱՌԱՋԻՆ ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Մինչև տասնիները տարեկան հասակս ես կին չեմ ճանաչել: Առհասարակ կին էակն ինձ միշտ մի տեսակ երկյուղ էր ներշնչում: Ինձ թվում էր, որ նրան մերձենալու համար պետք է ունենալ առանձին համարձակություն, որից ես զուրկ էի: Երբ իմ ընկերներն ինձ ծանոթացնում էին իրանց ծանոթ օրիորդների հետ, ես չգիտեի ինչպես պահեմ ինձ: Չէի խոսում, և երբ ինձ խոսեցնում էին, շփոթվում ու կարմրում էի տասը տարեկան աղջկա պես: Օրիորդները ծիծաղում էին ինձ վրա, մի բան, որ իմ շփոթությունը կրկնապատկում էր, և ես աշխատում էի որքան կարելի է շուտ հեռանալ նրանցից: Այն էլ ասեմ, որ խոսս ռուս կանանց մասին է: Այն ժամանակ Բաֆվում շատ ինչ կանայք էին երևում հասարակական շրջաններում և փողոցներում: Մեծամասնությունը դեռ չադրայից չէր ազատվել և վարում էր փակ կյանք:

Իմ ընկերների մեջ կար մեկը՝ Ս. Բ. — ն, նա ինձնից երկու տարով փոքր էր, սակայն ֆիզիկապես ավելի հասուն էր, թեև ինձ չափ առողջ չէր: Նա հարուստ ընտանիքի զավակ էր և ինձ պես հափշտակված չէր գրքերով:

Մի օր նա ինձ ասաց.

— Գիտես, Ալեքսանդր, դու երեխա ես, բաներ կան, որոնց մասին գաղափար չունես:

— Ի՞նչ բաներ, — հարցրի ես:

— Խոսքով բացատրել չի կարելի, եկ ինձ տանեմ մի տեղ, կիմանաս:

— Բայց ո՞ւր պիտի տանես:

Ա՛յ, տե՛ս, հենց այդ հարցը ցույց է տալիս ձո խելքի պակասությունը: Դու պիտի իսկույն հասկանայիր՝ ինչ եմ ուզում ասել, գնանք, դու շնորհակալ կլինես ինձնից, երբ կտեսնես: Մի վախեցար, ես փող շատունեմ, դու ոչ մի կոպեկ չես ծախսի: Գնա՛նք:

Ես զիջեցի ոչ այնքան հետաքրքրությունից դրդված, որքան բնավորության թուլությունից: Ես այժմ էլ չափազանց զիջող մարդ եմ: Թող չկարծվի որ այդ ես առաքինություն եմ համարում: Քավ լիցի, խորապես ցավում եմ, որ այդպես եմ:

Մենք կառք նստեցինք և գնացինք Խաղաի հեռավոր արվարձանը: Ճանապարհին Ս. Բ.-ն չասաց, թե ուր է տանում ինձ: Բայց ես արդեն գուշակել էի: Կառքը կանգ առավ մի նեղ փողոցի վրա, մինարկանի տան առջև: Արտաքուստ այդ տունը ոչնչով չէր տարբերվում մյուսներից, միայն նրա մուտքի մոտ դռների գլխին կախված էր կերոսինի մի մեծ լապտեր, որի վրա գրված էր՝ «Հյուրանոց Նիժնի-Նովգորոդ»: Բացի այդ, լուսամուտների տախտակյա փեղկերը ներսի կողմից փակ էին այնպես, որ կարելի էր կարծել, թե տունն ամայի է: Ս. Բ. — ն խուճ դրսի զանգակը: Տևեց երկար ժամանակ, մինչև որ դռները դանդաղորեն բացվեցին կիսով չափ: Երևաց մի տարիքավոր կնոջ երկայնածև խիստ կարմրագույն և սև խալերով ծածկված կարմիր երեսը, որ նման էր միջից կիսված ձմերուկի:

— Ո՞վ եք, — հարցրեց կինը, իր խոշոր ստինքը դուրս ցցելով, կարծես մեր մուտքը փակելու համար:

— Բարև, Ավուլինա Պետրովնա, չճանաչեցի՞ք, — ասաց ընկերս մտերմական եղանակով:

Կինն աչքերը ձեռքով հովանավորեց արեգակի ճառագայթներից և գոչեց.

— Աա՜, դո՞ւք եք, Ս. Ֆադդեևիչ, լուսի դեմ չճանաչեցի: Համեցեք, համեցեք, այդ ինչ գեղեցիկ հյուր եք բերել:

— Բարեկամս է, Ակուլինա Պետրովնա, սիրեցեք և պատվեցեք... Էմիլիան տա՞նն է:

— Մտեք, մտեք, ամենքը տանն են: Այսօր բժշկի օրն էր, եկավ ճննեց ու գնաց: Լավ օր է ձեզ համար:

Ես ծխելը Ս. Բ.-ից էի սովորել, օղի խմելը նույնպես, այժմ նա բարձրագույն դասարանն էր բերել ինձ: Ես ետ դառնալու մի շարժում արի, Ս. Բ.-ն միտքս հասկացավ, թևս ամուր բռնեց՝ ասելով.

— Ինձ մի՛ խայտառակիր, ամոթ է:

Անցաւոր մի կիսախաւար միջանցք, դուրս եկաւոր մի նեղ ու շատ երկայն պատշգամբ, որ նայում էր դեպի մի թաց ու կեղտոտ գավիթ: Մի բոլորովին մերկ աղջիկ, մեզ տեսնելով, ճչաց և անհետացաւ գավթի խորքում: Պատշգամբի վրա խմբված էին տասի չափ երիտասարդ կանայք շատ թեթև և բազմագոյն հագուստներով: Մի բանիսի թևի վրա նկատեցի ինչ-որ կապան կարմրագոյն ժապավենից: Մեզ տեսնելով՝ կապանավորները հեռացան այս ու այն կողմ:

— Էմիլիա, դուրս եկ, սևիկդ եկել է, — գոչեց Ակուլինա Պետրովնան ալկոհոլից խայխայված ձայնով:

Բազմաթիվ դռների մեկից դուրս եկավ մի շիկահեր աղջիկ և, ընկերոջս տեսնելով, հարձակվեց նրա վրա ու իր հոլանի թևերով փաթաթվեց նրա վզին: Ապա նա երկուսիս էլ հրավիրեց իր սենյակը: Ս. Բ. — ն գրեթե բռնկրտելով ինձ տարավ այնտեղ: Հետո նա ինչ-որ ըռնջաց աղջկա ականջին և ծիծաղեց: Աղջիկն ուշադիր նայեց ինձ և գլխով ինչ-որ համաձայնության նշան արավ: Ս. Բ. — ն ինձ ասաց.

— Դու մնացիր այստեղ, ես գնում եմ ուրիշի մոտ: Մի՛ վախեցար, Էմիլիան ամենից մաքուրն է ու ամենից սիրունը: Ես միայն ձեզ եմ զիջում: Հը՛, ի՞նչ ես խարացել և ապուշ-ապուշ նայում ես ինձ կոկորդում ոսկոր մնացած մարդու պես: Բայց ոչինչ, առաջին անգամ ես էլ ձեզ նման էի: Դե՛, գրկիր, համբուրիր, Էմիլիա, լավ տղա է, չէ՞:

Եվ Էմիլիայից հրելով իմ գիրկը, Ս. Բ. — ն շտապեց դուրս: Աղջիկը դուռը փակեց, մենք մնացինք առանձին:

— Դե ինձ մի բիչ կարգի բերեմ, հետո, — ասաց աղջիկը և մոտեցավ հայելուն:

Մինչ նա զբաղված էր իրանով, ես նայեցի շուրջս: Սենյակը լուսավորված էր առաստաղից կախված մի լապտերով, որ հովանավորված էր կարմիր լուսամփոփով: Բացի մի լայն անկողնակալից, կային երկու հնամաշ վիեննական աթոռներ, մի տուալետի սեղան, վրան զանազան սրվակներ, փոխրիկ տուփեր, մի բանի սանր, բոլորն էլ փշրված ատամներով և մեծ ու փոքր խոզանակներ: Մի անկյունում պատին կախված էր մի երկաթե լվացարան, առջևը մի կոնք սապոնաջրով լեցուն: Մյուս անկյունում մրոտ պատին կոթնել էր Մարիամ Աստվածածնի պատկերը դեղնագույն պղնձե շրջանակի մեջ: Նրա առջև վառվում էր ձիթայուղի ապակյա կարմիր կանթեղը: Օտարոտի և անախորժ մի հոտ էր փչում ամբողջ սենյակից: Ինքը՝ աղջիկը, որ սկզբում թվաց գեղեցիկ, մոտիկից այլ տպավորություն գործեց ինձ վրա: Նա շատ երիտասարդ էր, հազիվ 17-18 տարեկան, բայց երեսի չափից դուրս թանձր շպարը, հոնքերի արհեստական սևությունը, մանավանդ աչքերի տակի կապուտակները նրան տալիս էին մի տեսակ մաշված ու էրբրված պաճույճի տեսք: Առանձնապես անդուրեկան էին իր տարիքին ոչ-համապատասխան ձևերը պոռնիկի: Ես մոմուս հայհոյեցի Ս. Բ.-ին. ինչո՞ւ նա ինձ թողեց այստեղ ու գնաց, հարկավ, զգում էի բարեկամիս անկեղծ հոգացողությունն իմ զվարճության մասին, բայց հենց այդ էր, որ ինձ ստորացնում էր իմ աչքում: Ես նոր էի կարդացել Տուրգենևի վեպերը և ռուս կնոջ պատկերը նրա հերոսուհիներով էի երևակայում: Հարկավ, այնքան էլ միամիտ չէի, որ չգիտենայի, թե այլ է վեպերի մեջ նկարագրածը և այլ է այն, ինչ որ տեսնում եմ իմ առջև: Բայց և այնպես, կինն իմ աչքում կին էր, անկախ իր դիրքից ու հանգամանքներից:

— Ինչո՞ւ չես մոտենում ինձ, — ասաց Էմիլիան մի տեսակ ծամածռությամբ, որի նմանը մինչև այդ օրը չէի տեսել ոչ մի կնոջ դեմքի վրա:

Ապա, մի ծխախոտ վառելով, նստեց անկողնակալի վրա, ոտները կցեց իրարու և հարցրեց.

— Գարեջո՞ւր խմենք, թե՞ գինի:

— Ոչ մեկը, — ասացի ես:

— Ես ծարավ եմ, շոգ է, պետք է զովանալ: Գարեջուրն ավելի լավ է,- ասաց Էմիլիան և մատը սեղմեց զանգակի կոճակին: Անմիջապես ներս մտավ կեղտոտ գոգնոցով մի սպասավոր կապույտ-կարմրագույն ուռած երեսով: Նրա հայվածքն ու ձևերը միանգամից ինձ զզվանք պատճառեցին:

— Իվա՛ն, պիլգենսկի և պաֆսիմատ, — պատվիրեց Էմիլիան:

— Այդքա՞նը միայն, — արտասանեց ծառան լկտի արհամարհանքով. — երևի պարոնն ախորժակ չունի:

— Դեռ գարեջուրը բեր, հետո կտեսնենք:

Մինչ Էմիլիան ծառային պատվեր էր տալիս, անկողնակալի վրա տեսա մի գրքույկ, վերցրի, կարդացի վերնագիրը. «Աբեղայի սիրային արկածները»:

— Դուք կարդալ սիրո՞ւմ եք, — հարցրի ես:

— Օ՛, շատ եմ սիրում:

— Տուրգենև կարդացե՞լ եք:

— Տուրգենև, չեմ լսել:

Ես հանդիմանեցի Էմիլիային, ասելով, որ ռուս աղջկա համար ամոթ է Տուրգենևին չճանաչել:

— Սո՞ւրբ է նա, — հարցրեց Էմիլիան:

Ես ոգևորված բացատրեցի, թե ով է Տուրգենևը, և խորհուրդ տվեցի անպատճառ կարդալ: Այդ պահին, իբրև նախկին գրապահ, ես կատարելապես իմ դերումն էի:

— Շատ լավ, դու բեր նրա գրքերից, ես կկարդամ, — ասաց Էմիլիան, — եթե դու էլ ինձ սիրես Ս. Ֆադդեևիչի նման: Նա ինձ համար ամեն անգամ շոկոլադ էր բերում, չգիտեմ ինչու այսօր մոռացել է: Դու շոկոլադ չե՞ս սիրում, ես պաշտում եմ:

Երեխայական եղանակով արտասանված այս խոսքերը վայրկենական մի լույս սփռեցին Էմիլիայի վրա: Կարծես մի աներևույթ ձեռք նրա ապականած մարմինն սկողեց ոսկե շղարշով: Նույն վայրկյանին իմ մեջ ծագեց մի բուռն կարեկցություն: Ես հիշեցի Դոստոևսկու Մարմելադովի պատմվածքն իր աղջկա մասին: Գուցե Էմիլիան էլ ունի մի արբշիռ հայր և կարիքից հարկադրված իր անմեղությունը վաճառել է մի սինդիկոտի ու, շարունակելով, վերջը ընկել է պոռնկատուն: «Խե՛ղճ աղջիկ, մտածեցի ես, պետք է ինձ օգնել, որ թողնես խայտառակ կյանքը, դա ամեն մի ազնիվ մարդու պարտականությունն է»: Եվ, այս հերոսական վճիռը կայացնելով, անմիջապես դիմեցի գործի: Ես սկսեցի Մարիամ Մագթաղինեից և իսկույն անցա ժամանակակից նման տիպերին, որոնց մասին կարդացել էի վեպերի մեջ, այսօր դժբախտաբար միտս չեն իմ ատենաբանության մանրամասները, բայց լավ հիշում եմ, որ պերճախոս էի այդ օրը: Ինչ որ ասում էի, գոհար էր, մանավանդ որ ասածներս զարդարում էի ընտիր գրքերից բաղած ցիտատներով:

Էմիլիան, անկողնակալի վրա նստած, ձեռներն իր ուռուցիկ ազդրերի վրա գրած, բերանը լայն բաց արած, նայում էր երեսիս ապշած: Ես համոզված էի, որ իմ խոսքերը խորապես ազդում են նրա վրա, մինչև անգամ երևակայեցի, որ նա պետք է չոքի իմ առջև, ինչպես Մարիամը Հիսուսի առջև, և պիտի զղջա իր մեղքերի համար: Երբ ես վերջացրի ասելիքս.

Էմիլիան ամենայն սառնասրտությամբ հարցրեց.

— Ասա խնդրեմ, դու դրակո՞ն ես:

Տեսե՞լ եք տաք սենյակից հանկարծակի ձյունի մեջ շպրտված մի կատու: Նույնն էի ես: Ի՛նչ, դրակո՞ն, տիրացո՞ւ, ե՞ս: Դա ինձ համար մի մեծ անարգանք էր սմանչելի ճառաբանությունիցս հետո:

Անշուշտ, ես Էմիլիայի վիրավորանքին կպատասխանեի ինչպես հարկն էր, եթե այդ պահին ներս չմտներ սպասավորը և չխանգարեր: Մի թիթեղյա ժանգոտված սկուտեղի վրա նա բերում էր երկու շիշ գարեջուր և մի պնակ աղած ու

խորոված սև հացի կտորներով: Սկուտեղը դնելով տուալետի սեղանի վրա, նա ձեռները դրեց մեջքին և իր լկտի հայացքը բևեռեց երեսիս:

— Ի՞նչ եք կամենում, — գոչեցի ես կատաղած, մաղձս նրա գլխին թափելու համար և հազիվ զսպեցի ինձ, որպեսզի աթոռը չվերցնեմ ու լրբի գլխին չտամ:

— Պետք է վճարել, չէ՞:

— Ո՞րքան է:

— Երկու ռուբլի հիսուն կոպեկ: Էմիլիան թանկարժեք խմիչք չի պատվիրել:

Բարեբախտաբար, գրպանումս երեք ռուբլի փող ունեի, դուրս բերեցի և շպրտեցի հատակի վրա:

— Օհո՛, ի՛նչ տոֆարյուն պարոն եք, — ասաց լկտին, դրամը վերցնելով, — երևի Էմիլիան դեռ չի սառցրել ձեզ:

Եվ էրէջալով դուրս գնաց:

— Խմիր, — դարձավ ինձ Էմիլիան՝ բաժակները լցնելով: Ի՞նչ ես ուզում: Ի՛նչ տարօրինակ մարդ ես: Մինչև հիմա դեռ անգամ չես համբուրել ինձ: Կարծես եկեղեցումն ենք: Մի ուրիշ բան է սևուկը: Գալիս է թե չէ, իսկույն հանվում է և՝ մեկ, երկու, երեք, շատ կրճռտ է: Դու բանի պետք չես: Բայց ոչ, ճեզ էլ կարելի է սովորեցնել:

Եվ երկու բաժակ գարեջուր իրարու վրա դատարկելով, վեր կացավ, հարձակվեց վրես: Կարծես օձեր ընկան պարանոցիս վրա, երբ զգացի նրա մերկ թևերի շոշափումը: Ես կոպտաբար ազատվեցի նրա գրկից և փախա պատշգամբ, այնտեղից էլ փողոց: Ես զգում էի ինձ ծաղրված ու անարգված, որպես առաջին իսկ ելույթին սուզված մի դերասան: Կարծում էի, որ դերս կատարել եմ հրաշալի, դուրս եկավ, որ տապալվել եմ:

«Սպասիր», — լսեցի ետևիցս Ս. Բ. — ի ձայնը:

Բարեկամս բարկացած էր:

— Խայտառա՛կ, — գոչեց նա կանգ առնելով փողոցի մեջտեղում: — Տեսնված բա՞ն է, որ մարդուն տանեն հարսանիքատուն, և նա այնտեղ «ի վերին Երուսաղեմ» երգի: Էմիլիան մեզ պատմեց ֆո հերոսությունը: Ակուլինա Պետրովնան կատաղել է ֆո դեմ: Դու ճեզ էլ խայտառակեցիր այդ ֆածերի մոտ, ինձ էլ: Գնա կորիր, բալվա՛ն:

Ես չհակառակեցի բարեկամիս:

Երբ առաջին անգամ հափշտակվեցի կնոջով, իսանուհիից տարեկան էի: Առհասարակ ես դանդաղ եմ զարգացել թե՛ ֆիզիկապես և թե՛ մտավորապես: Միայն հիվանդոտ մարմիններն են չծլած ծաղկում: Ես առողջ էի:

Հափշտակությանս առարկան տասնուհինը տարեկան մի ռուս օրիորդ էր, հեղափոխական ոգով տոգորված: Նրա անունն էր Ս., ազգանունը Ռ.-կայա: Մի տարի առաջ նա գիմնազիոնն ավարտել էր, այժմ պատրաստվում էր գնալ Մոսկվա՝ թե՛ բարձրագույն ուսում ստանալու, թե՛ հեղափոխական երիտասարդության շրջանը մտնելու:

Գեղեցի՞կ էր այդ աղջիկը: Եթե այն ժամանակ մեկը համարձակվեր ասել ոչ, գլուխը կջարդեի: Այսօր դրականապես ասում եմ՝ որ, ոչ միայն սիրուն չէր, այլ գուցե մի բան էլ ավելի: Ի՞նչ արած, այն ժամանակվա Բաֆվում ամեն մի շիկահեր օրիորդ թե տիկին ինձ գեղեցիկ էր թվում, վերջապես, ի՞նչ ասել է գեղեցկություն ասված բանը, եթե ոչ երիտասարդություն ու թարմություն: Բացի դրանից, առաջին անգամ ես չէի արտահայտել իմ զգացումս, այլ ինքը օրիորդը՝ մի օր հանկարծակի փաթաթվելով իմ պարանոցին:

— Ինչպես երևում է, դու դեռ նույն բալվանն ես, ինչ որ այն ժամանակ, հիշո՞ւմ ես, — ասաց Ս. Բ. — և, երբ ես նրան պատմեցի այդ մասին:

Այսպես թե այնպես, հափշտակված էի: Մի տրագի-կոմիկական արկածի հանդիպեց մեր, այսպես ասած, փոխադարձ սերը: Պատմեմ եղելությունը: Ամառային երեկո էր: Մենք նստած էինք թուրքերի հին գերեզմանատանը, ուսկից դեպի ծովը բացվում է մի զմայլելի տեսարան: Վերը պարզ, մանիշակագույն երկնքի վրա նոսր ամպերի մեջ լողում էր տասնօրյա լուսինը, մերթ երեսը շղարշելով, մերթ բանալով որպես քմահաճ հավերժահարս: Վարը ծովի անդորր մակերեսը շողշողում էր հալած արծաթի պես:

Ստորև տարածված էր քաղաքային պարտեզն իր վտիտ ծառերով: Զբոսանքի բացօթյա երեկույթ էր: Պարտեզը զարդարված էր հարյուրավոր գունավոր լապտերներով, որոնք ծառերի արանքից նայում էին խորհրդավոր աչքերի պես: Ամբոխի խուլ ժխորի և բարձրաձայն քրքիջների միջից լսվում էին զինվորական երաժշտության զիլ հնչյունները:

Մենք հափշտակված խոսում էինք, օրիորդն իր ծրագիրների, ես իմ ապագայի մասին, մերթ ընդ մերթ համբուրվելով: Ժամերը վազում էին աննկատելի: Լուսինը թաքնվեց մերձակա քարքարոտ բլուրների ետևում, իր աղամանդյա շողերը ժողովելով ծովի երեսից: Մարեցին գույնզգույն լապտերները, լռեց երաժշտությունը: Մենք տակավին նստած էինք մի տապանաքարի վրա: Հանկարծ ինձ թվաց, որ մի մեղրանանն բզզալով անցավ մեր գլուխների վրայով և զնաց նորից մերձակա տապանաքարերից մեկի վրա: Ապա՝ փոքր անցած՝ երկրորդը:

-Գնդակներ, — գոչեց օրիորդը և ոտքի ելավ: — Կարծես մեկը մեզ վրա կրակում է:

— Ի՞նչ անենք:

— Չգիտեմ:

— Պետք է փախչել:

Ես թողեցի օրիորդին առաջ վազել, ինքս հետևելով նրան: Սակայն շուտով խորհեցի, որ փախչելն ավելի վտանգավոր է: Պառկեցինք մի տապանաքարի ետևում, գնդակներից պատսպարվելու համար: Լսվեց ոտների տրոփյուն: Պարզ էր, որ մեզ հետևում էին: Վեր կացանք, նորից սկսեցինք փախչել, որպեսզի մեզ մի կերպ զցենք պարտեզ:

— Զգույշ, առջևդ վիհ կա, — գոչեց օրիորդը հանկարծ և շեղվեց դեպի ձախ:

Նա ավելի սրատես էր, քան ես: Ես շարունակեցի վազել նույն ուղղությամբ: Հազիվ մի տասը քայլ արել էի, երբ թվաց, որ մի հզոր ձեռք բարձրացրեց ինձ օդի մեջ և ուժգին թափով զարկեց մի կարծր բանի: Այդ տևեց մի ակնթարթ, և այդ վայրկյանում իմ ամբողջ կյանքը նկարվեց իմ աչքերի առջև իր խոշոր երևույթներով: Այդպիսի մի պատկերացում ես տեսել էի մի անգամ ևս, այն է՝ երբ պիտի խեղդվեի ծովի մեջ: Ես ընկել էի մի բարձր քարաժայռից: Բայց ուշքս վրես էր: Լսեցի օրիորդի ճիչը:

— Դու կենդանի՞ ես, — գոչեց նա բարձրից:

Ես գլուխս շշափեցի: Նա անվնաս էր: Փորձեցի ոտքի ելնել, չկարողացա: Ձախ ոտս չհնազանդվեց ինձ: Նա կոտրվել էր: Բայց ցավ տակավին չէի զգում:

Օրիորդն իջավ ժայռից՝ «օգնությո՜ւն, օգնությո՜ւն» աղաղակելով: Երկու մութ պատկերներ նկարվեցին իմ առջև: Մեկը լուցկին վառեց, և ես տեսա երկու տղամարդ, մեկն անզեն, մյուսը զինված ոտից մինչև գլուխ և ձեռքին մի մեծ դաշույն:

— Ո՞վ եք դուք, — հարցրեց օրիորդը:

— Ես գերեզմանատան պահապանն եմ, — պատասխանեց զինված տղամարդը:

— Դո՞ւք էիք կրակում մեզ վրա, — հարցրեցի ես:

— Այո:

— Ինչո՞ւ:

— Տասը ժամից հետո արգելված է գերեզմանատանը մնալ: Ես երեք անգամ գոռացի. «Հեռացե՛ք, թե չէ կկրակեմ»: Դուխ չփախաք: Ես կրակեցի երկու անգամ՝ ձեզ վախեցնելու համար:

— Բայց դուխ կարող էիք մեզ սպանել:

— Իհարկե, երրորդ գնդակով անպատճառ կսպանեի ձեզնից մեկին: Ես ունեմ իրավունք, ինձ հրամայված է:

— Ո՞վ է հրամայել:

— Ոստիկանությունը նահանգապետի կարգադրությամբ: Պարզվեց հետևյալը: Տեղական երկու թուրք խոշոր գերդաստանների մեջ տիրում է թշնամություն: Փոխադարձ վրիժառության նպատակով երկու կողմերն էլ դիմում են ամեն տեսակ միջոցների: Ի միջի այլոց, կովողները փորում են հակառակորդների ննջեցյալների գերեզմանները, դիակները դուրս են բերում ու պղծում: Ահա նման դեպքերի առաջն առնելու համար էին ճշանակվել պահապաններ խիստ հրահանգներով:

Ինձ կառք նստեցրին, բերեցին տուն: Ճանապարհին ոտս այնքան ուռավ, որ կոշիկս մկրատով կտրեցին և այնպես հանեցին:

Ցոր շաբաթ մեջքիս վրա պառկած մնացի միևնույն դիրքում — անփոփոխ: Ոտս բժշկեց մի հայ կին, որը հայտնի ոսկրաբույժ էր:

Օրիորդ Ռ.-կայան ուղևորվեց Մոսկվա: Բախուն դատարկվեց ինձ համար...

Պաշտոնս թողնելով՝ վճռեցի տեղափոխվել Թիֆլիս գրականությամբ պարապելու նպատակով:

VIII

ԴԵՊԻ ՆՊԱՏԱԿ: ԱԶԱՏԱՄԻՏՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆԸ:

ԱՌԱՋԻՆ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգոստոսի արևը կիզել էր վոխտ բուսակաճությունը: Գորշ տափաստանն իր ամայությամբ ճնշում է ճամփորդի հոգին: Հետզհետե մեզնից հեռացող Կասպյան ծովը ողողում է ավազոտ ափերը, զուր ջանալով իր ճերմակ ալիքներով շղարշել նրանց մռայլ մերկությունը:

Ծուղանի անապատն է: Ոչ մի ծառ, ոչ մի կանաչ թուփ անգամ և ոչ մի թռչուն: Կարծես մի սոսկալի հրդեհ լափել է երկրի կյանքը, թողնելով միայն միլիարդավոր մոծակներին, որոնք ահագին խուրձերով թափվում են վագոնների մեջ շոգից թուլացած ճամփորդների մարմինը հոշոտելու համար, և դաշտային մկներին ու մողեսներին: Ջարմանալի բան է, նրանց վազքը տատասկների մեջ: Թվում է, որ երկրի տերերն են և, ինչ ուզեն՝ կարող են անել: Իրիկնադեմին նրանց փոխարինում են ճահիճների բյուրավոր գորտերը, որոնք իրենց կվկվոցով վրդովում են երկրի լռությունը: Դա մի ինքնատեսակ համերգ է, որ ինչ-որ համակրանք է ներշնչում ինձ դեպի այդ անարդարացի անարգված կենդանիները:

Գնում եմ Թիֆլիս: Գնում եմ գրականության մեջ որոնելու իմ կյանքի նշանաբանը: Շատ տարիներ են անցել այն օրից: Այժմ իմ աչքն ինձ մի փոքր դոնքիշոտություն է թվում, իսկ, այն ժամանակ եթե մեկն ինձ ասեր, որ փոքր ժողովրդի մեջ գրականությամբ պարապելը հավասար է ինքնահահաստակության, անշուշտ կկատաղեի: Ախտը վաղուց էր վարակել ինձ, և ոչ մի խորհուրդ չէր կարող բժշկել, բանի որ չօգնեցին անապաստան և անպաշտպան թողնված մորս արցունքները անգամ, որ այնպես առատորեն թրջեցին իմ կուրծքը հրաժեշտի վերջին վայրկյանին: Ես շատ լավ գիտեի,

որ մնալով Բաֆվում՝ մի օր ես էլ հարստանալու եմ, ինչպես շատ շուտով հարստացան իմ հասակակիցներն անհետ բացառությամբ: Մեծ բան հարկավոր չէր դրա համար - մի ֆիչ խելք, մի միջակ եռանդ և մի թեթև դաշինք խղճի հետ: Երկուսն ունեի, երրորդը չկարողացա ունենալ:

Գնացքն ընթանում էր շատ դանդաղ: Մի տարի չկար, որ երկաթուղու գիծը շինվել էր, մեխեհավաքը վախենում էր հնարավոր արկածներից, նամանավանդ որ նախընթաց ապրանքատարը խորտակվել էր: Մերթ ընդ մերթ գնացքը կայարանին չհասած կանգ էր առնում, չգիտես ինչու, և, երբ նորեն շարժվում էր, հևում ու թառանչում էր, ինչպես մի զառամյալ ծերունի սրտի հիվանդությունից:

Ամբողջ գիշեր չկարողացա քնել թե տոթից և թե խառնիխուռն մոբերից, որոնց առանցքն ապագայի անորոշությունն էր:

Առավոտյան տեսարանը փոխվեց: Մուղանի անապատն անցել էինք: Աջ ու ձախ երևաց բուսականություն, որին կարոտել էին իմ աչքերն ութ տարի չոր ու ցամաք Բաֆվում ապրելով:

Եվլախ կայարանում մեր վագոնը մտավ մի շատ գեր մարդ, մի մեծ խուրջինի տակ տճմալով: Նա մոտեցավ իմ նստարանին, մի ծուռ հայացք գցեց նախ երեսիս, ապա ինձ վրա, խուրջինն ուսերից վար դրեցև նստեց իմ դեմուդեմ և կամ, ճիշտն ասած, թավալվեց բամբակի պարկի պես:

— Փո՛ւհ, փա՛հ, փո՛ւհ, — արտասանեց նա և, փուրաժկան վերցնելով, նետեց մի կողմ ու երեսի էրտիճիը սրբեց սփռոցի չափ մի մեծ գունավոր թաշկինակով:

Հետո նա, իր հաստ բեղերը շփելով, ասաց.

— Բարով:

— Աստծու բարին, — պատասխանեցի ես լուրջ, կես հեգնական եղանակով:

— Ի՞նչ տեղ ես գնում:

— Հա՛, էդ լավ է, ես էլ եմ Թիֆլիս գնում, — շարունակեց մարդը դարաբաղյան շեշտադրությամբ: — Լավ, բաղամ է, շատ եմ սիրում: Ես թիֆլիսեցի աղջիկ եմ ամուսնացած: Տարին երկու-երեք անգամ գնում եմ էեվի անելու: Համա լավ բաղեր ունի հա՜, Օրթաճալա, Կրծանիս, Ավճալ, մեր Բեխի աղբյուրը նրանց կշտին ոնց որ էծը էյռիվան ձիու կշտին: Քեվի համար եմ ասում...

Մարդը փափագում էր անպատճառ զրույց անել, ինչպես առհասարակ բոլոր գեր մարդիկ: Մենությունն ինձ էլ ձանձրացրել էր, ուստի հաճույքով ականջներս դրեցի նրա տրամադրության տակ. մանավանդ որ նրա արտաբինն ինձ մի տեսակ համակրանք ներշնչեց առաջին վայրկյանից իսկ:

— Ամոթ չլինի հարցնելը, հրամանիդ ի՞նչ գործի մարդ ես, — հարցրեց նա, ձեռները դարսելով հաստ փորի վրա:

— Ոչինչ,

Մարդը զարմացած նայեց երեսիս և իր թանձր բեղերի տակից արձակեց մի արհամարհական հնչյուն, որ, սակայն, ինձ չվիրավորեց:

Ես ձեռիս ունեի մի հաստ ձեռնափայտ, որի օգնությամբ էայլում էի կոտրված ոտիս առողջացնելուց հետո:

— Ամմա լավ շուն թակելու փետ ա հա՛, Թիֆլիսում պետք կգա, — ասաց մարդը:

Հասկացա, որ անգործ լինելս է հեգնում:

— Ինչու չէ, — ասացի ես առանց վիրավորվելու, — եթե մի շուն ուզենա ինձ կծել, կարող եմ թակել:

Նա ինձ հասկացավ և լռեց:

Հաջորդ կայարանում ես վագոնից իջա թեյ խմելու: Երբ վերադարձա, հարևանս հարցրեց.

— Ա՛յ տղա, էդ խի՞ ես կաղում:

— Ոտս ցավում է:

— Ի՞նչ է պատահել:

— Կոտրվել է:

— Ընքո:

— Այո, կոտրվել է, բայց հիմա առողջացել է, միայն դեռ մի բիչ ցավում է:

— Հառա՞, — հետաքրքրվեց մարդը, — բաս լավ է, որ ինձ ես ռաստ եկել: Ես ֆեզ կօգնեմ: Ես սնխչի եմ:

— Ոսկրաբո՞ւյժ:

Հրամանիս, մենիֆ սնխչի ենիֆ ասում: Պետֆ է որ անուններս լսած լինես: Ավարա-մավարա մարդիկ ինձ ուստա Մուխան են ասում, ամմա իսկական անունս է Միխայել-բեգ Առուշանով, սաղ Կափկազն է ինձ ճանաչում: Հինգ հարյուրից ավելի մարդկանց կոտրված ոտներ ու ձեռներ եմ բժշկել: Էլ հարուստ վաճառականներ ասես, գեներալ ու պոլկովնիկներ ասես, լոխ իմ կուշտն են գալիս: Ապա, ֆե մատաղ, շանց տուր ոտդ տեսնեմ:

Ես ոտս բարձրացրի և դրեցի ուստա Մուխանի ծնկան վրա: Նա չուխայի թևը ետ բաշեց, իր մսալի ու մազմզոտ ձեռներով մի բանի անգամ տնտղեց ոտս և, գլուխը շարժելով, ասաց,

— Ախսոս, ախսոս, ո՞վ է դրստել ոսկորդ:

— Քեզ նման մի ոսկրաբույժ, մի կին:

— Կնի՞կ, — կրկնեց ուստա Մուխանը խորին արհամարհանքով, — էդ է որ ոտդ փչացրել է էլի՛:

— Ո՞րե փչացրել է:

— Հրամանիս: Ոտդ մի տեղ կոտրած է, մի ուրիշ տեղ էլ ոսկորն է դուրս ընկել: Էդ կնիկը ոչ կոտրածն է լավ կապել և ոչ էլ դուրս ընկածն է իր իսկական տեղը դրել:

— Մի՞րե:

— Հրամանիս, — ոգևորվեց ուստա Մուխանը, — էդպես որ թողնես, գանգռան կլինի, հասկանո՞ւմ ես, ինչ ասել է գանգռան:

— Գիտեմ, գանգրեն...

— Մի խոսքով՝ ոտդ կփտի ու մեկ էլ տեսար, որ պետք է անպուտաց անել: Հասկանո՞ւմ ես՝ ինչ ասել է անպուտաբ:

— Գիտեմ, այսինքն կկտրեն, էլի՛:

— Հրամանիս, սղոցով կկտրեն ու դեն կգցեն, որ մարմինդ զարաժաց չլինի ու չմեռնես:

— Ուրեմն ձեր կարծիքով ի՞նչ պիտի անել:

— Իմ կարծիքն էն է, որ ոտդ պիտի նոր մեկանց բժշկել:

— Ի՞նչպես բժշկել:

— Էդ վարպետն ինքը գիտե:

— Դուք կարո՞ղ եք բժշկել:

— Բա՛, խելքի պտուկ, ես ձեզ չասացի, որ վարպետ եմ:

— Բայց ոսկորներն արդեն պնդել են, ի՞նչպես կարող եք բժշկել:

— Հենց վարպետությունն էլ դրա մեջ է: Առաջ պիտի էդ շան աղջկա ծինածը բանդել:

— Բանդել ոտս, ի՞նչով պիտի բանդեմ:

— Ոչխարի դմակով:

— Դմակո՞վ, — կրկնեցի ես զարմացած:

— Հրամանքիս, պետք է ոչխարի դմակը տաքացնել ու կապել ոտիդ: Երկու շաբաթում ոսկորներդ կփափկեն, ոնց որ դմակը:

— Հետո՞:

Փափկելուց հետո ոսկորները տեղահան կանեմ, իրարուց կբաժանեմ և նոր մեկտեղ ամեն մեկը լավ, սիրուն իր իսկական տեղը կդնեմ, կոտրածն էլ օրինավոր կկապեմ: Մի ամիս չանցած վեր կկենաս ու կաճավի պես տկլիկ-տկլիկ մաճ կգաս, էլ ոչ կաղել, ոչ ցավեր, Թիֆլիս հասնելուց հետո կգաս կուշտս: Ես Հավլաբարումն եմ լինելու, աներոջս տանը: Ղասաբ Գևո որ հարցնես, ցույց կտան, իմ անունն էլ լավ միտդ պահիր — Միխայել-բեգ Առուշանով: Վարձի համար կխոսենք, ես իմ տաքսն ունեմ: Դու ինձ ասա, հրամանքդ ազատամի՞տ ես, թե պահպանողական:

— Ձեմ հասկանում:

— Ուզում եմ ասել, մշակակա՞ն ես, թե՞ մեղվակաճ:

— Այդ ի՞նչ կապ ունի կոտրած ոտիս հետ, — հարցրի ես և ոտս ձեռքս վրայից իջեցրի:

— Ես մշակակաճի համար մի տաքս ունեմ, մեղվակաճի համար մի ուրիշ տաքս:

— Ո՞րի ոտն եք ավելի էժան բժշկում:

— Դե, իհարկե, մշակակաճի ոտը. ես ազատամիտներից եմ, լիբերալ:

— Իսկ եթե ոտը ոչ մշակակաճ է, ոչ մեղվակա՞ճ:

— Էն էլ ուրիշ գին ունի: Դու ինձ ասա, ո՞ր մեկին ես հարգում՝ Գրիգոր Արծրունո՞ւն, թե՞ Պետրոս Սիմոնյանցին:

— Երկուսին էլ հարգում եմ:

— Էդ չելավ, հայ մարդը կամ մեկի կողմը պիտի լինի, կամ մյուսի, դրանից դուրս հավատ չկա: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս Արծրունու բանակին գրվել, Արծրունին մեր ժամանակի մարգարեն է: Րաֆֆին էլ նրա կշտին: Որ մեկ-մեկ չի բզում էդ աներես հոգևորականներին, բերխ է գալիս: Շատ գործավոր գրիչ ունի, էն որ գրում է, գրում է ու վերջը երեք տոչկա է դնում, ես եմ հասկանում, թե ինչ է ուզում ասել, նրա երեք տոչկան մեծ իմաստություն ունի: Աֆարիմ մարդ, էս օրերս էլի մի լավ կոկել էր էջմիածինը: Դե մարդը ճշմարտությունն է ասում, էլի՛: Հիմի ազգին եկեղեցի ու վանք հարկավոր չէ ասում է, այլ ուսումնարան, թատրոն, գրականություն: Ապրի, ապրի Գրիգոր Արծրունին, Րաֆֆին էլ

նրա կշտին: Հա՛, մին ասա տեսնեմ, ձեր Բաբվի մեջ էլ ազատամիտների ու պահպանողականների մեջ տուրուդմփոց լինո՞ւմ է:

— Պատահում է:

— Շուշվա մեջ համարյա ամեն օր կռվում ենք: Մի բանի անգամ լավ օրինավոր դնգսել ենք մեղվականներին: Ես մեկի գլխին որ բամփեցի, պպզեց, մի ուրիճի էլ ատամները փշրեցի: Հիմի մի բիչ տագ են արել, մեր կուսակցությունն օր-օրի վրա զորեղանում է: Փա՛հ, փորս վեց-վեց արավ. տեսնենք ինչ կա էստեղ:

Եվ, խուրջինը ծնկների վրա դնելով, հառաչելով ու թառանչելով դուրս բերեց այնտեղից մի մեծ կապոց կապտագույն սփռոցի և բաց արավ նստարանի երկայնությամբ: Մեկը մյուսի ետևից երևան եկան լավաշներ, մոթալի պանիր, ապխտած ձուկ, խաշած ձվեր, խավիար, գառան մի ամբողջ ազդր, մի հավ, վարունգներ, եերմակ բողկ, սոխ, պուռաս, կոտեմ, համեմ, թարխուն, իսկ խուրջինի մյուս բաժնից դուրս բերեց մի տկճոր գինի: Տկճորի կոկորդը զարդարված էր մի կարմիր արվեստական վարդով:

— Համեցեք, անուշ արա, — հրավիրեց նա ինձ և ինքն անմիջապես գործի անցավ:

Ես հանույթով կմասնակցեի նրա ճոխ սեղանին, եթե նախընթաց կայարանում նախաճաշած չլինեի:

Ջեմ կարծում, որ պատմական Շարայի որկորն ավելի տեղավորիչ լիներ, քան իմ ուղեկցինը: Այնուամենայնիվ մտածեցի՝ ինչո՞ւ է կես օրվա ճամփորդության համար այդքան ուտելիք վերցրել: Սակայն, երբ հառորդ ժամ չանցած գառան ազդրի և հավի կեսը չմացավ, խորհեցի՝ եթե ուստա Մուխանն ազատամտության մեջ էլ այնքան զորեղ է, որքան ուտելում, ապա վա՛յ պահպանողականներին: Գալով խմելուն, այստեղ նա այնքան ագահ չէր:

— Գիտե՞ս, ես գինին մենակ խմել չեմ սիրում, — բացատրեց նա իր ժուժկալությունը, — ընկեր պիտի լինի, որ բաժակ-բաժակի զարկես, իստահդ բացվի:

Կշտացավ ուստա Մուխանը, թե չէ, — չգիտեմ, վերջապես ժողովեց կերակուրների մնացորդը սփռոցի մեջ, դրեց խուրջինը և ասաց.

— Շուշուց մինչև Եվլախ անհուն եմ եկել, մի բիչ հանգստանամ:

Ասաց և, գլուխը դնելով խուրջինի վրա, անմիջապես քնեց: Երկար ժամանակ նրա ահագին փորը բարձրանում ու իջնում էր, և կոկորդն արձակում էր աղմկալի խռմփոցներ, հարուցանելով փոքրաթիվ ճամփորդների բողոքն ու զայրույթը:

Երեք ժամ անցած Գանձակ կայարանում մեր վագոնը լցվեց նոր ճամփորդներով: Մեծ մասամբ թուրքեր էին մորթե ահագին փափախներով, ամենքն էլ զինված դաշույններով: Եկավ և՛ մի հայ բահանա՝ կրծքի վրա մի մեծ խաչ արծաթե շղթայով: Դա մի նիհար, բարձրահասակ մարդ էր ալեխառն մորուքով, խիստ թավ հոնքերով և բարկացկոտ դեմքով: Նա անմիջապես տեղավորվեց իմ հով, ասելով. «Աստված օրհնե», թեև ես չէի ասել «Օրհնյա տեր»: Ճիշտ այդ պահին ուստա Մուխանը զարթնեց, գլուխը բարձրացրեց և, իր դեմուդեմ տեսնելով բահանային, թեքվեց դեպի ինձ և կամացուկ ասաց.

— Հրաժարիմ ի սատանայե:

Ապա դառնալով բահանային, հարցրեց.

— Ի՞նչտեղ ես գնում, տեր-հայր:

— Աստված օրհնե, — պատասխանեց բահանան, շփելով իր ալեխառն մորուքը:

— Շնորհակալ եմ: Ես հարցնում եմ՝ ի՞նչտեղ ես գնում:

Քահանան աջ ձեռը շերեփածև մոտեցրեց ականջին և գլուխը ուստա Մուխանին թեքելով, ասաց.

— Մի բիչ բարձր խոսի, ծանր եմ լսում:

Ուստա Մուխանը կրկնեց իր հարցը,

— Առայժմ Թիֆլիս եմ գնում, հետո պիտի գնամ սուրբ Էջմիածին.- պատասխանեց քահանան,

— Պիտի գնաս մեռոն բերելու, հա՞...

— Ո՛չ, գնում եմ ամեն տարվա ուխտս կատարելու:

— Եվ կամիլավկա ստանալու, հը՞...

— Կամիլավկա վաղուց ունեմ, այս խաչի հետ եմ ստացել:

— Քանիսո՞վ ես առել, տեր-հայր, դրուստն ասա:

— Ես վաղով չեմ գնել իմ խաչն ու կամիլովկան, այլ ստացել եմ իմ երկարամյա ծառայության համար սուրբ լուսավորչի առաքելական եկեղեցում:

— Հասկանում եմ, էն եկեղեցուն, որ մեր ազգի տունը քանդեց, — արտասանեց ուստա Մուխանը, կամեցավով անպատճառ քահանայի հետ վեճի բռնվել:

Քահանայի աչքերը կատաղությունից պսպղացին վառված ածուխի պես:

— Ինչպես երևում է, պարո՛ն, դուք կամ նզովյալ լութերական եք, կամ ազգակործան մշակական, — գոչեց նա գրգռված:

— Հրամանքս, մշակական եմ, պարծենում եմ, — պատասխանեց ուստա Մուխանը, ձեռները դնելով փորի վրա, — խավարամիտների ազրայիլը, հոգեհանը, նրանց բիթ ու պռունգ ջարդողը: Համեցեք, բան ունես ասելու, ասա, մենք պատրաստ ենք:

— Բարով վայելեք ձեր ոգնի Արծրունուն:

— Դուք էլ բարով վայելեք ձեր խավթառ աղվես Պետրոս Սիմոնյանցին:

— Արծրունին ազգի դավաճան է, ռուս կառավարության անամոթ վարձկանը:

Պետրոս Սիմոնյանցը Էջմիածնի մոնթ է, նրա հարամ հացովն է ապրում, Գևորգ 17-ի օրով նա Մանկունու հետ թալանեց Էջմիածնի հարստությունը, գողացավ թանկագին ակնեղենները թանգարանից ու տեղը դրեց կեղծ բարեր, էդ մենք վաղուց գիտենք:

— Այդ սուտ է, զրպարտություն, անպատկառ մշակականների հնարած հեքիաթները...

— Սուտը ձեր ասածն է. դուք ամեն բան հնարում եք Արծրունուն անպատվելու համար, նա մաքուր մարդ է, անարատ, ոնց որ մի մարգարե կամ ճգնավոր: Րաֆֆին էլ նրա կողին:

— Լա՜վ ճգնավոր է. նա չէ՞, որ գողացավ ուրիշի կնոջը:

— Ոչ ոք չի կարող ուրիշի կնոջը գողանալ, եթե մարդը հավատարիմ պահապան է իր կնկա համար: Էդ ձեր աղվես Պետրոս Սիմոնյանցն է, որ Ներսիսյան դպրոցի գեղեցիկ աշակերտներին... մեղա էեզ աստված...

— Լռի՛ր, լիրբ, դու պատկառանք չունես:

— Ձեմ լռիլ, թեկուզ թոկ գցես վզովս, ես ճշմարտությունն եմ ասում...

Կռիվը կատաղի էր: Յուրաքանչյուրն աշխատում էր իր ասածը հաստատել ձեռների ուժգին շարժումներով, դեմքի սոսկալի ծամածռություններով և մանավանդ կոկորդի զորությամբ: Ուստա Մուխանի ձայնը զիլ էր, ինչպես զուռնա, Ֆահանայի ձայնը բամբ էր, ինչպես թմբուկ, ընդհանուր առմամբ երաժշտությունը շատ էլ ախորժելի չէր, թուրք ճամփորդները, ոչինչ չհասկանալով, զվարճանում էին: Նրանցից մեկն ասաց.

— Քեշիշ զըզըշըք:

Ես աշխատում էի մերթ մեկին հանգստացնել, մերթ մյուսին, բայց իզուր: Մանավանդ գրգռված էր Ֆահանան: Նրա դեմքը գունատվել էր, աչքերը կայծակներ էին արձակում հակառակորդի վրա: Նա մերթ ցատկում էր տեղից հանկարծակի խայթվածի պես, մերթ նստում էր ուժգին թափով, և արծաթե խաչը նրա կրծքի վրա թռչկոտում էր այս ու այն կողմ, կարծես, նա էլ էր կատաղել ուստա Մուխանի մոլի կղերատեցության դեմ:

Վերջը ինձ էլ բաժին հասավ պատկառելի հոգևորականի զայրույթից, երբ անզգուշություն ունեցա ակնարկելու, որ ես էլ եկեղեցու դերն ազգի պահպանության տեսակետից վերջացած եմ համարում, հետևաբար ավելի թեքված եմ դեպի ուստա Մուխանի ազատամտությունը:

— Դուք ազատամիտներ չեք, — գոռաց տեր-հայրը, -այլ ազատ անմիտներ:

Եվ աջ ձեռով խաչը վեր բարձրացնելով, ավելացրեց հանդիսավոր եղանակով,

— Ես, Ստեփաննոս ավագ Ֆահանա Մուշկարյանս, հանուն այս խաչի անիծում եմ ձեզ: Անիծո՛ւմ եմ այն հացը, որ ուտում եք, այն ջուրը, որ խմում եք. անիծում եմ ձեզ ու ձեր մերձավորներին հանուն սուրբ լուսավորչի առաքելական եկեղեցու:

Այս անեծքը, ըստ երևույթին, ազդեց ուստա Մուխանի վրա: Ես նկատեցի, որ նա ցնցվեց ու գունատվեց, բայց իր հուզմունքը զսպեց և ասաց.

— Տեր-հայր, հանգստացիր...

— Ձեմ հանգստանալ, մինչև որ խոսքերդ մայր եկեղեցու մասին ետ չվերցնես ու մեղա չգաս:

— Տեր-հայր, դու Ֆռ գաղափարն ունես, ես էլ իմը, ամոթ է կռվելը:

— Ամոթը կռվելը չէ, այլ ձեզ հետ նստելը, ձեզ հետ խոսելն ու մինչև անգամ ձեր երեսը տեսնելը:

Չգիտեմ ինչով կվերջանար այս տեսարանը, եթե օգնության չհասներ մի շատ հասարակ հանգամանք... ուստա Մուխանի որկրամոլությունը:

Տալով իր վերջին և ամենաթույլ ռեպլիկը, ուստա Մուխանը խուրջինը նորեն բարձրացրեց իր ծնկների վրա, բաց արավ, և նորեն ասպարեզ եկան ճոխ ուտելիքներն ու տկճորը:

Որքան ազդեցիկ եղավ ուստա Մուխանի համար ավագ Ֆահանա Ստեփաննոս Մուշկարյանի անեծքը, նույնչափ ազդեցիկ եղավ Ֆահանայի համար ուստա Մուխանի սեղանը, այն տարբերությամբ, որ ուստա Մուխանը գունատվեց, իսկ Ֆահանան կարմրեց:

Տիրեց լռություն և խաղաղություն: Ֆահանան միանգամից լռեց, կարծես մեկն իսկույն խցան խոթեց նրա կոկորդը:

Երբ ես դարձյալ հրաժարվեցի սեղանին մասնակցելուց, ուստա Մուխանը դարձավ տեր Ստեփաննոսին.

— Համեցեք, տեր-հայր, անուշ արա, գաղափարը գաղափար, ամմա հացն ամենի համար է ստեղծված:

Ես համոզված էի, որ տեր-հայրը գոնե առերես կհրաժարվի իր ազատամիտ թշնամու հյուրասիրությունից, պատահեց հակառակը, առանց սպասելու, որ հրավերը կրկնվի, նա ետ ծալեց ֆարաջայի թևերը և, երեսը խաչակնքելով, ասաց.

— Ճաշակեսցուք խաղաղությամբ:

Ես չդիմեցի ուստա Մուխանի վարպետության օգնությանը: Ոչ այն պատճառով, որ չէի հավատում ոչխարի դմակի փրկարար զորությանը, այլ որովհետև շուտով ոտս կազդուրվեց այնչափ, որ ձեռնափայտս դեն գցեցի:

Իջևանեցի Ներսես Աբելյանի տանը, նա ապրում էր Վորոնցովի կամուրջի մոտ մի նեղ փողոցում մի պառավ հայ կնոջ բնակարանում:

Աբելյանի առաջին խոսքը եղավ.

— Լավ ես արել, որ եկել ես, Ալեքսան, բայց ինչո՞վ պիտի ապրես:

— Ես գիտեմ հաշվապահություն, կաշխատեմ գտնել թեկուզ շատ փոքրիկ պաշտոն և ազատ ժամերս կնվիրեմ գրականության:

Նա լռեց, որովհետև ինձանից պակաս փիլիսոփա չէր: Թիֆլիսն ինձ համար մի դրախտ էր, ուր կարելի էր ապրել և անոթի: Այսպես էր իմ տրամադրությունը: Երբ գիշերները երազումս տեսնում էի, որ նորեն Բաքվում եմ, սարսափած զարթնում էի և ուրախանում, երբ զգում էի, որ դա երազ էր: Երջանի՞կ հասակ մարդկային կյանքի: Այսօր եթե ինձ հարցնեն, թե ինչ է հարստությունը, կասեմ՝ երիտասարդություն, ինչ ասել է բախտ, կասեմ՝ երիտասարդություն: Ամեն ինչ, ամեն ինչ ամփոփված է այդ ադամանդյա բառի մեջ, նույնիսկ տիեզերքի գոյությունը:

Իմ առաջին փափագը եղավ տեսնել երկու մարդու, որոնց անուններն այն ժամանակ ամբողջ հայ երիտասարդության համար նվիրական էին, — Գրիգոր Արծրունուն և Րաֆֆիին:

Այն ժամանակ Արծրունին դեռ չէր զրկվել իր ահագին կալվածքից, որ այսօր էլ Թիֆլիսի խոշորագույն շինությունն է: Ինքը Արծրունին կենում էր մի անջատ ֆլիգելում, իսկ «Մշակ»-ի խմբագրությունը տեղավորված էր փողոցի կողմում, երրորդ հարկի մեջ:

Բարձրանալով բարե փոքրիկ սանդուղքներով, մտա ոչ այնքան մի ընդարձակ սենյակ՝ շատ ցածր առաստաղով և փոքրիկ լուսամուտներով: Այնտեղ կային ինչ-որ անծանոթ դեմքեր, որ տաքացած վիճաբանում էին՝ չեմ հիշում ինչի մասին: Մի առանձին գրասեղանի հով նստած էր ինչ-որ մագաղաթյա երեսով և տափակ մազերով մի օրիորդ թե տիկին - չգիտեմ:

— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց այդ կինը, իմ բարևին պատասխանելով գլխի թեթև շարժումով:

— Կկամենայի տեսնել խմբագրին, — պատասխանեցի ես:

Կինը լուռ ցույց տվեց ինձ խորքի դռները: Ինձ դիմավորեց գունատ դեմքով մի երիտասարդ և առաջնորդեց հաջորդ սենյակը: Այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով դուրս եկավ մի կարճահասակ ծերունի երկայն մազերով և եռմսակ մորուքով և խիստ բարկացկոտ դեմքով: Հետո իմացա, որ դա դոկտոր Շիշմանյանն է, «Երկունք ինքներորդ դարում» և «Թորոս Լևոնի» պատմական վեպերի հեղինակ Ծերենցը:

Սենյակի խորքում մի մեծ գրասեղանի հով նստած էր մեկը, որի միայն գլուխն էր երևում: Ինքը Արծրունին էր, այն ժամանակվա ազատամիտ կոչված երիտասարդության կուռքը: Արծրունին փոքրամարմին էր, սապատող, բայց տգեղ չէր նման մարմնավոր թերություն ունեցողների պես: Նրա երկայն, սաթի պես սև մորուքը, թանձր հոնքերը, արծվային բիթը, պեճսնեի տակից նայող խոշոր աչքերը նրա դեմքին տալիս էին մի տեսակ բիբլիական շունչ: Դա ավելի հրեայի տիպ էր, քան հայի: Նրա խրոխտ, թանձր բարիտոնային ձայնը, եռանդուն շարժումները, ներվային ձևերն արտահայտում էին ֆանատիկոս հավատացյալի ինքնավստահություն:

Զգացվում էր, որ այդ մարդը գիտակցում էր իր կոչման բարձրությունը և իր կատարած գործի կարևորությունն ու լրջությունը:

Արծրունին ինձ ընդունեց բարեկամաբար: Կարծես առաջին անգամը չէր, որ հանդիպում էինք իրարու: Այդ հանգամանքն ինձ գրավեց, բայց և այնպես թույլ չտվեցի ինձ անցնել փոխադարձին վիճակված սահմանը: Հարգանքի և պատկառանքի զգացումը ես ծծել էի մորս կաթի հետ. դրա համար հարկավոր չէր մեծ կրթություն:

Արծրունին շատ հետաքրքրվեց Բաֆվի կյանքով, նավթային արդյունաբերությամբ, հայ-թուրքական հարաբերություններով և առանձնապես բանվոր դասակարգի նյութական և բարոյական վիճակով: Միևնույն ժամանակ, ուրախանալով, ինձ հայտնեց, որ իմ հոդվածներիցս բաղվածքներ են տպվել տեղական կիսապաշտոնական «Կավկազ» ռուս լրագրում»:

— Դուք պատմելու ձիրք ունեք, — ավելացրեց նա, - ձեր «Հրդեհը նավթագործարանում» պատմվածքը ինձ շատ դուր եկավ: Գրեցեք մի նոր պատմվածք, միայն ավելի մեծը «Մշակ»-ի այս տարվա վերջին համարների համար:

— Կաշխատեմ, — ասացի ես:

Ես չկամեցա երկար զբաղեցնել ինձնով այդ բազմազբաղ մարդուն, շտապեցի հրաժեշտ տալ:

— Վաղը, եթե ազատ եք, ճաշին եկեք մեզ մոտ, կզրուցեենք, — հրավիրեց նա այնպիսի պարզությամբ, որ հրաժարվելը կլիներ անբարեմաներություն:

Հետևյալ օրը որոշված ժամին գնացի: Արծրունու միհարկանի տունը շրջապատված էր շեղ պարտեզով, որի մի մասը ծաղկանոց էր, մյուսը՝ մրգանոց: Ծաղկանոցն անխնամ վիճակում էր, իսկ մյուս մասում մրգանոցի հասուն պտուղները, ծառերից պոկվելով, ծածկել էին ծառուղիները: Երևում էր հոգացող ձեռքի պակասություն: Բայց այդ անխնամության մեջ կար բացառիկ մի գեղեցկություն: Ուղիների վրա սփռված դեղնագույն դեղձերն ու ծիրանները, կարմրագույն խնձորները, արծաթագույն տանձերն իրարու խառնվելով, գույների էմահաճ հարմոնիայով հիշեցնում էին Սպահանի զմայլելի գորգեր:

Այդ օրերին Արծրունին անուշադիր էր դեպի ամեն ինչ: Նրա ուշքն ու միտքը գրավված էր կալվածքի խնդրով: Շուտով նա պիտի վրաց ազնվականության բանկին վճարեր մի խոշոր գումար, որպես տոկոսիք իր պարտքի, այլապես կալվածքը պետք է աճուրդի գրվեր: Արծրունին դրամ էր փնտրում և չէր կարողանում գտնել: Այդ մասին նա մի հոդված գրեց «Մշակ»-ում՝ հրավիրելով հայ հարուստներին չթողնել, որ միլիոնարժեք կալվածքը մնա բանկի վրա: Հրավերը մնաց անհետևանք:

Ինձ դիմավորեց ճերմակ ձեռնոցներով մի ռուս սպասավոր և առաջնորդեց սալոն:

Դա մի ընդարձակ սենյակ էր՝ բուրժուական ճաշակով կահավորված: Ջեմ հիշում՝ կա՞ր, թե՞ չկար այնտեղ որևէ գեղարվեստական մի գործ:

Արծրունին ինձ ներկայացրեց իր կենակցուհուն, որի հետ ապրում էր բաղաքացիական կարգով: Դա բժիշկ Քոչարյանի բաժան ամուսինն էր, ծնյալ Մարիամ Մելիք-Ադամալյան: Մոտ հառասուն տարեկան մի կին էր՝ կապույտ-դեղնագույն երեսով, խոշոր ապակենման աչքերով և ֆիչ կորամեջք: Նա ծխում էր: Հիվանդոտ, ներվային և կյանքից դժգոհ մի էակի տպավորություն գործեց նա ինձ վրա: Ճաշեցինք պարտեզում: Ճաշը շատ պարզ էր և անցավ բավական սառը տանտիրուհու սառնության շնորհիվ: Ավելացնեմ և այն, որ ես անհամարձակ մեկն էի և չէի խոսում, երբ ինձ չէին խոսեցնում: Խոսում էր ինքը Արծրունին: Ինձ հետաքրքրում էր մի խնդիր, և ես սպասում էի հարմար վայրկյանի, որ այդ խնդիրը պարզեմ: Բանն այն է, որ վերջին ժամանակները Րաֆֆիի անունը «Մշակ»-ի էջերում չէր երևում: Ասում եմ անունը, որովհետև ժողովրդականացած վիպասանի երկերը չերևալով, գոնե անունը հիշվեր, մենք՝ գավառացիներս,

տարակուսանքի մեջ չէիճի լինի: Այնինչ «Մշակ»-ի լռությունը Րաֆֆիի մասին բացարձակ էր: Թիֆլիս գալով լսել էի, որ երկու բարեկամների մեջ ինչ-որ գժտություն է պատահել: Փափագեցի իմանալ պատճառը:

— Պատճառը հյութական է, — ըտապես պատասխանեց տիկին Մարոն Արծրունու փոխարեն, — Րաֆֆին վերին աստիճանի փողասեր մարդ է: Երևակայեցեք, նա տարեկան ութ հարյուր ռուբլի և ձրի ճաշը բիչ է համարում, ավելի է պահանջում:

— Բացի դրանից, նա օգտվում է տպագրական պատրաստի շարվածքներից իր վեպերը առանձին հատորներով հրատարակելու համար, — ավելացրեց Արծրունին, պեհնեհեն ուղղելով իր մեծ բթի վրա:

Ինձ համար աներևակայելի էր «Մշակ»-ն առանց Րաֆֆիի և Րաֆֆին առանց «Մշակ»-ի: Ես այդ ասացի Արծրունուն:

— Այո, — դարձյալ միջամտեց կինը, — միայն «Մշակ»-ի համար Րաֆֆին այնքան կարևոր չէ, որքան Րաֆֆիի համար «Մշակ»-ը: Առանց «Մշակ»-ի նա կզրկվի ժողովրդականությունից: «Մշակ»-ն է, որ Հակոբ Մելիք-Հակոբյանին դարձրել է Րաֆֆի և Մելիքզադե:

Արծրունին ավելի համեստ եղավ: Նա այդ չասաց, բայց և չժխտեց իր կենակցուհու ասածը:

Ես ճաշից հեռացա ծանր տպավորության տակ: Պատճառը տիկին Մարոյի կծու, թշնամական վերաբերմունքն էր դեպի Րաֆֆին: Ես տեսնում էի, որ Արծրունին այդ կնոջ ազդեցության տակ է, և դա ինձ համար վերին աստիճանի անախորժ էր ու անսպասելի: Ես Արծրունուն համարել էի ավելի զորեղ կամքի տեր: Եվ դա ինձ համար մի տեսակ հիասթափում եղավ, որ, սակայն, բնավ չթուլացրեց իմ հարգանքը դեպի նա:

Ես որոշեցի կատարել Արծրունու խնդիրը և մի քանի օրից հետո սկսեցի գրել «Գործակատարի հիշատակարանից»-ը:

Թիֆլիսի Սոլոլակ անունով արվարձանում Լերմոնտովի անվան և Ռտիշչևսկայա փողոցների անկյունում կար մի անշուք տուն, որ այն ժամանակ պատկանում էր ոմն Տեր-Գրիգորյանի:

Իրիկնադեմ էր: Ես մի փոքրիկ դռնով մտա մի բարեհատակ գավիթ, անցա խորքը, բարձրացա երկհարկանի մի փլիգելի փայտյա սանդուղքով երկրորդ հարկի պատշգամբը: Դա կատարյալ մի բուբաստան էր: Քովեքով սեղմված հարյուրավոր ծաղկամանևերից օդը լցվել էր հարբեցուցիչ բույրով: Րաֆֆիի ճշանավոր ծաղկանոցն էր, որի մասին շատ էի լսել:

Դռները բաց էին: Ոչ ոք չէր երևում: Մտա մի փոքրիկ նախասենյակ, դարձյալ ոչ ոք: Բարձր հազացի, ուշադրություն գրավելու համար:

— Ո՞վ է այդտեղ, — լսվեց ներսից մի բարակ ձայն:

— Կարելի՞ է մտնել:

Գրասեղանի ետվ նստած էր ժամանակակից հայ երիտասարդության մտքի ամենասիրելի ղեկավարը: Նա, որի անունը տարածված էր ամենուրեք, ուր կար գեթ մի բուռ հայություն, սկսած Կովկասից մինչև Թուրքիայի խորքերը և Սիբիրի թունդրաները: Խոշոր, ավելի գիտնականի, քան արտիստի գլուխ, բարձր ճակատ, կարճ խուզած բիչ ալեխառն մազերով ու փոքրիկ հիվանդոտ աչքերով, — այս էր այն ժամանակվա 45-47 տարեկան Րաֆֆին: Քանի նստած էր, նա ինձ թվաց միջահասակ, երբ ոտքի ելավ ինձ ընդունելու, փոքրացավ: Րաֆֆիի ոտքերն իրանի համեմատ կարճ էին:

Ես ասացի իմ անունը, ներողություն խնդրելով, որ ընդհատեցի նրա զբաղմունքը:

— Փույթ չէ, — արտասանեց նա իր կիսականացի ձայնով, — չէի գրում, կարդում էի: Այժմ ես մեծ մասամբ գիշերները եմ աշխատում:

Նա վառեց գրասեղանի վրա դրած երկու մոմերը կանաչագույն լուսամփոփի տակ և մատը սեղմեց զանգակի կոճակին: Շատ ուշ ներս մտավ մի երիտասարդ հայ ծառա, որի անունը կարծեմ Ղազար էր:

— Ա՛յ տղա, ո՞րտեղ ես մնացել, — հանդիմանեց Րաֆֆին մեղմ եղանակով, — թեյ բեր:

Ես նոր էի կարդացել «Կայծեր»-ի առաջին հատորը և տակավին նրա թարմ տպավորության տակ էի: Շտապեցի իմ հիացմունքին արտահայտել, թեև վեպի գաղափարը դեռ այն ժամանակ հեէիաթային էր ինձ համար: Րաֆֆին հանույիից ժպտաց:

— Գիտե՞ք, — ասաց նա մի հաստ ծխախոտ ոլորելով, — ինձ չափազանց անհանգստացնում է երկրորդ հատորի վիճակը:

— Ինչո՞ւ, մի թե նա դեռ պատրաստ չէ:

— Ոչ, պատրաստ է վաղուց և արդեն մշակված է ու արտագրված: Իմ երկյուղը գրաքննիչից է: Այդ անիրավ Սոլոմոն-խան Մելիք-Մեհրաբյանը մի սոսկալի դահիճ է հայ գրականության համար: Նա ինձ ասում է. «Դուք պրոպագանդիստ եք, հեղափոխություն եք քարոզում»: Եղբայր, ձե՞զ ինչ, ասում եմ, ես Թուրքիայի դեմ եմ և ոչ Ռուսաստանի: Այդ ի՛նչ կառավարություն է, ի՛նչ օրենքներ են, նույնիսկ Պարսկաստանում չկան այդպիսի խստություններ:

Եվ Րաֆֆին, խորապես վշտացած, սկսեց փաթաթել մի նոր ծխախոտ: Նա ամբողջ ժամանակ ծխում էր: Մուխից նրա սև ընչացքը դեղնել էր. մի բան, որ տգեղացնում էր նրա դեմքը:

Նա ավելացրեց, որ որոշել է «Կայծեր»-ի երկրորդ հատորն ընդօրինակել տալ:

— Այդ գաբշելի ցենզուրական կոմիտեն արգելված ձեռագրերը չի վերադարձնում հեղինակներին: Ուզում եմ համենայն դեպս մի օրինակ թաքցնել:

Նա ոտքի ելավ, սկսեց խայլել ետ ու առաջ: Ինձ թվաց, թե դա հրաժեշտի նշան է:

— Ո՛չ, մի՛ շտապեք, — ասաց նա, տեսնելով, որ ես ոտքի ելա, — դեռ պարապելու ժամանակը չի եկել: Շատ ուրախ եմ ձեր այցելությանը: Խոսենք մի փոքր:

— Երևի ձեզ շատերն են խանգարում, չէի կամենա ձանձրացնողներից մեկը լինել:

— Այո, շատերն են խանգարում, բայց այժմ ես որոշել եմ ավելորդ այցելուներ չընդունել: Գիտեմ, դուք իմ անկեղծ հարգողներից եք և շատ անգամ եք Բաքվում կռվել իմ հակառակորդների դեմ: Այդ փտած մեղվականները կաշվից դուրս են գալիս ինձ հուսահատեցնելու համար, բայց չի հաջողվի: Եթե Արծրունին մի իիչ խելոք լիներ, շատ դյուրությամբ կխցանեիիք այդ անփարաջա տերտերների կոկորդը: Այժմ էլ ինչ-որ մի Հայկունի է ասպարեզ եկել և իր կեղտոտ լաթերը լվանում է աղվես Պետրոս Սիմոնյանցի թերթի մեջ:

Ես ակնարկեցի, թե չէի երևակայում, որ նա Արծրունուն խելոք մարդ չի համարում:

— Իհարկե, գավառներում ի՞նչ գիտեն, թե ինչեր են կատարվում այստեղ, — պատասխանեց Րաֆֆին: — Արծրունին հիմար մարդ չէ, բայց թույլ է: Նա իր խելքը ծախել է Մարոյի սիրուն: Այդ կինն է, որ թունավորում է նրա ուղեղը: Հա՛, տեսե՞լ եք նրան:

Ես պատմեցի Արծրունու մոտ հյուրասիրվելս, բայց ոչինչ չասացի իր վերաբերմամբ եղած խոսակցության մասին:

— Հավանեցի՞ք այդ մումիան:

— Ոչ, — պատասխանեցի ես առանց տատանվելու:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եմ, դուք մի անգամ եմ միայն հանդիպել և արդեն գիտեմ ինչ է: Իսկ ես ամիսներով ու տարիներով դժբախտություն եմ ունեցել տեսնելու նրա բացախոտ երեսն ու լսելու ագռավի կռկռոցը:

Այս խոսքերի վրա նա հանկարծ կանգ առավ, կարծես զղջալով, որ այդքանն էլ ասաց…

Ես ոտքի ելա հրաժեշտ տալու:

— Մի վայրկյան, — ասաց Րաֆֆին, — պահարանից դուրս բերելով «Կայծեր»-ի առաջին համարից մի օրինակ՝ ընծայագրեց և հվիրեց ինձ:

Առաջին նվերն էր, որ ստանում էի մի հայտնի գրողից:

— Այցելեցեք, — ասաց Րաֆֆին, — ես օրվա այս միջոցներին միշտ ազատ եմ: Այժմ պետք է ծաղիկներս ջրեմ: Ա՛յ տղա, Ղազար, բեր այստեղ ցնցուղը, — գոչեց ինձ հետ միասին պատգամը ելնելով:

Ես արտահայտեցի իմ հիացմունքը նրա ծաղիկներով որ, արդարև, հիանալի էին իրենց բազմատեսակ բուրմունքով:

— Մանկությունից եմ սիրել ծաղիկները, — ասաց նա այնպիսի փափկությամբ, որ կարծես խոսքն իր ճիշտ զավակների մասին էր: — Ա՛հ, եթե գիտեիք, ինչ զմայլելի վարդեր կան Պարսկաստանում: Ես գրել եմ, որ նրանց սերմերից ուղարկեն ինձ:

Ես հեռացա խորը տպավորությամբ:

«Գործակատարի հիշատակարանից»-ը գրեցի շատ արագ, կարծեմ մի ամսվա ընթացքում և տարա «Մշակ»-ի խմբագրատուն: Արծրունին ուրախացավ: Րաֆֆիի բացակայությամբ լրագրի բանասիրական բաժինը գրեթե ամայացել էր: Ճշմարիտ է, այնտեղ տպվում էին Հայկակի (Արփիար Արփիարյան) հետաքրքրական թղթակցությունները Կ. Պոլսից, պրոֆեսոր Անդրեաս Արծրունու բովանդակալի հոդվածները Գերմանիայից և Ասիացու (Գրիգոր Արծրունու) մերթ սրամիտ, մերթ ճապաղ ֆելիետոնները, բայց դրանք չէին կարող փոխարինել «Խենթ»-ը, «Դավիթ Բեկ»-ը, «Խաչագողի հիշատակարանը» և այլն - այն ժամանակ հայ գրականության գլուխգործոցները: Հարկավ, ես այնքան հանդուգն չէի, որ մի վայրկյան անգամ երևակայեի, թե իմ երեխայրիքը կարող է մրցել թեկուզ մի «Ոսկե աքաղաղ»-ի հետ: Սակայն զգում էի, որ Արծրունու համար իմ համեստ գործը մի թեթև սպառնալիք է Րաֆֆիին:

Արծրունին Րաֆֆիի երկերի տպագրությունը սովորաբար սկսում էր տարվա վերջերին այն հաշվով, որ շարունակությունն անցնի հաջորդ տարվան: Այդ նա անում էր տնտեսական նպատակով, այն է թե հին բաժանորդներին հարկադրելու, որ նորոգեն իրենց բաժանորդագրությունը և թե նորերին գրավելու համար, որ գնեն նախընթաց տարվա համարները:

«Գործակատարի հիշատակարանից»-ը իմ զուտ գրական թոթովանքն է, եթե հաշվի չառնենք «Հրդեհը նավթագործարանում»-ը: Իսկ գրել առհասարակ ես սկսել եմ 1880 թվականից:

«Մշակ»-ում տպվելուց հետո պատմվածքս անմիջապես լույս տեսավ առանձին գրքույկով Աբել Ապրեսյանի հրատարակությամբ: «Մեղու Հայաստանի» լրագիրը գովեց նրան ոչ այնքան անկեղծորեն, որքան Րաֆֆիին խայթելու համար:

Բայց Րաֆֆին անվրդով էր: Նա գիտեր, որ մրցակից չունի, և ոչ ոք չի կարող «Մշակ»-ին տալ մի «Կայծեր», նրա միակ հոգսն էր այդ ժամանակ «Կայծեր»-ի երկրորդ հատորի հրատարակությունը: Առաջին հատորը հրատարակվել էր գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանի ծախքով: Այժմ Րաֆֆին նրանից սպասում էր երկրորդ հատորի տպագրական ծախքը: Արծրունին 1884 թվականի սկզբին զրկվեց իր կալվածքից, չկարողանալով վճարել իր պարտքը: Կալվածքը մնաց վրաց ազնվականության բանկի վրա մոտ կես միլիոն ռուբլի պարտքի փոխարեն: Ցավալի էր այդ օրերին տեսնել բաջարի պայքարողին, որի սուր գրիչը հալածում էր ամեն մի մարդկային տկարություն: Արծրունին դարձել էր մի

անզոր մանուկ: Նա մինչև անգամ լաց էր լինում մորից զրկված որբի նման: Նա «Մշակ»-ը դադարեցրեց և վճռեց տեղափոխվել արտասահման: Նա գրեթե մենակ թողվեց ճակատագրի կամքին: Նա բարեկամ չուներ բացի իր կենակցուհուց, իսկ աշխատակիցներից միայն Ներսես Աբելյանը, ես և «Մշակ»-ի հարտուղար Հովհաննես Տեր-Մարտիրոսյանն էինք այցելում նրան և աշխատում էինք մեղմացնել նրա ծայրահեղ հուսահատությունը:

— Ո՛չ, ո՛չ, մի օր Արծրունին մեր ներկայությամբ, — Մարոյի հետ կերթանք Զվիցերիա և այնտեղ վերջ կտանք մեր կյանքին, ընկնելով Լեման լիճը:

Այդ խոսքերն ինձ թվացին ծիծաղելի: Արծրունին ոչ ֆաջր էր և ոչ էլ հիմար, որ ինքնասպանություն գործեր: Բացի դրանից, գիտեի, որ ինքնասպանները երբեք ոչ ոքի չեն նախազգուշացնում:

Ես ամեն օր օգնում էի նրան կարգի բերելու ու կապկպելով իր բազմաթիվ գրքերը: Հիշում եմ, մի օր գրադարանը էրբրելիս ձեռս ընկավ իր հոր՝ գեներալ Երեմիա Արծրունու, ռուսերեն մի գրքույկը, եթե չեմ սխալվում «Дорога в Индию» վերնագրով:

— Տեսեք, դա էլ գրող է եղել, — ասաց Արծրունին և գրքույկն արհամարհանքով մի կողմ շպրտեց:

«Գործակատարի հիշատակարանից»-ը տպվելուց հետո մի օր ես հյուրկան շատ նեղ կացության մեջ էի: Ասում եմ մի օր, որովհետև իմ սովորական անապահովության մեջ դա բացառիկ էր: Բառի բուն նշանակությամբ անոթի էի: Երկար տատանումներից հետո վճռեցի դիմել Արծրունուն: Ջորս տարի «Մշակ»-ին աշխատակցելով, ես ոչ մի կոպեկ վարձ չէի ստացել և ոչ էլ պահանջել էի: Գրեցի մի նամակ, խնդրելով տալ ինձ երեսուն ռուբլի ոչ իբրև վարձատրություն, այլ իբրև փոխառություն: Խոստանում էի պարտքս վերադարձնել մի ամսվա մեջ:

Արծրունին ոչ միայն խնդիրս չկատարեց, այլև նամակիս չպատասխանեց: Ավելին, նա փողոցում ինձ տեսնելիս խույս էր տալիս հանդիպելուց: Այս փոքրոգությունը մի մարդու, որին մեծ էի համարում, խոցոտեց իմ զգայուն ինքնասիրությունը: Ես դիմեցի Պետրոս Սիմոնյանցին, որի «Մեղու Հայաստանի» լրագրին աշխատակցել էի ընդամենը երկու հոդվածներով: Նա ինձ տվեց մի փոքրիկ գումար, որ խոստացածս ժամանակին վերադարձրի շնորհակալությամբ:

Արծրունու Զվիցերիա ուղևորվելուց հետո երեք մարդ կամեցան խմբովին շարունակել «Մշակ»-ի հրատարակությունը — Րաֆֆին, Ներսես Աբելյանը և Գաբրիել Միրզոյանը: Ես պիտի լինեի հարտուղար և մեկը գլխավոր աշխատակիցներից: Պատահական խմբագիր ցենզուրային առաջարկվեց Միրզոյանը, որպես համեմատաբար անկասկածելի անձնավորություն՝ հաղաքական տեսակետից: Այդ մարդը ոչ գրելու ձիրք ուներ, ոչ խոսելու, նա նույնիսկ գրական զարգացում չուներ: Այնուամենայնիվ, կառավարությունը նրան էլ չհատատեց խմբագիր, անշուշտ լավ գիտենալով, թե իրապես ով է թերթին ուղղություն տալու: «Մշակ»-ը բոլորովին դադարեց, ես մնացի անգործ, ինչպես և էի իրոք:

Ներսես Աբելյանը հրավիրվեց էջմիածնի հեմարանի դասատու: Ինձ համար դժվար էր մենակ վճարել մեր սենյակի վարձը: Որոշեցի ավելի էժանագին սենյակ գտնել:

Մի օր ինձ մոտ եկավ մի աղջիկ Ս. Պ. անունով և առաջարկեց մի սենյակ իր ծնողների բնակարանում: Այդ աղջկան ես մի ֆանի անգամ տեսել էի:

Հաճախ նա գալիս էր Քրիստափոր Միքայելյանի սենյակը, որ կենում էր նույն տանը, ուր Աբելյանը և ես էինք: Այդ ժամանակ դաշնակցության ապագա հիմնադիրը նոր էր ավարտել Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը և ուսուցիչ էր մի եկեղեցական ուսումնարանում: Նրա սենյակը միշտ լեցուն էր երիտասարդներով և օրիորդներով, որոնք ժամերով բարձրածայն վիճաբանում էին, աղմկելով ոչ միայն ամբողջ տունը, այլև փողոցը: Զէի հետաքրքրվում, զբաղված լինելով միայն իմ գրչով: Գիտեի միայն, որ կենտրոնը Միքայելյանն է, և նա է դեկավարում ժողովները: Այդ 22 — 24 տարեկան երկար կինամոնագույն մազերով, նորաբույս նոսրը մորուքով, գունատ դեմքով կաղ երիտասարդը ոչ խոսելու ձիրք ուներ, ոչ գրելու: Ես զարմանում էի, թե ինչու նա էր ընկերական շրջանի կենտրոնը: Խոսում էին միշտ ռուսերեն:

Օրիորդ Ս. Պ.-ի առաջարկած սենյակը գտնվում էր Գոլովինսկու (այժմ Ռուսթավելու) պրոսպեկտի վրա, մի մեծ տան ներքին ֆլիգելի չորրորդ հարկում: Իր մեծությամբ դա կատարյալ մի հավաբուն էր կտուրի տակ, ցածր առաստաղով: Բայց նա ուներ մի առավելություն՝ երկու փոքրիկ լուսամուտներ, ուսկից երևում էր Թիֆլիսի ամբողջ կեսը, մի բավական գեղեցիկ տեսարան: Ես նույն օրն իսկ տեղափոխվեցի այնտեղ, բայց շուտով զղջացի և ահա ինչու: Այդ ժամանակ ես զբաղված էի իմ առաջին վեպով «Նամուս»-ով: Ինձ համար անտանելի էր ամենափոքրիկ աղմուկը, երբ պարապում էի: Այնինչ օրիորդ Ս. Պ.-ն ամեն օր ժողովում էր իր մոտ բազմաթիվ ընկեր-ընկերուհիներին և այնպիսի մի բազար սարքում, որ ինձ համար անհնար էր դառնում պարապելը: Շատ անգամ գրիչս գցելով՝ կատաղած դուրս էի փախչում: Հետո, Ս. Պ. — ն ինձ համակրանք չէր ներշնչում թե՛ իր արտաքինով և թե՛ վարքով: Գայանյան դպրոցը նոր ավարտած մի աղջիկ էր՝ հողագույն դեմքով, ագռավի թևերի չափ սև կարճ խուզած մազերով, մկնանման փոքրիկ խոր ընկած աչքերով: Նրա ձևերն ու շարժումները միտումնավոր կոպիտ էին, ձայնը անախորժ, նա ինձ հանգստություն չէր տալիս, առանց նեղվելու ժամանակ-անժամանակ վազում էր սենյակս, խոսում էր, խոսում անվերջ և ժամերս գրավում անխղճորեն: Հաճախ նա պառկում էր անկողնակալիս վրա և սկսում էր որևէ հավի պես կչկչալ, իբրև թե երգում էր «Մեր հայրենիք», «Ջեյթունցիներ» կամ մի ուրիշ հայրենասիրական ոգեմաշունչ երգ: Երբեմն նա, թևերը ետ ծալելով, ինձ ըմբռամարտության էր հրավիրում: Սիրում էր հոհո ծիծաղելով թավալվել կամ թավալել հատակի վրա: Մի խոսքով՝ մի անտանելի արարած էր:

Օրիորդն այդ ամենը համարում էր տղամարդու և կնոջ մաքուր ընկերական հարաբերություն: Նույն կարծիքի չէին իհարկե շատ սիրուն օրիորդները...

Ուշ գիշեր էր: Քնած էի: Հանկարծ երազումս զգացի սառն ծանրություն ճակատիս վրա: Սարսափով արթնացա և գլխիս մոտ տեսա մի ներմակավոր կին կիսամերկ ուսերի վրա սփռված երկար մազերով: Նա մի ձեռը դրել էր ճակատիս վրա, մյուսը սեղմել էր կրծքիս:

— Խե՛ղճ, խե՛ղճ, դու շուտով պիտի մեռնես, — լսեցի մի ձայն, և ինձ թվաց, թե դրսից էր գալիս:

— Ո՞վ ես դու, — գոչեցի ես, ձեռը ճակատիցս հեռացնելով և գլուխս բարձրացնելով:

Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ, լուռ, որպես գիշերային ոգիներ, գրկեցին ներմակ տեսիլն ու չքացան նրա հետ միասին: Երազ չէր և ոչ մղձավանջ: Փովս դրած լամպարը իսկույն վառեցի, ոտի ելա, որ տեսնեմ, թե այդ ինչ էր: Երկյուղը հետաքրքրություն է ծնում: Երբ մի վտանգ ես զգում, անմիջապես ուզում ես գիտենալ, թե ինչ է այն և որ կողմից է սպառնում: Ես կանգնեցի դռների մեջ, լամպարը բարձրացրի գլխիցս վեր, նայեցի: Այնտեղ, կորրիդորի խորքում տեղի ուներ ինչ-որ ժխոր: Թվում էր, որ մեկին խեղդում են կամ մորթում, և այդ մեկը կին է: Տարտամ բայլերով դիմեցի դեպի այն կողմը, և իմ աչքերի առջև բացվեց հետևյալ տեսարանը. երկու հաղթանդամ տղամարդիկ գցել էին հատակի վրա մի երիտասարդ կին և ծեծելով աշխատում էին նրա ձեռները պարանով կապոտել: Կինը հուսահատորեն դիմադրում էր, գոռալով, գալարվելով, կրծոտելով նրանց ձեռները: Նրա հրավառ, արյունալի, անիմաստ աչքերից կայծեր էին ցայտում: Նրա երկայն ու թանձր մազերը հեղեղել էին նրա կիսամերկ մարմինը, հարուստ ու ներմակ ստինքը ալեկոծվում էր մարմնի գալարումներից:

— Ալբե՛րտ, Ալբե՛րտ, ո՞ւր ես, ազատիր ինձ, — գոռում էր նա, գլուխը հատակին զարնելով:

Ոչ հեռու կանգնած էր մի պառավ կին և, ալեխառն մազերը փետելով, լալիս էր:

— Այդ ի՞նչ է, մայրի՛կ, ի՞նչ է պատահել, — դիմեցի ես նրան:

— Հիվանդ է, — գոչեց պառավը, ձեռները ուժգին զարկելով իր գլխին:

Մեկը երկու տղամարդերից գոռաց.

— Ձեզ չի վերաբերում, գնացեք ձեր սենյակը:

Եվ այս ասելով, նա մյուս տղամարդի օգնությամբ բարձրացրեց երիտասարդ կնոջն ու հատակի վրա քաշքշելով տարավ իմ սենյակին կից սենյակը:

Ես վերադարձա իմ սենյակը, պառկեցի և բնականաբար այլևս չկարողացա քնել: Հետաքրքրությունս ծայրահեղ էր. ի՞նչ էր նշանակում այդ տարօրինակ տեսարանը: Թվում էր ինձ, որ կից սենյակում կատարվում է մի սոսկալի դրամա:

Հետևյալ օրը մինչև երեկո օրիորդ Ս. Պ. — ն, հակառակ իր սովորության, չեկավ ինձ մոտ: Երեկոյան նա եկավ տխուր դեմքով և ասաց.

— Խնդրում եմ քնելուց առաջ գիշերները բանալիով կողպեք ձեր սենյակի դուռը:

— Բայց երեկ գիշեր այդ ի՞նչ էր, օրիորդ, — հարցրի ես:

— Ոինչ, ոչինչ, — պատասխանեց նա գրգռված և դուրս գնաց:

Գաղտնիքն իմացա նրա ընկերուհիներից երրորդ օրը: Ուշ գիշերը սենյակս մտնող կինը օրիորդ Ս. Պ.-ի ավագ քույրն էր, նույնպես օրիորդ: Պառավը նրա մայրն էր, իսկ տղամարդիկ-եղբայրները: Օրիորդը հոգեկան հիվանդ էր. հիվանդության պատճառը մի անհաջող ռոման էր: Մի քանի տարի առաջ նա սիրահարվում է մի ինչ-որ հայ ուսուցչի վրա: Երիտասարդը ցույց է տալիս փոխադարձ սեր, խոստանում է ամուսնանալ նրա հետ: Հագուրդ տալով իր կրքերին, նա մի օր անհետանում է, թողնելով օրիորդին հուսահատ վիճակում… Թշվառը ծանր վշտի և ամոթի զգացման ազդեցությամբ հիվանդանում է, և հետզհետե նրա բանականությունը թուլանում է: Ահա երկու տարի է՝ նա այդ դրության մեջ է…

Ես անհարմար համարեցի այս պատմվածքի ճշտությունը ստուգել հիվանդի մերձավորների միջոցով: Ինչո՞ւ քրքրել մարդկանց վերքը, մանավանդ որ նրանք առանց այդ էլ տառապում են ցավից և ամոթից:

Սոսկալի գիշերից հետո թշվառ հիվանդը դարձյալ մի թանի անգամ մտավ իմ սենյակը, իհարկե, ցերեկով, քանի որ գիշերները փակում էի բանալիով սենյակիս դռները: Սովորաբար նա հանգիստ էր և անվտանգ: Բայց նա մերթ ընդ մերթ կատաղում էր, և ես կից սենյակից լսում էի նրա ճիչերն ու գոռոցները: Մի անգամ ես խորասուզված պարապում էի, հանկարծ դիմացս փայլեց մի բան: Դա խոհանոցի մի մեծ դանակ էր: Ետևումս կանգնած էր հիվանդը և քրքջում էր: Ոտքի ելա և, դանակը նրա ձեռքից խլելով, հրավիրեցի նստել և զրույց անել ինձ հետ: Նա իր քրոջ հակապատկերն էր իր արտաքինով: Նա շիկահեր էր, նրա կինամոնագույն աչքերը խոշոր էին և գեղեցիկ: Նա նստեց աթոռի վրա, ետ գցելով թանձր մազերը կիսաբաց ճերմակ կրծքից: Նա ծիծաղեց և հետո սկսեց ինչ-որ մրմնջալ: Իմ ոչ մի հարցին նա ուղղակի չպատասխանեց: Նա շարունակ ցածր ձայնով որոնում էր իր խառնաշփոթ մտքերը և արտասանում էր դարձվածքներ, որոնց իմաստն անկարելի էր ըմբռնել: Եվ ամեն մի դարձվածքից հետո կրկնում էր՝ Ալբերտ, Ալբերտ, ես քեզ կսպանեմ: Նա ինձ էլ այդ անունով էր դիմում…

Մի ուրիշ անգամ անբախտ աղջիկը հարձակվեց ինձ վրա երկաթյա մի խառնիչ ձեռքին, այն միջոցին, երբ ես անցնում էի մութ կորիդորով:

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ անկարելի էր հանգիստ հոգով զբաղվել իմ գործով: Զգում էի, որ իմ ներվերն սկսում էին բողոքել: Բացի դրանից, օրիորդ Պ.-ն քանի գնում, այնքան անտանելի էր դառնում ինձ համար: Սովորաբար նա էր մաքրում իմ սենյակը բացակայությանս ժամանակ և մաքրում էր ճիշտ նույն խնամքով, որով վերաբերվում էր դեպի իր արտաքինը, այսինքն՝ վերին աստիճանի անփույթ: Մի օր գրասեղանիս վրա թանաքամանն էր գլխիվայր ընկած ու թանաքը թափած, մյուս օրը լամպարս էր անհետացել, կամ թղթերս սփռվել հատակի վրա, իսկ սենյակի մաքրության մասին խոսք չէր կարող լինել: Բանն այնտեղ հասավ, որ ես չէի կարողանում առանց նողկանքի տեսնել նրա մշտապես զզզված մազերը և եղունգների կեղտը, մանավանդ նայել նրա մկնային աչքերին: Ստիպված էի ներվերս փրկելու համար փախչել այդ փոսից, որի էժանությամբ հափշտակվել էի: Ես որոնեցի մի ուրիշ սենյակ, շուտով գտա ու տեղափոխվեցի: Բայց այդտեղ էլ մի ամսից ավելի չկարողացա մնալ: Ես ընկել էի մի սենյակ, ուր

ձախից օրը մինչև երեկո լսում էի մի ինչ-որ անդամալույծի տրտունջներն ու հայհոյանքներն իր կնոջ դեմ, իսկ աջ սենյակից՝ մի լվացարարուհու արդուկի թխթրխկոցն ու կռիվը հավերի ու կատուների հետ: Ավելացնեմ և այն, որ սենյակս նայում էր դեպի մի գավիթ, որ լեցուն էր կատուներով, հավերով, և մի շուն երեկոյան ութ ժամից սկսած մինչև կեսգիշեր կնճկնճում էր, ամենևին ուշադրություն չդարձնելով չորս կողմից իր վրա հարձակվող բարերի վրա:

Դարձյալ փնտրեցի և գտա մի նոր սենյակ: Այստեղ էլ պարզվեց, որ տանտիրուհիս մի ռուս բահանայի այրի է, վերին աստիճանի կռվասեր և չար արարած, գոնե իմ վերաբերմամբ: Նա համարյա թե ամեն օր նախատում էր ինձ չնչին բաների համար, ջուր շատ եմ գործածում, գիշերները ուշ եմ գալիս տուն, խանգարում եմ նրա էունն իմ կոշիկների ձայնով, դռները բացում ու փակում եմ աղմուկով, հազում եմ, փռշտում եմ, երազումս խոսում եմ և այլն և այլն: Նա մի փոքրիկ շուն ուներ, որ առանց իմ կողմից հրավեր ստանալու, ժամանակ-անժամանակ գալիս էր ինձ մոտ և փաթաթվում էր իմ ոտներին, ցանկանալով անպատճառ բարձրանալ ծնկներիս վրա: Ես հաճույքով կշոյեի նրա գլուխը, բայց մաքուր շուն չէր, տանտիրուհիս երբեմ չէր լվանում նրան, թեև հավատացնում էր, թե սիրում է նրան ավելի՝ քան որևէ մարդկային էակի: Բացի այդ, մի վատ սովորություն ուներ այդ շնիկը: Միշտ իմ սենյակից դուրս գալիս հետը մի բան էր տանում՝ կոշիկս, հողաթափերս, թաշկինակս, մի խոսքով՝ ինչ բերանն էր ընկնում: Մի առավոտ, զարթնելով, կամեցա հագնվեի փնտրեցի գուլպաս, չգտա: Անպիտան շնիկը տարել էր նրան պատշգամբ և կնճկնճալով հետը խաղում էր, կարծես ուրիշ խաղալիք չէր կարող գտնել: Նա կարող էր գուլպաս զզգզել իր ատամներով, եթե ժամանակին չզարթնեի: Դուրս վազեցի կատաղած, ապրանքիս ազատեցի շնից և անմոռ կենդանուն մի քանի հարվածներ տվեցի: Նրա կնճկնճոցի ձայնից դուրս վազեց տանտիրուհիս:

— Ի՞նչ իրավունքով եք իմ շանը ծեծում, — գոռաց նա կատաղած:

— Նախ և առաջ դուք ձեր շանը հարցրեք՝ ի՞նչ իրավունքով է նա իմ գուլպան զզգզում, — ասացի ես ոչ պակաս կատաղած:

— Նա կենդանի է, չի հասկանում:

— Ես էլ խրատեցի, որ այսուհետև հասկանա և գուլպաս խաղալիք չդարձնի:

Մեր գոռոցները գրավեցին հարևաններիս ուշադրությունը: Բոլորն էլ ռուսներ էին, մեծ մասամբ կանայք: Նրանց տեսնելով տանտիրուհիս ավելի կատաղեց իմ դեմ և ինձ անվանեց «արմյաչկա»:

— Լռի՛ր, անտանելի պառավ, համբերությունս մի սպառիր, ապա թե ոչ,- գոչեցի ես սպառնալով:

Պառավ բառը լսելով՝ տանտիրուհիս անմիջապես ենթարկվեց հիստերիկայի, իսկ ես շտապեցի սենյակս, որ հագնվեմ, թողնելով, որ նրան ուշի բերեն օգնության եկած հարևանները: Մեր վեճը ճնճղեց տեղն ու տեղը: Դատավորներն էին երկու լվացարարուհի և հին գուլպաներ կարկատող մի կին: Նրանք միաձայն վճռեցին, որ բարեկիրթ կավալերը երբեմ չպիտի թույլ տա իրեն «ազնիվ, պատվավոր դամային անարգելու», անվանելով նրան պառավ, թեկուզ այդ դաման լինի հիսուն տարեկան: Պահանջեցին, որ ես իսկույն ևեթ ներողություն խնդրեմ տանտիրուհուցս, ձեռն էլ համբուրեմ: Ես բողոքեցի այդ վճռի դեմ, առարկելով, որ ազնիվ և պատվավոր դաման իրավունք չունի ինձ «արմյաչկա» անվանելու: Պահանջեցի, որ տիկինը ետ վերցնի իր խոսքերը և ինձնից ներողություն խնդրի իր անհարես շան վարմունքի համար: Այս որ լսեց տիկինը, նորեն հիստերիկայի մեջ ընկավ: Ես շտապեցի դուրս փախչել: Գնացի նորեն սենյակ փնտրելու, նույն օրն իսկ գտա և տեղափոխվեցի:

— Շիրվանզադե, — ասաց ինձ այդ օրերը Բաֆֆին ճենգամտորեն ժպտալով, — լսել եմ՝ էլի նոր սենյակ եք տեղափոխվել:

— Այո:

— Գիտեմ ինչու համար եք այդպես թափառում սենյակից-սենյակ:

— Հապա՞:

— Օդեր եմ փնտրում: Ոչինչ, շարունակեցեք, ես էլ ամուրի ժամանակ փնտրել եմ:

Օդեր ասելով՝ Րաֆֆին ակնարկում էր սիրուն կանանց: Նրա կարծիքով սենյակս ստեպ-ստեպ փոխելու պատճառը գեղեցիկ տանտիրուհի կամ հարևանուհիներ փնտրելս է: Րաֆֆին երբեմն լավ հոգեբանէր...

Այսպես թե այնպես Սուրբ-Դավթյան արվարձանի մի, բանի տասնյակ տներ թափառելով՝ «Նամուս»-ն ավարտեցի: Բայց սենյակային արկածներս շարունակվեցին: Պատմեմ նրանցից մեկը, որ այսօր էլ մտաբերելիս շփոթվում եմ: Այս անգամ կենում էի մի հնաոճ տան երկրորդ հարկում: Սենյակս մի կողմից նայում էր դեպի մի ընդարձակ բակ, ուր տեղավորված էին տասի չափ ընտանիքներ՝ բաղկացած հնավաճառներից, կոշկակարներից, խոհարարներից և այլն, ընդհանուր առմամբ բոլորն էլ չէավոր: Վերին հարկի կես մասը տանտիրուհուս բնակարանն էր՝ իմ դեմուդեմի պատշգամբի վրա: Մյուս կես մասում իմ սենյակն էր երկու ուրիշ սենյակների հետ, որոնցից մեկում մոռացել եմ ով էր կենում, իսկ մյուսում կենում էր մի շատ սիրուն մինգրելուհի թե օսուհի՝ չգիտեմ: Իմ և այդ սիրուն կնոջ սենյակների մեջ կար մի դուռ, որի վերին մի փոքրիկ մասն ապակյա էր: Երեկոները, երբ ապակին լուսավորում էր, գիտեի, որ դրացուհիս տանն է: Իսկ երբ մութ էր, կնճռանակե բացակա է: Նա գրեթե ամեն գիշեր վերադառնում էր այն ժամանակ, երբ ես քնած էի:

Մի գիշեր, սովորական աշխատանքս ավարտած, հազիվ պառկել էի անկողին, լսեցի մի թրխկոց, որից հետո ապակին լուսավորվեց: Խելքիս փչեց, որ գողերը կոտրեցին հարևանուհուս դռները, ներս խուժեցին և սենյակը կողոպտում են: Մտածելս ու ոտի ելնելս մեկ եղավ: Առանց մի բան հագնելու վազեցի դուրս, որ հավար բարձրացնեմ: Անցա ուղղակի դիմացի պատշգամբը, զարկեցի տանտիրուհուս դուռը, աղաղակելով.

— Ռոզալիա Սեմյոնովնա, գողեր, զարթնեցե՛ք, գողեր...

Պետք է ասեմ, որ տանտիրուհիս գնդապետի այրի էր և շատ քաջ. գոնե այդպես էր թվում ինձ, նայելով նրա չափազանց հաղթանդամ մարմնին և տղամարդկային խրոխտ ձայնին: Դռները բացվեցին, այրին դուրս եկավ մի ձեռում մի վառած մոմ, մյուսում իր հանգուցյալ ամուսնու մերկ թուրը:

— На, иди защищайся, — ասաց նա վրացական առոգանությամբ, մի ձեռիս մեջ դնելով թուրը, մյուսի մեջ՝ մոմը:

Հարևաններս արդեն զարթնել էին և դուրս էին եկել գավիթ: Ես խրախուսվեցի, վազեցի դեպի հարևանուհուս սենյակը և թրովս դռներին մի զորեղ հարված տալով գոչեցի.

— Է՛յ, ո՞վ կա այդտեղ, թող դուրս գա: Ոչ մի ձայն:

Մի անգամ էլ զարկեցի, և հանկարծ, զարմանալի տեսիլ, դռները բացվեցին, և շեմքի վրա երևաց գեղեցիկ հարևանուհիս՝ գիշերային ճերմակ զգեստով, շբեղ մազերը փարթամ ուսերի վրա փռված:

— Ռա՞մբավիյա, վի՞ն արիս, — արտասանեց նա վրացերեն:

Ես արձանացա: Դժվար չէ պատկերը երևակայել: Պատշգամբի բարձրության վրա կանգնած եմ ես — մի ձեռումս թուրը, մյուսում՝ մոմը, որ միայն ինձ էր լուսավորում մթության մեջ: Վարից նայում են տասնյակ դեմքեր, իսկ դիմացի, պատշգամբից՝ գնդապետուհին: Այն էլ ավելացնեմ, որ ներքնազգեստս հակառակի պես շատ էլ կարգին չէր: Բարձրացավ միահամուռ մի բրիջ: Ես ամոթահար դեն գցեցի թուրն ու մոմը, մտա սենյակս և դռները կողպեցի:

Հետևյալ առավոտ սենյակս մտավ Ռոզալիա Սեմյոնովնան և, իր հուժկու ձեռները կողերին հրելով, ասաց. это что такое, это что такое.

Ես ոչինչ չասացի: Նա շարունակեց.

— Ուզում էիր իմ կենդուռիուն բռնաբարել, հե՞: Ի՞նչ է գեղեցիկ տղա ես, կարծում ես ամեն կին կհափշտակվի՞ ֆեզնով, չէ , ինչպես տեսնում եմ, մի գիշեր էլ ինձ վրա պիտի հարձակվես ու ինձ բռնաբարես: Հը՛, փորձիր, էլի՛, կարելի է կկարողանաս, — ավելացրեց նա թուլուղի չափ կուրծքն ուցնելով և մի բայլ առաջ գալով:

— Լա՛վ, ի՞նչ եք կամենում ինձնից, այդ ասացեք, — արտասանեցի ես ետ նահանջելով:

— Պահանջում եմ, որ իսկույն դատարկեք իմ սենյակը, դուք կարող եք մի փորձանք բերել իմ գլխին:

— Շատ գեղեցիկ, Ռոզալիա Սեմյոնովնա, կաշխատեմ մի ուրիշ սենյակ գտնել:

— Ո՛չ, հենց այսօր, այս ժամին:

— Լավ, այսօր ևեթ կտեղափոխվեմ:

Բայց ես չէի ուզում տեղափոխվել առանց կանխավ պարզելու, որ ես ոչ մի չար միտում չեմ ունեցել, որ կատարվածն իմ բորբոքված երևակայության ծնունդն էր, որ վերջապես ես ապուշ չեմ, որ հարևանուհուս գրավելու համար այդ խելառ միջոցին դիմեի, որ... և այլն և այլն: Մի խոսքով՝ ուզում էի վարկս վերականգնել: Ես ասացի բոլորը, ինչ որ հարկավոր էր, ոչինչ չօգնեց: Տանտիրուհիս մնաց անհողդողդ:

— Դուրս եկեք և ուրիշ ոչինչ, — ասաց և դռները ուժգին զարկելով՝ հեռացավ:

Բարեբախտաբար, այդ օրերին Ներսես Աբելյանը Թիֆլիսումն էր, դիմեցի նրա օգնությանը:

— Քո երևակայությունը վերջ ի վերջո ֆո գլխին մի փորձանք պիտի բերի, — ասաց Աբելյանը ծիծաղելով, երբ լսեց պատմածս: — Գնանք:

Եկանք Ռոզալիա Սեմյոնովնայի մոտ: Ես լռեցի, խոսեց Աբելյանը: Երբեք նա այնքան պերճախոս չէր եղել, որքան այդ օրը: Կես ժամվա ընթացքում նա փաստերով ապացուցեց իմ անմեղությունը կատարված եղելության մեջ, մեղմացրեց Ռոզալիա Սեմյոնովնայի կատաղությունը, մի խոսքով՝ վերականգնվեց իմ վարկը, և ես նորեն տիրացա իմ սենյակին:

Մի ամիս չանցած՝ գեղեցիկ հարևանուհիս, որ, ինչպես պարզվեց, մի վրացի իշխանի սիրուհի էր, ամուսնացավ նույն տանը կենդող մի սպասավորի հետ: Ի պատիվ տանտիրուհուն՝ Աբելյանը եղավ խաչեղբայր, ես պարեցի Ռոզալիա Սեմյոնովնայի հետ:

IX

ՐԱՖՖԻ

Ժամանակը մեզ բարեկամացրեց: Ես Րաֆֆիի մոտ լինում էի ամիսը մեկ-երկու անգամ, իսկ հանդիպում էինք իրարու գրեթե ամեն օր: Նա սովորություն ուներ ճաշից հետո իրիկնադեմին զբոսնել Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Նրա սովորական ուղեկիցներն էին, բացի ինձանից, Ներսես Աբելյանն ու Ստեփան Զելինսկին:

Զբոսանքից հետո Րաֆֆին հաճախ մեզ հրավիրում էր իր մոտ թեյի: Նա տակավին առանձնակի էր ապրում: Նրա կինը երկու որդիների՝ Արամի և Աբշակի հետ գտնվում էր Պարսկաստանում: Բացի իր ընտանիքից, Րաֆֆին ծանրաբեռնված էր բազմաթիվ մերձավորների նյութական հոգացողությամբ: Նա ուներ պառավ մայր, երկու եղբայր և ինը քույր: Եվ բոլորին օգնում էր իր կարողության չափ: Իսկ վաստակում էր նա իր գրքերի վաճառումից առավելն ամսական մի հարյուր ռուբլի:

Նա ասում էր.

— Ես հանգիստ եմ, չեմ զանգատվում ուրիշ գրողների պես, և մարդիկ կարծում են, որ հարուստ եմ: Թշնամիներս տարածել են, թե ես բանկում ունեմ հսկա հազար ռուբլի: Չեմ հերքում, թեև հսկա կոպեկ չունեմ: Թող նրանք նախանձից տրաքվեն, իսկ բարեկամներս ուրախանան:

Բոլորովին այլ երևույթ ուներ Րաֆֆիի տնից դուրս: Սև ակնոցները, կիսապարսկական սև մորթե գդակը նրա առանց այդ սև մուգ դեմքին տալիս էին մի տեսակ անախորժ մթություն: Ոչ ոք այդ մարդուն փողոցում տեսնելով չէր կարող ասել, թե նա գրող է, այն էլ բանաստեղծ գրող-վիպասան: Քայլում էր Րաֆֆիի միշտ մխիթարական կանոնավոր, հանգիստ, ալյուրով, դեղնագույն հաստ ձեռնափայտն առջևը պահած, ինչպես եպիսկոպոսն իր գավազանը:

Մի անգամ մի ռուսախոս հայ Աբելյանին հարցնում է.

— Ո՞վ է այն պարսիկը, որի հետ ամեն օր զբոսնում եք դուք և Շիրվանզադեն:

— Րաֆֆին:

— Մի՞թե, — զարմանում է ռուսախոսը, — իսկ ես կարծում եմ, որ պարսիկ դեղավաճառ է:

Այդ փոքրահասակ մարդը, որի գրչից սարսափում էին հակառակորդները, զարմանալի հեզ և համեստ էր մասնավոր կյանքում: Շատ ֆիչ էր պատահում, որ վրդովվեր, և երբ գրգռվում էր, գիտեր իրեն զսպել:

Մի անգամ տեղի ունեցավ հետևյալ զավեշտական տեսարանը:

Րաֆֆին Հովհաննես Տեր-Սարգսյան անունով մի թղթավաճառի պարտական էր 400 ռուբլի «Կայծեր»-ի թղթի համար: Հակառակի պես թղթավաճառի խանութն այն փողոցի վրա էր (Դվորցովայա, որ այժմ կոչվում է Կոմմունալնայա փողոց), որով ամեն օր Րաֆֆին անցնում էր իր սովորական զբոսանքը կատարելու համար: Բայց Րաֆֆին չէր ջոթվում, հանգիստ անցնում էր խանութի առջևով՝ խանութպանի կատաղի հայացքների և լուռ սպառնալիքների տարափի տակ: Ամիսներ էին անցնում, Րաֆֆին չէր կարողանում իր պարտքը վճարել: Թղթավաճառը, որի հետ ես էլ հաշիվներ ունեի, մի շատ տաքարյուն և դյուրագրգիռ մարդ էր:

— Ախպեր, չի տալիս, ի՞նչ անեմ ես այդ մարդուն, — գանգատվում էր նա ինձ ամեն անգամ հանդիպելիս:

Մի օր նա, վերջապես, համբերությունից դուրս է գալիս, բռնում է Րաֆֆիին իր խանութի առջև և ասում է.

— Ասա, ախպեր, փողերս տալո՞ւ ես, թե չէ: Րաֆֆին, իր մուխից դեղնած բեղերի տակից ժպտանման մի բան արձակելով, հանգիստ պատասխանում է:

— Իհարկե, տալու եմ:

— Ե՞րբ:

— Երբ դրամ կունենամ:

— Իսկ ե՞րբ դրամ կունենաս:

— Չգիտեմ:

— Ո՞նց թե չգիտես, — սկսում է տաքանալ թղթավաճառը:

— Չգիտեմ, էլի՛, այնպես...

— Բայց ես համբերել չեմ կարող, — մի աստիճան էլ ավելանում է թղթավաճառի գրգիռը:

— Պետք է համբերել, — ասում է Րաֆֆին ամենայն պաղարյունությամբ. — համբերությունը լավ բան է:

— Ա՛յ մարդ, ես սկսում եմ կատաղել:

— Բոլորովին զուր:

— Բայց ես, այնուամենայնիվ, կատաղում եմ:

— Է՛հ, կատաղիր, ես ի՞նչ կարող եմ անել:

— Ա՛յ մարդ, դու բար է՞ս, թե ինչ, «անեծք ինձ, սատանա», կատաղիր, էլի՛:

Րաֆֆին ժպտում է և, գավազանը առջևը բռնած, հանգիստ հեռանում է:

Այս տեսարանը պատմեց ինձ ինքը՝ թղթավաճառը, ավելացնելով.

— Մարդ զարմանում է, թե էդ պաղ ծուկը ինչպես է գրում այդպիսի կրակոտ բաներ:

Նա սպառնում էր Րաֆֆիի դեմ դատ բանալ, ես ասացի նրան.

— Եթե այդ անեիք, ես ձեզ կխայտառակեմ լրագրում: Րաֆֆին երբեք չէր խոսում Արծրունու հետ ունեցած իր վեճի մասնավոր պատճառի մասին: Հետո միայն ես իմացա, որ այդ պատճառն իրոք հյութականն է: Արծրունին չէր վճարել Րաֆֆիին «Փավստոս» ստորագրությամբ մի շարք հոդվածների վարձը, ասելով, որ այդ հոդվածներով Րաֆֆին բանակռվել է իր բննադատ Հայկունու հետ, հետևաբար դրանք գրական գործեր չեն, այլ ինքնապաշտպանություն:

Րաֆֆիի համար, իհարկե, յուրաքանչյուր կոպեկ արժեք ուներ: Մարդն իր կյանքում կրել էր անսահման զրկանքներ: Մի անգամ ինձ մոտ ճաշի ժամանակ ուրախ տրամադրության մեջ պատմեց իր անցյալից մի բանի դեպքեր: Հիշում եմ հետևյալը.

— Մի օր պարապել էի մինչև գիշերվա կեսը: Ծխախոտս վերջացավ, միևնույն ժամանակ սաստիկ անոթի էի, գրպանումս ունեի չորս կոպեկ: Մտածում էի ի՛նչ գնեմ՝ ծխախո՞տ, թե՞ հաց: Վճռեցի հաց գնել: Այն ժամանակ ես կենում էի Հավլաբար արվարձանում: Դուրս եկա փողոց: Բոլոր խանութները փակ էին: Ջարկեցի մի հացթուխի խանութի դռներին: Ներսից ինձ պատասխանեցին հայհոյանքով: «Ա՛յ մարդ, — ասացի, — դու հայ ես, ես էլ հայ եմ, տուր ինձ երեք կոպեկի հաց, ի՞նչ ես զուր տեղը գոռգոռում»: Վերջապես, երկար խնդրելուց հետո, ստացա մի կտոր հաց:

Նա ասում էր.

— Պարսկաստանում ես նյութապես ավելի ապահով էի, բան այստեղ:

— Ինչո՞ւ հեռացաք Պարսկաստանից, հարցրի ես մի օր:

— Ստիպված էի:

Նա չասաց ինչու համար էր ստիպված: Պատճառը ես իմացա շատ ուշ, սրանից մի բանի տարի առաջ Փարիզում: Հայտնի պարսկահայ վաճառական Թումանյան եղբայրներից մեկը բացատրեց ինձ: «Հարեմ»-ը լույս տեսնելուց հետո Րաֆֆիի դրությունը դառնում է վտանգավոր: Նա պիտի կամ սպանվեր, կամ առնվազը ձերբակալվեր: Նա ինքն այդ չի զգում, բայց Թումանյանները գիտեն, և մի գիշեր մեկը նրանցից գալիս է Րաֆֆիի տունը, զարթեցնում է, ուժով կառք է նստեցնում և իր ծառաների ձեռքով փախցնում է պարսկական սահմաններից դուրս:

Րաֆֆին իր անձնական պետերի վերաբերմամբ խստապահանջ չէր: Սակավապետ էր ծայր աստիճան: Ճաշում էր նա միջօրեի մեկ ժամին «Մինգրելիա» անունով մի էժանագին ճաշարանում, որ գտնվում էր Սիոնի փողոցի վրա, վրաց տաճարի դեմ: Դա նրա գրեթե միակ սնունդն էր ամբողջ օրվա համար: Վճարում էր նա ճաշին 25 կոպեկ:

Միակ նրա շռայլությունը թեյն ու մրգերն էին: Գիշերը մինչև 2-3, երբեմն չորս ժամ պարապելով, նա անընդհատ թանձր թեյ էր խմում ու ծխում: Ծաղիկները բավական մեծ ծանրություն էին նրա գրպանի համար, որովհետև շարունակ գնում էր նորերը:

Գրաճննիչը թույլատրեց «Կայծեր»-ի երկրորդ հատորի տպագրությունը: Այդ օրը Րաֆֆիի համար կատարյալ տոն էր, ուրախությունն անսահման, թեև նրա մշտամռայլ դեմքից այդ դժվար էր գուշակել:Մնում էր հոգալ տպագրական ծախքերը: Այնինչ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանից դեռ լուր չկար: Րաֆֆին սկսեց ներվայնանալ: Նա ոչինչ չէր ասում, բայց ես զգում էի այդ: Մի օր հանկարծ լսեցի, որ Րաֆֆին իր բարեկամ Գաբրիել Միրզոյանցի հետ գնացել է Բաթում: Րաֆֆին չափազանց գաղտնապահ էր իր մասնավոր գործերի վերաբերմամբ, բայց ես գիտեի, որ նա գնացել է Մելիք-Հայկազյանից խնդրելու տպագրության ծախքերը: Նա կարծել էր, որ Միրզոյանցն էլ նույն գործի համար է գնում, որ որպեսզի իր միջամտությամբ օգնե իր բարեկամին: Բաթումում պարզվում է, որ Միրզոյանցն իր սեփական գործի համար է եկել, այն է՝ խնդրել Մելիք-Հայկազյանից, որ իրեն փող տա ինչ-որ մանկական ամսագիր հրատարակելու: Գաղտնիքը բացվելուց հետո երկու բարեկամների մեջ ինչ-որ սառնություն ընկավ: Րաֆֆին Բաթումից վերադարձավ ուրախ: Րաֆֆին ինձ խնդրեց հանձն առնել վեպի տպագրական սրբագրությունը: Ես մերժեցի, առարկելով, որ երբեմ գիրք չեմ սրբագրել, բացի իմ փոքրիկ գործերից:

— Փույթ չէ, — ասաց նա, — վերջին սրբագրությունը ես եմ անելու, միայն աչքերս ցավում են, չեմ կարող երեք անգամ սրբագրել:

«Կայծեր»-ի երկրորդ հատորը լույս տեսավ, որբան հիւծում եմ, 1885 թվականի սկզբներին:

Րաֆֆին անձնական հաճույքների վերաբերմամբ ասկետ էր: Սիրո մասին նրա գաղափարը տեսական էր: Սա դատում էր գրքերով և ոչ անձնական փորձերով: Միայն մի անգամ նա ինձ ասաց հեգնաբար.

— Գիտե՞ք, երիտասարդ հասակումս ես Պարսկաստանում սիրահարվեցի մի պարսկուհու վրա:

— Հետո՞:

— Հետո Պարսկաստանից հեռացա, մոռացա, էլի՛:

— Աֆա՛րիմ, — ասացի ես, չկարողանալով ծիծաղս զսպել:

Սուտ էր այն լուրը, թե Րաֆֆին սիրային կապակցության մեջ է Ն. Դ. անունով մի կնոջ հետ: Նախ, այդ կինը ապրում էր Ռուսիայում, ապա երբ տեղափոխվեց Թիֆլիս, երբեմ ես Րաֆֆիին չտեսա նրահետ: Գրիգոր Արծրունին էր, որ հափշտակվեց այդ կնոջով և գրեց «Էվելինա» անունով վեպը: Ես ճանաչում էի այդ կնոջը, գեղեցիկ էր, բայց ոչ հրապուրիչ, գոնե իմ տեսակետից:

Մի անգամ Րաֆֆին ինձ ասաց.

— Գիտե՞ք, ես կանանց չեմ մոտենում, վախենում եմ ուժերիս վերաբերմամբ:

Րաֆֆին երբեմ մի կամ երկու բաժակից ավել գինի չէր խմում: Նա զարմանում էր, որ ես օղի եմ խմում:

— Մի՛ արեք, եղբայր, դա ջուր չէ:

Հնկերության մեջ Րաֆֆին ամենից զուսպ էր: Տխուր էր թե ուրախ, նա միշտ ներփակված էր իր մեջ: Պատմեմ մի դեպք, որ բնորոշ է:

Մի անգամ կենսախինդ Ղազարոս Աղայանն ասաց.

— Ա՛յ տղա, արի մի օր հավաքվենք, գնանք Օրթաճալա մի ֆիչ ֆեֆ անելու:

Ամենքս համաձայնվեցինք, համոզեցինք և Րաֆֆիին: Մոտ քսան հոգի էինք: Մի քանի ժամ կերանք, խմեցինք, զուռնա ու դուդուկ լսեցինք, որը մեզնից երգեց, որը պարեց, որը պարզիպարզո հարբեց Քուռ գետի ափին, մի սքանչելի ծառուղու վրա: Րաֆֆին տեղից անգամ չշարժվեց: Ճաշկերույթի սկզբից մինչև վերջը մնաց նստած միևնույն տեղում, միևնույն դիրքում, գդակը գլխին, վերարկուն հագած, ձեռնափայտը ձեռքին: Նա շարունակ ժպտում էր, երբեմն արտասանելով հատ-հատ դարձվածքներ, սրախոսության մոտիկ բաներ:

Հետևյալ օրը փողոցում, հանդիպելով ինձ, նա ասաց.

— Պարոն Շիրվանզադե, երեկ շատ լավ քեֆ արինք:

— Այո, — հեգնեցի ես, — մանավանդ դուք:

— Ճիշտ է, երեկ ես շատ ուրախ տրամադրության մեջ էի:

Արդեն մի քանի տարի էր՝ Րաֆֆիի գրական գործունեության քսանհինգամյակը լրացել էր: Հարգողների մի խումբ փափագում էր տոնել նրա հոբելյանը, բայց երկյուղ կար, որ կառավարությունը թույլ չի տալ: Գավառներից գալիս էին համակրական նամակներ: Րաֆֆիի հակառակորդները, գլխավորապես «Մեղու Հայաստանի» լրագիրը և Րաֆֆիի գործերի քննադատ Հայկունին (ապազայում Եղիշե քահանա Գեղամյան) ամեն կերպ ուզում էին խանգարել: Ճիշտ այդ ժամանակ Հայկունին քննադատում էր «Կայծեր»-ը: Չեմ կարող ասել, որ վերլուծման մեջ չկային իրավացի դիտողություններ, բայց Հայկունին թույլ էր տալիս իրան քննադատությունից դուրս ենենզամիտ արտահայտություններ Րաֆֆիի քաղաքական աշխարհայեցողության վերաբերմամբ, աշխատելով վիպասանին կասկածելի դարձնել կառավարության աչքում: Օրինակ՝ նա Րաֆֆիի ազգայնական հերոսներին համեմատում էր ռուս հեղափոխական տեռորիստ Ժելյաբովի, Կիբալչիչի, Միխայլովի — (Ալեքսանդր 2-րդին սպանողների) հետ: Մի բան, որ միանգամայն սխալ էր:

Ճիշտ այդ ժամանակ մի փորձ եղավ Րաֆֆիի կյանքի դեմ: Մի գիշեր ինչ-որ չարամիտներ աշխատում են լուսամուտը կոտրելով խուժել նրա սենյակը: Րաֆֆին քնած է լինում. արթնանում է, վերցնում է ռևոլվերը և մի քանի անգամ կրակում: Չարամիտները փախչում են: Հետևյալ օրը ես գնացի նրան շնորհավորելու վտանգից ազատվելու համար, նա ցույց տվեց ինձ գնդակների հետքերը լուսամուտի փեղկերի վրա:

Այս առթիվ Րաֆֆին, 1884 թվականի հունվարի 14-ին Էջմիածին իր բարեկամ Ներսես Աբելյանին գրում է.

«Շնորհակալությամբ ստացա ձեր նամակը, որով խնդակցություն էիք հայտնում իմ կյանքին սպառնացող վտանգից ազատվելու համար: Ես ամեն տեսակ անազնվություն սպասում էի իմ թշնամիներից, բայց այդ չէի սպասում: Այսուհետև զգույշ կլինեմ: Երեկոները 7 ժամից դուրս չեմ գալիս: Գիշերը մի քաջ հասսս պառկած է լինում իմ նախասենյակում: Այժմ երկու ռևոլվերներ ունեմ, երկրորդը ստացա մի պարոնից:

Հոբելյանի առիթով կատաղած են՝ ամեն կեղտոտություններ գործադրում են արգելելու համար: Բայց գավառներում սաստիկ արձագանք է գտել այդ միտքը, և ամեն տեղ համակրությամբ են վերաբերվում:

Ուղիղն ասեմ, բարեկամ, ես ամենևին հոժարություն չունեի, որ այս տարի կատարվեր իմ հոբելյանը, դա Գաբոյի և մի քանի բարեկամների ցանկությունն էր: Ես չէի ուզում զրգռել իմ թշնամիներին, որովհետև ժամանակները վատ են, իսկ նրանք ամեն ցածության ընդունակ են: Բայց հիմա, որ գործը բավական առաջ է գնացել, այլևս կես ճանապարհից դառնալն ամոթ է:

Մահափորձի լուրը տարածվելուց երկու օր հետո «Մեղվ»-ի մեջ տպվեց, թե նույն գիշեր նույն հարձակումը եղել է Հայկունու տան վրա: Րաֆֆին այդ լուրը համարում էր շինովի: Նա ասում էր.

— Պառավ աղվեսն այդ սուտը տպել է նպատակով: Դրանով նա ուզում է բոլոր կասկածները հեռացնել իրանից, Հայկունուց և կառավարությունից: Բայց խաբել չի կարող: Իսկ Րաֆֆիի հակառակորդներն ասում էին. — Րաֆֆիի դեմ ոչ մի մահափորձ չի եղել: Նա ինքն է հնարել իր հոբելյանը ժողովրդականացնելու համար:

Կայինն ենթադրողներ, թե մահափորձը ոստիկանության գործն է: Այսպես թե այնպես, գաղտնիքը չպարզվեց: Նույն նամակում Րաֆֆին ավելացնում է. «Պարոն Արծրունու հետ իմ հարաբերությունները այժմ բավական լարված են. ես դադարել եմ նրանց մոտ ճաշ ուտել: Տիկնոջ ինտրիգները, վերջապես, զզվեցրին ինձ: Ես դիտավորություն ունեի այս տարվա սկզբում նոր մարդիկ հրավիրել և հներին հեռացնել, որպեսզի «Մշակ»-ը փոքր-ինչ կենդանանա, բայց հնար չեղավ, տիկինը հաղթությունը տարավ, իսկ պարոն Արծրունին նրա ձեռքում դարձել է շորի կտոր... Շատ կարելի է, որ բոլորովին դադարեմ «Մշակ»-ի մեջ աշխատակցելուց, և եթե կարողացա հաջողեցնել, պիտի նախապատրաստեմ առաջիկա տարվանից իմ խմբագրությամբ մի ամսագիր հրատարակել:

Այդ ամսագիրը Րաֆֆիի հաղցր երազն էր, որ, ավա՜ղ, չիրականացավ: Նա մտադիր էր իր շուրջը ժողովել երիտասարդ ուժեր և ամեն օր ինձ հորդորում էր մի խոշոր բան պատրաստել:

— Գրեցեք Բաֆվի կյանքից, շատ հետաքրքրական կլինի, — ասում էր նա ինձ, թեև ռեալիզմի դեմ էր:

Րաֆֆին շատ ֆիչ էր կարդում: Իր գրչով գբաղված՝ ժամանակ չուներ կարդալու:

Առհասարակ նրա գրական-փիլիսոփայական զարգացումը շատ էլ բարձր մակարդակ չուներ: Կարդացել էր լիովին միայն Մխիթարյանների գործերը՝ թե ինքնուրույն և թե թարգմանական: Ռուս գրականությունից ոչ լիովին կարդացել էր Տոլստոյին, Դոստոևսկուն, Տուրգենևին և Բելինսկուն: Ֆրանսիական գրականությունից ճանաչում էր Վիկտոր Հյուգոյին, Ժյուլ Վեռնին, Էմժեն Սյուին: Զոլային չէր սիրում, Բալզակի, Ֆլոբերի, Ալֆոնս Դոդեի, Գոնկուրների մասին գաղափար չուներ: Հյուգոյի ծայրահեղ երկրպագուն էր և շատ էր ազդվել նրանից: Շատ լավ ուսումնասիրել էր նրա ոճը և մասամբ յուրացրել:

Րաֆֆին հայ պատմագիրների մեջ ամենից ավելի սիրում էր Փավստոս Բյուզանդացուն:

Զարմանալի անտաբեր էր Րաֆֆին դեպի արվեստները: Նա ոչ մի թատերական ներկայացում, ոչ մի երաժշտական երեկույթ, ոչ մի պատկերահանդես չէր այցելում: Որքան աշխատեցի, չկարողացա նրան համոզել Ադամյանի խաղը գոնե մի անգամ տեսնելու:

Նա ասում էր.

— Եղբայր, այդ մարդուն չեմ սիրում, ինչ ուզում եք ասացեք, հոսոս է, այսօր մեկին է ասում «Շեխսպիրի գլուխ ունեք», վաղը մյուսին:

Թե Րաֆֆին եվրոպական երաժշտություն չէր ուզում լսել, այդ ինձ համար մի աստիճանի հասկանալի էր, որովհետև չէր ըմբռնում նրա գեղեցկությունը: Զարմանալին այն է, որ, պարսկաստանցի լինելով, անտարբեր էր դեպի արևելյան երաժշտությունը.

Իր կնոջ ու զավակների մասին Րաֆֆին երբեմ չէր խոսում, կարելի էր կարծել, որ չէր էլ մտածում: Բայց իրոք այդպես չէր, Րաֆֆին փափուկ սիրտ ուներ, միայն լինելով վերին աստիճանի ինքնապարփակ, չէր սիրում իր մասնավոր մտորումները ուրիշների հետ բաժանել:

Րաֆֆիի աշխատասիրությունն առասպելական էր: Լինելով արևելցի, զերծ էր արևելյան ծուլությունից ու մեղկությունից: Նա այն պարկապզուկ միջակությունից չէր, որոնք ձեռները ծալած սպասում են մուսաների գալուն: Նրա մուսան իր հոգու մեջ էր: Նա գիտեր, որ տաղանդը երեմ բառորդով աշխատասիրություն է: Նա իսկական ստեղծագործող էր, որի անհանգիստ հոգին միշտ աշխատանք է փնտրում:

Միջին հաշվով Րաֆֆիին գրում էր տասնվեց ժամ, երբեմն ավելի:

— Դուք կարող եք բայթայել ձեր առողջությունը, — ասում էին նրան բարեկամները:

— Ես ինձ առողջ եմ զգում մնայն աշխատանքի մեջ, — պատասխանում էր նա:

Րաֆֆիին սխալվում էր իր առողջության վերաբերմամբ:

— Գոնե ամառը մի երկու ամիս հանգստացեք, — ասում էի ես նրան:

— Երբեք, այն օրը, որ գրիչս մի կողմ դնեմ, կմնամ անոթի:

Մի օր նա բարեկամների ստիպմամբ գնաց իր ժամանակին հայտնի բժիշկ Գասպարյանի մոտ: Դա մի զարմանալի կոպիտ մարդ էր և չգիտեր խնայել իր պացիենտների նրբազգացությունը. Միևնույն ժամանակ մեծ հավատ ուներ դեպի իր անսխալականությունը. Նա ինձ Րաֆֆիին և ասաց.

— Եթե չդադարեք օրական տասնվեց ժամ աշխատելուց և ծխելուց, թանձր թեյ խմելը չթողնեք, շուտով կհանապարհվեք Խոջիվանք:

Րաֆֆիին ազդվեց: Մի ամսի չափ չծխեց, խմում էր շատ պարզ թեյ, աշխատում էր շատ քիչ, անհանգստելի էր նա այդ օրերին, տխուր, մտամոլոր, ներվային ծայր աստիճան:

— Ո՛չ, ո՛չ, այլևս չեմ կարող չծխել, — գոչեց նա մի օր, — առանց ծխախոտի ես ինձ ավելի վատ եմ զգում, գլուխս չի գործում: Թող կորչի բժշկությունը:

Եվ վերսկսեց նախկին կյանքը:

Րաֆֆիին գրում էր, բայց չէր տպում: Արծրունին արդեն վերադարձել էր Զվիցերիայից և «Մշակ»-ը վերականգնել: Նա Րաֆֆիին չէր հրավիրում աշխատակցության և գիտեր, որ եթե հրավիրե, մերժում է ստանալու: Մեկի ծայրահեղ կամակորությունը հանդիպել էր մյուսի հիվանդոտ ինքնասիրությանը:

Րաֆֆիին հրավիրվեց «Արձագանք» շաբաթաթերթին աշխատակցելու: Նա տատանվում էր ընդունել այդ հրավերը: Խնդիրը նուրբ էր. Արծրունին և Աբգար Հովհաննիսյանը այլևս հակառակորդներ էին, ի՞նչ կմտածի հասարակությունը, արդյոք նրան գաղափարի դավաճան չի համարի:

Բարեկամները համոզեցին Րաֆֆիին, որ դավաճանության մասին խոսք չի կարող լինել, Րաֆֆիին որպես գեղարվեստական գրող կարող է տպել իր երկերը, ո՛ր թերթում ևս կամենա, առանց շեղվելու իր ուղղությունից:

Րաֆֆիին, վերջապես, համաձայնվեց գրել «Արձագանք»-ում: Այդ ժամանակ ես «Արձագանք»-ի խմբագրապետն ու գլխավոր աշխատակիցն էի:

— Համոզեցեք այդ մարդուն, — ասաց Հովհաննիսյանը, — որ ձեռ վերցնի միտումավոր ուղղությունից և գրի կենսական վեպեր, գլխավորապես փոքրիկ պատմվածքներ:

Ես հարկավ ուղղության մասին ոչինչ չասացի Րաֆֆիին, միայն խնդրեցի սկզբում տալ փոքր երկեր, աչքի առաջ ունենալով շաբաթաթերթի ծավալը:

— Շատ լավ, — ասաց նա, — սկզբում կտամ մի խնի պատմվածքներ, իսկ հետո մի խոշոր պատմական վեպ «Սամվել» անունով:

Րաֆֆիին գրեց «Խազ-փուշը» և մի ուրիշ պատմվածք, որի վերնագիրը մոռացել եմ, բայց հիշում եմ, որ նյութը Կ.Պոլսի հայ բեռնակիրների կյանքից էր: Նա Կ.Պոլիսը չէր տեսել, բայց ի՛նչ հոգ նրա երևակայությանը: Ես կարծում էի, որ

պատմվածքը կլինի երկու կամ առավելը երեք համարի հյուր: Սխալվեցի, ամեն երկուշաբթի Րաֆֆիին ձեռագիրը բերում էր տակը գրած «կշարուճակվի»:

— Մինչև ե՞րբ, — հարցնում էր ինձ խմբագիրն ամեն անգամ:

— Մինչև ե՞րբ, — հարցնում էի ես Րաֆֆիին:

— Եղբայր, — ասաց նա մի օր, իմ հարցից վշտանալով, — չէ որ գործը պիտի կոլորացնել:

Այդ «կոլորացումը», որ Աբգար Հովհաննիսյանին տվեց մի հակացենզուրական սրախոսության հյուր, տևեց, ինը շաբաթ:

Սկսվեց «Սամվել» վեպի տպագրությունը: Վեպն ամբողջովին պատրաստ չէր: Րաֆֆիին իր նախկին սովորությամբ գրում էր հետզհետե և ուղարկում էր տպարան: Այդպես է գրել նա «Դավիթ Բեկ»-ը, «Խաչագողի հիշատակարան»-ը «Մշակի»-ի համար:

Ամիսներ անցան, «Սամվել»-ը չէր վերջանում:

Հովհաննիսյանը նորից սկսեց բողոքել.

— Այդ մարդն ինձ ֆանդելու է տողավարձով:

Տողավարձն էր չորս կոպեկ:

Ես հրաժարվեցի միջամտելուց: Հովհաննիսյանն ընդհատեց վեպի տպագրությունը: Րաֆֆիին զայրացավ: Վեպի առանձին հրատարակության մամուլները փտում էին տպարանի նկուղում: Նա հոժարվեց ընդունել Հովհաննիսյանի առաջարկը — շարունակության համար ստանալ տողին՝ երկու կոպեկ: Այս էր ամենաժողովրդական հայ գրողի վարձը:

Րաֆֆիին մտադիր էր «Սամվել»-ը վերջացնելուց հետո գնալ Կ. Պոլիս և հետո ճամփորդել Թուրքական Հայաստանում:

— Դուք կտեսնեք, — ասում էր նա, — ես Կ.Պոլիս կմեկնեմ անհկատելի, Ռափայել Պատկանյանի օրինակին չեմ հետևի, շուրջս աղմուկ բարձրացնելով և անուններ թմբկահարելով:

Րաֆֆիին չէր կեղծում: Նրա համեստությունն անկեղծ էր: Գովասանքներ լսելիս ափոթվում էր շոյված մանկան պես: Ձեմ կարող ասել, որ փառասիրության զգացմունքից զուրկ էր, բայց գովասանքները, որպես սովորական մի տուրք, սառնություն ընդունելու ձիրքը չուներ:

— Ես համոզված եմ, որ Կ.Պոլսում շատ կան լրջամիտ և անկեղծ հայրենասերներ, — ասում էր նա, — բայց դժբախտաբար մինչև այժմ մեզ մոտ եկողները զեվզեկներ են եղել, նա ակնարկում էր որոշ մարդկանց, որոնց թվում և Ծերենցին: Նա ասում էր.

— Այդ հոսոսն իրան այնպես է պահում, որ, կարծես, հայ ազգի գլխի տերը լինի...

Րաֆֆիին պատճառ ուներ Ծերենցին ատելու: Պատմում էին հետևյալը, մի օր Րաֆֆին «Մշակ»-ի խմբագրատանը հանդիպում է Ծերենցին: Այն ժամանակ Րաֆֆին Մելիքզադե ստորագրությամբ հրապարակախոսական հոդվածներ էր գրում ազատամիտ ուղղությամբ: Ծերենցը, որպես պահպանողական, այդ ուղղության հակառակորդներից էր: Առաջին անգամ հանդիպելով նա Րաֆֆիին՝ գոռոզ եղանակով հարցնում է.

— Դո՞ւ եք Մելիքզադեն:

— Այո:

Դուք Մելիքզադե չեք, այլ հարամզադե, — գոչում է բարկացկոտ ծերունին, մոռանալով իր եվրոպական կրթությունը:

Րաֆֆին արհամարհանքով լռում է: Նա Ծերենցին և նրա գրչին կարևորություն չէր տալիս: Բացի դրանից, նա սիրում էր կռվել ոչ խոսքով, այլ գրչով: Եթե կռիվը գրչին հասներ, հազիվ թե Ծերենցը երկար ժամանակ դիմանար նրա մտրակի հարվածներին: Ես մինչև այժմ չեմ տեսել հայ գրականության կամ մամուլի մեջ մի ուրիշ գրիչ, որ բանակռվի մեջ այնքան կուռ և լոգիկ լիներ, որքան Րաֆֆին: Միայն մի թերություն ուներ նրա բանակռիվը, արտահայտությունների մեջ անզուսպ էր և հաճախ չէր վարանում վիրավորել հակառակորդի անգամ անձնավորությունը: Րաֆֆին «Մեղվ»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանցի անունը դրել էր «պառավ աղվես»:

Մի օր Ղազարոս Աղայանը Պերճ Պռոշյանի և իմ ներկայությամբ ինչ-որ խնդրի վերաբերմամբ վեճի բռնվեց Րաֆֆիի հետ:

— Ուզում ես, էկ վիճաբանենք լրագրի մեջ, — գոչեց Աղայանը լեռնականի ահեղ ձայնով:

— Լավ, — ասաց Րաֆֆին հազիվ լսելի ձայնով:

Այդ ժամանակ Աբգար Հովհաննիսյանը Եվրոպայումն էր, «Արձագանք»-ը ես էի խմբագրում: Ուզում եմ ասել, պաշտոնական պատասխանատուն ես էի, որովհետև «Արձագանք» շաբաթաթերթը փաստորեն առհասարակ ես էի խմբագրում:

— Թույլ կտա՞ս «Արձագանք»-ի մեջ բանակռվելու, — դիմեց ինձ Աղայանը:

— Ուրախությամբ, — ասացի ես, — միայն պայմանով, որ իրարու անձնականը չվիրավորեք:

Երկուսն էլ պայմանս ընդունեցին: Եվ, իրավ, սկզբում բանակռվեցին շատ կորրեկտ, բայց հանկարծ միաժամանակ կատաղեցին, է՛լ «Համադանի էշ», է՛լ «Ավարայրի ավանակ», «Սալմաստի խաչագող», ինչ ասես լեցրին՝ Աղայանը մի ոտանավորի, Րաֆֆին մի հոդվածի մեջ:

Երկուսին էլ, հայհոյանքները մի-մի անգամ տպելուց հետո, ասացի.

— Պարոննե՛ր, ներեցեք, այլևս չեմ կարող թույլ տալ:

Հետո Աղայանն ինձ շարունակ կշտամբում էր.

— Ա՛յ տղա, չթողիր ինձ, որ այդ խաչագողին ջարդուփշուր անեմ:

Աղայանն, իհարկե, կարող էր ջարդուփշուր անել միայն իր վիթխարի մարմնով և ոչ գրչով:

Րաֆֆին նրան կտապալեր, ինչպես Դավիթը Գողիաթին:

Րաֆֆիի ընտանիքը Պարսկաստանից եկավ: Նա նոր, ավելի ընդարձակ բնակարան վարձեց, այս անգամ Խաղաքի գրեթե ծայրում, մի նեղ ու անսալահատակ փողոցի վրա, որի բնակիչները մեծ մասամբ չքավորներ էին: Բարեկամները, որոնց թվում և ես, այլևս հաճախ չէինք գնում նրա մոտ, իսկ դրսում հանդիպում էինք գրեթե ամեն օր:

Մի անգամ Րաֆֆիին տեսա հոգեպես արտաքո կարգի ընկճված: Նա ասաց.

— Է՛հ, ձանձրացել եմ կյանքից:

Տարօրինակ էին այդ խոսքերը Րաֆֆիի նման զորեղ բնույթի բերնում: Ինչ էր պատահել՝ Րաֆֆին չասաց:

— Հոգնել եք, պարոն Րաֆֆի, — ասացի ես,-եթե մի թեթև ճանապարհորդություն կատարեք, կկազդուրվեք:

— Ես էլ եմ մտածում այդ մասին, — բայց ի՞նչ միջոցներով ճամփորդեմ, կին, երկու զավակ, պառավ մայր, չքավոր եղբայրներ, ինը բույր...

Ընտանիքը գալուց հետո Րաֆֆիին առհասարակ նախկինը չէր: Առանց այն էլ սակավախոս, այժմ մարդը փակել էր իր հոգու դռները և խորասուզվել իր մտքերի մեջ: Նա չէր էլ աշխատում առաջվա թափով, և մեծ, նրա բարեկամները հազար ու մի ենթադրություններ էին անում ու չէին կարողանում հասկանալ՝ ինչ է պատահել այդ մարդուն: Այնինչ թշնամիները շարունակում էին հալածել, նախանձելով նրա օր-օրի վրա ավելացող ժողովրդականությանը: Սակայն Րաֆֆիին այլևս ուշադրություն չէր դարձնում նրանց վրա: Նրա վրդովմունքը փոխվել էր արհամարհանքի, որ ավելի զորավոր զենք է, քան առաջինը: Եվ որքան նա արհամարհում էր, այնքան թշնամիները ավելի էին կատաղում: Դա նրանց ապիկարության ապացույցն էր:

Գարնանը, 1888 թվականին, Րաֆֆիին հիվանդացավ: Կարծում էին անցողիկ մրսողություն է, անվտանգ: Տեր-Գրիգորյանց անունով մի բժիշկ հայտնեց մեզ, թե հիվանդը թոքերի բորբոքում ունի, հրավիրվեց անսխալականություն կարծվող Գասպարյանը, որ, դժբախտաբար, այս անգամ չսխալվեց — Րաֆֆիի դրությունը շատ լուրջ էր: Երեք օր անհանգիստ վիճակում էինք: Ամեն առավոտ և երեկո գնում էինք տիկնոջից տեղեկություն ստանալու: Արգելված էր հիվանդին այցելել:

Չատկի օրերն էին: Հինգշաբթի երեկո գնացի: Րաֆֆիին արդեն ոտի վրա էր. զարմացա. խալաթը հագին, ցնցուղը ձեռքին ծաղիկներ էր ջրում:

— Այդ ի՞նչ եք անում, — գոչեցի ես, — ինչո՞ւ այդպես շուտ վեր կացաք անկողնից, կարող եք մրսել:

— Ոչ, — պատասխանեց Րաֆֆիին իր սովորական անդորրությամբ, այլևս ազատված եմ մահից: Թշնամիներս երևի արդեն առնում էին իմ դագաղը, այժմ թող մի քիչ տանջվեն, դեռ մի քանի տարի էլ ապրելու եմ:

Ավաղ, չար նախազգացումն ինձ պաշարեց: Հրաժեշտի վայրկյանին, երբ սեղմում էի նրա թույլ ձեռքը, հիշեցի հետևյալ դեպքը. Ծերենցի թաղման օրն էր. խմբված էինք Մողնու եկեղեցու գավիթում: Րաֆֆիին Պռոշյանին ասաց.

— Պռոշ, պատրաստվիր, հերթն այժմ քոնն է: Պռոշյանը, որ մոտ տասը տարով մեծ էր Րաֆֆիից, շրթունքները սեղմելով և չարախինդ ժպտալով պատասխանեց.

— Բարեկամ, շատ կուժեր մնում են, կուլաները կոտորվում են:

Երկու օր անցած, զատկի կիրակի առավոտյան գնացի Րաֆֆիին տեսնելու: Փողոցում, դռների առջև հանդիպեցի Ստեփան Զելինսկուն: Այդ քառասնամյա մարդը լալիս էր երեխայի պես:

— Մեռել է, — ասաց նա և հեկեկաց:

— Բայց ե՞րբ, ի՞նչպես, չէ՞ որ երկու օր առաջ ոտի վրա էր:

— Գնա, տես բարեկամիդ դիակը, գուցե ճեզ ասի մահվան գաղտնիքը…

Րաֆֆիին այլևս չկար: Դադարել էր բաբախել նրա զգայուն սիրտը:

Րաֆֆիի թաղումն առաջին համաժողովրդականը եղավ: Միևչև այդ օրը նման համայնական սուգ չէր եղել: Արծրունու թաղումը Րաֆֆիի թաղման ընդօրինակումն էր: Այդ օրից էր, որ օտարներն ասում էին.

— Հայերը գիտեն վատ պահել իրենց գործիչներին և լավ թաղել:

Ոչ ոք չէր սպասում այդպիսի փառահեղ հուղարկավորություն: Րաֆֆիի հարևաններն ապշած էին:

— Ո՞վ էր այդ մարդը, — հարցնում էին իրարու:

Արդարև, զարմանալի երևույթ: Քաղաքի չքավոր արվարձաններից մեկում ապրում էր մի փոքրահասակ մարդ, համեստ կերպարանքով, պարզ ու հասարակ հագուստով: Նա ամեն օր դուրս էր գալիս տնից գլուխը թեքած կրծքին, հաստ

ձեռնափայտը առջևը բռնած և վերադառնում էր մրգեղենի թղթյա տոպրակը կոնատակին: Մեծության կամ տարօրինակության ոչ մի արտահին նշան չուներ այդ մարդը, բացի ծայրահեղ համեստությունից: Եվ ահա հանկարծ նա մեռնում է, և գրեթե ամբողջ Թաղաթը ոտի է ելել: Եկել էին Թիֆլիսի բոլոր համբարությունները իրենց գույնզգույն մետաքսյա դրոշակներով: Խմբվել էին տան առջև Թաղաթի բոլոր դպրոցների հայ աշակերտները իրենց ուսուցիչների հետ:

Ներկա էր ամբողջ հոգևորականությունը սևագլուխ եպիսկոպոսներով ու վարդապետներով: Ներկա էին բոլոր հայ և օտար լրագրերի խմբագրությունները, բոլորը, ով որևէ առնչություն ունի գրականության կամ մամուլի հետ: Եկել էր հայ բանվոր դասակարգը, թուրքահայ գաղթականները և հազարավոր տիկիններ, օրիորդներ, չհայելով հորդառատ անձրևին:

Թաղման հանձնախումբն ինձ խնդրեց գնալ Գրիգոր Արծրունուն համոզել, որ ներկա լինի հուղարկավորությանը: Դյուրին գործ չէր այդ կամակոր մարդուն համոզելը, այնուամենայնիվ, ես հանձն առա ու գնացի: Մոտ նրա անշուք բնակարանը, որ միևնույն ժամանակ և «Մշակ»-ի խմբագրությունն էր: Աշխատակիցներից ներկա էր միայն Խաչատուր Մալումյանը, — Արծրունու աջ թևը և պետք է ասել՝ ամենաշնորհալին «Մշակ»-ում գրողների մեջ:

Սկզբում Արծրունին բացարձակապես մերժեց իմ առաջարկը: Տիկին Մարոն ավելի հեռու գնաց: Այդ անհամբերողամիտ արարածը լեցուն էր անզուսպ ատելությամբ դեպի Րաֆֆին: Հանգուցյալի դագաղն անգամ չխնայելով՝ նա այնքան պարսավեց մարդուն, որ ես մի վայրկյան զղջացի գալուս համար: Նույնիսկ արծրունեամոլ Մալումյանը դժկամության նշաններ ցույց տվեց: Վերջ ի վերջո ես կարողացա համոզել Արծրունուն, ասելով.

— Ձեր բացակայությունը կարող է գեթ ազդել հասարակական կարծիքի վրա և «Մշակ»-ին վնասել:

Սա եկավ հուղարկավորության և իր հակառակորդների Աբգար Հովհաննիսյանի, Պետրոս Սիմոնյանցի ու Սպանդարյանի հետ Րաֆֆիի դագաղը բնակարանից դուրս բերողներից մեկն եղավ:

Դագաղը մինչև եկեղեցի ու այնտեղից մինչև Խոջիվանքի գերեզմանատուն տարվեց ուսերի վրա: Խմբագիրներին փոխարինեցին բանվորները, հետո տիկինները և օրիորդները, երիտասարդությունը, ուսանողությունը, գավառներից եկած բազմաթիվ պատգամավորներ: Ամբողջ ժամանակ անձրևը հեղեղում էր: Այդ օրը շատերը հիվանդացան և, ինչպես հավատացնում էին, հիվանդացած օրիորդներից երկուսը մեռան: Ավելի բան բառասուն տարի է անցել այդ օրից, դարձյալ Րաֆֆիի պատկերն աչքերիս առջևն է կենդանի: Բայց այսօր և վաղուց, շատ վաղուց նրա ջերմ երկրպագուներից չեմ:

Րաֆֆին է իսկական հիմնադիրն արևելյան աշխարհաբար գրական լեզվի: Խաչատուր Աբովյանի ոճը ես չեմ ընդունում գեղեցկության տեսակետից: Դա ժողովրդական կոպիտ բարբառի և գրական լեզվի խառնուրդ է, զուրկ տարրական նրբությունից: Պռոշյանը շատ բան չավելացրեց Աբովյանի լեզվին: Արծրունու բառարանը հուսահատության չափ աղքատ էր: Ռափայել Պատկանյանի ոտանավորները չէին կարող առատ նյութ մատակարարել հայ լեզվին: Ղազարոս Աղայանը երկաթաշունչ գործեր չի տվել:

Րաֆֆին էր, որ արձակ գրականության գեղեցիկ լեզվի հիմքը դրեց: Բայց վիպասան էր ոչ այն իմաստով, որ ես եմ ըմբռնում: Եթե հայ գրականության մեջ կան խոշոր վեպեր, որ ես կարդացել եմ առանց ձանձրույթի, դա «Վերք Հայաստանի»-ից հետո միայն և միմիայն Րաֆֆիի գործերն են... Մյուս մեծ վեպերը, գրողների երկերը կարդացել եմ ձանձրույթով կամ չեմ կարողացել մինչև վերջը կարդալ...

X

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ: ԱԲԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Թիֆլիս տեղափոխվելով, ես պատահմամբ ընկա հեղափոխական ոգով տոգորված մի շրջան: Նա բաղկացած էր համալսարանական քաղաքներից եկած ուսանողներից, տեղական միջնակարգ դպրոցների նորավարտ ուսանողներից և ուսանողուհիներից: Ինձ համար այդ շրջանը համակրելի էր միջազգային բնույթով, բարոյական աշխարհայեցողությամբ և հոգեկան պահանջներով: Այդտեղ պարզությունն ու անկեղծությունը յուրաքանչյուրի համար պարտավորական էին:

Միջավայրի առանցքն էր իր ժամանակին հայտնի նարոդնիկ Իգնատիյ Ցոսսելիանին: Բարձրահասակ, նիհար, ժամանակից առաջ ճերմակող մազերով մի վրացի, որ ինձ հիշեցնում էր Միրզա Սերոբին, թեև ոչ նրա չափ ներվային և ոչ էլ այնքան սրամիտ ու սրախոս: Նա էր ղեկավարում շրջանը, վայելելով հավասարապես թե վրացի և թե հայ երիտասարդության սերն ու հարգանքը: Ժողովվում էինք նրա մոտ շաբաթը մի քանի անգամ, կարդում էինք, վիճաբանում ժամերով, խափանելով բարի տանտիրոջ պառավ մոր նիրհը: Երանելի մայր: Միտս է. մի օր անսպասելի մտնելով Իգնատիյի սենյակը, տեսա նրան երեսունվեց տարեկան որդու գլուխը ծնկների վրա դրած, շփում էր նրա ալեխառն մազերը: Մուրիլլոյի վրձինին արժանի պատկեր...

Սովորաբար կարդում էր ժողովականներից մեկը, մյուսները լսում էին: Իսկ կարդացվում էին, իհարկե, արգելված գրքեր և պարբերական հրատարակություններ, բոլորը, ինչ որ գրավիչ էր այն ժամանակվա հեղափոխականորեն տրամադրված երիտասարդության համար: Շատերն այդ գրքերից ես կարդացել էի արդեն Բաքվում և այս պատճառով կանոնավոր չէի հաճախում ժողովները: Բացի դրանից, բարվոք էի համարում հազվագյուտ գրքերը վերցնել և տանը կարդալ, ավելի լավ ըմբռնելու համար: Ահա այդ ժամանակ էր, որ ծանոթացա Բակունինի, Գերցենի, Չերնիշևսկու և Բեբելի գործերին: Ժողովներում կարդացվեց և Կարլ Մարքսի «Կապիտալ»-ը, բայց ոչ լիովին, թե ինչու՝ չեմ հիշում: Երևի դյուրամատչելի չլինելու պատճառով: Հետո միայն ես կարողացա ձեռք բերել մի օրինակ այդ գրքից: Կարդացի և նվիրեցի Ներսես Աբելյանին:

Այդ ժամանակ էր, որ մի քանի երիտասարդներ մտածեցին հրատարակել մի «գաղտնի» թերթ և ինձ էլ հրավիրեցին մասնակցել: Թերթի անունը դրեցինք «Մունետիկ», եթե չեմ սխալվում իմ առաջարկությամբ: Դիմեցինք հեկտոգրաֆիայի օգնության և մասնակցողներից մեկի սենյակը դարձրինք «խմբագրատուն»: Առաջնորդողները գլխավորապես ես էի գրում, թե ինչ էի գրում, այսօր դժվարանում եմ ասել: Երևի գրածներս կարևոր բաներ չէին, որ հիշողությունիցս թռել են: Չեմ հիշում նույնպես, թե քանի համար հրատարակեցինք. գիտեմ, որ թերթի գոյությունը երկար չտևեց, և մենք՝ աշխատակիցներս, բաժանվեցինք, ու այդ բաժանումը եղավ հավիտենական:

Թերթի գոյության ընթացքում մենք հեկտոգրաֆիայով հրատարակեցինք Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը»:

«Արձագանք» շաբաթաթերթը կլանում էր իմ ամբողջ ժամանակը: Ես հրավիրված էի քարտուղարի պաշտոնով, բայց շուտով թերթի գրեթե ամբողջ լուծն ինձ վրա ընկավ: Ես էի նրա իսկական խմբագիրը, առաջնորդողներ գրողը, մամուլի տեսություն կազմողը, քննադատը, թատրոնական ռեցենզենտը, թարգմանիչը, սրբագրիչը, էքսպեդիտորը: Վերջապես, ես էի պարտավոր տալ վեպիկներ, պատմվածքներ, ֆելիետոններ (Մաղքոս կեղծ անունով): Ես նման էի այն թափառաշրջիկ երաժշտին, որ բերնով սրինգ է նվագում, ոտով թմբուկ զարկում, գլխով ծնծղա, և որին ֆրանսիացիք «Մարդ-օրկեստր» են անվանում:

Ագբար Հովհաննիսյանը ժամանակ չուներ, զբաղված էր բանկային և անձնական գործերով, զանազան քաղաքային և ազգային նիստերով ու ժողովներով, նա գրում էր միայն (այն էլ ոչ ամեն շաբաթ) զավեշտական ֆելիետոններ, և գրում էր, տեղն է ասել, բավական սրամիտ, համենայն դեպս ավելի հաջող, քան «Մշակ»-ի Ասիացին: «Արձագանք»-ը աշխատակիցների պակաս չուներ, ընդհակառակը, շատերն էին ջանում նրա տնօրենի սիրտը շահել, աչքի առջև ունենալով նրա դիրքը և հուսալով այդ դիրքից օգտվել այս կամ այն բանկում, կամ Ներսիսյան դպրոցում պաշտոն ստանալու համար: Բայց գրում էին նրանք ոչ կանոնավոր և հարատև: Մի երկուսը գիտեին գրել քիչ թե շատ տանելի, բայց շատերն իրանց բութ ածելին էին սրում բազմաչարչար «Արձագանք»-ի գլխին:

Ես հոգնում էի այնչափ, որ շաբաթ օրերը, երբ թերթը պիտի տպարանից դուրս գար մինչև երեկո, գալիս էի տուն ուժասպառ և թավալվում անկողնի վրա, չկարողանալով մի բառ անգամ պատասխանել կնոջս հարցին՝ «Ի՞նչ է պատահել»: Եվ այս բոլորը ամսական հիսուն ռուբլի վարձատրությամբ:

Աբգար Հովհաննիսյանը ասում էր.

— Գրողն ինձ համար կիտրոն է. ճամռւմ եմ ու կճեպը դեն գցում:

Նա այդ ասում էր ոչ նյութապես շահագործելու իմաստով, այլ աշխատեցնելու մտքով: Աբգար Հովհաննիսյանը նյութամոլ չէր:

Մի անգամ, երբ նա դարձյալ կրկնեց այդ դարձվածքը, ես ասացի.

— Իմ կաշին հաստ է, և հյութը շատ, ձեր ձեռները անզոր են ինձ ճամելու համար:

Մի ուրիշ անգամ, երբ նորից կրկնեց իր սիրած դարձվածքը, ես կատաղեցի.

— Եթե ինձ ճամեք անգամ, գոնե մի կաթիլ կմնա, և այդ կաթիլը կլինի ձեր մահացու թույնը:

Ես ուենի միջոց «Արծագանճ»-ի ոստայնից ազատվելու համար, բայց այդ կլիներ Փարիքդայից ելնել, Սցիլլա ընկնել: Գրիգոր Արծրունին, այն օրից, երբ Զվիցերիայից վերադառնալով «Մշակ»-ը վերականգնեց, շարունակ առաջարկում էր ինձ ընդունել թերթի մշտական աշխատակցի և խարտուղարի պաշտոնը: Ես մերժում էի մի քանի պատճառներով: Նախ ես Արծրունու վերաբերմամբ մասամբ հիասթափված էի դեռ մինչև արտասահման գնալը, ապա, երբ նա վերադարձավ, «Մշակ»-ի առաջին համարում գրեց, թե իր բացակայությամբ հայ գրականությունը ոչ մի գիրք կամ գրքույկ չի տվել, այնինչ «Նամուս»-ը հենց նրա բացակայությամբ էր լույս տեսել: Այդ մոռացումն իմ երիտասարդ ինքնասիրությունն ընդունեց որպես գիտակցական արհամարհանք Արծրունու կողմից: Առհասարակ Արծրունին այն հավակնություններ ուներ, թե «Մշակ»-ից դուրս հայ գրականություն չկա և չի կարող լինել: Այնուհետև՝ ի՜նչ տարբերություն Արծրունու և Աբգար Հովհաննիսյանի մեջ:

Րաֆֆին ասում էր.

— Շատ լավ եք անում, որ չեք ընդունում Արծրունու առաջարկը, ես տասներկու տարի աշխատակցեցի այդ մարդուն, ի՞նչ շահեցի, բացի ներվերս խայխայելուց և տիկին Մարոյի լուտանքներից: Գրիգոր Արծրունի և Աբգար Հովհաննիսյան միևնույն խմորից են թխված: Երկուսն էլ հոփացած բուրժուաներ են հարստահարիչների մթնոլորտում սնված ու մեծացած: Նրանց համար մենք՝ մտքի մշակներս, ուրիշ ոչինչ ենք, եթե ոչ շահագործման նյութ: Համբերեցեք, ես հույս ունեմ, վերջապես, թույլտվություն ստանալ մի զուտ գրական ամսագիր հրատարակելու, այն ժամանակ մենք կունենանք մեր օրգանը:

Խե՜ղճ Րաֆֆի, ի՞նչ գիտեր, որ այդ խոսքերն ասելուց մի տարի չանցած՝ պիտի մահանար:

Բնական է, որ Արծրունին չպիտի ներեր ինձ իմ համառ մերժումը: Նրա համար ով իր կողմը չէր — թշնամի էր: Եվ ահա շուտով սկսվեց մի հողարկված ատելություն, որ շատ չանցած՝ փոխվեց կատաղյալ հալածանքի, մանավանդ, երբ «Մշակ»-ի խմբագրատուն մտավ Ներսիսյան դպրոցի նախկին աշակերտ Խաչատուր Մալումյանը: Այդ տղան, որ շուտով դարձավ Արծրունու աջ թևը, բավական շնորհալի գրիչ ուներ, թեև սեմինարիստի մտայնությամբ: Նա կարող էր լինել բավական լավ հրապարակախոս, եթե ունենար բավականաչափ զարգացում և զերծ լիներ նախանձի մաղձից ու մանավանդ ծայրահեղ մեծամտությունից: Տեղն է ասել, ապագայում նա դարձավ դաշնակցության առաջնորդներից մեկը և դժբախտաբար կործանվեց, որպես զոհ իր մոլորության: Այսօր նրա լուսանկարը Ակնունի կեղծ անվան տակ Քրիստափոր Միքայելյանի և Սիմեոն Զավարյանի հետ զարդարում է դաշնակցության բյուրոներն ու խմբագրատներն ամենուրեք: Ճակատագրի կծու հեգնանք, մարդը ծնված էր շատ-շատ մի դպրոցի վարիչ կամ լրագրի շնորհալի աշխատակից լինելու, և հանկարծ կամեցավ մի ամբողջ ժողովրդի քաղաքական ղեկավարը լինել...

Մի անգամ ես գրեցի երեք հոդված «Հայ ազգի կատաղի թշնամին» վերնագրով: Որովհետև հոդվածները որպես խմբագրական, ըստ սովորության, չպիտի ստորագրվեին, նախքան տպարանին հանձնելը կարդացի Աբգար Հովհաննիսյանին: Բանն այն է, որ նորեն բորբոքվել էր իմ բնածին ատելությունը դեպի բուրժուազիան: Հայ ազգի կատաղի թշնամի ես համարում էի վաճառականությունը: Ես իմ հոդվածների մեջ ասում էի, թե օտարների մեր մասին կազմած նվաստացուցիչ և վիրավորական կարծիքը մեր վաճառականության ստոր վարք ու բարքերի հետևանքն է: Ես ասում էի, թե այդ ապականված տարրն է, որ գլխավորապես շփվում է օտարների հետ և նա է, որ ստում է, խաբում, կեղեքում: Մեկն էլ իմ բերած փաստերից այն էր, որ մեր վաճառականները, մի բանի տարի շիտակություն կեղծելով, վարկ են վաստակում Մոսկվայի և Լոձի ֆաբրիկանտների մոտ, ապա մի օր մեծ բանակով ապառիկ ապրանք են վերցնում, բերում են և շուտով իրանց սնանկ են հայտարարում ու պարտատերերին տալիս իրանց պարտքերի 10 կամ 20 տոկոսը, մնացյալը կլանելով: Ես ասում էի, թե օտարները չեն ճանաչում ոչ հայ գյուղացուն, ոչ հայ բանվորին, ոչ հայ արհեստավորին, ոչ հայ մտավորականին, և ամբողջ հայ ազգը համարում են կեղծավորների, վաճխառուների և գողերի մի հավաքածու: Աբգար Հովհաննիսյանը լսեց իմ հոդվածները և շփոթվեց:

— Ձեմ կարող թույլ տալ այդ հոդվածները, — ասաց նա:

— Ինչո՞ւ:

— Ահագին սկանդալ կառաջանա:

— Թող առաջանա, ի՞նչ կա:

— Իսկ հետևանքը գիտե՞ք...

— Գիտեմ... գրեք հոդվածների տակ իմ անունը:

— Այդ ինձ չի կարող ապահովել, պատասխանատվությունն ինձ վրա է:

— Ուրեմն վախենո՞ւմ եք:

— Ո՛չ, — արտասանեց Հովհաննիսյանը տատամսելով, — ձեր ոճը չափազանց հարձակողական է, փոփոխեցեք, մեղմացրեք, գուցե հնարավոր լինի տպել:

— Ձեմ կարող ոչ փոփոխել, ոչ էլ մեղմացնել:

— Այն ժամանակ ես էլ չեմ կարող թույլ տալ տպելու:

Ինձ համար պարզ էր, որ մարդը վախենում էր: Եվ ուներ իրավունք: Չէ որ հենց վաճառականություն էր նրան նստեցրել բանկի դիրեկտորի պաշտոնի վրա և կարող էր նրա տակից հաշել թիկնաթոռը:

— Շատ բարի, — ասացի ես և կամեցա հոդվածները պատռել ու դեն գցել:

— Ո՛չ, մի պատռեք, տվե՛ք ինձ:

Ես հոդվածներս տվեցի նրան:

Անցան մի բանի ամիսներ: Մի օր Հովհաննիսյանն ասաց,

— Այժմ կարող եմ թույլ տալ ձեզ «Հայ ազգի կատաղի թշնամին» հոդվածները:

Թե ի՞նչ էր պատահել՝ չասաց:

Հոդվածները տպվեցին «Արձագանք»-ի երեք համարներում անստորագիր:

Երբեմ մի լրագրական գրվածք հայերի մեջ չէր բարձրացրել նման փոթորիկ: Կատաղեց ամբողջ հայ վաճառականությունը ոչ միայն Թիֆլիսում, այլև ամենուրեք: Բավից, Նոր-Նախիջևանից, Պետերբուրգից, Մոսկվայից սկսեցին տեղալ հերհումներ, հայհոյանքներ, սպառնալիքներ: Կլուբներում ու բանկերում վաճխառուները, բանկիրները, գործարանատերերը, խանութպանները, նույնիսկ մի խումբ բժիշկներ, իրավաբաններ, չինովնիկներ իրանց կոկորդը պատռելով պնդում էին, թե դա մի չտեսնված ամբաստանություն է, մի անասելի զրպարտություն: Իսկ հայ վեղարավորներն ու տերտերները եկեղեցիներում, փողոցներում երդվում էին Քրիստոսի խաչելությամբ, թե հայ ժողովրդի միակ պահապանը, իհարկե, հոգևորականությունից հետո, վաճառականությունն է:

Թիֆլիսում ճահճի փոթորիկն առանձնապես զորեղ էր Դվորցովայա (այժմ Կոմոլնալնայա) փողոցի վրա: Այստեղով անցնելն արդեն վտանգավոր էր «Արձագանք»-ի աշխատակիցների համար: Մի խանութպան հարձակվեց ծերունի պատմագետ Ալեքսանդր Երիցյանի վրա և փայտով զարկեց գլխին, մի ուրիշը Կարապետ Յաղուբյանի վրա: Ես հարձակման չենթարկվեցի, բայց բավականին հայհոյանքներ կերա:

Արծրունին շփոթված էր, չգիտեր ինչպես վերաբերվել: Պաշտպանել վաճառականությանը չէր կարող, տրադիցիա ուներ, և հետո չէ որ բուրժուազիան անպաշտպան թողեց նրան և զրկեց ահագին կալվածքից: Իսկ ձայնակցել «Արձագանք»-ին, կնշանակեր դավաճանել փոխատելության մրցման և նախանձի զգացմանը:

Պաշտպանությունը վերցրեց իր վրա ինքը՝ բուրժուազիան: Դվորցովայա փողոցի վաճառականները հրատարակեցին մի գրքույկ՝ լի հայհոյանքներով ու զրպարտություններով:

Աբգար Հովհաննիսյանը, տեսնելով իմ հոդվածների հարուցած փոթորիկը, որ սպասածից շատ ավելի զորեղ էր, որոշեց ալեկոծված ճահճի վրա յուղ թափել: Իր լիուլի ստորագրությամբ գրեց երկու թե երեք հոդված, ուր անպայմանը պայմանավորվեց: Միևչդեռ ես ամբողջությունն էի ֆարկոծել, նա ասաց, թե, այնուամենայնիվ, հայ բուրժուազիայի «հինգ տոկոսն ազնիվ է»: Դա մի դիպլոմատիկական ելույթ էր. թող յուրաքանչյուրը կարծի, որ ինքն էլ այդ հինգ տոկոսի մեջ է, և հանգստանա: Սակայն այդ խորամանկությունը չօգնեց նրան: Վրա հասավ Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության անդամների տարեկան ընդհանուր ժողովը, Աբգար Հովհաննիսյանն այդ բանկումն էր դիրեկտոր:

Ջեմ հիշում հայ գործչի մի անուն, որ այնպիսի կատաղությամբ ու անամոթությամբ հորջորջված լիներ, որպես այդ օրը Աբգար Հովհաննիսյանի անունը: Ամբաստանում, զրպարտում, հայհոյում են մարդուն ամենքը, որոնց ճակատին դրոշմված էր «վաճառական», իսկ այդ օրը վաճառական էր ամենքը, սկսած վերջին մրգավաճառից մինչև հայտնի բժիշկը, փաստաբանը, ինժեները: Դա կատաղած գայլերի մի ռամկ էր, որի ժանիքներին փորձել էր դիպչել մի հանդուգն ձեռ:

Ինչո՞ւ ես ընդհարվեցի Աբգար Հովհաննիսյանի հետ և վերջը բաժանվեցի՝ այլևս չհանդիպելու պայմանով…

Տոնվում էր Գրիգոր Արծրունու հրապարակախոսական գործունեության հանրահիգամյակը: Տոնակատարությանը մասնակցում էր Հայ բուրժուազիան ոչ այնքան գրչի մարդուն իր հարգանքը ցույց տալու, որքան իր վրեժն «Արձագանք»-ից առնելու համար:

Աբգար Հովհաննիսյանը խմբագրատուն հրավիրեց «Արձագանք»-ի աշխատակիցներին խորհրդակցելու՝ հարկավո՞ր է արդյոք շնորհավորել Արծրունու հանրահիգամյակը, թե՞ ոչ: Այդ ժողովին ներկա եղողներից հիշում եմ Ալեքսանդր Երիցյանին, Գարեգին Ենգիբարյանին, Գևորգ Զմեկյանին, Կրապետ Յաղուբյանին, Իսահակ Հարությունյանին: Պերճ Պռոշյանը և Գաբրիել Սունդուկյանցը մերժել էին ներկա լինել:

Միաձայն որոշվեց՝ չշնորհավորել Արծրունուն: Ես դեմ էի այդ որոշմանը և ասացի.

— Իսկ ես վաղը կերթամ և կշնորհավորեմ:

— Դուք կատա՞կ եք անում,- հարցրեց Հովհաննիսյանը հեգնանքով:

— Ոչ, ես լուրջ եմ ասում: Իմ գրական գործունեությունը ես սկսել եմ «Մշակ»-ի էջերում, ապերախտություն կլինի իմ կողմից մոռանալ Արծրունուն:

— Այն ժամանակ դուք կզրկվեք «Արձագանք»ին աշխատակցելու պատվից:

— Ձեմ մտահոգված այդ մասին:

Մյուս օրը գնացի տոնախմբությանը: Ես եկել էի միայն պատռտնապես սեղմելու Արծրունու ձեռքը, բայց նա ինձ տեսնելով զգացվեց, հարձակվեց ինձ վրա, և մեծ համբուրվեցինք:

Աբգարի սպառնալիքը սահմանափակվեց մի սրամիտ ֆելիետոնով այդ համբույրի մասին: Նա ինձ չէր կարող զրկել «Արձագանք»-ին աշխատակցելու «պատվից», որովհետև ես էի կարևոր թերթի համար, և ոչ թերթը ինձ համար:

Պատահեց և մի ուրիշ ավելի կարևոր դեպք: Ղազարոս Աղայանը «Տարազ» շաբաթաթերթի մեջ գրել էր մի անստորագիր հոդված, որով նա Աբգար Հովհաննիսյանի վրա բարդում էր տասն և ինը զանազան մեղադրանքներ: Դա ժամանակի ոգին էր՝ գաղափարական վեճը միշտ վերածել անձնականի և աշխատել հակառակորդին ամեն կերպ անվանարկել, մեղադրելով նրան չկատարած հանցանքների մեջ: Այդ տեսակետից Ղազարոս Աղայանը մանավանդ չափ ու սահման չէր ճանաչում:

Աբգար Հովհաննիսյանը դիմեց դատարանին, պատասխանատվության կանչելով «Տարազ»-ի խմբագիր Տիգրան Նազարյանին: Գործը բրեական էր. եթե Հովհաննիսյանը կարողանար ապացուցանել զրպարտության թեկուզ մի մասը, Նազարյանը պիտի դատապարտվեր երկուսից մինչև ութ ամիս բանտարկության, որպես զրպարտիչ:

Ես Հովհաննիսյանի կողմից կանչված էի ճնիչի մոտ որպես վկա մի բանի կետերի վերաբերմամբ: Երբ ճնիչը ինձ հարցրեց՝ ճի՞շտ է արդյոք, որ Հովհաննիսյանը հանգուցյալ Րաֆֆիի վարձը չի վճարել, ես պատասխանեցի.

— Այդպես չէ: Րաֆֆին իր վարձը կանոնավոր ստացել է, միայն մնացել է խմբագրության վրա մի փոքրիկ գումար, այն է 142 ռուբլի, որ չի վճարված:

— Ո՛չ,- ևերբեց Հովհաննիսյանը,-Րաֆֆին իր վարձն ստացել է ամբողջովին:

— Սխալվում եք, պարոն Հովհաննիսյան, — պնդեցի ես, — չէ՞ որ խմբագրության հաշվեմատյանն ինձ մոտ է: Եթե կամենաք, կարող եք ստուգել:

Հովհաննիսյանը մտածեց, որ իմ ցուցմունքը վարկաբեկում է իրան ուս ճնիչի աչքում, դուրս գալով փողոց, գայրացած գոչեց.

— Դուք ինձ անվանարկեցիք, ես ձեզ կկոտծանեմ... Հովհաննիսյանը շատ էր սիրում այդ «կկոտծանեմ» սպառնալիքը և գոթծ էր ածում ամեն անգամ, երբ մեկին ուզում էր վախեցնել: Ես ասացի.

— Արեք ինչ որ կարող եք, բայց ես ամուր վկայություն տալ չէի կարող: Ես մեղավոր չեմ, որ դուք մոռացել եք ձեր պարտքը:

Ասացի և առնիշտ հրաժարվեցի «Արձագանք»-ի աշխատակցությունից ու նրա խմբագրի բարեկամությունից: Ինչպես տեսնում եք, մինչև այսօր չեմ կոտծանվել...

Ո՞վ էր Աբգար Հովհաննիսյանը: Ածնան սկիզբն է 1888 թվականի: Թիֆլիս է եկել Ալեքսանդր Երկրորդ կայսրը: Քաղաքային ինքնավարությունը, իհարկե, իր դրամարկղը բամել էր մոայլ բոնակալին չտեսնված շուքով ընդունելու համար: Ի միջի այլոց, նա որոշել է կայսրին ցույց տալ Կովկասի խայտաբղետ ազգաբնակչության բոլոր նմուշները բոլոր խավերից: Տեսարանը Մուշտայիդ պարտիզոնն է, որ շուտափույթ մաքրվել է, շեղ պավիլյոններով զարդարվել ու հարդարվել: Ներկա են վրաց ազնվականությունն իր ազգային զգեստներով, թուրք բեգությունն իր ոսկեպատյան

դաշույնները, հայ վաճառականությունը ֆրակով, չուխայով, հաստ փորերով ու կարճ վզերով, մալականները իրանց թխանման մորուքներով, գերմանական գաղութը իր հավիտենապես դժկամ դեմքով (կարծեմ, ամբողջ աշխարհը նրանց պարտական է ու չի վճարում իր պարտքը), կինտոները իրանց լայն շալվարներով, ամենքը, ամենքը, բացի, իհարկե, բանվորությունից...

Պատվավոր կարգապահության համար բաղաքն ընտրել է մի մասնախումբ «նշանավորներից»: Բոլորը եկել էին ցիլինդրներով ու ֆրակներով, բացի մեկից: Այդ մեկը հագել է հայկական զգեստ, գոնե ինքն ասում է, թե հայկական է - երկար փափախ, թևավոր չուխա, մետաքսյա արխալուղ, կոճակներով ու բաց կրծքով իսկ և իսկ Բարխուդարը «Նամուս»-ի մեջ: Նրա դեմքի վրա խաղում է մի նենգամիտ ժպիտ: Նա շատ լավ գիտե, որ խաղացվում է մի ֆարս, և ինքն էլ գործող անձերից մեկն է ու հոգեպես զվարճանում է, ինչպես մի չարաճճի իր դերով մանկական թատերախաղի մեջ: Նա յուրաքանչյուրի հետ խոսում էր դիմացինի լեզվով — ռուսի հետ — ռուսերեն, վրացու հետ — վրացերեն, հայի հետ — հայերեն, ֆրանսիացու հետ — ֆրանսերեն, գերմանացու հետ-գերմաներեն, իտալացու հետ — իտալերեն: Եվ բոլոր լեզուները ընտիր գրականով: Եվ նրա յուրաքանչյուր դարձվածքի մեջ կա և՛ իմաստ, և՛ սրախոսություն:

— Ո՞վ է այդ զարմանալի ասիացին, — հարցնում էին իրար ռուս գեներալները:

Սակայն նա ասիացի չէ: Նա Աբգար Հովհաննիսյանն է — ինտելիգենտ եվրոպացի իր ուսմամբ և կրթությամբ:

Աբգար Հովհաննիսյանը հրապարակախոս չէր: Նա տաղանդավոր ֆելիետոնիստ էր և ամենասրամիտը, որ երբևէ ունեցել է հայ մամուլը: Նա կլիներ երևելի երգիծաբան, եթե իրան չմանրացներ: Նա և հռետոր էր բարձր տեսակի, ֆինանսիստ էր առաջնակարգ, գեղարվեստագետ, սեղանապետ հաճելի միջազգային հացկերույթներում: Իբրև մարդ, Աբգար Հովհաննիսյանը չար չէր, թեև սիրում էր տեղի-անտեղի ծաղակոծել մարդկանց: Փառասեր էր, ի՛նչ ասել կուզե, սակայն գիտեր տեղը եկած ժամանակ բողարկվել համեստության շղարշով, որպես կյանքի դերասան: Շատ էլ հաստատակամ չէր բարոյական սկզբունքների մեջ: Դրամը սիրում էր ոչ դրամի, այլ կյանքի համար: Ընկերային մարդ էր բառի ընդարձակ իմաստով և հյուրասեր անսահման: Կնամոլ էր, բայց ոչ մինչև ցոփություն և երիտասարդ հասակում ունեցել էր մեծ հաջողություն կանանց մեջ ու մեկից ավելի ռոմաններ: Սակայն այդ չէր խանգարում նրան լինել և՛ սիրող ամուսին, և՛ զգայնասիրտ ու բարի հայր: Հիշաչար էր, ինչախինդ, բայց և տեղը եկած ժամանակ ջենտլմեն: Ձնայելով լարված հարաբերություններին, նա ջանք չէր խնայել Արծրունու կալվածքը կորստից փրկելու և, եթե Արծրունին համառ չլիներ ու լսեր նրա խելացի խորհուրդները, չէր զրկվիլ իր հարստությունից:

Աբգար Հովհաննիսյանը օրվա մարդ էր, նրա ամբողջ ինտելեկտուալ արժեքը իր ներկայի մեջ էր, ապագան շատ էլ չէր ժպտում նրան, և ինքն էլ այդ մասին առանձին հոգացողություն չուներ: Կան գործիչներ, լինեն նրանք գրական թե հասարակական, որոնց փառքը ասուպ է, վայրկյան՝ և անցավ: Աբգար Հովհաննիսյանն այդպիսիներից էր: Նա հետք չթողեց ոչ գրական և ոչ հասարակական կյանքի մեջ, վասնզի փարոս չէր ոչ իր ժամանակակից սերնդի և ոչ մանավանդ հաջորդ սերունդների համար:

Այսպես էր Աբգար Հովհաննիսյանը: Այն մարդը, որ իր ժամանակին հայ կյանքում կատարել է խոշոր դեր: Նա, որ Ստեփաննոս Նազարյանի «Հյուսիսափայլ»-ից հետո լավագույն հայ գրական-գիտական ամսագրի՝ «Փորձ»-ի հիմքը դրեց, թեև չունեցավ ոչ մի մասնակցություն նրա մեջ: Վերջապես, նա էր, որ ասպարեզ տվեց Պերճ Պռոշյանի, Գաբրիել Սունդուկյանցի և Գամառ-Քաթիպայի գրիչներին և, ընդհատելով Րաֆֆիի լռությունը, խրախուսեց նրան գրելու իր լավագույն երկը՝ «Սամվել»-ը: Մի՞թե այդ փիչ բան է:

Աբգար Հովհաննիսյանը ծայրահեղ նացիոնալիստ էր, երբեմն մինչև շովինիզմ: Երիտասարդ տարիքում նա մի երեկո իր բարեկամների հետ ընթրելիս է լինում Թիֆլիսի «Կրուժոկ» անունով կլուբում: Կից սեղանի խավ նստած է լինում մի մեծապատոռ ռուս գեներալ իր ընկերների հետ: Հանկարծ Աբգար Հովհաննիսյանն այդ սեղանից լսում է խուլիգանների բերնում սովորական դարձած անարգանքը հայերի դեմ, — «Эти армяшки»: Աբգարը, առանց

տատանվելու, վերցնում է գինու շիշը և նետում գեներալի վրա: Իրարանցում, աղմուկ, և հետևաբար — այդ օրից կլուբի դռները փակվում են հայերի համար:

Աբգար Հովհաննիսյանն ասում էր.

— Ես պարծենում եմ, որ հայ եմ ծնվել: Գրիգոր Արծրունին ասում էր.

— Ես դժբախտ եմ, որ հայ եմ ծնվել:

XI

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ ԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում էին, թե Գրիգոր Արծրունու ծննդյան օրը, հայրը, որ պաշտոնաթող գեներալ էր, նայելով նրա երեսին, ասել է.

— Օ՛, դու ինձ համար փորձանք ես դառնալու:

Իրողություն է այս, թե անեկդոտ — չգիտեմ, բայց մի անգամ Արծրունին իր հոր գլխին մի փորձանք բերեց: Թիֆլիսի բաղաքային ինքնավարության ընտրություններն են: Իրավասուների մի խումբ բաղաքագլխի պաշտոնի համար թեկնածու է հայտարարել Արծրունու հորը, ի նկատի ունենալով ոչ այնքան նրա արժանավորությունները, որքան նրա գեներալային տիտղոսն ու հարստությունը: Մի ուրիշ խումբ որոշել է ընտրել վրացի Կիպիանուն, որ իրոք մի արժանավոր անձնավորություն էր և որ ապագայում շատ հալածանքներ կրեց ցարական կառավարությունից և մեռավ աքսորավայրում: Այս վերջինիմբի մեջ է լինում և՛ Գրիգորը: Նա ասում է.

— Հայր, եթե դու իմանայիր, գիտցիր, որ ես քեզ սև իլե եմ տալու:

— Ջե՛ս համարձակվիլ, բօվառակա՛ն, — գոռում է գեներալը, որ վերին աստիճանի մի կամակոր և անզուսպ մարդ է եղել:

Գրիգոր Արծրունին կատարում է իր սպառնալիքը: Ընտրությունների ժամանակ նա իր եբեմակ իլեն գցում է Կիպիանու տուփի, իսկ սև իլեն իր հոր տուփի մեջ: Եվ այդ մի հատիկ իլեով Կիպիանին բաղաքագլուխ է ընտրվում:

Այս բանն ինձ պատմել է իր ժամանակին ճշտավոր վրացի հրապարակախոս Նիկոլայ Յակովլևիչ Նիկոլաձեն:

Ընդհանուր առմամբ Գրիգոր Արծրունին արդարամիտ էր թե հրապարակախոսության մեջ և թե իր մասնավոր կյանքում, բայց, լինելով ծայր աստիճան դյուրագրգիռ և տաբարյուն, հաճախ ընկնում էր ինքնամոռացության մեջ և շեղվում արդարադատության շավղից: Նա մերթ ջենտլմեն էր բառիս եվրոպական իմաստով և նրբազգաց, մերթ անհամբերողամիտ էր և բծախնդիր մինչև մանկության աստիճան: Իր հոբելյանի ժամանակ, երբ հոբելյանական հանձնաժողովի մի բանի անդամներ գուեհկաբար հրապարակախոս Սիմեոն Հախումյանին թույլ չէին տվել ճաշկերույթին մասնակցելու, նա ինքն շտապեց կառք նստել գնալու և վիրավորվածից ներողություն խնդրելու և նրան իր հետ ճաշկերույթին բերելու: Մի ուրիշ անգամ մի հասարակական բազմամարդ ժողովում իմ ներկայությամբ խոստովանեց իր մի սխալը և արժանացավ իր հակառակորդների ծափահարության: Նման դեպքերում Արծրունու թշնամիները չունեին նրա չափ բարոյական բաջություն: Այլ դեպքերում նրա սնափառությունը սահման չուներ: Այսպես, օրինակ, մի անգամ նա չափազանց վիրավորվեց Ավետիք Արասխանյանից, որ գավառներից Թիֆլիս վերադառնալով և իր ճամփորդությունը «Մշակ»-ի խմբագրատանը նկարագրելով, մոռացել էր ասել, թե ինչ մեծ ժողովրդականություն է վայելում այդ լրագիրը գավառներում: Ես ինքս պաղարյուն մարդ չեմ, այլ, ընդհակառակը, շատ անգամ եմ բորբոքվում նույնիսկ ծերությանս հասակում, բայց մի անգամ Արծրունին ինձ գերազանցեց տասնապատիկ: Վիճաբանում էինք Բաֆֆիի մահվան օրերին հանգուցյալի անձնական հատկություններէի մասին: Ջայնակցելով տիկին Մարոյի բուռն հարձակումներին և պարսավներին, Արծրունին այնպես բռնկվեց, որ բառի բուն ճշտությամբ թոչկոտում էր

մարտնչող աֆղաղի պես: Եվ այդ պահին նրա փոքրիկ մարմինն այնքան կոմիկական էր, որ ես չկարողացա ինձ զսպել և գոչեցի. «Պարոն Արծրունի, ես ձեզ խղճում եմ»: Այս անզգույշ դարձվածի համար ապագայում ես շատ անգամ եմ զղջացել, և Արծրունու մոլեռանդ երկրպագուները շատ են հալածել ինձ, հորինելով, թե իբր թե ես ծաղրել եմ նրա մարմնավոր թերությունը, մի բան, որ երբեմ գլխովս չի անցել:

Արծրունու միտքը ճկուն էր, դյուրըմբռնող, բայց ոչ խորաթափանց և խմաստասեր: Այդ բանը Րաֆֆին կրկնում էր հաճախ ինձ հետ ունեցած զրույցների ժամանակ: Արծրունին չէր աշխատում խորասուզվել իր հարուցած խնդիրների մեջ և ճնշում էր նրանց մակերեսաբար, վայրկյանի տպավորության տակ: Ապրելով կույր և մեծ մասամբ մանկամիտ երկրպագուների սահմանափակ շրջանում, շարունակ միայն գովասանքներ ու շողոքորթություններ լսելով, նա տարիների ընթացքում աստիճանաբար կորցրել էր ինքնաճանաչողության զգացումը: Ինչպես թույլ մարդը չշփանար, երբ շողոքորթներն ասում էին երեսին.

— Դուք հայ ժողովրդի ռեֆորմատորն եք:

Այ՛ո, ճիշտ այդ տիտղոսը տվեց Գրիգոր Արծրունուն նրա ամենամոլեռանդ աշակերտ Խաչատուր Մալումյանն իր մի գրքույկում:

Որպես հրապարակախոս Գրիգոր Արծրունին, իհարկե, իր ժամանակակիցներից շատ բարձր էր, բայց անպայման բարձրություն չէր ռուս և եվրոպացի հայտնի հրապարակախոսների համեմատությամբ: Որպես խմաստասեր՝ նա չուներ Րաֆֆիի մտքի ոչ խորությունը և ոչ դիսցիպլինան: Նայեցեք այդ երկու մարդկանց լուսանկարներին, և դուք կտեսնեք տարբերությունը երկու դեմքերի արտահայտության մեջ: Արծրունին, եթե կարելի է այսպես արտահայտվել, նայում է դեպի դուրս, Րաֆֆին — դեպի ներս, մեկը, կարծես, ուզում է ձեզ հետ խոսել անմիջապես, առանց երկար խորհելու, մյուսը, խորասուզված իր ներքին աշխարհը, կարծես, մտածում է՝ պե՞տ է խոսել, թե՞ ժամանակը չէ: Եթե Րաֆֆին բավականանար սոսկ հրապարակախոսի կոչումով, Արծրունուց շատ և շատ բարձր կլիներ: Բայց նա օժտված էր գեղարվեստական գրողի ջիղով, ինչպես իր փայլուն տաղանդը դներ պուբլիցիզմի սահմանափակ շրջանակի մեջ:

Արծրունին ինքնասեր էր հիվանդության չափ: Հակառակորդները գիտեին նրա թուլությունը և հաճախ նենգ ակնարկներով վիրավորում էին նրա ընտանեկան կացությունը:

Րաֆֆին ասում էր.

— Գրիգորը երբեմ իր կյանքը չէր կապիլ տիկին Քոչարյանցի հետ, եթե չլիներ թշնամիների անընդհատ հալածանքը: Սերը չէր, որ միացրեց նրանց, այլ Արծրունու ինքնասիրությունը:

Գիտեին, որ Արծրունին հոգեպես տառապում է, երբ ակնարկում էիք ապօրինի կենակցությունը մի ամուսնացած կնոջ հետ և գիտենալով հանդերձ՝ դիտմամբ շարունակում էին իրանց սև գործը: Նույնիսկ Համառ-Քաթիպան չվարանեց մի խայտառակ պամֆլետ գրել այդ մասին:

Արծրունու մահից հետո, երբ լույս տեսավ իմ «Արսեն Դիմաքսյան» վեպը, եղան մարդիկ, որ ասացին, թե ես Դիմաքսյանի տիպը նկարագրելիս Արծրունուն եմ աչքի առջև ունեցել: Այդ ենթադրության մեջ կա որոշ ճշմարտություն: Ասում եմ՝ որոշ և ոչ ամբողջական, վասնզի Դիմաքսյանի մեզ վատաբանված են Արծրունու բնութագրի մի քանի գծերը, իսկ իր ամբողջությամբ Դիմաքսյանը հավաքական տիպ է և ոչ մասնավոր անձնավորություն:

Իր ժամանակի հայ գրականության մասին Արծրունու ճնշադատական հոդվածները կարդալիս, մարդ կամա-ակամա այն տպավորությունն է ստանում, թե մարդը «Մշակ»-ից կամ նրա հովանավորությունից դուրս գրականություն չի ընդունում: Րաֆֆիի մահվան առիթով Արծրունու գրած հոդվածն այդ տեսակետից նրա գլուխգործոցն եղավ: Նա չտատանվեց գրել, թե Րաֆֆին, «Մշակ»-ից հեռանալով, «իր ոտների տակ հողը կորցրեց» և ոչ մի լավ գործ չարտադրեց, այնինչ վիպասանի լավագույն երկը՝ «Սամվել»-ը հենց «Մշակ»-ից հեռանալուց հետո գրվեց, մինչդեռ «Մշակ»-ի հավատարիմ աշխատակիցներից ոչ մեկը կես Րաֆֆի չդարձավ: Իսկ Արծրունին էլ փորձեց իր ուժերը

գեղեցիկ գրականության մեջ: Եվ ինչ դուրս եկավ, մի «Էվելինա», մի պատանեկան գործ, զուրկ հոգեբանական ճշգրիտ վերլուծումից, տաղտկալի և առանց բնութագրի: Բայց ի՜նչ փույթ. այդտեղ ևս օգնության եկան կույր երկրպագուները մի կողմից, անձնական հաշիվներով ղեկավարվողները մյուս կողմից: Բարձրացավ մի չտեսնված ու չլսված անդաստան, և հեղինակը հեղեղվեց այնպիսի գովասանքներով, որոնց նմանին մինչև այդ ժամանակ չէր արժանացել ոչ մի հայ գիրք՝ սկսած Մովսես Խորենացու օրերից: Եվ Արծրունին տպում էր այդ գովասանքներն իր թերթի մեջ: Հիշում եմ Առաքել Բաբախանյանի — Լեոյի մի նամակը, ուր նա «Էվելինա»-ն հռչակում էր «դարագլուխ» հայ գեղեցիկ գրականության: Հիշում եմ Սմբատ Շահազիզի հիացմամբ լի երկու նամակները, որ տպվեցին «Մշակ»-ում: Ծերունի բանաստեղծը, որի հոբելյանը, պիտի կատարվեր այդ տարի: «Էվելինա»-ն անսահման փառաբանելով յուրաքանչյուր նամակով գրքույկից 100-ական օրինակ էր պահանջում, հարկավ, արժեքը կանխավ ուղարկելով: Մի օր «Մշակ»-ում կարդում էինք, թե «Էվելինա»-ն թարգմանվում է ֆրանսերեն, մյուս օրը — գերմաներեն, անգլերեն և այլն և այլն... Վերջապես, Աբրահամ Դաստակյան անունով մի արծրունիամոլ վեպիկը թարգմանեց ռուսերեն, հրատարակեց: «Էվելինա»-ն չարժանացավ ռուս մամուլի լուրջ ուշադրությանը, և դրանով վերջացավ «դարագլուխ» հռչակված «Էվելինա»-ի ճակատագիրը:

Արծրունին իր ժամանակի երիտասարդության կուռքն էր, բայց ոչ ամբողջության: Շատերը կային, օր չէին ընդունում նրա հեղինակությունը: Ինչպես երկրպագուներն էին ծայր չափազանցության հասցնում իրանց կույր պաշտամունքը, նույնպես և հակառակ ծայրերի մեջ Արծրունու իսկական նկարագիրը մնում էր մշուշի մեջ, և մինչև այժմ էլ մնում է: Խաչատուր Մալումյանի գրքույկը մոլեռանդ աշակերտի դիֆերամբ է ուսուցչի հիշատակին: Անկողմնապահ և լուրջ վերլուծում չէ Լեոյի երեքհատորյա գիրքը Արծրունու մասին: Նախ՝ Արծրունու կյանքն ու գործունեությունը երեք հատորների նյութ չեն պարունակում, ապա Լեոն իր գործը լցրել է տաղտկալի մանրամասնություններով: Բացի այդ, պատկառելի պատմաբանն այն ժամանակ չափից դուրս էր հափշտակված Արծրունիով, որպեսզի կարողանար պաղարյուն քննադատել իր կուռքը: Հավանորեն Արծրունու տոհմագրությունը ճիշտ է, քանի որ Լեոն մանրակրկիտ է պատմական ուսումնասիրության մեջ, բայց բնութագիրը Արծրունու՝ չափազանց միակողմանի: Ես հավատացած եմ, որ եթե մի օր Լեոն կամենա նորեն հրատարակել իր գործը, նրա միջից շատ կտորներ դուրս կգցե և շատերն էլ կփոփոխե:

«Արձագանք»-ին աշխատակցելու ժամանակամիջոցին, երբ «Մշակ»-ը մեկ-մեկ հարվածում էր ինձ (մեծ մասամբ քողարկված), գիտեի, որ հալածանքը գալիս է գլխավորապես նրա մերձավոր աշխատակիցներից, մասնավորապես Խաչատուր Մալումյանից: Ես այդ տղայի հոդվածներին չէի պատասխանում, բայց երբ հարվածում էր ինքն Արծրունին, ես ևս չէի խնայում նրան և պատասխանում էի ոչ պակաս թունավոր լեզվով: Իմ այս հանդգնությունն անսահման զայրացնում էր մշակականներին, և նրանք չէին տատանվում հաճախ փողոցներում իսկ ինձ վիրավորել անպատկառ խոսքերով: Հիշում եմ, մի անգամ Ներսիսյան դպրոցի բարձր դասատան երկու աշակերտներ մոտովս անցնելով՝ մի այնպիսի լկտի հայհոյանք շպրտեցին իմ հասցեին, որ ես, սառնությունս կորցնելով, դիմեցի ձեռնափայտիս օգնության և երկուսից մեկի գլուխը ջարդեցի:

Մի անգամ միայն Գրիգոր Արծրունին, ինչպես ասում են, մի լավ զգզգեց ինձ և արդարացի: Ես հափշտակված էի նշանավոր դերասանուհի Սիրանույշի ոչ միայն խաղով, այլև անձով, ուստի ամեն կերպ գովաբանում էի նրան ոչ միայն «Արձագանք»-ում, այլև ռուս լրագրերում: Իմ հափշտակությունն այնտեղ հասավ, որ մի օր վճռեցի գրել մի պիես և երկու-երեք ամսվա մեջ թխեցի չորս արարվածով մի դրամա «Իշխանուհի» անունով: Դա մի մեծ սխալ էր իմ կողմից, քանի որ այն ժամանակ բեմական արվեստը ուսումնասիրած չէի: Խաղացվեց ընդամենը երեք անգամ, երկու երեկո Թիֆլիսում, մի երեկո Բաքվում: Արծրունին գրեց մի երկար քննադատություն և պարսավեց իմ առաջին թատերական երկը: Ես պատասխանեցի նրան, միևնույն ժամանակ պիեսս գցեցի վառարանը, և այժմ նա չկա իմ գործերի մեջ, ու նրա բովանդակությունն էլ մոռացել եմ:

Որոշ խնդիրներում ես համամիտ էի Արծրունու գաղափարներին և ուժերիս չափ ձայնակցում էի նրան «Արձագանք»-ի էջերում, հակառակ Աբգար Հովհաննիսյանի ընդդիմադրության: Այդ խնդիրներից էր և թուրքահայերի քաղաքական կացությունը: Ես թվականների ճշտությունը չեմ կարող երաշխավորել, բայց դեպքերը հիշում եմ շատ լավ: Այդ այն

ժամանակներն էին, երբ թուրքահայերի վիճակը հուզել էր երիտասարդությանը նոր ուժով — ութսունական թվականների վերջին և ինսնսունականների առաջին տարիները: Երիտասարդության հայրենասիրական զգացումները փոթորկվել էին և ելք էին որոնում: Րաֆֆին չկար և եթե լիներ էլ, հազիվ թե կարողանար անել այն, ինչ որ սպասվում էր նրանից: Գրչի ժամանակ չէր, այլ գործի, թե ինչ գործի — ոչ ոք չգիտեր: Դեպքերն այնքան բարդ էին և այնպիսի թափով էին հաջորդում իրարու, որ ամենքը կորցրել էին իրանց գլուխը և մոլորված դեսուդեն էին վազվզում: Արծրունին, կարծես, համոզված էր, որ ինքն է կոչված շփոթված մտքերը կարգի հրավիրելու ուղեկավարելու բաղաքական իմաստով: Այցելելով նրան, երբեմն տեսնում էի չափազանց հուզված և միշտ հուզվելիս նա դողում էր ամբողջ մարմնով: Թուրքիայից փախչող հայերը «Մշակ»-ի խմբագրատուն էին գալիս և պատմում էին սոսկալի եղելություններ սուլթան Համիդի տիրապետության ներքո հեծող ժողովրդի կյանքից, որոնց չհավատալ չէր կարելի:

Այսօրվա սովետական հանգիստ պայմաններում ապրող ու աշխատող երիտասարդ գրողները երևակայել անգամ չեն կարող, թե ինչ վիճակումն էին այն ժամանակ գրչի մարդիկ, և ինչ էր կատարվում նրանց հոգեկան աշխարհում: Տարրական հանգիստը խանգարված էր, գրիչը ենթարկվել էր անկարության, միտքը գործում էր միայն մի ուղղությամբ՝ «պետք է օգնել հրկիզյալ ժողովրդին»: Վերջապես, գրեթե ծիծաղելի էին համարվում այն հատ-հատ մարդիկ, որոնք հանդգնում էին պարապել գեղեցիկ գրականությամբ:

Հիշում եմ, մի օր մի ձեռագիր էի տանում Աբգար Հովհաննիսյանի մոտ կարդալու, փողոցում հանդիպեցի Քրիստափոր Միքայելյանին:

— Այդ ի՞նչ է, — հարցրեց նա, տեսնելով ձեռումս բռնած կապոցը:

Ես պատասխանեցի: Նա բարձրածայն ծիծաղեց, ըստ սովորության կանգնած տեղը կաղալով և ասաց.

— Ուրեմն դու դեռ գրո՞ւմ ես:

— Այո:

— Այն էլ վեպե՞ր:

— Այո:

— Այ մարդ, ի՞նչ վեպեր-մեպեր գրելու ժամանակ է, — գոչեց նա տաքանալով, — Գրիր ուրիշ բաներ:

— Օրինակ, ի՞նչ:

— Ա՛յ, շուտով կասեիք ինչ գործ եիք սկսում, ձեզ էլ ի նկատի ունեիք, — ասաց նա խորհրդավոր և շտապեց հեռանալ:

Արծրունին, տեսնելով իրան երիտասարդներով շրջապատված, երևակայեց, թե ինքն է իրերի առանցքը, այնինչ երիտասարդության ցցուն մասը այլ կարծիք ուներ նրա մասին:

— Գործը կկազմակերպեիք և կվարեիք Արծրունուց անկախ, — ասում էր այդ մասը, — իսկ նրա անունը թող լինի մեզ համար դրոշակ դրամ ժողովելու համար:

Իսկ Քրիստափոր Միքայելյանը չէր վարանում ուղղակի ասելու.

— Արծրունու դերը վերջացած է, այժմ մեզ ուրիշ մարդիկ են հարկավոր:

Պարզ էր ինձ համար, որ այդ «ուրիշ» մարդկանց շարքում առաջին տեղն իրան էր տալիս:

Կար այդ ժամանակ հայրենասեր համարված մի հարուստ ձերունի՝ Առաքել Ծատուրյան անունով: Դա հետաքրքրական մի տիպ էր: Շուշեցի էր նա, մի ժամանակ եղել էր խոհարար, հետո գնացել էր Պարսկաստան, պարապել էր վաճառականությամբ և, մի որոշ գումար ձեռք բերելով, վերադարձել էր Կովկաս: Հիշում եմ նրան դեռ յոթանասուն

թվականներին, երբ Բաֆվում սկսել էր պարապել նավթային արդյունաբերությամբ: Կարճահասակ մի մարդ էր՝ ծուռ ոտներով: Նա միշտ շրջում էր երկու թեյի պնակի չափ մեդալներ վզին խաչ արած, մեկը ոսկյա, մյուսը արծաթյա: Ով էր տվել նրան այդ մեդալները — չգիտեմ: Կիսագրագետ մեկն էր, որ հազիվ սովորել էր իր անունն ուղիղ գրել և երկու բառ արտասանելիս երեք անգամ կմկմում ու կակազում էր: Ներբուստ փառամոլ ոմն էր, մեկն այն էչերից, որոնք ոսկի դիզելուց հետո ճգնում են կա՛մ բարեգործի, կա՛մ ազգակերի համբավ վաստակել:

Ահա այդ մարդուն էին շրջապատել այն ժամանակվա այսպես համարվող հեղափոխական երիտասարդները Գրիգոր Արծրունու կամ, ճիշտ ասած, Քրիստափոր Միքայելյանի, Սիմեոն Զավարյանի և Փարիզից նոր վերադարձած բժիշկ Հովհաննես Լառու-Մելիքյանի ղեկավարությամբ: Գարնանը, կարծեմ, 1891 թվականի, նա Արծրունուն խոստացավ առաջիկա աշնան սկզբին տալ մի խոշոր գումար, եթե չեմ սխալվում, 150 000 ռուբլի «թուրքահայերի ազատագրության» համար, խոստացավ և իսկի ուղևորվեց արտասահման: Արդեն նրա անունը հռչակված էր և վայելում էր «առատածեռն հայրենասերի համբավ, թեև այդ համբավը չէր արդարացված մի շոշափելի նյութական գոհաբերությամբ:

Առաքել Ծատուրյան «հայրենասերը» գնաց Փարիզ և այնտեղից անցավ Լոնդոն: Մի բանի էնտուզիաստ հայեր նրան ներկայացրին Գլադստոնին: Սակավախոս, գրեթե անբան կրեսոսը միտք հղացավ նշանավոր բաղաքական գործչին հաճկերույթ տալ, օրից հետո նրա անունն ավելի հռչակվեց թե կովկասյան և թե արտասահմանյան հայ լրագրերում: Ամենքն անհամբեր սպասում էին նրա վերադարձին և ամենից ավելի Գրիգոր Արծրունին: Աշնանը, վերջապես, մարդը վերադարձավ Թիֆլիս, գնաց Բաքու, ետ եկավ և մի օր մտավ «Մշակ»-ի խմբագրատուն ձեռին մի թերթ թուղթ:

— Եկել եմ, — ասաց նա անսովոր ինքնավստահությամբ և թուղթը դրեց Արծրունու գրասեղանի վրա:

— Այդ ի՞նչ է — հարցրեց Արծրունին, որ ուրիշ բան էր սպասում վաթսունամյա ծերունուց:

— Հանգանականության թերթը, — պատասխանեց ծերունին դարաբաղյան շեշտադրությամբ:

— Փող բերե՞լ եք:

— Կհավաքեմ ու կբերեմ, էս է էլի Բաքու եմ գնում:

— Ո՞րքան պիտի բերեք:

— Ասել եմ, հարյուրից մինչև հարյուր հիսուն հազար մանեթ:

— Այդքա՞նը միայն:

— Հրամանիս, հետո էլի, հըըմ, դե ո՞վ է գիտում ինչ կըլլի, Գլադստոնն ասաց, վըեր...

— Դուք ինքներդ ո՞րքան եք տալու:

— Դե էն ա իմ անունն էլ գրած ա էդ թղթի մեջ:

Արծրունին նայում է թերթին. Առաքել Ծատուրյանի անվան դեմ դրված է հինգ հազար ռուբլի:

— Բայց չէ՞ որ դուք գարնանն ինձ խոստացաք ինքներդ մենակ տալ հարյուր հիսուն հազար ռուբլին:

— Դե էն ա տալիս եմ էլի, մի բիչ համբերեցեք:

— Ո՛չ պարոն, այդպիսով հայրենիք ազատել չի կարելի, հեռացե՛ք:

Առաքել ապերը թուղթը ծալում, դնում է ծոցն ու գնում, և դրանով վերջանում է նրա հայրենասիրական գոհաբերությունը: Ապագայում պարզվեց, որ Գլադստոնին տված հաճկերույթը և առհասարակ իր հաղթական երթը

դեպի Եվրոպա շատ թանկ է նստել նրան, այն է մարդու բացակայությամբ նրան կողոպտել են մի կողմից իր անձնական գործերի վարիչը, մյուս կողմից իր առևտրական ընկերները: Շատ չանցած՝ Առաքել Ծատուրյանը հրացանով ինքնասպանություն գործեց Երևանից ոչ հեռու գտնված իր կալվածքում:

Արծրունուն շրջապատող երիտասարդների խումբն էր, որ դաշնակցության հիմքը դրեց: Գլխավոր ուժերն էին բժիշկ Հովհաննես Լառու-Մելիքյան, Քրիստափոր Միքայելյան, Սիմեոն Զավարյան, Մարտիրոս Շաթիրյան, Կոստանդին Խատիսյան, Լևոն Սարգսյան, Գաբրիել Միրզոյան և մի բանի ուրիշներ, որոնց անուններն մոռացել եմ:

— Նոր գործի համար նոր ուժեր են հարկավոր, — ասում էին և չէին ընդունում ասպարեզում եղած ոչ մի հասարակական գործչի, բացի Գրիգոր Արծրունուց:

Այդ նոր գործն ուրիշ ոչինչ էր, եթե ոչ թուրքահայ ժողովրդին զինել և Թուրքիայում ապստամբություն առաջացնելը, այլ խոսքով՝ անկախ Հայաստան ստեղծելը: Հնչակյան կուսակցությունը այդ չի կարողանում անել, պետք է կազմել նոր կուսակցություն, միացնելով բոլոր երիտասարդ ուժերը:

Ձնայելով իր արտաքին համեստությանը, Քրիստափոր Միքայելյանը փառամոլ էր անսահման: Նրա ընկերներից շատ էչերը գիտեին այդ և, նրանք, որոնք գիտեին, տոգորված էին նույն թուլությամբ: Տարբերությունն այն էր, որ Միքայելյանը երիտասարդությունից, մանավանդ պատանեկությունից, ավելի էր սիրված, բան որևէ մեկը նրա ընկերներից, բացի Սիմեոն Զավարյանից: Այդ կողմից երկուսն էլ հավասար մակարդակի վրա էին:

Ինչո՞վ էր Քրիստափոր Միքայելյանն իր շրջանի հավատը գրավել — այսօր այդ ինձ համար մի առեղծված է: Գուցե ֆանատիկոսի հավատով դեպի իր գործը, գուցե անշուշ տրամաբանությամբ կամ իր հիպնոսանման արտաքինով, մեղմ ձայնով: Մի բան մնայն կարող եմ հաստատապես ասել, այն է, որ այդ մարդը մարդկանց հետ վարվելու զարմանալի տակտ ուներ և գիտեր նույնիսկ տրամագծորեն հակադիր տարրերից միություն ձուլել: Նույն հատկությունը չուներ Սիմեոն Զավարյանը, բայց Միքայելյանի խորամանկությունն էլ չուներ: Այդ փոքրահասակ, միշտ շարժուն, միշտ ներվային, միշտ մտահոգ, նիհար ու դժգոհ երիտասարդն ինձ հիշեցնում էր խորթ հողի վրա սնված մի բույս:

Երկուսն էլ իրանց մյուս ընկերների հետ գալիս էին Գրիգոր Արծրունու մոտ, տեղեկություններ էին տալիս և ստանում: Այդ խումբն էր, որ մի բանի բուրժուաների հետ կազմակերպեց Գրիգոր Արծրունու հրապարակախոսական գործունեության բանիհինգամյակի տոնը, և այդ տոնը դարձրեց մի տեսակ նախերգանք դաշնակցության:

Դաշնակցությունը կազմակերպվեց Գրիգոր Արծրունու գիտությամբ և հովանավորությամբ, բայց ոչ անմիջական մասնակցությամբ: Արծրունին վախենում էր վտանգի ենթարկել «Մշակ»-ի գոյությունը, որ նրա համար բարձր էր ամեն բանից: Նա շատ լավ գիտեր, որ մարդիկ ուզում են օգտագործել իր ժողովրդականությունը դրամ ժողովելու համար, և այդ պատճառով շատ էլ մեծ հավատ չէր տածում դեպի նրանց բարեկամության անկեղծությունը:

Մի օր նա ինձ ասաց.

— Այդ տղերքը շատ են դեսուդեն վազում, բայց ես չեմ կարծում, որ նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել: Ամենաշատը նրանք կարող են լինել օգտակար գործիք ավելի խոհուն մարդկանց ձեռքում:

Մի ուրիշ օր նա ինձ հարցրեց.

— Ի՞նչ է մտածում Արգար Հովհաննիսյանը երիտասարդության այս նոր շարժման մասին:

— Նույնը, ինչ որ դուք, — պատասխանեցի ես, որ տեղյակ էի Հովհաննիսյանի կարծիքին: — Նա նույնպես չի հավատում այդ աղմկալի իրարանցման բարերար հետևանքներին:

— Բայց երիտասարդությունն էլ Հովհաննիսյանին հավատ չի ընծայում, այս գիտե՞ք:

— Գիտեմ, պարոն Արծրունի, ինքը Հովհաննիսյանն էլ գիտե այդ:

Նույն օրերը ես կատարեցի մի փոքրիկ ճամփորդություն Ղարսի և Երևանի նահանգներում: Ոչ մի նպատակ չունեի, բացի երկիրը դիտելուց և մի փոքր էլ ժողովրդին ուսումնասիրելուց: Ամենուրեք հայ երիտասարդությունն ընկճված էր Թուրքիայից ստացվող լուրերի տպավորությամբ և ամեն տեղ միևնույն հարցն էին տալիս ինձ. «Ի՞նչ է մտածում Թիֆլիսի ինտելիգենցիան»: Մարդիկ փրկարար խոսքի էին սպասում, և դարձյալ Գրիգոր Արծրունու անունն էր արտասանվում ամենից ավելի: Սակայն ինձնից մի ամիս առաջ նույն տեղերով անցել էր Արծրունին, և ոչ ոք նրանից չէր լսել այդ փրկարար խոսքը: Եվ ի՞նչ կարող էր ասել մի մարդ, որ ինքն էլ չգիտեր՝ ինչ պիտի ասե, և որ ամենից ավելի էր շփոթված: Միայն դաշնակցության ձեռնարկողներն էին, որ գիտեին իրանց անելիքը, այն է՝ գենք տալ թուրքահայ ժողովրդին ձեռքը և ապստամբեցնել թուրք պետության դեմ: Այս մասին նրանք ամեն տեղ ուղարկել էին որոշ հրահանգ առանձին գործակալների ձեռքով, հրահանգի ամենաէական կետը էր՝ դրամ ժողովել: Մի ֆանի տեղերում արդեն հանգանակություն էր բացվել: Երբ ինձ հարցնում էին՝ ուր և ում պիտի ուղարկել ժողոված դրամները, ես հրաժարվում էի պատասխանել, իսկ երբ հարկադրում էին, մատնացույց էի անում կամ Արծրունուն, կամ Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանին: Այս առիթով, երբ ես Թիֆլիս վերադարձա, արժանացա դաշնակցության հիմնադիրների դժկամությանը:

Իգդիրում ես ունեցա մի դիպված: Եկել էի այնտեղ միայն մի օրով և մեն-մենակ թափառում էի: Երբ անցնում էի անսալահատակ և ծայր աստիճան կեղտոտ փողոցներից մեկով, հանկարծ մի առվի մեջ տեսա մի կեղտոտ մանուկ: Նա ընկել էր ջուրը և թպրտում էր մորթված վառոյկի պես: Շտապեցի նրան դուրս բերել առվից և, ոտներից բռնելով, գլխիվայր պահեցի մի ֆանի րոպե, որպեսզի ջուրը բերնից դուրս թափվի: Երեխան, որ երկու տարեկան էր և գնչու մանկան էր նման իր պղնձագույն դեմքով և խորն ընկած փոքրիկ կլոր աչքերով, ուշքի եկավ: Ես գրկեցի նրան, մոտեցա մի խանութի ու հարցրի.

— Այս մանուկն ո՞ւմն է:

— Բա՛ռ՛, — գոչեց խանութպանը, — դա հո մեր վարժապետի տղան է:

Նա ցույց տվեց ինձ մի անշուք տնակ, ասելով, որ այնտեղ են բնակվում երեխայի ծնողները: Ես սևամորթ մանկանը գրկած տարա այնտեղ, դռները զարկեցի: Տնակից դուրս եկավ մոտ 25-26 տարեկան մի երիտասարդ, շատ թուխ երեսով, շատ սև մազերով ու մորուքով և խորը նստած կլորիկ աչքերով:

— Այս երեխան ձե՞րն է — հարցրի ես:

— Այո, — պատասխանեց երիտասարդը, մանկանն իր գիրկն առնելով, — փուչ կենդանի, այդ ո՞րտեղ ես այդպես թրջվել:

Երեխան եղեղոց որսված առնետի պես: Ես պատասխանեցի.

— Առվի մեջ:

— Առվի մե՞ջ, — կրկնեց երիտասարդը, — բայց նա կարող էր այնտեղ խեղդվել, նման դեպքեր եղել են, շնորհակալ եմ, դուք ազատել եք իմ Վարդգեսին: Ներեցեք, դո՞ւք Շիրվանզադեն չե՞ք արդյոք, — ավելացրեց նա հանկարծ:

— Այո:

— Շատ ուրախ եմ տեսնել, լսել էինք, որ պիտի գամ մեր կողմերը: Թույլ տվեք ներկայանալ — Ավետիք Ահարոնյան, ուսուցիչ:

Այդ ժամանակ Ավետիք Ահարոնյանի անունը որպես գրողի ասպարեզի վրա չկար, գոնե ես ոչ կարդացել էի և ոչ էլ լսել էի նրա մասին:

Նա ինձ հրավիրեց իր տունը, ծանոթացրեց ամուսնու հետ և թախանձեց մնալ ճաշի, ասելով, որ շուտով պիտի գան իր ընկերները, որոնք «ուրախ կլինեն» ինձ տեսնելու: Ճաշի սեղանն արդեն բացված էր տեղական գորգերով ծածկված հատակի վրա: Սենյակը եվրոպական կահկարասի չուներ, բացի մի փոքրիկ գրասեղանից և մի հատիկ աթոռից: Շուտով եկան Ահարոնյանի ընկերները, բոլորն էլ կարծեմ ուսուցիչներ: Հիշում եմ նրանցից միայն մեկին՝ Ահարոն թե Հմայակ անունով մի վարդապետի՝ ծյուռն պես ճերմակ մազերով և պատանու պես աշխույժ ու կայտառ մի մարդու, որ անմիջապես հարձակվեց ինձ վրա անվերջ հարցերով: Նա խորապես զգացված պատմեց մի բանի ողբալի տեսարաններ թուրքահայ փախստականների կյանքից: Իգդիրը սահմանագլուխ էր, գլխավորապես այնտեղով էին անցնում ռուսական սահմանը Ալաշկերտի հովիտից եկողները:

Վերադառնում եմ Գրիգոր Արծրունուն:

Այդ մարդու բնույթը հավասարակշռությունից զուրկ էր, և դա նրա դժբախտությունն էր: Նա ոչ միայն չափազանց ներվային էր, այլև մաղձոտ: Հոգեբանորեն դա ուներ իր բնական պատճառը: Մարմնավոր դրությունը մանկությունից ազդելով նրա պսիխիկայի վրա, տարիների ընթացքում ծայր աստիճան սրել էր նրա անձնասիրությունը: Այն կծու բողոքը բնության անիրավության դեմ, որ մարդը լռորեն կրում էր իր մեջ, աստիճանաբար մաղձոտել էր նրան ինչպես ժանգը երկաթին և հոգին թունավորել մարդատեցության թույնով: Արծրունին ուզում էր սիրել մարդուն խելքի և մտավոր կարողության պահանջմամբ: Բայց զգացումները թույլ չէին տալիս: Երկու միջոց կար այդ հոգեկան ժանգը ոչնչացնելու համար — կա՛մ բարձր փիլիսոփայական մտայնություն, որ հատուկ է շատ էչերին, կա՛մ դիվային հեգնանք ու ծաղր բնության երեսին, որ հատուկ է դարձյալ շատ էչերին: Արծրունին չուներ ոչ մինը և ոչ մյուսը: Նա ոչ փիլիսոփա էր և ոչ երգիծաբան. նա ոչ Կանտ էր և ոչ Սվիֆտ: Միջին տեսակի իմաստուն էր, մի բիչ բարձր սովորական մահկանացուից, ուստի տառապում էր: Եվ հաճախ այդ տառապանքը տողամեջ արտահայտվում էր նրա հոդվածների և ֆելիետոնների մեջ:

Սիրելով կյանքն անհունորեն, Արծրունին զգում էր, որ կյանքը ոչ սիրով, այլ կարեկցությամբ է նայում իրան: Սիրելով ընկերային միջավայրը, նա միևնույն ժամանակ չափազանց վատ էր զգում իրան այդ միջավայրում և աշխատում էր կարելույն չափ հեռու պահել իրեն ընկերական շրջաններից: Եվ այդ բանում բնականորեն ու իրավամբ խրախուսում էր նրան իր կյանքի անհաջող ընկերուհին — Մարոն, որ, ինքը սիրված չլինելով շրջաններից, չէր ուզում, որ իր սիրեցյալն էլ սիրված ու փայփայված լինի: Սա ավելի վատ մի զգացում էր Մարոյի մեջ, բան խանդը. դա հավասար բարոյական մակարդակի վրա մնալու պահանջն էր: Մյուս կողմից Արծրունու հակառակորդները չունեին գոնե տարրական նրբազգացություն խնայելու այն, ինչ որ բնությունը չէր խնայել, և շատ անգամ անվայել ակնարկներով խոցոտում էին նրա առանց այն ևս խոցոտված հոգին: Այս դեպքում առաջին դերը պատկանում է Գամառ-Քաթիպային:

Բնորոշ է, որ Գրիգոր Արծրունին ինքն իր «Մշակ»-ի կամ սեփական ուղղությունը համարում էր «մտրակողական», այսինքն ազդեսիվ: Հակառակորդներն այլ բառ էին գործածում — «հայհոյողական»: Հայհոյանքներ բառիս ստորին իմաստով Արծրունու հոդվածների մեջ, իհարկե, չկային, բայց մաղձ և ատելություն որքան կամենաք, և ես կարծում եմ, որ նրա գրիչը չէր ունենալ այն հզոր թափը, եթե նրա հոգու մեջ չլիներ այդ մշտական մաղձը: Սակայն այդ թափն արտահայտվում էր միայն այն դեպքերում, երբ խնդիրը վերաբերում էր հայ կյանքի ներքին կացությանը: Քաղաքական խնդիրների մեջ նա ավելի բան զգույշ և չափավոր էր, երբեմն նույնիսկ երկչոտ: Այս տեսակետից նա տարբերվում էր ոչ միայն «պահպանողական» Աբգար Հովհաննիսյանից («Արձագանք»), այլև «կղերական» Պետրոս Սիմոնյանցից («Մեղու Հայաստանի»), «ետադիմական» Սպանդար Սպանդարյանից («Նոր-Դար»): Թիֆլիս տեղափոխվելուցս երկու թե երեք տարի առաջ ժանդարմերիան մի թեթև խուզարկություն էր արել «Մշակ»-ի խմբագրատանը: Երբ Արծրունին պատմում էր ինձ այդ մասին, գունատվեց ու դողաց: Անկասկած այդ խուզարկությունը մի որևէ թյուրիմացության արդյունք է եղել, վասնզի Արծրունին իր ամբողջ գործունեության ընթացքում ոչ մի հակապետական բայլ չի արել Ռուսիայի վերաբերմամբ: Նրա կռիվն ու հարձակումները սուլթանական Տաճկաստանի դեմ էին, իսկ ցարական Ռուսիայի վերաբերմամբ ես հայ հրապարակախոսների մեջ չեմ հիշում մի ուրիշին, որ, եթե կարելի է այսպես ասել, ավելի պետասիրական լիներ, քան Արծրունին: Նա նույնիսկ թուրքահայերի գոյության խնդիրը կապում էր ռուսական

իմպերիալիզմի հետ: Հայտնի է, որ յոթանասունական թվերի ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, թե մի փոքր առաջ, մի գրավոր դիմումով ռուս կառավարությանը խնդրում էր գրավել Թուրքիայի հայաբնակ վիլայեթները: Հետագայում ևս նա սարսափում էր այն մտքից, թե մի օր ռուսահայերը կարող են ըմբոստանալ Ռուսիայի դեմ: Այդ սարսափն ապագայում ժառանգեց դաշնակցությունը:

Ջուռեճալով բարձր փիլիսոփայական մտայնություն, Գրիգոր Արծրունին սարսափում էր նաև մահից, մի թեթև գլխացավ նրան պատճառում էր ահագին մտահոգություն: Մահվան պահին նրա մահճակալի էով գտնվողներից մեկը Հովհաննես Տեր-Մարկոսյանը, պատմում էր ինձ, որ նա սոսկալիորեն կռվում էր մահու դեմ վերջին ժամերին:

— Այնպես որ՝ ես սարսափում էի նրան նայելիս: Աչքերը լայն բացված, բռունցքները սեղմված, կարծես ճգնում էր հարձակվել շրջապատողներիս վրա:

Րաֆֆին մի օր ինձ ասաց, որ Գրիգոր Արծրունին Մարոյի հետ կենակցելուց առաջ կենսախինդ մարդ է եղել, նույնչափ, որչափ Աբգար Հովհաննիսյանը: Այն ժամանակ նա իր ապագա հակառակորդների հետ եղել է արտաքուստ հաշտ և հաճախ հանդիպել է մի ինչ-որ բուրժուա ընտանիքի սալոնում:

— Այն ժամանակ ես էլ այցելում էի այդ սալոնը, — հարեց Րաֆֆին, — երբ Արծրունին ներս էր մտնում, Պետրոս Սիմոնյանցն իր համախոհների հետ, նրանից փախչելով, ֆռշում էին մի անկյուն ու էչփչում դավադիրների պես: Պարզ էր, որ նրանք չեն հանդուրժում Արծրունու ներկայությունը, բայց չէին համարձակվում արտահայտել իրանց ատելությունը:

Իճիճ Արծրունին, հիշելով այդ ժամանակները, ասում էր.

— Րաֆֆին այդ հասարակության մեջ երբեք չէր խոսում, այլ միայն դիտում էր և ուսումնասիրում:

Իմ տեսած Արծրունին ընկերային մարդ չէր, ուզում եմ ասել, ոչ մի ընկերական շրջան չէր այցելում: Իր կալվածքից զրկվելուց հետո Զվիցերիա գնալով և մի տարի անցած վերադառնալով՝ նա կենում էր Թիֆլիսի ներ ու կեղտոտ փողոցներից մեկում մի հնաոճ տան մեջ: Նրա անուրբ բնակարանը բաղկացած էր՝ չեմ հիշում՝ չորս թե հինգ սենյակներից. նրանց մի մասը խմբագրատունն էր բռնել: Մութ ու խոնավ սենյակներ էին, ուր անընդհատ լսվում էին մերձակա շուկայի աղմուկները: Ցավալի էր տեսնել մարդուն նախկին պալատանման բնակարանից հետո այդ նկուղանման կացարանում, բայց Արծրունին չէր տրտնջում և միշտ ասում էր.

— Թող հայ ժողովուրդը «Մշակ»-ին տա 1500 բաժանորդ, և ես գոհ կլինեմ:

Այդ 1500 թիվը նրա երազն էր, որ երբեք չիրագործվեց;

Ասում էին, որ Գրիգոր Արծրունին սալոնային մարդ է, գիտե և՛ երգել, և՛ դաշնամուր նվագել: Ես չեմ տեսել ոչ մեկը և ոչ մյուսը: Առհասարակ ես նրան զվարճասեր չեմ ճանաչել, թեև գիտեր տեղը եկած ժամանակ և՛ զվարճախոսել, և՛ սրամիտ ռեպլիկներ տալ, և՛ անմոռ անեկդոտներ պատմել:

Թատրոններում ես Արծրունու հանդիպում էի շատ հազվագյուտ դեպքում, այն է, երբ Ռուսիայից կամ արտասահմանից գալիս էին հռչակավոր դերասաններ կամ երգիչներ: Իսկ հասարակական երեկույթներ, նվագահանդեսներ, պարահանդեսներ և այլն, նա գրեթե երբևէ չէր հաճախում: Մի անգամ միայն նրան տեսա մի բարեգործական բուրժուական երեկույթում, և այդ մի անգամն էլ հակառակորդները, ինչպես ասվում է, «հարամ արին» մարդու գլխին: Մի ինչ-որ գրչամոլ պառավ աղջիկ «Արծագանգ»-ի էջերում գրեց մի անմոռ հոդված և պարսավեց նրան, մեղադրելով, որ սև այուրտուկի հետ հագել էր մոխրագույն պանթալոն: Արծրունի-Ասիացին մի լավ ծաղրեց այդ պառավ աղջկան, ասելով, որ տղամարդից սև պանթալոն պահանջելու իրավունք միայն այն կինն ունի, որ ինքը պարահանդես է գնում մերկապարանոց (դեկոլտե), երևի պառավ աղջիկը չգիտեր, որ շատ ինչ հայեր կարող էին էտիկետի վերաբերմամբ վիճաբանել Գրիգոր Արծրունու հետ և ավելի էչերը գիտեին նրա նման ճաշակով հագնվել:

Արծրունին իր հագուստները պատվիրում էր առաջնակարգ դերձակներին, և նրա արտաքինը, չնայելով մարմնի թերությանը, միշտ հաճելի տպավորություն էր անում տեսնողի վրա:

Գրիգոր Արծրունին ուներ մի քույր և մի եղբայր: Քույրը ամուսնացած էր մի գերմանացի բարոնի հետ, որ երկար տարիներ վարեց վոխճահանգապետի պաշտոն նախ Բաֆվում, ապա Քութայսում: Եղբայրը, Անդրեաս Արծրունին, միշտ ապրում էր արտասահմանում և երբեմն ամառվա արձակուրդներին գալիս էր Կովկաս: Նա ֆիմիայի պրոֆեսոր էր Գերմանիայում, դասավանդում էր Ախենի համալսարանում: Որբան Գրիգոր Արծրունին դյուրագրգիռ էր, նույնքան Անդրեաս Արծրունին պաղարյուն էր, գոնե ես այսպիսի տպավորություն ունեմ նրանից:

Երբ Գրիգոր Արծրունին, իր կալվածքը կորցնելով, հուսահատ վիճակում գնաց արտասահման, եկավ Անդրեասը բարձի թողված գործերը կարգադրելու: Մի տեսակցության ժամանակ նա ինձ ասաց,

— Եթե Գրիգորը մի փոքր պաղարյուն խորհեր և հաշվով գործեր, չէր գրկվիլ և ինձ էլ չէր գրկիլ մեր հայրական ժառանգությունից:

Երեք ու կես տարի Ռաֆֆիի մահից հետո, այն է՝ 1892՝ թվականի դեկտեմբերին, վախճանվեց Գրիգոր Արծրունին թոռերի բորբոքումից: Նրա աղճատված մարմինը չդիմացավ սովորական հիվանդությանը բառասուն և ութ տարեկան հասակում, որ շատ հեռու է ծերությունից:

Հիշում եմ այսօրվա պես նրա թաղման օրը: Հորդառատ ձյունը դադարել էր, երկինքը պարզվել: Թիֆլիսը երբեք այդպիսի բազմամարդ և միևնույն ժամանակ անախորժության չափ աղմկալի հուղարկավորություն չէր ունեցել: Գլխավոր դերակատարները, իհարկե, հիմա դաշնակցության հիմնադիրներն էին: Նրանց թելադրությամբ էին գավառներից բազմաթիվ պատգամավորներ եկել: Դագաղին հետևում էին չորս հարյուր հսկա ծաղկե պսակներ և մի բանի տասնյակ հազար հուղարկավորներ:

Կառավարությունը գիտեր, որ Գրիգոր Արծրունու թաղումը պիտի լինի մի տեսակ ազգային ցույց և մի զորավոր բողոք իր դեմ, ուստի կարգադրել էր, որ դագաղը չտարվի կառավարչապետի պալատի առջևով: Այլ որոշում էին կայացրել դաշնակցականները: Մի բանի ամիս առաջ նման ցույց արել էին վրացիները իրանց նշանավոր գործիչ, նախկին բաղաբագլուխ Թիֆլիսի, ապա ախտորական Կիպիանու թաղմանը: Ոստիկանությունը չկարողացավ զսպել դաշնակցականներից հրահրված երիտասարդությանը, սգո թափորն անցավ պալատի առջևով: Քարկոծվեցին մի բանի ոստիկաններ, արվարձանային ոստիկանապետը վիրավորվեց և ձիուց ընկավ: Այս եղավ ոստիկանության ամբողջ պատիժը, որով հետո այնքան պարծենում էին աղմկարարները: Ընդհանուր տեսարանը տգեղ լինելով, ինձ վրա թողեց շատ գեշ տպավորություն: Գրիգոր Արծրունու թաղումն ավելի համեստ, միևնույն ժամանակ ավելի տխուր և լուրջ էի երևակայել: Եթե Արծրունին նախագուշակեր, որ այդ ձևով պետք է ողբացվի իր մահը, համոզված եմ, որ կարգելեր: Նա փառասեր էր, բայց ոչ աղմկասեր: Նա կարգելեր նամանավանդ, եթե գիտենար, որ իր մահվան շուրջը հարուցված փոթորիկը մեծ մասամբ արվեստական էր, և որ դա սուգ չէր, այլ մի տեսակ նախնական ռեկլամ կազմակերպվող դաշնակցության համար:

Գրիգոր Արծրունին ասպարիզից չհացավ ժամանակին: Նա չտեսավ իր մահը: Նա հասել էր բնությունից իրան սահմանված ժողովրդականության վերջնակետին, որից դենը վտանգավոր էր: Նրա զենքն արդեն բթացել էր, նրա «մտրակն» այլևս չէր շաչում նախկին զորությամբ և, վերջապես, հայ հասարակական կյանքում անցել էր մտրակման շրջանը, և հրապարակախոսից պահանջվում էր ավելի լուրջ և խոհուն վերաբերմունք դեպի հանրային խնդիրները: Սակայն նա հրապարակախոսության մեջ չթողեց արժանավոր ժառանգ: Բոլոր նրա հետևորդները թույլ կրկնություններ էին հնացած երգչի, որովհետև չունեին ոչ նրա տաղանդը և ոչ անկեղծությունը:

Քառորդ դար Գրիգոր Արծրունին ղեկավարեց հայ երիտասարդության միտքը իր ազատամտական ուղղությամբ: Ես չեմ ուզում ճնշադատել այդ ուղղությունը: Նա արդեն ճնշադատվում է ներկա սերնդից պատմականորեն և ճնշադատվում է ընդհանուր առմամբ շատ ճիշտ, գոնե ինձ այսպես է թվում: Այսքանը միայն կարող եմ ես ասել, որ Գրիգոր Արծրունին

ըստ էության խոշոր հրապարակախոս չէր, այո՛, բայց և այնպես իր ժամանակին չուներ հավասար մրցակից: Նա մի Սվիֆտ չէր և ոչ էլ Միխայլովսկի: Նա մի Հաների Ռոշֆոր էր հայկական չափով, տաղանդավոր, հրավառ, բայց անցողիկ, ինչպես մի հրթիռ: Փայլեց, աղմկեց և լռեց ու չմացավ: Ժամանակակիցից ընթերցողը եթե կամենա «Մշակ»-ը թերթել, կարդալով Արծրունու հոդվածները, կարող է միայն ժպտալ...

Դաշնակցությունը վերջնականապես կազմակերպվեց Գրիգոր Արծրունու մահից հետո: Հիշում եմ այդ օրերը այսօրվա պես: Կազմակերպիչ կոմիտեի ժողովները լինում էին մեծ մասամբ բժիշկ Հովհաննես Լոռու-Մելիքյանի տանը: Ես իմ ընտանիքով կենում էի այդ տան վարի հարկում և մինչև խորը գիշեր վերից լսում էի բարձրածայն վիճաբանություններ: Ժողովները վերջանում էին Լոռու-Մելիքյանի ճոխ ընթրիքներով, և հաճախ հայրենասիրական և ռազմական երգեցողությունները խանգարում էին փոքրիկներիս քունն ու իմ գրչի աշխատանքը: Ես շատ անգամ իմ մտքումս անիծել եմ այդ աղմկարար ժողովները էգոիստաբար...

Ես հրավիրված էի կազմակերպվող դաշնակցության խմբագրական մասնաճյուղի անդամ: Մեր նիստերը տեղի էին ունենում Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Ալեքսանդր Մելիք-Ալահվերդյանի բնակարանում, որ գտնվում էր այժմյա պետօպերայի դեմուդեմ անկյունի տան մեջ: Այդ նիստերին ևս մասնակցել եմ միայն մի քանի անգամ: Սկզբում ինձ հանձնվեց գրել դաշնակցության հավատո հանգանակը «Դրոշակ»-ի համար, գրեցի, իդեոլոգիան չհավանեցին: Հետո հանձնվեց գրել Լևոն Սարգսյանին, նույնպես մերժվեց: Գրեց երրորդը, չորրորդը — ապարդյուն: Վերջ ի վերջո, չեմ հիշում Ալեքսանդր Մելիք-Ալահվերդյանն էր, թե բժիշկ Լոռու-Մելիքյանը (անկասկած երկուսից մեկը) գրեց մի անշնորհք բան, որով և հրապարակ եկավ «Դրոշակ»-ը ու ենթարկվեց «Հնչակ»-ի կատաղի բննադատության: Հաջորդ համարում լույս տեսավ մի ուրիշ հոդված տարբեր ուղղությամբ ու ոճով: Ով գրեց այս վերջին հոդվածը՝ չգիտեմ:

Ես հեռացա խմբագրական մասնաճյուղից, ժամանակի կորուստ համարելով այնտեղ մնալը: Հարկավ իմ ընկերներից շատերի համար անհասկանալի ու զարմանալի էր, որ մի մարդ գրական գործունեությունը գերադասում է քաղաքական գործունեությունից, բայց ինձ համար ինչպես այժմ, այն ժամանակ էլ ավելի բարձր բան չկար, քան գրականությունը, մանավանդ գեղեցիկ գրականությունը: Կոմիտեն խնդրեց ինձ Կոստանդին Խատիսյանի ընկերակցությամբ գնալ Բաքու և դրամ հանգանակել նորածին կուսակցության համար: Գնացինք և կարողացանք հանգանակել 11000 ռուբլի, մի գումար, որ այն ժամանակ շատ-շատ էր մի անհայտ կուսակցության համար: Մենք բերեցինք այդ գումարը ու հանձնեցինք կուսակցության գանձապահ Գաբրիել Միրզոյանցին: Կոստանդին Խատիսյանը պահանջեց, որ այդ գումարից 1500 ռուբլի տրվի իրան: Նա ուզում էր գնալ Պարսկաստան և այնտեղ բանալ ռումբերի գործարան «Հայաստանը փրկելու» համար: Կոմիտեն մերժեց, և, Խատիսյանը, վիրավորվելով, իր կողմնակիցներից կազմեց առանձին ֆրակցիա նորածին կուսակցության մեջ: Դա մի ծիծաղելի բան էր, որից առաջացան շատ կոմիկական տեսարաններ: Երևակայեցեք ձեզ մի հազիվ կազմված ընկերություն, որի անդամները հենց առաջին օրից սկսեցին կռվել իրարու հետ մի տակավին ձեռք չբերված ավարի շուրջը:

Այդ ժամանակ դաշնակցության հիմնադիր կոմիտեի ժողովները տեղի էին ունենում Խատիսյանների բնակարանում: Դա մի համեստ տուն էր՝ գրեթե կիսախարխուլ: Նա գտնվում էր երկրի կառավարչապետ իշխան Գոլիցինի պալատի հանդակում, այն է՝ Թիֆլիսի կենտրոնական փողոցներից մեկի վրա, որ այն ժամանակ կրում էր Պետրոս Մեծի անունը, իսկ ներկայումս Ձերժինսկու անունը: Փողոցի մյուս մայթի վրա, գրեթե Խատիսյանների տան դիմաց գտնվում էր նահանգապետ իշխան Շերվաշիձեի (ապագայում այրիացյալ թագուհի Մարիա Ֆեոդորովնայի սիրականը) բնակարանը: Իշխանը, հարկավ, որպես պետության ներկայացուցիչ, չէր կարող հանդուրժել ոչ մի գաղտնի ժողով, իսկ Խատիսյանի հայրը, թեև նույնպես ռուս չինովնիկ քաղաքացիական գեներալի տիտղոսով, բավական ազատամիտ մարդ էր և հակառակ չէր իր տանը տեղի ունեցող ժողովներին: Նա հարգված էր ամբողջ քաղաքից որպես խելացի, շատ պարկեշտ մարդ, ուներ շատ բարեկամներ երկրի բարձր ադմինիստրացիայի շրջանում: Մեկն էլ այդ բարեկամներից իշխան Շերվաշիձեն էր:

Հետո, շատ հետո իմացվեց, որ վրացի իշխանը հայ գեներալին մի քանի անգամ ասել է.

— Պատվիրեցեք ձեր որդուն, որ ժողովների ժամանակ փողոցի կողմի լուսամուտները փակի կամ գոնե ռուսերեն չխոսեն: Ես ամեն գիշեր անցնելիս ակամա լսում եմ նրանց վիճաբանությունները:

Ժողովները երբեմն տևում էին մինչև լույս, մերթ ընդ մերթ ես ևս մասնակցում էի:

Կոստանդին Խատիսյանին չհաջողվեց Պարսկաստան գնալ: Նա ինժեներ էր և լավ ֆիմիկոս: Վճռեց ուժանակ պատրաստելու փորձեր անել տանը: Մի օր նա կես մատնաչափ ուժանակ ձեռին իջավ տան առջև գտնված պարտեզը, որ փոխարքայի պալատի պարտեզից բաժանված էր մի ցածր պարիսպով: Նա փորեց մի փոս և այնտեղ դրեց ուժանակն ու վարձեց: Լավեց մի ուժեղ թնդյուն, երկրից պոկվեց մի խոշոր հողակույտ, օդը լցրեց թանձր փոշով: Պատշգամբի վրա եղած ֆիմիական գործիքները տնայինն այլևայլ առարկաների հետ, ջարդվելով, թափվեցին պարտեզ: Տան լուսամուտների ապակիները ջարդուփշուր եղան, սենյակներից դուրս վազեցին սարսափահար տանեցիները, որոնց թվումն էր պատանի Ալեքսանդր Խատիսյանը, դաշնակցական բախտավոր Հայաստանի ապագա վարչապետը և այժմյան «փրկիչը» Պարիզի փողոցներում: Թնդյունն այնքան զորեղ էր, որ հեռավոր Սոլոլակյան փողոցի ոստիկանը լսեց ու վազեց գիտենալու, թե ինչ է պատահել: Երբ փոշին նոսրացավ, օդը պարզվեց, երևաց Կոստանդին Խատիսյանի գունասպառ կերպարանքը անշարժ, ինչպես արձան: Նա սարսափել էր իր արածից, բայց երջանիկ էր, վասնզի գտել էր Թուրքահայաստանը սուլթան Համիդի ձեռից ազատելու «միջոցը»:

Պարտիզի մեջ երևացին մի քանի ոստիկաններ, բայց Կոստանդին Խատիսյանը չձերբակալվեց, որովհետև նրա հայրը գեներալ էր: Երկար, երկար ժամանակ նա պարծենում էր այդ անհնման «քաջագործությամբ»:

Նույն օրերին ես դաշնակցությունից հեռացա առմիշտ և որոշեն ելիրվեցի իմ գրչին: Մի ինչ-որ ներքին ձայն ինձ ասում էր, թե այդ կուսակցությունը պիտի լինի սոսկալի փորձանք հայ ժողովրդի գլխին:

Թիֆլիսում հրատարակվում էր «Новое обозрение» անունով մի օրաթերթ, որի տեր ու տնօրեններն էին Գեորգի, Վասիլի և Կոստանդին Թումանովները՝ վերին աստիճանի համեստ մի երրորդություն, գրականության չափազանց սիրահար, սակայն առանց գրական որևէ ձիրքի, բացի ավազ եղբայր Գեորգիից, որի հրապարակախոսական ունակությունը միջակությունից բարձր չէր:

Ես սկսեցի աշխատակցել այդ լրագրին ոչ սիրով, այլ հարկադրված: Հայ գրականությունը ինձ վարձատրում էր ծիծաղելու չափ ժլատ: Սակայն Թումանովներն էլ չէին կարող պարծենալ իրենց առատաձեռնությամբ: Ես ստանում էի տողին երեք կոպեկ ինֆռուբլոյի և երկու կոպեկ թարգմանական հոդվածների համար: Այդ ժամանակ Քրիստափոր Միքայելյանը «Новое обозрение» լրագրի սրբագրիչն էր: Մի օր նա ինձ ասաց, թե դաշնակցական կուսակցության կարգագրությամբ պիտի գնա Ժնև «Դրոշակ»-ի խմբագրումն իր վրա վերցնելու և ինձ էլ առաջարկեց աշխատակցել: Ես մերժեցի: Այնուհետև նա դարձյալ մի քանի անգամ նույն առաջարկությունն արավ: Ես շարունակ մերժում էի առանց պատճառաբանելու իմ մերժումը: Վերջապես նա գնաց Ժնև և չեմ հիշում որքան ժամանականցած՝ ժամանակավոր վերադարձավ Կովկաս «Դրոշակ»-ի և առհասարակ կուսակցության համար դրամ ժողովելու նպատակով: Մի օր փողոցում մեր մեջ տեղի ունեցավ հետևյալ դիալոգը, որ այսօր հիշում եմ բառ առ բառ.

— Գրի՛ր, Շիրվան, մի՛ մերժիր, բո անունը կարևոր է մեզ համար:

— Ջեմ կարծում, որ իմ անունը կարողանա օգուտ բերել գործին:

— Ինչո՞ւ:

— Որովհետև նա գրական անուն է և ոչ քաղաքական:

— Մեզ էլ հենց բո գրվածքներն են հարկավոր:

— Այն գրվածքները, որոնք ներշնչված կլինեն ձեր կուսակցության ոգով, այնպես չէ՞:

— Այո՛, իհարկե:

— Ճիշտ այդ է, որ ես չեմ կարող անել:

— Պատճա՞ռը:

— Գրողը պարտավոր է գրել այն, ինչ որ ինքն է կամենում, և ոչ թե ուրիշների թելադրածը:

Քրիստափորը մի ֆանի վայրկյան խորհեց, ապա հառաչելով արտասանեց,

— Ա՛հ, Շիրվա՛ն, Շիրվա՛ն, դու անուղղելի ես, մի՞թե ավելի պատվաբեր չէ, որ գրողն իր գրիչը նվիրի մի սուրբ գործի, ֆան իր էմահաճույֆին:

— Քրիստափոր, եթե դու գրողի հոգու, զգացումների ու խղճի թելադրանքները համարում ես էմահաճույֆ, ապա չգիտեմ ինչպես կարող են մեր մտքերը հաշտվել իրարու հետ: Բացի դրանից, դու դաշնակցության որդեգրված գաղափարը հոչակում ես սուրբ: Ես էլ մի ժամանակ այդպես էի կարծում, բայց այժմ թույլ տուր ասել, որ կասկածում եմ:

— Ինչո՞ւ:

— Զգիտեմ, դեռ չեմ պարզել ինքս ինձ համար: Գիտեմ միայն, որ հոգուս խորքում կա մի բան, որ թույլ չի տալիս ինձ լիովին հավատալու ձեր գործին: Տես, ահա ֆանի տարի է՝ «Դրոշակ»-ը հրատարակվում է, ես մի անգամ էլ ցանկություն չզգացի նրա որևէ համարը նույնիսկ պարզ հետաքրքրության համար ձեռքս վերցնել, ուր մնաց կարդալ:

— Ի՞նչ է նշանակում այդ, — գոչեց Քրիստափորը այլայլվելով:

— Այդ նշանակում է, որ ձեր գաղափարը խորթ է իմ հոգուն:

— Ո՛չ, այդ նշանակում է, որ դու կամ չես հետաքրքրվում մեր տառապյալ ժողովրդի վիճակով, որ մի ոճիր է ֆո կողմից, կամ նրա ազատագրության թշնամին ես:

— Թողնենք մի կողմ, թե ով է մեզնից ավելի հետաքրքրված ժողովրդի վիճակով, խոսենք ձեր մասին: Դուք, դաշնակցականներդ, հեղափոխականներ չեք:

— Ի՞նչպես, այդքան արյուն թափելուց հետո, — գոչեց Միխայելյանը վրդովված, — ուրեմն դու չես հարգում մեր նահատակների հիշատակը:

— Խոսքս նրանց մասին չէ, Քրիստափոր, զուր մի գրգռվիր, խոսքս դաշնակցության ղեկավարների մասին է:

՝ — Ձեմ հասկանում:

— Լսի՛ր, Քրիստափոր, իմ կարծիքով հեղափոխությանը արհեստ չէ, այլ արվեստ: Իսկական հեղափոխականը ծնվում է որպես այդպիսին, ինչպես երաժիշտը, նկարիչը կամ բանաստեղծը: Իմ խիղճն ինձ չի կարող թելադրել ուրիշներին ասելու՝ վերցրե՛ք հրացանը և գնացեք կռվի դաշտ՝ այն ժամանակ, երբ ինքս հանգիստ նստած եմ իմ տանը: Իսկական հեղափոխականը առաջ ինքն է վերցնում զենքը, հետո ուրիշներին համոզում նույնն անել: Վերջապես, ես համոզված եմ, որ զենքով դուք չեք կարող հայրենիք նվաճել, դուք վտանգի եք ենթարկում թուրքահայ ժողովրդի կյանքը:

Քրիստափոր Միխայելյանը շրթունքները սեղմելով ոչինչ չասաց և բարկացած հեռացավ:

Այդ եղավ մեր վերջին հանդիպումը...

XII

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ։ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆ

Ես ինչ եմ հանդիպել այդ մարդուն: Նա ապրում էր Նոր-Նախիջևանում, որ իր ծննդավայրն էր կարծեմ: Մինչև Թիֆլիս տեղափոխվելս կարդացել էի նրա ոտանավորները, ոգևորվել: Մի հանիսը մինչև անգամ անգիր գիտեի: Արծակ գրվածքների մասին գաղափար չունեի. Նախիջևանի բարբառն անհասկանալի էր ինձ համար:

Գամառ-Քաթիպան Թիֆլիս գալիս էր տարին մեկ կամ երկու անգամ, մերթ մի հանի շաբաթ այստեղ մնալու, մերթ էջմիածին ուխտի գնալու համար: Եվ ամեն անգամ հայ գրական շրջանը հյուրասիրում էր նրան հասարակական հաշկերույթով:

Տարօրինակ էր Գամառ-Քաթիպայի բնավորությունը, ինչպես և նրա արտաքինը: Ավելի փոքր, հան միջահասակ, ոչ գեր, ոչ նիհար, թուխ մորթով, պարզ ակնոցի տակից ծակոտող հայացքով նայող աչքերով, որ երբեմն հիշեցնում էին ինչ-որ գիշակերի աչքեր, երեսը միշտ մաքուր սափրած, ալեխառն ընչացքը ինչ կտած, բերանը ծուռ — այս էր Գամառ-Քաթիպան: Նա, որ ժամանակի մեկ ժողովրդականացած ճնարերգակն էր, որի «Մայր Արաքսի...»-ն երգվում էր, «Բողոք առ Եվրոպ»-ը արտասանվում բեմերի վրա ու տներում ամենուրեք, ուր կար միայն մի բուռն հայություն, որի անունը երիտասարդության բերնում ազգային պարծանքի առարկա էր:

Հարգում էի Գամառ-Քաթիպային, ինչպես ամենքը, բայց և համակրանքի առանձին զգացում երբեք չունեցա: Ինչո՞ւ:

Մեծամիտ չէր, բայց փոքրավորի դեմ մի տեսակ իշխանավորի կեցվածք ուներ: Խոսում էր բարձր ձայնով, հրամայողական տոնով: Ավելի ցարական գոռոզ գեներալի հովեր ուներ, հան բանաստեղծի հեզություն: Զգում էիր, որ մարդը մեծ երևալու ճիգեր ունի: Խոսում էր մեծ մասամբ ռուսերեն և խոսում էր մաքուր միայն նախիջևանցու տափակ առոգանությամբ:

Առաջին տարին, որ հանդիպեցինք, ես էի նրա համար հասարակական հացկերույթ կազմակերպողը և մասնակցողների ցուցակ պատրաստողը: Այս առիթով ես մինչև անգամ գնացի Կոջոր ամառանոց՝ Գրիգոր Արծրունուն խնդրելու, որ գեթ մի օր մոռանա ատելությունը և մասնակցի հացկերույթին: Այդ ժամանակ նրանց հարաբերությունները գրեթե խզված էին. մեղավորը բանաստեղծն էր: Նա իր «Աստառ» վերնագրով պամֆլետի մեջ Արծրունու մասնավոր կյանքի վերաբերմամբ թույլ էր տվել այնպիսի կեղտոտ ակնարկներ, որոնցից երդվյալ պոռնոգրաֆիստն անգամ կամաչեր:

Արծրունին խոստացավ հաշկերույթին գալու, բայց չեկավ, երևի դարձյալ ենթարկվելով տիկին Մարոյի ազդեցությանը:

Երբ ես գնացի Գամառ-Քաթիպային հաշկերույթին հրավիրելու, ձեռն ուսիս վրա դնելով՝ ասաց.

— Ну, батюшки, дитя не плачет, мать не разумеет.

— Ի՞նչ եք ուզում ասել, վարպետ:

— Լսեցի, որ վեպ ես գրել «Նամուս» անունով, ինչո՞ւ չէիր ինձ ասում:

— Ի՞նչ կարիք կա ձեր ուշադրությունն ինձնով զբաղեցնելու:

— Ի՞նչպես թե ինչ կարիք, — գոչեց Գամառ-Քաթիպան, կարծես մի տեսակ վիրավորված, — ես կգրեի ձեր մասին «Արձագանք»-ի մեջ, վեպը կտարածվեր:

Իհարկե, նրա հեղինակավոր ձայնը գնահատելի էր ինձ համար, և նա հավատացած էր, որ այդպես է, ուստի դժվար էր նրա համար երևակայել, որ ինձ նման մի սկսնակ, թեկուզ համեստությունից և նրբազգացությունից դրդված, կարող է չդիմել իր հովանավորությանը: Ես մինչև այսօր էլ չեմ հասկանում՝ ինչո՞ւ սկսնակներն իրենց գործը տանում են այս կամ այն անվանի գրողին և խնդրում են կարդալ կամ լսել, հուսալով նրա հավանությանն արժանանալու: Եթե գրվածքն արժեք անի, ինքն իր համար ճանապարհ կբանա, իսկ եթե ոչ, չգիտեմ ինչ հեղինակություն կամ առածաբան կարող է

նրան փրկել մոռացությունից կամ անկումից: Վերջապես, համբավավոր գրողները միշտ էլ անխոցելական չեն և կարող են սկսնակին ճանապարհից շեղել: Ահա ինչու այսօր ես խուսափում եմ ինձ դիմող երիտասարդների երախայրիքը կարդալու, այսինքն հանձն առնելու թե՛ պատասխանատվության և թե՛ սոսկալի ծանծրույթ: Անձամբ ես ոչ մի համբավավորի մոտ իմ գործերը չեմ կարդացել և ոչ էլ հարցրել եմ նրանց կարծիքը իմ տպագրված գործերի մասին: Ընթերցողը - ահա՛ միակ դատավորը գրողի: Գրական ֆենադատություն՞ւն... ո՞ւր է նա հայ գրականության մեջ:

Գամառ-Քաթիպան իր ճամփորդական տպավորությունների մեջ գրեց «Նամուս»-ի մասին: Եվ որովհետև գիրքը չէր կարդացել կամ կարդացել էր, չէր հավանել, բարվոք համարեց փառաբանել հրատարակչական ընկերությունը, այլ խոսքով մի անգամ ևս շոյել Աբգար Հովհաննիսյանին, որ ընկերության նախագահն էր:

Գամառ-Քաթիպան իր արձակ գրվածքներով մի Ջոնաթան Սվիֆտ էր: Նույնչափ թունավոր, կծու և անողոք, թեև ոչ անգլիականի երգիծաբանի չափ հանճարեղ: Նրա Սյուլյուկ կեղծ անունով գրվածքների մեծ մասը նվիրված էր բանաստեղծի չսիրած մարդկանց մասնավոր կյանքին: Ճերմակյան ազգանունով մի ճերմակահեր վարդապետի մասին «Արձագանք»-ի մեջ գրեց մի պամֆլետ, որի բովանդակությունը կարելի է գուշակել գրվածքի վերնագրից՝ «Սատանայի ոջիլ»: Բավական է, որ մեկը այս կամ այն կերպ դուր չգար Ռափայել Պատկանյանին, թեկուզ իր դեմքով, կեցվածքով, բայլվածքով, Սյուլյուկը կար ու կար իր ժահրաթաթախ գրչով:

Ջարմանալի անհանգիստ հոգի էր Գամառ-Քաթիպան: Ձեմ հիշում մի մարդ, որ նրա մասին լավ խոսեր: Թիֆլիսում, բացի Գաբրիել Սունդուկյանից, նա ոչ մի բարեկամ չուներ: Րաֆֆին բացարձակապես ատում էր նրան: Արծրունին էլ ավելի, եթե չէր հարձակվում նրա վրա, պատճառը նախ հարգանքն էր, ապա մի ինչ էլ երկյուղը բանաստեղծի ժողովրդականությունից: Նույնիսկ Պերճ Պռոշյանը, այդ ամենահեռուոդամիտ, ամենահամբերատար մարդը, Գամառ-Քաթիպայի անունը լսելիս հոնքերը կիտում էր: Նախիջևանից եկող մտավորականները միշտ գանգատվում էին նրա դեմ: Այս բոլորի պատճառը Գամառ-Քաթիպայի տարօրինակ բնույթն էր: Մի անգամ, երբ Աբգար Հովհաննիսյանը Գամառ-Քաթիպային անվանեց մեծ բանաստեղծ, ես հարցրի.

— Հապա ինչո՞ւ այդ մեծ բանաստեղծին գցել եք Նոր-Նախիջևանի պես մի փոս և չեք աշխատում նրան բերել Թիֆլիս:

— Որովհետև եթե նրան Թիֆլիս բերենք, ես ու դուք մի օր իրար դեմ կելնենք դանակներով:

— Ձեմ հասկանում ինչու:

— Լսեցեք: Մի անգամ Գամառ-Քաթիպան ինձ հարցնում է, «Աբգար, ի՞նչ է գտել Գրիգոր Արծրունին այդ մագաղաթյա Մարոյի և ի՞նչ է գտել Մարոն այդ սպասուհու մեջ, որ իրարու սիրահարվել են»: Ես առանց որևէ տեղին մտի պատասխանեցի. «Աստված նրանց ասել է. «Սիրեցեք միմյանց, ապա թե ոչ թույլ չեմ տալու ոչ մի սատանայի ձեզ սիրելու»: Մյուս օրը Գամառ-Քաթիպան, հրավիրված լինելով Արծրունու մոտ, ճաշի ժամանակ գինու բաժակը բարձրացնում է ու ասում. «Մարո, Գրիգոր, ձեր կենացը. Աբգարն ասում է, թե աստված ձեզ հրամայել է սիրել միմյանց, ապա թե ոչ»... և այլն: Արծրունին, իհարկե, կատաղում է, և ահա այդ օրից է սկսվել նրա թշնամությունն իմ դեմ:

Մի ուրիշ անգամ Գամառ-Քաթիպան Թիֆլիսում հրավիրված է լինում թեյի իր մի բարեկամի և երկրպագուի մոտ: Թեյի ժամանակ երկու բարեկամների խաղցր զրույցի միջոցին մյուս սենյակից գալիս է տանտիրոջ կենակցուհին ճերմակ զգեստով մի օտարոտի, բարձրահասակ, նիհար կին:

— Բա՛հ, — գոչում է բանաստեղծը, — այդ ուրվականն ո՞վ է:

Ես կատաղեցի, հազիվ կարողացա ինձ զսպել, որպեսզի այդ խելագարին չվռնդեմ իմ տնից, — ավելացրեց եղելությունը ինձ պատմող տան տերը, որ մի պատվելի բժիշկ էր:

Ես բավականաճում եմ Գամառ-Քաթիպայի, իբրև անհատի, այս մի բանի գծերով: Նա իմ տանը եղել է ընդամենը երկու անգամ, ես նրա մոտ հազիվ թե ավելի: Նրա ընտանեկան կյանքին միանգամայնան ծանոթ եմ:

Գամառ-Քաթիպան վախճանվեց Նոր-նախիջևանում 1892 թ., 60 տարեկան հասակում: Իր կյանքի վերջին տասնամյակում նա գրեթե ոչինչ չստեղծագործեց: Ճակատագիրը փրկեց նրան կենդանությամբ իր մահը տեսնելու դժբախտությունից: Այսօր նրա անունը, իբրև բանաստեղծի, չէացել է ասպարիզից շնորհիվ իր ազգամոլության, որ հասնում էր շովինիզմի, իսկ իր ժամանակին դղրդում էր Րաֆֆիի փայլուն անվանը հավասար…

Ժողովուրդների կուլտուրական կյանքում դերասանը, երգիչն ու նվագողը ավելի իրավունք ունեն իրանց ժամանակակիցներից գնահատվելու, քան գիտնականը, գյուտարարը, գրողը, բանաստեղծը կամ ով ևս լինի:

Արտիստի փառքը շատ կարճատև է: Մարդկանց հիշողության մեջ նա տեղ ունի այնքան ժամանակ, որքան նրանց աչքերի առջև: Շատ անգամ նա մահանում է ու մոռացվում իր կենդանության ժամանակ: Մարմինը կա, հոգին մեռել է: Բավական է, որ երգչի ձայնը հնանա, և ահա նա չկա հասարակության համար: Բավական է, որ դերասանի ուժերը թուլանան ծերությունից, թե հիվանդությունից, և ահա նրա աստղը գունատվեց ու թեքվեց: Ավանդությունն ասում է. Ֆիրդուսին յոթանասուն տարեկան էր, երբ գրել սկսեց Շահ-նամեն, նա այսօր էլ ապրում է: Միլտոնը կույր էր, բայց ստեղծեց համաշխարհային գրականության գոհարներից մեկը: Բեթհովենը խլացավ, բայց չդադարեց զմայլեցնել մարդկային լսելիքը:

Նույն բախտը չունեն դերասանն ու նվագիչը: Այսօր, երբ ես հիացմամբ եմ խոսում Պետրոս Ադամյանի մասին, շատերը, թերահավատությամբ են վերաբերվում իմ գովասանքին: Արդարև, ո՞վ կարող է չտեսած տաղանդի մեծությունը պատկերացնել:

Ինքը — Ադամյանը շատ լավ գիտեր իր ապագան: Գիտեր, որ մարմինը գերեզմանին տալով, տալու է և հիշատակն իր մասին: Այս գիտակցությունը տանջում էր նրան կատաբելապես, հանի-հանի անգամ այցելելով նրան, տեսել եմ վրձինը ձեռքում նկարելիս կամ գրասեղանի էով նստած գրելիս:

— Ի՞նչ եք անում, — հարցնում էի ես նրան:

— Է՛հ, բարեկամս, կռվում եմ մոռացման դեմ:

Սոսկ դերասանի համբավը չէր գոհացնում նրա անհագ ոգին: Ձգտում էր գրականության կամ նկարչության մեջ ևս տեղ ունենալ, իհարկե, ոչ երկու տեղը:

Մի անգամ Բաքվում նա ինձ համար կարդաց մի պատմվածք: Դա մելոդրամային գրվածք էր, շատ նման բովանդակությամբ «Ոճրագործի ընտանիքը» պիեսին, որի մեջ Կորրադոյի դերը կատարում էր այնքան հրաշալի: Երբ վերջացրեց սահնչելի ընթերցումը, նայեց երեսիս հարցական հայացքով: Ես տարված էի նրա թավշային բարիտոնի երաժշտականությամբ:

— Ա՛հ, — գոչեցի ես, — ի՞նչ հիանալի եք արտասանում…

Չմտածեցի, որ Ադամյանի սպասածն այդ չէր:

— Այո՛, իհարկե, հասկանալի է, — ասաց նա և, մի ներվային շարժում անելով, մոտեցավ վառարանին ու ձեռագիրը գցեց այնտեղ:

Ադամյանին զանազան տեսակի գեղարվեստագետների հետ այցելում էին և նկարիչներ: Հիշում եմ Գևորգ Բաբինջաղյանին, Շմերլինգին, Շամշինյանին և անդրիագործ Խադարովիչին, որոնց հետ Ադամյանը շարունակ վիճաբանում էր նկարչության և արձանագործության մասին: Հավանում էին նրանի դերասանի վրձինը իրենց հոգու խորքում թե չէ — ասել չեմ կարող, բայց գովասանքներ չէին խնայում: Ադամյանը նկարչությամբ ավելի էր

հափշտակված, հաճ գրականությամբ, թերևս այն պատճառով, որ վրձինը համեմատաբար ավելի հուսատու էր, քան գրիչը:

Մի օր, այցի գալով, տեսա հետևյալ զավեշտական պատկերը: Ադամյանն ուներ մի մոլեռանդ երկրպագու՝ Ալեքսանդր Ստեփանյան անունով, որին սովորաբար Սև Սանդրո էին անվանում: Այդ մարդը ամեն տեսակ ծառայություններ էր մատուցանում Ադամյանին: Ահա այդ Սև Սանդրոն մի մշակի օգնությամբ աշխատում էր մի էշ գավթից սանդուղքով բարձրացնել վերև, տան երկրորդ հարկը: Ադամյանը, ձեռները պանթալոնի գրպանները դրած, պատշգամբից ցուցմունքներ էր անում, թե ինչպես պետք է բարձրացնել:

Էշը, իհարկե, համառում էր, և, ոչ մի բոթոց, ոչ մի հրոց ու գոռում-գոչյուն չկարողացավ նրան սանդուղքի առաջին աստիճանից դենը շարժել: Վերջապես Սև Սանդրոն հոգնեց, բրտնեց և կամակոր կենդանու պոչը բաց թողեց: Էշը նստեց, վճռելով էլ ոտքի չելնել:

— Սապրիստի, — գոչեց Ադամյանը բարկացած:

— Այդ ի՞նչ եք ուզում անել, — հարցրի ես:

— Կուզեի, որ բարեհաճեք սենյակս գալ:

— Ինչո՞ւ:

— Կփափագեի նկարել ձեռը դունչը, շատ սիրեցի անիծյալին:

— Բայց կարող եք գավթում նկարել:

— Կրնամ աշխատե՞լ այդ ամբոխեն շրջապատված: Նայեցե՛ք:

Արդարև, գավիթը լեցվել էր հետաքրքիր հարևաններով, որոնք բարձրածայն բրքջում էին:

Ես կյանքումս չեմ տեսել ավելի գեղեցիկ գլուխ, քան Ադամյանինը: Նա կարող էր մրցել Բոկլի ու Բայրոնի գլուխների հետ և հաղթանակը տանել: Նրա բարձր ճակատը, առյուծի բաճը, խոշոր երկնագույն աչքերն ու բարակ հոնքերն ու ընչացքը, սեղմ, խելացի բերանը, ինչ արծվային էլքը, որի պինչերը դողդողում էին արաբական ճժույգի ռունգների պես, — այս բոլորն արժանի էին Ռաֆայելի վրձինին: Ջնայելով իր կանացի նրբությանը, Ադամյանի գեղեցկությունը առնական էր:

Ադամյանի հասակը միջինից վար էր, բայց ոչ փոքր: Սակայն բեմական տեխնիկայի այդ զարմանալի վարպետը գիտեր իր հասակը ցույց տալ բնականից բարձր: Երբեմ նա բեմի վրա չէր մոտենում բարձրահասակ խաղընկերներին և միշտ աշխատում էր կենտրոնական դիրք բռնել, խուսափելով անկյուններից: Համենայն դեպս, եթե բեմից դուրս նրա հասակի բարձրությունը թերի էր — բեմի վրա չէր նկատվում այդ:

Որպես Համլետ Ադամյանը փեռմեն էր: Հիշում եմ՝ Ադամյանի մահից տասն ու հինգ տարի անցած, մի երեկո Օդեսայի մեծ թատրոնում էի: Աշխարհահռչակ Մուռե Սյուլլին Համլետ էր խաղում: Քովս նստած էր հայտնի արտիստ-անտրեպրենյոր իտալացի Ֆորկատտին: Ծայրեծայր լեցուն թատրոնը շունչը զսպած, հիացմամբ դիտում էր հանճարեղ ֆրանսիացու խաղը: Հանկարծ Ֆորկատտին դարձավ ինձ.

— Հիշո՞ւմ եք հանգուցյալ Ադամյանին:

— Շատ լավ եմ հիշում:

— Ո՞ւր է նրա թավշային ձայնը, որ ամբողջ երաժշտություն էր, ո՞ւր է նրա պլաստիկան...

Ադամյանը Օդեսայում խաղացել էր Մուհե Սյուլլիից շատ առաջ, հոչակավոր սատրապ գեներալ Զելյոնիի բաղաբապետության մոայլ օրերին: Այդ գեներալը մի բռնակալ էր, որի մասին առասպելներ էին պտտվում, որը ոչ մի հեղինակության առջև չէր խոնարհվում, բացի ցարից: Որպես բնորոշ դեպք պատմում էին, որ մի անգամ փողոցով անցնելիս իր կնոջ հետ ընտանեկան վեճի է բռնվում: Եվ այնքան կատաղում է, որ, ոստիկան կանչելով, հրամայում է կնոջը ձերբակալել և ոստիկանատուն տանել: Օդեսայում ինձ ասում էին.

— Երկու մարդ միայն կարողացան այդ հրեշին հարգանք ներշնչել — Սառա Բեռնարը և Պետրոս Ադամյանը: Զելյոնին երկուսին էլ երկրպագում էր:

Իմ ժամանակ Ադամյանի երկրպագու օրիորդներն արդեն պատկառելի մայրեր էին և, մի բանի հրեա, ռուս և հույն ընտանիքներում տանտիրուհիները, ցույց տալով իրենց ալբոմների մեջ Ադամյանի լուսանկարը, հիացմամբ էին հիշում հայ դերասանին:

Երբ Ադամյանը խաղում էր Մոսկվայում, չեմ հիշում, որ ռուսական խմբի հետ, ժամանակակից համբավավոր ֆինադատ Զույկոն գրեց նրա մասին մի շատ ընդարձակ հոդված «Русские ведомости» լրագրում: Խաղը մանրամասն վերլուծելով՝ Զույկոն Ադամյանին դրեց Սալվինի հոր և Էռնեստո Ռոսսիի բարձրության վրա:

Նույն ֆինադատը, երբ գնաց բեմից Ադամյանի հետ ծանոթանալու և տեսավ դերասանին հոգնած, բրտնած, մուշտակը վերցրեց իր ուսերից ու գցեց նրա վրա:

— Ի՞նչ եմ անում, պարոն, — գոչեց Ադամյանը շփոթված, — դուք կարող եք մրսել:

Զույկոն պատասխանեց,

— Եթե ես մրսեմ ու հիվանդանամ, մեծ կորուստ չի լինի, այնինչ ձեր կյանքը թանկ է արվեստի համար:

Եվ դառնալով ներկա եղողներին՝ ավելացրեց.

— Երանելի է այն թատրոնը, որ այդպիսի դերասան ունի:

Իսկ հայերը թատրոն չունեին:

Ես դիտմամբ բերեցի օտարների գնահատությունները, որպեսզի իմ հիշողությունները չենթարկվեն թերագնահատության կամ կասկածի:

Ադամյանի Օթելլոն Համլետի բարձրության չէր հասնում: Թերին պետք է վերագրել նրա ֆիզիկական կարողությանը: Նույնը ավելի վստահ կարող եմ ասել «Արբա Լիր»-ի վերաբերմամբ: Այստեղ արդեն այդ կարողությունն աչքի զարնելու չափ վար էր պահանջվածից, առանձնապես պիեսի վերջին գործողության մեջ, երբ Լիրը Կորդելիայի դիակը գրկած բեմ է բերում: Այդ պահին Ադամյանը տկար էր այնչափ, որ հանդիսականին թվում էր, թե նա իր բեռան ծանրության ներքո հևում է ու բրտնում:

Երբ այս մասին մեղմ ձևով ակնարկեցի իմ ռեցենզիայի մեջ, Ադամյանը վիրավորվեց և մի ուժամանակ գրեթե չէր խոսում ինձ հետ: Սակայն մի օր եկավ ինձ մոտ, և մեր բարեկամությունը նորոգվեց, ավա՛ղ, ոչ երկար ժամանակով... տարի ու կես անցած՝ նա վախճանվեց Կ. Պոլսում:

Ադամյանի սկզբնական տարիների դերասանությանը ծանոթ չէի: Տեսա նրան այն ժամանակ, երբ կատարելապես արդեն կազմակերպված արտիստ էր: Աբգար Հովհաննիսյանը, Նապոլեոն Ամատունին և մի բանի ուրիշ թատերագետներ ասում էին, որ նա, առաջին անգամ երբ եկավ Կ. Պոլսից, գաղափար չուներ լուրջ թատրոնի և լուրջ ռեպերտուարի մասին: Նա բերել էր հետը մի շարք հնամոտ թարգմանական պիեսներ, գլխավորապես մելոդրամներ: Արդարև, ի՞նչ կարող էր տալ նրան Կ.Պոլիսը, ուր չկար ու երբեք չէր եղել բիչ թե շատ կանոնավոր թատրոն ոչ միայն հայկական,

այլև եվրոպական, բացի, իհարկե, պատահաբար այցելող կիսատ-պռատ ֆրանսիական խմբերից: Այնպիսի տաղանդավոր դերասանուհիներ, ինչպես Աստղիկ, Հրաչյա, Սիրանույշ խաղում էին օպերետներում թուրքերեն լեզվով, իսկ Ադամյանը մասնակցում էր հայ թատերասերների խմբերում, ուր նա, իհարկե, չէր կարող լուրջ կրթություն ստանալ: Այսպիսով, ուրեմն, հերքվում է այն առասպելը, թե Ադամյանը Թիֆլիս է եկել պատրաստի պաճարով: Ադամյանի տաղանդն, ինչպես և Հրաչյայինն ու Սիրանույշինը, կրթվել ու զարգացել է ռուս թատրոնի և ռուսահայ շրջանների ազդեցությամբ: Այլ խոսքով՝ նրա պայմանները նույնն են եղել, ինչ որ այսօր բոլոր թուրքահայ դերասան-դերասանուհիներինը: Ճիշտ չէ և այն, թե Ադամյանը ճամփորդել է Եվրոպայում և մինչև անգամ խաղացել է այնտեղ: Բացի Վենետիկից, նա ուրիշ Եվրոպա չի տեսել, ո՛ւր մնաց խաղար:

Ի՞նչն էր գլխավորապես գրավիչ Ադամյանի խաղի մեջ: Նախ և առաջ նրա պլաստիկան: Այդ կողմից հայ բեմը մինչև այսօր չի տվել նրա հավասարը: Նրա ամեն մի կեցվածքն կենդանի արձան էր, որի վրա կարծես Ֆիդիասի ձեռքն էր գործել: Հապա ձա՜յնը: Երբեմ իմ լսելիքին բեմից չի հնչել այդչափ երաժշտական բարիտոն: Էռնեստո Ռոսսիի ձայնը ավելի զորեղ էր, բայց ոչ այդչափ փափուկ ու խաղցրահնչյուն: Նույնը և Մունե Սյուլլիի ձայնը: Ադամյանի խաղի դինամիկան այն չէր, ինչ որ այսօր ոմանք են համարում դինամիկա: Ադամյանի մոտ նա ներքին էր և ոչ արտաքին: Ադամյանը բեմի վրա դեսուդեն չէր վազվզում հրկիզյալի կամ օձից խայթվածի պես: Նա իր ռեպլիկայի կեսը մի անկյունում, մյուս կեսը մյուս անկյունում չէր տալիս: Նա ինքն իր շուրջը չէր պտտվում Պոլսի դերվիշների պես: Դինամիկա էր Ադամյանի յուրաքանչյուր դիմախաղը, աչքերի բիբերի յուրաքանչյուր պտույտը, ծով էր նրա լռությունը, փոթորիկ էր նրա ժեստը՝ ուր հարկավոր էր: Ավելորդ ո՛չ մի շարժում, ո՛չ մի ձև: Ռի՛թմը: Նախկին և ներկայիս դերասաններից կամ ռեժիսյորներից ոչ մեկն ունի Ադամյանի չափ բնազդ և հասկացողություն ռիթմի մասին: Եվ ամեն ինչ բնածին էր այդ զարմանալի մարդու մեջ, որ ոչ մի դպրոց չէր անցել... Այսպես են հանճարները...

Մեծ արտիստները գրեթե միշտ ունեն փոքրիկ թուլություններ: Ադամյանն էլ զերծ չէր նրանցից: Նա սիրում էր թատերասրահի ծափերը, պայմանով, որ նրանք միայն ու միայն իրեն ուղղվեն:

Սակայն Ադամյանն իր փոքրիկ թերությունների հետ ուներ խոշոր արժանավորություններ: Զար մարդ չէր, ընդհակառակը, մարդկանց կարեկցում էր թշվառությունների ժամանակ: Հյուրասեր էր, զվարճախոս, մերթ սրախոս, մերթ ցինիկ չափավոր: Անեկդոտների սիրահար էր, գիտեր համով պատմել և պատմելիս ինքը երբեք չէր ծիծաղում, Pione sans rire էր կատարելապես:

Ադամյանի համեստ կացարանը Թիֆլիսում միշտ լիքն էր հյուրերով: Գալիս էին ամենքը, ով չէր ծուլանում գալու՝ հայ, ռուս, վրացի, գերմանացի և այլն: Բայց Ադամյանը սատանորդի էր — գիտեր անախորժ այցելուներին հեռացնել վարպետորեն: Մի անգամ իմ ներկայությամբ ծառան զեկուցեց, թե այսինչը ուզում էր նրան տեսնել, և դուրսը սպասում է:

— Ասել է՞ս, որ տանն եմ:

— Այո:

— Անիծյա՛լ, չգիտեի՞ր, լավ, խնդրի, որ գա: Ծառան դուրս եկավ, և հանկարծ կատարելապես առողջ ու զվարթ Ադամյանը գունատվեց, ձայնը թուլացավ, ձեռները դողացին և սկսեց տնքտնքալ, ինչպես ծանր հիվանդ: Ես գիտեի նրա սատանայությունները, չշփոթվեցի: Այցելուն ներս մտավ, և տեսնելով Ադամյանին այդ դրության մեջ, այլայլվեց, բարևն էլ մոռացավ և ասաց.

— Դուք հիվա՞նդ եք:

— Ա՛խ, այո՛, ազնիվ բարեկամս, շատ գեշ, սպասում եմ բժշկին: Ղազա՛ր, Ղազա՛ր, անիծյալ, ո՞ւր կորար:

Բայց Ղազարը վաղուց էր փորձված. չեկավ:

Հյուրը մի բանի վայրկյան շփոթված նայեց աջ ու ձախ և ասաց.

— Ներողությո՛ւն, չգիտեի, ցանկանում եմ առողջություն, հետո կգամ:

Ասաց և, ետ ու ետ բաշվելով, դուրս գնաց:

— Գարեելի՛, — գոչեց Ադամյանը, վայրկենաբար առողջանալով, — կոշկակարս է, փող եմ պարտ, բանի անգամ ասել եմ՝ համբերիր, երբ կունենամ, ինձս կուղարկեմ: Բայց ոչ, անիծյալն անպատճառ պետք է դունչը ցույց տա իմ հյուրերին:

Մի ուրիշ անգամ Ադամյանը նույն դերը խաղաց Արտուր Լեյստ անունով մի գերմանացու հետ, որ հայ գրականությունից թարգմանություններ էր անում Աբգար Հովհաննիսյանի ձեռնարկությամբ Գերմանիայում հրատարակվող «Արմենիշե բիբլիոտեկ»-ի համար: Այդ մարդը ժամանակ-անժամանակ վազում էր Ադամյանի մոտ և նրա ժամանակը խլում էր իր անվերջ զրույցներով: Ադամյանը չէր սիրում այդ գերմանացուն, որ շատ անդուրեկան դեմք ուներ:

— Կ. Պոլսում հնավաճառներ կան. անոնց կնմանի, — ասում էր Ադամյանը, — ամեն անգամ կուգա ու կպարծենա, թե վրաց գեղեցիկ իշխանուհիների հով մեծ հաղթություններ կ՝ ընե, բայց ես գիտեմ, որ սուտ է:

Առհասարակ Ադամյանը կյանքում ևս դերասան էր: Երբ հարկը պահանջում էր, գիտեր և՛ առյուծ ձևանալ, և՛ նապաստակ: Նա չուներ ռուս դերասանի պարզությունն ու անկեղծությունը: Շատ անգամ մարդ ակամա թերահավատություն էր զգում դեպի նրա սիրալիր ժպիտներն ու հաճոյախոսությունները: Լևանտացու խորամանկություն ուներ ֆրանսիական արտաքին բաղաքակրթության տակ: Րաֆֆիի դիտող աչքը ճիշտ էր ըմբռնել նրա բնույթը, բայց ընդհանուր առմամբ Ադամյանը հակակրելի չէր, ինչպես սովորական կեղծավորները...

Ադամյանը սիրում էր հյուրասիրել, որովհետև ինքն էլ հյուրասիրվում էր: Դրամասեր էր, բայց ոչ դրամ դիզելու, այլ ծախսելու համար: Ոսկին նրա ձեռներում հալվում էր, ինչպես ձյունը խարույկի մեջ անմիջապես: Բայց ի՞նչ էր նրա ծախսը, երկու-երեք հարյուր ռուբլի ամսական:

— Ինձի կդատապարտեն, որ կոնյակով ու խավյարով կհյուրասիրեմ օտարազգի երգիչներին ու դերասաններին, — գանգատվում էր նա ինձ, — հապա անոնք գիս կվասո՞վ, սոխո՞վ կհյուրասիրեն, ըսե՛ք, իմ սեղանի վրա շամփայն տեսա՞ծ եք:

Մեծագրպան և հոգով ազգաս բուրժուազիան էր նրան մեղադրում շռայլության մեջ: Մանավանդ նրանք, որոնք հայ թատրոն չէին գալիս, և որոնց կյանքի գերագույն հաճույքն էր — լափել, լակել և լլկել...

Տարվա մեջ Ադամյանը կանոնավոր ամսականով ապահովված էր միայն ձմեռվա սեզոնը, մնացյալ ամիսները, մի փոքրիկ խումբ կազմելով, շրջում էր գավառները: Անկայուն էր այդ ամիսներին նրա նյութականը, իսկ բարոյական հաջողությունը միշտ իր բարձրության վրա էր: Երբեմն փափագում էր ամառը հանգստանալ որևէ կուրորտում կամ գնալ Եվրոպա, միջոցները թույլ չէին տալիս:

— Արդյոք պիտի հաջողի՞մ տեսնել Եվրոպ:

Ադամյանի առողջությունը բայբայվում էր օր-օրի վրա: Երբ Էռնեստո Ռոսսին Թիֆլիսումն էր, Ադամյանն էլ այդտեղ էր: Որոշվեց ի պատիվ իտալական ողբերգակի տալ մի հայերեն ներկայացում: Իսկապես մեր նպատակն էր ցույց տալ նրան Ադամյանի խաղը: Ներկայացվեց Համլետը: Թատրոնը լեփ-լեցուն էր, մեծ մասամբ օտարազգիներով: Ռոսսիի օթյակում նստեցրել էինք Սունդուկյանցին, որին նա պապաշա էր կոչում, չնայելով, որ ինքն էլ ուներ նույն տարիքը:

Ռոսսին հիացավ Ադամյանի Համլետով: Յուրաքանչյուր պատկերից հետո ուժգին ծափահարում էր: Բայց ասաց.

— Ափսոս այդ սահնչելի տաղանդը, որ երկար չի ապրելու:

— Ինչո՞ւ, — հարցրին նրան:

— Իր ձայնի պատճառով: Ես տեսնում եմ, որ Ադամյանի ձայնն առաջ եղել է ոնգային, բայց հիմը մեծ վարպետությամբ դարձրել է կրծքային և այդքան բաղցրահնչյուն: Նրա կոկորդի նուրբ երակները չեն կարող երկար ժամանակ կրել արվեստական ձայնի զորությունը: Անխուսափելիորեն Ադամյանը վաղ թե ուշ պիտի ունենա կոկորդի տուբերկուլյոզ:

Ռոսսին մարգարեացավ: Չեմ հիշում՝ երկու թե երեք տարի անցած՝ Ադամյանը Կ.Պոլսում հիվանդացավ կոկորդախտով և, երկար ժամանակ ռուսական հիվանդանոցում տառապելուց հետո, վախճանվեց Խառասուն ու վեց տարեկան հասակում:

XIII

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ

Գյուղից էր եկել նա, գյուղացի էլ մնաց բաղաքում մինչև մահը: Ժողովրդի հարազատ զավակն էր նա՝ հայ շինականի լավագույն հատկություններով: Քաղաքը նրա միտքը տաբեց, հղկեց, բայց նրա բարոյական աշխարհը չապականեց: Ինչ հոգով եկել էր, նույն հոգով էլ գնաց, միշտ դեմքը դեպի գյուղը դարձրած:

Միջահասակ, լայն կրծքով, կլոր ոսկրոտ երեսով, նեղ ճակատի տակ խոր ընկած սուր-սուր նայող աչքերով, նոր եերմակող մազերով ու մորուքով — ահա Պերճ Պռոշյանը, երբ ես ծանոթացա նրա հետ: Մինչև այդ ժամանակ ես կարդացել էի նրա մեայն երկու գրվածքը — «Սոս և Վարդիթեր» ու «Հացի խնդիր», հարկավ շտապեցի հարգանքս արտահայտել:

Պռոշյանը հագնվում էր միշտ անխնամ, անփույթ: Նրա լայնեզր գլխարկը միշտ ճխլտված էր, օձիքը միշտ տրորված, փողկապը միշտ հնամաշ, կոճակները միշտ բաց, երբեմն հագուստի ամենախնամելի մասի վրա: Խոսում էր Պռոշյանը սուր և անախորժ ձայնով և այնքան բարձր, որ կարծես նրա համար բաղաքի տները լեռներ էին, փողոցները՝ ձորեր: Ոչ ոքի պայմանականություն չէր նեղում նրան. դեմ էր ընկերային կյանքի բոլոր արտաքին ձևականություններին: Վարն այս առթիվ կպատմեմ մի բանի փաստեր:

Պռոշյանը խորապես հավատացյալ բրիստոնյա, ջերմ կրոնապաշտ և լուսավորչական էր առաջին տեսակի: Մի ժամանակ նա մինչև անգամ ուզում էր բահանա ձեռնադրվել, իսկ կինը վախճանվելուց հետո՝ վարդապետ: Չգիտեմ ինչը խանգարեց նրան անելու թե մեկը, թե մյուսը: Պահպանողական էր մինչև մոլեռանդություն, բարեկամ էր հայ հոգևորականության, սակայն ոչ նրա «ազատամիտ» պաշտոնյաներին: Ատելով ատում էր նոր հովերով տարվող կրոնավորներին և միշտ ծաղրում էր նրանց:

— Ինձ համար անաստվածություն բարոզող աշխարհականն ավելի հարգելի է, բան կեղծ հավատացյալը, — ասում էր նա, — ես զզվում եմ այն հոգևորականից, որ եկեղեցու բեմից Դարվինի գաղափարներն է ժողովրդին ուտեցնում: Կրոնի պաշտոնյան պետք է անկեղծ հավատացյալ լինի, այլապես վեղարը կամ կամիլավկան նրա գլխին նույնն է, ինչ որ ամոթխածության բողը վերջին պոռնիկի երեսին…

Պռոշյանն անհատական էր ավելի, բան որևէ մեկը հայ գրողներից: Կուսակցական բաժանումները նա համարում էր «ազգային դժբախտություն»: Դասակարգային խորության մասին գաղափար չուներ: Նրա համար մնևնույն էին և՛ տերը, և՛ ծառան, և՛ հարստահարիչը, և՛ հարստահարվողը, միայն թե նրանք հայ լինեն, «պաշտեն իրենց կրոնն ու խոսեն հայերեն, սիրեն ազգը»:

Ընտանեսեր էր Պռոշյանը վերին աստիճանի և ընտանիքից դուրս հանույթ չէր ճանաչում: Հավատարիմ ամուսին էր ու ջերմ սիրող հայր: Ներել չէր կարողանում Արծրունուն նրա հակաեկեղեցական ամուսնությունը տիկին Քոչարյանի հետ: Նույնպես և ինձ, թեև նրա բարեկամն էի: Նա կրկնում էր.

— Առանց եկեղեցու օրհնության չի կարող ընտանիք և երջանկություն լինել:

Երբ ես նրան ասում էի, թե ընտանեկան կյանքի մեկ կայուն հիմքը ամուսինների փոխադարձ սերն ու հարգանքն է, նա հեգնորեն ժպտում էր, պատասխանելով..

— Սերն անցողիկ է, հարգանքը նույնպես, միայն կրոնն է ամուր ու զորավոր:

Եվ նա կատաղում էր, երբ լսում էր, որ այսինչ կամ այնինչ լուսավորչական հայը ամուսնացել է ուղղափառ մեկի հետ:

Երբ Պռոշյանի կինը վախճանվեց, թաղման օրը դժվար էր հանդիպել նրան, այնքան հիասթափ, այնքան ծերացել էր մի քանի օրվա մեջ: Այդ օրը նա խոսում էր ու շարժվում այնքան տարօրինակ, որ մի պահ կարծեցինք, թե մարդը ցնորվել է:

Երբ Պռոշյանի ավագ որդին ձերբակալվեց որպես հեղափոխական և աքսորվեց Սիբիր, ցավալի էր տեսնել Պռոշյանին:

— Գիտեմ, գիտեմ, — կրկնեց նա, լսելով իմ կարեկցական խոսքը, — որ դու որպես հայր գիտես, ինչ ասել է ծնող, վիշտ, բայց դու մտքումդ դատապարտում ես ինձ, թե ինչու ողբում եմ, փոխանակ պարծենալու և ուրախանալու, որ իմ որդին խաչվում է գաղափարի համար: Բայց ճիշտ այդ գաղափարին զոհվելն է, որ տանջում է ինձ: Ձեմ հասկանում սոցիալիզմը, ինչ ուզում ես ասա, չեմ հասկանում և չեմ ուզում, իմ որդին պիտի զոհվեր միայն իր ժողովրդի, իր հայրենիքի համար:

Եվ Պռոշյանը, ձեռները վեր բարձրացնելով ու դողդողացնելով, հեռացավ:

Շատերը կարծում էին, որ ես «Կործանվածը» դրամայի Սահառունիների տիպերը վերցրել եմ Պռոշյանից ու իր որդուց: Միևչև անգամ մեր դերասաններից մեկը Կ. — Պոլսում Սահառունի հոր դերում բեմ ելավ Պերճ Պռոշյանի գրիմով, որի դեմ ժամանակին Փարիզից բողոքեցի լրագրերի մեջ: Դա կատարյալ թյուրիմացություն է: Ես Պռոշյանին հարգում էի ու սիրում: Առաջին ծանոթությանս նա ինձ վրա լավ տպավորություն չէր թողել: Նայելով նրա ոսկրոտ ճակատի տակից գննիչ հայացքով նայող աչքերին, թվաց ինձ, որ այդ մարդը խորամանկ մեկն է, ինչպես հայ գյուղացիներից շատերը: Այն էլ ասեմ, որ Րաֆֆին այդպես էլ նրան նկարագրել էր ինձ: Սակայն հետո, երբ լավ ճանաչեցի, տեսա, որ Պռոշյանն ամենաանկեղծ և ամենապարզասիրտ անձանցից մեկն է, որ երբևէ տվել է հայ գրական շրջանը:

Պռոշյանն ավելի ընկերական մարդ էր, քան Րաֆֆին և անհամեմատ ավելի պարզ: Նախանձամիտ չէր, ճանաչում էր իր յուրաքանչյուր արվեստակցի արժանավորությունները և հարգում: Նա երբեք «մեծ գրողի» հովեր չէր վերցնում իր վրա, ինչպես Գամառ-Քաթիպան. համեստ էր չափից ավելի և հեռու ինտրիգներից: Անսահման ժուժկալ էր մասնավոր կյանքում, բայց ուրախ, զվարճախոս, չնայելով կյանքի դառն հարվածներին: Սիրում էր ոգելից ըմպելիքներ, բայց չափավոր: Երբեք ես նրան հարբած չեմ տեսել, բայց զվարթ տրամադրված՝ շատ անգամ: Բնավ չէր ծխում: Թղթախաղի կամ նման ժամանցների մասին, Րաֆֆիի պես, գաղափար չուներ: Գեղեցիկ սեռին վերաբերվում էր անտարբեր, երբեմն նույնիսկ բացասաբար: Եվ գեղեցիկ սեռն էլ անտարբեր էր դեպի այդ մշտապես անփույթ հագնված, միշտ զգգված մազերով մարդը, որի չոր ու զիլ ձայնը բնավ չէր համապատասխանում նրա բարի ու ներողամիտ բնույթին: Այդ ձայնն այժմ էլ հնչում է ականջներումս: Այժմ էլ Պռոշյանը պատկերանում է աիա այնտեղ — փողոցում: Նա սեղմել է պատին իր բարեկամներից մեկին և օձիքը բռնած՝ բարձրածայն աշխատում է ապացուցանել, որ «եկեղեցին է ազգի փրկությունը»:

Պռոշյանը մեր բեղմնավոր գրողներից մեկն էր, եթե ոչ ամենաբեղմնավորը: Նա գրում էր զարմանալի արագ և օրվա որ ժամին կամենար:

— Այսօր առավոտ զարթնեցի, պառավիս խնդրեցի սամավարը դնել: Մոմը վառեցի և, անկողնում նստած, ծնկներիս վրա գրեցի «Յեցեր»-ի նախավերջին գլուխը: Վաղը կավարտեմ:

Իր ձեռագիրները Պռոշյանը չէր փոփոխում, չէր շտկում, կարծեմ մինչև անգամ չէր էլ արտագրում: Րաֆֆին ասում էր.

— Պռոշյանը ներկարար է, լաթերը գցում է կարասի մեջ և դուրս բերում:

Աղայանն ասում էր.

— Ջեմ հասկանում՝ ինչպես կարելի է ուզած ժամանակը գրել: Գրողը պետք է ոգևորվի, հետո գրի և ոգևորությամբ գրածը երբեք չպիտի փոփոխի:

Րաֆֆին նրան էլ էր հեգնում.

— Ոգևորության ժամանակ երբեմն այնպիսի հիմարություններ ես թխում, որ հետո կարդալով ինքդ էլ ամաչում ես...

Պռոշյանը կարող էր մի ամսվա մեջ մի մեծ հատոր գրել և կգրեր միշտ, եթե չլիներ հրատարակության և վարձատրության անիծյալ խնդիրը: Աբգար Հովհաննիսյանի «Փորձ»-ից հետո նա իր վեպերի համար տեղ գտավ Ավետիք Արասխանյանի «Մուրճ» ամսագրում: Բայց Արասխանյանը, ինքը կարիքի մեջ լինելով, չէր կարող Պռոշյանին տալ նույնիսկ չափավոր վարձ: Եվ ահա Պռոշյանը շարունակ մտահոգված էր իր գրքերի համար հրատարակիչ գտնելու և տպագրված գրքերը վաճառելու խնդրով:

Հայ գրողի նյութական անապահովությունն ամենից ավելի նրա վրա էր ծանրացած:

— Այսօր 75% զիջեցի կենտրոնական գրավաճառանոցին, — ասաց նա մի օր ինձ, — անիրավներն էլի մերժեցին: Մնում է, որ տանեմ շուկա և կշռով վաճառեմ նպարավաճառներին:

Բազմանդամ ընտանիքի նյութականը Պռոշյանին ենթում էր անհուսապես: Ոչ մինը հայ գրողներից այնքան դառնացած չէր կյանքից, որքան նա: Եվ չնայած սրան, Պռոշյանն ամենահայրասեր մարդն էր և սիրում էր լավ ուտել: Ամեն օր նա ինքն էր շուկա գնում, օրվա պարենը գնում ու իր ձեռքով բերում տուն: Երբեմն ծիծաղելու չափ արհամարհում էր պայմանականը: Պատմեմ մի բնորոշ դեպք:

Ռուս-ճապոնական պատերազմի տարին էր: Մի օր Ղազարոս Աղայանը, Ավետիք Արասխանյանը, Հովհաննես Թումանյանը, ես և մի բանի ուրիշներ Թիֆլիսի Երևանյան անունով հրապարակի վրա օրվա հեռագիրներն էինք կարդում: Կարդացողը ես էի, մյուսները լսում էին: Հեռվում երևաց Պռոշյանը: Նա շուկայից էր գալիս, իր հաստ ձեռնափայտը հովվի պես ուսին դրած և ծայրին կախած գույնզգույն մի թաշկինակ, որը լիքն էր երևի օրվա պարենով: Թաշկինակի միջից ցցվել էին կանաչ սոխի երկայն շյուղերը սվիններեի պես: Պռոշյանը մոտեցավ մեզ և կանգնեց իմ ետև: Հանկարծ աչքիս տակով տեսա, որ նրա վերարկուի տոպրակների չափ լայն գրպաններից մեկը մի տեսակ պարում է: Թումանյանին աչքով նշան արի: Նա փոթկաց և, ձեռը տանելով Պռոշյանի գրպանը, այնտեղից դուրս բերեց մի թղթյա տոպրակ, նոր մորթոտված «ցոցխալ» ձկներով լի: Ինչպես հայտնի է, այդ ձկնիկները մորթվելուց հետո դեռ երկար ժամանակ թպրտում են. ահա թե ինչու Պռոշյանի գրպանը պարում էր:

— Ա՛յ մարդ, ի՞նչ է այդ, չես ամաչո՞ւմ, — գոչեց Աղայանն ահեղ ձայնով:

— Սո՛ւս արա, գյադա՛, — արտասանեց Պռոշյանն անհոգ, — լակոտներս ցոցխալ շատ են սիրում, նրանց համար եմ գնել:

«Լակոտներ» նա անվանում էր իր զավակներին: — Դե լավ, հեռացիր, տեսնում ես, գործ ունենք, մի խանգարիր, — ասաց Աղայանը, որի համար իրոք լուրջ գործ էր օրվա հեռագիրներ կարդալը:

— Գնում եմ, գնում եմ, լռեցի չոբան: Տղերք, ով ուզում է, թող ճաշին գա մեր տուն, կսպասեմ:

Այսպես էր Պռոշյանը առօրյա կյանքում, միշտ պարզ և անպաճույճ: Նրա աչքում ամենքը հավասար էին, և ամենքի հետ վարվում էր անխտիր մեւնույն պարզությամբ: Ով որ էլ նրան բարևեր, պատասխանը միևնույնն էր, — երկու

մատներով թեթևակի շոշափել իր հնամաշ գլխարկի եզրը: Հակառակ Րաֆֆիի, որ ոչ ոքի հետ դու-ով չէր խոսում, Պռոշյանի համար գրեթե չկար «դուք»-ը:

Մի ժամանակ Պռոշյանը Երևանում ածխավաճառ էր եղել, հետո լուսանկարիչ, հետո էլ չգիտեմ ինչ: Նրա լուսանկարչական կյանքից պատմում էին հետևյալը: Ռուս-թուրքական պատերազմին 1876 թ., մի օր Պռոշյանի արհեստանոցն են մտնում լուսանկարվելու 10-12 շարքային զինվորներ:

— Խմբովի՞ն եք ուզում նկարվել, թե՞ առանձին-առանձին, — հարցնում է Պռոշյանը:

— Առանձին-առանձին:

Պռոշյանը տեսնելով, որ այդքան մարդկանց լուսանկարները զատ-զատ նկարելը շատ ժամանակ պիտի խլի, դիմում է խորամանկության: Նա լուսանկարում է զինվորներից միայն մեկին և ասում է.

— Առաջիկա կիրակի եկեք, բոլորիդ լուսանկարները պատրաստ կլինեն:

Հաջորդ կիրակի զինվորները գալիս են, և Պռոշյանը, յուրաքանչյուրին տալով վեցական օրինակ մի հոգի զինվորի լուսանկարից, հարցնում է.

— Հավանո՞ւմ ես, տես ինչքան նման է ֆեզ:

— Շատ նման է ինձ, շատ նման, — պատասխանում է ամեն մեկը:

Զինվորները հեռանում են գոհ սրտով:

Այս անեկդոտի եղելությունը Պռոշյանը չէր հերքում:

— Եղբայր, — ասում էր նա, — այդ ռուս զինվորներն այնքան են իրար նման, որքան գետնախնձորները մի տոպրակի մեջ:

Մի օր Աբգար Հովհաննիսյանն ինձ պատմեց.

— Մի առավոտ կանուխ գալիս են ու ինձ ասում, թե Պռոշյանը ծանր հիվանդ է և ուզում է ինձ տեսնել: Գնացի: Պռոշյանը պառկած էր, վրեն կես դյուժին վերմակներ և ծանր տնքտնքում էր: «Հը՛, ի՞նչ է պատահել, Պռո՛շ», — հարցրի ես: «Աբգար, հոգուդ մատաղ, տեսնում ես՝ մեռնում եմ, — պատասխանեց Պռոշյանը, — լսիր կտակս: Բերանացի եմ ասում, դու կարող ես գրել: Նախ և առաջ կնոջս ապրուստը կապահովես, զավակներիս լավ ուսում կտաս, աղջկերանցս կամուսնացնես օրինավոր հայ լուսավորչական տղաների հետ: Մի հազար ռուբլի պարտք ունեմ, կվճարես, որ անիրավ պարտատերերս չանիծեն հիշատակս: Այնուհետև, եթե կամենաս գերեզմանիս վրա մի համեստ արձան դնել կտաս»: Լսելուց հետո ես հարցրի. «Շատ բարի, Պռոշ, կտակդ ուրախությամբ կկատարեմ, բայց ի՞նչ միջոցներով, ժառանգությո՛ւնդ ասա»: Պռոշյանը բարձի տակից դուրս բերեց մի մեծ ձեռագիր և տալով ինձ՝ ասաց. «Ահա այս ձեռագիրը և տպագրված գրքերը կծախես և կտակս կկատարես»: «Հենց միայն ա՞յդ է ֆո ժառանգությունը», — հարցրի ես: «Այո»: «Որ այդպես է, - ասացի ես, - այժմ խորհուրդ եմ տալիս չմեռնել»: Եվ Պռոշյանը բարեբախտաբար չմեռավ: Աբգար Հովհաննիսյանը հումորիստ էր և անկասկած իր պատմվածքը զարդարել էր զավեշտական հավելվածով, համենայն դեպս ինքնըստինքյան այդ կտակը բնորոշ է Պռոշյանի համար: Պռոշյանի գրական զարգացումը մի աստիճան վար էր Րաֆֆիի զարգացումից: Հայ հին և նոր գրականությունը գիտեր լիովին: Գիտեր նաև հայ պատմությունը, մանավանդ եկեղեցականը: Բայց օտար գրականությունը լավ չէր ճանաչում, եթե հաշվի չառնենք Մխիթարյանների թարգմանությունները: Մի ինչ ռուս հեղինակներ կարդացել էր: Կարդացել էր նաև եվրոպական գրականությունից Վիկտոր Հյուգոյին, Վալտեր Սկոտին: Զոլայի մասին գաղափար էր կազմել լսածների և լրագրական հոդվածների հիման վրա: Երբ լույս տեսավ Պռոշյանի «Յեցեր»-ը, ես «Արձագանք»-ի մեջ ինքնադատելով այդ վեպը պարսավեցի նրա մի ինչ չափազանց նատուրալիստական էջերը:

— Եղբայր, — ասաց նա վշտացած, — երբ Զոլան է գրում նման բաներ, գովում եմ. երբ ես եմ գրում, պարսավում եմ: Ինչո՞ւ ես ինձ վրա հարձակվում, դու ինքդ ռեալիստ չե՞ս:

— Բայց, Պոո՛շ, էդուհու ծծերի և փորի կեղտոտ նկարագրությունը ռեալիզմ չէ, այլ նատուրալիզմ, և Զոլան ինքն էլ նատուրալիստ է: Ես հիացել եմ նրա հանճարեղ գրչով: Բայց երբեմ չեմ հափշտակվել նրա ուղղությամբ և չեմ ազդվել նրանից:

Պոռշանն էլ շատ ինչ էր ճամփորդել, ինչպես Րաֆֆին: Ամառը նա իր ընտանիքի հետ գնում էր որևէ գյուղ, իսկ ձմեռը՝ մեկ-մեկ կամ Երևան, կամ Բաքու: Որքան հիշում եմ, նա Ռուսաստանն էլ չէր տեսել: Բայց այդ համրաշարժ մարդը մի տարի կատարեց մի բավական երկար ճամփորդություն իր կյանքի վերջին շրջանում: Նա գնաց Զվիցերիա իր զավակների հետ տեսնվելու: Ժնևից նա կարճ ժամանակով գնաց Փարիզ: Այդ ժամանակ ես Փարիզում էի ընտանիքով: Ճիշտ տարին մոռացել եմ, բայց 1905 — 10 թվականներից մեկն էր:

Պոռշանն իր նահապետական հասկացողությամբ կարծում էր, որ հայ եկեղեցին ամենուրեք մի տեսակ հյուրանոց է լուսավորչական ճամփորդների համար: Փարիզ հասնելով՝ նա կառք է նստում և գնում է Ժան-Գուժոն փողոց N 15:

Բեռնավորված կառքը կանգ է առնում եկեղեցու դռների առջև: Պոռշանը մտնում է գավիթ, ֆրանսիացի պահապանին մի կերպ հասկացնում է, թե ինքը ճամփորդ է Կովկասից, եկել է Փարիզ Ալեքսանդր Մանթաշյանին տեսնելու և իջևան է խնդրում:

— Բարի գալուստ, — ասում է ֆրանսիացին իր ցեղին հատուկ հումորով, — բայց եկեղեցու զավթում հյուրանոց չկա:

Պոռշանը ձեռներով ու ոտներով պնդում է, թե վճռել է եկեղեցում իջևանել: Ֆրանսիացին զարմացած նայում է աճծանոթի ճերմակ ու երկայն մորուքին, մորքե սրածայր գդակին, վերարկվի լայն ու երկայն փեշերին և, վճռելով, որ հյուրը ինչ-որ արևելյան կրոնամոլ է, գնում հայտնում է եկեղեցու բահանային:

Տեղի է ունենում երկար բանակցություն: Քահանան վերջապես կարողանում է համոզել Պոռշանին, որ եկեղեցին պանդոկ չէ, թե ճշմարիտ է, կա այնտեղ երկու սենյակ, բայց դա քահանայի բնակարանն է: Պոռշանն իր «շալաֆյուլան» (այսպես էր անվանում Պոռշանն իր ճամփորդական իրերը) վերցնում ու գնում է իր վաղեմի բարեկամ բժիշկ Ավետիք Բաբայանի բնակարանը: Բժիշկն էլ անսպասելի հյուրին բերում է ինձ մոտ:

Ես անմիջապես Պոռշանի համար Սեն-Միշել բուլվարի մաքուր հյուրանոցներից մեկում վարձեցի մի լավ սենյակ ուղիղ Լյուքսեմբուրգ պարտեզի դեմուդեմ, չեմ հիշում՝ օրական մեկուկես, թե երկու ֆրանկով:

Պոռշանը Փարիզ եկել էր Մանթաշյանին խնդրելու իր ամսական նպաստը մի ինչ ավելացնել: Ես երկու շաբաթ գրեթե ամեն օր նրա հետ էի: Ծանոթացրի նրան, որքան հնարավոր էր այդ կարճ ժամանակամիջոցում, օվկիանոս բաղաքի հետ: Մանթաշյանը ծերունուն շատ սառն ընդունեց, այնուամենայնիվ իմ միջնորդությամբ մի որոշ գումար տվեց նրան:

Փարիզից հեռանալու օրը Պոռշանը, բժիշկ Բաբայանը, Միհնաս Զերազն ու ես նստած էինք բոլոր բահաստեղծներից երգված նշանավոր Closerie des Lilas սրճարանում, որ գտնվում է Մոնպառնաս և Սեն-Միշել բուլվարների անկյունում:

— Դե՛, բարեկամնե՛րս, — ասաց Պոռշանը, — ես գնում եմ լակոտներիս մոտ:

Մենք որոշեցինք ծերունուն ուղեկցել մինչև կայարան: Ես, որովհետև Պոռշանին ավելի էի հանհաչում, հան մյուսները, ասացի:

— Պոռշ, խուրջին կամ բոխչա չունե՞ս:

— Ջեռ ես գցել ինձ, ի՞նչ է, — վիրավորվեց Պռոշյանը, — լակոտներս ինձ համար մի ճամփարկղ են գնել, որ տեսնես, կիևցաս: Սպասեցեք, գնամ բերեմ, երթանք կայարան:

Նա գնաց հյուրանոց և կես ժամ անցած ետ եկավ: Մի սպասավոր բերում էր մի նոր ճամփարկղ, իսկ ինքը Պռոշյանը... շալակած բերում էր մի մեծ բոխչա...

Բաբայանը բողոքեց.

— Ես չեմ գնա կայարան, ամոթ է, Փարիզ և բոխչա՛:

Միևնոյն Ջերազը որպես խաղաթղթախաղ, իհարկե, ավելի մեղմ արտահայտվեց.

— Պետք է ներեք գիս, տյար Պռոշյան, ինչ մը թույլ կզգամ գինիս, պիտի երթամ անկողին մտնելու:

Վերջապես մի կերպ Պռոշյանին ուղեկցեցինք մինչև կայարան և ճանապարհ դրեցինք:

Առհասարակ այդ ծայր աստիճան պարզ մարդու մեջ ամեն ինչ տարօրինակ էր և համակրելի ընդհանուր առմամբ: Երբեմն նա տառապում էր ծիծաղելով և զվարճանում էր արցունքների մեջ: Իր զրկանքները պատմելիս անխնա ծաղակոծում էր իրան և կյանքի անիրավություններուն երեսին շպրտում էր իր ստոյիկյան արհամարհանքը: Հեգությամբ և ներողամիտ ժպիտներով էր ընդունում նա ընկերների կատակներն ու զրախոսությունները և հաճախ թերին ինքն էր լրացնում: Եվ այդ հեգության մեջ կար ինչ-որ հմայք, որ գրավում էր ամենքի սերը:

Սա բողոքում էր միայն այն ժամանակ, երբ ծաղրում էին նրա ծայրահեղ պահպանողականությունը: Եկեղեցին էր համարում հայ ազգի գոյության խարիսխը, և վայ նրան, ով կհանդգներ հակաճառել նրան: Այդպիսին պիտի վայելեր Պռոշյանի անվերապահ թշնամությունը, սակայն առանց բեղի կամ վրիժառության: Երկրորդ նրա սրբությունն էր ընտանիքը: Նա անիծում էր ամենքին ու ամեն ինչ, որ դեմ էր իր սրբության և հաճապետականության հիմունքներին: Իսկ ընտանիք համարում էր միայն եկեղեցական ամուսնությունը: Քսանհինգ տարվա մեր բարեկամության ընթացքում նա միայն երկու անգամ ոտք դրեց իմ տունը, այն էլ այն օրից հետո, երբ որոշ խաղաթական պայմանների պատճառով ստիպվեցի իմ «ապօրինի» ամուսնությունը ենթարկել եկեղեցու հովանավորությանը:

Պռոշյանը, հայ հոգևորականության պաշտպանը լինելով, անխնա հալածում էր նրա թերությունները, որովհետև այդ թերությունները անչափ և անսահման էին, ուստի Պռոշյանը շարունակ ժայթքում էր իր կծու անեծքները վերջին տիրացվից սկսած մինչև կաթողիկոսի դեմ: Նա պաշտպանում էր լուսավորչական եկեղեցու ոչ միայն խորհուրդները, այլև բոլոր ծեսերը, ամենաչնչին մանրամասներով ու ձևերով: Փարիզի եկեղեցում նա մի կիրակի առաջին կարգում նստած սուր աչքերով հետևում էր պատարագի արարողությանը: Տեսնելով, որ սարկավագը խնկարկելիս բուրվառը պտտեցնում է ձեռի շուրջը, դարձավ ինձ և ասաց — էդ անասունի գլուխը պիտի ջարդեմ: Եկեղեցին թատրոն չէ, որ ամեն մի դերասան իր ուզածի պես խաղա: Եվ այնքան կատաղել էր, որ ես վախենում էի, որ վեր պիտի կենա, վազի բեմ և բուրվառը խլի սարկավագի ձեռքը: Համբերեց, բայց պատարագից հետո սարկավագին մի լավ հայհոյեց փողոցում:

Մեր անցյալ դեմքերից ոչ ոք այնպես անաղարտ չպահեց իր ինքնուրույնությունը, որպես Պերճ Պռոշյանը: Գրանիտյա մի շինվածք էր նա, որքան կոպիտ ու անտաշ, նույնքան կուռ ու ամուր: Գիտության կարկինը չէր հղկել նրա միտքը, ժամանակի ոգին չէր ազդել նրա հոգու վրա: Մեռավ այդ մարդը, գերեզման տանելով խորունկ վիշտն իր ավագ որդու մասին: Մեռավ, չտեսնելով նրան ախտորից վերադարձած փառք ու պատվով և մի օր Պետերբուրգում նստած համայն Ռուսիայի մինիստրական աթոռի վրա: Եվ լավ էր, որ չտեսավ, որովհետև երկար չտևեց երիտասարդ Պռոշյանի փառքն ու պատիվը:

Պերճ Պռոշյանը հայ գրողների մեջ ամենաինքնուրույնն է: Նա չուներ Րաֆֆիի երևակայությունը, ինչպես և Խաչատուր Աբովյանի հայրենասիրական ավյունը, բայց կենսունակ էր ավելի, քան մեկն ու մյուսը:

Նա մեր գյուղացիական կյանքի, նրա վարք ու բարքի ու ավանդությունների ամենախոշոր պատկերահանն էր ավելի մանրակրկիտ, բան տաղանդավոր: Նրա ոճն անտաշ էր, նկարագրությունները հաճախ ճապաղ, բայց ճշգրիտ, նա տիպեր չի ստեղծել, տվել է միայն բնույթներ, մեկը մյուսից տարբեր: Նրա վեպերի գործող անձինք ինքնուրույն են և խոսում են իրանց ոտներով: Նա իր հերոսների բերանը սանձ չի դրել և ծեծել նրանց ուզած ուղղությամբ, ինչպես այդ արել են Րաֆֆին ու Աբովյանը:

Փույթ չէ, որ Պռոշյանի վեպերը կարդացվում են հոգնածությամբ, բայց ավարտելուց հետո, այնուամենայնիվ, ընթերցողի հիշողության մեջ մի բան մնում է՝ մի կենսական պատկեր, մի ճշգրիտ տեսարան, մի բարբագրություն: Դեն գցենք նրա կրկնությունները, նրա կոպիտ բառերը, դա Աբովյանի թողած ժառանգություններն է, բայց մնացյալը հետաքրքրական է հայ գյուղացու հոգեբանությանը ծանոթանալու տեսակետից:

XIV

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

Մեր անցյալ դեմքերի մեջ Գաբրիել Սունդուկյանցի պատկերը իմ հիշողության մեջ նկարվում է բոլորովին առանձնակի թե իբր գրող և թե իբրև մարդ:

Մոտ վաթսուն տարեկան ծերունի էր, երբ հետը ծանոթացա: Բավական ամրակազմ, ավելի միջին, բան փոքր հասակով, մաքուր սափրված, միշտ ձեռնոցներով: Շատերը նրան գեղեցիկ էին համարում, ես՝ ոչ: Դեմքի գծերը կանոնավոր և փափուկ էին, բայց դա ավելի կուշտ վաճառականի դեմք էր, բան գրողի կամ արտիստի: Տարական պաշտոնյա էր «իսկական պետական խորհրդականի» տիտղոսով, որ պահանջում էր «նորին գերազանցություն» կոչումը: Անհամության չափ հավատարիմ ու զգաստ էր պաշտոնի ու տիտղոսի վերաբերմամբ: Մեծարանքի սիրահար էր: Քայլում էր հպարտ, գլուխը բիչ թեքած դեպի ձախ ուսը: Ցավում էի, որ այդ գլուխն ըստ պաշտոնի ստիպված է թեքվել մեծավորների առջև:

Ձեմ հիշում 80-ական թվականների վերջին տարիներից որն էր, երբ լրացավ Սունդուկյանցի գրական գործունեության հանդիսությունը: Այս առթիվ ես «Արձագանք»-ի մեջ գրեցի մի փոքրիկ հոդված և հիշեցի հասարակությանը վաստակավոր թատերագրի գործունեությունը: Անցողակի ասեմ, որ Սունդուկյանցը շատ ուշ էր սկսել գրել, եթե չեմ սխալվում հառասուն տարեկան հասակում: Հոդվածս տպելու օրն իսկ Սունդուկյանցը վազեց խմբագրատուն հուզված:

— Այդ ի՞նչ եմ արել, ի՞նչ եմ արել, — գոչեց նա, ըստ սովորության կանխապես շատ խաղաբավարի և ավելորդ հանդիսավորությամբ, բարևելուց հետո:

— Ի՞նչ է պատահել Գավրիլ Նիկիտիչ, — հարցրի ես զարմացած:

— Անհաստվածնե՛ր, դուք ուզո՞ւմ եք իմ տունը հանդել: Ձէ՞ որ ես Աբգարին խնդրել էի իմ հոբելյանի մասին ոչ մի տող չգրել ինչո՞ւ եք գրել:

— Շատ լավ Գավրիլ Նիկիտիչ առաջիկա համարում կգրեմ, որ դուք հրաժարվում եք հոբելյանից:

— Ո՛չ մի խոսք, ո՛չ մի խոսք, թողեք լուռ անցնի, մոռացվի:

Սկզբում կարծում էի, որ Սունդուկյանցը համեստությունից է հրաժարվում հոբելյանից: Այն ժամանակ ես նրան լավ չէի ճանաչում: Հետո Աբգար Հովհաննիսյանը ինձ իսկական պատճառը բացատրեց.

— Կառավարությունից վախենում է. կարծում է, որ իրան կարող են սեպարատիստ հայերից համարել ու պաշտոնից գրկել:

Արդարև, այն միջոցներին հայերին ու վրացիներին վերագրում էին Ռուսիայից անջատվելու միտումներ, ուստի ցարական կառավարությունը ամենաչնչին մի ազգայնական հանդես համարում էր սեպարատիզմի նշան:

Սունդուկյանցն իրան առհասարակ հեռու էր պահում հասարակական ու գրական շրջաններից, դողալով իր պաշտոնի և տիտղոսի համար: Ամեն անգամ, երբ պետք էր լինում հայ գրողների ցուցակը կազմել, Սունդուկյանցի անունը մոռանում էին և, հանկարծ հիշելով, առաջին տեղն էին տալիս նրա անվանը:

Սունդուկյանցը մի առանձին համակրանք ուներ դեպի այն դասակարգը, որ կոչվում էր «կինոտո» և որը տվել էր նրան Պեպոյի, Կակուլիի և Գիխոյի տիպերը: Այդ դասակարգը բաղկացած է մրգավաճառներից, գինեվաճառներից, ձկնորսներից և այլն:

Նա հիմն ինձ պատմում էր, որ Պեպոյին գտել է ուղղակի փողոցում: Տեսնելով կինոտոյի զգեստով և բնորոշ դեմքով մի ձկնորս, հրավիրում է նրան իր տունը, հյուրասիրում թեյով, հետը զրույց է անում, բարեկամանում է և վերջը դառնում է նրա նորածինի կնքահայրը:

— Բայց անիրավը իր բարձր կոշիկների սուր մեխերով սենյակներիս հատակը ծակոտեց: Լավ մարդ էր, ազնիվ — մեռավ խեղճը: Իմ կնճած տղան հիմա մի գեղեցիկ երիտասարդ է. մի օր ցույց կտամ: Ես Պեպոյին մի ֆիչ իդեալացրել եմ, խոստովանվում եմ, Կակուլին է կինոտոյի իսկական տիպը: Գիխոյի տիպն էլ կյանքից եմ վերցրել: Ջիմզիմովը հայտնի վաշխառու Խ.-ցի լուսանկարն է, բայց մի ուրիշ վաշխառու, ճանաչում էի, կաղ Զ. — ցը, երևակայեց, որ իրեն եմ նկարագրել: Այդ ժամանակ ես այդ մարդու տանն էի կենում, անիրավը ջգրու դուրս արեց ինձ իմ բնակարանից:

Իր գլուխ-գործոցը Սունդուկյանցը «Պեպո»-ն էր համարում և առանձին գուրգուրանքով էր խոսում նրա մասին: Միշտ գնում էր նրա թե հայերեն և թե վրացերեն ներկայացումներին և մինչև վերջը նստում էր առաջին կարգում: Երբ դերասանները Թիֆլիսի բարբառը լավ չէին արտասանում, Սունդուկյանցը հուզվում ու վրդովվում էր:

Սունդուկյանցն ինքն էր թարգմանում իր պիեսները վրացերեն: Վրաց լեզվին նա տիրում էր կատարելապես: Նա նույնչափ սիրված էր վրաց բեմի, որչափ և հայոց բեմի վրա. իր թարգմանությունների տակ չէր գրում «թարգմանություն հայերենից». գոնե ես վրաց աֆիշներում երբեք չեմ հանդիպել այդ բառերին: Հնդհակառակը, երբեմն Սունդուկյանցի ազգանունը փոխվում էր վրացերեն՝ Սունդուկաշվիլի: Սունդուկյանցը չէր բողոքում և շատ լավ էր անում, նա նույնքան վրացի էր, որքան և հայ, ինչպես Սայաթ-Նովան:

Սունդուկյանցը գրելու ժամանակ ծայր աստիճան բծախնդիր էր: Ես չգիտեմ՝ ինչպես էր գրել իր գլխավոր գործերը Թիֆլիսի բարբառով. «Պեպո», «Խաթաբալա», «Էլի մեկ գոհ», «Քանդած օջախ» վաղուց գրված ու տպագրված էին, երբ ես ծանոթացա հեղինակի հետ, բայց լավ հիշում եմ այն օրերը, երբ գրում էր իր վերջին գործերը գրական բարբառով: Նա յուրաքանչյուր դարձվածք, յուրաքանչյուր բառ երկար ժամանակ ինքնում էր, չափում և հետո գրում: Նա գրական լեզուն լավ չէր ուսումնասիրել և գրելիս միշտ խորհրդակցում էր բարեկամների ու ծանոթների հետ: Մի քանի անգամ էլ նա ինձ է բռնել փողոցում:

— Բարև ձեզ, հարգելի պարոն Շիրվանզադե, — սկսում էր նա ծանր ու բարակ, ձեռնոցը հանելով, — ասացեք խնդրեմ, ո՞րն է ավելի գեղեցիկ՝ «ես պատում եմ նրա՞ն», թե՞ «ես նրան պատում եմ»:

— Երկու ձևն էլ գեղեցիկ է, բայց, Գավրիլ Նիկիտիչ, նեղություն մի կրեք ձեր ձեռնոցը հանելու, թողեք սեղմեմ ձեր ձեռն այդպես:

— Ո՛չ, ո՛չ, չի կարելի, քաղաքավարությունը պահանջում է: Հա՛, ուրեմն ձեր կարծիքով երկուսն էլ գեղեցիկ են, բայց էլի ասացեք՝ ո՞րն է ավելի դուրեկան հնչում:

— Ես պատում եմ նրան, — ասում էի, օձիքս ազատելու համար:

— Բայց «ես նրան պաշտում եմ» էլ է գեղեցիկ: Շնորհակալ եմ, թող Աբգարին էլ հարցնեմ, տեսնեմ նա՞ ինչ է ասում: Ցտեսություն, ցանկանում եմ ձեզ առողջություն և հաջողություն, խնդրեմ հարգանքներս մատուցանեք ձեր հարգելի ամուսնուն:

Եվ այսպես, նա հարցնում էր մեկին, մյուսին, երրորդին և հետո գրում էր, ջնջում, նորեն գրում, տասն անգամ փոփոխում ու գրում: Եվ միայն լեզվի կամ ոճի մասին չէր խորհրդակցում ուրիշների հետ, այլև բովանդակության, գաղափարի: Գլխավոր իր գործերը գրելիս նրա խորհրդակիցներն են եղել՝ Գևորգ Զմշկյան, Միհրդատ Ամերիկյան դերասանները: Այս բանը խոստովանում է Սունդուկյանցն իր երկերի առաջաբանում:

Ներկայացումների վերաբերմամբ Սունդուկյանցը պահանջկոտ էր ու բծախնդիր: Դերասաններին ուղղակի բարոյական ինկվիզիցիայի էր ենթարկում իր ցուցմունքներով, յուրաքանչյուր թեթև շեղում բնագրից նրան խորապես վշտացնում էր: Հաճախ ես թատրոնում նրա հով էի նստում և տեսնում էի, թե ինչպես է վրդովվում այս կամ այն սխալից:

— Անիծվա՛ծ, — արտասանում էր նա, — հազար անգամ ասել եմ այդպես չէ...

«Պեպո»-ն Սունդուկյանցի ավետարանն էր, և նրա յուրաքանչյուր պարբերությունը մի պատգամ էր:

Առանձնապես խստապահանջ էր նա Թիֆլիսի բարբառը ճշգրիտ արտասանելու վերաբերմամբ: Այդ բարբառի արտասանությունը վերին աստիճանի անգային է, մանավանդ նրա վրացերեն բառերը: Վրացերեն այբուբենի մեջ մի տառ կա, որ ավելի կոշտ է, քան մեր ղ տառը: Սունդուկյանցը պահանջում էր, որ այդ անգային բաղաձայնը հնչվի ամենայն ճշտությամբ: Նրա պիեսների առաջաբանում կա հեղինակի բացատրությունն այդ մասին: Տպարանին նա պատվիրել էր ձուլել տալ առանձին տեսակի մի ղ, որի հնչյունը պիտի համապատասխաներ վրաց բաղաձայնի հնչյունին:

Հիշում եմ տպարանատեր Հովհաննես Մարտիրոսյանի զանգատը.

— Ախպե՛ր, Ադամ ու Եվայից սկսած մեր օրհնած ղ.-ի գլուխը բաց է եղել, հիմի եկել է մի ինչ-որ Սունդուկյանց ու պահանջում է խեղճի գլխին մի չալմա դնեմ: Դա օրե՞նք է:

Սունդուկյանցը մի պատուհաս էր գրաշարների համար: Ոչ ոք չէր ուզում նրա գրքերը շարել: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նա առնվազն տասը անգամ ինքն էր սրբագրում ու փոփոխում և մի այդքան անգամ էլ սրբագրիչին էր ստիպում ստուգել: Շատ անգամ եմ Սունդուկյանցին տեսել վրդովված այս կամ այն տառի վերաբերմամբ գրաշարի հետ վիճելիս:

— Պարոն, ես ձեզ ասում եմ հ.-ի գլուխը կոտրված է, լ.-ի պոչերը չկա, ուրեմն պետք է փոխել:

Իր գրքերը Սունդուկյանցը հրատարակում էր ընտիր թղթի վրա: Երբ տպագրությունը, երկար ամիսներից հետո, վերջանում էր, ինքն անձամբ մի-մի օրինակ տանում էր խմբագիրներին և հետո հարցնում էր նրանց տրամադրության, առողջության, գործերի դրության, երեխաների, կնոջ և այլնի մասին:

Ես չեմ տեսել մի ուրիշ հայ, որ ժամանակի վերաբերմամբ լիներ այնքան ճշտապահ, որքան Սունդուկյանցը: Ժամադրության որոշյալ վայրկյանին նա տեղումն էր: Նույնը պահանջում էր ուրիշներից և վրդովվում էր ամենափոքր հապաղման դեմ: Անչափ զգույշ էր իր անձնական պիտույքների, մանավանդ առողջության վերաբերմամբ: Աշխատում էր իրան զվարթ ու կենսախինդ մարդ ցույց տալ, բայց իրոք այդպես չէր. ոգելից ըմպելիքների վերաբերմամբ զգաստ էր: Խմում էր չափավոր: Չէր ծխում և ուրիշների ծխից էլ փախչում էր սարսափով: Ամեն օր ճաշից հետո ոտքով գնում էր Մուշտայիդ անուշով պարտեզը, զբոսնում և ոտքով էլ վերադառնում էր, այսպիսով կատարելով մոտ տասը կիլոմետր ճամփորդության: Ամեն ջանք գործ էր դնում իր երբեմնի գեղեցկության դժգույն հետքերը պահպանելու: Հագնվում էր միշտ խնամքով: Գլխին դնում էր ձմեռը կամ ցիլինդր, կամ իր մոխրագույն մազերի գույն մի մորթե գդակ, թեք ձևով, այնպես, ինչպես թուրք բեգերը: Երբեք առանց ձեռնոցների ու չսափրված դուրս չէր գալիս տնից:

Քառասունհամյա կոկետուհու չափ սիրում էր հաճոյախոսություններ իր արտաքինի մասին: Ծանոթները գիտեին նրա այդ թուլությունը, ուստի հանդիպելիս չէին մոռանում ասել.

— Վա՛հ, Գաբրիել Նիկիտիչ, աչքով չտամ, օրեցօր բացվում ես գարնան թայդուլի պես:

— Դրուստ եմ ասո՞ւմ, չէ՛, գեհացվալե, ծերացել եմ, — կոտրատվում էր Սունդուկյանցը դարաբաղցի «այանի» պես:

Երբ դեռ չգիտեի Սունդուկյանցի այդ թուլությունը, մի անգամ, վողոցում հանդիպելով, ասացի.

— Սրտիդ թող չդիպչի, Գավրիլ Նիկիտիչ, այսօր աչքիս մի ֆիչ գունատ եմ երևում:

Սունդուկյանցը ցնցվեց:

— Վա՛, լավ է, որ ասացիք՝ սրտիդ չդիպչի, թե չէ շատ պիտի դիպչեր:

Բայց մարդն արդեն վիրավորվել էր:

Այնուհետև նրան հանդիպելիս կամ խույս էի տալիս, կամ ուրիշների նման ես էլ շեշտում էի նրա «ջահելությունն ու գեղեցկությունը: Մարդն ինքն իրան խաբում էր և դրանով ապրում, այնինչ անողոք ժամանակը օր-օրի վրա ծռում էր նրա ողնաշարը:

Սունդուկյանցի երկրորդ թուլությունը գեղեցիկ սեռն էր: Սիրում էր պտտվել ֆիչ թե շատ սիրուն տիկինների շուրջը, հաճոյախոսել, նույնիսկ հետապնդել: Մի ժամանակ նա լրջորեն սիրահարվել էր մի հայ տիկնոջ վրա, որ իր հարևանուհին էր: Երեկոները նստում էր պատշգամբի վրա և թառ նվագում՝ Սայաթ-Նովայի պես երաժշտությամբ արտահայտելով իր սերը: Տիկինը, թառի ձայնը լսելով, դուրս էր գալիս դիմացի պատշգամբ, և նրանց մեջ տեղի էր ունենում լուռ սիրաբանություն:

Սունդուկյանցը չէր թաքցնում իր թուլությունը, ընդհակառակը, երբեմն պարծենում էր նրանով: Ուրսուն տարեկան էր արդեն, երբ մի օր ինձ ասաց.

— Գիտե՞ք, եթե այժմ էլ մի սիրուն կին ինձ ժամադրություն տա, վազելով կգնամ: Կգնամ, թեկուզ անձրև, ձյուն, կարկուտ, փոթորիկ, երկրաշարժ լինեն: Այս փուչ աշխարհում ի՞նչն է ավելի անուշ, քան կինը:

Մարդն իր տեսակի Անատոլ Ֆրանս էր...

Սունդուկյանցն ամենից երկարակյաց հայ գրողը եղավ: Գուցե իր նյութական ապահովության շնորհիվ: Այդ տեսակետից նա միակն էր հայ գրողների մեջ: Նա վախճանվեց ուրսուն և յոթ տարեկան հասակում, մինչև վերջին վայրկյանը կռվելով ավերիչ ժամանակի դեմ: Նա իր ձեռով գրեց մի կտակ, որ թաղման օրը տպվեց լրագիրներում: Նա պատվիրում էր թաղումը կատարել անշուք: Առանձնապես նա դեմ էր շքեղ դիակառքին:

«Էդ մինձ, մինձ բմբուլներով ձիերն ինձ ջգրեցնում են: Թող իմ դագաղը գերեզման տանեն չորս ղոչաղ կինտոներ: Նրանք ծոի նման կթռցնեն ինձ»:

Հետո մի բնորոշ կետ.

«Ես չեմ ուզում, որ ինձ համար արձան կանգնեցնեն, թե ուզում են, թող Պեպոյի վրա արձան դնեն»:

Այդ կտակն ինձ վրա գեթ տպավորություն գործեց: Սունդուկյանցը սեթևեթում էր.

Թաղման մասնաժողովը կատարեց Սունդուկյանցի կամքը, կինտոները նրա դագաղը իրենց ուսերի վրա տարան Վանքի տաճարը, որի գավթումն է այժմ հանգչում ճշանավոր թատերագրի աճյունը: Բայց Պեպոյի արձանը դեռ չկա:

Սունդուկյանցը իսկական հայ թատերագրության իսկական հիմնադիրն էր. Կարինյանի, Հեխինյանի, Պեշկինթաշլյանի ազգայնական միտումնավոր փորձերն արժեք չունեն ոչ ըստ բովանդակության, ոչ ըստ ձևի:

Սունդուկյանցի արժեքավոր երկերը Թիֆլիսի բարբառով գրվածներն են և միայն այդ բարբառով են նրանք ունկնդրելի և հետաքրքրական: Գրական լեզվի վերածելով նրանք կորցնում են իրանց արժեքը, ինչպես այդ ցույց տվեց թուրքահայերի համար եղած փորձը, Կ.Պոլսում «Պեպո»-ն գրական լեզվով փոխադրվեց և հաջողություն չունեցավ:

Սունդուկյանցը իրապաշտ էր, անաղարտ, ուզում եմ ասել՝ նրա գրիչը զերծ էր նատուրալիզմի շարավից: Նյութի տեսակետից նա հայ Օստրովսկի էր: Ինչպես ռուս թատերագիրը, նա խարազանեց «խավարի թագավորությունը», այսինքն վաճառականությունը: Նրա Արութին Զիմզիմովի և Օստրովսկու «անդրմոսկվագետի» կուլակի մեջ տարբերությունը հագուստների մեջ է, ներքուստ նրանք միևնույն խավարի ծնունդն են:

Կատաբելագույնը Սունդուկյանցի տիպերի շարքում Գիխոն է — «Պեպո»-յի մեջ: Բրոնզյա մի արձան է, որին ժամանակը չի կարող շուտով մաշել: Արևելյան դանդաղկոտության մարմնացումն է Գիխոն, որքան հին, նույնքան նոր: Նա երբեք չի մահանալ, վասնզի տիպերը չեն մեռնում, նրանք միայն իրենց հագուստն են փոխում, այսօր՝ չուխա, վաղը՝ ֆրակ:

Սունդուկյանցը չէր հետաքրքրվում ոչ հայ և ոչ օտար նոր գրականությամբ: Ինչ որ կարդացել էր շատ տարիներ առաջ-այն էր: Առհասարակ նա շատ էր զբաղված իմիմն իրանով: Մի տեսակ նարցիզ էր՝ իմիմն իր վրա սիրահարված: Նա ընկերային մարդ չէր, անտարբեր դեպի ամեն ինչ, որ որևէ առնչություն չուներ իր երկերի հետ: Ոչ մի երիտասարդ հեղինակ նրանից ոչ մի խրախուսանքի խոսք չի լսել, նա ոչ մի գրական շրջանի չի մասնակցել: Գոնե ես նրան ոչ մի տեղ չեմ հանդիպել իբրև գրական մարդու: Ինչ վերաբերում է ինձ, երբեք նրա բարեկամության արժանանալու փափագը չեմ ունեցել: Նրա մեկուսացումն ինձ համար եղել է խորթ և հակակրելի: Սակայն երբեք չեմ դադարել նրան հարգելուց որպես գրչի մարդու:

Սունդուկյանցը հակառակորդներ չուներ: Ուզում եմ ասել՝ պարբերական մամուլի մանր ու խոշոր մոծակները նրան չէին խայթում, ինչպես խայթում էին յուրաքանչյուրին, որ ինչ թե շատ շնորհալի գրիչ ուներ: Իր անսահման զգաստությամբ, իր կաշառիչ ձևերով, իր շոյիչ լեզվով, վերջապես իր պաշտոնական դիրքով գիտեր սանձահարել վայրահաչ գրչակներին: «Մշակ»-ի խմբագիրները նրա վերաբերմամբ միայն մի անգամ գործ ածեցին իրանց ժանգոտ զենքը: Այդ այն ժամանակ էր, երբ Սունդուկյանցն ինչ-որ կաթողիկոսական ընտրությունների օրերին իր ֆվեն տվեց «Արձագանք»-ի խմբագրին:

Մեկը նրանցից գրեց. «Սունդուկյանցը որպես մարդ այսօրվանից մեռած է»: Բայց Սունդուկյանցը իր անսահման էգոիզմով հանդերձ մարդ էր, մաքուր մարդ, և այդպես էլ մեռավ:

Նա մի սխալ գործեց և մեծ գրական գբաղմունքը դարձրեց երկրորդական, առաջին տեղը տալով իր պաշտոնին և տիտղոսին: Նա կարիք չուներ գեներալի ժապավենն իր կրծքին փաթաթելու, գերագույն ժապավենը նա ստացել էր Մելպոմենից: Նա չուներ կարիք և ցարական դրամի: Նա ուներ մի կալվածք, որ լիովին ապահովում էր նրա նյութականը: Եվ այս կողմից նա միակ բացառությունն էր հայ գրողների մեջ....

XV

ԲԱՆՏ ԵՎ ԱՔՍՈՐ

Նորեն ընկա մի միջավայր, որ ոչ մի կապ չուներ գրականության հետ:

Երբ ամուրի էի, ինչ հոգ ոչ միայն վաղվա, այլև այսօրվա մասին: Ապրում էի օր-ավուր, ինչպես կաչաղակը ծմեռը, մի օր կուշտ, երեք օր անոթի: Ես ունեի մի կտոր թուղթ ու գրիչ, այսքանը բավական էր պանիր-հացի հետ: Եվ մի ուրիշ բան — կամքի ու ժամանակի ազատություն — ամենաանհրաժեշտը գրողի համար:

Նույնը չեղավ, երբ իմ սիրով ու ցանկությամբ դարձա ընտանետեր: Ահա այդ ժամանակ էր, որ զգացի, թե ինչ անփոխարինելի գանձ է անհատի ազատությունը: Ես ունեի մի կամք, որ որբան ևս թույլ լիներ, կյանքի հարվածներին դիմադրելու չափ զորավոր էր, և ահա նա ջարդվել, երկու կտոր էր եղել, ինչպես գրանիտին զարնված սուրը: Գրակառություն և ընտանիք — երկու տրամագծորեն հակադիր տարրեր, որոնց մեջ կեղեքվում էր իմ խեղճ հոգին — ինչպես երկու վագրերի բերանն ընկած մի գառնուկ:

Երբ մարդ ստիպված է հոգալ թանկագին մերձավորների ամենօրյա պարեհը, նա անդամալույծ է որպես մտքի մշակ, վասնզի օր-օրի վրա բթանում են նրա զգացումները: Հոգին չի դիմանում ձերբակալմանն, նա ազատություն է փնտրում ինչպես վանդակված թռչունը: Բայց թող որբան ուզում է թռչկոտա, վանդակն ամուր է, որովհետև նա բաղկացած է սրտի նրբագույն թելերից — զավակներից... Ստիպված ես նրանց զոհել ոչ միայն գրիչդ, այլև կյանքդ...

Ծառայում էի Թիֆլիսի բաղաքային վարչության մեջ մի համեստ պաշտոնով: Նոր սկսել էի գրել «Աբսեն Դիմաքսյան»-ը: Վեպը պատմվածք չէ, պահանջում է մտքի մեծ աշխատանք, այնինչ ժամանակիս լավագույն մասը տրված էր պաշտոնիս առավոտյան ութից մինչև չորս ժամը երեկոյան: Բայց չկա դրություն, որ ելք չունենա, գոնե ես շուտով գտա և շատ հասարակ միջոցով: Բախտիս բերմամբ անմիջական մեծավորս շատ բարի և շատ ծույլ մի մարդ էր, դեմքով զարմանալի նման Վիկտոր Հյուգոյին: Նա համարյա թե ոչինչ չէր անում, բացի թղթեր ստորագրելուց, իր ստորադրյալներին թեթևորեն հսկելուց: Նա ամբողջ օրն անեկդոտներ էր պատմում և ամենին խնդրում էր նույնն անել երևի իր ռեպերտուարը հարստացնելու համար: Տեսնելով, որ նա մի առանձին ուշադրություն չի դարձնում ինձ վրա, որոշեցի օգտվել դրանից: Սկսեցի ծառայության ժամերը կրճատել թե գլխից և թե պոչից: Այդ դժվար չէր անել, որովհետև իմ ամբողջ պարտականությունն էր երեկոները գործակալներից ընդունել գրավոր զեկուցումներ շուկայի գների մասին և հետևյալ օրը ներմուծել մատյանի մեջ: Այստեղ կային ամեն տեսակի ապրանքներ, սկսած կովից, եզից, ոչխարից և այծից մինչև կաղամբը, բողկը, գետնախնձորը, թթու դրած վարունգը և այլն: Շատ անգամ մտքով զբաղված «Աբսեն Պիմաքսյան»-ով, գներն ու ապրանքները խառնափնթոր էի. օրինակ՝ սոխի դեմ գրում էի եզան գինը-գլուխը 30-ից մինչև 50 ռուբլի գինը, իսկ տանձի առջև գրում էի այծի կամ ոչխարի գինը և այլն: Բայց այդ ոչինչ, ուշադրություն դարձնող չկար, գլխավորն այն էր, որ մատյանը լեցնեի թվանշաններով, իսկ այդ ընդամենը երկու ժամվա գործ էր: Ես էլ արդեն վճռել էի այդքանից ավելի չգործել և կրճատելով, կրճատելով՝ վերջը հասա մի ժամի: Լրանում էր այդ ժամը, այլևս ոչ մի շղթայով ինձ պահել չէր կարելի:

Գրեթե մի ամբողջ տարի իմ սաբոտաժն անցավ անկատելի — գոնե ինձ այդպես էր թվում, մեծավորս շարունակ իր անեկդոտներով էր զբաղված: Վերջապես, երբ մի օր գործս ավարտած-ուզում էի փախչել, նա ասաց.

— Սպասեցեք մի րոպե... ես կանգ առա:

— Ասացե՛ք խնդրեմ դուք այժմ գո՞հ եք, — հարցրեց մեծավորս:

— Ինչո՞վ, Եվգրաֆ Ա. — ի՞նչ:

— Ձեր պաշտոնով:

— Շատ գոհ եմ:

— Տեսնում եմ, բարեկամս, տեսնում եմ:

— Ի՞նչ եք ուզում ասել, Եվգրաֆ Ա-ի՞չ:

— Լսեցե՛ք, բարեկամ: Մի օր Մոլլա Նասրեդդինը տեսնում է, որ իր էշը շատ է ուտում: Մտածում է՝ ի՞նչ կարիք կա էշին այդքան գարի տալու, իսկապես նա կարող է առանց ուտելու էլ ապրել, միայն պետք է սովորեցնել նրան: Եվ Մոլլան սկսում է էշին սովորեցնել, կամաց-կամաց պակասեցնելով նրա կերը: Վերջին օրը տալիս է նրան մի մսխալ գարի, և էշը սատկում է անոթությունից: «Ափսո՜ս, — ասում է Մոլլան իր կնոջը, — եթե էշս մի օր էլ մնար, արդեն սովորել էր առանց կերի ապրել»: Բարեկա՛մ, դուք ձեր պաշտոնի հետ վարվեցիք ճիշտ այնպես, ինչպես Մոլլա Նասրեդդինն իր էշի հետ:

— Ուրե՞մն, — հարցրի:

— Ձեր էշը սատկեց:

— Սատկե՞ց:

— Այո: Այսօր բաղաքային վարչությունը որոշեց ձեր պաշտոնը լուծարքի ենթարկել:

— Մնացեք բարով, — ասացի ես առանց մազաչափ վշտանալու, — միայն թույլ տվեք ասել, Եվգրաֆ Ա. — իշ, որ ձեր պաշտոնն էլ օրենքով պետք է լուծարքի ենթարկել:

— Ինչո՞ւ:

— Որովհետև, որքան գիտեմ, բաղաքային ինքնավարության օրենսդրության մեջ անեկդոտիստի պաշտոն չի նախատեսված:

Այդպես վերջացավ իմ երեքամյա ծառայությունը Թիֆլիս բաղաքին:

«Արսեն Դիմաքսյան»-ը ավարտեցի ուր ամսվա մեջ: Նա տպվեց Ավետիք Արասխանյանի «Մուրճ» ամսագրում և անմիջապես առանձին հրատարակվեց: Հետո գրեցի «Ցավագարը» («Զար Ոգի»), որտպվեց «Հորիզոն» անունով մի ժողովածուի մեջ Փիլիպոս Վարդազարյանի հրատարակությամբ:

Այնուհետև ինձ պաշարեց մի անսովոր անտարբերություն դեպի գրականությունը: Ոչ միայն գրելու, այլև կարդալու պահանջ չէի զգում, սակայն իմ անհանգիստ հոգին չէր կարող անգործ մնալ: Իմ միտքը պահանջում էր զբաղմունք գրականությունից հեռու, և ահա մի օր ես հանկարծ դարձա «հնչակյան»:

«Հնչա՞կ», ես ոչ մի կապ չունեի այդ թերթի ու նրա ղեկավարների հետ և չէի էլ կարդում, գիտեի, որ թերթի անունը փոխառնված է Հերցենի «Колоколь»-ից, այն էլ սխալ թարգմանությամբ: Մի օր ես Ավետիս Նազարբեգյանից (թե Նազարբերգ — չգիտեմ) ստացա մի նամակ, մեջը երկու օրինակ իր լուսանկարից: Ինչ էր գրում, մոռացել եմ, — բայց լավ հիշում եմ, որ փափագում էր ինձ հետ նամակագրություն ունենալ, երկու լուսանկարներից մեկի վրա մակագրված էր իմ, մյուսի վրա Գրիգոր Արծրունու անունը: Ես նայեցի լուսանկարին և մի տեսակ նողկանք զգացի: Նազարբեգյանը նկարվել էր բայրոնյան կեցվածքով: Կեղծիք և փանֆարոնություն էր բուրում նրա ինքնահավան դեմքից: Կարծես, մարդն ասում էր. «Տեսնում եք՝ ո՛րքան գեղեցիկ եմ»: Ես պատռեցի լուսանկարը նամակի հետ հենց փոստատունը և գցեցի փողոց: Տարիներ անցած, երբ ես Փարիզում իմ բարեկամի հանձնարարությամբ ստիպված էի Նազարբեգյանին հանդիպել, տեսա, որ իմ հեռավոր տպավորությունը սխալ չի եղել: Սակայն հնչակյան կուսակցությունն ուներ և ուրիշ ներկայացուցիչներ — Ռուբեն Խանզադյան, Մուրադ, Մարիամ Նազարբեգյան, Գրիգոր Վարդանյան, Շմավոն (Գաբրիել Կաֆյան) և մի բանի ուրիշներ, որոնց մասին լսել էի նպաստավոր կարծիքներ: Ահա ինչու իմ որոնող հոգին, Ավետիս Նազարբեգյանին արհամարհելով, բաշեց ինձ հնչակյանների շրջանը, մանավանդ որ այնտեղ էր իմ բարեկամ Ղազարոս Աղայանը: Մասնակցելով այսպես կոչված «Թիֆլիսի կոմիտեի» մի բանի նիստերին, շուտով համոզվեցի, որ այդտեղ ես մի կաշվի մեջ չեմ: Իմ հիասթափումը մարդկանցից չէր (հնչակյաններն անհամեմատ ավելի համեստ մարդիկ էին, բան դաշնակցականները), այլ հայացքների տարբերությունից: Բանն այն է, որ նիստերում գրեթե ամեն անգամ խնդիր էր հարուցվում տեռորի մասին: Ցանկություն էր արտահայտվում սպանել այս կամ այն հարուստին, որ

չէր ուզում կուսակցությանը դրամ տալ: Այս տեսակ առաջարկները միշտ հանդիպում էին Ղազարոս Աղայանի և իմ դիմադրությանը: Տեառըը մենք համարում էինք անբարոյականություն: Մենք ասում էինք՝ հայ դատը չպետք է ապահանել անհատների արյունով: Այլ բան է, երբ տեառըը գործադրվում է մի մատնիչի վերաբերմամբ, բայց դրամի համար թափել մարդկային արյուն՝ դա կնշանակի պղծել մի հեղափոխական գործ, որպիսին համարում ենք մենք մեր անելիքը: Կոմիտեից դուրս կային մարդիկ, որոնք պատրաստ էին կուսակցության անունով գործել ամեն տեսակի ոճիրներ դրամի համար: Դրանք էին, որ դրսից ազդում էին կոմիտեի անդամներից ոմանց վրա: Ես հիշում եմ մեկին Ա. — ն անունով, որի կատաղի աչքերին նայել չէր կարելի, երբ նա խոսում էր տեառըի անհրաժեշտության մասին: Փոքրահասակ մի երիտասարդ էր՝ լայն թիկունքով, ամուր, ինչպես պողպատից ձուլված: Արյուն էր հոսում նրա բերանից և միշտ աջ ձեռքը վարտիքի գրպանում խաղում էր անբաժան ռեվոլվերի հետ: Արդեն նա մի քանի սպանություններ գործել էր զանազան պատճառներով, և այժմ նրա համար մարդ մորթել թե հավ -միևնույնն էր: Նա էր, որ շարունակ կրկնում էր.

— Մեր հարուստների կաշին հաստ է, միայն գնդակը կարող է ծակել:

Բարեբախտաբար, նա հարգում էր թե՛ ինձ և թե՛ Աղայանին, և մենք կարողանում էինք նրան սանձահարել թեև մեծ դժվարությամբ:

Ամառը 1895 թվականին որոշեցի մի երկու ամսով գնալ Ռուսաստան զբոսանքի համար: Հնչակյան կոմիտեն խնդրեց ինձ կանգ առնել մի քանի հայաբնակ քաղաքներում և կուսակցության օգտին թե՛ պրոպագանդ մղել և թե՛ դրամ հանգանակել: Խոստացա, բայց խոստումս կատարեցի շատ թույլ: Զգում էի, որ քաղաքական բարոզչի կոչում չունեմ: Բավականանում էի միայն թուրքահայերի թշվառ կացությունը նկարագրելով: Ինչ վերաբերում է հանգանակության, տալիս էի կոմիտեի հասցեն, իսկ ինքս դրամ չէի ընդունում:

Օգոստոսին Պետերբուրգումն էի, երբ լուր ստացա Ղազարոս Աղայանի, Խաչիկ Վարդանյանի, Ատրպետի և ուրիշ մի քանի հնչակյանների ձերբակալման մասին: Շտապեցի վերադառնալ Թիֆլիս: Համոզված էի, որ ես էլ պիտի ձերբակալվեմ, ուստի չէի ուզում Պետերբուրգից Թիֆլիս ուղարկվեմ էտապով: Ծայրահեղ հալածանքի օրերն էին, կառավարությունը հայերի հետ հանուն չէր անում և բանտերը լեցնում էր շատ անգամ անմեղ պատանիներով: Այդ կողմից ամենից շատ տուժում էր Ներսիսյան դպրոցի աշակերտությունը:

Թիֆլիս վերադառնալով, հակառակ իմ սպասածին, իսկույն չձերբակալվեցի: Երկու ամսի չափ ազատ էի և ամեն վայրկյան սպասում էի կապույտ մունդիրներին: Ձերբակալվելուց երկյուղ չունեի, մտահոգված էի միայն՝ «ի՞նչ պիտի ասեմ», որ հեղափոխակա՞ն եմ, բայց չեմ. ի՞նչպես վերցնեմ ինձ վրա այդ պատիվը: Որ դիլլետա՞նտ եմ, բայց հեղափոխությունը գրականություն չէ և ոչ էլ թատրոն, ինչո՞ւ ծիծաղելի դառնամ: Հերքե՞մ ամեն բան և ասեմ՝ ոչինչ չգիտեմ, բայց ամոթ է, և ո՞վ կհավատա ինձ: Դրությունս երկդիմի էր, մի կողմից տխուր, մյուս կողմից զավեշտական: Ես նման էի այն դերասանին, որ դերը լավ չսերտած բեմ է դուրս եկել ու չգիտե ինչ ասի, և, այնուամենայնիվ, ստիպված է մի բան ասել:

Վերջապես ձերբակալվեցի 1895 թվականի դեկտեմբեր ամսին: Մաքսիմ Գորկին 1915 թ. Պետերբուրգից ինձ գրած մի նամակում հիշեցնում էր, թե իր բանտարկության ժամանակ, այն է՝ 1893 թվականին, ես էլ եմ եղել բանտարկված Մետեխի բերդում: Անկասկած, հարգելի բելլետրիստը սխալվում է, թե իրավ մեր բանտարկությունը եղել է միաժամանակ, ապա ոչ 1893, այլ 1895 թվականին: Իմ բանտարկության տարին ես լավ եմ հիշում:

«Հեղափոխական» լինելուս միակ փաստը ժանդարմերիայի ձեռքում մի անզգույշ տղայի նամակն էր: Սա մանկական պարծանքով գրում էր ընկերոջը, թե այսինչ մարդը (այսինքն՝ ես) ուղարկված է Ռուսաստան ամբողջ հայությունը հնչակյան դարձնելու և մի քանի միլիոն ռուբլի ժողովելու առաքելությամբ, և թե շուտով... և այլև և այլն: Այնինչ ես ոչ մի քաղաքում ոչ մի հնչակյան խումբ չէի կազմել և ոչ, մանավանդ, միլիոններ հանգանակել:

Ինձ պահեցին մեկուսի բանտարկման մեջ երեք ամիս, որից հսաև ու մեկ օր Մետեխի բանտում, մնացյալ ժամանակը նահանգական բանտում:

Կյանքումս առաջին անգամ զրկվելով ֆիզիկական ազատությունից, բարոյապես տառապում էի անսահման: Ինչո՞ւ: Բանտն ինքնըստինքյան մի սոսկալի բան չէ, էականը բանտարկյալի մտքի գործողությունն է: Եթե ես ինձ համարեի հեղափոխական, եթե զգայի, որ ձերբակալված եմ մի կարևոր գործի պատճառով, անկասկած, իմ դրությունն իմ աչքում չէր լինի ծիծաղելի, ինչպես էր, այլ, ընդհակառակը, հավանական էր, որ ես ուրիշների պես ինքս ինձ հերոսացնեի: Բայց այլ էր իմ հոգեբանությունը, ես չունեի մի մազաչափ հավակնություն հեղափոխականի էդամիդ հագնելու, որովհետև ըստինքյան ամբողջ հնչակյան կուսակցությունը մի խոշոր բան չէր իմ աչքում...

Մետեխի բերդում ամեն կերպ աշխատում էի որևէ կապ ունենալ Ղազարոս Աղայանի հետ, որի սենյակն իմին դեմ էր, և չէի հաջողում: Լսում էի երբեմն նրա հուժկու ձայնը: Մերթ երգում էր, մերթ բարձրածայն կարդում, Ավետարան թե Աստվածաշունչ-լավ չեմ հիշում, կից սենյակի մեջ Ատրպետն էր: Նա նույնպես երգում էր, բայց հազիվ լսվում էր նրա ձայնը երկու մետր հաստություն ունեցող բարե պատի ետևից:

Փորձեցի Ատրպետի հետ պրիմիտիվ հեռախոսական կապ հաստատել այբբուբենի միջոցով: Երեք օր պատին զարկելուց հետո, վերջապես, հասկացրի նրան իմ միտքը, բայց արդյունքը՝ չնչին: Մի բառ արտահայտելու համար հարկավոր էր մի բանի հարյուր անգամ պատին զարկել:

Մի անգամ իմ հարցիս պատասխանը եղավ.

— Սպասիր, ճաշ են բերել, ուտեմ, հետո կխոսենք... Այնուհետև փորձերս դադարեցրի:

Մի ուրիշ անգամ Ատրպետն ինքն սկսեց կատաղաբար զարկել պատին: Կարծեցի մի շատ կարևոր լուր ունի հաղորդելու: Համբերությամբ ականջ դրեցի, և վերջը դուրս եկան այս խոսքերը.

— Եթե մի երկու ամիս էլ ինձ այստեղ պահեն, բոլոր կիսատ վեպերս կվերջացնեմ:

Ես ուզում էի նրանից իմանալ՝ ինչ ցուցմունք է տվել ժանդարմերիային, որպեսզի ես էլ համապատասխան ցուցմունք տամ, իսկ նրա գլուխը իր վեպերով էր զբաղված: Երանելի՜ մարդ: Չգիտեմ նա ինչպես էր ձեռք բերել թուղթ, գրիչ, բայց ինձ արգելված էր այդ: Ինձ նույնիսկ կարդալու միջոց չէին տալիս, ասելով, որ հաղաբական բանտարկյալները, բացի Ավետարանից ու Սաղմոսից, ուրիշ գիրք կարդալու իրավունք չունեն: Մի անգամ արտաքնոց գնալու ժամանակ կորրիդորում մի հայ բանտարկյալ գաղտուկ ձեռիս մեջ սեղմեց մի մատիտ: Չեմ կարծում՝ որևէ թանկարժեք նվեր այդ օրերին ինձ այնքան ուրախություն պատճառեր, որքան այդ կես մատնաչափ փայտի կտորը: Թուղթ չկար — ի՞նչ փույթ, սկսեցի գրել կիրա ճերմակ պատի վրա: Հոգ չէ, թե ինչ էի գրում, միայն թե երևակայեի, որ միտքս զբաղված է: Ավա՜ղ, երկար չտևեց իմ ուրախությունը. հանկարծ մատիտը ընկավ ձեռիցս հատակի վրա և գլորվելով մտավ մի ճեղքի մեջ անհետացավ: Դա մի հարված էր ինձ համար, ես արտասվելու չափ վշտացա, ինչպես մի մանուկ, որի ձեռից խլել էին իր սիրած խաղալիքն ու աչքերի առջև փշրտել:

Բանտից դուրս գալուց հետո իմացա, որ ինձ մատիտ տվող բանտարկյալը մարդասպանության համար տասնուհինգ տարվա տաժանակիր աշխատանքի դատապարտված մեկն է: Եվ այդ ոճրագործը բյուր անգամ մարդասեր եղավ, քան մի հայ բուրժուա: Պատմեմ եղելությունը: Մետեխի բերդի բնակչությունն այդ ձմեռվա արտաքո կարգի սառնամանիքի հետևանքով ցրտից տառապում էր, մանավանդ մենք մեկուսացյալներս: Վառարան յուրաքանչյուր սենյակում կար, բայց վառելիք չէին տալիս: Բերդի տնտեսական կարիքների մատակարարումը օրենքի համաձայն բաղաքային ինքնավարության վրա էր: Ընտրված էր իրավասուներից մի մասնաժողով, որի պարտականությունն էր, ի միջի այլոց, վառելիք մատակարարել: Ես անձամբ ծանոթ էի այդ մասնախմբի նախագահի հետ. նրա անունն էր Նիկոլայ Սպիրիդոնովիչ Փրիդոնով, մի հղփացած հաստապարանոց, որ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ եղել էր կապալառու ու հարստացել էր: Բանտապետի թույլտվությամբ գրեցի մի նամակ կնոջս, որ գնա, խնդրի այդ մարդուն

ազատել խեղճ բանտարկյալներին, ի միջի այլոց և մեզ, հաղաբակաո մեղադրյալներիս, ցրտից հիվանդանալու վտանգից: Ճարպակալած հայ մոբալաբը ոչ միայն խնդիրս արհամարհում է, այլև վիրավորում է կնոջս իր շրջանին հատուկ անկիրթ ընդունելությամբ:

Տարիներ անցան, մի օր Փարիզում այդ մարդը մի հասարակության մեջ մոտեցավ ինձ բարևելու: Ես երեսս շուռ տվեցի, նրա ձեռը մնաց կախված օդի մեջ: Նրա համար մեծ անարգանք էր, որովհետև ներկա էին մարդիկ, որոնց նա երկրպագում էր և որոնց հարգանքն էր մուրում:

Ջգայուն մարդի համար մեկուսի բանտարկությունն ավելի տաժանելի է, քան ինքը տաժանակիր աշխատանքը: Աշխարհից կտրված, մարդկանցից հեռու մեկուսացյալի միտքը զբաղմունք է պահանջում, և եթե այդ զբաղմունքը չկա, նա տառապում է անհուսորեն: Ես չէի կարողանում իմ միտքը կենտրոնացնել մի որևէ նյութի վրա, և ինձ թվում էր, որ իմ անգբաղ գլխի մեջ տիրում է մի ինչ-որ շփոթություն: Դրսից եկած ամեն մի ձայն ինձ գրգռում էր: Առանձնապես անտանելի էր ինձ համար երեկոյան ութ ժամից մինչև չորսը կորրիդորում անցուդարձ անող հսկիչի միապաղաղ քայլվածքը: Նրա կոշիկների երկաթյա կրունկների յուրաքանչյուր զարկը տախտակյա հատակին մի հարված էր իմ գանգին: Ինձ թվում էր, որ կարող եմ խելագարվել այդ ժամացույցի նման կանոնավոր և մոնոտոն զարկերից: Մի անգամ հերթական հսկիչին ասացի.

— Խնդրում եմ, եթե կարելի է, ձեր քայլվածքը մի քիչ զանազանացրեք:

— Ի՞նչպես, — հարցրեց հսկիչը զարմացած:

— Ա՛յ, օրինակ, առաջ գնալիս ծանր քայլեցեք, ետ գնալիս՝ արագ, մի խոսքով՝ տարբեր քայլերով և ոչ միատեսակ:

Մարդը ծիծաղեց, բայց նայելով ինձ, տեսավ, որ կատակ չեմ անում, ուսերը վեր քաշեց ու հեռացավ: Պարզ էր, որ նա ինձ անհոգմալ համարեց և շարունակեց քայլել նախկին եղանակով:

Մի գիշեր բանտի մեռելային լռությունը խափանվեց մի անսովոր աղմուկով: Ես անքուն էի: Մոտեցա լուսամուտին, նայեցի դեպի գավիթ: Բանտի երկրորդ հարկում, դիմացի պատշգամբի վրա բանտապահները ծեծում էին շղթայակապ բանտարկյալներին:

— Բե՛յ, բեյ, էտու սվոլոչ, — գոռում էր բանտապետը խռպոտ ձայնով: Եվ գազանացած բանտապահները հատակի վրա սփռված կիսամերկ մարմինները ջարդոտում էին իրանց երկաթյա կրունկներով: Մի քանի մարմիններ պատշգամբից թավալվեցին գավիթ արյունաշաղախ ներքնազգեստով:

Ես պառկեցի, գլուխս թաքցրի վերմակի տակ, որ չլսեմ թշվառների հուսահատական գոռում-գոչյուններն ու հեծկլտանքները:

Հետևյալ առավոտ հերթապահ հսկիչը իմ հարցին պատասխանեց, թե «սրիկաները, հակառակ բանտապետի կարգադրության, կեսգիշերին թուղթ էին խաղացել»:

— Ամե՞նքը, — հարցրի ես:

— Ոչ, իհարկե, չորսը միայն:

— Բայց ինչո՞ւ այդքան մարդու...

— Որովհետև բոլորը միևնույն աղբակույտից են:

Մի ուրիշ գիշեր զարթնեցի մի կնոջ աղաղակից: Նայեցի լուսամուտից. երկու բանտապահ նրա թևերից քաշելով դուրս էին բերում կանանց բաժնից: Կինը անզոր դիմադրում էր, գոռալով.

— Ձե՛մ ուզում, չե՛մ ուզում, թողե՛ք:

Հետևյալ օրը հերթապահն ասաց, որ այդ կնոջ մոտ ասեղներ են գտել, ու դրա համար բանտապետը նրան դատապարտել է կարցերի մի շաբաթ ժամանակով: Պարզվել է, որ կինը ասեղները ստացել է տնից ուղարկված հացի մեջ:

— Ինչո՞ւ համար, — հարցրի ես հերթապահին:

— Կարի համար:

— Կար անելը կանանց արգելվա՞ծ է:

— Իհարկե, օրենքի դեմ է:

Մի շաբաթ անցած՝ նորեն լսեցի նույն կնոջ աղաղակը: Նրան ազատել էին կարցերից, բայց հերթապահն ասաց, որ խելագարվել է:

Քննությունից հետո մեզ փոխադրեցին նահանգական բանտ: Այդտեղ մեր դրությունը համեմատաբար լավ էր. թեև այդտեղ էլ մեզ մեկուսացրել էին, բայց միջոց ունեինք օրվա մեջ կես ժամ հերթով գավթում զբոսնելու ժամանակ իրարու հետ խոսել երգելով մեկը գավթից, մյուսն իր լուսամուտից: Խաչիկ Վարդանյանը լայնորեն օգտվում էր այդ համեմատական ազատությունից, իր դերասանական ձիրքը ցուցադրելու համար: Իր օյիններով նա զվարճացնում էր ոչ միայն մեզ, այլև բանտապահներին, որոնք վերջ ի վերջո այնքան սիրեցին նրան, որ թույլ էին տալիս գավթում զբոսնելու կեսի փոխարեն մեկ ժամ, մինչև անգամ ավելի: Ես չեմ տեսել ուրիշ մի կոմիկի, որ այնքան բազմակողմանի հնարագետ լիներ, որքան այդ փոքրահասակ, ռետինի պես ճկուն և սնդիկի պես շարժուն մարդն իր սրամիտ կատակներով: Այո, այդ տեսակ մարդիկ վշտի սպեղանի են և մի տեսակ հակաթույն այն ժահրոտ ու ժանգոտ արարածների դեմ, որոնց իր մահճակալի ֆով տեսնելիս՝ հիվանդը շտապում է մի ժամ առաջ մեռնել: Նրանք օժտված են մի բառով, մի ժեստով, արցունքը ծիծաղի վերածել՝ մահամերձի դեմքին ժպիտ տալու երջանիկ տաղանդով: Լավագույն փիլիսոփաները են առօրյա կյանքի և ավելի օգտակար, քան շատ փիլիսոփաները...

Բանտը մի հին կիսախարխուլ շինություն էր, նախկին մաբսատնից մարդկային զնդանի վերածված: Իմ սենյակի առաստաղն ու անկյունները ծածկված էին սարդի հարյուրամյա ոստայնով, հատակի ճեղքերից ամեն վայրկյան լրբաբար դուրս էին սողում մկները և ծվծվալով այս ու այն կողմ վազում, մազի չափ չվախենալով իմ ներկայությունից: Երբեմն գիշերները ես զգում էի նրանց վազքն իմ երեսի վրա: Այդ օրերին մռայեսներն անհոգ իրենց մեջքը տաքացնում էին լուսամուտիս հատակի վրա:

— Այստեղ օձեր էլ կան, — ասաց մի օր հերթապահ հսկիչը, — մի անգամ բանտապետը բարձրացել էր կտուրի վրա: Մեր վառարանի ֆարուհանդ ծխնելույզի մեջ տեսավ մի պարան: Նա պարանը վերցրեց, և հանկարծ դուրս եկավ, որ դա օձ էր...

Իմ սենյակն ուներ երկու լուսամուտ, մեկը դեպի ընդհանուր բակ, մյուսը դեպի մի ուրիշ բակ: Այս երկրորդ բակումն էին բանտարկված այն դուխոբորները, որոնք, պատերազմի հակառակորդ լինելով, զինվորականությունից հրաժարվել էին և որոնք հետո, Լև Տոլստոյի որդու առաջնորդությամբ, գաղթեցին Ամերիկա: Քսանուհինգ տարի հետո իմ ճամփորդության ժամանակ ես նրանց մի մասին հանդիպեցի Կալիֆորնիայում: Նրանց մեջ կային և մի քանի հայ դուխոբորներ Ղարսից: Թե՛ Կալիֆորնիայում և թե՛ Կանադայում նրանք պարապում էին երկրագործությամբ և երջանիկ էին: Ամերիկայում նրանք համարվում են լավագույն երկրագործներ:

Բանտում այդ դուխոբորները չէին տառապում. գոնե այդպես էր երևում նրանց զվարթ դեմքերից և այն երգերից, որ օրը մի քանի անգամ խմբովին երգում էին:

Մենք կերակրվում էինք մեր տներից ուղարկված ուտելիքներով: Մի անգամ, գաղափար կազմելու համար, թե բանտարկյալներին ինչով էին կերակրում, մի գդալ լոբի ապուր վերցրի և իսկույն դեն թափեցի, զզվանքով նկատելով,

որ ահոթը, որից բաժանում էին ապուրը, այն է, ինչ-որ նախրնթաց օրը հերթապահը տվել էր ինձ որպես կոնիֆ ոտներ լվանալու համար: Մի ուրիշ անգամ հերթապահը էթի կեղտոտ թաշկինակի մեջ փաթաթած բերեց մի կտոր խմոր, ասելով, թե բլինի է, իր կինն է թխել բարեկենդանի առթիվ: Ես խնդրեցի խորին շնորհակալություններս հայտնել սիրալիր տիկնոջը, և երբ հերթապահը գնաց, բլինին գցեցի մկներին: Տնից ստացված ուտելիքները մինչև ինձ հասնելը ենթարկվում էին մանրակրկիտ տնտղման և այնքան էրբ էրվում էին, որ երբեմն դժվար էր գիտենալ ինչ է ուտելիքի անունը: Ֆրանսիացիք ասում են. «Շոգինից դադված կատուն սառը ջրից էլ է վախենում»: Ցարական կառավարությունը երևի սարսափում էր, ենթադրելով, որ տիկին Շիլովանզադեն իր ամուսնուն ուղարկած կարկանդակի մեջ կարող է ուժանակ դնել, բանտը պայթեցնելու համար: Սակայն մի անգամ նա չսխալվեց: Տնից ստացել էի մի խորոված հավ, փորը լեցրած նուշով, չամիչով և համեմներով: Հավը փաթաթած էր եղել նախ ճերմակ թղթի, ապա «Новое обозрение» լրագրի մի համարի մեջ: Զգիտեմ ինչպես, հավի թևի տակ մնացել էր մի կտոր այդ համարից: Նրա վրա կարդացի հետևյալ տողերը.

— Երեկ կեսօրից հետո, մոտ չորս ժամին անհայտ չարագործները, ռեվոլվերներից կրակելով, սպանեցին հայտնի հարուստ վաճառական Գ.-ցին: Մարդասպանները փախչելով, ազատվեցին ձերբակալությունից:

Ես գուշակեցի, թե ովքեր են մարդասպանները, կամ, ավելի ճիշտ ասելով, մարդասպանը, որովհետև դա ուրիշ ոչ ոք չէր կարող լինել, եթե ոչ Ա. — ը: Այսուհանուշտ տեռորիստը, օգտվելով իմ և Աղայանի բացակայությունից, իրագործել էր իր մտադրությունը: Ճիշտ է, նա ամեն անգամ առաջինը Գ.-ցին էր հիշում, երբ խոսում էր «ոչնչացման արժանի» հարուստների մասին:

Մի քանի օր հետո կինս եկավ բանտ ինձ հետ տեսնվելու և ի միջի այլոց ասաց.

— Երեկ Ա.-ը եկավ ինձ մոտ և հնչակյան կուսակցության կողմից դրամ առաջարկեց, ես մերժեցի ընդունելու, թեև կարիքի մեջ եմ...

— Շատ լավ ես արել մերժել ես, — ասացի ես, — եթե այդ Ա.-ը մի անգամ էլ գա, մի ընդունիր նրան...

Պարզ է, որ ես չէի կարող իմ գավակների կերակուրը շաղախել մարդկային արյունով:

Բանտից դուրս գալով՝ տեղեկացա, որ իմ ենթադրությունը սպանության մասին ճիշտ է, և երբ Ա.-ը եկավ ինձ տեսնելու, բացեիբաց մերժեցի նրան ընդունելու, մինչդույն ժամանակ առմիշտ հրաժարվեցի հնչակյան կուսակցությունից:

Բանտից ազատվելով, կարծում էի, որ դրանով վերջացավ իմ պատիժը: Եվ իրավ, երկու տարի ազատ էի, բայց 1898 թվականի հունվարին մեզ հայտնեցին, թե ցարի հրամանով աքսորվում ենք Կովկասի սահմաններից երկու տարի ժամանակով: Աղայանին, ինձ և մի քանի ուրիշներին իրավունք էր տրված ընտրելու աքսորման վայրը: Ես ընտրեցի Օդեսա քաղաքը, դարձյալ հրապուրվելով ծովի հեռանկարներով:

Այսպես վերջացավ իմ հեղափոխական գործունեությունը...

XVI

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

Երբ ես հիշում եմ Ղազարոս Աղայանին, անիծում եմ բնությունը, որ մի փոքր վեհ չէ այդ տեսակ մարդկանց կյանքի վերաբերմամբ:

Ղազարոս Աղայանը վախճանվեց ծեր հասակում, բայց մի՞թե յոթանասուն տարին ծերություն է մի մարդու համար, որ ինքը կյանքի մարմնացումն էր: Հոգով արի, մտքով պայծառ, սրտով խինդ, նա ավելի երիտասարդ էր, քան ինքնուն տոկոսը 25-30 տարեկան երիտասարդներից:

Ես չեմ հիշում մի դեմք, որ ուրախությունից չժպտար այդ պարթևահասակ, հաղթահասակ մարդու բիբլիական կերպարանքը տեսնելիս: Հնկերական շրջանների նահապետն էր ու զարդը: Ցանկալի հյուր էր ամենուրեք, ուր երևում էր: Իհարկե, բազմաթիվ բարեկամների հետ ուներ և չարակամներ, թե իբրև բանաստեղծ և թե իբրև մանկավարժ: Բայց բավական է որ ժպտար, և ամենահանճարեղ հակառակորդը հաղթված էր մարդու առջև: Իսկ ժպտում էր Աղայանը միայն այնպիսիների՛ն, որոնց անկեղծությանը հավատացած էր:

Բարի էր թուլության չափ, բայց և գիտեր չարը հալածել անխնա, թշնամի էր նախ և առաջ կեղծիքի և փարիսեցության:

Նա ասում էր.

— Թող իմ թշնամին կուրծքս ծակի առջևից, ես այնքան չեմ ցավիլ, որքան երբ կռնակիցս են հարվածում:

Աղայանը սկսնակ գրիչների խրախույսն ու հովանավորն էր: Երբ առաջին անգամ հանդիպեցինք, գրկեց ինձ իր հսկայական թևերով, համբուրեց և ասաց.

— Ա՛յ տղա՛, դու որտեղի՞ց լույս ընկար, գրիր ու մի ծուլանար:

Եվ ես հետևյալ օրն իսկ սկսեցի «Նամուս»-ը գրել:

Ավետիք Ահարոնյանի առաջին գնահատողը Աղայանը եղավ, բայց միայն սկզբում, երբ երիտասարդ գրողը միայն գրող էր և ոչ դաշնակցության դիպլոմատ:

Հովհաննես Թումանյանին ճանապարհ ցույց տվողն Աղայանն էր, որ ղեկավարեց նրան մինչ կատարյալ հասունություն ու ինքը ետ մնաց նրանից:

Աղայանը ոգևորվում էր ինչպես դեռահաս պատանի, երբ մի ուրախալի երևույթ էր տեսնում երիտասարդության մեջ, վշտանում էր ինչպես հայր, երբ նրա սխալներն ու թերությունները էր նկատում: Եվ ոչ ոքից չէր թաքցնում իր խորհածն ու զգացածը: Հուսո և ատվերի փոփոխման հետ փոփոխվում էր և նրա տրամադրությունը: Հայ դպրոցների փակման տարին շատ անգամ եմ նրա աչքերի մեջ արցունքներ տեսել: Եկեղեցական կալվածների բռնի գրավման ժամանակ նա կատաղել էր ինչպես վանդակի մեջ վիրավորված վագր և անզորությունից ձեռքերը խածելով վրիժառության ամենատարօրինակ, ամենածայրահեղ ծրագիրներ էր մտմտում:

Այդ դեպքում Աղայանի և Պերճ Պռոշյանի ցասման մեջ կար տարբերություն: Մինչ Պռոշյանը ողբում էր եկեղեցին և էջմիածինը, Աղայանը ասում էր.

— Մենք հույս ունենինք ժողովրդի սեփականությունը խլել ձրիակեր հոգևորականությունից և տալ գյուղացիությանը, հիմա բորենիներին փոխարինեցին գայլերը:

Նա չէր սիրում էջմիածինը և մերթ ընդ մերթ խարազանում էր բարձր հոգևորականությանը, իհարկե, որքան ներում էին ցենզուրական պայմանները: Նրա միակ եկեղեցական բարեկամը Արխստակես Սեդրակյանն էր, այն էլ նրա համար, որ այդ եպիսկոպոսը մաքառում էր իր դասակիցների ձրիակերության դեմ:

Հիշում եմ Աղայանի տարօրինակ ծրագիրներից մեկը, որ երկար ժամանակ զբաղեցրեց նրա միտքը: Կարծեմ ինչ-որ կաթողիկոսական ընտրությունների ժամանակ էր: Աղայանն առաջարկում էր Արխստակես Սեդրակյանին գնալ Կիպրոս կղզի, այնտեղից ինքն իրան հայտարարել «Կաթողիկոս ամենայն հայոց»: Իր միտքը նա բացատրում էր այսպես.

— Անգլիան ուրախությամբ կընդունի նրա կաթողիկոսությունն իր հովանավորության տակ և կաջակցի, որ աշխարհի բոլոր կողմերից հայերը գան Կիպրոս և նոր հայրենիք շինեն իրանց համար:

Առհասարակ Աղայանն իր գլուխը շատ էր հոգնեցնում նման միամիտ ծրագիրներով:

Նա սիրում էր ճնշել ու վերլուծել եվրոպական պետությունների բաղաքակրթությունը և յուրաքանչյուրին իր տեղը տալ: Այդ պահերին անհնար էր նրա հետ վիճաբանել: Միակ մարդը, որ կարողանում էր համբերությամբ ու լրջորեն պայքարել նրա հետ, Ավետիք Արտախանյանն էր: Բայց նրան էլ Աղայանը մի անգամ սեղմեց պատին՝ բառիս լայն իմաստով՝ երկու ձեռներով բռնելով նրա վերարկվի օձիքը: Բռնեց և ուժգին թափահարեց, իր համոզմունքները նրան կլլեցնելու համար: Սակայն Արտախանյանն էլ այն մարդկանցից չէր, որ շուտով են մարսում ուրիշի կարծիքը: Տեսնելով, որ հնար չկար նրան հաղթելու, Աղայանը բաց թողեց նրա օձիքը, ասելով.

— Գնա կորի՛ր, դու բթամիտ ես, բան չես հասկանում:

Աղայանի հավատամքը գիտության վերջին խոսքն էր, մինուճար էր՝ վերստուգվա՞ծ էր այդ խոսքը, թե՞ ոչ: Ամեն մի նոր տեսություն կամ գյուտ նրան հափշտակում ու ոգևորում էր:

— Կարդացի՞ր այսօրվա լրագրերում Մարսի ճշտությունների մասին: Ո՞չ կարդա՛, շուտով, շատ շուտով այնտեղից կխոսեն մեզ հետ և կարելի է մարդ էլ ուղարկեն: Դու ծիծաղո՞ւմ ես, ուրեմն ոչինչ չգիտես: Ափսոս, մի հարյուր տարի ավելի չենք ապրելու, դու կտեսնեիր՝ ե՛ս կլինեմ ծիծաղողը, թե դու:

Ա՜հ, զմայլելի՜ մարդ, որքա՜ն գրավիչ էիր դու ֆո մանկական պարզության և անմիջականության մեջ:

Աղայանը չէր սիրում միայն գրական մարդկանց բարոզած նոր գաղափարները: Նա բացասաբար էր վերաբերվում Տոլստոյի տեսությանը՝ «չարիքին չպիտի դիմադրել»: Առհասարակ նա միշտ ժխտում էր մեծ գրողի գաղափարները, առանց ժխտելու նրա մեծությունը:

— Տեսե՛ք, տեսե՛ք, — ասում էր նա հեգնանքով, — գյուղացիության բարեկամ է ձևանում, նստել է իր հարուստ կալվածքի վրա և ուրիշներին բարոզում «տվեք ձեր հողերը գյուղացիներին»: Դեռ առաջ դու տուր, հետո ուրիշներից պահանջիր:

Ես համոզված եմ, որ ինքը Աղայանն այդպես կաներ, եթե ունենար Տոլստոյի կալվածքը: Նրա համար անձնական շահը կամ ապահովությունն առաջին գծի վրա չէր: Նա այդ ապացուցել է մեկից ավելի անգամ: Բանտարկման ժամանակ նա ժանդարմերիայի գեներալին ասաց.

— Ջուր եք բացի ինձանից ուրիշներին էլ ձերբակալում, ինչ-որ եղել է, ես եմ արել, դատապարտեցեք միայն ինձ:

Իհարկե, նա այնքան միամիտ չէր, որ կարծեր, թե դրանով կարող է ազատել ձերբակալումից իր ընկերներին, բայց ելույթը գեղեցիկ է ինքնըստինքյան:

Իբրև բարեկամ և ընկեր՝ նա անձնվեր էր անսահման, նրա ամենամտերիմ բարեկամն իր հոգևոր սանն էր՝ Հովհաննես Թումանյանը: Մի գիշեր նա երազում տեսնում է, որ ինչ-որ ավազակներ հարձակվելեն Թումանյանի տան վրա: Սարսափից զարթնելով, անմիջապես հագնվում է ու դուրս վազում:

— Ա՛յ տղա, — պատմում էր ինձ հետևյալ օրը Թումանյանն իրեն հատուկ հումորով, — գիշերվա երեք ժամին մի ձայն արթնացրեց ինձ: Ականջ եմ դնում - Ղազարոսն է: «Հովհաննե՛ս, Հովհաննե՛ս», — գոռում էր նա մեր գավթից: Ես երկրորդ հարկումն եմ ապրում. Լուսամուտս բաց եմ անում, նայում եմ վար. «Հըը, ի՞նչ կա, ա՛յ մարդ, ի՞նչ է պատահել, — հարցնում եմ, կարծելով, որ փորձանք է եկել գլխին: «Ա՛յ տղա, Հովհաննե՛ս, տա՞նն ես»: «Հա՛, տեսնում ես, որ տանն եմ»: «Ա՛յ տղա, կենդանի ե՞ս»: «Հա՛, ի՞նչ կա»: «Ա՛յ տղա, առո՞ղջ ես»: «Հա՛, հա՛, ի՞նչ ես ուզում»: «Ոչինչ, պառկիր ու բնիր, բարի գիշեր»: Ասաց ու գնաց: Պառկեցի բնելու, բուն չտարավ: Առավոտյան կանուխ վազեցի մոտը՝ տեսնեմ ի՞նչ է պատահել: «Երազ էի տեսել», — ասաց նա: Եվ Թումանյանը, ըստ սովորության, նիհար ուսերը վեր բարձրացրեց, ցուցաուբուր մատներով բռնեց իր բթի պնչերը, փոթկաց:

Աղայանը Ռաֆֆիին չէր սիրում, որովհետև լավ չէր ճանաչում նրան, և, չնայելով իր լայն սրտին, մի ինչ նախանձում էր նրա ժողովրդականությանը: Առհասարակ մարդկանց ճիշտ ուսումնասիրելու համար նա շատ զորեղ չէր, նա վերին

աստիճանի դյուրահավատ էր և միշտ ենթարկվում էր բոպեի ազդեցությանը: Այդ կողմից նա Բաֆֆիի հակապատկերն էր, և դրա մեջ պետք է փնտրել նրանց փոխադարձ հակակրությունը: Պռոշյանին նա համարում էր թեթևամիտ, Պռոշյանն էլ նրան էր համարում թեթևամիտ, և այս էր պատճառը, որ նրանք շարունակ ծաղակոծում էին իրարու:

Արծրունու մասին Աղայանը խոսում էր վերապահությամբ:

— Մարմնի թերությունը, — ասում էր նա, — շատ է ազդել Արծրունու հոգու վրա և դարձրել է նրան ներվային ու նախանձոտ:

Սունդուկյանցին Աղայանը համարում էր «չինովնիկ», չէր հավատում նրա անկեղծությանը, ծաղրելով նրա սեթևեթ ձևերը:

Գամառ-Քաթիպային իբրև մարդ Աղայանը ճնշադատում էր անողոքաբար:

— Գնում է էջմիածին հարուստների համար կաթողիկոսից ապահարզանի իրավունք գնելու, — ասում էր նա, — մի՞թե դա վայել է բանաստեղծի կոչմանը:

Զարմանալի ամբոխասեր էր Աղայանը: Ինչ բազմամարդ տեսարան ևս լիներ, միտինգ, թափոր, հրդեհ, ցույց և այլն, — նա այնտեղ էր. Չէր մասնակցում ոչ մեկին, իհարկե, այլ միայն մտիկ էր անում և միայն վրդովվում կամ հրճվում, նայելով տեսարանի բովանդակությանը: Մի անգամ միայն նա մասնակցեց մի ամբոխային տեսարանում, կամ ճիշտն ասած ամբոխի համար եղավ դերակատար:

Առավոտ է, Աղայանը փող չունի, որ խոհարարին տա՝ օրվա պարենը շուկայում գնելու համար: Նա դուրս է գալիս տնից մի որևէ բարեկամ գտնելու և ձեռնապարտ վերցնելու: Փողոցում նրան լուր են տալիս, թե Քուռ գետը գիշերվա անձրևներից խիստ բարձրացել է և ողողել Բաղաֆի Պեսկի կոչված արվարձանը: Նա շտապում է գետափը և տեսնում է, որ արվարձանի կես մասը ջրի տակ է: Ի միջի այլոց, նկատում է, որ հողի մի մեծ թումբ ափից բաժանվել է և շրջապատվել ջրով: Այդ թմբի վրա ոչինչ չկա, բացի մի գամփռից: Շունը ոռնալով ուզում է ազատվել, բայց վիզը շղթայված է մի ցցի: Աղայանը մտածում է՝ եթե շունը մինչև անգամ կապից ազատվի, պետք է ընկնի ջուրը լողալու և կարող է խեղդվել, հետևաբար նրան կարող է փրկել միայն մարդու օգնությունը: Եվ Աղայանը վճռում է շանը փրկել: Բայց ի՞նչպես: — Հովհաննես Թումանյանի աջակցությամբ: Աղայանը շտապում է իր բարեկամին կանչելու, և շուտով մեր բանաստեղծները մի-մի մահակով զինված վազում են գետափը: Շունը դեռ թմբի վրա է և շարունակ ոռնում է, օգնություն աղերսելով: Փրկարարները սկսում են գոռալ, աղմկել և մահակները զարկել ջրին: Ոչինչ չի օգնում: Հանկարծ նրանք ետ են նայում և տեսնում են, որ ամբոխը հըռ-հըռ ծիծաղում է:

— Թո՛ղ, Հովհաննե՛ս, թո՛ղ, չեղավ, — ասում է Աղայանն առանց շփոթվելու:

Եվ երկու բարեկամները, մահակները դեն գցելով, շտապում են ամբոխի էրիջներից փախչել:

— Ա՛յ տղա, տե՛ս, է՛, — եզրակացնում է Աղայանը, — մենք հեռվից եկել ենք այստեղ մի շուն ազատելու, ազգը մեզ մի շան տեղ չի դնում, թողել է անոթի:

Աղայանը հյուրասեր էր անսահման: Ամառը գավառներից գալիս էին շատ ուսուցիչներ, որոնցից ոմանք նրա նախկին աշակերտներն էին: Աղայանը ոչ մեկին ճաշով կամ ընթրիքով չհյուրասիրած բաց չէր թողնում: Աղայան ընտանիքն այնքան էր ընտելացել հյուրերին, որ երբ ճաշին մարդը մենակ էր տուն գալիս, կինը հարցնում էր.

— Ինչո՞ւ ես մենակ, հիվա՞նդ ես, թե՞ կռվել ես:

Մի ժամանակ այդ մշտապես ուրախ ու գվարթ մարդն ընկավ ծայրահեղ հուսահատության մեջ ու դարձավ հոռետես: Պատճառը գիտենք, ամուսնու մահն էր ազդել նրա վրա: Նա գանգատվում էր, թե գլուխը չի գործում, թե ճնշից ու հանգստից զրկվել է, թե կյանքից ձանձրացել է և այլն: Երբեմն խոսում էր ինքնասպանության մասին: Ես առանձին

ուշադրություն չէի դարձնում նրա հոռետեսության վրա, զգում էի, որ դա անցողիկ տրամադրություն է, թեև մարդն օր-օրի վրա նիհարում ու ծերանում էր:

— Գիտե՞ս, Շիրվան, ես վճռեցի:

— Ի՞նչ վճռեցիր:

— Վարդապետ ձեռնադրվել և ֆռվել Սևանա վանքը, արդեն այս մասին խոսել եմ Արիստակես եպիսկոպոսի հետ:

Ես չկարողացա զսպել ծիծաղս, որովհետև եթե Աղայանի մեջ կար մի բան, որ կարող էր սազել վարդապետությանը, այդ նրա երկար միրուքն էր:

-Ի՞նչ, դու ծիծաղո՞ւմ ես, — գոչեց նա, ըստ սովորականի, օձիքս բռնելով երկու ձեռներով:

— Ձեմ հավատում, որովհետև վարդապետ լինելու համար դու բավականաչափ հիմար չես, ոչ էլ ձրիակեր: Բացի դրանից, դու զավակներ ունես ու սիրող հայր ես:

— Է՛հ, զավակնե՛ր, զավակնե՛ր, — արտասանեց նա հուզվելով, — նրանք երջանկություն չեն մարդու համար:

Ես գուշակեցի նրա սրտի ճվիրակաև գաղտնիքը:

— Գիտե՞ս ինչ, Ղաղարո՛ս, ասացի, — ես և ինձ նման մարդիկ կյանքի դառնություններն ընդունում են սրտով: Դա հիմարություն է: Եթե կարողանանք մի ինչ սառը դատել, կտեսնենք, որ շատ անգամ մենք իմքներս կյանքը ողբերգական ենք դարձնում: Ջսպիր վիշտդ և մտածիր նոր կյանքի մասին: Դու դեռ ծերության չես հասել:

Ըստ երևույթին նա հասկացավ իմ խոսքերի գաղտնի իմաստը, մտածեց և ոչինչ չասաց: Անցան ամիսներ, նա իր երեխաների հետ գնացել էր գյուղ, իսկ ես ֆաղաֆումն էի: Աշնանը մի օր նրան տեսա միանգամայն կերպարանափոխված: Առաջվա Աղայանն էր՝ ուրախ, զվարթ ու ժպտուն:

— Ա՛յ տղա, դու ի՛նչ լավ գիտեիր, թե ես վարդապետացու մարդ չեմ, — գոչեց նա, ինձ իր հսկա թևերի մեջ առնելով, — լավ էր, որ չհիմարացա:

— Ի՞նչ է պատահել:

— Բա չե՞ս լսել, երկրորդ անգամ ամուսնացա:

— Շատ ուրախ եմ, շնորհավորում եմ:

— Ա՛յ տղա, էդ կնիկ ասված բանը ինչ հրաշալիք է եղել, ես չեմ իմացել: Մեռած էի, մեռած, նորից կենդանացա: Է՛հ, արի գնանք մի բաժակ գինի խմենք:

Գնացինք Աղայանի բնակարանը: Նա ինձ ծանոթացրեց իր կնոջ հետ, որ նույնպես այրի էր, բայց անզավակ: Եկավ և Հովհաննես Թումանյանը: Այդ օրը մի լավ թրջվեցինք հանուն մեր բարեկամի պսակադրության:

Աղայանը բեֆի մարդ էր և մեծ ընդունակություն ուներ համապատասխան սեղանակիցներ ընտրելու, երբեմն ճակատագիրը հովանավորում էր նրան: Այսպես, մի օր նա ասաց.

— Ա՛յ տղա, գարունը եկավ, բաղերը բացվեցին, ե՞րբ ենք գնում բեֆ անելու:

— Երբ որ փող կունենանք:

Մի ֆանի օր անցած՝ Աղայանը, ես և Հովհաննես Թումանյանը Բաֆվից ստացանք մի-մի ծրար, յուրաքանչյուրի մեջ հարյուր հիսուն ռուբլու չեկ: Մարդասիրական ընկերությունն էր ուղարկել: Վարչությունն ավետում էր մեզ, թե

երեխիս համար ճշաճակել է կենսաթոշակ ամսական, չեմ հիշում, հիսուն թե հարհիսնգ ռուբլի և ահա ուղարկում է երեք, թե վեց ամսվա մեր թոշակը:

— Բայց էդ ո՞ր բամին է, որ հաստապարանոցների ուղեղը շուռ է տվել, — գոչեց Աղայանը, բարձրաձայն ծիծաղելով:

Հետո պարզվեց, որ հաստապարանոցներն իսկապես չեն արել այդ բանը, այլ մի խումբ գրասերների թելադրությամբ:

Այսպես թե այնպես, դա մեզ համար մի անակնկալ էր: Անմիջապես որոշեցինք այս առաջին թոշակը գործադրել մեր վարկին արժանավայել կերպով: Եվ սկսեցինք բարեխղճաբար այցելել Թիֆլիսի պարտեզները Օրթաճալա, Վերա, Գիդուբե, մի խոսքով՝ ամեն տեղեր, ուր կարելի էր գտնել խորոված, կենդանի ձկնիկներ, լավ գինի և այլն: Եվ գրեթե երկու օրը մի անգամ էեֆ էինք անում, այն էլ մեծ մասամբ երաժշտությամբ: Աշըղ Ջիվանին մեր տրամադրության տակ էր, հրավիրում էինք, իսկույն գալիս էր իր խմբով: Բարի մարդ էր, մեզնից փող չէր վերցնում: Մենք էլ իսկի չէինք թախանձում, որ վերցնի, չկամենալով մեր արվեստակցի հպարտությունը վիրավորել...

Եվ այսպես, ամբողջ ամառը էեֆ արինք, բարեխղճաբար դատարկեցինք մեր գրպանները և հանգստացանք: Վերջին անգամ մնացել էր հինգ ռուբլի, չեմ հիշում մեզնից որի գրպանում: Վճռեցինք այդ էլ ուտել: Այն ժամանակ էեֆերը շատ էժան էին նստում, խորովածի բաժինը 30 կոպեկ, գինու շիշը 20 կոպեկ և այլն: Կերանք, խմեցինք, Աղայանը «Բյոռ-Օղլի» երգեց, լավ փափկեցինք, Ջիվանին էլ մեզ հետ էր, այս անգամ մենակ: Ջիաբարով վերադառնում էինք մեր տները, յուրաքանչյուրս մտածելով, թե ինչ պետք է պատասխանենք մեր կանանց անտանելի հարցին, «ո՞րտեղ էիր, ի՞նչ էիր անում»: Միխայելյան փողոցում (այժմ Պլեխանովսկի պրոսպեկտ) մի մեծ տուն շատ դուր եկավ Աղայանին:

— Ադա, էն ի՛նչ հրաշալի տուն է, — տղերք, եկեք այդ տունը երեխով գնենք:

Հովհաննես Թումանյանն ըստ սովորության, բերի պնչերը բռնելով, փոթկաց: Ես հարցրի.

— Ի՞նչ փողերով գնենք:

— Դե էն է, որ մեր կենսաթոշակից ամսե-ամիս կվճարենք էլի՛, - պատասխանեց Աղայանը:

Հովհաննես Թումանյանն ասաց.

— Ես տուն չեմ ուզում: Չի հարկավոր: Ես, որպես նախկին հաշվապահ, ասացի.

— Սպասիր, Ղազարոս, թող հաշիվ անեմ, տեսնենք, բանի տարում կարող ենք այդ տան արժեքը տալ վերջացնել:

Տունը նորաշեն էր և երեք հարկանի: Ես նրան գնահատեցի, չեմ հիշում որքան, բայց դուրս եկավ, որ եթե մեր ամբողջ թոշակը հարյուր հինսուն տարի տանք, վերջը էլի տոկոսներով հինսուն հազար ռուբլի պարտ կմնա մեզ վրա:

— Չէ՛, Ղազարոս, ձեռնտու չէ, — ասացի ես:

— Ա՛յ տղա, հաշիվդ դրո՞ւստ է:

— Մաթեմատիկական ճշտությամբ:

— Դե որ էդպես է, թողնենք, ես էլ չեմ ուզում:

Այդպես էր Ղազարոս Աղայանը, երբեմն պարզամիտ՝ ինչպես չորս տարեկան երեխա: Այնուամենայնիվ կյանքի դժվար պայմաններում մենք միշտ նրա խորհուրդներին էինք դիմում, որովհետև փորձով գիտեինք նրա խոսքի փրկարար արժեքը: Նրա բնազդն արժեր Սողոմոնի իմաստությանը: Ահա մի փաստ: Եկեղեցական կալվածների բռնագրավման ժամանակ ոստիկանությունը մի բանի տեղերում, իշխան Գոլիցինի հրամանով, դիմեց զենքի ուժին: Էջմիածնում նա ուժանակով պայթեցրեց վանքի պողպատյա դրամարկղը, Բավի եկեղեցին շրջապատեց զորքերով և ենթարկեց պաշարման: Սկսվեց հրացանաձգություն ներսում ժողոված մի բանի հարյուր հայերի դեմ, որոնց մեջ կային և կանայք

ու երեխաներ: Այժմ էլ այդ եկեղեցու պատերի վրա կարելի է տեսնել գնդակների հետքերը: Երիտասարդությունը, առանց կուսակցական խտրության, գրգռված էր ծայր աստիճանի և վրիժառության միջոցներ էր փնտրում: Պարսկաստանից եկան մի խումբ հնչակյան տեռորիստներ Գոլիցինին սպանելու նպատակով: Նախքան իրանց մտադրությունն իրագործելը գնացին Աղայանի հետ խորհրդակցելու: Ծերունին խնդրեց, թախանձեց նրանց այդ տեռորը չկատարել: Նա նախազգում էր անհաջողությունը: Տաքարյուն երիտասարդները չլսեցին նրա խորհուրդները և հայտնի է՝ ինչ ողբալի հետևանք ունեցավ այդ իրանց համար: Գոլիցինը դաշույնի մի քանի թեթև վերքեր ստացավ ու չմեռավ, իսկ երեք փորձարարներից երկուսը սպանվեցին կազակների ձեռքով:

Որպես գրող, Աղայանը իր ժամանակակիցների մեջ ամենաժլատն եղավ: Իր ապրած տարիների համեմատ նա շատ քիչ արտադրեց: Նրա բոլոր երկերը միասին ժողոված հազիվ թե երկու փոքրիշատե ստվար հատորներ կազմեն: Պուշկինը նրան միշտ ծաղրում էր.

— Երկու-երեք տետր ես գրել, միրուխդ ցցած մահ ես գալիս: Դու ի՞նչ գրող ես:

Նույնն էր ասում և Րաֆֆին, միայն ավելի նուրբ խոսքերով, իհարկե, թե՛ մեկը և թե՛ մյուսը գիտեին, որ շատ գրելը տաղանդի մեծություն չէ, բայց գիտեին նաև, որ ամեն մի քիչ գրող էլ «Դոն Քիշոտ» չի կարող ստեղծագործել: Կար մի խոշոր տարբերություն մի կողմից Աղայանի, մյուս կողմից Րաֆֆիի ու Պուշկինի մեջ: Մինչ «Կայծեր»-ի հեղինակը և «Հացի խնդրի»-ի հեղինակը չէին կարդում կամ շատ քիչ էին կարդում, Աղայանը ընթերցասեր էր, ինչպես ժրաջան դպրոցական: Նա բավական կանոնավոր հետևում էր ժամանակակից օտար գրականություններին: Ընթերցասիրությունն առհասարակ երկսայրի սուր է գրողի համար, որքան նա քիչ է կարդում, նույնքան դյուրին է արտադրում և ընդհակառակը, որքան շատ է կարդում, նույնքան խիստ է վերաբերվում դեպի իր գրիչը: Մտավորապես լուրջ զարգացած գրողը չունի այն ինքնավստահությունը դեպի իր ուժերը, որ ունի չափավոր զարգացման տեր գրողը: Բացի այդ, ինքնագոհությունը միջակությունների հատկանիշն է: Սրանով ես չեմ ուզում ասել, որ Ղազարոս Աղայանը միանգամայն զերծ էր այդ թերությունից, բայց նա ուներ բաջություն իր տկարությունը խոստովանելու: Երբ ես նրան հարցնում էի.

— Ինչո՞ւ չես գրում, Ղազարոս: Նա միշտ պատասխանում էր.

— Ա՛յ տղա, չի գրվում, ի՞նչ անեմ:

Եվ իրավ, թվում էր, որ մարդը միանգամայն սպառվել է 50-55 տարեկան հասակում:

Աղայանը գրեց մանուկների համար սիրուն ոտանավորներ և զմայլելի հեքիաթներ ու դարձավ մատաղ սերնդի ամենասիրելի հեղինակը և կմնա այդպիսին երկար ու երկար տարիներ: Նա ունեցավ և իր հետևողները, որոնց մեջ, իհարկե, առաջին տեղում Հովհաննես Թումանյանն է: Իսկ դա ինքնըստինքյան քիչ բան չէ:

XVII

ԱՂԵՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

«Քառս» վեպս գրելու ժամանակամիջոցին, այն է՝ 1896 — 97 թվականներին հաճախ ես գնում էի Բաքու, վաղեմի տպավորություններս նավթային աշխարհից վերստուգելու և թարմացնելու համար:

«Քառս»-ի գաղափարն իմ մեջ հղացել էր տասնուհինգ տարի առաջ, այսինքն այն ժամանակ, երբ ես դեռ Բաքվումն էի ապրում: Դա մի գերդաստանի ընտանեկան կյանքի խռովությունն էր, որ ինձ վրա թողել էր խորը տպավորություն: Երկար տարիներ ես որոճում էի այդ գաղափարը և չէի վստահանում գրի անցկացնել, մանավանդ որ սկզբնական շրջանակը բաճի գնում, այնքան ընդարձակվում էր իմ մտքի մեջ: Առհասարակ, ես երևույթների անմիջական տպավորության տակ ոչինչ չեմ գրել և չեմ էլ կարողանում գրել: «Նամուս»-ը, «Վարդան Աիրումյան»-ը, «Ցավագար»-ը («Ջար ոգին») մանկական հիշողությունների արդյունք էին: Մյուս իմ գրվածքները հեռավոր կամ

մոտավոր անցյալի տպավորություններ են: Երբ որևէ մի կենսական երևույթ կամ դիպված իմ ուշադրությունը գամել է իր վրա, ես թողել եմ նրան իմ հիշողության մեջ: Եթե որոշ ժամանակի ընթացքում նա չի չքացել իմ մտքից, այլ, ընդհակառակը, ավելի ռելիեֆ է պատկերացել ներկայում, այն ժամանակ միայն ոգևորվել եմ և գրիչ վերցրել: «Արտիստ»-ի Լևոնին ես տեսել եմ Օդեսայում 1899 թվականին, բայց գրել եմ հինգ տարի հետո Բաֆվում:

Թարմ տպավորությունների տակ գրելը գուցե ունի և և իր լավ կողմերը, այդ կարող են ասել նույն եղանակով գրողները, սակայն ինձ թվում է, որ գրողը թարմ ազդեցությամբ կարող է շատ անգամ հափշտակվել երևույթների աննշան մանրամասներով և էականը չզատել երկրորդականից, այսինքն հարատև անցողականից: Տարիների հիշողությունը մի տեսակ ձուլարան է, ուր գաղափարն այսպես ասած հալվում է և աստիճանաբար զտվում է ավելորդ տարրերից ու մնում է էականն, այսինքն այն, ինչ որ կարող է դիմանալ ժամանակի մաշիչ զորությանը:

Բաֆուն, իհարկե, առաջվանը չէր, շատ բաներ էին փոխվել տասնուհինգ տարվա ընթացքում: Նավթային արդյունաբերության բարգավաճման հետ քաղաքը կերպարանափոխվել էր: Առաջվա միհարկանի, կիսախարխուլ տների տեղերում բարձրացել էին երեք-չորս հարկանի հոյակապ շինություններ, փողոցները սալահատակվել էին, ազգաբնակությունը եռապատկվել էր, չուխան փոխվել էր եվրոպական ֆրակի, փափախը՝ ցիլինդրի, չմուշկները, ոտքերը՝ փայտուն կոշիկների: Նախկին նպարավաճառներից, գործակատարներից և սայլապաններից շատերը դարձել էին հանքատերեր և գործարանատերեր: Արտաքինի հետ փոխվել էր նաև մարդկանց ներքինը: Հագուստը ազդել էր ճաշակի, մտքի և ամբողջ հոգեբանության վրա: Ուզում եմ ասել՝ գոյացել էր եվրոպական իմաստով բուրժուազիայի առաջին սաղմը:

Նավթային աժիոտաժի ամենաեռանդուն ժամանակն էր: Արագ հարստանալու տենչը, սպեկուլասիոնի ապականիչ ոգին վարակել էր անխտիր ամենքին, սկսած երեկվա շինականից մինչև համալսարանականը: Գոյացել էր մի այլանդակ բառս, ուր սերը դեպի ոսկին ջնջել ու անհետացրել էր լույսը խավարից, բարոյականն անբարոյականից զատող բոլոր գծերը: Այդտեղ էր, որ տեսա գայլի ախորժակով, վագրի ժանիքներով զինված բարեկամին բարեկամի դեմ, եղբորը եղբոր դեմ, որդուն հորը դեմ: Դրսից դիտողին թվում էր, թե ընկել է մի տեսակ գազանանոց, ուր ամենքը անոթությունից կատաղել են և պատրաստ են իրարու կոկորդը կրծոտել: Ձկար մի [երջան](), մի անկյուն, որ մարդ կարողանար կես ժամ ազատ շունչ քաշել և չլսեր միևնույն երգը. «Ես իմ դայավկան ծախեցի հարյուր հազարով, իմ նոմեր բսանհերորդը տալիս է օրական տասը հազար, ֆանտանը, Ռամանի, Բիբի-Հեյբաթ, Բիճազատի» և այլն և այլն: Նույնիսկ կանայք անմասն չէին այդ վակխանալիայից: Իսկ այսպես կոչված ինտելիգենցիան, այդ ինժեներները, բժիշկները, իրավաբանները, ճարտարապետները, ուսուցիչները, ամենքը, ամե նքը վարակվել էին ընդհանուր ախտով: Եվ ամենից զազրելին նրանք էին, որոնք իրենց գիշակերային բնազդն աշխատում էին եկվորի առջև ողողակել առաքինության փրազներով, կարծելով, որ եկվորը չի կարող տեսնել որսորդական բարակների պտույտները ասպարեզի տերերի շուրջը:

Միջավայրն արտաքուստ փայլուն էր, ներքուստ այլանդակ և ծայր աստիճան վտանգավոր: Երբ շուրջն ամենքը հարբած են, մթնոլորտը տոգորված է ալքոհոլով, այնտեղ արթուններն էլ կարող են հարբել առանց խմելու: Եղան վայրկյաններ, երբ զգում էի, որ գլուխս պտտվում է, մուխը իմ աչքերը մթնեցնում է: Եվ հավանական է, որ հոսանքն ինձ էլ կլաներ իր մեջ, եթե ժամանակին չարթնանար իմ սրբազան բնազդը, այն փրկարար ոգին, որ իմ միակ ղեկավարն ու պահապանն էր եղել սայթաքումների ժամանակ: Մի օր նա ինձ հրամայողաբար շշնջաց.

— Ինչ ես անում, մա՛րդ, գա՛ս տեղը չէ, փախի՛ր:

Եվ ես փախա, տանելով ինձ հետ հոսքի ծանր ու դաժան տպավորությունները:

«Բառս»-ը տպվեց Բաֆվա «Արոր» տպարանում, եթե չեմ սխալվում, 3000 օրինակ, որ այն ժամանակվա բարձրագույն տիրաժն էր: Վեպի մեջ ցենզուրական ջնջումներ եղել են, միայն չեմ հիշում՝ ո՛ր մասերում: Բանվորական կյանքը

նկարագրելիս ձեռս կաշկանդված էր, և պետք է զգուշանալ, որ մտքի դահիճ Ղարախանյանը բաց է թողել այնտան ևս, որտան մնացել է վեպի մեջ:

Գրքի տպագրությունը զուգադիպեց ախտրմանս ժամանակի հետ, ուստի, բացակա լինելով, չկարողացա սրբագրել և մի քանի հնարավոր հավելումներ մտցնել նրա մեջ: Երբ ախտրից վերադարձա, գիրքը գրեթե բոլորովին սպառվել էր: «Քառս»-ից հետո նորեն վճռեցի ուժերս փորձել թատերագրության մեջ: Տասը տարվա մեջ բավական ուսումնասիրել էի բեմական արվեստը:

Ամառային երկու ամիսների ընթացքում գրեցի «Եվգինե»-ն: Այս անգամ բախտս ինձ ժպտաց, ավելի քան սպասում էր: Պիեսը ոչ միայն չտապալվեց, այլև ուժգին ծափահարվեց ու արժանացավ ռուս մամուլի գովասանքին: Ասում եմ ռուս մամուլի, որովհետև հայ մամուլը... Արժե պատմել նրա այն ժամանակվա բարոյական կերպարանքը բնորոշող հետևյալ փաստը...

«Եվգինե»-ի առաջին ներկայացումը վերջացնելուց հետո բեմի ետև վազեց, ի միջի այլոց, և «Մշակ» լրագրի ռեցենզենտը, գերմանական համալսարան ավարտած Նալբանդյան ազգանունով մեկը: Իսկապես մի բարեխիղճ, բայց շատ խեղճ երիտասարդ: Այդ տղան դերասան-դերասանուհիների ներկայությամբ արտահայտեց իր հիացումը պիեսով և ասաց ավելին, քան արժեր իմ երկը: Հինգ թե վեցօր անցած՝ «Մշակ»-ի մեջ երևաց նրա մի մեծ բանասիրականը: Կարդում եմ և ապշում: Ռեցենզենտը ոչ միայն այն չի գրում, ինչ որ ասել է հեղինակին դերասանների ներկայությամբ, այլև ամեն կերպ աշխատում է պիեսը ոչինչի հավասարեցնել: Հետևյալ օրը Հովհաննես Աբելյանը և ես զբոսնում էինք Գոլովինսկի (այժմ Ռուսթավելու) պրոսպեկտի վրա: Հանդիպում ենք Նալբանդյանին: Աբելյանը վրդովված է ավելի, քան ես:

— Պարո՛ն, — բռնում է նա Նալբանդյանի օձիքը, — դուք ե՞րբ եք ազնիվ՝ խոսելո՞ւ, թե՞ գրելու ժամանակ:

— Ի՞նչ է պատահել, — շփոթվում է խեղճ ռեցենզենտը գողության մեջ բռնված մանկան պես:

— Դուք չէի՞ք, որ «Եվգինե»-ի ներկայացման երեկո խոսքեր չէիք գտնում պիեսը գովելու համար, իսկ լրագրում այդ ի՞նչ եք գրել:

Խեղճ տղան այլայլված և կակազելով պատասխանում է.

— Այն երեկո ես խոսում էի որպես հանդիսական, իսկ լրագրում գրել եմ որպես ճնշադատ:

Ես ծիծաղում եմ: Աբելյանն ասում է.

— Առաջին անգամն եմ հանդիպում այդպիսի մի տարօրինակ ռեցենզենտի:

Ես կռահում եմ, որ խեղճ տղան չի ուզում ճշմարտությունն ասել:

— Գիտե՞ք, պարոն, — դառնում եմ ես նրան ամենայն հանդարտությամբ, — ես զգում եմ, որ երեկվա հոդվածը ձերը չէ, թեև կրում է ձեր ստորագրությունը: Իբրև ազնիվ մարդ, խոստովանեցեք, որ խմբագրությունը փոփոխել և աղավաղել է ձեր գրվածքը:

Խեղճ ռեցենզենտը երկար տատանումներից հետո, վերջապես, խոստովանում է ճշմարտությունը: Պարզվում է, որ նրա հոդվածը փոփոխել է «Մշակ»-ի գլխավոր աշխատակից և փաստական խմբագիր Առաքել Բարախանյան Լեոն: Զարմանալին այն է, որ Լեոն պիեսի ներկայացմանը թատրոն չէր եկել: Քանի որ այդ մարդու անունը հիշեցի, պատմեմ և մեկը նրա՝ հայ գրողների և մասնավորապես իմ դեմ գործած հարյուրավոր բաջագործություններից: 1903 թվականին, երբ հրատարակում էի մի երկերի ժողովածու, «Կենտրոնական» կոչված մի գրավաճառանոցի հանձնարարեցի այդ մասին հայտարարություն տալ «Մշակ» և «Նոր-Դար» լրագրերին, կանխավ վճարելով հայտարարության արժեքը: «Նոր-Դար»-ը տպեց, իսկ «Մշակ»-ը մերժեց տպել, աշխարհի ոչ մի մամուլի մեջ չտեսնված այդ վայրենության դեմ ես

երկու տողով բողոքեցի Թիֆլիսի «Новое обозрение» լրագրի մեջ, և ամբողջ անդրկովկասյան վրացի, ռուս և թուրք մամուլը արտահայտեց իր վրդովմունքը «Մշակ»-ի դեմ: «Մշակ»-ը չամաչեց պաշտպանվել, արդարացնելով իր արարքն այն բանով, որ ես մի ժամանակ բանակովել եմ հանգուցյալ Արծրունու հետ: Այդ «արդարացումը» ավելի զայրացրեց լրագրերին, առանձնապես «Бакинские известия» և «Каспий» օրաթերթերին, որոնցից առաջինը «Մշակ»-ի վարմունքն անվանեց низменно и пошло (տե՛ս «Бак известия» 1903, N 69): Մի ռուս լրագրի մեջ (անունը մոռացել եմ) պաշտպանի դերում դուրս եկավ Լեոն և խայտառակությունը կրկնապատկեց: Տարիներ անցած մի օր Պարիզում «Մշակ»-ի այն ժամանակվա պաշտոնական խմբագիր Ալեքսանդր Քալանթարը (փաստականը Լեոն էր) խոստովանեց, որ «ազատամիտ» լրագրի աննախընթաց վարմունքի իսկական հեղինակը Լեոն է եղել: Բանն այն է, որ Լեոն, տասնյակ տարիներ իմ երկերն ամեն կերպ պարսավելով նույնիսկ արտասահմանյան հայ պարբերականներում և չկարողանալով ինձ բարոյապես տապալել, դիմում է նյութապես վնասելու միջոցին: Սակայն այդտեղ էլ նրա հետը հարին դիպավ, ընթերցող հասարակությունը, «Մշակ»-ի դեմ զայրանալով, ինձ տվեց սպասածիս չորս անգամ ավելի բաժանորդներ... Այսպես է պատժվում երբեմն մարդկային չարությունը...

«Եվգինե»-ից հետո գրեցի «Ունե՞ր իրավունք»-ը, որ ներկայացվեց միայն երեք անգամ, այնուհետև ես արգելեցի նրա ներկայացումը: թե ինչո՛ւ — պատճառը մասնավոր է, և ես չեմ կարող բացատրել:

Հաջորդ տարին, այն է՝ 1904 թվականի ամառը, «Կոջոր» ամառանոցում գրեցի «Պատվի համար»-ը: Այս անգամ որոշեցի պիեսը տանել Բաքու և առաջին անգամ այնտեղ ներկայացնել: Ես շատ լավ գիտեի, որ եթե Թիֆլիսում ներկայացնեմ, էլի «Մշակ»-ը ինձ հայհոյելու է Լեոյի ղեկավարությամբ:

Առաջին անգամ Անդրեաս Էլիզբարյանի դերը կատարեց Գևորգ Պետրոսյանը, իսկ Մարգարիտի դերը՝ օրիորդ Քնարիկը: Դժբախտաբար, հայ բեմը շատ վաղաժամ զրկվեց այդ երկու տաղանդավոր ուժերից: Պետրոսյանի մահով նա կորցրեց մեր թատրոնի այն ժամանակվա ամենակուլտուրական դերասանին, իսկ Քնարիկի ինքնասպանությունը մի նոր արատ գցեց Բաքվի հայ բուրժուազիայի բարի ու վարքերի վրա... Չլիներ այդ ինքնասպանությունը, այսօր հայ թատրոնը կունենար իր երկրորդ Սիրանույշը, այնքան տաղանդավոր էր Քնարիկը:

Նորեն Բաքոի մեջ էի ընկել: Ես եկել էի իմ պիեսի առաջին ներկայացումը ղեկավարելու և փորձերի ժամանակ պահանջված բեմական փոփոխությունները անելու: Մտադիր էի ներկայացման հաջորդ օրնիսկ Թիֆլիս վերադառնալ, սակայն մի վերին աստիճանի անախորժ անակնկալ ինձ պահեց: Բաքվում ես ունեի մի բանի նախկին ընկերներ, որոնք շփվում էին թուրքերի հետ: Բացի դրանից, ես ինքս ծանոթ էի մի բանի թուրքերի հետ: Մի բանի անգամ նրանց հանդիպելով տեղական ակումբում, ընթրիքի ժամանակ գինու ազդեցությամբ արտասանված խոսքերից եզրակացրի, որ հայ-թուրքական հարաբերությունները ծայր աստիճան լարվել են, և սպասվում են լուրջ հետևանքներ: Արդեն իմ Բաքու գալու օրը մի թուրք սպանել էր մի հայի մասնավոր պատճառով: Հայի թաղման օրը մի ինչ-որ տեռորիստ սպանեց թուրք մարդասպանին, թե նրա ընկերոջը — լավ չեմ հիշում: Հետո այս վերջին սպանվածի թաղման օրը թուրքերն սպանեցին հայ տեռորիստին: Եվ այսպես տեղի ունեցան մի շարք իրար հաջորդող վրիժառություններ:

Իմ թուրք ծանոթները չէին թաքցնում իրենց վրդովմունքը: Նրանց զրույցների մեջ ես զգում էի մի տեսակ սպառնալիք:

Զարմանալին այն է, որ այդ արյունահեղ դեպքերը հայ ինտելիգենցիայի կողմից լուրջ ուշադրության չէին արժանանում, համենայն դեպս ես այդ չէի նկատում: Կյանքն ընթանում էր նախկին ուղղությամբ, նույն հավքային եռուզեռը և նույն ծարավը ոսկու, նույն փոխադարձ կողոպուտը, միայն ավելի ուժեղ, ավելի զազրելի: Մարդիկ ո՛չ ժամանակ ունեին և ո՛չ ցանկություն ուրիշ բաներով հետաքրքրվելու: Թվում էր, թե ո՛չ հրդեհը, ո՛չ երկրաշարժը, ո՛չ ժանտախտը, ո՛չ մի հանրային ադետ չի կարող նրանց սթափեցնել և ստիպել նայելու, թե շուրջն ինչ է կատարվում: Իհարկե, կային հատ-հատ անհատներ, որ մերթ ընդ մերթ խոսում էին հայ-թուրքական հարաբերությունների մասին, բայց ոչ լրջորեն, այլ այնպես, ժամանցի համար, այն էլ երբ մի Թոփչիբաշև կամ Կարաբեկով թունավոր լրագրական ասեղներ էին նետում հայերի հասցեին: Խոսում էին և իսկույն մոռանում ու խորասուզվում իրանց անձնական գործերի

մեջ: Այնինչ դրսից եկած մի մարդու համար դժվար չէր օդի մեջ զգալ արյան հոտ, նաև այն, որ մի ինչ-որ աներևույթ ձեռ լռության մեջ սոսկալի դավ է լարում երկու ազգերի միջև և այսօր-վաղը պիտի պայթի այդ դավը:

Իմ անհանգստությունն օր-օրի վրա սաստկանում էր, իմ երևակայության մեջ պատկերանում էին ահռելի պատկերներ: Ինձ համար միանգամայն պարզ էր, որ երկու ազգությունների սոսկալի ընդհարումն անխուսափելի էր:

Նոյեմբերի սկզբներն էր, այսինքն առաջին հայ-թուրքական ընդհարումներից երկու ամիս առաջ: Մի կիրակի հայերի հին եկեղեցու գավթում հանդիպեցի ինժեներ Կոստանդին Խատիսյանին: Այն ժամանակ երկու մարդ Բաֆվում վայելում էին խոշոր «հասարակական գործիչների» համբավ. մեկը Խատիսյանն էր, մյուսը մի փաստաբան՝ Բոգդան Մոյսեևիչ Դոլուխանով անունով, առաջինը դաշնակցության հիմնադիրներից մեկն էր, մյուսը՝ նույնպես դաշնակցական, միայն ոչ պաշտոնապես:

Ես փորձեցի իմ անհանգստությունը հայտնել Խատիսյանին, հուսալով նրանից լսել լուրջ խոսք:

— Կոստանդին, — դարձա նրան, — հայ-թուրքական հարաբերությունները գնացել են ծայր աստիճան, դու այդ նկատո՞ւմ ես:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Սպասվում են խոշոր ընդհարումներ, դու չե՞ս զգում այդ:

— Ո՞վ ասաց քեզ, որ սպասվում են, — հարցրեց Խատիսյանը, իբր թե ամեն բանի տեղյակ և ամեն ինչ նախատեսող մարդու հեգնանքով:

— Այդ կարևոր չէ, ես քեզ հավատացնում եմ, որ երկու ազգություններն ընդհարվելու են: Ցանկալի է գիտենալ, արդյոք միջոցներ ձեռնարկո՞ւմ եք եղբայրասպան արյունահեղության առաջն առնելու համար:

Այսօրվա պես հիշում եմ Կոստանդին Խատիսյանի տգեղ ժեստը: Նա մի ոտը բարձրացրեց և, ձեռքը զարկելով կոճկի կրունկին, ասաց ռուսերեն լեզվով.

— Թուրքե՛րը, ահա թուրքերը... մենք նրանց հաղթել ենք կուլտուրապես, հաղթենք և ֆիզիկապես...

Ինձ համար մի այդպիսի դարձված անսպասելի էր:

— Խատիսյան, — ասացի ես, հազիվ վրդովմունքս զսպելով, — նախ և առաջ խոսելու այդ ձևը քեզ չի սազում: Ապա շատ մի պարծենալ մեր կուլտուրական հաղթությամբ, որ ինձ համար դեռ կասկածելի է: Այսպես թե այնպես, պարտ եմ համարում զգուշացնել, բանի ուշ չէ, պետք է միջոցներ ձեռնարկեք եղբայրասպան կռվի առաջն առնելու համար:

Խատիսյանն արհամարհանքով ժպտաց ու ասաց.

— Ո՛չ մի նախազգուշացման կարիք չունենք, մենք գիտենք մեր անելիքը:

— Այո՛, — գոչեցի ես վրդովված, — երկու ռումբ շինել և պատերազմ հայտարարել սուլթան Համիդի զորքերին:

Ես ակնարկում էի Խատիսյանի անցյալը, երբ նա Թիֆլիսում իրանց պարտիզում ռումբ էր շինում Տաճկաստանը կործանելու համար:

Ես ավելորդ համարեցի վիճաբանել այդ մարդու հետ և հեռացա:

Հետևյալ օրը դիմեցի իմ համերկրացի բժիշկ Թադևոս Զաքարյանին, որ իր մտավոր զարգացումով անհամեմատ բարձր էր Խատիսյանից, չունենալով նրա լեզվի ճարպկությունն ու հանդգնությունը:

— Այո, — ասաց բժիշկը, — դու ունես իրավունք, մեր գլխի վրա դամոկլյան թուր է կախված, ես այդ տեսնում և զգում եմ: Բայց ի՞նչ պետք է անել ես կարծիքով:

— Ես ինքս չգիտեմ, բայց մի բան առայժմ անհրաժեշտ է անել՝ դիմել թուրք ինտելիգենցիային և նրա հետ խորհրդակցել: Ես առաջարկում եմ ձեզ և ձ ընկերներին՝ հրավիրել երկու կողմի ներկայացուցիչներից մի խառը ժողով:

— Այդ ես չեմ կարող անել և ոչ էլ որևէ մեկն իմ ընկերներից:

— Ինչո՞ւ:

— Որովհետև թուրք ինտելիգենցիան դեպի մեզ վերաբերվում է թերահավատությամբ, և չպիտի թաքցնել, որ մենք էլ չենք հավատում նրա անկեղծությանը: Բայց, այսպես թե այնպես, իրարու հանդիպելը ես անհրաժեշտ եմ համարում: Ավելի լավ է, որ գործը դու ձեռնարկես: Դու դրսից եկած մարդ ես, թուրքերը ձ անունը ճանաչում են և ավելի կհավատան ձեզ:

— Շատ բարի, ես ինձ վրա եմ վերցնում այդ դժվար պարտականությունը, բայց ո՞ւմ ես խորհուրդ տալիս դիմելու:

— Քեզ համար, իբրև գրողի, հարմարագույնն է դիմել «Каспий» լրագրի խմբագիր Ալիմարդան-բեգ Թոփչիբաշեվին կամ նրա գլխավոր աշխատակից հրապարակախոս Ահմեդ-բեգ Աղաևին:

— Բայց ես ծանոթ չեմ նրա հետ:

— Այդ ճշտելու բան չունի, անշուշտ, նրանք ձեզ ճանաչում են անունով:

Այդ ժամանակ դեռ մուսավաթի անունը չկար ասպարեզում: Գոնե ես չէի լսել: Որքան հիշում եմ, այդ թուրք ազգայնական կուսակցությունը կազմվեց հայ-թուրքական կոտորածների ժամանակ կամ մի ինչ հետո:

Ես անմիջապես կառք վերցրի և գնացի Աղաևի բնակարանը:

Երբ ես մտա նրա մոտ, առաջին խոսքը եղավ.

— Կոլեգա Շիրվանզադե, դուք առաջին հայն եք, որ ոտք եք դնում իմ տունը: Շատ ուրախ եմ, որ բարեհաճել եք գալ, և պատրաստ եմ ծառայելու ինչով կամենաք:

Կարիք չկար երկարացնելու. ես մի քանի խոսքերով բացատրեցի իմ այցելության նպատակը: Աղաևը գլուխը թեքեց կրծքին և, սև ակնոցների տակից նայելով ինձ, ասաց հեգնական ժպիտով.

— Ա՛հ, ձերոնք ա՞յժմ են զգում արյան հոտը: Իսկ մենք այդ զգում ենք վաղուց:

Ես, իհարկե, չէի կարող ասել, որ մերոնք այժմ էլ չեն զգում:

— Շիրվանզադե, — շարունակեց Աղաևը ավելի մտերմաբար, — Բավվի հայ ինտելիգենցիան տեղի-անտեղի պարծենում է, որ հայերը կուլտուրապես շատ և շատ բարձր են մեզնից: Ձեմ ժխտում, որովհետև այդ մասամբ ճիշտ է և մյայն մասամբ: Բայց եթե ենթադրենք, որ մենք՝ թուրքերս չունենք ոչ մի կուլտուրական առաջացում, ապա չպիտի մոռանալ, որ մենք միևնույն երկրում ենք ապրում կից առ կից, երբ հարևաններից մեկը տեղից շարժվում է, մյուսն եթե անզոր է շարժվելու, երկու ձեռներով ծանր բարի պես կառչում է նրա ոտներին: Դուք պարտավոր եք մեզ էլ ձեզ հետ վեր բարձրացնելու, այլապես մենք ձեզ էլ կքաշենք վար, և երկուսս միասին կխեղդվենք խավարի ճահճում:

Ի՞նչ կարող էի առարկել այդ խոսքերի դեմ, եթե ոչ տալ իմ անպայման հավանությունը: Որոշեցինք խորհրդակցության հրավիրել հատ մարդ, տասը հոգի թուրքերի, տասը հոգի հայերի կողմից: Ես կանխավ արդեն բժիշկ Զաքարյանի հետ կազմել էի հետևյալ ցուցակը հայերից, բժ. Զաքարյան, Ներսես Աբելյան, Միխայել Պապաջանյան, Սամսոն

Հարությունյան, Գարեգին Եղիազարյան, բժ. Միխայել Ջալյան, Աստվածատուր Վաչյան և ես. մնացյալ երկուսի անունը մոռացել եմ: Կոստանդին Խատիսյանն իհարկե, չէր կարող մտնել ցուցակի մեջ:

Մինչև Աղաևը կազմում էր իր ցուցակը, ես մի հայացք գցեցի նրա գրադարանի վրա. երկու թե երեք պահարանների մեջ կանոնավոր շարված էին մի բանի հարյուր գրքեր՝ մեծ մասամբ ֆրանսերեն լեզվով և բոլորն էլ շքեղ կազմերով: Կարդացի ֆրանսիական հեղինակների անունները.Բուալո, Բոսյուե, Վոլտեր, Ժան-Ժակ Ռուսո, Մոլիեր, Նորերից Բալզակ, Գլոբեր, Էմիլ Զոլա և այլն: Եթե մեծամիտ հայ ինտելիգենտներից արհամարհված մի ժողովրդի մտավոր սպասավորն իրան շրջապատել էր այս բարձր համաշխարհային անուններով, ինչո՞ւ կարծել, որ այդ ժողովուրդը չի կարող կուլտուրական հաղթանակ տանել:

Աղաևի ցուցակն էր՝ Հասան-բեգ Մելիքով, Թոփչիբաշև, Հյուսեյնով, բժ. Կարաբեկով, Աղաև, մյուս հինգ անունները մոռացել եմ:

Խորհրդակցության տեղը որոշեցինք «Կասպի» լրագրի խմբագրատունը:

Երբեք չեմ մոռանալ այդ ժողովի առաջին վայրկյանների ծանր ու անախորժ տեսարանը: Երբ մենք բոլորս միասին մտանք խմբագրատուն, թուրքերն արդեն այնտեղ էին: Նրանք գլխի շարժումով պատասխանելով մեր հակիրճ «բարևին» ձեռի շարժումով մեզ հրավիրեցին նստել: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ առնվազն տասը րոպե ոչ մի կողմից ոչ մի բառ չարտասանվեց: Ցուրաքանչյուրը գլուխը կրծքին թեքած նայում էր ցած: Կարծես, ամաչում էին նայել իրարու երեսին:

Վերջապես Թոփչիբաշևն ասաց ռուսերեն.

— Պարոննե՛ր, ողջունում ենք ձեր գալուստը, մեր մուսուլմանական ավանդությամբ ասելով, «Խոշ գյալմիսիձիզ», (բարով եք եկել):

Ապա շարունակեց.

— Ներկա ժողովը հրավիրել են Շիրվանզադեն և Ահմեդ-բեգ Աղաևը: Նրանք կբացատրեն մեզ իրանց նպատակը, խնդրենք Հասան-բեգ Մելիքովին, որ ժողովին նախագահի:

Ես որոշ պատճառներով չէի ուզում առաջինը շոշափել բուն խնդիրը: Աղաևը նույնպես: Եվ մենք մի բանի անգամ նայեցինք իրարու երեսի: Ջեմ հիշում, որի ձեռներեցությամբ սկսվեց մի բանալ խոսակցություն, այն է՝ թե լավ կլիներ, որ շուտ-շուտ հրավիրվեին նման ժողովներ, թե հարևաններ ենք, պարտավոր ենք իրար ճանաչել ու սիրել և այլն և այլն: Իսկ Սամսոն Հարությունյանը շտապեց առաջարկել իր սիրեցյալ միջոցը փրկության — հիմնել մի կրթական թե բարեգործական ընկերություն երկու «բարեկամ» ժողովուրդներին հավասարապես ծառայելու համար:

— Այո, իհարկե, լավ կլինի, — արտասանեց նախագահ Հասան-բեգ Մելիքովը մի նուրբ հեգնական ժպիտով, որի իմաստը դժվար չէր գուշակել:

Ժամանակն էր ընդհատել այդ «ամիկոշոնությունը», որ ոմանց տեսակետից բաղաքագիտություն էր:

Ես ասացի.

— Պարոննե՛ր, դուք շատ լավ գիտեք, որ մենք դրա համար չենք հրավիրել ձեզ: Դիմենք էական խնդրին: Ես երկար չեմ խոսիլ: Անկասկած, դուք նկատում եք, որ վերջին ժամանակներս օր-օրի վրա մեր հարաբերությունները լարվում են:

Ներկայումս Բաքվի մեջ կատարվում են դեպքեր, որոնք սպառնում են շատ աղետալի հետևանքներ թե հայերի և թե թուրքերի համար: Խոսենք այս մասին:

— Այդ դեպքերը մասնավոր են և ոչ մի հասարակական արժեք չունեն, — ընդմիջեց ինձ Սամսոն Հարությունյանը:

— Ներողություն, մասնավոր չեն, — գոչեց Աղաևը, — յուրաքանչյուր անհատական ոճիր մի կայծ է ապագա հրդեհը վառելու համար:

Հուսեյնովն ավելացրեց.

— Ես ևս, ինչպես Շիրվանզադեն, դրսից եկած մարդ եմ և նկատում եմ, որ երկու հարևան ժողովուրդների ընդհարումը Բաքվի մեջ ավելի հաճախական է:

Ինձ համար պարզ էր, որ այդ մարդն ավելի գիտեր, քան ես: Հետո պարզվեց, որ նա Կ. — Պոլսից նոր եկած էմիսար է:

Այլևս զգաստությունից կաշկանդված լեզուները բացվեցին, և յուրաքանչյուրը հաստատեց նույնը: Եղան պարզ ակնարկներ, թե կա մի աներևույթ տարր, որ չար դավեր է լարում երկու ժողովուրդներին իրարու դեմ զինելու, այլ խոսքով մեր ձեռքով մեզ ոչնչացնելու համար:

— Իսկ եթե մենք չկամենանք ընդհարվել, — հարցրի ես, — չե՞նք կարող այդ դավադիր տարրը չեզոքացնել:

— Իհարկե, կարող ենք, — արտասանեցին մի բանիսը:

— Ահա այդ մասին է, որ մենք ձեզ հրավիրել ենք խորհրդակցության:

Մեր ժողովը տևեց մինչև կեսգիշեր: Ոչ մի գործնական եզրակացության չհանգեցինք: Փոխադարձ հավատի բացակայությունը պարզ էր: Ամենից կասկածելին իմ աչքում ժողովի նախագահն էր, նրա մաշած դեմքից ամբողջ ժամանակ չէր հեռանում այն հեգնական ու նենգ ժպիտը, որով նա դիմավորել էր մեզ: Թոփչիբաշևն աշխատում էր ավելի խորամիտ ձևանալ, բան կարելի էր եզրակացնել նրա հրապարակախոսական հոդվածներից: Միևնույն ժամանակ, նախքան մի դարձվածք արտասանելը, նայում էր նախագահի երեսին, կարծես կանխավ հարցնելով նրա կարծիքը: Նրա համեմատ ավելի անկեղծ էր թվում ինձ Աղաևը, չնայելով սև ակնոցներից մթագնած դեմքի մռայլությանը: Ավելի անմիջական և պարզ էր իր արտահայտություններում Հուսեյնովը, նա չէր վախենում խնդրին մոտենալ անշեղ և շարունակ կրկնում էր, որ ընդհարումները երկու ազգությունների մեջ անխուսափելի են, եթե ձեռք չառնվեն արտաքո կարգի միջոցներ:

Հասան-բեգ Մելիքովը ներկա ժողովը համարեց անիրավասու և անձեռնհաս որևէ գործնական միջոցներ մշակելու: Չէր կարելի նրա հետ չհամաձայնվել, բանի որ թե՛ Աղաևը և թե՛ մեր հրավիրած ժողովը համարում էինք նախապատրաստական մի այլ ավելի բազմակողմանի և ավելի բազմամարդ ժողովի համար:

Այդպես էլ որոշվեց, և մենք ցրվեցինք:

Հետևյալ օրը ես պետք է վերադառնայի Թիֆլիս. ես հավատացած էի, որ բանի որ մի անգամ արդեն անիծյալ խնդիրը հրապարակ է բերված, այլևս չի մոռացվի: Ես համոզված էի, որ եթե հայ ու թուրք ինտելիգենցիաները ջանան ժողովրդին զգուշացնել անմտոր կառավարության դավերի դեմ, կարող են եղբայրասպան աղետի առաջն առնել, և այս համոզումով ու այս հույսով էլ վերադարձանք Թիֆլիս:

XVIII

ԱՂԵՏԻ ՕՐԵՐԻՆ

Թիֆլիսի հայկական կոչված ակումբում ինչ-որ երեկույթ է: Հանկարծ սկսվում է մի անսովոր իրարանցում, նման երկրաշարժի խուճապին: Դահլիճներից մեկում սեղանի վրա է բարձրանում բաղաքային ինքնավարության անդամ Աբրահամ Բաբյանը գունատված, հուզված և երերուն ձայնով կարդում է մի կարճ հեռագիր Բաքվից.

— Այսօր տեղական թուրքերը կազմակերպված խմբերով սկսել են հայերին ջարդել, օգնեցե՛ք:

Գոռում-գոչյուն, աղաղակ, մի բամվեցի տիկին ուշաթափվում է, ոչ ոք նրա վրա ուշադրություն չի դարձնում: Հետու, մի անկյունում նկատում եմ երեք երիտասարդ թուրքերի, որ ապշած նայում են, չհասկանալով, թե ինչ է կատարվում: Գիտնալով, թե գրգռման վայրկյանին ամբոխն ինչ բռնությունների է ընդունակ, մոտենում եմ նրանց և խնդրում իսկույն ևեթ հեռանալ: Նրանք շտապով դուրս են գալիս սկումբից:

Երեկույթը, իհարկե, խափանվում է: Վերադառնում եմ տուն, մի նամակ եմ գրում հայտնի Հաջի-Զեյնալ Աբդին Հազիևին և խնդրում գործ դնել իր ամբողջ հեղինակությունն արյունահեղության առաջն առնելու համար: Նամակը տանում եմ երկաթուղու կայարանը, որ փոստային գնացքին հասցնեմ: Նամակի բովանդակությունը չի կարելի հեռագրով գրել: Կայարանը լիքն է բամվեցի թուրքերով և հայերով: Լուրն արդեն տարածվել է, մարդիկ շտապում են իրենց մերձավորներին օգնության հասնելու: Գիշերը մինչև լույս անց եմ կացնում անխուն, բոլոր իմ մերձավորները Բաֆրում են... Հետևյալ օրը բազմամարդ ժողով է Թիֆլիսի թեմական առաջնորդարանում: Մոնում եմ ներս, դահլիճը ծայրեիծայր լիքն է: Նախագահական սեղանի խոյ նստած է Գարեգին եպիսկոպոս Սաթունյանը՝ Դալայ-Լամայի կեցվածքով, շրջապատված հայ ազգի մանդարինիներով: Ներկա են դաշնակցության գրեթե բոլոր թիֆլիսաբնակ առաջնորդները: Հռետորները հուզված ճառաբանում են, աշխատելով պերճախոսությամբ իրարու գերազանցել: Ոտքի է ելնում հաստ պարանոցով ու կարմիր այտերով մեկը: Ալեքսանդր Խատիսյանն է: Նա բաց է անում իր ջրամբարը և սկսում է ժողովը հեղեղել: Խոսում է, խոսում — վերջ չկա: Փույթ չէ, թող խոսի, ես վաղուց եմ դադարել այդ մարդու ճառերը լսելուց և զբաղված եմ իմ խոյ նստած Հովհաննես Սաղաթելյանի հետ առանձին խոսակցությամբ: Վերջապես Խատիսյանը կապում է իր ջրամբարը և հոգնած ու բրտնած նստում է, իր կարմիր երեսը թաշկինակով սրբելով: Նրան փոխարինում է Ավետիք Ահարոնյանը, «Լռության» հեղինակը մի՞թե կարող է լռել, երբ խնդիրն աղետներին է վերաբերում: Անկասկած Ահարոնյանը բնածին հռետոր է, գիտե ծաղկազարդ խոսել, բայց բովանդակությո՞ւնը... Հիշում եմ նրա այդ օրվա ատենաբանությունից հետևյալ գոհարը.

— Եկեք էջմիածնից հրավիրենք հայ ժողովրդի հայրիկ Խրիմյանին, թափենք նրա փեշերի մեջ մեր կանանց ու երեխաներին, գնանք այդ Մալամա կոչված սատրապի մոտ և ասենք. «Ոչ մենք ենք մեղավոր, ոչ թուրքերը, այլ դուք, պատասխանեցե՛ք»:

Բուռն ծափահարություններ Ահարոնյանին: Սակայն Բաֆրից եկած պատգամավորների սպասածն այդ չէր: Նրանք երեք հոգի էին: Զգիտեմ ինչպես թուրքերի ձեռից փախել, եկել էին Թիֆլիս՝ օգնություն աղերսելու: Նստած էին դահլիճի անկյունում գունատ, կծկված և լսելով հռետորներին, նայում էին իրարու երեսի տարակուսանքով: Վերջապես նրանցից մեկը-ճանաչում էի, Միխայել Ունանյան անունով մի ինժեներ էր — բարձրացավ տեղից ու ասաց.

— Պարոննե՛ր, ի սեր մեր զավակների, կովի մի նոր ճակատ մի բաց արեք, աղաչում ենք: Մենք դրա համար չենք եկել, մենք եկել ենք խնդրելու՝ ինչ միջոցով էլ լինի, թեկուզ նույն Մալամայի օգնությամբ, դադարեցնել կոտորածը:

Ժողովը որոշեց գառան լեզվով գայլի գթությունը մուրալ-դիմել գեներալ Մալամային և կառավարության միջամտությունը խնդրել: Մալաման, իհարկե, խոստացավ «բոլոր միջոցները» գործադրել եղբայրասպան կռիվը դադարեցնելու: Սակայն նա արդեն գործադրել էր իր միջոցը, այլևս պարզ էր ամենքի համար ոստիկանության տրված հրամանը՝ գաղտնի աջակցել ջարդարարներին, առերես լինել չեզոք: Սև գործի գլխավոր դերակատարը Բաֆրի նահանգապետ իշխան Նակաշիձեն էր, որ սպանվեց մի հայ տեռորիստի գցած ռումբով...

Աղետը տարածվեց ամենուրեք, ուր միայն կար հայ-թուրքական հարևանություն: Միայն իմ ծննդավայր Շամախին չենթարկվեց պրովոկատորների ջանքերին, չնայելով, որ հայերի թիվն այդ ընդարձակ գավառում թուրքերից տասն անգամ պակաս է: Ինչո՞ւ, միգուցե այն պատճառով, որ այնտեղ չկար ոչ հայ, ոչ թուրք ինտելիգենցիա, և ժողովուրդը ղեկավարվեց իր բնական խմաստությամբ:

Թիֆլիսի քաղաքային ինքնավարության մեջ կայացած մի ժողովում ընտրված էր մի խառը բազմամարդ «հաշտարար մասնախումբ»: Ես ևս կայի անդամների թվում: Ամեն օր ժողովվում էինք, խորհրդակցում, որ գոնե Թիֆլիսի մեջ չլինեն ընդհարումներ:

Դաշնակցականներն ասում էին հեգնանքով.

— Թող ձեր հանձնաժողովը ճառաքանի որքան կամենում է, մենք մերն ենք անելու:

Նրանց նշանաբանն էր.

— Խրատել:

Նրանք պնդում էին.

— Թուրքերը մեզ հետ կհաշտվեն միայն այն ժամանակ, երբ մենք նրանց մի լավ ջարդ կտանք:

Բայց այլևս ուշ էր վիճաբանության համար: Հրդեհը բռնկվել էր, պետք է տարածվեր, և չկար մի ուժ, որ կարողանար նրա առաջն առնել: Ամիսներ տևեց նրա լափը, հազիվ մի տեղ դադարած, բռնկվում էր մի ուրիշ տեղ: Թիֆլիսին տակավին չէր հասել, բայց ազգաբնակությունն սպասման մեջ էր: Լուրեր էին պտտվում, թե թուրքերը Բորչալվի գավառում ուժեր են ժողովում և թե շուտով մի քանի հազար հոգով պիտի հարձակվեն Թիֆլիսի վրա: «Շեյթան» բառը, որ առաջին անգամ արտասանել է սյուննի թուրքերի ծերունի մյուֆթին Գայիբովն, արդեն ժողովրդականացել էր: Այս բառով էին կնքել պրովոկատոր կառավարության անունը:

Հայերից ավելի թուրքերն էին սպասված: Հիշում եմ նրանց մի գիշերվա սարսափը: Իրիկնադեմ էր, պատրաստվում էի գնալ «հաշտարար» մասնախմբի նիստին: Հանկարծ ներս մտավ ինձ մոտ մասնախմբի անդամ երիտասարդ ինժեներ Մելիք-Ասլանովը, մի շատ բարեկիրթ և խաղաղասեր թուրք, որ ապագայում, դժբախտաբար, դարձավ մուսավաթիստ և նշանակվեց մուսավաթյան Ադրբեջանի հաղորդակցության ճանապարհների մինիստր: (Այժմ անցել է, ի պատիվ իրան, բոլշևիկների կողմը) Նա գունատ էր:

— Ի՞նչ է պատահել, — հարցրի ես, տեսնելով, որ մարդը հուզմունքից դողում է:

— Վեր կացեք, գնանք, կառքն սպասում է, ճանապարհին կասեմ:

— Բայց մի բաժակ թեյ խմենք, հետո:

— Անկարելի է, ժամանակ չկա, աղաչում եմ: Դուրս եկանք, կառք նստեցինք:

— Դեպի թուրքերի արվարձանը, — հրամայեց կառապանին Մելիք-Ասլանովը:

— Ո՞ւր ենք գնում:

— Շեյխ-ուլ-իսլամի ընտանիքի մոտ: Լսեցեք, թուրքերի մեջ լուր է տարածվել, թե դաշնակցությունը վճռել է այս գիշեր սրի անցկացնել մեզ: Շեյխ-ուլ-իսլամը բացակա է: Նրա ընտանիքն սպասման մեջ է և ուզում է փախչել Սալիան: Եթե այդ լինի, թուրք ազգաբնակության մեջ կսկսվի անասելի խուճապ: Դուք պետք է համոզեք շեյխ-ուլ-իսլամի ընտանիքին, որ նա տեղից չշարժվի: Դուք պետք է հավատացնեք թուրքերին, որ այս գիշեր ոչ մի վտանգ չի սպառնում նրանց: Նրանք ինձ չեն հավատում. ձեզ կհավատան:

Ես դաշնակցականների գործունեությանը բոլորովին անտեղյակ էի: Գիտեի, որ ինչ-որ պատրաստություններ են տեսնում — բայց չէի կարող հավատալ, որ քսան հազար անմեղների մորթոտելու հիմարությունը կունենան:

Կառքը տարավ մեզ քաղաքի արևելյան ծայրը՝ Օրթաճալայի կողմը: Նա կանգ առավ երկհարկանի մի տան առջև: Մելիք-Ասլանովն ինձ առաջնորդեց ներս: Մտանք մի ընդարձակ սենյակ, ուր ոչ ոք չկար:

— Խոսեցե՛ք, — ասաց Մելիք-Ասլանովը:

— Ո՞ւմ հետ խոսեմ, այստեղ ոչ ոք չկա, — ասացի ես:

— Շեյխի կինն իր զավակների հետ վարագույրի ետևումն է, կլսի:

Ես սկսեցի թուրքերեն լեզվով համոզել տիկնոջը, թե ոչ այս գիշեր և ոչ էլ հետո թուրք ազգաբնակությանը վտանգ չի սպառնում, թե տարածված լուրերն անտեղի են և չպիտի հավատալ չարամիտ մարդկանց ստերին: Դյուրին չէր սարսափահար կնոջը հանգստացնել: Ես լսում էի նրա լացի ձայնը: Ստիպված էի դիմել երդումների, լավ գիտենալով նրանց ազդեցությունը թուրք կնոջ վրա: Մի ժամի չափ խոսելուց հետո, վերջապես, կարողացա ստանալ հաստատ խոստում, որ տիկինը չի փախչի իր զավակների հետ: Դուրս եկանք փողոց. Մելիք-Ասլանովն ասաց.

— Այդ բավական չէ, այժմ գնանք մեչդաղի կողմ, այցելենք մի հանի խանութներ ու տներ և տեսեք՝ ինչ սարսափ է տիրում թուրքերի մեջ:

Մութը նոր միայն սկսվել էր, բայց հակառակ սովորականին, թուրքերի բոլոր խանութներն արդեն փակ էին: Մելիք-Ասլանովը կառքն արձակեց և գարկեց առաջին խանութի դռներին: Ներսից ոչ մի ձայն:

— Երևի ոչ ոք չկա այնտեղ, — ասացի ես:

— Մարդիկ կան, միայն վախենում են ձայն տալ: Բաց արեք, բարեկամներ ենք, մի վախենաք:

Դռները դանդաղորեն բացվեցին: Մի հանի լամպայի աղոտ լուսավորության տակ երևացին չորս մարդ: Նրանք ոտքի ելան, գինված էին:

— Հանգստացեք, մուսուլմաններ, ահա Շիրվանզադեն եկել է հայերի կողմից ձեզ ասելու, որ տարածված լուրերը չար մարդկանց ստեր են:

Ես կրկնեցի շեյխ-ուլ-իսլամի ընտանիքին ասածներս: Մարդիկ թերահավատորեն նայում էին ինձ, միևնույն ժամանակ աշխատում էին ցույց տալ, թե ոչ ոքից և ոչինչից չեն վախենում:

— Մենք չենք վախենում, չենք վախենում, — կրկնում էր յուրաքանչյուրը, — թող ինչ ուզում են անեն:

Անցնում ենք երկրորդ խանութը, երրորդը, չորրորդը, ամենուրեք նույն տեսարանը: Մի հանի թուրքեր գինված են ռևոլվերներով և ինձ վրա ազդելու համար աշխատում են, որ ես տեսնեմ նրանց զենքը:

Մզկիթի մոտ հանդիպեցինք թաղային ոստիկանապետին: Հայտնի պրովակատոր և կատաղի հայատյաց Գլեբովն էր: Վաղուց էի ճանաչում այդ զազրելի տիպին, որի ճակնդեղի պես կարմիր երեսը և լկտի աչքերը միայն բավական էին գուշակելու համար, թե ինչ գարշելի հոգի է նստած նրա մեջ: Նա երկու ոստիկանների ինչ-որ հրամաններ էր տալիս:

— Բարի երեկո, ի՞նչ եք անում այստեղ գիշերվա այս ժամին, — հարցրեց ինձ Գլեբովն իր ամրակազմ և կոպիտ մարմնով ճանապարհս կտրելով:

— Բարեկամիս հետ գիշերային զբոսանք եմ կատարում, — պատասխանեցի ես:

— Իսկ եթե ես ձեզ ձերբակալեմ:

— Ի՞նչ իրավունքով:

— Ինձ տրված հրահանգով: Ես հրաման ունեմ այս գիշեր ոչ մի հայի թույլ չտալ թուրքերի թաղը մտնելու:

Նա հարբած էր, թեև իր ծուռ ոտների վրա ամուր էր արջի պես:

— Որպես հաշտարար հանձնաժողովի անդամներ, մենք իրավունք ունենք անցնել որ թաղով ևս կամենանք, — ասաց Մելիք-Ասլանովը:

— Ձեր հայերն ինձ մեղադրում են, թե ես թուրքերին զենք եմ բաժանում կառավարության կողմից, — շարունակեց Գլեբովը, միշտ ինձ դիմելով, — ասացեք նրանց, որ եթե կառավարությունը կամենա, կարող է հայերին կոտորել առանց թուրքերի օգնության էլ... Այդպես չէ՞, Մելիք-Ասլանով:

Ես ասացի, թե այդ ինձ չի վերաբերում, թե՝ եթե ինքն իրան զրպարտված է համարում, միշտ կարող է իրան արդարացնել:

— Իսկ առայժմ հանապարհս մի կտրեք, ապա թե ոչ վաղը նահանգապետին կգանգատվեմ ձեր դեմ:

— Անցեք, — ասաց Գլեբովը և հեռացավ:

Ես համոզված էի, որ եթե մենակ լինեի, ետևիցս պիտի կրակեր և հետո ասեր, թե թուրքերն են սպանել:

Մինչև ուշ գիշեր պտտեցինք խանութից խանութ, տնից տուն, փողոցներն ամայի էին և սարսափեցուցիչ տպավորություն էին գործում: Տեղ-տեղ երևում էին գիշերապահներն՝ ահագին կոպալներով զինված: Ակամա առաջելությունն ինձ ձանձրացրել էր, հոգնել էի միևնույն երգն ամեն տեղ կրկնելուց:

— Այժմ գնանք գլխավորի մոտ, — ասաց Մելիք-Ասլանովը:

— Ո՞վ է գլխավորը:

— Հաշտարար հանձնաժողովի անդամ Եդիգարովը: Այսօրվա լուրը նա է տարածել որոշ նպատակով: Համենայն դեպս անհրաժեշտ է նրան տեսնել:

Անցնելով մի քանի ծուռումուռ փողոցներ, կանգ առանք մի համեմատաբար մաքուր տան առջև: Ձանգակի ձայնին դուրս եկավ մի թուրք ծառա մի վառ մոմ ձեռում և նայեց մեզ ոտից գլուխ:

— Ես եմ, Սուլեյման, մի վախեցար, — ասաց Մելիք-Ասլանովը:

Մտանք մի նեղ անցք, այնտեղից մի բավական մեծ սենյակ, որի հատակն ու բոլոր պատերը ծածկված էին պարսկական գորգերով: Մի պատի տակ մետաքսյա բարձերով զարդարված թախտի վրա նստած էր խառասուն տարեկան մի տղամարդ ռուս զինվորականի համազգեստով և նարգիլե էր ծխում: Նրա բեհկոնի կոճակները բաց էին. երևում էր ճերմակ շապկի ադամանդյունը: Հեռու, մյուս պատի առջև կանգնած էին երկու զինված թուրքեր, ալ ձեռը հենած դաշույնի կոթին իբրեց մեծավորի հրամանները կատարելու պատրաստակամությամբ:

Զինվորականի համազգեստով մարդը, որ ինքը Եդիգարովն էր, մեր բարևին պատասխանեց գլխի շարժումով, առանց իր դիրքը փոխելու և ձեռով նշան արավ, որ նստենք: Այս աղայական ձևն ինձ ամենևին չշփոթեցրեց: Մարդը բեզ էր ուզում էր իր մեծությունը ցույց տալ ոչ այնքան մեզ, որքան պատի տակ կանգնած թուրքերին, որ երկյուղածությամբ նայում էին նրան:

Մելիք-Ասլանովն ասաց.

— Ահա, բեզ, ես պարոն Շիրվանզադեին խնդրել եմ գալ ձեզ իմ ասածը հաստատելու, թե հայերի կողմից ոչ մի վտանգ չի սպառնում:

Եդիգարովը հեգնորեն ժպտաց և, դառնալով դռները մեզ համար բաց անող ծառային, ասաց.

— Ադա, բեր այստեղ իմ նոր գնած «ալբիամանը»: Ծառան գնաց հարևան սենյակը և շուտով վերադարձավ, բերելով մի ռևոլվեր: Եդիգարովը վերցրեց ռևոլվերը և, առանց իմ կողմը նայելու, բերան նուդղեց դեպի ինձ ու ասաց պատի տակ անշարժ կանգնած թուրքերին.

— Սրա գնդակը կարող է իրարու ետևում կանգնած երեք մարդու կուրծքը ծակել ու անցնել:

— Փա՛հ-փա՛հ, — արտասանեցին թուրքերը զարմացած: Ապա Եդիգարովը, ռևոլվերը մի կողմ դնելով, դարձավ ծառային.

— Ադա՛, բեր այստեղ հրացանս:

Ծառան բերեց: Նույն տեսարանը, ինչ որ ռևոլվերի հետ: Ես նայում եմ Մելիք-Ասլանովին հարցական հայացքով: Ի՞նչ է նշանակում այդ բոլորը, ինչո՞ւ է նա ինձ այստեղ բերել:

Մելիք-Ասլանովն ամոթից գլուխը թեքում է իր կրծքին:

Եդիգարովը, հրացանը մի կողմ դնելով, շարունակում է.

— Այսօր Բորչալվից պատգամավորներ էին եկել, հարցրին. «Գա՞նիմ, թե՞ չէ»: Ես ասացի՝ սպասեցեք, դեռ ժամանակ չէ: Հինգ հազար մարդ են, բոլորն էլ զինված վերջին սիստեմի հրացաններով:

Վերջապես, այդ կատակերգությունն ինձ զզվեցրեց: Բեգն ուզում էր ինձ ահաբեկել և իմ միջոցով հայ ազգաբնակությունը: Սակայն եթե իմ տեղը նույնիսկ մի հինգ տարեկան մանուկ լիներ, պիտի ծիծաղեր, այնքան խաղը երեխայական էր:

— Պարոն Եդիգարով, — ասացի ես, — եթե այդ ձևերով ուզում եք ինձ վախեցնել, — ավելորդ է: Ես այստեղ կռվելու համար չեմ եկել: Մելիք-Ասլանովն ասաց ինձ, թե ինչու համար է ինձ բերել: Ինչպես իմ, նույնպես և ձեր պարտականությունն է ամեն կերպ հանգստացնել ժողովրդին, սուտ լուրերին վերջ տալով: Բարի գիշեր:

Որքան ևս տխմար լիներ այդ բեգը, այնուամենայնիվ շփոթվեց, մի վայրկյան ամաչելով իր հիմարությունից:

— Ներողություն, պարոն Շիրվանզադե, — ասաց նա, հրացանը մի կողմ դնելով, — ես կատակ էի անում: Սուլեյմանն, թեյ պատրաստիր հյուրերի համար:

— Շնորհակալ եմ, — ասացի ես, — մնացեք բարով: Ասացի և դուրս եկա: Մելիք-Ասլանովը հետևեց ինձ:

— Ա՛յ փուչ մարդ, ա՛յ անասուն, — գոչեց նա փողոցում վրդովված, — ներողություն, պարոն Շիրվանզադե, ես չգիտեի, որ այդ մարդն այդչափ հիմար է: Այսօր կեսօրին նա սարսափից դողում էր, ես ձեզ տարա նրան էլ հանգստացնելու, թե երկյուղ չկա հայերից, և հանկարծ այդպիսի պարծենկոտություն:

Վերադարձա տուն գիշերվա երկու ժամին: Պառկեցի ննջելու, չկարողացա: Խղճս հանգիստ չէր: Ինչպես համարձակվեցի վկայել, թե թուրքերին վտանգ չի սպառնում, բանի որ չգիտեմ ինչ են խորհում դաշնակցականները, միգուցե իրո՞ք ծրագրել են բարդուղիմեոսյան գիշեր:

Ես վերկացա, նորեն հագնվեցի, պետք է ինչպես ևէ ճշմարտությունը գիտենալ դաշնակցականներից: Այն ժամանակ ես իմ ընտանիքով կենում էի բժիշկ Լոռու-Մելիքյանի տանը Բեհբության և Վելիամինովսկայա փողոցների անկյունում: Ես վարի հարկումն էի, իսկ վերին հարկում դաշնակցական ղեկավարներից մեկը — լավ չեմ հիշում՝ Կարո Բաստրմաճյա՞ն, թե՞ բժիշկ Համո Օհանջանյանը: Բարձրացա վեր, տանը ոչ ոք չկար: Դուրս եկա փողոց: Այդ օրերին դաշնակցականները գիշերները շարունակ հսկում էին հայաբնակ արվարձանները, փողոցները թափառելով: Երեվանյան հրապարակի վրա հանդիպեցի Կարո Բաստրմաճյանին: Մի բանի երիտասարդներով շրջապատված, ինչ-որ կարգադրություններ էր անում: Հետո իմացա, որ դաշնակցության զինապահեստը նրա իրավունքի ներքո է:

Պատմեցի եղելությունը:

— Թուրբեթի սարսափն այնքան էլ անհիմն չէր, որքան կարծում եք, — ասաց նա: — Մեր տղերքը նրանց արվարձանում գրավել են կարևոր դիրքեր: Այժմ մենք բավականաչափ զենք ունենք: Բավական է որքան համբերեցինք, ժամանակն է մի ինչ թրատել թուրբերին: Ջանազան տեղերում դրված են նավթով լի տակառներ: Բավական է, որ մի կաթիլ հայի արյուն թափվի, վճռված է, թուրբերի արվարձանը հրի մատնելով, բնաջինջ անել ամբողջ ազգաբնակությունը թե մեղավորին և թե անմեղին:

— Ամենի՞ն...

— Ո՛չ, պարսկահպատակներին խնայելու ենք:

— Երևի երկյուղի՞ց:

— Այո: Եթե այստեղ մենք պարսիկներին չխնայենք, այնտեղ Պարսկաստանում նրանք կարող են հայերին բնաջինջ անել:

— Անկասկած: Իսկ թուրք կանանց ու երեխաներին, անկասկած, խնայելո՞ւ եք նույնպես:

— Երբեք, — գոչեց Բաստրմաճյանն ուժգին թափով: — Թուրքերս խնայում են մեր կանանց ու երեխաներին, որ մենք խնայենք նրանց: Ո՛չ, բավական է որքան ներողամիտ եղանք մեր դարավոր թշնամու վերաբերմամբ: Վճռված է ակն ընդ ական և ատամն ընդ ատաման:

Ասացք Բաստրմաճյանը և իր ջախմբով անհետացավ գիշերային խավարի մեջ:

Այդ մարդը դաշնակցականների մեջ համարվում էր մեղմ ու բարեսիրտ: Ապագայում ես մի քանի անգամ պատեհություն ունեցա նրան հանդիպելու զանազան վայրերում տարբեր պաշտոններում: Պատերազմի ժամանակ, այն է՝ 1914 թվականի դեկտեմբեր ամսին Բաստրմաճյանին տեսա Ալաշկերտի ռազմաճակատում կամավորների խմբապետի պաշտոնում: Ցոր տարի անցած, այն է՝ 1921 թվականին Բաստրմաճյանին հանդիպեցի Նյու-Ցորքում: Նա պիտի գնար Վաշինգտոն իբրև դեսպան դաշնակցական կառավարության:

Սարսափի գիշերը ես անցուցի փողոցներում, մերթ երկյուղի մեջ՝ միգուցե հրդեհը բռնկվի, և իմ խիղճը դատապարտվի հավիտենական տանջանքի...

Բարեբախտաբար այդ գիշեր ոչինչ չպատահեց...

XIX

ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ

Գրականության տարի չէր 1905 թվականը: Որքան ևս ամուր ներվեր ունենար գրչի մարդը, չէր կարող հանգիստ նստել գրասեղանի իով: Եվ ո՞վ կտար նրան հանգստություն, քանի որ միջավայրը խռովվել էր: Եթե նա կյանքից փախչելու կամք ունենար, ինքը կյանքը կհետևեր նրան ու կհալածեր: Իսկ կյանքը հեղաշրջվում էր օր-օրի վրա Ռուսաստանում գրեթե հեղափոխություն էր Կովկասում առայժմ միայն ազգամիջյան ընդհարումներ և արյունահեղություն:

Շատերի պես ես էլ հոգնել էի հանրային տվայտանքներից: Միտս չէր գործում ամենևին կամ գործում էր միայն մի ուղղությամբ՝ ինչպես ապրել և ապրեցնել մերձավորներիս, փորձում էի գրել — գրիչս բևեռվում էր առաջին տողի վրա ու առաջ չէր շարժվում: Բացի դրանից, որդիներս ավարտել էին միջնակարգ դպրոցը, հարկավոր էր հոգալ նրանց ուսման շարունակության մասին: Մեծ որդին գնաց Ռուսաստան ուսումը շարունակելու, երկու ամիս անցած՝ վերադարձավ: Բոլոր բարձրագույն դպրոցները փակվել էին. ե՞րբ պիտի բացվեին և բացվելո՞ւ էին արդյոք հայտնի

չէր: Թիֆլիսն այլևս ոչ մի հրապույր չուներ ինձ համար: Ես ձանձրանում էի և գիտեի, որ ձանձրույթը մոխի ու հոգու ցեցն է:

Կար և մի ուրիշ, ինձ համար ավելի կարևոր, հանգամանք — հայ գրական միջավայրի նեխվածությունը: Ես բարեկամներ չունեի գրչի մարդկանց շրջանում և չէի էլ ուզում ունենալ, փորձել էի մեկ-երկուսի բարեկամությունը, հիասթափվել էի: Քսու նախանձ, գաղտնի թշնամություն, վարկաբեկություն -ամեն ինչ տեսել էի այն մի-երկու անձանց մեջ, որոնց բարեկամությանը հավատացել էի:

Այս բոլորն աչքի առջև ունենալով, ես վճռեցի իրագործել իմ տարիների փափագը — ժամանակավոր տեղափոխվել Եվրոպա: Շատ էի հոգնած կյանքի տվայտանքներից, բայց ուժերս չէին սպառվել, և մեծ էր մեջս աշխարհը դիտելու և ուսումնասիրելու ցանկությունը:

Օգոստոսի վերջերին վերցրի ընտանիքս և ուղևորվեցի արտասահման:

Այն ժամանակները դյուրին բան չէր Ռուսաստանի վրայով ճամփորդելը: Երկաթուղիները գործում էին անկարգ, անկանոն: Մի տեղ գիծն էր ավրվել, մի ուրիշ տեղ բանվորների գործադուլ էր կամ ապստամբություն, մի բանի վայրերում հրեաների ջարդ: Նորակոչ զինվորների խմբերն այս ու այնտեղ խարուխաձգ էին անում կայարանների բուֆետները:

Գնում էինք սահմանագլուխ Վարշավայի ուղղությամբ: Մի կայարանում իջա ծխախոտ գնելու: Խուռը բազմության միջով անցնելու ժամանակ հանդիպեցի հարբած նորակոչների: Մեկը նրանցից գոռաց «ջհո՛ւդ, ջհո՛ւդ» և հարձակվեց ինձ վրա: Հետո միայն իմացա, որ ով ռուսի տիպար չունի, այդ մարդկանց համար հրեա է: Մտածելու ժամանակ չէր, կրծքիս հրեցի, ընկավ գետին, կարողացա անվտանգ ազատվել, խառնվելով ամբոխին:

Խարկովի կայարանում վագոն բարձրանալու ժամանակ մեկը կնոջս այնպես հրեց, որ նա ընկավ վագոնի տակ: Բարեբախտաբար գնացքը դեռ չէր շարժվել: Ես հարձակվեցի հրողի վրա և մի ուժգին հարվածով տապալեցի նրան գետին: Ոտքի ելնելով, նա փորձեց փոխհարձակում գործել, մեծ որդիս բռնեց նրա կոճակից և ետ մղեց: Մոտեցավ հերթապահ ժանդարմը:

— Ես ստիպված եմ ձեզ պահել այստեղ և արձանագրություն կազմել, — ասաց նա այն հեզգամիտ ժպտով, որ հատուկ էր ցարական ոստիկանին, երբ նա կաշառքի էր սպասում:

— Խնդրեմ, ահա բեզ թուղթ ու գրիչ, — պատասխանեցի ես, և նրա ափի մեջ սխմեցի մի ռուբլի թղթադրամ:

Ժանդարմը մեզ բարի ճանապարհ մաղթեց:

Ավելի անախորժ եղավ հետևյալը. չեմ հիշում, որ գծի վրա՝ կոնտրոլյորն ասաց, թե տեղափոխման ժամանակ սխալ ուղի են վերցրել և թե պետք է առաջիկա կիսակայարանում իջնենք ու հակառակ կողմից եկող կառախմբով վերադառնանք այսինչ կայարանը և մեր գիծը վերցնենք: Կիսակայարանի անունն էր «Միհուտկա»: Կառախումբն այդտեղ կանգ էր առնում մի րոպե: Իջանք ամայի դաշտի վրա մի փոքրիկ շինության առջև: Ամբողջ երկու ժամ պիտի սպասեինք դիմացի կառախմբին: Կիսակայարանի տնակն ուներ երկու փոքրիկ սենյակներ, նրանցից մեկը կայարանապետինն էր, մյուսը ճամփորդների համար: Սենյակը ոչ մի կահ-կարասի չուներ: Մեր իրերը հատակի վրա գցելով, նստեցինք:

Կայարանապետը մի ծերունի էր՝ բարի դեմքով: Նա, ինձ մի կողմ կանչելով, հարցրեց.

— Դուք քրիստոնյա՞ եք:

— Այո:

— Այդ լավ է, բայց ձեր կրծքի վրա խաչ ունե՞ք:

— Ոչ:

— Ինչո՞ւ, — զարմացավ մարդը:

— Մենք հայ լուսավորչականներ ենք, մեզնում կրծքի վրա խաչ պահելու սովորություն չկա:

— Այդ լավ չէ, — ասաց ծերունին, գլուխը երերելով:

— Ինչո՞ւ լավ չէ:

Զգիտե՞ք. ես սպասում եմ մի ապրանքատար գնացքի, որի վրա կան երկու հարյուր նորակոչներ: Նրանք կայարաններում հարբելով, անկարգություններ են անում: Այս րոպեիս ինձ հեռագրեցին, որ զգույշ վարվեմ նրանց հետ: Անճուռտ նրանք այստեղ էլ մի բան կանեն, ո՞վ կարող է կոպիտ ամբոխին զսպել: Ես ուզում էի ձեզ զգուշացնել, գիտե՞ք, շատ են գրգռված հրեաների դեմ և այնքան կուրացել են, որ ամեն մի ոչ ռուսի մեջ հրեա են տեսնում... Իհարկե, եթե ձեր կրծքի վրա խաչ ունենայիք, կարող էր ձեզ պաշտպանել:

Ասաց ծերունին և հեռացավ, թողնելով ինձ մտատանջության մեջ: Այս փոթորկացած երկրում ամեն ինչ սպասելի է: Մեծ ճիգ էր հարկավոր անհանգստությունս ընտանիքից թաքցնելու համար:

Ապրանքատար գնացքը եկավ: «Տեպլուշկաներից» դուրս թափվեցին նորակոչները և «հուռռաներով» հարձակվեցին կայարանի վրա անոթի գայլերի պես: Տեսնելով, որ բուֆետ չկա, նրանք կայարանապետին հայհոյեցին փողոցային խոսքերով և գուցե ծեծեին, եթե չլիներ նրա ծերությունը: Մի քանիսն ավելի կատաղիներից սկսեցին ջարդոտել դռներն ու լուսամուտները, բարձրաձայն էրէջալով: Պարզ էր, որ այս վանդալականությունը նրանց վայրենի հոգու համար հավասար էր բարձրագույն զվարճության:

Ես մտածում էի՝ ի՞նչ կլինի իմ ընտանիքի ճակատագիրը, եթե մեկն ու մեկը թեկուզ կատակի համար բացականչի՝ «ահա ջհուդներ»: Օդեսայի և Քիշինևի ջարդերից գիտեի, թե քանի հույն և ուրիշ էրիստոնյա ընտանիքներ այդ ամբոխի զոհերն են եղել: Ով եղել է նման վիճակում, նա միայն կարող է հավատալ, եթե ասեմ, որ հոգիս ու միտս կաշկանդվել էին այնպես, որ ոչ միայն մի բառ արտասանելու, այլև որևէ շարժում անելու ուժ չունեի: Ես դարձել էի երկրին գամված մի անշունչ առարկա:

Վտանգ ասված բանը կարծվածի չափ սոսկալի չէ. երբ նա սպառնում է անձնական կյանքիդ: Նա ահռելի է, երբ մերձավորներիդ կյանքն է նրան ենթարկված: Ինձ թվում էր, որ ընտանիքս կանգնած է անդնդի եզրին. մի ձայն, մի հնչյուն, — և նա անխուսափելիորեն կործանված է:

Բարեբախտաբար, ինքը կայարանապետն էլ սարսափի մեջ էր, ուստի, մեքենավարի հետ համաձայնության գալով, կարողացավ գնացքը բաց թողնել ժամանակից առաջ: Այնուամենայնիվ մի ամբողջ ժամ տևեց, մինչև որ կարողացավ խուժանը ժողովել վագոնները:

Եվ այսպես, ամենուրեք անախորժություն: Թիֆլիսից մինչև սահմանագլուխ հինգ օրվա ճանապարհն անցանք տասնումեկ օրում, ուղիղ այդքան անգամ փոխվելով գնացքից գնացք:

Երբեք չեմ մոռանալ այն երջանիկ ժամը, երբ առաջին անգամ ոտք դրեցի ցարական Ռուսիայի սահմաններից դուրս, թվաց ինձ, որ իմ գերված հոգին ազատվեց սոսկալի մղձավանջից, և ես դարձա իմ կամքի ու կյանքի տերը...

1927 — 28 թթ.

Թիֆլիս.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԸ

Մենք որոշել էինք առանց որևէ տեղ հապաղելու, ուղղակի Փարիզ անցնել: Բեռլինում կանգ առանք միայն երկու օր, այն էլ տասնօրյա արկածալի ու հոգեհեցուցիչ ճամփորդությունից հետո մի բիչ հանգստանալու նպատակով: Սակայն այդ երկու օրն էլ բավական էին զգալու համար, թե որքան դժվարին ու անախորժ է մարդու կացությունը մի երկրում, որի լեզուն չգիտես:

Իջևանել էինք Ֆրիդրիխ շտրասի առաջնակարգ հյուրանոցներից մեկում: Անունը միտս չէ: Կարելի էր ենթադրել, թե մի այդպիսի հյուրանոցում պետք է լինի գեթ մի հատիկ ծառայող, որը, բացի գերմաներենից, գիտենա մի ուրիշ լեզու, թեկուզ ամենուրեք ընդհանրացած ֆրանսերենը՝ օտարերկրյա հյուրերին սպասարկելու համար:

Ռուսերեն լեզվի մասին խոսք չէր կարող լինել, բանի որ նա այն ժամանակվա Ռուսիայի սահմաններից դուրս գրեթե գոյություն չուներ:

Բայց չգտնվեց բազմաթիվ ծառայողների մեջ մեկը, որը մեր տարբական հարցերին ֆրանսերենով պատասխաներ մեզ. թվում էր ինձ, որ դրա պատճառը ֆրանսերեն չգիտենալը չէր, այլ այն ժամանակվա ազգամոլ գերմանացու անզուսպ ատելությունը դեպի ամեն ինչ, որ ֆրանսիական էր: Չէ՞ որ դա Վիլհելմ Երկրորդի շովեն բաղաքականության շրջանն էր, երբ ամենավերջին գերմանացին մի փոքրիկ Վիլհելմ էր իր մտայնությամբ և զգացումներով:

Չեմ կարող թաքցնել, որ ես երբեք մի առանձին հակում չեմ ունեցել դեպի գերմաներեն լեզուն և առհասարակ դեպի գերման բաղաքակրթությունը: Գուցե դրա պատճառն այն է, որ իմ մտայնությունը սնվել է գլխավորապես ֆրանսիական գրականությամբ: Սակայն այդ երկու օրը ես շատ գոջացի, որ գոնե մի բանի տասնյակ գերմաներեն բառեր չէի սովորել, որպեսզի չկրեի այն դժվարությունները, որ կրեցի իմ անհերելի անփութության շնորհիվ: Բավական է ասել, որ հինգ հոգով մեզ զգում էինք աշխարհից կտրված մի ամայի անապատում, ուր սակայն ամեն մի դեմ մի նորություն և ամեն մի տեսարան մի աշխարհ էր ինձ համար: Տասնուհինգ տարի անցած ես նույն վիճակումն էի Ամերիկայում անգլերեն չգիտենալուս պատճառով: Բայց այնտեղ ինձ հետ էր աղջիկս, Մարգարիտը, որպես թարգման ու աջակից, և ես ոչ մի նեղություն չէի կրում:

Թափառեցինք Բեռլինի փողոցները, մտանք մի բանի խանութներ, մի երկու պարտեզներ, հիացանք բաղաքի շքեղ լուսավորությամբ և զարմանալի մաքրությամբ, ճաշակեցինք Մյունխենի հռչակավոր գարեջուրը ու վիեննական համեղ սուրճը, և դրանով բավականացավ մեր հետաքրքրությունը:

Այնուհետև ամենքիս պաշարեց շուտով հեռանալու փափագը: Բայց այդտեղ էլ հանդիպեցինք դժվարության, դարձյալ լեզու չիմանալու անհնյալ պատճառով: Հարկավոր էր գիտենալ, ո՞ր գնացքն է գնում Փարիզ, ո՞ր կայարանից և օրվա ո՞ր ժամին:

Ես վերցրի երկու որդիներիս, դուրս եկա փողոց ու կանգնեցի Ֆրիդրիխ շտրասի մի անկյունում:

— Այստեղ ի՞նչ պիտի անել, — հարցրեց մեծ որդիս, Ռուբենը:

— Պիտի սպասենք դիպվածի օգնությանը, — պատասխանեցի ես ամենայն լրջությամբ:

Պատանին հեգնորեն ժպտաց:

Դիպվածն, այսինքն՝ անսպասելին, միևչև այդ օրը մի բանի անգամ ինձ օգնել էր կյանքիս դժվար բոպեներին, ուստի իմ մեջ կամ-ակամա գոյացել էր մի տեսակ խուլ հավատ դեպի նրա զորությունը: Չեմ կարող ասել, որ այսօր, կյանքիս արևմուտքում այդ հավատը չմացել է կամ թուլացել, ընդհակառակը, այժմ ավելի եմ զգում նրա ուժը, թեև գիտեմ, որ շատերն իմ ընթերցողներից պիտի ծիծաղեն ինձ վրա:

Նայում էինք մտամոլոր ու անհպատակ աջ ու ձախ, դեպի վեր՝ հոյակապ տների մեր ալբերի համար անսովոր բարձրությանը, դեպի վար, աջ ու ձախ սլացող տրամվայի շրեղ կառքերին ու հատ-հատ երևացող օթոմոբիլներին: Ամեն ինչ, իհարկե, նոր էր մեզ համար, ուստի և հետաքրքրական, բայց և ամեն ինչ սառը, անհյուրընկալ. մանավանդ մարդկանց դեմքերը, այդ մաքուր հագնված ու հստակ սափրված տղամարդկանց a la Վիլհելմ վեր ցցված բեղերն ու հաստամարմին կանանց լրջմիտ ու անժպիտ երեսները, որ արտահայտում էին և՛ կշտություն, և՛ ինքնագոհություն: Եվ ահա պատահեց այն, ինչի վրա խուլ հույս ունեի:

— Բարև ձեզ, — լսեցի մի հեռավոր ծանոթ ձայն, — այդ ե՞րբ եք եկել, ո՞ւր եք գնում:

Դա մի հրեա կոմիվոյաժոր էր: Նա տարեկը երկու անգամ Գերմանիայից գալիս էր Թիֆլիս մի խոշոր մանուֆակտուրային տան կողմից տեղական վաճառականներին ապրանք առաջարկելու: Ես նրան մի ֆանի անգամ հանդիպել էի իմ ազգական մի վաճառականի տանը և մինչև անգամ հետն էլ պրեֆերանս էի խաղացել: Դժբախտաբար մոռացել եմ այդ մարդու անունը: Աբագախոս, արագաշարժ մեկն էր. մարմնացած եռանդ և ուժ, միշտ պատրաստ ծառայելու ուր և ինչ, ում և ինչ, ինչպես առհասարակ երեխաների մեծամասնությունը: Ծառայելու ոչ միշտ շահի համար, այլ հաճախ հենց այնպես, այսպես ասած, իր հոգու պահանջից դրդված: Ապագայում ես շատ անգամ եմ տեսել հրեայի այդ սքանչելի հատկությունը, որ մակերեսորեն խորհող մարդիկ միշտ համարում են շահի ակնկալություն:

Ես պատմեցի մարդուն մեր անախորժ դրությունը: Նա բարեսրտաբար ժպտաց ու անմիջապես առաջարկեց իր ծառայությունը, հայրական սիրով շոյելով երկրորդ որդուս՝ Արմենի գանգուր մազերը:

Մի ժամվա մեջ նա ամեն ինչ կարգադրեց. վերջացրեց հաշիվը հյուրանոցի հետ, ուղեկցեց մեզ մինչև վոկզալ, հանձն առավ տոմսակ գնելու և մեր իրերը տեղավորելու ծանրությունը և ջերմորեն ողջերթ մաղթելով մեզ, հեռացավ մշտական ժպիտն երեսին:

Եվրոպական գնացքների արագությունն այն ժամանակ ինձ համար մի անսովոր երևույթ էր: Սովորած լինելով Ռուսիայի գնացքների դանդաղ շարժմանը, թվում էր ինձ, որ ահա — ահա մեր գնացքը պիտի խորտակվի կամ գծից դուրս շպրտվի, մանավանդ Բելգիայի սահմաններում, ուր այն ժամանակ երկաթուղային երթևեկությունը, ինչպես ասում էին, ավելի արագընթաց էր, քան եվրոպական ուրիշ որևէ երկրում:

Գեղեցիկ է, շատ գեղեցիկ Բելգիան իր արգավանդ դաշտերով, ոչ բարձր անտառապատ լեռներով, մեղմ կանաչազարդ բլուրներով և բազմաթիվ գետերի հանգիստ ու անվրդով հոսանքներով: Թվում է, որ անցնում ես կատարելապես մշակված պարտեզներով ու այգիներով, թվում է, որ այս երկրում չկա և չի կարող լինել ոչ մի թեզ հող անմշակ: Թվում է, որ այդ խորապես արդյունաբերական երկրի անթիվ գործարանները բնության գեղեցկությունից չեն կորզել և ոչ մի հյուլե: Նույնիսկ այդ դալարազարդ գեղեցիկ բլուրների վրա հատ-հատ ճոմարվող գորշագույն դղյակները, արյունոտ դարերի այս խոժոռադեմ վկաները անգամ, կարծես, երկրի ժամանակակից մշակույթից հաղթահարված, ակամա ժպտում են ճամփորդին, ամաչելով իրենց անցյալից: Եվ ես, հետամնաց մի երկրի ծնունդս, հիանալով բաղմակիրթ Բելգիայի բնության մնայուն գեղեցկությամբ, կամա-ակամա մտքումս վրդովվում եմ Ջոն Ռեոսկինի դեմ, որ այնքան անարդար բողոքում էր երկաթուղիների ու գործարանների դեմ, համարելով նրանց բնության հրաշալիքների «ապականիչներ»: Հապա ինչո՞ւ նրանք այստեղ արդյունաբերության այս ծաղկյալ վայրում, ոչինչ չեն ավրել կամ աղարտել, և ինչո՞ւ շոգեկառքի ծուխը նույնիսկ մի տեսակ նոր գեղեցկություն է տալիս կանաչազարդ անտառներին ու ծաղկավետ բլուրներին: Սակայն հղփացած անգլիացի էսթետի բողոքն արդեն նրանով իսկ ծիծաղելի էր, որ նա իր իրերն ուղարկում էր երկաթուղով, իսկ ինքը ճամփորդում էր ձիով կամ կառքով: Դա էլ, երևի մի տեսակ բուրժուական խենթություն էր:

Բելգիայում կանգ չառանք, Փարիզն էր ձգում մեզ, մանավանդ ինձ, այն քաղաքը, որ պատանեկությանս ու երիտասարդությանս երազն էր եղել: Հասանք այնտեղ իրիկնադեմին: Բայց ի՜նչ հիասթափում առաջին իսկ հայացքից: Փարիզն իմ երազների մեջ միշտ եղել էր պայծառ արևի ներքո լուսավառ գույների աշխարհ, և ահա ի՜նչ գորշություն,

երբեք չէի կարող երևակայել: Զննայելով օգոստոս ամսին, եղանակը ցուրտ էր. բարակ անձրև էր մաղում թերև մառախուղի միջով և ցեխոտում մայթերն ու սալահատակները:

Կայարանում մեզ դիմավորեց կնոջս եղբայրը, բժիշկ Հովհաննես Լոռու-Մելիքյանը, որը այն ժամանակ ղեկավարում էր դաշնակցության ծախքով հրատարակվող «Pro Armenia» թերթը, որի մասին կխոսեմ հետո, եթե տրամադրություն կունենամ խոսելու:

Առաջին երեկո իջևանեցինք բժշկի բնակարանում, որ գտնվում էր լատինական արվարձանի Սեն-Միշել բուլվարի վրա, Լյուքսեմբուրգ պարտիզի դեմ: Դա մի շատ համեստ կացարան էր երկու թե երեք ոչ ընդարձակ սենյակներից բաղկացած: Որդիներս տեղավորվեցին մերձակա ուսանողական հյուրանոցներից մեկում:

Ճաշելուց ու մի փոքր հանգստանալուց հետո անզսպելի ցանկություն զգացի դուրս ելնել, անհամբեր էի ինչպես երեխա: Երանելի՜ վայրկյաններ:

Անձրևը դադարել էր, եղանակը փափկացել. հետագայում նկատել եմ, որ աշնանը երեկոները Փարիզում առհասարակ եղանակն ավելի մեղմ է լինում, քան ցերեկները: Դա էլ, երևի, այդ երջանիկ քաղաքի բացառիկ հատկություններից մեկն է:

Սեն-Միշելը, կամ ինչպես սովորաբար անվանում են, Բուլմիշը լատինական արվարձանի այն ժամանակվա ամենակենդանի բուլվարն էր և ուսանողության սիրեցյալ զբոսավայրը: Առաջին բանը, որ գրավեց իմ ուշադրությունը, ոչ կաֆեների պայծառ լուսավորությունն էր, ոչ աղմկալի երաժշտությունը և ոչ էլ կանանց բազմությունը, այլ բեղավոր ու մորուսավոր տղամարդկանց մի հոծ բազմություն, որ, թղթե գույնզգույն կալպակներով զարդարված, վազում էր ընդարձակ մայթով, խելագարի պես գոռալով conspuer, conspuer: Բժիշկն ասաց, թե դրանք համալսարանի ուսանողներ են: Պրոֆեսորներից մեկը դուր չի եկել նրանց, ուստի բողոքում են ու պահանջում, որ կառավարությունը ատելի դասախոսին հեռացնի համալսարանից: Տեսարանն իմ անսովոր աչքերի համար տարօրինակ էր, եթե չասեմ երեխայական ու ծիծաղելի, մանավանդ այդ թղթե գույնզգույն կալպակները: Հետագայում շատ անգամ տեսա նույնիսկ և շատ ավելի երեխայական փողոցային բողոքներ և ընտելացա, այլևս չհամարելով նրանց ծաղրելի: Չէ՞ որ մեր միտքն ու զգացումները շատ անգամ աչքերով են ղեկավարվում և նրանք են, որ հաշտեցնում են մեզ անսովորականի հետ:

Անցանք Սենայի աջ ափը, մտանք գլխավոր բուլվարները, որոնց մասին այնքան լսել էի ու կարդացել: Առաջին հայացք այդտեղ ինձ ոչինչ չզարմացրեց, գոնե այնչափ, որչափ սպասում էի, ոչ բյուրավոր գազային ու էլեկտրական լապտերների կուրացուցիչ լույսը, ոչ մեկը մյուսից փարթամ մագազինների նուրբ ճաշակով զարդարված ցուցափեղկերը, ոչ անթիվ տրամվայների, օմնիբուսների ու կառքերի քաոսային և խառնիճաղանջ խլացուցիչ աղմուկն ու իրարանցումը:

Թվաց ինձ, որ այդ բոլորը ես տեսել եմ վաղուց և շատ անգամ, իսկ Իտալական կոչված աշխարհահռչակ բուլվարը ինձ երևաց կետ առ կետ այնպես, ինչպես տեսել էի նրան մի անգամ երազումս: Ես կարծում եմ, որ իմ տպավորությունը հազիվ թե լիներ ավելի զորեղ, եթե բոլոր տեսածներս լինեին բյուր անգամ ավելի հսկայական ու ավելի շքեղ: Կյանքիս մեջ միայն երկու բան իրենց գեղեցկությամբ ու հզորությամբ չեն խաբել իմ երևակայությունը-Նիագարայի ջրվեժը և Վեզուվի հրաբուխը: Այնտեղ իրականությունը իմ ենթադրությունից բարձր է եղել: Ինձ ավելի ապշեցուցիչ թվաց մի այլ բան-այդ խլացուցիչ ու աղմկարար փարթամության մեջ խուլ մրմնջող սովի ու անոթության հազարավոր ձայները, մուրացիկների այդ ահագին բազմությունը, որ ամեն քայլում կտրում է անցորդի ճամփան, մանավանդ նորեկ և օտարական անցորդների: Հարկավ, ես այնքան պարզամիտ ու անտեղյակ չէի, որ կարծեի, թե մեծ քաղաքներում բոլոր որովայնները կուշտ են, և ոչ մեկի ձեռը ամոթահար չի պարզվում մի ուրիշի առջև «հանուն աստծո» կամ «հանուն խղճի»: Գիտեի, որ չքավորությունը ամենուրեք մարդկության խոցն է, բայց չգիտեի, որ նրա պատկերներն այդչափ բազմատեսակ են, այդչափ այլանդակ և այդչափ ամոթալի:

— Մատիտներ, նոր տեսակի, ամենահարմարն ու ամենաէժանը, շտապեցեք գնել, — մրմնջում է մի թույլ ձայն:

— Շապկի կոճակներ, գիտության վերջին խոսքը, մի բաց թողեք առիթը օգտվելու, — լսվում է մի ուրիշ ձայն:

— Վայրկենաբար ջնջում է բոլոր տեսակի բծերը, ֆիմիայի վերջին հրաշագործությունը, խնամեցեք ձեր հագուստը:

— Մաքրեցեք ձեր ատամները «ադամանդ» վրձինով, և դուք երկար ու երկար տարիներ կապրիք:

— Փարիզը կույր է, Փարիզը խուլ է, սրբեցեք ձեր կոճիկները «Արեգակ» բաղադրությամբ՝ և ձեր ոտների փայլը կհիացնի կանանց:

— Երկու սու, միայն երկու սու, և դուք առմիշտ կազատվեք ոտների կոշտերից:

Դրանք և նման այլ տեսակի գոչյուններ չխավորության ամենամեղմ երգերն են, և ոչ ոքի չեն զայրացնում կամ զարմացնում: Բայց ահա մեկը, որին շրջապատել է անցորդների մի հոծ բազմություն առաջնակարգ կաֆեներից մեկի առջև: Դա է աղաղակող չխավորությունը: Հազիվ հասն տարեկան մի տղա է առանց որևէ մարմնավոր թերության: Ով գիտե, գուցե գործարանական մի բանվոր է, այժմ անգործության գոհ: Գունատ ու հուզված՝ նա կանգնած է ամբոխի առջև մի ձեռում մի փայտի կտոր, ծայրը լաթով փաթաթված, մյուս ձեռում նավթով լեցուն մի սափոր: Նա դողդոջ ձայնով արտասանում է մի հանի բառեր, որոնց իմաստն է, թե իսկույն կտեսնեք ամենատարօրինակն ու ամենազարհուրելին: Հետո, երկյուղած աչքերով աջ ու ձախ նայելով, նա լաթը թաթախում է նավթի մեջ, վառում է և բոցը մոցնում բերանը մի հանի անգամ ու դուրս է բերում: Այնուհետև նա իր բերանը լցնում է նավթով ու վառում: Բերնից դուրս է ժայթքում նավթի բոցը խուլ թնդյունով, ինչպես թոնրից: Ամբոխն անտարբեր նայում է ու հեգնորեն ժպտում: Պատանին գլխարկը վերցնում է ու դիմում նայողներին իր «վարձը» մուրալու: Ամբոխը շտապում է ցրվել, խնայելով իր սուերը: Այնուամենայնիվ մի հանիսը պղնձե դրամներ են ձգում գլխարկի մեջ: Բայց ահա ճիշտ այդ պահին մոտենում է ոստիկանական աժանը և մուրացկանին, թևից բռնելով, հեռացնում է: Թող գնա և մի ուրիշ ոստիկանի ռայոնում ցույց տա իր«հրաշքները»:

Կան և սրամիտ հնարագետներ: Ահա մեկը գետնի վրա դրել է տախտակի կտորներից շինած երկու մարդուկներ և, թելի ծայրից բռնած, հրամայում է նրանց պարել, կռվել, գրկախառնվել, համբուրվել, և մարդուկները կատարում են նրա հրամանները: Հնդամենը երկու սու արժե:

— Ինչ բան է երկու սուն, մի տուփ լուցկի:

Շատերն են գնում սրամիտ խաղալիքը, տանում են տուն, փորձում են, և բան չի դուրս գալիս: Պարզվում է, որ մարդը իր գյուտի գաղտնիքը խոհեմաբար իր համար է պահել:

Ահա մի ուրիշը: Մի նիհար, գունատ ու կծկված ծերունի: Քաղցը և հոգեկան տառապանքները են վաղաժամ աղավաղել նրա դեմքը: Նա թելի մի կտոր անց է կացրել լուցկիների դատարկ տուփի միջով և ինչ-որ փոշիով ողորկել: Նա թելը ֆշշում է այս կողմ, այն կողմ, և լսվում է նոր ձու դրած հավի կչկչոց, կատարյալ հավի կատարյալ կչկչոց:

Այդ էլ արժե երկու սու: Փոքր որդիս գնեց մեկը, տանը փորձեց, և դարձյալ բան դուրս չեկավ:

Ցրտի և կարիքի այդ, ըստ ամենայնի ներելի, հառաչանքները, ազդում են նորեկի վրա միայն առաջին պահ, հետո դառնում են սովորական: Բայց ահա այն, ինչ որ տակն ու վրա է անում մարդու հոգեկան աշխարհը, գրգռելով նրա ծայրագույն նողկանքն ու զզվանքը: Խոսքս այդ հարյուրավոր ու հազարավոր զիշերային «թիթեռների» մասին չէ, որոնք իրանց թանձր շպարած երեսների յուղոտ ժպիտներով և արվեստականորեն խոշորացրած աչքերի հրավերով ճամփա չեն տալիս անցորդներին, առաջարկելով նրանց իրենց լլկված ու կազմալուծված մարմինները: Բուրժուական աշխարհի հավիտենական զոհերն են, որոնց հղփացած Փարիզը հազարներով է շպրտել այդ պճնազարդ բուլվարների վրա, հարկավ կանխավ համելով նրանց թարմ հյութը, ճիշտ այնպես, ինչպես վամպիրն է ձգում իր զոհին, երբ արդեն կշտացել է նրա արյունով:

Խոսքս այլ երևույթի մասին է:

Հազիվ թե աշխարհի երեսին լինի մի ուրիշ մեծ քաղաք, ուր օտարականին, մանավանդ նորեկին, այնպես շուտ ճանաչեն, ինչպես Փարիզում: Փարիսեցին արդեն նորեկի բայլվածքից ու դեմքի ըվարած արտահայտությունից գիտե, որ օտարական է, տեղական վարք ու բարքերին դեռ անծանոթ, ուրեմն և ավելի դյուրին ենթակա շահագործման ու մոլորության: Եվ ամենից շուտ ճանաչողները բուլվարների վրա նրանք են, որոնք guide (առաջնորդ) անվան տակ կատարում են դերերից ամենազազրելին — կավատությունը:

Մինչ մենք, աջ ու ձախ ամեն ինչով հետաքրքրվելով, թափառում էինք անկպատակ, զգացի, որ մեկը բայլ առ բայլ հետևում է մեզ, հատկապես ինձ: Հետևում է և ցածր ձայնով ինչ-որ ասում է: Նայեցի ետ, պատկառելի տարիքով ու դեմքով մի մարդ էր, մաքուր հագնված: Նա անմիջապես ծոցի գրպանից դուրս բերեց մի բուռը լուսանկարներ և, աջ ու ձախ նայելով, մոտեցրեց իմ էթին:

— Նայեցեք, դիրքերի մի ամբողջ սերիա, և բոլորը թարմ, սկսած ինը տարեկանից, — արտասանեց նա շտապ-շտապ: Այստեղից հեռու չէ, էկիպաժի կարիք չկա: Գնանք, չեմ զղջա, շատ գոհ կմնամ, երաշխավոր եմ:

Ես վրդովված երեսս ետ դարձրի, աշխատելով, որ որդիներս չլսեն նրա խոսքերը: Բայց բժիշկը, որ հառորդ դար է ծանոթ էր Փարիզի բարբ ու վարքերին, գիտեր այդպիսիների գնահատականը տալ:

— Գնացեք կորեք, լիրբ, — գոռաց նա առանց տատանվելու:

Մարդը խեղճացած կծկվեց և չքացավ ամբոխի մեջ: Թափառեցինք գլխավոր բուլվարներն ու ավենյուները և տուն վերադարձանք կեսգիշերից անց:

Առաջին տպավորությունս անորոշ էր, խառնիխուռն և ավելի բացասական, քան դրական: Boulevard համարվում են այն փողոցները, որոնք մյուսներից ավելի լայն են և ծառատունկ: Avenue կոչվում են այն նույնպես լայն ու ծառազարդ փողոցները, որոնք սկիզբ են առնում որևէ խոշոր մոնումենտից կամ պետական հոյակապ շինությունից: Գլխավոր կոչված բուլվարները սկսվում են Մադլեն տաճարից և հետևում են իրար՝ մինչև Աենայի ափերը:

Ընդհանուր առմամբ Փարիզը բաղկացած է երեք գլխավոր մասերից — կենտրոնական, աջափնյա (rive droite) և ձախափնյա (rive gauche): Կենտրոնը գլխավոր բուլվարներն են ու նրանց շրջակայքը:Այստեղ է, ի միջի այլոց, և Շանզելիզեն, աշխարհի ամենալայն և ամենագեղեցիկ փողոցը և Place de la Concorde սհանչելի հրապարակը, որ զարդարված է Նապոլեոն Մեծի Եգիպտոսից բերած օբելիսկով և Ֆրանսիայի տասներկու գլխավոր քաղաքների խորհրդավոր արձաններով: Մեկն այդ արձաններից -Ստրասբուրգինը այն ժամանակ կրում էր սգո նշան: Այժմ, երբ վերջին պատերազմից հետո Ալզաս-Լոռեն նահանգը նորեն անցել է Ֆրանսիայի ձեռքը, նրա գլխավոր քաղաքը ազատվել է սգո նշանից:

Կենտրոնումն են տեղավորված մեծ մասամբ խոշորագույն առևտրական տները, մագազիններբը, բորսան, բանկերը, մեծ թատրոնները և այլն: Դա Փարիզի ամենաբուրժուական մասն է, այսպես ասած, նրա գրպանն ու որովայնը: Ուղեղը Սենայի ձախ ափն է: Այստեղ են Լատինական արվարձանը, համալսարանը, Կոլլեժ դը Ֆրանսը, պառլամենտը, Պանթեոնը, Սենատը, Օբսերվատորիան, խոշոր հրատարակչական ընկերությունները, սկսած Հաշետից: Այստեղ է նաև ֆրանսիական ռոմանտիկ վիպասանների ու բանաստեղծների այնքան անգամ նկարագրած ու երգած Սեն-ժերմեն արվարձանը, որ սկսելով Բուրբոնների պալատից (այժմյան պառլամենտը), հասնում է մինչև Լատինական արվարձանը: Հին արիստոկրատիան այժմ էլ մեծ մասամբ այդտեղ է կենում, կաշվից ելնելով պահպանելու իր դարավոր սովորությունները ու ավանդությունները և անզորապես ատելով բուրժուազիային կամ, ավելի ճիշտն ասած, նախանձելով նրա հարստությանն ու զորությանը...

Այդ շարքեշար կանգնած երկու-երեք-չորս հարկանի տները արտաքուստ տարբերվում են Շանզելիզեի կամ մեծ բուլվարների հոյակապ շինություններից ոչ իրանց ոճով ու օրիգինալությամբ, այլ խեղճությամբ: Սակայն յուրաքանչյուրն այդ խեղճերից ունի իր դարավոր պատմությունը: Մերթ ուրախ և շեղ, մերթ մռայլ ու արյունալի:

Փարիզի երկրորդ ճշտանավոր մասը Մոնմարտրն է, արտիստական արվարձանը և գիշերային զվարճությունների և հախուռն ըվայտությունների միջավայրը: Այստեղ կյանքը սկսվում է կեսգիշերին, երբ թատրոններն ու ռեվյուները վերջանում են, և շարունակվում է մինչև առավոտ: Այստեղ են իրենց գիշերներն անցկացնում օտարականները, նրանք, որոնց համար Փարիզը միայն և միայն ըվայտության վայր է: Այստեղ են արևմտյան հյուրիները դատարկում նրանց գրպանները և կրճատում նրանց կյանքը: Այստեղ բուն Փարիզը գործ չունի, նա մի անտարբեր ու հեռավոր վիկա է: Մոնմարտրը համաշխարհային ու միջազգային մի զվարճարան է, ուր շատ անճշտ տեղ ունի ֆրանսիացին: Այդ անթիվ սրճարանները, ճաշարանները, կաբարեները, դանսինգներն և այլն, երբեմն սրամիտ և հաճախ խեղկատակ անուններ կրող զբոսավայրերը 90 տոկոսով լեցուն են օտարականներով, և երբ տասը տոկոսը հաճախորդների ֆրանսիացիներ են, համենայն դեպս ոչ Փարիզից, այլ գավառներից: Ասում են, երբ Էդիսոնը Փարիզ եղած ժամանակ Մոնմարտրը տեսել էր զարմացած հարցրել է.

— Ասացե՛ք խնդրեմ, դուք որ գիշեր-ցերեկ զվարճանում եք, հապա, ե՞րբ եք այդքան աշխատել ու ստեղծագործել:

Մի փարիզեցի պատասխանել է.

— Այս զբոսավայրերը մեզ համար չեն, այլ անգլիացիների ու ամերիկացիների համար:

Ես կավելացնեի. և ռուսների համար, թե՛ այն ժամանակ, թե՛ նամանավանդ այս հետպատերազմյան էմիգրացիայի օրերում: Բայց այս մասին հետո:

Արդարև, ապագայում, երբ ես իիչ թե շատ ուսումնասիրեցի Փարիզը, տեսա, որ ֆրանսիացին, առանձնապես փարիզեցին, այնչափ շռայլ ու ըվայտ չէ, որչափ առաջին հայացք է թվում: Ընդհակառակը, գուցե ոչ ոք չգիտե իր դրամն ու ժամանակը այնպիսի չափավորությամբ ծախսել, որպես ֆրանսիացին և մասնավորապես փարիզեցին: Նրա առասպելական խնայողությունը հաճախ հանգում է ժլատության:

II

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ: ՌՈԴԵՆԸ: ԹԱՏՐՈՆՆԵՐԸ

Մի իանի օր բնակարանի ու զավակներիս դպրոցներում տեղավորելու խնդրով զբաղվելուց հետո ես ազատ էի և ժամանակիս տերը: Վճռել էի առայժմս թողնել գրական պարապմունքներս և զբաղվել ինձ համար նոր աշխարհի ուսումնասիրությամբ: Դժբախտաբար, թեթևամտություն էի ունեցել Թիֆլիսում հրատարակվող մի հայ լրագրի (եթե չեմ սխալվում «Արշալույս» էր նրա անունը) խոստանալ Փարիզից հաղորդելու իմ տպավորությունները: Այդ լրագրի սերն ու տնօրենը Գ. Մ. Կ. — յան անունով մի կոկված ու շպարված երիտասարդ էր: Կյանքի մյուս ասպարեզներում անհաջողությունների հանդիպած մի փոքրիկ բուրժուա էր, եկել փաթաթվել էր հայ գրականության անպաշտպան պարանոցին և «հրապարակախոսության» մեջն էր ճգնում փնտրել իր բախտը: Սահմանափակ խելքի տեր, նեղսիրտ և վերին աստիճանի նյութամոլ ու ժլատ մեկն էր, թեև համալսարանական: Բարեբախտաբար, ես շատ շուտով ճանաչեցի նրան և մի իանի շտապ գրված հոդվածներից հետո շտապեցի կտրել ամեն մի հարաբերություն այդ մարդու և նրա լրագրի հետ, անգամ հրաժարվելով ինձ հասանելիք հոնորարից:

Նյութական կողմից այնքան էլ ապահով չէի: Դարձյալ գրականությունն էր իմ ապրուստի իիչ թե շատ կայուն աղբյուրը: Բայց որդիներիս կրթությունն ապահովված էր: Ռուբենը Ալեքսանդր Մանթաշյանի սանն էր, իսկ Արմենն Ալեքսանդր Մելիք-Ազարյանինը: Առաջինին ուղարկեցի Բելգիա Լիեժի աշխարհահռչակ Պոլիտեխնիկումը մտնելու, երկրորդը՝ հաջողությամբ բննություն տվեց և մտավ Փարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աղջկաս՝ Մարգարիտին տվեցի Մոնպարնասյան արվարձանի կոմյունալ ուսումնարանը, որտեղից նա երեք տարի հետո անցավ Ֆենելոնի անվան լիսեն: Այսպես թե այնպես, գոհ էի կյանքից, նույնիսկ երջանիկ էի զգում ինձ: Երջանիկ, որ ընկել եմ եվրոպական բարձր քաղաքակրթության ամենավառվռուն միջավայրը: Ավա՜ղ, չէի գուշակում, որ երեք տարի անցած,

ճակատագիրն իմ բախտին տալու է մի սոսկալի հարված, սրտիս մեջ ծգելով մի անբուժելի վերք: Հետագայում կասեմ, թե ինչ էր այդ հարվածը...

Օրը մինչև երեկո դեգերում էի փողոցներում: Առաջին մոնումենտը, որ այցելեցի, Notre dame de Paris-ն էր, Փարիզի նշանավոր տաճարը: Դա մի տուրբ էր գոթական հոյակապ ճարտարապետության և Վիկտոր Հյուգոյի հանճարին, որ անմահին տվել էր կրկնակի անմահություն: Այնուհետև իմ հաճախման վայրերն եղան թանգարանները-Լուվրը, Կառնավալեն, Լյուքսեմբուրգը, Կլյունին, հետո կենդանաբանական ու բուսաբանական այգիները, արծանագարդ պարտեզներն ու սկուարները, Բուլոնյան անտառը և այլն:

Կա մի գերմանացի մաղձոտ գրող Մաքս Նորդաու անունով, որի «Փարիզ» վերնագրով գիրքը մի մեծ ապացույց է, թե ինչպես շովինիզմը կարող է նույնիսկ տաղանդավոր մարդկանց կուրացնել և ծգել սև նախանձի և ատելության փոսի մեջ: Այդ ճիպոտ դիտողը, Փարիզի արտաքինը նկարագրելով, միայն մի գեղեցիկ բան է գտնում այնտեղ — Ռիվոլի փողոցը և երեք միլիոն բնակչության մեջ միայն մի հազար մարդ է գտնում իր ուշադրության արժանի:

Փարիզը մի թանգարան է, սկսած միջնադարյան պալատներից և այլ շենքերից — մինչև նորագույն վայրերը: Չկա գրեթե մի պարտեզ կամ հրապարակ, ուր չլինեն գեղարվեստասերի ուշադրության ու հիացման արժանի գործեր: Բավական է միայն Լյուքսեմբուրգ այգին անցնել մի ծայրից մինչև մյուսը, տեսնելու համար, թե Փարիզը արձանագործության ինչ հրաշալիքներ ունի: Դա մի ամբողջ դպրոց է գեղարվեստական ճաշակի ընբռնման համար: Այդտեղ են ի միջի այլոց, Շոպենի, Գուստավ Ֆլոբերի, Ժորժ Սանդի և ուրիշ շատ նշանավոր մարդկանց արձանները:

Փարիզի գլխավոր հատկանիշն այն է, որ այցելուի առջև նա միանգամից չի բացում յուր շքեղությունն ու գեղեցկությունը: Նա նման է այն էմանուել գեղեցկուհուն, որը չի ուզում առաջին իսկ վայրկյանին ժպտալ նոր ծանոթին: Նա լավ գիտե յուր հմայքի արժեքը: Ամիսներ, նույնիսկ տարիներ պետք է ապրել Փարիզում նրան լավ ճանաչելու համար: Ես շատ ճամփորդներ եմ տեսել, որոնք առաջին օրերը պարապվել են Փարիզը, ժխտելով նրա գեղեցկությունը, իսկ հետո հափշտակվել են և տխրությամբ հեռացել նրանից:

Շատ օրեր խլեցին ինձնից թանգարանները, բայց միայն առաջին տարին: Երկրորդ տարուց այլևս չէի այցելում, բացի Լյուքսեմբուրգ թանգարանից: Այստեղ գրեթե ամեն ամիս նոր գլուխգործոցներ են ավելանում և, ով ուզում է հետևել նկարչության ու արձանագործության ընթացքին, պիտի հարատև այցելե այդ թանգարանը: Կառավարությունը այդտեղ է ժողովում Փարիզի երկու սալոններում և այլ ցուցահանդեսներում գնած գործերը: Իսկ գնվում են, իհարկե, միայն ընտիրները: Ցուրաքանչյուր նկարչի կամ արձանագործի բարձրացույն բաղձանքն է իր գործերից գեթ մեկը տեսնել Լյուքսեմբուրգ թանգարանի մեջ: Այստեղ է տաղանդների համբավը բարձրանում: Տասը տարի արտիստի մահից հետո նրա գործը Լյուքսեմբուրգից տեղափոխվում է Լուվր, ուր և արժանանում է անմահության կնիքին:

Ես հետաքրքրվեցի գիտենալ՝ արդյոք Լյուքսեմբուրգի մեջ որևէ հայ արտիստի գործ կա և տեսա միայն նատուրմորտիստ Զաքարյանի մի քանի ոչ մեծադիր գործերը: Ռուս նկարիչներից կամ արձանագործներից ոչ ոքի գործ չեմ տեսել այնտեղ:

Ոչ մի զբոսանք կամ աշխատանք մարդուն այնչափ չի հոգնեցնում ֆիզիկապես ու հոգեպես, որչափ թանգարաններում դեգերելը: Մեղմաս պիտի լինել երկու կամ շատ-շատ երեք անգամից ավելի անցնել ծայրեծայր դիցուք Փարիզի Լուվրը կամ Հռոմի Վատիկանը: Մարդ հոգնում է ոչ միայն այն պատճառով, որ ստիպված է մի քանի տասնյակ կիլոմետր ճանապարհ կտրել հազարավոր սենյակների մեջ, հոգնում է դիտողությունից, ուշադրության լարումից: Աչքերի հոգնածությունը մտքի գործողության հետ ներգործում են մարմնի ամբողջության վրա, և այցելուն թանգարանից դուրս է գալիս ֆիզիկապես միանգամայն կազմալուծված:

Անգամ են, իհարկե, Ֆիդիասին ու Պրաքսիտելին, Ռաֆայելին ու Ռեմբրանտին կամ Ռուբենսին ու Տիցիանին նվիրված ժամերը, բայց երբ չափազանցության ես հասցնում հետաքրքրությունդ, հոգիդ ու մարմինդ ճնշվում են տպավորությունների հորձանքի տակ: Միևնույն ժամանակ ուղեղիդ մեջ առաջանում է մի տեսակ խառն, և երկար օրեր

չես կարողանում տպավորություններդ բաժանել իրարուց ու դասավորել: Գուցե դրա պատճառն այն է, որ մեր աչքերը մանկությունից չեն ընտելացել նման տեսարանների ու մեր հոգին նման տպավորությունների, և մենք, շտապելով ամեն բան միանգամից տեսնել, բռնադատում ենք մեզ մեր պատրաստությունից և ուժերից վեր լուծ վերցնել մեզ վրա:

Ես գրեթե համոզված եմ, որ ֆրանսիացին կամ իտալացին, մանավանդ վերջինը, այնքան չի ճնշվում թանգարանների տպավորությունների տակ, որքան մենք:

Երբ ես թափառում էի Փարիզի և հետագայում Հռովմի ու Նեապոլի հրապարակներում ու պարտեզներում, հախանձում էի մեկը մյուսից զմայլելի արձանների ու կիսարձանների տակ վազվզող մանուկներին, հիշելով մերոնց: Լյուքսեմբուրգ պարտեզը, Լատինական արվարձանի այդ գեղեցկագույն անկյունը, գլխավորապես մանուկների զբոսավայրն է: Օրը մինչև երեկո նրանք, իրանց դայակների կամ մայրերի հսկողությամբ ծառերի ստվերներում խաղալով, շատ բան են տեսնում ու շատ բան սովորում: Փույթ չէ, որ մանկան մայրը կամ դայակը ոչ միշտ ձեռնհաս է տեսածները բացատրելու, ինքը մանկան հոգին լուռ խոսում է այդ սքանչելի արձանների ու կիսարձանների հետ և անգիտակցաբար ծծում է նրանց իմաստը: Նեապոլի բաղաքային պարտեզն այնպիսի հրաշալիքներ ունի, որոնք լավագույն թանգարանների զարդերը կարող են լինել: Նույնը և Հռովմի Վոգեզը և Փարիզի Պարկ-Մոնսոն: Իսկ ի՞նչ են տեսնում մեր մանուկները Թիֆլիսի կամ Բաքվի փողոցներում: Համենայն դեպս, ոչ այն, ինչ որ կարող է կրթել նրանց ճաշակը և նրբացնել նրանց միտքը:

Երբ բացվեցին Փարիզի երկու հոչակավոր սալոնների աշնանային ցուցահանդեսները՝ գնացի տեսնելու: Վերնիսաժի օրն էր: Ինձ ուղեկցում էր անդրիագործ Անդրեաս Տեր-Մարուքյանը, Խաչատուր Աբովյանի արձանի հեղինակը, որ այնպես վաղաժամ մահացավ թոքախտից կամ, ճիշտն ասած, անօթությունից: Դժբա՛խտ մարդ, որպիսի՜ տառապանքներ ու զրկանքներ կրեց նա հանուն գեղարվեստի և հանուն անհաղթելի փափագի մի նեղ ուղի բանալ իր համար արվեստների մայրաքաղաքում և կյանքի բառսում:

Երբ մտա սալոններից չեմ հիշում որի արձանների գալերեան, մի գործ առաջին իսկ հայացքս շշմեցրեց ինձ, և ես մի բանի վայրկյան մնացի բևեռված իմ տեղը: Դեմուդեմ մեջքի կողմով կանգնած էր մի վիթխարի մարդ առանց գլխի: Օգյուստ Ռոդենի վերջին գործն էր Ի՝ Homme qui marche (Մարդ, որ ընթանում է, կամ ընթացող մարդը): Նրա բոքիկ ոտների խոշոր ջլերը ձգվել էին երկաթյա լարերի պես, նրա մարմնի բոլոր մասերը ֆիզիկական զորության գերբնական թափն էին արտահայտում: Թվում էր, որ մարդը կանգնած չէ, այլ իրավ ընթանում է, և այդ դեպքում գլուխն արդարև ավելորդ է:

Ես առաջ էլ տեսել էի հանճարեղ ծերունու ստեղծագործությունները: Լյուքսեմբուրգ թանգարանում դիտել էի նրա հուգիչ «Համբույր»-ը, «Վիկտոր Հյուգո»-ն իր հանճարեղ ու բարեհամբույր դեմքով և Պանթեոնի կուրծքը լուսավորող հոյակապ Le Penseur-ը (Մտածող, խորհող): Բայց այդ գործերից ոչ մեկն ինձ վրա այն զորեղ տպավորությունը չէր գործել, որպիսին գործեց «Ընթացող մարդը»: Իմ ազդվումն այնչափ խորն եղավ, որ ես մի բանի անգամ վերադարձա նորեն ու նորեն դիտելու ու սքանչանալու: Հետագայում, երբ մի բանի անգամ այցելեցի մեծ վարպետի արհեստանոցները, տեսա նրա ոչ պակաս ընտիր գործերը, դարձյալ այդ գործն էր, որ մնաց գերազանց իմ հիշողության մեջ:

— Գիտեմ, — դարձավ ինձ Տեր-Մարուքյանը, տեսնելով իմ մանկական հիացումը, — Ռոդենն անպայման մեր ժամանակի ամենահանճարեղ արտիստն է, բայց հազիվ թե նա ունենա հետևողներ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև դժվար է նրան աշակերտելը: Այն, ինչ ներվում է նրան, մի ուրիշին չի ներվիր: Դուք գիտեք, որ ժյուրին չընդունեց նրա «Բալզակը» բայց այդ ժյուրիի մեջ կար ոչ պակաս տաղանդավոր Ֆալգիերը, որին աշակերտելու բախտ ես էլ եմ ունեցել:

— Սակայն չէ՞ որ նույն Ֆալգիերը, ապագայում զղջալով, կամեցավ իր սխալն ուղղել և ճինեց Ռոդենի արձանը:

— Դա զղջում չէր, այլ ֆրանսիական galenterie. Ռոդենն էլ իր կողմից ճինեց Ֆալգիերի արձանը: Ամենքը նախանձում են Ռոդենի համբավին, բայց ոչ ոք չի հետևում նրան, բացի սկսնակ երիտասարդներից:

— Այդ շատ բնական է և, ով գիտե, այժմ քանի-քանի ապագա ռոդեններ կան նրա արհեստանոցներում:

Հայ արձանագործը արձակեց մի խորը և երկարատև հառաչանք ու ասաց՝

— Այո՛, դուք իրավացի եք, ֆրանսիական ազգը մեծ ազգ է, իսկ մենք...

Նա չավարտեց իր խոսքն և, ձեռը օդի մեջ թոթափելով, առաջ գնաց: Իմ հիշողության մեջ այսօր էլ կենդանի է նրա գյուղացու գծագրություն ունեցող հողագույն դեմքը, որ ծանր մտահոգության և հարատև կարիքի ոգին էր արտացոլում: Կովկասի այն ժամանակվա խուլ անկյունից, Երևանից գալով, նա աշխարհի ամենաթանձր քաոսի մեջ բախտ էր փնտրում և մահ գտավ: Եվ ահա այսօր Աբովյանի արձանը միակ գործն է, որ պետք է մոռացումից փրկե նրա անունը:

Ռոդենի մեծագույն արժանիքն այն էր, որ արձանի կամ մոնումենտի վրա ժխտում էր ավսեսուարի անհրաժեշտությունը, նա պնդում էր և ապացուցեց, թե մարդու կամ առարկայի ներքինը պիտի դրսևորել առանց արտաքին ատրիբուտների: Ահա ինչու նրա le Penseur-ը առողջ, մերկամարմին, հաղթանդամ մի մարդ է, որ մակերեսորեն դիտող մեկը կարող է կարծել, թե ըմբիշ է կամ բռնցքամարտիկ: Նրա վիթխարի մարմինը մեջքից թեքվել է մտքի ծանր գործողության ներքո: Ֆիզիկականը հաղթահարվել, ընկճվել է մտավորի զորությամբ: Շատ հավանական է, որ մի թեկուզ ոչ պակաս տաղանդավոր, բայց շաբլոնային արտիստ, Penseur-ին կներկայացներ վտիտ մարմնով, հյուծված կերպարանքով մեկը կամ այրում մեկուսացած մի ճգնավոր, գուցե և նրա առջևը կդներ ահագին ֆոլիանտներ կամ ձեռը կտար մի գրիչ: Բայց Ռոդենն այդպես չի երևակայել մտածողին: Նա չի ուզեցել և չէր կարող իր նախորդների ու ժամանակակիցների հարթած ուղիով գնալ: Նա իր համար նոր ուղի էր գտել: Նույնն է արել նաև Բալզակի արձանի վերաբերմամբ, ներկայացնելով մեծ գրողին առանց որևէ ավսեսուարի, գրեթե մերկ:

Ռոդենը խորը հոգեբան է, և որպես այդպիսին, նա չի կարող ռեալիստ չլինել և զուր չեն ականավոր քննադատները և ակադեմիկոսները նրա անունը խոշորագույն ռեալիստների ցանկի մեջ մտցրել, վերջապես նա ինքը հպարտությամբ և պարծանքով ընդունեց այդ կոչումը...

Բայց ինչ որ էլ ասեն քննադատներն ու բծախնդիր դիտողները, Ռոդենը տասնուիններորդ դարի վերջին քառորդի և քսաներորդ դարի առաջին քառորդի խոշորագույն ստեղծագործողներից մեկն է, եթե ոչ ամենախոշորը արվեստների ասպարեզում: Նա նույնն է արձանագործության մեջ, ինչ որ վիպասանության մեջ Բալզակը, Ստենդալը, Դոստոևսկին, Տոլստոյը:

Չեմ հիշում, նույն աշնանն էր, թե՞ հաջորդ տարին, երբ առաջին անգամ այցելեցի «Անկախ արտիստների» մի ցուցահանդեսը: Այդ ընկերությունը մեծ սալոնների հետ կապ չունի և նույնիսկ նրանց հակառակ ուղղությամբ է կազմված: Այդ ընկերության մեջ կարող են անխտիր մասնակցել ամենքը, այսինքն և՛ պրոֆեսիոնալ արտիստները, և՛ ամատորները: Նրա ցուցահանդեսների դռները բաց են ամենքի համար: Այդտեղ է, որ այցելուն հանդիպում է արտառոց երևույթների: Պատմեմ նրանցից մեկը, որի մասին ես ժամանակին գրեցի մի հայ լրագրում:

Բավական անվանի մի նկարիչ, կամենալով ծաղրի ենթարկել ցուցահանդեսը և լրագրական քննադատությունը, կանչում է իր արհեստանոցը իր բարեկամներից մի քանիսին, ի միջի այլոց, և մի նոտարի: Նա բերում է մի էշ, կապում է նրա պոչին մի վրձին: Նա սկսում է իշի սանձը քաշել աջ ու ձախ, ետ ու առաջ, էշը շարժվում է, նրա պոչը խաղալով, կտավը ներկում է վրձինով: Նկարը պատրաստ է, մնում է խորագիրը, հնարագետ նկարիչը նրա տակ գրում է «Արեգակի մուտքը (թե ելքը-չեմ հիշում) Ադրիատիկյան ծովի վրա»: Նոտարը արձանագրություն է կազմում, ներկա եղողները ստորագրում են:

— Դուք կտեսնեք, — ասում է նկարիչը, — իմ իշի ստեղծագործությունը ոչ միայն կցուցադրվի, այլև կգովվի լրագրերում:

Այդպես էլ լինում է: Լրագրների մի մասը գովում է իշի նկարը, այցելուների մի խոշոր մասը հիանում է նրանով: Գուցե գտնվեր և մեկը, որ գներ իշի ստեղծագործությունը, եթե կատակասեր նկարչի բարեկամները չշտապեին հայտնել նրա կատակը: Այդտեղից է առաջացել «իշի պոչով» ծաղրական խոսքը, որ այժմ էլ գործ է, ածվում մամուլի մեջ, երբ պետք է լինում ծաղրել այս կամ այն նկարը:

Այդ նույն ցուցահանդեսում տեսա, ի միջի այլոց, մի շատ խայտառակ նկար. Վիլհելմ երկրորդը մերկ և Նիկողայոս երկրորդը նրա առջև կանգնած... ուռած փորով... Շուտով ոստիկանությունը գրավեց այդ նկարը...

Ֆրանսիացին հաճախ ցինիկ է. բայց երբեմն նրա ցինիկությունը զուրկ չէ խմաստից, նաև սրամտությունից: Ոչ ոք չգիտե այնպես ծաղրել, որպես ֆրանսիացին, նրա հատու լեզուն ոչինչ չի խնայում, նույնիսկ ինքն իրան: Լատինական արվարձանի Noctembule կաբարեում ամեն գիշեր դուք կլսեք ֆրանսիական հումորի կծու և հատու նմուշները: Այստեղ ծաղակոծվում է հասարակական բարք ու վարքից սկսած մինչև ընտանեկանն ու անհատականը, պառլամենտի անդամներից, մինիստրներից ու հանրապետության նախագահից սկսած մինչև վերջին բաղաքացին, հարկավ, եթե նրա դեմքն ունի հասարակական որևէ արժեք: Միևնույն ժամանակ ֆրանսիացին գիտե երևույթների իմաստն անմիջապես գունավորել երկու-երեք, երբեմն մի բառով և տալ նրանց ճշգրիտ ու սրամիտ անուն ու տարածել ամենուրեք: Միայն մի դեպքում նա նեղվեց և չկարողացավ բնորոշել: Դա Լև Տոլստոյի ընտանիքից փախչելն էր մահվան նախօրյակին: Այդ ժամանակ ես Փարիզումն էի: Հիշում եմ ինչպես մեծ գրողի անվան ծանոթ ֆրանսիացիները իրարու հարցնում էին.

— Այդ ի՞նչ է նշանակում:

Վերջապես մի ֆելիետոնիստ գրեց.

— Այդ նշանակում է ռուսական «Ничего»:

Թանգարանները ու ցուցահանդեսները ժամանակավորապես կտտացած, սկսեցի այցելել թատրոնները: Մի բան, որ շռայլություն էր իմ նիհար գրպանի համար: Ես ստիպված եղա ախորժակս մի փոքր սանձահարել և թատրոն գնալ շաբաթը մի կամ երկու անգամ: Այդ դեպքում ես ինձս ինձ մխիթարում էի այն իրողությամբ, որ փարիզեցիները շատ չեն հաճախում թատրոնները և սեզոնի ընթացքում մի տասն անգամ թատրոն գնալն արդեն համարվում է բուրժուական շռայլություն: Ես կարող էի, որպես թատերագիր, եթե ոչ ամենուրեք, գոնե «ազգային» կոչված երկու թատրոններում ունենալ ձրի աթոռ: Բայց դրա համար անհրաժեշտ էր մի բանի տեղեր դիմել, բացատրել, խնդրել մի բան, որ հակառակ էր իմ բնավորությանը, ուստի և ատելի: Տեղն է ասել, որ այն ժամանակ հայ թատրոնի ճակատագիրը գտնվում էր Բաֆվի մի խումբ բուրժուաների ձեռքում: Այդ խումբը խնդրել էր ինձ, որ հետևեմ Փարիզի ռեպերտուարին և եթե մեր բեմին հարմար պիես տեսնեմ, թարգմանեմ կամ ուղարկեմ թարգմանելու: Ես իմ մի ճամակում ակնարկեցի, թե դրա համար դրամ է պետք: Պատասխանս եղավ լռություն: Բայց և այնպես, երկու սեզոն ես հետևեցի ֆրանսիական ռեպերտուարին, տեսա տասնյակ պիեսներ, կարդացի հարյուրներ, և թարգմանության արժանի երկ չգտա: Այդ տարիներին առհասարակ ֆրանսիական գրականությունը ճգնաժամի մեջ էր, մանավանդ թատերականը: Ասպարեզի տերերն էին Էդմոն Ռոստանը իր մինչև կոկորդը ձանձրացրած «Սիրանո դը Բերժերակ»-ով, սանտիմենտալ «Արծվիկ»-ով, իսկ հետո իր ռեկլամներով ուռեցված «Chantecler»-ով, Բաթայլն իր հղփացած բուրժուազիայի ընտանեկան կյանքի ինտրիգները որոճող կոմեդիաներով: Բեռնշտայնը իր ներվեր վրդովող մելոդրամներով և մի խումբ երիտասարդ թատերագիրներ, որոնց անուններն այսօր չեմ հիշում, վասնզի մի օր փայլում էին, մյուս օրը չմնում:

Մնում էր կլասիկ ռեպերտուարը, Էսխիլեսը, Կոռնեյլը, Ռասինը, Մոլիեռը, Comedie Francaise-ի հավիտենական տերերը: Մունե Սյուլլին դեռ կենդանի էր, Կոկլենները նույնպես: Առաջինին ես տեսել էի դեռ յոթ տարի առաջ, 1899 թվականին Օդեսայում, ուր ես ախորժած էի ցարական հրամանով: Միջահասակ, նիհար ու գունատ ծերուն էր ալեխառը մորուքով: Տեսել էի «Էդիպ թագավոր»-ի, «Համլետ»-ի և«Օթելլո»-ի դերերում: Նա այն չէր Էսխիլեսի և

Շեքսպիրի երկերում, ինչ-որ տեսա ֆրանսիական կլասիկների գործերում է: Այստեղ գեղեցիկ դեկլամասիոն էր հարկավոր, և Մունե Սյուլլին Ռասինի ուԿոռնեյլի բանաստեղծություններն արտասանում էր ինչպես միայն և միայն ֆրանսիական հանճարը կարող էր արտասանել — զմայլելի:

Մունե Սյուլլին իր հայրենիքի ամենամեծ դերասանն էր: Երկրորդ սյունը բեմական արվեստի՝ Կոկլեն-անդրանիկն էր: Երկուսի տարբերությունը ամպլուաների մեջ էր: Մունե Սյուլլին երգելով էր խոսում: Այդպես էր հին դպրոցը և ֆրանսիական կլասիկ ռեպերտուարը: Կոկլեն-անդրանիկի արտասանությունը պարզ էր ու բնական, նույնպես և ռեպերտուարի պահանջմամբ: Նա ռեալիստ էր բառիս լավագույն իմաստով: Առհասարակ սխալ է ասել, թե ամբողջ ֆրանսիական դերասանությունը խոսում է երգելով և խաղում է կեղծ պաթոսով: Comedie Francaise-ում ժամանակակից պիեսները խաղացվում ու արտասանվում են ոչ պակաս ռեալ տոնով, քան դիցուք Մոսկվայի առաջնակարգ թատրոններում: Չպիտի մոռանալ, որ հենց ինքը ռեալիզմը արվեստների, ինչպես և գրականության մեջ ծնունդ է առել Ֆրանսիայում և այնտեղից է տարածվել:

Ինչ տարբերություն կար Մունե Սյուլլիի և Կոկլեն-անդրանիկի մեջ, նույնն էր ու Սառա Բեռնարի ու Ռեժանի մեջ, թե՛ խաղի և թե՛ ռեպերտուարի վերաբերմամբ: Սառա Բեռնարը դրամատիկ դերասանուհի էր, Ռեժանը՝ կոմիկ: Երկուսն էլ ունեին սեփական թատրոն, երկուսն էլ ապրում էին ծերության տարիները, ճգնելով դանդաղեցնել իրանց աստղերի թեռումը: Եվ մասամբ այդ հաջողվում էր նրանց: Տեսնելով Սառա Բեռնարին Դյումայի «Կամելիաազարդ տիկնոջ» դերում և Ռեժանին Սարդուի «Մադամ Սանժենի» դերում, ո՞վ կարող էր ասել, որ թե՛ մեկի և թե՛ մյուսի տարիքը 30-ից ավելի է, մինչդեռ երկուսն էլ արդեն վաղուց էին թևակոխել կես դարը: Մանավանդ զարմանալի էր Սառա Բեռնարի ախորժալուր, արծաթահնչյուն ձայնը: Մի ձայն, որ տասնուհինգ տարուց հետո լսելիս էլի ինձ հիացրեց իր երիտասարդական թարմությամբ:

Թանգարանները ու դրամայից հետո իմ հետաքրքրությունն անցավ երաժշտության, բայց ոչ հավասար չափով ու ոգևորությամբ: «Grand opera» և «Opera Comique» գնում էի շատ քիչ անգամ: Այդտեղ իմ ժամանակ լավ երգիչներ ու երգչուհիներ չկային, բացի տենոր Ալվարեսից: Լավագույն երաժշտությունը լսում էի Կոլոնի և Լամուրիի կոնցերտներում, նաև այս կամ այն բացառիկ երեկույթներում, երբ մասնակցում էին իտալական հայտնի երաժիշտներ կամ երգիչ-երգչուհիներ: Իսկ գալիս էին նրանք շատ հազախ: Հարկավ, ես ոչ այնքան միջոցներ ունեի և ոչ էլ ժամանակ ամենքին լսելու և տեսնելու: Փարիզն այնքան հարուստ է գեղարվեստական հանույքներով, որ չկա մարդկային հնարավորություն ամեն տեղ գնալու ու ամեն բան տեսնելու: Փարիզը մարդկության ներվերի կծիկն է, այնտեղ մարդը շուտ է հոգնում: Ջուր է այն կարծիքը, թե ֆրանսիացին, ինքն իր վրա սիրահարված լինելով, կույր ու խուլ է օտարազգի տաղանդների ու հանճարների վերաբերմամբ: Ճշմարիտ է, ֆրանսիացին իր արվեստները, իր գրականությունը և առհասարակ իր հաղթակրթությունն է համարում ամենից բարձրը, և շատ բաներում ունի իրավունք, բայց նա գիտե յուրահնչյուրի գնահատականը տալ բավականաճ կողմնապահ և ճիշտ: Հազարավոր փաստեր կարելի է բերել ասածս ապացուցանելու համար, բայց բավական է և մեկը: Ով եղել է գեթ մի անգամ Փարիզում և առիթ է ունեցել ֆրանսիացիների հետ խոսելու, գիտե, թե ինչ հափշտակությամբ են խոսում նրանք ռուս գրականության (Դոստոևսկու, Տոլստոյի և նույնիսկ երկրորդականների), մանավանդ ռուս երաժշտության (Մուսորգսկու, Բորոդինի, Գլինկայի, Դորգոմիժսկու և Ռիմսկի-Կորսակովի) մասին: Հիշում եմ այն օրերը, երբ Փարիզը ծայրեիծայր լեցնում էր ռուս օպերաները՝ ռուս երգիչների բերնից լսելու և ռուս բալետները ռուս արտիստների պարով տեսնելու: Հիշում եմ մամուլի առատորեն շռայլված գովասանքները առանձնապես ռուս բալետին. Միակ առավելությունը, որ այդ դեպքում ֆրանսիացին պահում էր իր համար, այն էր, թե ինքն է առաջին անգամ բալետը Ռուսիա տարել Եկատերինայի օրերում:

Նախքան իմ հիշողությունների ներկա գլուխը փակելը, մի փաստ, թե ինչպես ճամփորդները շտապում են հապճեպ արտահայտվել ֆրանսիացու մասին: Սորբոնի պրոֆեսորներից մեկի դասախոսության առարկան էր մի սեզոն «Օտարների տպավորությունները Ֆրանսիայից»: Հիշում եմ նրա բերած օրինակներից, ի միջի այլոց, հետևյալը: Ոմն

ռուս ճամփորդ-հրապարակախոս փարիզյան թղթակցության մեջ գրում է. «Փարիզում բոլոր բժիշկները շառլատաններ են փոքրիկներից սկսած մինչև հուչակավոր Պաստեորը»:

— Այդ թղթակցությունը, — ասաց պրոֆեսորը հեգնորեն ժպտալով, — գրված է նույն տարին և նույն ամսին, երբ Պաստեորը, իր նորագյուտ շիջուկը սրսկելով Կալուգայի հահանգում կատաղած գայլից խածնված և Փարիզ եկած տասնյոթ ռուսների, փրկել էր նրանց կատաղությունից և մահից:

III

ՓԱՐԻԶԸ ԳԻՇԵՐԸ

Գիշերվա տասնումեկուկես ժամն է. Թատրոնները դատարկվում են, կոֆեները լեցվում են: Գեղարվեստական վայելքից հետո մարդիկ զգում են մի բան ուտելու կամ մի բաժակ սուրճ խմելու պահանջ:

Յուրաքանչյուր փարիզաբնակ իր սիրեցյալ կոֆեն ունի, որին երբեմ չի դավաճանում, օրը երկու անգամ այցելելով սովորական «ապերետիվն» ընդունելու համար: Բայց թատրոնից դուրս գալիս նա հապճեպ մտնում է առաջին պատահած կոֆեն, նա ետապում է, ժամանակ չունի խորություն դնելու, ուղիղ տասներկուուկես ժամին «Մետրո»-ն (ստորերկրյա երկաթուղի), դիլիժանսները (այժմ բացառապես օթոբրյուսներ) և տրամվայները դադարում են գործել: Շատերը կենում են մեծ թատրոններից հեռու, իսկ մասնավոր «տաքսի» (հիմնաբարժ) շատ էչերն են վերցնում: Փարիզեցին առհասարակ ժուժկալ է և խնայող, հաճախ ժլատության չափ. Եվ ունի իրավունք այդպես լինելու, նրա եկամտի յուրաքանչյուր սանտիմը չափի տակ է: Նա չի կարող այդ սանտիմը դեն շպրտել:

Մոտ երկու ժամին սկսում են փակվել և կոֆեները: Չէ որ «գարսոն»-ներն էլ (տղա, սպասավոր) հանգստի պահանջ ունեն: Եվ ահա նրանք արտակարգ աղմուկով և իրարանցումով աճապարում են տեռասների վրայից վերցնել ու ներս տանել նստարանները ու աթոռները, «մետրդօթել» դրակոնյային հսկողության ներքո:

Նրանք հոգնած են անսահման: Շատերը հազիվ կարողանում են խայլել, շշուկներով անիծելով իրանց ճակատագիրը: Նրանք ծառայության եկել են առավոտյան ութ ժամին և աշխատել են գիշերվա մինչև երկու ժամը, տասն և ութ ժամ: Եվ ինչպե՜ս են աշխատել — մի՛շտ ոտքի վրա, նրանք ծառայության ժամանակ չունին իրավունք նստելու, բացի այն կես կամ մի ժամից, որ տրվում է նրանց նախաճաշի կամ ճաշի համար: Եվ ի՞նչ են ստանում նրանք իրենց տիրոջից, ոչինչ: Շատ կոֆեներում սպասավորները իրենք են վճարում կոֆեի տիրոջը, օրական 2 — 3-5 ֆրանկ «ջարդի», այսինքն՝ ափսե կամ բաժակ կոտրելու համար: Վճարում են, միևնույն է, կոտրե՞լ են, թե չէ: Բացի դրանից, կոֆեներում այցելուների գործածած թուղթը, ծրարն ու գրիչն էլ նրանց հաշվին է: Միակ նրանց վարձը «պուրբուարն» է, այն տասը տոկոսը, որ այցելուն շպրտում է նրանց, շատ անգամ մտքում տրտնջալով: Ծառայության ժամանակ նստելը նրանց արգելված է ընդունված սովորությամբ: Ջպեմ է, որ այցելուները ու անցորդները սպասավորներին տեսնեն նստած: Հակառակ դեպքում կոֆեի վարկը կարող է ճոճմանալ. «Սպասավորը նստած է, ուրեմն գործերն անաջող են», — այսպես կմտածե տեսնողը:

Երկու ժամն է: Այլևս ամայի են մեծ ու փոքր բուլվարները ու պողոտաները: Այս ու այնտեղ հազիվ երևում են հատ-հատ ուշացած անցորդներ, այս ու այն ֆառուղիի վրա, գազային լապտերի ստվերում նշմարվում է կարճ ուսնոցի մեջ ցրտից կծկված ոստիկանի գորշագույն կերպարանքը: Մերթ ընդ մերթ ասֆալտյա սալահատակով սրընթաց սլանում են գիշերային պահակները վելոսիպեդներով, երկուսը, երեքը, երբեմն չորսը միասին: Մթության մեջ կանի վիթխարի չղջիկների տպավորություն են գործում իրանց լռությամբ և սառն օդի մեջ գալարվող ռոնոցներով: Կարծես երկրի վրա չեն, այլ օդի մեջ:

Այն տարին այդ գիշերային վելոսիպեդավոր պահակները Փարիզի համար նորություն էին, Դա պրեֆեկտ Լեպինի, այդ փոքրահասակ, աղվեսանման և իր արտաքին ոչնչության տակ ծայր աստիճան դաժան ոստիկանապետի վերջին հնարագիտությունն էր: Բանն այն է, որ «ապաշ» կոչված գողերը, սրիկաները ու մարդասպանները շատ էին

«լրբացել»: Գիշեր չէր անցնում, որ նրանք մի բանի մարդ չկողոպտեին կամ չսպանեին, նույնիսկ կենտրոնական բուլվարների ու փողոցների վրա, Փարիզը դարձել է ծայր աստիճան վտանգավոր գիշերային մենավոր անցորդների համար: Մամուլը աղմկում էր, ոճիրները տասնապատիկ խոշորացնելով և ամենամռայլ գույներով նկարագրելով: Այդ կողմից առանձին եռանդ ու խանդ էին գործադրում բուրժուական թերթերը: Բայց ի՛նչ օգուտ, հնարագետ Լեպինը, որ մեծ վարպետ էր բանվորական խաղաղ ցույցերը կամ հակապետական ժողովները հետապնդելու և իր բյուրավոր աժանների կրունկների տակ ձգելու արվեստի մեջ, այս անգամ չկարողացավ իր գլխի տեր բուրժուազիայի հանգստությունն ապահովել, Ապաշները կային, մնացին և այժմ մանավանդ կան ու «գործում» են:

Ովքե՞ր են նրանք: Այս մասին մի բանի խոսք:

Ապաշները Փարիզի հասոսային կյանքի գունագեղ ծնունդն են, նրա արգանդից ելած, նրա արյունից ու ոսկորից բաղկացած, նրա ճարպակալած մարմնի խոցը:

Ապաշը խուլիգանի ամենահանդուգն ու ամենավտանգավոր տեսակն է: Նրա միակ արհեստն է կողոպուտն ու սպանությունը հանուն կողոպուտի: Նրա գոյության գործիքն է աջ ձեռով վարտիքի գրպանում բռնած դանակը և շատ հիչ դեպքերում revolverը, որովհետև այս վերջինը թանկ է նրա համար:

Ապաշը ծայր աստիճանի խուժադուժ է, բայց ոչ բաջ: Նա մենավոր անցորդի վրա մեծ մասամբ կռնակից է հարձակվում ու, նախքան կողոպտելը, երկաթե գավազանով կամ ստիլետով հարվածում է նրա գլխին ու ուշաթափեցնում: Պատահում է, որ դեմուդեմ էլ է հարձակվում: Այս դեպքում նա, մենավորին հանդիպելով, հեռվից արդեն իրան հարբած է ձևացնում, մոտենում է երերվելով և հանկարծ գլխով զարնում է իր զոհի որովայնին: Նա գիտե որ կողմին հարվածել: Զոհն ուշաթափվում է, և ապաշը դատարկում է նրա գրպանները: Վա՜յ, եթե զոհը արթնանա և ընդդիմադրի, կայծակի արագությամբ դանակը կխրվի նրա սրտի մեջ:

Ցուրաքանչյուր ապաշ ունի հարճ, որին նա կոչում է amie, երբեմն մի բանիսը: Նա ամենից հովանավորն է, կատաղի պաշտպանը և ամենից շահագործում է յուրաքանչյուրի ձիրքի և ընդունակության համաձայն: Գլխավորապես նա amie-ների միջոցով է զոհերին իր ուղևանը որսում: Մի կին, որ մի անգամ ընկել է ապաշի ձեռքը, չունի այլևս ոչ մի հնար նրա ճիրանիներից ազատվելու, իսկ եթե փորձե ազատվել, անմիջապես կարժանանա նրա դանակի հարվածին, որ մեծ մասամբ մահացու է: Ապաշը վերին աստիճանի խանդոտ է, և վա՛յ այն կնոջը, որ կդավաճանի նրան: Եվ այս romantique հողի վրա օր չի պատահում, որ Փարիզում տեղի չունենա որևէ դրամա, մեծ մասամբ սպանություն:

Ապաշները ունեն իրենց երգերը, իրենց երաժշտությունը, իրենց գրականությունն անգամ: Դա մի առանձնակի և ինքնահատուկ մշակույթ է: Կան երաժիշտներ ու բանաստեղծներ, որ հատկապես նրանց համար են հորինում կամ նրանց կյանքը և վարքն ու բարքերն են երգում ու դրվատում: Շատերն այդ երգերից ու romanceներից անցնում են բուրժուական սալոնները: Ճաշարաններ ու սրճարաններ կան, որոնց հաճախորդները գրեթե բացառապես apaches են: Շատ վտանգավոր է կողմնակի անձանց համար այդ վայրերում երևալը: Մի բանի անգամ ես առիթ եմ ունեցել գնալու, բայց միշտ մի խումբ ընկերներով: Դժվար է անտարբեր նայել հմուտ ապաշի աչքերի բիբերին, այո՛, բիբերին, վասնզի նրանց մեջ դուք տեսնում եք ոճիրի դրոշմը ու սերը, այնտեղ եք կարդում մարդու հոգին, եթե միայն մնացել է որևէ հոգի այդ alcoholից թունավորված և ցավայտությունից վաղաժամ հյուծված ու կազմալուծված մարմնի մեջ: Շատ կարճ է տևում ապաշի գործունեությունը և նույնիսկ կյանքը: Միջին 28-30 տարեկան հասակը նա կամ գլխատված է, կամ սվսորված: Կան ապաշներ, որոնք իրանց արտաքինով ոչնչով չեն տարբերվում սովորական բաղաքացիներից: Հագնվում են այնպես, ինչպես առօրյա բուրժուաները-հարուստ, մաքուր և միշտ ճաշակով: Ավելի վտանգավորները դրանք են: Նրանց գործողության վայրերը փողոցները չեն, այլ թատրոնները, վարիետեները, մանավանդ բանկագին խանութները, բանկերը կամ բորսան: Դրանք ավելի խոշոր ոճրագործներ են, ավելի նրբացած և ավելի սոսկալի: Նրանց հոգու ղեկավարը միայն շողոքուն ոսկու համբէը չէ, այլև անասնական տարփանքը դիվային վավաշոտության: Պատմեմ մի ցցուն դեպք վերջին տեսակի ոճրագործների կյանքից: Որքան հիշում եմ, Սոլեյան էր նրա անունը: Քսանևութ-երեսուն տարեկան երիտասարդ էր, արդեն ամուսնացած և այժմ այրի: Նա ծանոթանում է իր հարևան այրի կնոջ հետ: Այրին

ունի 8-9 տարեկան մի սիրուն ու խարտյաշ աղջիկ, միակ զավակը: Իր համեստությամբ, իր արտաքին հեզիկ ձևերով, իր նվերներով ու գուրգուրանքով Սոլեյանը գրավում է այրի կնոջ համակրանքն ու հավատը: Մի օր նա խնդրում է այրիից՝ թույլ տալ իր փոքրիկին նրա հետ արվարձանի թատրոնը գնալու: Այրին թույլ է տալիս ուրախությամբ: Թող փոքրիկը առաջին անգամ թատրոն տեսնի և զվարճանա: Աղջիկը գնում է: Մայրը նրան սպասում է ամբողջ երեկո, ամբողջ գիշեր: Լուսաբաց է, իսկ աղջիկը չկա: Մայրը վազում էՍոլեյանի մոտ:

— Ո՞ւր է իմ երեխան:

— Ա՜հ, տիկին, ես հուսահատության մեջ եմ: Թատրոնից դուրս գալու ժամանակ փոքրիկը հանկարծ բաց թողեց իմ ձեռը և մնաց ամբոխի մեջ: Փնտրեցի երկար ժամանակ, չգտա, վազեցի ամբողջ գիշեր դես ու դեն, չկա ու չկա: Այժմ հոգնած եմ սաստիկ և ուժասպառ, — ավարտում է իր խոսքը Սոլեյանը և դռները փակում է հուսահատ մոր առջև:

Այրին վազում է ոստիկանատուն, պատմում է եղելությունը:

Հիշում եմ այն օրերը, երբ կորած աղջկանը փնտրում էին: Ամբողջ ոստիկանությունը ոտքի էր կանգնել: Պրեֆեկտ Լեպինը հայտարարեց, թե 10000 ֆրանկ կստանա նա, ով կգտնե աղջկան: Ռեկլամամոլ «Martin»-ը նույնպես իր կողմից հայտարարեց 10000 ֆրանկ: Հասարակությունը հուզվել էր, մամուլը անասելի աղմուկ էր բարձրացրել: Ես ինքս ամեն առավոտ զարթնելուս պես շտապում էի առավոտյան լրագրները գնելու: Չեմ հիշում չորս թե հինգ օր տևեցին որոնումները: Վերջապես, մի օր հարևաններից մեկը հայտնեց ոստիկանությանը, թե նա երեք օր առաջ Սոլեյանի սենյակի լուսամուտներից մեկի մեջ նկատել է մի դեռահասակ աղջիկ, որ տխուր դեմքով նայում էր դեպի տան գավիթը: Եվ ոստիկանությունը վճռեց անել այն, ինչով պիտի սկսեր-խուզարկել Սոլեյանի բնակարանը: Խուզարկեց և այնտեղ գտավ վառարանի մեջ աղջկա մի ազգրը կիսով չափ այրված, իսկ մարմնի մյուս մասերը կտրտած և այս ու այնտեղ թաղցրած:

Բժշկական ճշնությունը հաստատեց, որ Սոլեյանը, նախքան սպանելը, աղջկան բռնաբարել էր: Ոճրագործը ձերբակալվեց: Դատարանը նրան դատապարտեց գլխատման: Հանրապետության նախագահն այն ժամանակ Ֆալիերն էր, գիլիոտինի սկզբունքային հակառակորդը: Նա դատավճիռը վերածեց տաժանակիր աշխատի: Բուրժուազիան բողոքեց, առանձնապես կանայք, որոնք մի բողոքագիր ներկայացրին նախագահին:

Լեպինն առանց վարանման ասաց լրագրերին.

— Թող գիլիոտինը թոցնի մի քանի գլուխներ, սոլեյանները կխչանան:

Պառլամենտում խնդիր հարուցվեց, արդյոք ինքը նախագահը ամեն անգամ ոճիր չի գործո՞ւմ մահավճիռները փոխելով: Սոցիալիստները հեգնորեն ժպտացին: Հիշում եմ Ժան Ժորեսի զայրացկոտ ճառը պառլամենտում: Մահվան դատավճի՞ռը: Դա փիկցիա է: Գիլիոտի՞նը: Նա, որպես պալիատիվ, անզոր է ոճիրների դեմ: Հասարակական իրավակարգերը պիտի արմատապես փոխել: Կրթության սխտեմն է հոռի, պետք է նրան դնել ուրիշ հունի մեջ: Միայն սոցիալիզմը կարող է մարդկային զազրելի բնազդները սանձահարել:

— Գլխատե՛լ, գլխատե՛լ, — չէր դադարում աղաղակել սոցիալիզմի կատաղի թշնամի Լեպինը բուրժուազիայի ձայնակցությամբ:

Եվ Ֆալիերին ստիպեցին Սոլեյանի հաջորդներին գլխատել: Մի քանի տարի հետո վիճակագրությունը ապացուցեց, որ սոլեյանների թիվը ոչ թե պակասում է, այլ, ընդհակառակը, աճում է:

Որքան ապաշխ զգաստ ու երկչոտ է մեծավոր անցորդներին կողոպտելու կամ սպանելու ժամանակ, նույնքան անվեհեր է բանտի, աքսորի, այո՛, նույնիսկ գիլիոտինի վերաբերմամբ: Եղել են 20-22 տարեկան պատանիներ, որ կառափնարան են բարձրացել անտարտամ, ամուր բայլերով, երբեմն նույնիսկ ժպտալով ու սրախոսելով, որպես օրվա նախանձելի հերոսներ: Եղել են այնպիսիները, որ հրաժարվել են բանտային հահանայի առաջարկած հաղորդությունից:

Ինչո՞վ բացատրել առեղծվածը: Ո՞վ գիտե, գուցե նրանով, որ յուրաքանչյուր ապաշ պատանեկությունից արդեն մտքով ընտելանում է բանտի, աքսորի ու գլխատման գաղափարին: Արդարև, ի՞նչ է բանտը նրա համար: Նա արդեն տասն անգամ եղել է այնտեղ և բարեկամացել է հնչակավոր ոճրագործների հետ: Ի՞նչ է աքսորը: Ջբոսանիֆ դեպի Ալժիրիա կամ Մարոկկո: Ի՞նչ է գիլիոտինը, եթե ոչ ապաշի հերոսային վախճանը, նրա պերճանիքը: Չէ որ երեկ գլխատեցին Ժակ-Ծիծաղկոտին, իսկ անցյալ տարի էտիեն-կաղին: Վաղ թե ուշ ամեն մարդ մեռնելու է. հիմարությո՛ւն: Քանի՛-քանի՛ անգամ «Թաջարի ու բարի Դեբլերը», որ դահիճի արհեստն իր հորից ու պապից է ժառանգել, լրագրերների թղթակիցներին ասել է. «Բոլոր մահերից ամենամարդասերը գիլիոտինն է, կացինս շաչեց բարձրից, ընկավ և բո՛ւթ կտրեց դատապարտյալի գլուխը, ու մի վայրկյանում ամեն ինչ վերջացավ առանց երկար տանջանքների»:

Ո՞րտեղ է ծնվում և ո՞ւր է դաստիարակվում ապաշը: Հարցրեք յուրաքանչյուրին, և հազիվ թե շատերը կարողանան պատասխանել, թե ովքեր են եղել իրանց ծնողները: Իհարկե, անվիճելի է, որ շատ երևույթների հետ ապաշն էլ տիրապետող դասակարգերի ծնունդ է: Մի օրինակ միայն և միայն մեկը շատերից:

Փարիզում կա «Assistance Publique» (հասարակական օգնություն) անունով մի հաստատություն: Նրա նպատակներից մեկն է, ի միջի այլոց, անտեր ու անտիրական մանուկներին ու աղջիկներին խնամելը: Ոստիկանությունն այդ հաստատության շենքն է ուղարկում փողոցներում գտնված անտեր երեխաներին, նրա դռների առջև են ձգում մայրերը ապօրինի ծորածիններին, երբ վճռում են ազատվել նրանց կերակրելու հոգսից կամ իրանց ամոթը թաքցնել: Այնտեղ դռները բաց են «բոլոր թշվառների համար», այսպես է ասում բուրժուական մամուլը:

Այնտեղ բերված կամ ձգված երեխաներին լվանում են, մաքրում, հագցնում, ապա սկսում են սնուցանել ու «կրթել» մինչև տասնուհինգ տարեկան հասակը: Տարրական գրագիտության հետ խնամյալներին սովորեցնում են և որևէ արհեստ — կար ու ձև, հյուսնություն, արկղաշինություն, էլ չգիտեմ ինչ, բայց բոլորը մակերեսորեն, ավելի ձևի և ռեկլամի համար, քան թշվառների ապագան ապահովելու նպատակով: Տասնուհինգ տարին լրացած, հաստատության դռները բացվում են և «խնամվածը» շպրտվում է փողոց: Թող գնա և ինքը հոգա իր ճակատագրի մասին, պետք է տեղ բանալ նորեկների համար: Ահա կյանքի այդ խորք զավակների շրջանից են զգալի քանակությամբ դուրս գալիս ապաշները: Այդ շրջանն է մասամբ հյուր մատակարարում զանազան անուններով ու վարքագույրերի տակ պարուրված անառականոցներին: Ասում եմ մասամբ, որովհետև պոռնիկության պահանջը չափազանց մեծ է Փարիզում, որպեսզի մի որևէ, միջավայր կամ դասակարգ կարողանար նրան լիովին բավարարել: Զարիքի գլխավոր ծննդանոցը կարիքն ու չքավորությունն են, ուր ևս կան նրանք:

Բայց դառնանք Փարիզի գիշերին:

— Գնանք Մոնմարտը, — ասաց ինձ կովկասցի մի ծանոթ, երբ ճաշից հետո Բուլմիշի կաֆեներից մեկում սուրճ էինք խմում:

— Գնանք, — համաձայնվեցի ես:

Առաջին օրը չէր, եղել էի մի քանի անգամ և արդեն բավական ծանոթացել Մոնմարտրի կյանքին: Ծանոթս հայ էր. թիֆլիսեցի: Կլորիկ մարմնով աշխույժ, տակավին բավական երիտասարդ մեկը էր, թեև վաղուց ամուսնացած և արդեն մի չափահաս աղջկա հայր: Հարուստ էր, ուներ Թիֆլիսում մի քանի տներ հորից ժառանգած: Զվարճասեր, ուսող-խմող և վերին աստիճանի վավաշոտ մեկը էր, ինչպես առհասարակ մեծամասնությունը իմ հայրենակիցների: Առաջին անգամն էր Փարիզ գալը, ուստի նորելուկի փութկոտությամբ աճապարում էր որքան շուտ, այնքան էլ շատ վայելել նրա «հաճույքները», որոնց մասին լսել էր շատ առասպելներ:

Նա ասում էր.

— Ինչո՞ւ Մանթաշովը կյանքը կվայելե, ես չեմ վայելիլ, եթե նա միլիոնատեր է, ես էլ ունեմ իմ չափ:

Մանթաշովը նրա իդեալն էր:

Մոնմարտրում կյանքը դեռ չէր սկսվել, բայց ծանոթս ստապում էր: Նա ուզում էր ամբողջ երեկոն ու գիշերը, առանց ժամավաճառ լինելու, հվիրել զբոսանքների:

— Ֆոլի Բերժեր, — ասացի ես կառապանին, երբ Փարիզի աշնանային սովորական մառախուղի մեջ տեղավորվեցինք միածի փակ կառքում:

— Լսեցի, — ասաց գերամարմին ու գլարթաղեմ կոշեն, երկայն մտրակը շաչեցնելով ձիու գլխի վրա:

Այն ժամանակ Փարիզում օթոմոբիլներ շատ քիչ կային, փողոցներում երթևեկն այնքան խճողված չէր, որքան այժմ, երբ, ինչպես Ամերիկայի, նույնպես և Եվրոպայի բաղաքներում օթոմոբիլը վերջնականապես դուրս է մղել ձիակառքերը: «Ֆոլի Բերժեր»-ը ընթացիկ ամսվա ամենաշատ ռեկլամված զբոսավայրն էր: Եկել էին անգլիացի դեռահաս աղջիկների մի խումբ պարուհիներ: Այս առիթով շատ էր խոսվում Ֆոլի Բերժերի մասին: Իբր թե պարուհիների խումբը բաղկացած էր բացառապես Լոնդոնի հայտնի ընտանիքների աղջիկներից, իբր թե նա եկել է ոչ դրամի, այլ իր արվեստը ցուցադրելու համար: Իբր թե խումբը գտնվում էր դայակների հոգածության տակ, որոնք պաշտպանում են նրա անմեղությունն ու անմատչելիությունը: Մեկը անպատկառ ռեկլամներից, որոնք մեզ օտարներիս են կարդացնում խաբել և որոնց վրա փարիզեցին հեգնորեն ժպտում է:

— Ասում են, այդ աղջիկները վարդի կոկոնիներ են, — կրկնում էր հայրենակիցս, անդադար պտույտվելով կառքի մեջ, ինչպես լարված խաղալիք:

Ինձ համար հետաքրքրականը «կոկոնիները» չէին և ոչ «Ֆոլի Բերժեր»-ը, այլ ինքը, ծանոթս: Նա ժամանակակից բուրժուայի կատարելատիպերից մեկն էր: Շատ էլ տգետ մարդ չէր: Գիմնազիոնը ավարտած էր, քիչ թե շատ կարդացած, բավական ճամփորդած և բավական շփված ինտելիգենտ մարդկանց հետ: Նա Թիֆլիսի բաղաքային ինքնավարության անդամ էր, մասնակցում էր զանազան խորհրդակցություններում, ուր քննվում էին բաղաքի տնտեսական, կրթական նաև բարոյական կացության խնդիրները: Վերջապես շատ էր սիրում պտտել մտավորականների շրջանում, որպեսզի ինքն էլ մտավորական համարվեր:

Չգիտեմ ինչու, նա ինձ խնդրում էր, որ ես իրան Սոմիկո անվանեմ և հետը եզակի դեմքով խոսեմ:

Առաջին բանը, որ անմիջապես գրավեց Սոմիկոյի ուշադրությունը, երբ մտանք «Ֆոլի Բերժեր»-ի պրոմենուարը (զբոսավայրը), դռներից ոչ հեռու կանգնած ծաղկավաճառ աղջիկն էր, ոչ այնքան գեղեցիկ, որքան նուրբ ու բարեձև ինչպես միջին փարիզուհին: Սոմիկոն իսկույն մոտեցավ նրան, և, մի փունջ ծաղիկներ վերցնելով, սկսեց հոտոտել, վավաշոտ պավիանի պես իր փոքրիկ աչքերը ճպճպելով ու աղջկան ժպտալով:

— Դու գնա ֆո բանին, ես հետո կգամ, — ասաց խորհրդավոր եղանակով այնպես, որ, կարծես, մի շատ կարևոր գործով պիտի զբաղվեր:

Նա մի քիչ գիտեր ֆրանսերեն, կարող էր նեղություն չզգալ: Փարիզում առհասարակ շատ դյուրին են հասկանում անլեզու օտարականի միտքը և մեծ ճարպիկություն էլ հարկավոր չէ նրա գրպանը դատարկելու համար: Այդ տեսակետից առաջին դափնին պատկանում է հանրային կանանց: Մի քիչ դժվար է հասկանալ օտարականի գրպանի զորությունը և մանավանդ նրա առատաձեռնության չափը, բայց այդ էլ շուտով պարզվում է, եթե օտարականն առաջին անգամն է Փարիզ եկել: Փորձված և աչալուրջ օտարականներն աշխատում են այս կամ այն կերպ թաքցնել իրանց հարստությունը դիմացինի ախորժակը չգրգռելու համար: Սոմիկոն այդպիսիներից չէր: Նա իր ձախ ձեռի մատներից մեկի վրա էր կրում էր մի խոշոր ադամանդ շողշողուն փայլով: Նա ամեն անգամ ծխելիս, ծխախոտի ոսկե տուփը, որ զարդարված էր տասնյակ գոհարներով, դիտմամբ թողնում էր սեղանի վրա, որպեսզի կանայք տեսնեն:

Սոմիկոն երկու-երեք վարդերի համար սեղանի վրա ձգեց մի ոսկի: Աղջկա դեմքը շառագունեց ուրախությունից: Նայեց Սոմիկոյի երեսին ու սև մազերին և մտքում որոշեց, թե դա կամ եգիպտական փաշա է, կամ հնդկական ռաջա, իսկ ես նրա բարեւուղարն եմ:

Ես մտա խուռը բազմության մեջ, սպասելով ներկայացման սկսվելուն: Ինձ ևս հետաքրքրում էին դեռահաս աղգլուհիների ոեկլամված պարերը: Որովհետև առաջին անգամը չէր, որ գտնվում էի այդպիսի մի զբոսավայրում, ուստի գիտեի յուրաքանչյուր ինձ մերձեցող ու թևս մտերմաբար բռնող աղջիկներից մի ֆիչ թե շատ սրամիտ կամ հաջող խոսքով ինձ ազատել: Բայց աղջիկներն այնքան բազմաթիվ են, այնքան սիրալիր ու այնքան համառ իրանց հետապնդման մեջ, որ այցելուն շատ շուտ է հոգնում:

Ես բաժվեցի մի անկյուն և այնտեղից դիտում էի ամեն երկրի, ամեն ցեղի, ամեն գույնի ու հասակի կանանց այդ խառնիճաղանջ և երանգավոր բազմությունը, որին անշուշտ անոթությունն է բերել թափել այդ թեթևակի վարագուրված պռոնկատուրը: Միջավայրը ոչ այնքան եղկելի է, որքան կարեկցելի: Օդը տոգորված է էժանագին անուշահոտ յուղերի բուրմունքով, ծխախոտի թանձր ծխով, կիսամերկ մարմինների շոգիով ու հոտով: Մերթ ընդ մերթ ընդհանուր ծիծաղի ու բրիջների միջից ուշադիր լսելիքը որսում էր խուլ հառաչանքներ, երբեմն նույնիսկ հեծկլտանք: Ո՞վ գիտե դա որ «սիրականից» խաբված կամ կողոպտված էակի հոգու խռովահույզ ճիչն է...

Ինձ մոտենում է մի շատ բարձրահասակ և շատ գեղեցիկ կին պղնձագույն մորթով և թանձր ու սև մազերով, կատարյալ մի Կլեոպատրա: Անշուշտ արևելցի է: Նա ինձնից ծխախոտ է խնդրում: Տալիս եմ, ասում է «մերսի» և չի հեռանում: Նա իր փարթամ ու հոտավետ ստինքը ցցել է ուղիղ դեմքիս ու ժպտում է: Ես չեմ ժպտում, նա բարձրածայն ծիծաղում է: Եվ ի՜նչ ծիծաղ, ի՜նչ ձայնով, ուղղակի ջարդված զանգ, սուր ու գրգռիչ: Անշուշտ, նա գիտեր, իր գլխավոր համայքը այդ չէ և ոչ էլ գեղեցկությունը, այլ մարմնի պղնձյա գույնը, վասնզի նա դրանով է տարբերվում հազարավորներից:

Ո՞րտեղից է նա եկել կամ բերվել: Գուցե Մարոկկոյից կամ Ալժիրիայից, համենայն դեպս նա եվրոպուհի չէ: Տասնուհինգ տարի անցած ես այդ տեսակ գեղեցկուհիներ միայն Եգիպտոսում տեսա...

Տարօրինա՛կ բան, այդ աղջիկը ինձ փոխանակ համակրանքի կամ կարեկցության, երկյուղ է ներշնչում: Թվում է ինձ, որ այդ զարմանալի կանոնավոր կառուցված մարմնի մեջ բուն է գրել արևելյան նենգությունը: Թվում է ինձ, որ ստվերի մեջ կանգնած է նրա դաժան հովանավորը, մի ապաշ կամ «սուտըճեռը», դանակը սրած: Ընդունիր նրա առաջարկած հյուրընկալությունը՝ գնալ նրա սենյակը, «մի գավաթ սուրճ խմելու», և դու արդեն կորած ես: Այնտեղ դու կմորթվես կողոպտվելու համար: Զէ՞ որ լրագիրներից օր չի անցնում, որ չհաղորդեն նման դեպքեր:

Ես շտապում եմ հեռանալ գեղեցկուհուց առանց մի բառ արտասանելու: Ինձ ուղեկցում է նրա սևաթույր աչքերի կայծակը ու կատաղի հայացքը, կարծես ես նրան կողոպտեցի:

Ներկայացումը սկսվել էր. բազմությունը եեղհեղով, մոտենում եմ Սոմիկոյին: Բարեկամս արդեն երջանկության գագաթումն է: Նա սեղանի վրա ձգել է տասնյակ ոսկիներ, վերցրել է անթիվ ծաղիկներ և մեկիկ-մեկիկ ձգում է անցնող աղջիկների վրա: Նա համոզված է, որ հետաքրքրություն է շարժել, որ նրան ամեն կողմից շրջապատել են և բարձրածայն ծիծաղում ու բրիջում են: Ոմանք փաթաթվում են նրա պարանոցին և համբուրում են: Իսկ ծաղկավաճառը, ոսկիները գրպանը ձգելով, հրճվում է: Վաղը նա այդ բոլորը, կպատմե իր ընկերուհիներին, և ամենքը կբրիջան և օտարականի մասին կասեն. «Ահա մի իսկական տխմար»:

Ես թողեցի Սոմիկոյին իր դրախտային վայելքի մեջ, մտա սրահ ու նստեցի մեր օթյակում: Շատ չանցած նա եկավ երկու մաշված ու տաշված գեղեցկուհիների ուղեկցությամբ, երկուսի հետ էլ թևանցուկ:

— Մեկը ֆեզ, մյուսն ինձ, — ասաց նա հաղթական եղանակով:

— Շնորհակալ եմ, երկուսն էլ ֆեզ:

Նա վշտացավ: Ես հետաքրքրվեցի գիտենալ, ինչպես բաժանվեց ծաղկավաճառից:

— Այցետոմսս տվեցի, վաղը կգա ինձ մոտ: Վերջապես, մի շաբ ելույթներից հետո, բեմ դուրս եկան «կոկոնները»:

Սոմիկոն իր դամերին մոռացավ և, կռնակը նրանց դարձնելով, սկսեց ուշադիր դիտել պարուհիներին, այնպես, ինչպես ձիասերն է դիտում արշավի ելած անծանոթ նժույգներին: Անգլուհիները, իհարկե, կոկոններ չէին: Բայց պարում էին հիանալի, հակառակ այն ընդհանրացած կարծիքին, թե անգլոսաքսոնյան ցեղի կանայք առհասարակ համրաշարժ են և չունեն ֆրանսուհու կամ իտալուհու թեթևությունն ու ճկունությունը:

Սակայն Սոմիկոն չհավանեց պարուհիներին:

— Բանի պետք չեն, — ասաց նա, երեսը դարձնելով իր դամերին, — ոտները խիստ երկար են, կուրծք ու... էլ չունեն:

Վերջին մի բառի ֆրանսերենը չգիտեր, ուստի երկու ձեռները դրեց թե մեկ և թե մյուս դամայի որոշ տեղերի վրա: Այդ անսխալ ժեստը մեծ հույս ներշնչեց գուրգուրանքի կարոտ էակներին, բայց ես վճռել էի բարեկամիս ազատել նրանց թավշյա ճանկերից: Ավազ, այդ այնքան էլ դյուրին չէր: Թշվառներն անոթի էին և միանգամայն համոզված, որ մեզ հետ պիտի ընթրեն: Սոմիկոն հակառակ չէր դրան: Ես տվեցի երկուսին կես-կես լուիդոր, ասելով «կառքի համար», և նրանք գոհ մնացին: Այնուամենայնիվ, Սոմիկոն չվարանեց տալ նրանց իր այցետոմսը և վաղվա համար ժամադրություն ճշտանակել, մոռանալով ծաղկավաճառին: Առհասարակ նա յուրաքանչյուր պատահողի, կին թե տղամարդ, տալիս էր իր այցետոմսը: Երևի վճռել էր Փարիզի բառսում լայն ժողովրդականություն վաստակել:

Մոնմարտրում, ի միջի այլոց, կան իրարուց ոչ հեռու երեք կաբարեեներ՝ «Նեյան» (չիք կամ չքություն), «Անֆեր» (դժոխք) և «Սիել» (երկինք):

Դրանք, թեև արտաքուստ բավական օրիժինալ, ըստ էության չնչին բաներ են, բայց ոչ մի եկվոր առանց այդ կաբարեեները տեսնելու չի հեռանում Փարիզից:

Սոմիկոն լսել էր նրանց մասին, ուստի ինձ խնդրեց առաջնորդել իրան այնտեղ:

Գնացինք առաջինը «Ջքություն»: Նա գտնվում է մի մեծ տան նեբիին հարկում: Նրա մուտքը փողոցի կողմից ողարկված է սև ու թանձր վարագույրով ճիշտ այնպես, ինչպես վարագուրվում են կաթոլիկ ննջեցյալի տան դռներն ու եկեղեցու մուտքը, երբ այնտեղ դիակ կա:

Մեզ դիմավորեց դռների մոտ կանգնած մեկը, որ հագած էր դիակառք ուղեկցողի համազգեստ, մոտավորապես հետևյալ խոսքերով.

— Ահա եկան չքության դատապարտված նոր թշվառներ: Եկեք, եկեք, բարի գալուստ: Հավիտենականության դռները պատրաստ են ձեզ գրկաբաց ընդունելու:

Խոնավ ու մութ սենյակ է կամարածև առաստաղով: Պատերի վրա կախված են մարդկային գանգեր և զանազան ոսկորներ: Առաստաղից ձգված է, որպես լապտեր, մի կմախք, մեջը մի վառ մոմ: Սեղանների վրայով դրված են դագաղներ, որոնց վրա տնկած եկեղեցական մոմերը հազիվ հազ փարատում են խավարը: Մեզ առաջարկում են նստել մի դագաղի ծով:

— Արդյոք ինչո՞վ եք փափագում սատկել, շան կաթո՞վ, թե՞ կատվի մեզով:

— Երկու գավաթ գարեջուր, — պատվիրում եմ ես սովորական սրճարաններում այն ժամանակ գարեջրի բաժակն արժեր 40 -50 սանտիմ, իսկ այստեղ 2 ֆրանկ: Եվ ի՞նչ գարեջուր — կատարյալ լվացքի հեղուկ: Ես գիտեմ ինչ է - չեմ խմում: Սոմիկոն փորձում է և իսկույն դեմքը թթվեցնելով գավաթը հեռացնում է իրանից, հայհոյեն մի պատկերավոր հիշոց ուղղելով մատակարարի երեսին:

Բացի մեզնից կան և ուրիշ այցելուներ: Հինգ ամերիկացիներ, դազաղի էով նստած են դիէ-դիէ, անշարժ, կարծես, գերեզմանատան ցցուն բարեր են: Պատերից մեկի վրա կախված է մի մեծ նկար: Մի ինչ-որ երջանիկ և առողջադեմ բուրժուա իր բարեկամների հետ զվարճանում է: Մեր ուշադրությունը դարձնում ենք այդ նկարի վրա: Հանկարծ բուրժուան կապտում է, գունատվում: Նրա մարմինը սկսում է աստիճանաբար փտել, թափվել: Մնում է չոր կմախքը:

— Այս է կյանքը, — լսվում է մի մոայլ ձայն:

Սոմիկոն սկսում է ներվայնանալ և ինչ-որ մրմնջալ: Մեզ վրա ձգում են մանիւակագույն լուսո ճաճանչներ — որտե՞ղից է, չեմ տեսնում: Մեկը տալիս է մեզ մի հայելի, ասելով.

— Հիացեք ձեզնով:

Նայում եմ. դեմքս կատարյալ դիակի գույն ունի: Սոմիկոն սարսափած հայելին շպրտում է գետին ու փշրում:

Նայում է արձանացած ամերիկացիներին, ոտի է ելնում, գոռալով.

— Գնա՛նք, գնա՛նք, ես էլ չեմ կարող այստեղ մնալ...

Ես աշխատում եմ նրան հանգստացնել ասելով, թե այդ բոլորը ուրիշ ոչինչ է, եթե ոչ էլեկտրական գունավոր լույսերի խաղը: Նա մի ինչ հանգստանում է, հետո, ամաչելով իր ահաբեկությունից, ասում է.

— Ես չվախեցա, հանաք էի անում:

Բայց կեղծում է: Նա վախեցավ և շատ սաստիկ: Այդ երևում էր նրա դեմքի գունատությունից, ձայնի հուզումից ու ձեռների դողոցից:

Մի քանի նման շառլատանություններից հետո մեզ բաւե տամուկ կամարների տակով տանում են կաբարեի խորքը: Այնտեղ, սեմի մթության մեջ մեզ դիմավորում է մի ծերունի շատ բարձրահասակ, շատ նիհար, այնպես նիհար, որ կարծես, կաշի էլ չի մնացել նրա վրա: Նրա ճաղատ ու լերկ գլուխը կատարյալ գանգ է, խորն ընկած բուճիերով ու այտերով: Ո՞րտեղ են գտել այդ կենդանի կմախքը: Ակամա մտածում եմ, որ մարդուն արվեստական միջոցներով են այդ դրությանը հասցրել, անօթությամբ կամ դեղերով: Մարդը մեզ ողջունում է անդրգերեզմանային ձայնով, իր գոս ձեռներից մեկը մեզ պարզելով, մյուսով նվազելով կրծիին սեղմած գարմոնիկի պես մի գործիք:

Մենք նրան տալիս ենք մի քանի սու և անցնում վերջին կամարի տակ. դարձյալ կմախքներ ու ոսկորներ: Բայց այստեղ բեմ էլ կա: Դուրս են գալիս գիշերային հագուստով մի երիտասարդ և մի սիրուն կին: Սկսում են սիրաբանել անխոս, միայն շարժումներով: Բայց հենց որ սիրաբանությունը հանգում է վերջաբանին, և գործող անձերը սկսում են մերկանալ, հանկարծ չքանում են:

Սոմիկոն հիասթափված գոչում է.

— Վա՛յ, ափսո՛ս...

Դուրս գալու ժամանակ նրանից պահանջում են կոտրած երկու ֆրանկանոց հայելու համար քսան ֆրանկ: Նա տալիս է անտրտունջ: Առհասարակ նա դրամ չի խնայում, ծախսում է առատորեն, իւիճն իրան արդարացնելով.

— Ֆրանկ է, ռուբլի չէ...

Կամ.

— Փարիզ եկողը փող չպիտի խնայի...

Գնացինք «Դժոխք»: — Այստեղ կենդանի մարդուն ձգում են խարույկի մեջ, այրվում է, մոխիր է դառնում, հետո նորեն կենդանանում է: Բայց Սոմիկոյի համար ամենահետաքրքրականը, իհարկե, «Երկինք»-ն է: Այդտեղ «երջանկություն» է տիրում: Բեմի վրա պարում ու երգում էին շատ թեթև զգեստավորված, գրեթե մերկանդամ աղջիկներ, իսկական աղջիկներ և ոչ լույսերի խաղ:

— Էլ այստեղից ոչ մի տեղ չգնանք, — ասաց Սոմիկոն զվարթացած:

Բայց ինչ անց ավելացրեց.

— Քաղցած եմ, մի բան ուտենք:

Ես ևս քաղցած էի: «Երկնք»-ում ճաշարան չկար: Մենք դուրս եկանք և գնացինք մերձակա ռեստորաններից մեկը — Rat mort…

Այն տարին Rat mort (Սատկած առնետ) Փարիզի մոդային ու թանկ ռեստորաններից մեկն էր: Իմ գրպանի թեթևությունը, կամ, ավելի ճիշտն ասած, թեթևամտությունը, իհարկե, թույլ չէր տալիս ինձ հաճախ այցելելու այդ տեսակ ճաշարաններ, բայց անհրաժեշտ էի համարում գոնե մի քանի անգամ թույլ տալ ինձ այդ շքեղությունը բարբերի ուսումնասիրության տեսակետից: Տեղն է ասել, որ ես միշտայն կարծիքի եմ եղել, թե ռեալիստ գրողը մեծ գեղարվեստական սխալ է գործում, երբ հանձն է առնում նկարագրել անձամբ չուսումնասիրած, մանավանդ չտեսած բաները: Եթե գրողը ուզում է հավատ ներշնչել ընթերցողին, այսինքն նրա վրա ճշմարտության տպավորություն գործել, հապա նա երբեմ չի հասնիլ իր նպատակին, եթե սոսկ իր երևակայությամբ է ղեկավարվել: Ուզում եմ ասել, իրականությունը չէ, որ պիտի ընթանա երևակայության ետևից, այլ ընդհակառակը՝ երևակայությունը պիտի ղեկավարվի իրերի ճիշտ ուսումնասիրությամբ: Ես ամաչելու չափ վատ եմ զգում, երբ մի շարքային պարզ ընթերցող իմ այս կամ այն երկի մեջ ցույց է տալիս ինձ իմ սխալը իրականության դեմ, թեկուզ այդ սխալը վերաբերվի մի որևէ տեսարանի նկարագրությանը: Այդ տեսակ սխալ ես հեղինակի համար համարում եմ նույնիսկ անհերելի, որքան գրվածքի հոգեբանական սխալը:

«Սատկած առնետ»-ի ծաղրելի պատմությունը բավական բնորոշ էր փարիզյան բարբերի համար: Առաջ նա եղել է փոքրիկ գիշերանոց: Մի ինչ-որ օտարական մի անգամ այնտեղ գիշերելիս իր անկողնի մեջ գտնում է մի սատկած մուկ: Նա կանչում է հյուրանոցի տիրոջը և, մուկը ցույց տալով, ասում է.

— Պարո՛ն, ես ձեր հյուրանոցի անունը փոխեցի, այսուհետև ես նրան անվանելու եմ սատկած մուկ ու այդպես էլ գրելու եմ լրագրում: Ես թղթակից եմ:

Ֆրանսիացին չի շփոթվում: Նրա գլխում մի նոր միտք է հղանում: Նա ասում է.

— Շատ գեղեցիկ, ես համաձայն եմ, թող այդպես լինի, միայն խնդրում եմ չգրել Souris mort (սատկած մուկ), այլ Rat mort (սատկած առնետ), այդ ավելի բաղցրահնչյուն է:

Այդ անվան տակ հնարագետ ֆրանսիացին հյուրանոցին ավելացնում է մի սրճարան վարի հարկում և մի գիշերային ռեստորան վերի հարկում: Ջեռնարկը հաջողվում է, ռեստորանը համբավ է վաստակում իր տարօրինակ անվան շնորհիվ:

Այդ տեսակ ճարպիկ աֆերիստները առհասարակ մեծ բաղաքներում հազարավոր միջոցներ ունեն հարստանալու կամ անուն շահելու համար: Այս տեսակետից Փարիզն առաջին տեղն է բռնում: Ոչ մի մեծ բաղաք չունի ամենուրեք կողոպտման դատապարտված ճամփորդների այնպիսի հոծ բազմություն, որպիսին ունե բուրժուական «ազատության, եղբայրության, հավասարության» սահնչելի մայրաքաղաքը: Փարիզը մի լիճ է, որ սնվում է մի կողմից ներս հոսող, մյուս կողմից դուրս հոսող լայնատարած մի գետով: Այնտեղ մշտապես կա միլիոնի չափ ժամանակավոր այցելուների մի բազմություն, որ երբեմ չի պակասում, այլ ընդհակառակը:

Ինչ համբավ և ինչ հրապույր ևս ունենա Փարիզը, նրա գլխավոր գեհենը ռեկլամն է, ավելի ճիշտն ասած, ռեկլամի ձևը, վասնզի ֆրանսիացին այդտեղ ևս լավագույն վարպետն է: Նրա ռեկլամը ձեզ չի խլացնում միլիարդների կոպիտ, անճաշակ թմբկահարությամբ, ինչպես այդ անում է ամերիկյան ռեկլամը: Նա երգում է մեղմիկ, խաղցրահնչյուն: Ամերիկացու ռեկլամն ապաշ է. իր միլիարդների մուրճով մի հարվածով ջախջախում է իր զոհին և այնպես կողոպտում: Ֆրանսիացու ռեկլամը անուշ ժպտալով, շոյելով, փաղաքշելով, մանավանդ սրախոսելով է մտնում գրպանդ ու դատարկում: Բացի այդ, նա այնքան ագահ ու անկուշտ չէ, որքան ամերիկյանը: Շատ անգամ նա սանտիմներով է բավականանում:

Իմ բարեկամ Սոմիկոն երևելի գաստրոնոմ էր և շատակեր, իսկ խմելու մեջ շատ ինչ մրցակիցներ ուներ իր հայրենիքում: Քանի անգամ տեսել էի նրան տնային խնջույքներում իր արծաթապատ «հազար փեշա»-ն դատարկելիս:

Երբ մենք մտանք «Սատկած առնետ»-ի սեղանատունը, երբ Սոմիկոն տեսավ թարմ ծաղիկներով պճնված և պես-պես ըմպելիքներով ծանրաբեռնված ձյունափայլ սեղանները, նրա կլորիկ, տանձաձև դեմքը պսպղաց հղկված պղնձի պես, իսկ փոքրիկ կիսանիրի աչքերը արտացոլեցին ներքին հուրը, որպես շիկացած ածուխի փշրվածք:

— Նստենք, նստենք շուտ, — ասաց նա և վազեց առաջ:

Բայց նստելու տեղ չկար. բոլոր սեղանները բռնված էինք Կանայք բացառապես դեկոլտե էին, իսկ տղամարդկանց միայն մի մասը ֆրակավոր, իսկ մյուս մասը մեզ նման պարզ հագնված, թեև, հիարկե, սև գույնով: Կային և՛ այնպիսիները, որ ճամփի մոխրագույն հագուստներով էին: Անշուշտ դրանք այն անգլիացիներից էին, որոնք ամեն շաբաթ օր գալիս են երկու գիշերով Փարիզի զբոսանքները վայելելու: Նրանք ժամանակ չեն ունեցել իրանց հագուստը փոխելու և եկել են այստեղ ուղղակի երկաթուղու կայարանից: Վաղը կիրակի է, ամբողջ օրը և ամբողջ գիշեր կզվարճանան, այն ժամանակ, երբ նրանց հայրենակիցները պարտավորված են նստել իրանց տներում, աղոթել, ավետարան կամ աստվածաշունչ կարդալ:

Ռեստորանի առաստաղը բարձր չէր: Օդը տոգորված էր ուտելիքների և ըմպելիքների հոտով ու շոգիով և գլանակների թանձր մառախուղով: Սեղանների նեղ միջանցքում զարմանալի հարպիկությամբ թռչկոտում էր մի պարուհի չորս հոգուց բաղկացած օրկեստրի նվագածությամբ: Ձնայելով ֆրանսիացու բնական թեթևությանն ու վարպետությանը, սպասավորները հազիվ կարողանում էին իրենց համար ճամփա գտնել գրեթե իրարու սեղմված սեղանների միջև: Սոմիկոն ընդհարվեց նրանցից մեկի հետ, բայց հարպիկ սպասավորը հաջողեց զարմանալի մի շարժումով փրկել անկումից անթիվ բաժակներով ու շիշերով լեցուն մատուցարանը: Հետո բարեկամս դիպավ մի իր պես կլորիկ մարմնի, որ իսպանացու էր նման, և երկուսն էլ միաժամանակ ասացին pardon ու ժպտացին իրարու: Ա՛հ, ի՜նչ նման են նրանք իրարու:

Վերջապես, ժերանը մի անկյունում դնել տվեց մի նոր սեղան, և ինքը ցցվեց մեր առջև անձեռոցիկը թևի տակ բռնած:

Սոմիկոն պատվիրեց մի բանի տեսակի կերակուրներ, և, հիարկե, շամպայն: Ես բավականացա խոզի ապխտով և մի բաժակ կոնյակով: Ես շամպայն չէի սիրում և այժմ էլ չեմ սիրում:

Դատարկելով առաջին շիշը, նա պահանջեց երկրորդը, իսկ երրորդն ուղարկեց երաժիշտներին: Ուտում էր նա գայլի ախորժակով, հևալով և փսփսալով, ինչպես դարբնի հնամաշ փուքս: Կերակուրը նրա թանձր ու վար պառկած բեղերից թափվում էր կրծքի վրա, փրփրագեզ շամպայնը դուրս էր հոսում բերանի անկյուններից, ինչպես հորդառատ աղբյուրից:

Օրկեստրը նվագեց սեզոնի կոֆեշանտանային նորագույն պարերգը՝ matchich: Մի բանի անգլիացիներ սկսեցին սուլել իբրև թե ներդաշնակությամբ և դանակ-պատառաքաղներով թմբկել շամպայնի գավաթների վրա: Մեկը նրանցից նույնիսկ փորձեց երգել այն անճոռնի եղանակով և այլանդակ ձայնով, որ միայն անգլիացուն է հատուկ: Ես զարմանում եմ, որ այդ մարդիկ չեն զգում, որ երգ ասված բանը բրիտանացու համար չի հորինված:

«Մաչիչ»-ը շատ դուր եկավ Սոմիկոյին: Նա ժերանի ձեռքով մի լուիդոր ուղարկեց դիրիժորին և պատվիրեց կրկնել: Պարուհին, ոսկու փայլը տեսնելով, ընդոստելով մոտեցավ և նրա առջև պարեց նույն եղանակը, առաջ մենակ, հետո մի շատ նիհար ու շատ երկայն ամերիկացու հետ: Սոմիկոն նրան էլ պարգևեց մի ոսկի, կանխապես ոտի ելնելով և սալոնայիի կավալերի ժեստով համբուրելով պարուհու ձեռքը: Մի բան, որ երբևէ ընդունված չէր, և արժանացավ ընդհանուր ծիծաղի: Բայց Սոմիկոն չշփոթվեց: Նա ուրախ էր, որ ուշադրություն էր գրավել և, որպեսզի ավելի մեծ սենսացիոն առաջացնի, իսկի էլ կամեցավ պարել: Պարուհուն գրկելով, նա մի անհաջող շրջան արավ և դարձյալ մի ոսկի դրեց նրա բրտնած ձեռքի մեջ:

Պարող ամերիկացին մոտեցավ մեզ և ուղիղ Սոմիկոյի բթի առաջ բռնեց իր ձմերուկի չափ կուռվը: Ես կարծեցի, որ ուզում է սկանդալ անել: Բայց չեղավ, նա բռունցքը բաց արավ, և սեղանի վրա թափվեցին մի բուռ ոսկիներ: Նա հրամայեց սպասավորներին ոսկիները ժողովել և իրանց գրպանը դնել: Սոմիկոն, որ գուշատվել էր ամերիկացու բռունցքից, ուշի եկավ, գրկեց նրան և կամեցավ հետը համբուրվել, բայց ամերիկացին հրաժարվեց, ցույց տալով նրա թաց բեղերը:

Ես աշխատում էի Սոմիկոյին համոզել, որ մի փոքր զսպե իրեն և շատ էլ չշռայլե իր սիրո զեղումները, մանավանդ դրամը: Բայց նա համառ էր և կրկնում էր.

— Թող աշխարհը տեսնի, որ հայ ազգն էլ ապրել գիտե:

Սոմիկոն «ազգասեր» էր: Ինձ միայն հաջողվեց նրան համոզել, թե կան ավելի զվարճալի վայրեր, թե պայմանավորվել ենք այս գիշեր այդ տեղերն էլայցելել: Նա պահանջեց կերած-խմածի հաշիվը և սպասավորին ընդունված տասը տոկոսի փոխարեն տվեց հսան տոկոս: Նա կամեցավ ժերանին էլ փող բաշխել և տվեց մի ոսկի, կանխապես աջ ու ձախ, հայելով համոզվելու համար, որ իր առատաձեռնությունը տեսնողներ կան: Ավա՜ղ, ոչ ոք նրա շռայլությունը ուշադրության չարժանացրեց, բացի սպասավորներից, պարուհուց ու երաժիշտներից: Մնացյալների համար բարեկամիս անսահման հուզումն էր հետաքրքրական ու ծիծաղելի...

Երբ ես իմ կերած-խմածի համար վճարեցի իմ գրպանից, Սոմիկոն շատ վիրավորվեց:

— Այդ լավ չէ, դու ինձ խայտառակում ես օտարների մոտ, — ասաց նա հանդիմանաբար:

Թե ինչու էի խայտառակում, չգիտեի, բայց զգում էի, որ հոգու խորքում նա շատ գոհ է, որ ես չեմ ծանրանում նրա հսակի վրա:

Ես հոգեպես հոգնել էի: Առհասարակ Փարիզի գիշերային ռեստորաններում ես մի առանձին հաճույք չէի զգում, նույնիսկ ծանծրանում էի, ինձ ղեկավարողը միայն ծանոթանալու և դիտելու անհագ սովորությունն էր:

IV

ԲՈՐՈՏՆԵՐԸ: ՓԱՐԻԶԻ ՈՐՈՎԱՑՆԸ

Երբ մենք դուրս եկանք «Սատկած առնետ»-ից, Մոնմարտրը դեռ եռուզեռի մեջ էր: Կառքերն ու օթոմոբիլները շարան-շարան կանգնած էին բյուրավոր գույզզույն լապտերներով ու վենետիկյան ճրագներով լուսավորված կաբարեների, ռեստորանների, դանսինգների այլ բազմատեսակ զվարճարանների առջև: Ցիլինդրավոր կոշեները և «կեպի» դրած ու մորթե վերարկու հագած շոֆերներն իրենց ցրտահար ձեռները տաքացնում էին այս ու այնտեղ վառվող խարույկների կամ շագանակ բովողների մոտ, ոտները թաց գետնին զարկելով և աջ ու ձախ երերվելով: Կրակի արյունագույն ճաճանչները փայլեցնում էին նրանց կարմրակապույտ երեսները, որոնք իրենց արտաքին նախանձելի երևույթի տակ ով գիտե ինչ հիվանդություններ էին թաքցնում: Շատերը մտել էին «Բխստրո»-ները (փոքրիկ կաֆե) և այնտեղ էին ջերմանում էժանագին աբսենտի, ամպերիկոնի, վիսկիի, Դյուբոնեի և այլ ըմպելիքների ալկոհոլով: Ոմանց գլուխն արդեն տաքացել էր: Նրանք մտերմաբար կատակաբանում էին հարյուրավոր գիշերային թռչնիկների հետ միայն

իրենց հասկանալի ժարգոնով: Ոչ ոքի այնչափ հայտնի չէ այդ լճված և արհամարհված էակների կյանքի ողբերգական պատմությունը, որքան նրանց: Ցուրաքանչյուրը նրանցից կարող է հետաքրքրվողին պատմել մանրամասնորեն, թե այս կամ այն թվառը ինչ պատճառներով և ինչպես է ընկել այդ դրության մեջ: Կա՞ արդյոք նրանց հոգու մեջ որևէ կարեկցություն դեպի այդ թվառները: Ըստ երևույթին — այո, որովհետև նրանց արտաքին կոպտության ներքո դիտող աչքը նշմարում էր մարդկային հոգուն հատուկ ներողամտությունը:

Ա՜հ, այդ հարյուրավոր ու հազարավորները: Նրանք են Փարիզի ամենից անհանգիստ, ամենից ժիր ու հուզումնալի տարրը: Միևնույն ժամանակ նրանք են ամենից հնարագետը և ամեն բանից էժանը: Մոնմարտրում նրանց տեղը Բիստրոներն են ու փողոցները: Թանկագին կաբարեների և ֆեերեներեն ռեստորանների դռները փակ են նրանց առջև և եթե փորձեն մտնել այնտեղ առանց տղամարդու ուղեկցությամբ, դռնապանը թույլ չի տալ, որովհետև պչրանքով չեն հագնված: Նրանք դեկոլտե չեն, թատրոնից կամ օպերայից չեն գալիս, նրանք հայտնի են ռեստորանի ամենավերջին սպասավորին, և պատրոնը թույլ չի տա, որ իր հռչակավոր «հաստատության» վարկը ենթամանա: Նրանք իրենց ընթացիկ գիշերվա «երջանկությունը» կարող են որսալ կաբարեների և այդ ռեստորանների առջև: Աշխարհից լճված և մարդկանցից արհամարհված մուրացիկներ են: Նրանք պետք է կերակրվեն շռայլության և զեխության աստվածուհու ճոխ սեղանի փշրանքներով: Մի տեսակ խոցավորներ են կյանքից վռնդված, ինչպես բորոտները Պարսկաստանի մեծ հանապարհների եզրերում: Բուրժուազիայի առօրյա ապականության, կեղտերի ու ոճիրների զոհերն են, նույն բուրժուազիայից հալածված: Սակայն այդ փողոցային թվառները շատ լավ են հանդչում այնտեղ, բարձրում, այդ լուսավառ ու ծաղկազարդ դահլիճների տաքության մեջ զվարճացողներին: Գիտեն, որ այդ ցիլինդրավոր ու փրակավոր գործարանատերերի, վաճառականների, բանկային դիրեկտորների, բորսային գիշատիչների կամ նապաստակների, rastaguouere1 ու հազար ու մի անուն կրող ոճրագործների մեջ կան և այնպիսիները, որոնք իրենց հարստության վերջին լուիդորներն են շռայլում: Գիտեն, որ այդ բարոյապես վաղուց, շատ վաղուց, իսկ նյութապես երեկ կամ այսօր սնանկացած պարոնները շուտով պիտի փողոց դուրս գան և այնտեղ փնտրեն իրենց գիշերվա էպիլոգը: Նրանք գիտեն նաև, որ կան և այնպիսիները, որոնք բուրժուական կամ արիստոկրատիկ ճաշակը վաղուց է կշտացել թանկարժեք պարուհիների, երգչուհիների, գրիզետկաների անուշահոտ մարմիններից և այժմ հոտոտում է արտասովորը, թեկուզ այդ արտասովորը լինի փողոցային կեղտի մեջ... Նույնիսկ կոյանոցում... Քանի՛ հանիներին են նրանք վարակել իրենց մարմնավոր ախտերով ու կործանելով խղճի առանց որևէ խայթի և հաճախ գիտակցաբար կամ գիտակցելով, որ մարդկությանը վերադարձնում են այն, ինչ որ ստացել են նրանից:

Մենք հրեցինք մի հանի տասնյակ թվառներ և, շուտով դուրս գալով լույսերի ավազանից, ընկանք Փարիզի մի շարք նեղ, դարիվեր և կիսախավար փողոցները: Մենք երկյուղ չունեինք բայլելու, գիտեինք, որ ապաշները շատ ինչ դեպքերում են հարձակվում ոչ մենավոր անցորդների վրա:

Ես վճռել էի մի անգամ ևս տեսնել կենտրոնական շուկան les Halles, «Փարիզի որովայնը», որ այնպես մանրամասնորեն ու վարպետորեն նկարագրել է հանճարեղ Էմիլ Զոլան:

«Փարիզի որովայնը» գետնվված է ճիշտ նրա որովայնում, այսինքն կենտրոնում: Նա բռնում է մի շարք նեղ և մշտապես խոնավ փողոցներ, կազմելով մի տեսակ աստղածև հրապարակ:

Գիշերվա կեսից սկսած, երբ մի հանի ժամով նիրհում է փողոցային թոհուբոհը, երբ մանավանդ դադարում է տրամվայների և օթոմոբիլների երթևեկը, հաղթի բոլոր շրջակայքից սկսվում է բեռնակիր սայլերի անընդհատ թափորը: Կատարյալ թափոր-հանդիսավոր, տարտամ, լուռ, որպես գիշերային ուրվականների մի երթ մթության մեջ: Ժամանակներ են գլորվել, սերունդներ են փոխանակվել, բայց այդ հնադարյան, կոպտաբեն միածի սայլերի միապաղաղ ընթացքը չի փոխվել: Նա մնացել է նույնը, ինչ որ եղել է Նապոլեոնների և Բուրբոնների օրերում: Նույնիսկ նորամուծ ինքնաշարժերի, այդ ահռելի հրեշների աղմկալի ու միշտ սպառնալի արագությունը մազաչափ չի ազդել նրանց դանդաղության վրա: Եվ ճնահարբ սայլապանները, ձիերի սանձը թուլացրած անշարժ ու անդորր նիրհում են գետնախնձորի, ցորենի ու գարու տոպրակների, կաղամբի, բողկի, ճակնդեղի, պուասի, կոտեմի և այլ ու այլ

բանջարեղենի եերմակ, կարմիր ու կանաչ խուրձերի մեջ այնպես որ շատ անգամ նրանց չես տեսնում և կարծում ես, որ ձիերն ընթանում են իրիճաբերաբար, ըստ ավանդական սովորության, ինչպես առմիշտ մարզված և մի անգամ լարված մանեկեններ:

Ով գեթ մի անգամ ամառը կամ աշնան ուշ գիշերին զբոսնել է Սեն-Միշել բուլվարում, անկարելի է, որ հաճախած չլինի ծայրեիծայր տարածված մի անուշ բույր: Դա թարմ մրգեղենի ու ծաղիկների հոտն է գյուղերից ու ագարակներից բերվող: Այնտեղ գիշերվա մի ժամից հետո տրամվայները իրենց երկաթյա գծերը հանձնում են երկաթուղային գնացքներին: Այդ բուլվարով մթերքները հաղաք են բերվում վագոններով, որոնցից շատերը բացօթյա են, և դրանց վրա են բարձվում վարդերի ու շուշաննների, հասմիկների, մեխակների ու մանուշակների, հիացինտների ու խրիզանտեմների խայտաբղետ դեզերը:Կարծես այնտեղ, հեռվում տեղի ունի ինչ-որ փառահեղ խրախճանք, և ծաղիկները շտապում են հանդեսը պճնավորելու:

Շուկա հասնելով, ձիերը իրիճաբերաբար, առանց սանձահարման, կանգ են առնում մեբենայաբար, որպես զինվորներ: Սայլապանները դանդաղորեն իջնում են պատվանդանաներից և, իրենց մարմինների թմրությունը թոթափելով, սկսում են բեռները վար իջեցնել և դասավորել: Յուրաքանչյուրը նրանցից ունի իր գնողը, իր տեղը, կանխավ որոշված, և ոչ մեկը մյուսին չի խանգարում իր գոռում-գոչյուններով, հայհոյանքներով, մտրակի սպառնալիքով, ինչպես այդ կարող էր լինել Թիֆլիսի կամ Երևանի շուկայում, եթե նա լիներ տասն անգամ պակաս բազմամարդ, որհան «Փարիզի որովայնը»: Շատ-շատ լսվում են ֆրանսիացու կատակները, բարձրածայն ծիծաղն ու էրիջները: Լսվում են և հայհոյանքներ, իհարկե, բայց որքան մեծ տարբերություն կա ֆրանսիացու և հայ ու առհասարակ արևելցու հայհոյանքների մեջ: Ֆրանսիացին հայհոյելիս երբեք չի հիշում իր հակառակորդի ծնողներին ու պապերին, կամ կնոջը, էրոջը, զավակներին և «յոթը պորտը»: Նա անարգում է միայն հակառակորդի անձնավորությունը:Նրա սովորական հայհոյանքներն են, ախմախ, կոպիտ, անկիրթ կամ ուղտ և ամենազորեղը՝ salaud (կեղտոտ կամ անբաղտավարի):

Էմիլ Զոլան իր նկարագրության մեջ ֆրանսիական հաճախի երբությունը պատկերացրել է նույնիսկ այդտեղ, բազմատեսակ մթերքների դասավորման, այդ առօրյա պրոզայի մեջ: Այստեղ մթերքների յուրաքանչյուր դասավորում ունի իր գեղեցկությունը, յուրաքանչյուր շարժում իր ռիթմը:

Վաճառքը շուկայում սկսվում է առավոտյան հինգ չորս ժամին, բայց մի ժամ առաջ արդեն Փարիզի բոլոր կողմերից եկել է մրգավաճառների, ծաղկավաճառների, մսավաճառների մեծ ու փոքր հյուրանոցատերերի, հաճարանների և սանտիմներ խնայող մասնավորների գնող բազմությունը: Որոնք եկել են բեռնակիր հիմնաշարժներով, — դրանք խոշոր գնողներ են: Մեծամասնությունը եկել է ձիաշարժ սայլերով, մարդաշարժ երկանիվներով կամ մի-մի տոպրակ ձեռներում: Գերակշռում են խոհարարուհիները, այդ ամենից ադմկարար և ամենից կռվասեր տարրն ամբողջ աշխարհում: Մթերքները դասավորվում են երկաթե վիթխարի բարակների տակ, ահագին դարակների կամ ուղղակի մերկ գետնի վրա: Բանվորները հարյուր կիլոգրամանոց տոպրակներն այս ու այն կողմ են նետում այնպիսի արագությամբ, որ կարծես խաղի գնդակներ են: Այստեղ նրանց աշխատանքը ներկայացնում է մի սահունելի օլիմպիադա, ու մասնակցողների մեկ մրցանակը միջին բանվորի սովորական օրավարձն է 4 — 5 ֆրանկ (այն ժամանակ 1 ռուբլի 50 կ. — 1 ռ. 80 կոպ.): Մի օրավարձ, որ հազիվհազ փրկում է նրանց սովամահ լինելուց: Դեռ լավ է, որ նրանց թույլ է տրվում աշխատանքից հետո ժողովել դարակներից դեն շպրտված մսի անպետք կտորները կամ ձկների հոտած գլուխները ու պոչերը:

Իսկ տերե՞րը: Ահա նրանք: Կանգնած են դարակների հետևում իրենց իրավունքների գիտակցությամբ գոռոզ: Նրանք արգոսի աչքերով հսկում են, որ ոչ մի կտոր մթերք չփչացվի, կաղամբի ու սոխի ոչ մի գլուխ չկորչի: Նրանք իրենց սովորական հագուստի վրա կրում են երկայն կտավյա շապիկներ:

Առանձին տպավորություն են գործում մսավաճառները: Գրեթե ամենքն ունեն միևնույն կերպարանքը — հաստափոր, հաստապարանոց, կարմրերես: Նրանք իրենց երկայն ու լայնասայր դանակներով և արյունաներկ շապիկներով

նմանվում են պարսկական փարրաշների: Նրանք դանակի մի հարվածով կիսում են կովերի ու ոչխարների առաստաղից կախված դիակները: Զարմանալի վարպետներ են իրենց գործում: Մի գործ, որ համարվում է շատ շահավետ, նույնիսկ նախանձելի: Ճիշտ է, թե ոչ, չգիտեմ, բայց պատմում են, որ այդ մսավաճառներից ոմանք մեծահարուստ տնատերեր կամ բանկիրներ են: Մի ժամ հետո նրանք պիտի դեն ձգեն իրենց արյունաշաղախ շապիկները և գնան նստեն իրենց անկիզելի սնդուկների առջև և այնտեղ հաշվեն իրենց առավոտյան վաստակը:

Անցանք շուկայի բոլոր բաժինները երկայնությամբ ու լայնությամբ, այսինքն՝ մի շաբաթ խաչածև փողոցներ: Ամենուրեք գետինը ծածկված է կաղամբի տերևներով, փտած գետնախնձորով, ոչխարի ու տավարի անպետք փորոտիքներով: Եվ այդ կեղտի ու ապականության մեջ են որոնում իրենց օրվա պարենը մուրացկաններից շատերը անտեր շների ու կատուների և առնետների ընկերակցությամբ: Բայց որքան ծաղիկներ: Ոչ մի բան այնքան շատ չէ, որքան նրանք: Ամբողջ դեզեր ու բլուրներ են, դասավորված ուղղակի գետնի վրա: Նրանք են, որ երանգավորում են շուկան, տալով նրան տոնական տեսք: Միևնույն ժամանակ նրանք են, որ բողոքում են շրջապատող ապականության դեմ, բայց շատ չի անցել, ընդամենը մի կամ շատ-շատ երկու ժամ և բոլորը, բոլորը կտեղափոխվեն մեծ հաղթի հարյուրավոր ու հազարավոր ծաղկավաճառանոցները: Այնտեղ նրանք երիտասարդ աղջիկների ճկուն մատներով կմաքրվեն, կդասավորվեն և կբռնեն իրենց արժանավոր տեղը: Հետո՞: Հետո կցրվեն թատրոնները և սալոնները...

Անշուշտ Փարիզն աշխարհի ամենածաղկառատ և ամենածաղկասեր քաղաքն է: Գոնե ես ոչ մի տեղ չեմ տեսել ծաղիկների այդպիսի առատություն, ոչ նույնիսկ ծաղիկների ոստան նիցցայում:

— Ա՛յ մարդ, — խոսեց հանկարծ Սոմիկոն, որ լուռ և հորանջելով հետևում էր ինձ, — լսել եմ, որ այստեղ, գետնի տակ ճաշարաններ կան:

— Այո՛, կան:

— Ասում են այնտեղ խաշ էլ են պատրաստում, ճի՞շտ է:

— Միանգամայն:

— Դե ի՞նչ ենք զուր տեղը թրև գալիս, գնանք մի-մի բաժին ուտենք:

— Հեր օրհնած, նոր ընթրեցինք, է՞լի ես ուզում ուտել:

— Զէ՛, լուսաբացին խաշը լավ բան է: Գնա՛նք:

— Լա՛վ, գնա՛նք, — համաձայնվեցի ես բարեկամիս սիրտը չկոտրելու համար:

Ես Սոմիկոյին առաջնորդեցի շուկայի ներքնահարկերից մեկը, որ ինձ ծանոթ էր: Այդ ստորերկրյա ճաշարանները համաշխարհային համբավ ունեն: Ցուրաքանչյուր օտարական հետաքրքրվում է գեթ մի անգամ տեսնել: Ֆրանսիացիներն ասում են, թե Ռոմանով մեծ իշխաները են տվել նրանց այդ համբավը և առաջին անգամ կյանքից հղփացած Վլադիմիրն է մտել այնտեղ:

— Բայց գիտես, — ասացի ես մի ֆիչ Սոմիկոյին շփոթեցնելու նպատակով, — ասում են այդ ճաշարանները հա էլ անվտանգ չեն այցելուի համար:

— Ես գրպանումս ռևոլվեր ունեմ, ահա՛, — պարծեցավ նա, ցույց տալով իր նագանը:

— Այդ ոչինչ, ավելի լավ է մատանուդ ադամանդը շուռ տաս դեպի ներս, իսկ ծխախոտիդ ոսկե տուփը գրպանիցդ դուրս չբերես:

— Ի՞նչ է, ապաշնե՞ր կան:

— Ավելի վատ, բան ապաշեները — ընդհատակյա կավատներ, ապաշեներին իսկ շահագործողներ... բայց մի վախեճար, լույսը բացվելու վրա է, ամենաթաջ եղեռնագործն անգամ սարսափում է լույսից:

Մենք բարե սանդուղքով իջանք վար և մտանք մռայլ լուսավորված մի նկուղ շատ ցածր առաստաղով, հողե հատակով և ծխից ու մուխից սևացած պատերով: Ճաշարան անուն կրող այդ նկուղը մեկն էր այն որջանոցներից, որոնց մասին օտար այցելուներին զգուշացնում են Փարիզի ուղեցույցները:

Մեզ դիմավորեց միջին տարիքի մի վհուկ, ոչ նիհար, ոսկրոտ, ալեխառն մազերը գզգզված, ինչպես սովորաբար մեր երևակայությունը պատկերացնում է վհուկին, այլ հաղթանդամ, գեր, ինչպես լավ սննդված զվիցերական մի կով, և կարմիր, ինչպես ճակնդեղ: Նա առաջարկեց մեզ փայտե սեղանի բով երկու տաբուրետ և իմը, ձեռները դնելով փարթամ կողերին, սպասեց պատվերի:

— Երկու փորոտիֆ, — ասացի ես և մի հայացք ձգեցի իմ շուրջը:

Սխալված չէի: «Ճաշարանում» գրեթե ոչ ոք չկար, բացի մի խումբ մթերաբեր սայլապաններից, որոնք եկել են այդտեղ իրենց մարմինները տաքացնելու մի մեծ երկաթե վառարանի բով և մի տաք բան ուտելու անխուսափելի աբսենտից հետո:

Հաղթանդամ վհուկը մեր առջև դրեց երկու փոքրիկ երկաթյա կրակարաններ (մանղալ) վառ ածուխով լեցուն, նրանց վրա տեղավորեց մի-մի մեծ ափսե մատնաչափ հաստությամբ և իսկույն լցրեց տավարի թե ոչխարի փորոտիֆներից պատրաստած հեղուկը: Դա իսկական մեր ավանդական խաշը չէ, բայց բավական հիշեցնում է նրան, մանավանդ երբ սխտորով է ուտվում:

Ես չկարողացա ուտել, կուշտ էի, իսկ Սոմիկոն մի բոպեում խորթալով, դադարկեց իր ափսեն և ասաց.

— Դա զահրումար է, խաշ չէ...

— Ինչո՞ւ ուշ եկաք, — հարցրեց կին համարվածը, աշխատելով, իբր թե անհկատելի, ցույց տալ իր հոյակապ ծծերի ծյուռայինի ճերմակությունը: Այս գիշերն առանձնապես զվարճալի անցավ: Շատերն էին եկել, ամերիկացիներ, անգլիացիներ, երկու ռուս իշխաններ: Դուք, երևի, թուրքեր եք կամ եգիպտացիներ: Անցյալները Մարոկկոյի իշխանն էր եկել: Անհաշակ մեկն է, առաջնակարգ գեղեցկուհիներ առաջարկեցի, մերժեց: Ափսոս մի բիչ ուշացել եք: Բայց եթե կամենաք, էլի կգտնվեն: Ազնիվ հյուրերի համար միշտ կարելի է գտնել, միայն պետք է կրկնակի վճարել, մի բիչ ուշ է, ցրված են, օթոմոբիլ պիտի ուղարկել:

Սոմիկոն ընդհատեց նրա երկարաբանությունը, դառնալով ինձ.

— Հետաքրքրական է, թող բերի տեսնեմք...

— Դո՛ւ գիտես, բայց ես կգնամ, — ասացի ես դիտմամբ և ոտքի ելա:

— Ես լսել եմ, որ... — փորձեց հակաճառել բարեկամս:

— Դու շատ բաներ ես լսել, — ընդհատեցի ես, — բայց ոչ այն, ինչ կա իրապես: Այդ ֆաֆթառի առաջարկած երջանկությունը որոգայթ է, իսկ նրա գեղեցկուհիները ահա նրանք են, որոնց տեսար փողոցներում: Ձեմ թողնիլ, որ մնաս այստեղ, ուրվերդ բեզ չի օգնիլ: Խելք է հարկավոր, զգաստություն: Կարդա ամեն օր առավոտյան լրագիրները և կտեսնես: Գնա՛նք:

Ասացի և դուրս եկա:

Սոմիկոն հետևեց ինձ:

Երբ մենք դուրս եկանք նկուղից, մեծ շուկան դատարկվել էր, բայց ոչ ամայացել: Արդեն նա հարյուրավոր ու հազարավոր փողոցներով տարածել էր քաղաքի բոլոր արվարձաններն ամեն ինչ, որ ստացել էր գյուղերից ու ագարակներից, ինչպես սիրտն է տարածում արյունը դեպի բոլոր մասերը մարմնի: Մակընթացության ու տեղատվության գործողությունը սկսվել ու վերջացել էր ընդամենը 3-4 ժամում, այժմ շուկան հանգստանում էր վաղվա համար:

Այս ու այնտեղ երևում էին հատ-հատ ուշացած գնորդներ: Նրանք տակավին հույս ունեին ձեռնունայն չվերադառնալ տուն: Երևում էին նաև կեր որոնող թշվառները, բայց նրանք էլ շուտով կգնան կամ, ճիշտն ասած, կցրվեն փողոց մաքրողների երկաթյա ավելներով: Այս է նրանց վիճակը դարերից ի վեր և մարդկային աչքն այնքան ընտելացել է նրանց, որ այլևս ոչ ոքի կարեկցությունը չեն շարժում և ոչ իսկ արժանանում են ուշադրության:

ՓԱՐԻԶՆ ԱՌԱՎՈՏՅԱՆ

Աշնանային անձրևը տեղում էր փոշու պես մանր, դանդաղ, գրեթե աննշմարելի: Կարծես երկնքի մազը շուռ տվող ձեռը թուլացել էր և չէր ուզում գործել: Բայց մոխրագույն նոսր մառախուղը տակավին չէր փարատվել:

Որքան զմայլելի է Փարիզն արեգակի առավոտյան նորածին և երեկոյան մահամերձ ճառագայթների տակ, որքան ծիծաղկոտ է, երբ լողում է լույսերի ավազանում, նույնքան անբարեհամբույր, տխուր ու մռայլ է անձրևների տակ, մշուշի մեջ: Քաղաքներ կան, ուր ամենաթանձր մառախուղն իսկ այնպես չի տխրեցնում, այնպես չի ներվայնացնում մարդուն, որպես Փարիզը մշուշի նոսր շղարշի մեջ: Այդպես են Նյու-Յորքը, Լենինգրադը, այդպես է մանավանդ մառախուղների աշխարհ Լոնդոնը, որ ես չեմ տեսել, ճիշտ այն պատճառով, որ սարսափել եմ այդ մառախուղներից:

Փարիզն այն բացառիկ գեղեցկուհիներից է, որոնց պայծառ ու ժպտուն երեսին չի սազում գորշագույն շղարշը, որքան և սա նոսր լինի: Գոնե ինձ այդպես էր թվում, գոնե ես միշտ գրգռվում ու թթվում էի անդադար պատժված մանկան պես, երբ Փարիզն անձրևում էր: Իսկ անձրևում էր նա շատ հաճախ, երբեմն օրվա ընթացքում հինգ-վեց անգամ: Կարծես, բնությունը նախանձում էր նրան և խանդոտ սիրականի պես չէր ուզում, որ իր գեղեցկությամբ շատ հպարտանա:

Վաղ առավոտ էր. Մոնմարտրը դեռ շարունակում էր պարել ու երգել, ճնանալ ու պոռնկանալ, բայց բուն Փարիզն արդեն զարթնել էր: Ոչ հղկված, շպարված, ոչ արյուն ծծող, ոչ ըստ արհեստի ոճրագործ, ըստ էության լկտի ու անպատկառ Փարիզը — բուրժուազիան, այլ աշխատավոր Փարիզը — պրոլետարիատը: Այն, որ արեգակի ծագումից սկսած մինչև նրա մուտքը և էլի ավելի տքնում է աշխատանքի երկաթյա լծի տակ: Այն, որ շինում է և չի շահվում, ստեղծագործում է և չի վայելում, այն, որ տալիս է ոսկու բեռներ և ստանում է պղնձյա գրոշներ:

Ահա նա, այդ գորշ բազմությունը: Մտեք «Փարիզի գոտի» կոչված երկաթուղու առաջին հանդիպած կայանը և դուք կտեսնեք նրան, այդ հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորներին, որոնց մի մասը դրսից քաղաք է գալիս, մյուս մասը քաղաքից շրջակայքն է շտապում, ամենքը դեպի գործարաններ: Ոմանք, նախքան գործի գնալը, մտնում են էժանագին ու կեղտոտ «Բիստրո»-ները մի-մի բաժակ խմելու այն պղտոր հեղուկից, որ, կարծես, ծաղրի համար կոչվում է café au lait (կաթով սուրճ). Փույթ չէ, նրանք գոհ են և այդքանով, վասնզի հաճախ այդ էլ չեն ունենում: Եվ ծիծաղում են, քրքջում, իրարու բարեկամաբար բոթում ու սրախոսում, ինչպես դպրոցականներ: Բայց մի խաբվեք արտաքինից, նրանք թեթևամիտ պատանիներ չեն: Յուրաքանչյուրը նրանցից իր ուղեղի մեջ ունե մի միտք, իր սրտի մեջ մի հավատ, թե այդ այդպես չպիտի շարունակվի, թե մարդկությունը չի կարող երկար ժամանակ մնալ այդ փխրուն ու փտած կամրջի վրա, թե նա պետք է անցնի և շուտով կանցնի դեպի լավագույն ապագան: Թե որն է այդ լավագույնը, նրա համար այդ տակավին այնքան էլ պարզ չէ, բայց զգում է, որ նրա ստեղծագործողն ու հաստատողն ինքը պետք է լինի իր կոշտացած ձեռներով…

Փողոցները մաքրվում ու լվացվում էին: Վիթխարի ինքնաշարժերին կպած երկաթյա գլանաձև ավելները ցեխն ու աղբը սալահատակներից քշում տանում էին մայթերի կողմ: Դռնապանները բաց էին անում ջրմուղի ծորակները, և ջուրը,

վանդակը խորտակած վագրի պես, դուրս ցատկելով, ամեն ինչ մղում ու տանում էր վար, Փարիզի հուչակավոր կոյանոցը, իսկ տներից դուրս բերված աղբերի արկղները դրվում էին դռների առջև: Շուտով կգան սանիտարային սայլերը նրանց դատարկելու և աղբը տանելու խաղաքից դուրս այրելու համար: Առայժմ նրանք chiffonnier-ների (լաթեր ոչոնող) տրամադրության տակ են: Ահա նրանք, նստած կամ պառկած են թաց նստարանների վրա և համբերությամբ սպասում են իրանց բախտին: Դա էլ մի առանձին դասակարգ է: Դա էլ մարդկային թշվառության մի պատկերն է, միայն մեծ խաղաքներին հատուկ:

Ցուրաքանչյուր շիֆֆոնիե իր հատուկ փողոցն ունի ու նստարանը: Ոչ մեկը չպիտի գրավե իր արհեստակցի տեղը, եթե չի ուզում ծեծվել կամ ծեծել, պատահել են դեպքեր, երբ ընդհարումը վերջացել է արյունահեղությամբ, որովհետև այդ է պահանջել մարդկային էության ամենապահանջկոտ մասը-ստամոքսը:

Ես ցանկացա խոսել այդ խեղճերից մեկի հետ: Դա մի փոքրահասակ մարդ էր, արդեն ճերմակած մազերով: Ըստ երևույթին որոշ հաշակի տեր մեկն էր, վասնզի նրա հնամաշ պիջակն ու պանթալոնը լավ էին կարկատված, օձիքն էլ կեղտոտ չէր, դեմքն էլ մաքուր էր:

— Շա՞տ բան եք գտնում, — հարցրի ես, մի ծխախոտ առաջարկելով:

— Կախված է բախտից, — պատասխանեց նա, հաճույքով ընդունելով ծխախոտը և, իհարկե, չմոռանալով ասել «մերսի»:

— Ի՞նչ եք անում գտնված լաթերը:

— Վաճառում ենք:

— Ո՞ւմ:

— Գործարաններին, որ թուղթ են պատրաստում: Մի՞թե չգիտեք, որ ամենալավ թուղթը լաթերից է պատրաստվում:

— Պատահո՞ւմ է, որ նոր, չպատառոտված կտորներ գտնեք:

— Ի՛նչու չէ:

— Ի՞նչ, օրինակ:

— Ո՞վ գիտե, ինչ կամենաք՝ անձեռոցիկ, սփռոց, խոհանոցի իրեր:

— Ի՞նչ եք անում:

— Օհո՛, ի՛նչ ենք՝ անում, — հեգնեց մարդը ֆրանսիացուն հատուկ հեգնանքով, — լվանում ենք, չորացնում, արդուկում և վաճառում կամ ինքներս ենք գործածում մեր տանը. Մի անգամ, — ավելացրեց ծերունին ծիծաղելով, — ես մի կանացի մետաքսյա կոմբինեզոն գտա:

— Ի՞նչ արիք:

— Հէ՛, ի՛նչ արի: Կնոջս տվեցի: Այժմ էլ վրեն է: Է՛հ, չէ որ լաթավաճառի կինն էլ մի անգամ պիտի մետաքսյա շապիկ ու վարտիկ հագնե... Ի՞նչ կասեք, հէ՛, պարոն:

— Ավելի թանկարժեք բաներ է՞լ եք գտնում: Օրինակ, ոսկյա կամ արծաթյա իրեր:

— Այդ էլ է պատահում, բայց շատ ինչ անգամ: Անցյալ ամիս գտա մի արծաթյա գդալ, իսկ մի տարի առաջ մի ոսկյա մատանի, առանց գոհարի: Այդ կողմից ես շատ էլ բախտավոր չեմ: Իմ շրջանը հարուստ չէ: Այստեղ չկան մոռացկոտ կամ անուշադիր սպասավորներ ու խոհարարներ: Գլխավոր բանը նրանցից է կախված. Մեր գործը սովորաբար ավելի

հաջողվում է այն առավոտները, երբ նախընթաց գիշերն այս կամ այն հարուստ տանը եղել է բազմամարդ ընթրիք կամ այդպիսի մի հանդես: Բայց այն էլ պետք է ասել, որ առհասարակ հարուստ մարդիկ կորցնելու մեջ ժլատ են, — ավելացրեց ծերունին փիլիսոփայաբար:

— Դուք ամբողջ օրը լաթեր փնտրելո՞վ եք զբաղված:

— Ոչ, ինչպե՞ս կարելի է ամբողջ օրը. Միայն գիշերվա կիսից մինչև առավոտ:

— Իսկ հետո՞:

— Հետո, ծխախոտի մնացորդներ եմ հավաքում:

— Ո՞րտեղ:

— Իհարկե, կաֆեների առջև, դուրսը, տերրասների վրա: Ներս չեն թողնում մտնել:

— Քանի՞ տարի է, որ այդ գործերով եք զբաղված:

— Շատ չէ, տասներեք տարի:

— Իսկ առա՞ջ:

— Ավա՜ղ, առաջ երիտասարդ էի, — հառաչեց ծերունին, — ուժ ունեի, կարողանում էի մաքուր գործով զբաղվել:

— Ի՞նչ գործով:

— Կաֆեի գարսոն էի, մեծ բուլվարների վրա:

— Ինչո՞ւ թողեցիք այդ գործը:

— Ինձս չթողեցի, հանգամանքները ստիպեցին թողնել:

— Ի՞նչ հանգամանքներ:

— Ոտներիս թուլությունը, մեջքիս ցավերը: Ես ոսկրացավ ունեմ:

— Երևի խոնավ կացարաններում եք ապրել:

— Հապա ուրիշ ո՞րտեղ, Ռոդիլդի պալատո՞ւմ, հէ՜, հէ՜, հէ՜, — բրթջաց ծերունին զարմանալի աննոգությամբ և զվարթությամբ: Բայց, ներեցեք, — փոխեց նա հանկարծ իր տոնը, — սայլերը շուտով կգան, իսկ ես դեռ չեմ վերջացրել իմ գործը: Բարի եղեք, մի հատ էլ ծխախոտ տվեք:

Ես ծերունու ձեռի մեջ մի բուռը ծխախոտի հետ սեղմեցի և մի հինգ ֆրանկանոց: Այդ նրա համար անսպասելի էր:

— Մերսի, մերսի, պարոն, դուք շատ բարի եք, — գոչեց նա և թույլ բայլերով մոտեցավ աղբարկղին...

Ես արբնացրի Սոմիկոյին, որ ամբողջ ժամանակ նիրհել էր նստարանի վրա: Նա բարկացած էր:

— Ձեմ հասկանում, դուք ինչ տեսակ մարդ եք, — ասաց նա խորին կշտամբանքով, — ամեն մի դատարկ բանով հետաքրքրվում եք, ամեն մի անպետք մարդու հետ խոսում եք ու ժամանակ կորցնում: Բազարումն էլ մուրացկանների հետ էիք զրույց անում: Դրա համա՞ր եք Փարիզ եկել: Մեզ մոտ մուրացկաններ բի՞չ կայինն: Հիմա էլ բռնել եք այդ կեղտոտ աղբավանոսի օձիքը: Ես այստեղ ցրտից դասաքխանի շան պես դողում եմ, իսկ դուք այնտեղ... Գնանք, ի սեր աստծո, ես սառել եմ: Գնանք մի տեղ, մի բան լակենք, տաքանանք...

Առհասարակ բարեկամս երբեմն սիրում էր ինձ խրատել: Նա կրկնում էր, թե Փարիզն ինձ նման մարդկանց տեղը չէր, թե Փարիզը շինված է միայն և միմիայն լավ ապրելու և լավ էեֆ անելու համար: Ջուր չեն այդման կանայք հավաքվեք այդտեղ և այլն և այլն...

Մենք հասել էինք բուլվարներին: Նրանք գրեթե ամայի էին տակավին: Նոր-նոր բացվում էին միայն լրագրավաճառ ֆիոսկերը, այն էլ առավոտյան լրագիրներն ընդունելու համար, որ բերվում էին սայլերով կամ ինքնաշարժերով: Մտանք այնտեղ, պահանջեցինք մի-մի գավաթ տաք սուրճ ու բիսկվիտ...

Կաֆեն լեցուն էր հաճախորդներով: Նրանց մի մասը նստած էր մարմարյա կլորիկ սեղանների ֆով, մյուսը ոտի վրա էր, բուֆետի առջև: Դրանք բանվորներ չէին, ոչ մեկի դեմքի կամ ձեռների վրա չէր երևում աշխատանքի դրոշը: Ամենքը հագնված էին մաքուր, բոլորն էլ վերջին մոդայով: Մի ֆանիսի վերարկուի օձիքը թանկարժեք մաշկերից էր, գրեթե յուրաքանչյուրի ժիլետի վրա փայլում էր ժամացույցի ոսկե շղթան: Մի երկու-երեքի ձախ ձեռքի ցուցամատը կրում էր ադամանդազարդ մատանի:

Սոմիկոն, այդ տեսնելով, ստապեց մի ծխախոտ վառել և ոսկյա տուփը դնել սեղանի վրա: Միևնույն ժամանակ, նա շուռ տվեց դեպի դուրս իր մատանու ադամանդը և ինքնագոհ դեմքով նայեց իր շուրջը...

Գրեթե առանց բացառության, բոլոր հաճախորդները գունատ էին և արտահայտում էին անքնություն ու հոգնածություն: Բայց հուզված էին, խոսում էին արագ-արագ, բառերը արձակելով գնդացիրի նման: Խոսում էին ֆրանսերեն, բայց տարբեր արտասանությամբ: Մի բառ կրկնվում էր հաճախ rafale:

Նրանք դատարկում էին սուրճի գավաթները ստապով և իսկույն դուրս էին վազում, հայհոյելով ոստիկանությանը, մինիստրներին, նույնիսկ հանրապետության նախագահին: Հեռացողներին փոխարինում էին նորերը, ավելի գրգռված ու բորբոքված: Ես նկատեցի, որ մեծամասնությունը գալիս է դեմուդեմի երեքհարկանի մի տնից: Թե խոսակցություններից և թե մանավանդ rafale բառից հասկացա, որ տունը ուրիշ ոչինչ է, եթե ոչ գաղտնի թղթախաղի «կլուբ»:

Այն ժամանակ այդ «կլուբ»-ները մերթ ընդ մերթ են թարկվում էին ոստիկանության հանկարծակի արշավին և կողոպտվում, իսկ խաղացողները ձերբակալվում էին առերես և շուտով արձակվում: Ոստիկանության տեսակետից կարևորը նրանք չէին, այլ գրավված դրամը, որ անցնում էր պետական գանձարանը:

Այդպես էր իմպերիալիստական մեծ պատերազմից առաջ: Այլ է այժմ, երբ շատ բաներ են փոխվել Ֆրանսիայի տնտեսական կյանքում: Այժմ կառավարությունն ինքն է խրախուսում ազարտ խաղերը: Մի ժամանակվա առերես ոճիր համարվածն այժմ պետական գանձարանի եկամտային աղբյուրներից մեկն է: Եվ ոչ պակաս արդյունաբեր աղբյուր, քան որևէ մի ուրիշը: Այդպես, օրինակ, նշանավոր խաղատներից «Haunssmann» կոչված կլուբն իր եկամուտներից պետությանը տալիս է որպես հարկ օրական ոչ պակաս, քան կես միլիոն ֆրանկ: Հարկի չափերը կախված են կլուբի շրջանառությունից — 40-ից սկսած մինչև 80 տոկոս: «Haunsmann»-ն մեկն է այն բախտավորներից, որոնց ամենօրյա շրջանառությունը, այսինքն խաղացողների տանուլ տված ու տարածը հասնում է տասնյակ միլիոնների: Այնտեղ խաղում են ոչ միայն պրոֆեսիոնալ բախտախնդիրները, անգործ ու անարվեստ երիտասարդները, կյանքից խաբված ծերունիները, անցյալ և ներկա կավատները, ապաշները, գողության համար պատժից զրկվածները, գրպանահատները, սրիկաները, այլև շատ գրողներ, բանաստեղծներ, հայտնի և անհայտ նկարիչներ, դերասաններ, երգիչներ, երաժիշտներ, արձանագործներ, նույնիսկ պատկառելի գիտնականներ ու պրոֆեսորներ: Այնքան գայթակղեցուցիչ է մի գիշերվա մեջ հարյուր հազարներ շահելու անպատկառ հույսը: Խաղում են նաև նրանք, որոնց անկիզելի սնդուկներն առանց այդ էլ ճարճատվում են ոսկու ծանրությունից-ամերիկյան միլիարդերները: Ինչո՞ւ: Այն պարզ հոգեբանական պատճառով, որ ազարտ խաղը նրանց տալիս է հոգեկան խորին բավարարություն, որ նրանց համար երջանկության չափ հաճելի է տասնյակ հիմարներին և ապուշներին կողոպտել և փողոց նետել:

Խաղամոլները ցրվեցին, կաֆեն դատարկվեց: Սոմիկոն ոսկյա տուփը գրպանը դրեց, դուրս եկանք:

Մանր անձրևը շաբունակվում էր գրգռեցուցիչ համառությամբ, որպես կամակոր ու երես առած մանկան անախորժ լացը: Քաղաքային բանվորները երկայն ձողերով հանգցնում էին գազային լապտերների լույսը: Բուլվարները հետզհետե կենդանանում էին 4-5 ժամվա նիրհից հետո: «Մետրոն» արդեն բաց էր արել իր մթին բերանը, և կլանում էր հազարավոր ուղևորների, ինչպես մի անհագ հրեշ:

Երևացին դիլիժանսները, նորամուծ հատ-հատ օթոբուսները ու տրամվայների առաջին վագոնները: Թաց մթնոլորտը լեցվեց զանգերի ու փողերի խառնաձփոթ հնչյուններով: Առայժմ նրանք գրավված էին բանվորներով և մանր ծառայողներով: Հետո կգա մանր բուրժուազիան: Գերակշռող տարրը խոհարարուհիներն են: Նրանք իրենց լիք զամբյուղներով տեղավորվել են դիլիժանսների «իմպերիա»-ում, այսինքն վերին հարկում: Անձրևը նրանց չի վրդովում, սովոր են վաղուց: Նստած են հպարտ, ինքնագոհ, որպես արևելյան իշխանուհիներ պատգարակների վրա: Փորձեցեք նրանց հետ զրույց անել, և դուք կտեսնեք, թե որքան հպարտ են իրանց վիճակով: Շատ-շատերը նրանցից գիտեն վարպետորեն շահագործել իրանց պաշտոնը, գնած պարեհի արժեքի մի մասը սեփականացնելով: Կան այնպիսիները, որ, այդ ուղղությամբ գործելով, հազարներ են շահել:

Երկու ոստիկան մի ադմատ հագնված երիտասարդի օձիքից բռնած, ֆաբֆեցին տարան ոստիկանատուն, վզակոթին տալով: Դատարկ բան է. մի սովորական գրպանահատ է, ձեռը խորել է մի խոհարարուհու գրպանը և չի կարողացել ժամանակին դուրս բերել փողամանը:

— Գիլիոտի՛ն, գիլիոտի՛ն պիտի ուղարկել այդպիսիներին, ուրիշ պատիժ չկա նրանց համար, — գոռում է կինը, չնայելով, որ գրպանը փրկվել է:

Կա արդյոք մի ուրիշ ժողովուրդ, որի հոգում սեփականության զգացումն այնքան խորն ու արմատացած ու այնքան սրբագործված լինի, որքան ֆրանսիացու մեջ վերից ի վար:

Ես գնեցի օրվա Martin-ը ու Journal-ը, երկու առավոտյան լրագրներ, երկուսն էլ բուրժուազիայի բերանը, երկուսն էլ վաճառքի ելած պոռնիկներ և միակ անկաշառ թերթը՝ Ժան-Ժոռեսի «l՝ Humannite»-ն, ինչպես միշտ առաջին հերթին կարդացի ոստիկանական բրոնիկոնը: Ոչինչ անսպասելի բան. գիշերվա ընթացքում պատահել են ընդամենը երեք արկած — մի ինքնասպանություն անօթության պատճառով, երկու սպանություն, մեկը սիրային հողի վրա, մյուսը՝ կողոպուտի համար: Կան նաև մի շարք ավելի հուզումնալի արկածներ, բայց ես, որ արդեն ծանոթ եմ փարիզյան մամուլի բարբերին, գիտեմ նրանց արժեքն այն է, որ այդ սենսացիոն բրեակաև ոճիրները բուլվարային ռեպորտյորների երևակայության ծնունդն են, որ վաղը պիտի հերքվեն նույն լրագրներում:

— Ա՛յ մարդ, դուք իմ հոգին բերանս բերեցիք ոտքով բայլեցնելով, — բողոքեց նորեն Սոմիկոն, կանգ առնելով մեծ բուլվարներից մեկի վրա:

— Ի՞նչ եք ուզում:

— Կառք վերցնենք, հոգնել եմ,,,

— Ո՛չ, ոտքով ավելի հետաքրքրական է, — հակառակեցի ես, հիշեցնելով մեծագույն վիպասան Զաուլզ Դիկկենսին, որ այնքան սիրում էր անձրևների տակ ոտքով շրջել Լոնդոնի փողոցներում:

Եվ իրավ, հաճելի էր ինձ համար: Հարկավ, ես ամեն օր չէի կարող կատարել այդպիսի զբոսանքներ, որքան ևս Փարիզը լիներ հետաքրքրական իր գիշերային և վաղ առավոտյան կյանքով, բայց բանի որ դրականապես որոշել էի մի անգամ ևս ենթարկվել կնոջս հանդիմանությանը, թող գոնե վարձս մի ինչ արժանանար սպասվելի նախատինքին:

Սակայն Սոմիկոյի դժկամակության հիմնական պատճառը ոտքով բայլելը չէր, այլ ուրիշ բան: Այն, որ ես ավրել էի նրա գիշերվա էպիլոգը այդքան դրամ ծախսելուց հետո, զգալով մի տեսակ պատասխանատվություն հայրենակցիս կյանքի և առողջության վերաբերմամբ: Եթե ես նրան թողած լինեի իր կամքին, սատանան գիտե այժմ որտեղ կլիներ և լավագույն

դեպքում ինչ պարգևով կվերադառնար իր կացարանը: Թող հետո անե, ինչ որ ուզում է, միայն թե ոչ իմ ներկայությամբ:

Անցանք գլխավոր բուլվարները, հասանք Սենայի ափերին: Ֆրանսիայի փոքրորկալի պատմության հավիտենական ականատեսը իր մշտապես պղտոր ջրերը մղում էր խուլ մրմնջալով, որպես ծանր ու միատեսակ աշխատանքից հոգնած բեռնակիր: Թվում էր, որ նա բողոքում է իր ճակատագրի դեմ, էյֆելյան աշտարակի գագաթը մշուշի մեջ էր: Փարիզը վաղուց էր դադարել հետաքրքրվել նրանով: Այլևս նրա 300 մետր բարձրությունը ոչ ոքի չէր հիացնում, ոչ մանավանդ «Մեծ Անիվը», որ իր 40 վագոններով 1600 մարդ էր պտտեցնում իր շուրջը մինչև 100 մետր բարձրություն, ոչ նաև «Մեքենաների պալատը» ինժեներային արվեստի վերջին պարծանքը, որ արժանացավ 1889 թվականի համաշխարհային ցուցահանդեսի առաջին մրցանակին: Երեքն էլ նույն ցուցահանդեսի բեկորներն էին, որոնցից երկուսը շուտով հանդվեցին որպես ավելորդ բաներ: Մնաց «Գրան Պալեի» և Տրոկադերոյի հետ էյֆելյան աշտարակը, Փարիզի դրոշակը, որ ամենից առաջ է ողջունում հեռավոր ճամփորդներին: Եվ Գյուստավ Էյֆելը, ծերունի մետեորոլոգը շարունակեց պաշտպանել իր ստեղծագործությունը, ամեն օր նրա բարձունքից անեծք թափելով Անատոլ Ֆրանսի գլխին, որ չէր դադարում աղաղակել.

— Հեռացրե՛ք աչքիցս այդ երկաթե խրտվիլակը, նա վիրավորում է իմ ճաշակը, վասնզի այլանդակում է իմ պաշտելի Փարիզի գեղեցկությունը:

Բայց ավա՜ղ, ծերունի էսթետի ձայնը չասվեց, և «խրտվիլակը» այսօր էլ կանգուն է և ծառայում է համայն աշխարհին՝ որպես կենտրոնական ռադիոկայան: Նրա ամենօրյա հաղորդագրությամբ է այժմ կանոնավորվում բոլոր երկրների ժամացույցների ընթացքը: Դա ժամանակակից տեխնիկայի ճշտավոր հաղթանակներից մեկն է զառամյալ էսթետիզմի դեմ:

Սոմիկոն անտարբեր էր դեպի ամեն ինչ և բայլում էր ինձ հետ լուռ: Պարզ էր, որ նրա միտքը զբաղված էր ուրիշ բանով: Միայն մի անգամ նա արթնացավ — Ալեքսանդր երկրորդ Ռոմանովի անվամբ շինված կամուրջը տեսնելով:

— Վա՜, վա՜, — գոչեց նա հիացած, — ոսկեզօծ ձիեր, ո՛վ գիտե քանի միլիոն է ծախսված այդ կամրջի վրա:

— Սոմիկո, հայիր ետ, դա Համաձայնության պատմական հրապարակն է, ուր 1793 թվականի հունվարի 21-ին գլխատեցին Լուդովիկոս 16-ին: Տես, որքա՜ն գեղեցիկ է նա իր արձաններով և եգիպտական օբելիսկով: Սոմիկո, հայիր դեմուդեմ, դա Բուրբոնների պալատն է, այժմյան պառլամենտը: Այս օրերս ինձ հետ պիտի մի անգամ գնամ այնտեղ լսելու Ֆրանսիայի ճշտավոր հոետորներին: Հետաքրքրական է, չէ՞: Սոմիկո, հայիր դեպի ձախ, դա Տյուլըրիի է իր սահնչելի պարտիզով, և անցյալի զորավորների եղեռնալի գործերով, հայիր Լուվրին, տես ինչ գեղեցիկ է նրա շինվածքը, դա միջին դարերի ֆրանսիական ճարտարապետության հրաշալիքն է… Իսկ ներսը, դու դեռ չե՞ս եղել այնտեղ, այդ ներելի չէ… մի օր ինձ պիտի տանեմ արվեստների այդ մեծագույն տաճարը… հայիր ավելի հեռու…

— Համբերի՛ր, համբերի՛ր, — գոչեց Սոմիկոն իմ ոգևորության դեմ, — թույլ տվեք ինձ մի բան ասել, այդ բոլորը, ինչ որ ձեզ հիացնում է, իմ կարծիքով այս բոպեին չարժե մի սիրուն կնոջ տաք անկողնին… ես գնացի…

Եվ նա, վազելով, նստեց առաջին պատահած ֆիակրը և անհայտացավ…

Նեռնո շարունակում էր իր տրտունջները: Որքան վար, այնքան ավելի ու ավելի էին պղտորվում նրա ջրերը: Ափերի մոտ իրարու սեղմված նավերը թեթևակի երերվում էին, և դեղնագույն ջուրը զուր էր աշխատում լվանալ նրանց բարձրի փոշիով սևացած կողերը: Նավային աշխատավորները զարթնել էին և տախտակամածների տակից դուրս էին սողում, ինչպես մողեսներն իրանց ստորերկրյա բներից: Կայինն կանայք և երեխաներ, բոլորը բարձրի մրից սևացած:

Ափերի վրա նստած էին մի խումբ պատանիներ և մի քանի ծերունիներ: Ձկնորսներ էին, որ, կարթը ջրի մեջ ձգած, անհամբեր կամ դժոխային համբերությամբ սպասում էին բախտի ժպտին — օրվա պարենին: Նրանք էլ ունեին իրանց որոշ տեղերը որսի համար և մեկը գոնե իրավունք մյուսի տեղը բռնելու: Լուռ ու անշարժ նրանք գամվել են հողին

կոճղերի պես և թվում է, որ պիտի մնան այնտեղ հավիտենապես: Մերթ ընդ մերթ մեկը կամ մյուսը բարձրացնում է կարթը և, ձկնիկը պոկելով նրա ծայրից՝ փիլիսոփայական սառնությամբ, ձգում է խովը դրած զամբյուղի մեջ:

Մի հնաոճեն խարե կամրջի տակից դուրս եկան մի խումբ մարդիկ կանանց ու երեխաների հետ: Գործազուրկ բանվորներ էին իրենց օթևանի տերերից դուրս վռնդված, որպես անճոտապահ կենդանիներ...

Ես հոգնած էի միևչև անգորություն...

VI

ՀԱՅԵՐԻ ԵՐՋԱՆՈՒՄ

Փարիզ եկող հայը, եթե ուզում է իր հայրենակիցներին հանդիպել, ստիպված է կիրակի օրը եկեղեցի գնալ: Այդպես է աշխարհի բոլոր կողմերում, ուր կան գեթ մի բուռը հայեր (իսկ ո՞ւր չկան, մանավանդ այժմ):

Հայ եկեղեցիները գաղութներում կատարում են կլուբների դեր: Այնտեղ են գալիս գաղթականները իրարու հանդիպելու համար, այնտեղ են լուրեր առնում իրենց հայրենիքից ու ազգականներից, այնտեղ են վաճառվում լրագիրներ, գրքեր, երբեմն նույնիսկ հայրենիքի նպարներ, պանիր, խավիար և նման բաներ:

Առհասարակ հայ եկեղեցին վաղուց է կորցրել իր արժեքը, որպես աղոթավայր, որպես հավատի սիմվոլ, որպես պաշտամունքի առարկա, որպես խմացական սրբություն, Թիֆլիսի Էսանուչորս եկեղեցիները տարեկան ամիս դատարկ են, և զանգերի կիրակնօրյա դողանջներն այլևս այնպես չեն գրավում հավատացյալներին, որպես մեր հայրերի ու նախահայրերի օրերին: Առերես կրոնամոլությունը, այսինքն կեղծիքը, փարիսեցիությունը փայլում են միայն Քրիստոսի ծննդյան, մկրտության, խաչելության և հարության օրերը: Այնուհետև ամբողջ տարին նրանք մնում են խորանների մեջ և հոգևորական սեռի տակ:

Այդպես է և գաղութներում, այն տարբերությամբ, որ հայը երկուսի փոխարեն հիսուներկու անգամ է եկեղեցի (այսինքն կլուբ) գնում, հիսունհուերկու կիրակի: Նաև ալն տարբերությամբ, որ այդտեղ, գաղութներում փարիսեցիությունը մի աստիճան թույլ է, շատ էլ բարձրածայն չի աղաղակում: Մարդիկ գալիս են և մեծ մասամբ եկեղեցի չեն մտնում, մնում են նրա գավթում կամ փողոցում: Սխալ է կարծել, թե բոլորն էլ աղոթելու են եկել: Բարձրածայն խոսակցություն, ուրախ կամ տխուր զրույցներ, սրախոսություններ, զրախոսություններ, ցինիկ անեկդոտներ, ծիծաղ, էրիէջ, իրարու հրել ու արմունկել, իրարու ծաղրել կամ բոթել, հաճախ Թուրիայի կամ Կովկասի փողոցներից բերած հայհոյանքներ, կուսակցական կռիվներ բռունցքներով, սպառնալիքներ ատրճանակով, այո՛, երբեմն նույնիսկ սպանություն: Այս բոլորը կատարվում է պատարագիչ Էահանայի «խաղաղություն ամենեցուն»-ի, շարականի երգեցողության, կնտրուկի հեղձուցիչ բուրմունքի, «հոգու փրկության համար» տնկված մոմերի դժգույն լույսերի, ծխի ու մխի ներդաշնակությամբ:

Այո՛, հայ եկեղեցին վաղուց է կորցրել իր հմայքը և վաղուց է զրկվել ժողովրդի երկյուղածությունից ու ակնկալությունից, ահա ինչու այսօր ինձ բնավ չի զարմացնում նոր սերնդի ըմբոստությունը դեպի նա, ահա ինչու ես ընդունում եմ այն միտքը, թե հայ եկեղեցին ապրում է իր դարավոր գոյության վերջին փուլը: Ինչ փույթ, որ նա դեռ շնչում է, դա նրա վերջալույսի մահաբեր ցնցումներն են: Հայ եկեղեցին դարեր կատարեց իր դերերը մերթ ողբերգական, մերթ կոմիկական, և այժմ նա զառամել է, այժմ նրա ատամները փտել են, նրա խոպոտ ու էայհայված ձայնն այլևս չի հասնում ժողովրդի լսելիքին և չի շարժում նրա սրտի և հոգու ոչ մի թելը գոնե այնպես, ինչպես գուցե երևակայում է ինքը: Նա պիտի հեռանա հայ կյանքի բեմից և արդեն հեռանում է, իհարկե, ոչ ինքնահոժար, այլ պատմության անողոք մտրակով, ժամանակի խստաշունչ փոթորիկով... Այդպես է բնության դաժան օրենքը, ապարդյուն է նրան դիմագրել:

Փարիզի հայ եկեղեցին գտնվում է Շանզելիզյան շրջանի գեղեցիկ փողոցների մեկի վրա, որ կրում է XVI դարի նշանավոր արձանագործ-հարտարապետ Ժան Գուժոնի անունը: Փոքրիկ է այդ փողոցը, բայց հայտնի է իր մեծավոր

անցյալի մի ողբերգությամբ: Անցյալ դարի վերջին Բաղդադի չգիտեմ ո՛ր թվականին այդ փողոցի վրա բացվում է բարեգործական նպատակով մի ցուցահանդես, կամ, ինչպես ասում են, բազար, չգիտեմ ինչից, հրդեհ է ծագում, բազարն այրվում է ամբողջովին, այրվում են և մոտ 150 հոգի, մեծ մասամբ արիստոկրատ և բուրժուա ընտանիքներից: Ահա այդ հրդեհի տեղում է շինված հայ եկեղեցին, մի կաթոլիկ եկեղեցու հարևանությամբ:

Ես գնացի եկեղեցի մի բանի փարիզաբնակ հայ մտավորականների հանդիպելու համար և հանդիպեցի մի խումբ ռուսահայ բուրժուաների: Ցարական կառավարության ձեռնարկած և դաշնակցականներից ու մուսավաթիստներից հրահրված հայ-թրքական եղեռնը ստիպել էր նրանց իրենց կաշվի փրկությունն ապահովել Եվրոպայում, մանավանդ Փարիզում:

Պետք է ասեմ, որ ես անձնական ծանոթություններ ունեցել եմ Թիֆլիսի և Բաքվի բուրժուազիայից միայն մի բանիսի հետ: Բայց ճանաչել եմ ամենքին իրենց անցյալով ու ներկայով, և այսօր էլ յուրաքանչյուրի պատկերը վառ կենդանի է իմ հիշողության մեջ իր գեղարվեստական ամբողջությամբ: Իհարկե, նրանք էլ ինձ են ճանաչել... և ատել են, ատել են ավելի, բան ես նրանց: Ատել են այն սուր ատելությամբ, որով կարող էր ատել Միդաս թագավորը իր սափրիչին, եթե սա հանդգներ ճշմարտությունը փոսի մեջ թաղելու փոխարեն, ասեր նրա երեսին՝ «Տե՛ր, ճերմիր, բո ականջները իշի ականջներ են»: Ես չէի վախենում հայ բուրժուազիայի ականջներից բռնելով հրապարակ բաշել և ապագա սերունդների անարգանքին մատնել այն, ինչ նա չէր համարձակվում երեսիս արտահայտել իր ցասումը, ոխակալ ուղտի պես ոխը պահելով իր հոգու խորքում, մինչև որ կգար վրիժառության համար ժամը:

Ես բարևեցի նրանցից միայն մի բանիսին, որոնց դեմքը շատ էլ մուրոտ չէր, մյուսներից երես դարձրի այն խստությամբ, որը հատուկ է ինձ և որի համար իմ բարեկամները ու մերձավորները միշտ կշտամբել են ինձ, ասելով.

— Դու չես կարողանում բո արհամարհանքն ու ատելությունը բողարկել:

Սխալ է ասել, թե չէի կարողանում: Չէի ուզում, գիտենալով հանդերձ, որ դա գործնական կյանքում չափազանց վտանգավոր մի հատկություն է մարդու համար: Ի՞նչ արած, անկարող էի բժշկվել իմ հայրական ժառանգությունից:

Հեռվից լսելի եղավ ծանոթ, շատ ծանոթ ձայն: Նշանավոր երգչուհի Նադեժդա Պապայանն էր, ռուս օպերային թատրոնների առաջին աստղերից մեկը, եթե ոչ ամենաառաջինը: Չնայելով իմ ատելությանը դեպի նրան շրջապատող բուրժուաները, մոտեցա և բարևեցի: Տասնուհինգ տարվա ծանոթներ էինք, և ես մեկն էի նրա այն երկրպագուներից, որոնք ամենից առաջ գնահատեցին նրա տաղանդը դեռ 1891թվականին, երբ նա առաջին անգամ Թիֆլիս եկավ դեբյուտ տալու: Դա հաստատախոհ մի համեստ հայուհի էր, ոչ այնքան գեղեցիկ, որքան հրապուրիչ:

— Երկա՞ր ժամանակով եք եկել Փարիզ, — հարցրի ես, խմբից մի կողմ հրավիրելով նրան:

— Ոչ, մի բանի օրից հետո պետք է գնամ:

— Ո՞ւր:

— Մոսկվա:

Մի անբացատրելի նախազգացում ինձ թելադրեց ասելու.

— Մի՛ գնաք, օրիորդ, մի՛ գնաք, մնացեք առայժմ այստեղ:

— Ինչո՞ւ:

— Ինձ թվում է, որ ձեր կյանքը վտանգի եք ենթարկում, — չթաքցրի ես իմ չար նախազգացումը:

— Եթե ձեր ակնարկը վերաբերվում է Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխությանը, — ասաց նա, ծիծաղելով իր արծաթահնչուն ձայնով, — արտիստի կյանքն ապահով է էքսցեսներից: Ժողովրդի աչքում նա անձեռնմխելի է:

— Ժողովրդի և ոչ խուլիգանների աչքում: Մի մոռանամ, որ հեղափոխությունը դժբախտաբար ճնշվել է, և այժմ ռեակցիայի խուլիգաններն են ասպարեզի տերը: Այսպես թե այնպես, իմ բարեկամականխորհուրդն է չգնալ:

— Բայց ես արդեն պայմանավորվել եմ Մոսկվայի օպերայի հետ և հեռագրել եմ ուղևորությանս օրը. պարտավոր եմ գնալ:

Ես լռեցի և հրաժեշտ տվեցի:

Նա գնաց և կործանվեց...

Պատմեմ ինչպես: — Մոսկվայում մի օր օրիորդ Պապայանն իր ընտանիքից հեռագիր է ստանում, թե հայրը մահամերձ հիվանդ է և փափագում է աղջկան տեսնել: Պապայանը, արհամարհելով ձմեռային սառնամանիքը, շտապում է իր ծննդավայրը — Հաշտարխան: Հիվանդը չի մեռնում, առողջանում է: Քաղաքում արդեն լուր է տարածվել, թե Պապայանն իր հետ մեծ բանակությամբ թանկարժեք ադամանդներ է բերել: Երկու-երեք սրիկաներ՝ մեկը հայ, երկուսը թուրք, հարձակվում են Պապայանների տան վրա, պահանջում են ադամանդները: Օրիորդի հայրը դիմադրում է, տեղի է ունենում կռիվ, օրիորդը մեջ է ընկնում հորն օգնելու և ստանում է դաշույնի մահաբեր վերքեր ու մի բանի օրից հետո վախճանվում է: Հետագայում լսեցի, որ զմայլելի երգչուհին իր մահվան օրը երգել է իր արյան «Տրավիատա» օպերայից: Ով գիտե, գուցե ճիշտ է, որ ասում են, թե սոխակն երգելով է մահանում:

Կործանվեց երիտասարդ հասակում մի անհման երգչուհի, որի հավասարը մինչև այսօր էլ չի ծնել հայ ժողովուրդը և չգիտեմ, երբ պիտի ծնե:

Պապայանն այսօր էլ այն միակ հայուհին է, որ հեղհեց միջակության պողպատյա պատնեշը և անցավ բարձրագույն ընտրյալների տաճարը գեղարվեստների աշխարհում: Տասնուհինգ տարի այդ հեզիկ աղջիկն իր անզուգական ձայնի հմայքի տակ պահեց Լենինգրադի (այն ժամանակ Պետերբուրգի) ու Մոսկվայի, Բաքվի ու Թիֆլիսի ամենաերաժշտագետ բազմությունը: Եվ երբ նրա ողբերգական մահվան լուրն ստացվեց, ամենուրեք և բոլոր լեզուներով լսվեց՝ «Կորավ Վերդիի և Զայկովսկու սոխակը»:

Սակայն նա իր կյանքում բախտավոր չէր: Բեմի վրայից ուրիշներին հուզող ու արտասվեցնողը, բեմի ետևում ինքն էր լալիս: Այնտեղ նա դժբախտ էր և տառապում էր: Քանի-քանի անգամ տեսել եմ նրա դառն արցունքները և լսել եմ նրա սիրտ մորմոքող հառաչանքներն իր փառքի առաջին տարիները: Հիշում եմ նրա մի հուսահատական օրը, երբ նա վճռել էր ինքնասպանություն գործել: Ժամեր գործադրեցի նրան համոզելու համար, որ չկա ավելի մեծ հիմարություն, քան ինքնասպանությունը. — Կրեցեք ձեր վիշտը ձեր տաղանդին արժանի խաջությամբ և ապագայում ինքներդ կծիծաղեք ձեր այսօրվա տրամադրության վրա:

Արդարև, ապագայում նա ինքը մի բանի անգամ ծիծաղելով հիշեց իր անցյալի հուսահատությունը և բարեկամաբար սեղմեց իմ ձեռը:

Նա թուլություն էր ունեցել հափշտակվել Բ... Ա..., — թյան անունով մեկով, որի միակ արժանավորությունն էր իր իշխանական ծագումը և հարստությունը: Մի մարդ, որ իր արտաքին սեթևեթ ձևերի, իր շինծու բարեսրտության, իր կեղծ պարզության, իր փխուն ֆրազների տակ պահում էր ծայրահեղ եսամոլի ու անամոլի ճղճիմ հոգին: Նա խոստացավ և հետո մերժեց ամուսնանալ մի համեստ, ոչ հարուստ, բայց ազնիվ ընտանիքի աղջկա հետ, որ արժանի էր լավագույն ճակատագրի, առարկելով թե իր կամերգեր հայրը (Նիկոլայ երկրորդի փոխրագույն սպասավորներից մեկը) հակառակ է այդ տեսակ «մեզալյանս»-ին: Իհարկե, ի՞նչպես կարող էր նա իր երկնագույն արյունը խառնել բադրեճիական արյան հետ:

Պապայանն անբախտացավ, և այնուհետև նա մերժեց շատ-շատերի առաջարկը, հրաժարվելով ամուսնական կյանքից առհասարակ: Բայց հոգեկան տառապանքները չազդեցին նրա տաղանդի վրա, և նա մինչև մահ մնաց մուսաների փայփայվածը:

Մինչ ես աջ ու ձախ փնտրում էի իմ ցանկացած մարդկանց, ինձ մոտեցավ մի պարզ հագնված փոքրահասակ մարդ, շիկավուն մազերով, կարճ ցանցառ մորուքով, սրածայր և ինչ արծվային էթով: Նա մի թևի տակ բռնած ուներ մի բանի գրքեր, իսկ վերարկուի երկու գրպաններումն էլ լրագրեր: Կարելի էր կարծել, թե դա մի շրջիկ գրավաճառ է: Բայց դա հայտնի բանաստեղծ, գրական ճննդատ, պատմագետ, խմաստասեր, հրապարակախոս, անխոնջ հասարակական գործիչ, մի խոսքով Աբշակ Զոբանյանն էր:

— Բարի գալուստ, վաղուց կփափագեի տեսնել, — ասաց նա այն արագ տոնով ու առողջ ու հնչուն ձայնով, որ միշտ արթուն ու ժիր մարդկանց հատկանիշներն են:

Մենք, իհարկե, հեռվեն ծանոթ էինք իրարու և կարծեմ նամակներ էլ փոխանակել էինք, ուստի շատ ինչ խոսքեր էին պետք, որպեսզի անմիջապես բարեկամանայինք: Բայց, ըստ երևույթին, Զոբանյանը ինձ պես սիրում էր ամեն մի բարեկամություն սկսել ուտել-խմելով: Ես հաճույքով ընդունեցի նրա հրավերը՝ միասին նախաճաշելու:

Երկու ժամվա մեր խոսակցության նյութն եղան գլխավորապես հայ-թրքական ընդհարումները: Ես պատմեցի, ինչ որ գիտեի:

— Եղբա՛յր, եղբա՛յր, — գոչեց Զոբանյանը, ձեռը զարկելով սեղանին, — այդ ի՞նչ ադետ է, բավական չէ՞ր թրքահայերինը, այժմ էլ ռուսահայերինը: Ի՞նչ պիտի ըլլա այս թշուառ ազգին վիճակը, ի՞նչ պիտի ըլլա:

— Ի՞նչով եմ զբաղված այժմ, — հարցրի ես տխուր խոսակցությանը վերջ տալու համար:

— Ա՛հ, ինչով ըսեմ զբաղված եմ, — պատասխանեց նա, հեգնորեն ժպտալով, — Զոբանյան հոս, Զոբանյան հոն, տեսակ մը Ֆիգարո դարձեր եմ: Մենակ եմ, հոգնել եմ, ջղերս ալ ավրվել են: Մտադրություն ունեմ Կովկաս երթալու, էջմիածին այցելելու: Հոնի գրադարանը խիստ կզբաղեցնե մխտս, բանի մը ձեռագրեր նայելու պետք կզգամ աշխատության մը համար:

— Ե՞րբ եք մտադիր գնալու:

— Տակավին որոշած չեմ, թերևս գարնան սկզբին կամ ամառը, եթե ջղերս ներեն: Առայժմ ժամանակս սուղ է, կջանամ շուտով լույս ընծայել բանի մը գրական գործեր: «Անահիտ»-ս ալ չեմ կրնար մեկդի դնել:

— Ի՞նչպես է «Անահիտ»-ի նյութական վիճակը: Զոբանյանը փոթկաց, հազիվ կարողանալով գինու բաժակը բերնից անվտանգ հեռացնել:

— Ըսելու բան չէ, — ասաց նա, բերանը սրբելով, — «Անահիտ» հարյուր ֆրանկ ամսականի կնայե: Սակայն հոգ չէ, կերթա, դուք ալ գործ մը պիտի տաք, կաղաչեմ...

— Ուրախությամբ, — խոստացա ես ամենայն անկեղծությամբ: — Ասացեք, Զոբանյան, ի՞նչ վիճակումն է հայկական դատը Ֆրանսիայում:

Զոբանյանի դեմքը մռայլվեց, աչքերը սկողվեցին տրտմության շղարշով, ճակատը կնճռոտվեց: Պարզ էր, որ ես դիպա մարդու սրտի ամենազգայուն լարին:

— Է՛հ, բարեկամս, — գոչեց նա, մի ծանր հառաչանք արձակելով կրծքի խորքից, — գեհ է, շատ գեհ մեր դատին վիճակը, Ֆրանսիան զբաղված է իրմով, իրավունք ալ ունի, հազար ու մի տեսակի ներքին ու արտաքին կնճռոտ խնդիրներ: Մեզի համակրող դեպյուտեներ կըսեն. «Այս խնդիրը լուծեցէք, այն լուծեցէք, հետո զբաղվեցէք հայկական դատով»: Մինչև հիմա սեպարասիոնի խնդիրն էր, ան ալ վերջացավ, այժմ տեսնենք ինչ պիտի ըլնեն: Կլեմանսոն ամեն անգամ բուտադ մը կը թոցնե բերնեն: Այս օրերս ֆրանսիացի բարեկամներես մեկուն ըսեր է. «Ա՛հ, ալ ինձ արյունոտեց հայկական արյունոտ խնդիրը»:

— Եվ դարձյալ շարունակում եմ դիմե՞լ այդ մարդկանց օգնությանը, — գոչեցի ես վրդովված:

— Ի՞նչ ընեմ, բարեկամս, ի՞նչ ընեմ, բացի դիպլոմատից, ուրիշ ճամփա չունեմ, այն դաշնակցականներն միայն աղայաբար կկարծեն, թե կրնան Թուրքիան տապալել: Է՛հ, ձգեմ, ադ մասին շատ խոսելիք ունեմ: Կը հուսամ, որ երկար ժամանակով եմ Փարիզ ժամանել:

— Այո, պիտի մնամ, միևչև որ որդիներս ավարտեն իրանց ուսումը:

— Ա՛հ, շատ ուրախ եմ, կը փափագեմ հաճախ հանդիպել ու ձեզի հետ գործել: Գաղութին մեջ գործ շատ կա ընելու, գործողներ չունինք: Հոգներ եմ, ջղերս ալ ուժ չունին:

Մենք բաժանվեցինք: Ավելի քան հինգ տարի մենք տեսնվում էինք առնվազն շաբաթը մի անգամ: Նա միշտ զբաղված էր ոչ այնքան իր, որքան ուրիշների գործերով, այսինչ ուսանողի համար պիտի թոշակ գտնել, այնինչ արվեստագետին պիտի օգնել: Բավական է, որ կարիք ունեցողը հայ է՝ և Զոբեանյանը միշտ պատրաստ էր ձեռքից եկածն անելու երբեմն լավ չտեղեկանալով, դիմողն արժանի՞ է օգնության, թե ոչ, նրա ձեռներեցությամբ և ջանքերով կազմվել էր մի նպաստամատույց ընկերություն, որի նպատակն էր օգնել արվեստագետներին և ուսանողներին: Նրա վարչության մեջ ես էլ կայի, փոխնախագահի կոչումով: Ամենից շատ ու ամենից արդյունավետ գործողը դարձյալ մեր բարեկամն էր — Արշակ Զոբեանյանը: Նա էր, որ, ի միջի այլոց, մեր ընկերության նյութական աջակցությամբ, կազմակերպեց Կոմիտասի առաջին համերգը Փարիզում: Նա էր, որ Վաշինգտոն հայակապ դահլիճը լեցրեց բազմությամբ և բերեց մի շարք հայտնի ֆրանսիացի երաժշտագետներ: Մի բան, որ միայն նրա համառ տոկունությունը կարող էր անել:

Քսան տարի անցած, երբ ես Ամերիկայից վերադառնալով, աչքերիս հիվանդության պատճառով, ստիպված էի Փարիզում մնալ նորեն երկար ժամանակով, Արշակ Զոբեանյանին, այդ մարդ-սնդիկին, տեսա գրեթե անփոփոխ: Նա նույն էներգիական էր, նույն մարքարյուն ռոմանտիկը և, միևնույն ժամանակ, նույն անկուն աշխատավորը հասարակական կյանքի ասպարեզում: Չէր պակսել և նրա բեղմնավոր գրչի թափը: Ձեռնելով իր աջ ձեռի վճասմանը, նա շարունակ գրում էր, գիշեր-ցերեկ: Նա նոր էր լույս ընծայել Roserale d' Armenie (հին հայ բանաստեղծությունների ժողովածու) երկու ստվար և շքեղագարդ հատորները: Ճշմարիտ է, ծերությունը բավականաչափ ազդել էր նրա ֆիզիկական կարողության վրա, և նա այժմ ավելի հաճախ էր կրկնում «ջղերս, ջղերս», բայց, տրտնջալով հանդերձ, չէր հրաժարվում ոչ մի հասարակական գործից ու իրան դիմող արվեստագետներին և ուսանողներին բարոյական օգնություն մատուցանելուց:

Մի օր երեկոյան գնացի Միհաս Զերազին տեսնելու Closerie de Lilas կոչված սրճարանում, որ գտնվում է Սեն-Միշել և Մոնպարնաս բուլվարների անկյունում: Փոքրիկ է այդ սրճարանը, բայց մեկն է լատինական արվարձանի արտիստիկ կաֆեներից: Նրա հաճախորդները մեծ մասամբ բանաստեղծներն են, երաժիշտներ, նկարիչներ: Ճանապարհիս վրա լինելով, ես ամեն անգամ անցնում էի նրա մոտովև ամեն անգամ կանգ էի առնում նրա առջև հիանալու Ֆրանսուա Ռյուդի նշանավոր գործերից մեկով — մարաջախտ Նեի արձանով: Այստեղ է գնդակահարվել Նապոլեոն առաջինի աջ թև ժեներալը, որը կրում էր Մոսկվայի իշխանի մականունը: Այդ արձանը Փարիզի հրաշալիքներից մեկն է և բոլոր արվեստագետների նախանձի առարկան: Հազիվ թե պատերազմի արյունոտուշտ ոգին երբևէ ավելի գեղարվեստորեն, ավելի խտացյալ արտահայտված լինի, քան այդ ամեն մի ֆիգուրայի մեջ:

Միհաս Զերազը նստած էր կաֆեում, առջևը մի գավաթ թեյ: Ես նրա հետ ծանոթացել էի տասն ու վեց տարի առաջ, երբ նա ճամփորդում էր Կովկասում: Այն ժամանակ այդ բավական բարձրահասակ, նիհար մարդը տակավին երիտասարդ էր: Զնայելով, որ Խրիմյանի պատգամավորությունը Բեռլինում ձախողել էր, Միհաս Զերազը լիահույս էր, որ Ռուս-թրքական դաշնագրության չարաբախտ 61-րդ հոդվածը պիտի իրագործվի: Զնայելով նույնիսկ Խրիմյանի սրամիտ ծաղրին:

— Մեզ ուղարկեցին Բեռլին թաճե սպաս ուտելու, չկրցանք, հոն ամենքը երկաթե գդալներ ունեին, իսկ մենք թղթի կտոր մը:

Այժմ Միհաս Զերազի ողնաշարը ծռվել էր, նա ընկճվել էր ու գրեթե խեղճացել: Մարդը Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը դարձրել էր ոչ միայն ազգի, այլև սեփական կյանքի հանգրվանը և հանկարծ տեսնում էր, որ այդ ժանգոտված ու բթացած զենքն էլ խլում են նրանից: Կարելի՞ բան է, որ մարդկությունը այդչափ անարդար ու բարբարոս լինի: Պետք է շարունակ խնդրել, աղերսել, և Միհաս Զերազն աղերսում էր: Ով կարդացել է նրա թերթը, չի կարող չհիշել, թե որքան միապաղաղ, միահնչյուն ու ձանձրալի էր մուրացկանի աղերսը՝ «ողորմեցեք»: Իհարկե Միհաս Զերազը շատ լավ զգում էր, որ իր թույլ ձայնը չի հասնում և անզոր է հասնելու Եվրոպայի խուլ ականջներին: Եվ ահա մի օր, վերջապես, վճռեց լռել և լռեց: Ամենախելոք գործն այդ էր, որ նա արավ:

Այս անգամ նա ինձ վրա թողեց ցավալի տպավորություն: Հիսունհուհինգ տարեկան մարդու համար հիասթափումը կես մահ է: Նախկին Զերազից մնացել էր միայն կեսը — բնածին հումորը, իրերի և մարդկանց ծաղրելի կողմերը ցուցադրելու ձիրքը: Հիշում եմ նրա չհրապարակված, օրիժինալ անեկդոտները, նրա ծայր աստիճան հետաքրքրական պատմվածքները սուլթանների և փաշաների կյանքից ու բարքուվարքերից: Տխուրը նա պատմում էր էպիկական հանդարտությամբ, կարծես նրա բերանով խոսում էր մի ճգնավոր: Ծաղրելին պատմելիս, նա ինքը երբեմ չէր ծիծաղում Պետրոս Ադամյանի պես:Եվ նրա դեմքի արտահայտությունն ու աչքերի հեգնանքը համապատասխանում էին նրա պատմվածքներին:

Զարմանալի երևույթ. կյանքումս տեսել եմ մեկից ավելի մարդիկ, որոնք գիտեն բերանացի սքանչելի պատմել, բայց հենց որ գրիչ են վերցնում, ձիրքը չքանում է: Այդպիսի տպավորություն թողեց ինձ վրա Միհաս Զերազի ֆրանսերեն պատմվածքների մի ժողովածուն:

Թուրքիայի 1908 թվականի հեղափոխությունը մի փոքր թևավորեց Միհաս Զերազին: Սահմանադրությունը հրատարակվելուց անմիջապես հետո նա շտապեց գնալ Պոլիս, նորից այնտեղ հաստատվելու համար: Բայց մի քանի ամիս անցած վերադարձավ ավելի հուսալքված: Երիտասարդ Թուրքիայի կառավարությունը նրան հավատ չէր ներշնչել: Կարծես նախազգում էր, թե իր հայրենակիցներին սպասում էր մի նոր կատակլիզմ, ոչ պակաս սոսկալի, քան սուլթան Համիդի գերիշխանության օրերին: Նորեն հոգեկան թմրություն պաշարեց նրան և նորեն վերսկսեց իր միալար երգը. «Հուսահ, որ օր մը Եվրոպա կը ճանչնա իր մարդկային պարտականությունը»... Խե՜ղճ մարդ, նա խաբում էր ինքն իրեն, հոգու խորքում զգալով, որ իր երազները անիրագործելի են:

Տասներկու տարի հետո, երբ ես նորեն Փարիզ եկա, Միհաս Զերազին չտեսա: Այս անգամ նա, իր տկարության պատճառով, հաստատվել էր Մարսելիայում: Այնտեղ, կարծեմ, 1926 թվականին տոնվեց նրա մանկավարժական-գրական և հասարակական գործունեության վաթսունհամյակը: Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ Փարիզի հայ ինտելիգենցիայի լավագույն մասը հրապարակորեն արտահայտեց իր համակրանքը դեպի Խորհրդային Հայաստանը, Միհաս Զերազը Մարսելիայից հեռագրեց, թե ինքն էլ միանում է համակրողներին: Բացի դրանից, նա իր հոբելյանից գոյացած համեստ գումարը նվիրեց Խորհրդային Հայաստանում մի ուսումնարան բանալու նպատակին:

Մահվան անկողնում նրա վերջին խոսքերից մեկն է եղել.

— Ուրախ եմ, որ հոն կա փոքրիկ և ազատ Հայաստան մը:

Նա դաշնակցության անհաշտ թշնամին էր... Նա կրկնում էր.

«Մեր մեծագույն աղետն այդ կուսակցությունն եղավ»:

Ինչ ասել կուզե, որ դաշնակցականները էլ իրանց կողմից չէին սիրում նրան և հեգնանքով էին գրում ու խոսում նրա գործունեության մասին: Այդպես են մարդիկ, սեփական թերություններն ուրիշների մեջ են փնտրում և այնպես հարվածում իրանք իրանց:

VII

ԴԱՐՁՅԱԼ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐ: ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ: ՍԻԱՄԱՆԹՈՆ

Առաջին թափառումներից հետո, երբ բավական կշտացել էի Փարիզի ժխորից, ինձ պատարեց մի ծանր թախիծ, որի հավասարը կյանքիս ամենադառը ժամերին էի միայն ունեցել: Անգործությունն էր դրապատճառը թե հայրենիքի կարոտը, այդ մասին չէի հարցնում ինքս ինձ: Սիրտս հեծեծում էր կապարյա ծանրությունից: Համաշխարհային կյանքի բովում ես ինձ զգում էի մի տեսակ սառցարանում, նույնիսկ ընտանեկան շրջանում: Մի՞թե այդ էի սպասում Փարիզից: Չէ՞ որ իմ երևակայության մեջ նա եղել էր լավատեսության օրրան:

Գլուխս չէր դադարում գործել, բայց գործում էր միայն մի ուղղությամբ — ի՞նչ է սպասում հայ ժողովրդին, ի՞նչ նոր աղետներ: Թուրքիայից ամեն օր գալիս էին մեկը մյուսից ավելի հուսահատիչ լուրեր: Կովկասում հայ-թրքական ընդհարումները սպառնում էին մի նոր ձև ու թափ ստանալ: Ամեն անգամ Թիֆլիսի լրագրները բանալիս սիրտս տրոփում էր, թե ահա-ահա պիտի կարդամ նոր եղեռնների մասին: Այդ այն ժամանակ էր, երբ Վորոնցով-Դաշկով փոխարքայի նախագահությամբ տեղի ունեցող «միջազգային» ժողովները ստով ու կեղծիքով մոլորեցնում էին թե հայ և թե թուրք ազգաբնակությանը: Հիշում եմ այդ ստերից մեկը: Նրա անամոթությունն ավելի, քան որևէ մեկը, ես գիտեի: Ժողովներից մեկում թուրք հրապարակախոս Ահմեդ-բեգ Աղաևը դաշնակցականներին հարցնում է.

— Ինչո՞ւ միջոցներ չձեռնարկեցիք մեր եղբայրասպան ընդհարումների առաջն առնելու, երբ Շիրվանզադեն Բաքվի կոտորածներից երկու ամիս առաջ ձեզ նախազգուշացրեց այդ մասին:

— Մենք միջոցների դիմեցինք, բայց ոստիկանությունը մեզնից զորավոր եղավ, ի՞նչ կարող էինք անել, — պատասխանեց ժողովականներից մեկը:

Եթե այդպես ստեր մի ուրիշը դաշնակցականներից, պատկերն այնքան այլանդակ, այնքան անամոթ չէր լինի: Բայց խոսողը Կոնստանդին Խատիսյանն էր: Այն մարդը, որ իմ նախազգուշացմանը պատասխանել էր մի տարի առաջ:

— Մենք թուրքերից երկյուղ չունենք, նրանք իմ կոճիկների տակին չարժեն:

Մի պահ ես կամեցա հեռագրով հերքել այդ անպատկառ սուտը և հրապարակորեն մերկացնել Խատիսյան «գործիչի» դեմքը, բայց մտածեցի, ի՞նչ օգուտ բացի վնասից, քանի որ դրանով կարող էի մի աստիճան հրահրել փոխադարձ երկպառակությունները երկու ազգությունների մեջ, որ հավաքել էին իբրև թե եղբայրական դաշինք կապելու: Բավական էր, որ առանց այդ էլ տառապում էր իմ հոգին:

Հաճախ ինքս ինձ կշտամբում ու ամբաստանում էի, որ հեռացել եմ այն երկրից, որի կյանքովն էի սնվել ու ապրել, որի հետ կապված էի իմ հոգու բոլոր թելերով: Ես ինձ համարում էի մի տեսակ դասալիք և ոչ ընտանիքիս ֆիզիկական փրկությունը, ոչ զավակներիս կրթության ապահովությունը չէին արդարացնում իմ աչքում իմ վարմունքը: Զկա մարդու համար ավելի դաժան բարոյական տանջանք, քան այն, երբ նա ինքն է իր եղունգներով բզկտում իր հոգին: Բայց չկա և ինքնամեղադրանք, որից ազատվելու համար մարդ չգիտե միջոց, թեկուզ սոփեստությամբ: Ես ինձ աշխատում էի մխիթարել այն մտքով, թե ինձ նման մի խաղաղասեր հոգի չունի ոչ մի դեր այնտեղ, ուր սրեր են խաչածևվում:

Դաշնակցությունն ուղարկել էր երկուսին իր ղեկավարներից՝ Կարո Բաստրմաճյանին ու Հովհաննես Քաջազնունուն, Փարիզում ապաստանված ռուսահայ հարուստներից դրամ պահանջելու:

— Ինչո՞ւ համար է այդ հանգանակությունը, — հարցրի ես Կարո Բաստրմաճյանին:

Ջենի համար:

— Ո՞ւմ դեմ պիտի գործածենք զենքը:

— Կովկասյան թուրքերի դեմ:

— Ուրեմն պիտի շարունակեմ կռիվը:

— Պիտի շարունակեմ:

— Մինչև ե՞րբ:

— Մինչև կատարյալ հաղթություն:

— Ասացեմ, մինչև կատարյալ պարտություն, այդ ավելի ճիշտ կլինի:

— Երկուսից մեկը. կամ մենք պիտի ապրենք, կամ թուրքերը:

— Հաշտության ոչ մի միջոց չե՞ք գտնում:

— Չենք գտնում:

— Եվ չեք էլ աշխատում գտնելու, իհարկե:

— Այո՛: Հայ և թուրք հակառակ բևեռներ են, որ երբեք չեն միանալ...

Եվ այդ լեզվով խոսում էր այն մարդը, որ դաշնակցության շեֆերի մեջ ամենամեղմն ու ամենաբարին էր համարվում: Ճիշտ նույն լեզվով էին խոսում կարաբեկովներն ու սուլթանովները:

Ինքը դաշնակցությունն էր կանխավ որոշել, թե որ հարուստը որքան պիտի տա: Պահանջը միլիոնների էր հասնում: Հիշում եմ միայն Ալեքսանդր Մանթաշյանի վրա դրված տուրքը — 400 հազար ռուբլի: Եվ սկսվեց մի ինքնատեսակ սակարկություն հայ բուրժուազիայի ու դաշնակցության մեջ: Եվ այլանդակ ու ամոթալի վաճառքին ենթարկվեց երկու դարավոր հարևան ժողովուրդների անմեղ արյունը:

Չեմ հիշում, սակարկությունն ինչ գումարի հանգեց, բայց լավ հիշում եմ, որ դաշնակցության պատգամավորները Փարիզից հեռացան գոհ սրտով...

Օրն երկու անգամ այցելում էի լատինական արվարձանի ամենահին սրճարանը՝ Café Souffet: Այդ կաֆեն պատմական էր ռուս էմիգրանտների համար: Հերցենի և Լավրովի օրերից սկսած նա էր եղել նրանց ժամադրավայրը Փարիզում:

Այժմ այցելում էին 1905 թվականի հեղափոխության դեկավարները և Շլիսելբուրգի ու Պետրոպավլովսկու ազատագրյալները: Այնտեղ էր մերթ ընդ մերթ լինում և Լենինը, հայելով այդ հեգնական աչքերով, համեստ դեմքով մարդուն, ո՞վ կարող էր ասել, թե մի տասը տարուց հետո նա է լինելու աշխարհի մի վեցերորդական մասի հիմնիվեր հեղաբրջողը և համայն մարդկության ապագա ճակատագրի կերտողը, և մանավանդ ո՞ր հայը կարող էր գուշակել, թե այդ մարդու կամքն ու գաղափարն են լինելու Կովկասի աշխատավոր ժողովուրդների փրկության և ազատագրման խարիսխը:

Մարդիկ գալիս էին, նստում միշտ միևնույն որոշ տեղում, պահանջում էին մի-մի բաժակ կաթով սուրճ կամ մի գավաթ գարեջուր և ժամերով վիճաբանում: Նրանք միշտ հուզված էին, միշտ ներվային, բայց ոչ ոքի դեմքի վրա չէր երևում պարտվածի հուսահատությունը: Ի՞նչ էին խոսում, չգիտեի, և իհարկե, չէի կարող գիտենալ, բայց պարզ էր, թե ինչն է նրանց մտքերի կենտրոնական առանցքը... Պարզ էր նաև յուրաքանչյուրի նյութական կարիքը: Եվ ամենքն իրենց նեղ օրերը կրում էին ռուս հեղափոխականին հատուկ պարզությամբ և հումորով: Ապշեցուցիչ էր այդ մարդկանց կամքի զորությունը:

Մեծամասնությունը ռուս ուսանողներ էին: Նրանք կեցում էին Moufetter անունով մի աննշան փողոցում: Ծայրեիծայր ռուս լեզուն էր տիրում այդ փողոցի վրա, և ամեն անգամ այնտեղից անցնելիս ինձ թվում էր, թե Ռուսիայի մի որևէ խաղաքաղաքում եմ գտնվում...

Մի պահ նրանք հրավառվեցին սովորականից ավելի: Ի՞նչ էր պատահել, ի՞նչ նոր ալեկոծում: Ոչինչ. դատարկ բան: Ցարական կառավարությունը մի միլիարդ ֆրանկի փոխառություն էր խնդրել Ֆրանսիայից: Զգիտեմ թվով դա հանիերորդ դեպքն էր, բայց վաղուց արդեն դարձել էր սովորական: Եվ ֆրանսիական բուրժուազիան միշտ հաճույքով էր պարպել իր խակը: Ինչո՞ւ չէ: Զէ՞ որ նրա շայլոկյան պայմանները միշտ ընդունվում էին առանց սակարկության: Այս անգամ փոխառությունը Նիկոլայ երկրորդին հարկավոր էր գլխավորապես հեղափոխական շարժումները մի անգամ ևս միշտ Ռուսիայում խեղդելու համար: Այսպես էին կարծում, հեղափոխականները և այս էր, որ ալեկոծել էր նրանց: Մահիմ Գորկին իր խիզախ ոճով գրեց մի ցասկոտ հոդված: Այնտեղ նրա խորապես վշտացած գրչից շեշտակի սպրդել էր մի կծու դարձվածք՝ «Թխում եմ գեղեցիկ Ֆրանսիայի երեսին»:

Ամենքը գիտեին, որ թուրը ուղղված է բուրժուազիայի և միմիայն բուրժուազիայի երեսին, բայց չէին ուզում խոստովանել: Այս էր պատճառը, որ ռեպտիլ մամուլը կատաղել էր համբավավոր բելլետրիստի դեմ:

«Սուֆլե» սրճարանը գալիս էին և ոչ հեղափոխականներ, թե՛ ռուս և թե՛ հայ ու վրացի: Հիշում եմ հայտնի գիտնական Մահիմ Կավալևսկուն, գրող Ամֆիտեատրովին, պրոֆեսոր Յուրի Ղամբարյանին և Թիֆլիսի առևտրական բանկի վարիչ Միխայել Թամամշյանին: Զգիտեմ ինչպես, այժմ այդ մարդն էլ պրոֆեսորի կոչում էր կրում:

Այդ չորսն էլ զարմանալի գեր մարդիկ էին, մանավանդ Միխայել Թամամշյանը: Նա հարյուր ու հիսուն կիլոգրամ կշիռ ուներ: Հիշում եմ այն օրը, երբ նրանք թանձր մուշտակների մեջ պարուրված կաֆեմ տան, ներկա եղողները միաբերան բացականչեցին.

— O la-la, o la-la…

Իսկ մի ֆրանսիացի սրախոսեց.

— Այժմ ինձ հասկանալի է, թե ինչու Ռուսաստանն այդքան լայնածավալ է:

Չորս պրոֆեսորները դասախոսում էին ռուս էմիգրանտների համալսարանում, կարծեմ, ձրիաբար: Այդ ժամանակ նրանց և ուսանողների մեջ խռովություններ էին ծագել: Ինձ ասացին, թե Մահիմ Կավալևսկին իր բերնից թռցրել է մի անզգույշ խոսք — «Ես Ֆրանսիայում հանրապետական եմ, իսկ Ռուսիայում՝ միապետական»: Ուսանողները կատաղել էին և Կավալևսկուն բոյկոտի էին ենթարկել:Նրանք աղաղակում էին.

— Անկցի՛ Պետական խորհրդի անդամը, մենք չենք ուզում նրա դասերը:

Թամամշյանն իր պատռոնակցին պատպանում էր կովկասյան տաքարյունության ամբողջ թափով ու զորությամբ: Մի բանակցության ժամանակ նա թանահաման էր արծակել ուսանողների վրա, ինչպես Մարտին Լյութերը Բեհեզերուղի վրա:

Դժգոհություններ կային և՛ Ամֆիտեատրովի դեմ: Հիշում եմ այն հրապարակական բազմամարդ ժողովը, երբ ռուս գրողը ճգնում էր իրան արդարացնել ուսանողների առջև: Խեղճ մարդն այնքան հուզված էր, որ խոսքերը խեղդվում էին կոկորդում: Ինձ թվում էր թե ահա-ահա, այդ բարձրահասակ, զարմանալի գեր և կարճապարանոց մարդը կաթվածահար պիտի լինի: Վերջը նա արտասվեց, և նրա կինը, թևից բռնելով, ֆաեց տարավ դուրս, ինչպես կրկեսում վիրավորված մի ցուլի: Երբեմն Կավալևսկուն և Ղամբարյանին հանդիպում էի բժիշկ Լոռիս-Մելիքյանի մոտ, Երկուսն էլ կատարյալ եվրոպացիներ էին արդի բուրժուական մտայնությամբ: Կավալևսկին դարձել էր կես փարիզաբնակ: Սեն-Միշել բուլվարի վրա, Լուքսեմբուրգ պարտեզի դեմուդեմ նա ուներ մի կոկիկ մշտական բնակարան:

Մի անգամ իմ ներկայությամբ մի ծերունի ֆրանսիացի բժիշկ նրան հարցրեց.

Ասացեք, պարոն պրոֆեսոր, ռուս ժողովրդի ամենաբնորոշ հատկությունը ի՞նչն է:

Կավալևսկին առանց տատանվելու պատասխանեց.

— Դիմացկունությունը, տոկունությունը:

Նա այն համոզմունքի էր, որ ռուս մարդը կարող է դիմանալ ամեն բանի, ուստի չէր հավատում, թե երբևէ ռուս գյուղացին կըմբոստանա ցարիզմի դեմ.

Այդ օրերը Փարիզի փողոցներում ու կաֆեներում հաճախ հանդիպում էի դաշնակցականների, նրանք էլ երբեմն գալիս էին «Սուֆլե» սրճարանը, հիշում եմ մեկին -Վարդ Պատրիկյան անունով: Այդ մարդը Բուլղարիայում երկար տարիներ հրատարակել էր մի դաշնակցական թերթ, եթե չեմ սխալվում, «Ռազմիկ» անունով: Այժմ նա գժտվել էր իր կուսակցության հետ և հուր ու կայծակ էր թափում նրա գլխին, մեղադրելով իր երեկվա գաղափարակիցներին ու ընկերներին յոթ անգամ յոթ մեղքերի մեջ: Որովհետև ես վաղուց էի դադարել հետաքրքրվել դաշնակցության գործերով, ուստի գրեթե միշտ անուշադիր էի լսում նրան և այսօր էլ չգիտեմ ի՞նչ էր իսկական նրա դժկամության պատճառը: Գիտեմ միայն, իր շատ ժամանակ չանցած՝ դաշնակցությունն այդ հեզ վարդապետին մահվան դատապարտեց և Բուլղարիայում սպանեց. Խնդիրը վերջ ի վերջո վերաբերվում էր 20000 ֆրանկ մի գումարի, որ իբրև թե վատնել էր «Ռազմիկ»-ի խմբագիրը: Բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքյանը, դաշնակցության գլխավոր հիմնադիրներից մեկը, նույնպես հեռացել էր կուսակցությունից, հանձնելով Պիեր Քիարին թե՛ «Pro Armenia» թերթի խմբագրությունը և թե՛ իր մոտ գտնված կուսակցական դրամը մինչև վերջին սանտիմ: Նա պնդում էր, թե Ավետիք Ահարոնյան, Ակնունի, Միխայել Հովհաննիսյան, մանավանդ այս վերջինը և չգիտեմ էլ ովքեր, իր դեմ որոգայթներ էին լարել և ոչ մի միջոց չեն խնայում իրան տապալելու ու վարկաբեկելու համար: Ես լավ էի ճանաչում բժշկի բնավորությունը, նա մի փիչ կասկածամիտ մարդ էր: Բայց ներկա դեպքում նրա կասկածն իրավացի էր, ինչպես և այդ ապացուցվեց ապագայում, մի անգամ նա ինձ ցույց տվեց Սիմեոն Զավարյանի մի ընդարձակ նամակը Կ. Պոլսից գրած և խնդրեց թարգմանել: Այսօր ես բառ առ բառ չեմ կարող մտաբերել այդ նամակը, բայց լավ հիշում եմ, որ սրա բովանդակությունը բավական անմխիթար էր: Այն հայտնի դաշնակցականների վարքուբարքերի համար, որոնց մասին գրում էր Զավարյանը:

Ինքը Լոռիս-Մելիքյանն ավելի արհամարհանքով էր խոսում իր նախկին գաղափարակիցների մասին, քան ատելությամբ: Դաշնակցությունից հեռանալով, նա չէր դադարել զբաղվել այսպես կոչված «Հայկական խնդրով» և զբաղվում էր մինուճար ուղղությամբ, այսինքն պառլամենտի բարեկամ ու ծանոթ անդամների բերնով հասարակական կարծիքը և մամուլը հետաքրքրում էր կարմիր սուլթանի գազանություններով: Միջոցը միևնույնն էր. հրավիրում էին մի բանի «հայասեր» հռետորներ — Ժոռես, Պրեսանես, Պելլետան, Սըմբա, Պիեր Քիար, Societe Savante-ի անօգ դահլիճը լեցվում էր խուռը բազմությամբ (իհարկե, մեծ մասամբ հայերով): Հռետորները մեկը մյուսի հետևից պերճախոս նկարագրում էին վերջին massacre-ը (կոտորած), ունկնդիրներին հուզում էին ու ցրվում: Մյուս օրը մեկ կամ երկու լրագիր տալիս էին մանր տառերով երեկույթի նկարագիրը մի բանի տողերով, և դրանով վերջանում էր ամեն ինչ, մինչև մի նոր մասակր: Հաճախ հռետորներից կարևորները չէին գալիս միտինգներին, երևի, ձանձրացած միևնույն անսամբլով կատարվող միևնույն կոմեդիայով: Իսկ չգալու համար միշտ կար արդարացուցիչ խոսք — «հիվանդ եմ»: Ամենից շատ «հիվանդանում» էր Ժան Ժոռեսը:

Այս էր ոչ միայն դաշնակցության, այլև ամբողջ եվրոպաբնակ հայ մտավորականության «ազգային գործունեության» ալֆան և օմեգան, պլյուս այս ու այն մինիստրի կամ դեպուտատի դուռեր ծեծելը: Հետաքրքրականն այն է, որ ոչ մեկը գոհ չէր մյուսի արածով, ոչ մեկը մյուսի աչքում «խոհեմ ու խելոք» չէր: Թող թույլ տրվի ինձ այս առիթով պատմել երկու կոմիկական, բայց շատ բնորոշ դեպքեր:

Երբ Անատոլ Ֆրանսը եգիպտոսումն էր, Ալեքսանդրիայում թե Կահիրեում, գալիս են նրա մոտ երեք «ազգային ներկայացուցիչներ» շնորհակալություն հայտնելու, որ մեծ գրողը բարեհաճում է հետաքրքրվել «Թուրքահայերի

վիճակով»: Հազիվ մի բանի խոսքեր են ասում, երեք պատգամավորների մեջ սկսվում է վիճաբանություն և մեկը հերքում է մյուսի ասածը: Վերադառնալով Փարիզ, Անատոլ Ֆրանսը դեպքը պատմում է մի ծանոթ հայի ու ավելացնում է:

— Զարմանալի կովասեր մարդիկ եք դուք հայերդ: Երկրորդ դեպքը պատահում է Լոնդոնում պարսկական Մուզաֆֆար էդդին շահի այնտեղ եղած ժամանակ: Տեղական հայ գաղութը ընտրում է երեք պատգամավոր և հանձնարարում է նրանց գնալ շահի մոտ և երախտագիտություն հայտնել, որ նա թույլ չի տալիս, որ պարսիկները կոտորեն իր հպատակ հայերին: Պատգամավորների մեջ է լինում և՛Միհրաս Զերազը, բայց խոսելու իրավունքը տրվում է պարսկահպատակ ներսես խան Ներսիսյան ակնավաճառին:

— Ջանըմ, — պատմում էր ինձ այդ խանը,- ընդունարան մտնելուն պես Միհրաս Զերազ ընդառաջ եկավ ու ֆրանսերեն լեզվով ըսավ. «Ձերդ մեծություն, շնորհակալության ճառ ես պիտի ըսեի, բայց որովհետև ընկերս Ներսես խան Ներսիսյան ձեր հպատակներից է ու ֆարսերեն խոսել գիտե, պարոհս անոր գիջեցի»: Ջանըմ, ադ որ լսեցի, լեզուս պապանձվեց, էլ չը կրցա խոսել, ու ամոթահար դուրս ելանի:

Ամենից շատ դռները մատոդները դաշնակցականներն էին, որովհետև թե՛ թվով և թե՛ ժամանակի ազատությամբ նրանք ամենից հարուստ էին: Սրանք ունեին պրոֆեսիոնալ «գործիչների» մի ամբողջ բանակ, որ ցիրուցան թափառում էր Եվրոպայի բոլոր խաղաքները, ամենուրեք կատարելով իր «մխսհան»: Կային նրանց մեջ մարդիկ, որ երկնային պատգամներով էին բարբառում: Անհնարին էր նրանց հետ վիճաբանել, ոչ մի բննադատություն չէին ընդունում և նկատողություն անողին բռունցքով էին սպառնում: Բայց կային և մարդիկ, որոնք, կարծես, հոգնել էին դաշնակցության միալար երգը երգելուց և երբեմն չէին վարանում կողմնակի անձանց մոտ գանգատվել իրանց կուսակցության դեմ ու պարսավել նրանց խաղաքական գործելակերպը: Այդպիսիներից էր, ի միջի այլոց, բանաստեղծ Սիամանթոն, որի հոգին թևակոխել էր պայմանականը: Մարդը երբեմն տառապում էր արտասվելու չափ, երբ խնդիրը գալիս էր եվրոպական տերությունների վերաբերմունքին: Նա ասում էր.

— Ամեն ինչ կորցրինք, խնայենք գոնե մեր ազգային պատվասիրությունը ու թքենք այդ պառլամենտներուն վրա:

Ես Սիամանթոյին պատահում էի Լատինական արվարձանի սրճարաններում: Բավական բարձրահասակ, մի փոքր կորամեջք երիտասարդ էր, գեղեցիկ աչքերով և ժպտուն դեմքով: Սովորություն է դարձել բանաստեղծների գլուխը որակել «առյուծային» ածականով: Նույնը չեմ կարող ասել Սիամանթոյի մասին, նրա գլուխը ոձև էր և ջարդված սեխի էր նմանվում, երբ բաց էր: Նա միանգամայն այլափոխվում էր, երբ գդակը դնում էր գլխին: Հմայիչ էր նրա բարիտոնական ձայնը, մանավանդ խոշոր աչքերի պսպղուն արտացոլումը: Հաճախ ես նրան տեսնում էի Միհասյան ազգանունով մի շատ համեստ ու հեզահամբույր երիտասարդի հետ: Երկուսի էլ ընկերակցությունը վայելում էի հաճույքով: Ոչ մեկն երկուսից չուներ այն տխմար ինքնահավանությունը, այն զազրելի ամբարտավանությունը, որ շատ դաշնակցականների հատկանիշն էր և որի պատճառով ես խուսափում էի նրանց ընկերակցությունից:

Մի անգամ Սիամանթոն և Միհասյանն անհայտացան: Մոտ երկու շաբաթ ես նրանց չէի տեսնում ոչ մի տեղ: Կարծում էի, որ Փարիզից հեռացել են: Վերջապես, մի օր հանդիպեցի նրանց Սեն-Միշելի վրա: Զարմանալի փոխվել էին արտաքուստ: Նիհարել էին և դժգունել, ինչպես հիվանդանոցից նոր ելածներ:

— Ժնև՞ էիք գնացել — հարցրի ես, ի նկատի ունենալով, որ նրանք հաճախ «գործով» այնտեղ էին գնում:

— Այո, — պատասխանեց Սիամանթոն, և, նայելով ընկերոջը, ժպտաց այն մանկական ժպիտով, որ հատուկ է ուուտ ասելուն անսովոր մարդուն:

Ես զսպեցի իմ հետաքրքրությունը: Մի բանի օր հետո Սիամանթոն ասաց.

— Գիտեք, ես այն օրը ստեցի, ասելով, թե Ժնև էինք գնացել: Մենք ոչ մի տեղ չէինք գնացել:

— Հապա ինչո՞ւ չէիք երևում:

— Որովհետև դրամ չունեինք սրճարան մտնելու համար և Սեն-Միշելից էլ խուսափում էինք:

Ես նրան բարեկամաբար կշտամբեցի: Մի՞թե չէր կարող ինձ ասել: Եթե ես չունենայի էլ, կարող էի որևէ մեկից փոխ վերցնել և տալ նրանց:

— Իսկ ա՞յժմ, — հարցրի ես:

— Այժմ մի երկու շաբաթով ապահով ենք: Միհասյանը Ժնևից ստացավ իր ամսականը: Գիտեք, մի օր մեր հուսահատությունն այն աստիճան էր, որ հիմարաբար մտածում էինք նետվել Սենայի մեջ և վերջ տալ մեր այս հիմար կյանքին: Միայն Միհասյանի մի բառը փրկեց մեզ: «Իսկ մա՞յրդ», -ասաց, — և իսկույն մորս ողբը հնչեց ականջիս: Միհասյանն ինձմե խոհեմ է...

Սիամանթոն միշտ նյութական կարիքի մեջ էր, մինչևնույն ժամանակ ինչ որ ձեռքն էր ընկնում, անմիջապես ծախսում էր, առանց վաղվա մասին մտածելու: Բանաստեղծ էր ոչ միայն իր տաղանդով, այլև սրտով: Թող իմ այս դարձվածը տարօրինակ չհամարվի: Տաղանդավոր ստեղծագործողներ եմ տեսել, որոնք կարող էին մրցել անմահ Հարպագոնի հետ: Այլ է ստեղծագործությունը, այլ է կյանքը: Մեծագույն բանաստեղծությունն արհամարհանքն է դեպի սեփականությունը. Ով մամոնային պաշտում է, նա Ապոլոնին անարգում է... Ժլատությունն ախտավոր հոգու նշան է...

Թուրքական հեղափոխությունից հետո Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա, այնտեղ նա դաշնակցական լրագրերում գրեց մի շարք ոտանավորներ, որոնցով նա գաղթականներին կոչ էր անում հայրենիք վերադառնալու: Այդպես էր նրան պատվիրել դաշնակցությունը. Ես նրանից ստացա մի ֆանի նամակներ բավական զվարթ բովանդակությամբ: Բանաստեղծը հավատում էր թուրքահայ ժողովրդի ազատագրմանը: Սահմանադրական Թուրքիայի գազանություններեի ժամանակ ես նրան չհանդիպեցի: Միայն 1913 թվականին տեսա նրան Թիֆլիսում, երբ Պոլսից ուղեկցել էր Սիմեոն Ջավարյանի դիակին: Նա նորեն մոայլվել էր և ավելի հուսալքված էր, ֆան Փարիզում, Բայց Կովկասը նրան գրավել էր, - եթե հնար ունենայի, — ասաց նա մի օր ինձ, — ուրախությամբ հոս կը կենայի:

Հոգեպես նա դաշնակցությունից վաղուց էր անջատվել: Այդ նա չէր թաքցնում ինձնից. Այժմ փափագում էր ամեն մի կապ խզել այդ կուսակցության հետ, որ այնքան շահագործել էր նրա բոցավառ տաղանդը: Այժմ նա երազում էր նվիրվել ազատ ստեղծագործության:

Այդ օրերին ես որոշել էի ժամանակավորապես տեղափոխվել Մոսկվա: Մտադիր էի այնտեղ կազմակերպել մի մեծածավալ զուտ գրական ամսագրի հրատարակություն բոլոր անվանի հայ գրիչների և մի ֆանի ռուս հայտնի գրողների աշխատակցությամբ: Այս առթիվ ես ունեի արդեն ոմանց հոժարությունը: Ամսագրի հյութականը խոստացել էին ապահովել մի ֆանի բախվեցի բարեկամներ, գլխավորապես իմ բարեկամ Արսեն Բուդաղյանն ու իր հայրը: 1914 թվականի հունվարին ես ուղևորվեցի Մոսկվա մտադրությունս իրագործելու համար: Սիամանթոյին խոստացա շուտով հրավիրել այնտեղ: Ես վճռել էի ամսագրի հրատարակությունն ապահովելուց հետո խմբագրությունը հանձնել Սիամանթոյին և Վահան Տեր յանին: Ընտանեկան պայմաններս ինձ թույլ չէին տալիս Մոսկվայում հաստատվելու, իսկ Թիֆլիսի մթնոլորտը ես համարում էի անհպաստ մի լուրջ գրական հանդեսի աջող գոյության համար: Ասում եմ գրական, որովհետև բոլորովին չունեի ձգտում մի նոր Ստեփանոս Նազարյան դառնալու:

Պատահեց, որ մի երկու ամիս ստիպված եղա զբաղվել ընտանեկան գործերով, մանավանդ հիվանդ որդուս ճակատագրով: Իսկ երբ ազատվեցի այդ գործերից, բարեկամներս խորհուրդ տվեցին ամսագրի հրատարակությունը սկսել սեպտեմբերին: Ես ստիպված էի վերադառնալ Կովկաս: Հուլիս ամսին հայտարարվեց պատերազմը, և ամեն ինչ հեղաշրջվեց:

Մինչև իմ Կովկաս վերադառնալը, Սիամանթոն ուղևորվել էր արտասահման: Այլևս նրան չտեսա:

Հինգ տարի անցած, երբ ես Պոլիս եկա, այնտեղ միայն լսեցի նրա եղեռնալի վախճանի մասին: Դաշնակցության «մտերիմ» բարեկամ Թալաաթ-բեյը բելետրիստ Գրիգոր Զոհրաբի, բանաստեղծ Վարուժանի, Զարդարյանի, Ակնունու, Խաժակի և մի բանի ուրիշ մտավորականների հետ Սիամանթոյին էլ ոխսորել էր Այաշ, որպեսզի այնտեղ նրանց կոտորեն:

Ինձ մնում էր միայն դժվարագույնը՝ գնալ բանաստեղծի մորը տեսնելու և իմ վշտակցությունը նրան արտահայտելու....

VIII

ԱՅՍ ՈՒ ԱՅՆՏԵՂ

Սեն-Միհել բուլվարի վրա կար մի փոքրիկ կաֆե, որ գիշերը մինչև լույս բաց էր: Նրա տերը մի պառավ բրետանուհի էր, մի շատ սիրուն աղջկա հետ:

Գիշերվա երկու ժամին, երբ սովորական սրճարանները փակվում էին, այդ կաֆեն լցվում էր գիշերասեր այցելուներով:

Երբեմն ես էլ էի գնում այնտեղ: Գրեթե միշտ պրոֆեսոր Միխայել Թամամշյանի հետ: Այդ մարդն անխնայությունից տառապում էր և շարունակ թախանձում էր սրան ու նրան՝ իրան մենակ չթողնել:

— Ես սարսափում եմ իմ ննջարանից, այնտեղ ես տանջվում եմ, անկողնիս մեջ տրորվելով, — ասում էր խեղճ մարդը:

Ես ինքս, գիշերասեր լինելով, հաճախ լուսաբացին էի տուն վերադառնում, բայց, դժբախտաբար, այդ մարդու առասպելական գիրությունն ինձ էլ երբեմն անախորժ դրության մեջ էր դնում: Ես աշխատում էի հնարավորության չափ խույս տալ նրա ընկերությունից: Սակայն այդ այնքան էլ դյուրին չէր այն պարզ պատճառով, որ մարդը մենության մեջ տառապում էր բառիս կատարյալ իմաստով: Ցավալի էր տեսնել այդ ծայր աստիճան ընկերասեր, կենսախինդ, սրամիտ և գրական-գիտական ահագին պաշար ունեցող մարդուն այն բոպեներին, երբ կաֆեի սպասավորները սկսում էին սեղաններն ու աթոռները իրարու վրա ժողովել, մանավանդ երբ մենք երկու ժամից թեկուզ մի կես ժամ առաջ էինք գնում: Նրա աղերսալի հայացքը ուղեկցում էր մեզ մինչև դռները: Մարդու հոգին տառապում էր մարմնի ծանրությունից. դա նրա համար կատարելապես մի դրամա էր, որից ազատվելու ոչ մի հնար չկար:

Մի անգամ երբ միասին տուն էինք վերադառնում (մեր բնակարանները շատ մոտիկ էին իրարու), եղանակն անձրևային էր, կառքերը փակ: Թամամշյանը մի ոտը բարձրացրեց ու դրեց կառքի մեջ, ավա՛ղ, երկրորդ ոտը մնաց գետնի վրա և ոչ մի կերպ չկամեցավ բարձրանալ վեր: Պետք է այն էլ ասել, որ այդ կամակոր ոտը երկու անգամ ավելի հաստ էր, քան մյուսը — չգիտեմ դա ինչ հիվանդություն էր: Իհարկե, ես օգնում էի կեսը ներս և կեսը դուրս մնացած վիթխարիին, բայց ապարդյուն: Կառապանն ապշած նայում էր վարից վեր: Ես դիմեցի նրա օգնությանը: Բարի մարդը վար իջավ, օգնեց, և մենք վերջապես կարողացանք հարյուր հիսուն կիլոն խոթել կառքի մեջ, կաֆեի առջև խմբված սպասավորների բրիչների ուղեկցությամբ:

Չնայելով այս և նման դեպքերի անախորժությանը, Թամամշյանը երբեք չէր շփոթվում կամ վշտանում: Ջարմանալի զվարճախոս էր և միշտ կրկնում էր.

— Խեղճ իմ բարեկամներ, որ դիակս պիտի ձեր ուսերի վրա դուրս բերեք տնից: Անշուշտ դուք պիտի անիծեք ինձ:

Երբ նա անցնում էր փողոցով, ամենքը կանգնում էին և զարմացած նայում: Մի անգամ երբ ես նրա հետ անցնում էի փողոցով, ամենայն սառնասրտությամբ իր գլխարկը վերցրեց և աջ ու ձախ նայելով ասաց.

— Տիկիններ և պարոններ, ինձ տեսնելն արժե երկու սու: Նա գիտեր, որ հումորը ֆրանսիացու ամենասիրելի անուշեղենն է: Ամենքը բարեսրտաբար ծիծաղեցին և ամենից ավելի՝ ինքը: Հոգեբան էր. գիտեր, որ ուրիշների ծաղրի դեմ պաշտպանվելու ամենալավ միջոցը ինքն է ծաղրելն է: Աշխատեր ամենից առաջ ինքդ ծիծաղել քեզ վրա և ուրիշներին զինաթափ կանես:

Չնայելով իր ծանրությանը, այդ մարդը չէր ծուլանում ժամերով շրջել Սեհայի ափերում, կանգ առնելով յուրաքանչյուր բուկինիստի առջև: Նա մի բացառիկ բիբլիոման էր: Նա իր եկամտի մեծ մասը ծախսում է գրքերի վրա: Թիֆլիսում նա ուներ մի հարուստ գրադարան, որի հավասարը հազիվ թե ունենար մի ուրիշն ամբողջ Կովկասում:

Այս անգամ գիշերային վտրիկ կաֆեում մենք հանդիպեցինք մի խումբ ռուս արվեստագետների, այսօր նրանցից հիշում եմ միայն համբավավոր արձանագործ Սուդքինինինին, որ հաջողել էր Փարիզի մեջ ևս անուն վաստակել: Թամամյանն ինձ ծանոթացրեց նրանց հետ: Փոքր անցած ներս մտավ մի զույգ, թև-թևի տված: Կինը սևազգեստ, շատ նիհար և շատ գունատ էր: Երկայն սև մազերով մի էակ էր, ոչ բարձրահասակ և, կարծես, թափանցիկ որպես ստվեր: Տղամարդը շիկահեր էր, մինչև թիկունք երկայն մազերով, զգգվված ցանցառ մորուքով, հիվանդոտ աչքերով, անճաշակ հագնված և վատ սանրված կամ բոլորովին չսանրված: Երկուսն էլ հարբած էին. հայտնի չէր, թե որն է որին պահում անկումից, տղամա՞րդը կնոջը, թե՞ հակառակը:

— Օ՛օ՛, Բա՛լմոնտ, Բա՛լմոնտ — գոչեցին միաբերան իմ նոր ծանոթները: -Համեցե՛ք, համեցե՛ք...

Ես տակավին ծանոթ չէի այդ բանաստեղծի երկերին, բայց անունը լսել ու կարդացել էի: Ինչ ուզում եք ասեք, մարդու արտաքինը ազգում է դիտողի վրա: Իմ առջև կանգնած էր ոչ ախորժալի դեմքով ու կեցվածքով մի մարդ, որ շրջիկ լաթավաճառի էր նման: Նա ոչ միայն չընդունեց իր հայրենակիցների սիրալիր հրավերը, այլև բարևի անգամ չարժանացրեց նրանց, չխոշվելով նույնիսկ կանանց ներկայությունից: Նա մոտեցավ բուֆետին և, ձեռը զարկելով սեղանին, պահանջեց երկու բաժակ չգիտեմ ինչ ալբոհոլ, ապա, գլուխը կովասեր աճադողի պես բարձրացնելով, արտասանեց.

— А кто посмеет сказать, что не Бальмонт король всех современных поэтов -ո՞վ կհամարձակվի ասել, թե Բա՛լմոնտը չէ ժամանակակից բանաստեղծների թագավորը: Իհարկե, ոչ ոք չհամարձակվեց այդ ասել: Իսկ մի ներվային պառավ աղջիկ, որ կարծեմ նկարչուհի էր, գոչեց.

— О, великий поэт, мы все гордимся вами! — օ՛, մեծ բանաստեղծ, մենք ամենիս պարծենում ենք ձեզմով:

Ասում են՝ այն, ինչ որ մարդու հոգու մեջ է արթուն ժամանակը, երթուղիների վրա է հարբած ժամանակը:

Տարիներ անցած ես այդ բանաստեղծին մի անգամ ևս տեսա՝ դարձյալ Փարիզում: Սորբոնի ամֆիտեատրներից մեկում մի խումբ հայ մտավորականներ ուսանողների հետ միասին Հովհաննես Թումանյանի մահվան առթիվ սգահանդես էին կազմել: Բալմոնտն էլ հրավիրվել էր իր խոսքն ասելու հայ բանաստեղծի մասին: Ես որպես երեկույթի նախագահ, վախենալով մի գուցե այլ կերպ վերավորեմ նորին թագավորական գոռոզությունը, առաջին խոսքը նրան տվեցի:

Ինքնագոհության ոգուց շատ էչերն են ապահովված, այս ճիշտ է, բայց կա մի բան, որ ամենուրեք և կյանքի բոլոր խավերում ատելի է: Դա ինքնապաշտման ցուցադրումն է: Ամենագեղեցիկ կինն անգամ հակակրելի է, երբ նրա երեսի վրա կարդում ես. «Տեսե՛ք, որքան գեղեցիկ եմ ես»:

Անուշտ ֆրանսիացին էլ զերծ չէ ինքնահավանության ախտից և գուցե ավելի է վարակված նրանով, քան մի ուրիշը, բայց գոնե արտաքուստ համեստ է: Նա իր ճակատի վրա ափիշ չի կրում: Փարիզի կաֆեներում դուք ամեն օր կհանդիպեք շատ համբավավոր բանաստեղծների, նկարիչների, արձանագործների և այլն, բայց երբեք չեք կարող նրանց արտաքինից ու կեցվածքից գիտենալ մարդն ինչ է, վաճառակա՞ն, թե՞ արվեստագետ, թե՞ գիտնական: Ֆրանսիացին որքան համբավավոր է, նույնքան անսեթևեթ է ու համեստ՝ գոնե արտաքուստ:

Կաֆե «Սուֆլե» հաճախ ճաշից հետո գալիս էր մի հեզահամբույր ծերունի, նստում էր մի անկյունում, խոսում էր բարեկամաբար իրան սպասարկող գարսոնի հետ, կարդում էր երեկոյան լրագրերը, խմում էր իր մի բաժակ սուրճը կամ գարեջուրը և տասը ժամին գնում էր:

Մի անգամ նա չեկավ, և մի քանի օր ես նրան չտեսա:

— Պիեր, — հարցրի ես ծերունուն սպասարկողին, — ո՞ւր է ձեր բարեկամ ծերունին, որ այլևս չի գալիս:

— Վախճանվեց, մի՞թե չգիտեք:

— Ինչպե՞ս կարող էի գիտնալ:

— Ա՛հ, — զարմացավ սպասավորը, — չգիտեինալ, թե ով էր նա, որին այնպիսի շքով թաղեցին անցյալ օրը:

Պարզվեց, որ ծերունին հոչակավոր բիմիկոս, ակադեմիկոս Բերթըլոն էր, որի թաղմանը ես էլ ներկա էի եղել Աբշակ Զոբանյանի և բժիշկ Ավետիք Բաբայանի հետ որպես պատգամավոր Փարիզի հայ գաղութի կողմից:

Անատոլ Ֆրանսը չտատանվեց կարդալ և իր հեղինակավոր հառաջաբանով շուկա բանալ Արմեն Օհանյանի La danseuse de Chemakha շնորհալի գրքի համար: Իսկ ո՞վ էր Արմեն Օհանյանը նրա համար, — Կովկասի խուլ անկյունից, Շամախուց եկած մի պարուհի:

Այո՛, ֆրանսիացի գիտնականը, գրողը, արվեստագետը համեստ է, թող այդ համեստությունը լինի արտաքին, բայդ դա կուլտուրա է, ուստի և համակրելի հատկություն: Բա՛լմոնտների մեծությունն իրանց մեծամտության մեջ է:

Միայն մի դեպքում իմ միտքը մի փոքր շփոթվեց ֆրանսիացու համեստության մասին: Հայտնի բանաստեղծ Փան Մորեասը ամեն անգամ «Կլոզըլրի դե Լիլա» էր մտնում արբայական ֆայլվածքով, գլուխը բարձր պահած, հազիվհազ պատասխանելով իր բարեկամների բարևներին: Կարծես, ուզում էր ասել, թե եկողն ինքն Ապոլլոնն է: Եվ, նստելով սեղանի գլուխը, ձեռը բարձրացնում ու արտասանում էր իր ոտանավորներից որևէ մեկն, ապա ինքնագոհ դեմքով հարցնում էր.

— Սքանչելի է, այնպես չէ՞:

Նա մեռավ, կարդացի կենսագրությունը, և այն ժամանակ գիտցա, որ Փան Մորեասը ֆրանսիացի չէ, այլ հույն, իսկական անունը — խնդրեմ արտասանեք, եթե կարող եք — Պապադիամանտոպուլլոս:

Բանի որ խոսքս մեծամտության մասին է, թող թույլ տրվի ինձ առաջ բերել մի փոքրիկ դիպված, որ բավական բնորոշ է:

Փարիզի շքեղ սրահներից մեկում մի մեծ բարեգործական երեկույթ էր: Գեղարվեստական բաժնին մասնակցելու համար հրավիրված էին «Կոմեդի Ֆրանսեզ»-ի և «Օդեոն»-ի առաջնակարգ արտիստները, նաև մի խումբ անվանի երգիչներ և երաժիշտներ: Չգիտեմ ով, իր կողմից հրավիրել է Օդեսայից եկած մի անհայտ ջութակահարուհի: Մինչ բեմի եռևում ֆրանսիացի արտիստները համբերությամբ սպասում էին իրանց հերթին, հանկարծ ներս վառեց Օդեսայի աստղը մի ճիպոտ պառավի հետ:

— Ովքե՞ր են այս երեկույթի կարգադրիչները, — գոռաց նա վրդովված:

— Ի՞նչ կհրամայեք, — հարցրի ես որպես մեկը երեկույթի կարգադրիչներից:

— Այդ ի՞նչ անկարգություն է, ինչո՞ւ ոչ ոք ինձ չդիմավորեց դռների մոտ:

— Ներողությո՛ւն, տիկի՛ն, դուք արդեն ուշացել եք ձեր հերթին, չգիտեինք երբ եք բարեհաճելու շնորհ բերել: Բացի դրանից, մենք ոչ ոքի դռների առջև չենք դիմավորել, ահա՛, տեսնում եք, այդ ականավոր արտիստներից ոչ մեկին:

— Այդ ինձ չի վերաբերվում, իմ պահանջն իմ մասին է:

— Ներեցե՛ք, չէինք նախատեսել, ասացեք, ինչպե՞ս ուղղենք մեր սխալը:

— Նախ և առաջ ուղեկցեք մորս սրահ և առաջին կարգում տեղ տվեք նրան:

— Պատրաստ եմ ծառայելու, — ասացի ես, ճիպոտ պառավի թևն առնելով: Ուրի՞շ:

— Վերցրե՛ք ջութակս և պահեցեք մինչև պահանջելս:

— Խնդրե՛մ:

— Մի մոռանաք, որ դա հասարակ գործիքներից չէ, և արժե երեսուն հազար ռուբլի:

— Այո՛, — արտասանեցի ես հեգնական զարմացումով,- երևի Ստրադեվարիուսի գործերից է:

Եվ շտապեցի ճիպոտս պառավիս բերբ տալ սրահ:

Առաջին տարին Փարիզում իմ կյանքը շատ անկանոն էր, ուզում եմ ասել, որ չունեի ոչ մի ծրագիր իմ օրերի և ժամերի օգտագործման վերաբերմամբ: Փոփոխական տրամադրությանս ստրուկն էի, անում էի այն, ինչ որ բռպեն էր թելադրում: Ավա՛ղ, այժմ էլ ես նույնն եմ:

Չէի գրում և գրելու ցանկություն էլ չէի զգում, իսկ լրագրական թղթակցությունն ինձ վաղուց էր զզվեցրել անօգուտ և տխմար աշխատանք էր, որից բարեբախտաբար շատ շուտ հրաժարվեցի:

Բայց կարդում էի և շատ էի կարդում, օրական 3-4 լրագիր և գրեթե բոլոր գրական ամսագրերն և կիսամսագրերը, չհաշվելով, իհարկե, առանձին լույս տեսած հետաքրքրական գրքերը: Կարդում էի ոչ այնքան տանը, որքան սրճարաններում:

Չգիտեմ ինչո՞ւ, մեզ մոտ Փարիզի սրճարանների մասին կազմվել է մի վատ գաղափար: Կարծվում է, թե նրանք ուրիշ ոչինչ են, եթե ոչ ծխայտության ու անառակության վայրեր: Այդպես չէ: Կափեն ֆրանսիացու երկրորդ ընտանեկան հարկն է և առաջին ժամադրավայրը: Այնտեղ են գլխավորապես իրարու հանդիպում բարեկամները, գործի մարդիկ և անգործ ռանտիեները, արվեստագետները, գիտնականները, պառլամենտի անդամները: Նույնիսկ ընտանիքների փոխադարձ ընդունելությունները հաճախ այնտեղ են լինում:

Շատ բանաստեղծներ ու գրողներ կափեներում են հորինում իրանց երկերը երաժշտության, կանանց բրիջների, սիբայիլ շուկների և սպասավորների աղմկալի իրարանցման ներդաշնակությամբ: Այնտեղ միշտ կա տաք անկյուն, հարմար բազմոց, գրիչ, թուղթ և մի բաժակ ըմպելիք, ո՛րը սիրում ես:

Ես սիրում էի աբսենտը. երկչոտների ահն ու սարսափը, Նիցշեի անուրջը, Վեռլենի տեսիլքը: Խմում էի սովորաբար իրիկնադեմին ճաշից առաջ, երբեմն էլ միջօրեին, երբ տանը չէի նախաճաշում: Խմում էի հաճախ երկու բաժակ, և տրամադրությունս բարձրանում էր, բարձրանում մինչև էյֆելյան աշտարակի գագաթը: Մեր լիրիկոսները կարող են ասել, «Այդ շատ էլ մեծ բարձրություն չէ»: Բայց, ի՜նչ արած, աստղերը շատ են հեռու ինձնից:

Այո՛, աբսենտը ըմպելիքների աստվածուհին է, թող նա լինի վնասակար մարմնի համար, բայց հոգու փրկությունն է կյանքի առօրյա հոգսերից ու տվայտանքներից: Ահա ինչու ես անկեղծորեն վշտացա, երբ վերջին այցելությամբս իմացա, որ այդ սքանչելի հեղուկի գործածությունն արգելված է ֆրանսիական պառլամենտի որոշմամբ: Բուրժուական կառավարության կեղծիքի և փարիսեցության մի ապացույցևս. աբսենտն արգելելով, թույլատրել է մի նոր «թույն», որ պակաս զորավոր չէ, բան առաջինը... Ոչինչ, ես դրանով էլ գոհ էի:

Իմ աննպատակ թափառումների ամենասիրելի վայրերը Փարիզի շրջակայքն էին: Բելվյու, Մեդոն, Սեվր, Սյուրեն, Սեն-Ժերմեն, Սեն-Կլու մի-մի գմայլելի անկյուններ են մեծ խաղաթի փոքրոկալի աղմուկից հոգնած ներվերի հանգստության համար:

Ես գերադասում էի Սեն-Կլուն: Գնում էի այնտեղ շաբաթը երկու-երեք անգամ և մեծ մասամբ մենակ: Գնում էի շոգենավով և շատ ինչ դեպքերում տրամվայով կամ երկաթուղով: Ինքնըստինքյան Սեն-Կլուն հետաքրքրական չէ, գավառական խաղաթի պես մի բան է 15000 բնակչությամբ, ոչ այնքան մաքուր և ոչ այնքան գեղեցիկ: Բայց նա ունի մի պարկ, որի հավասարը գեղեցկության տեսակետից հազիվ թե ունենա մի ուրիշ երկիր: Նա թեք տարածվում է մի

լայնատարած սարալանջի վրա: Այդտեղից տեսնում ես Փարիզի ամբողջ պանորաման իր հոյակապ կոթողներով, անթիվ պարտեզներով և Բուա դը Բուլոնի միջտ կանաչազարդ անտառներով: Մարմարյա սահնչելի արձաններով զարդարված բարե ընդարձակ սանդուղքներով բարձրանում ես վեր և մտնում ես դարավոր վիթխարի ծառերի աբխարհը: Այդտեղ անմիջապես ինձ գրավում են բազմաթիվ թռչունների երգեհոնը և ծաղկանոցների բուրմունքը: Ավելի ու ավելի վեր բարձրանալով, հասնում ես մի դալարազարդ բարուղի, ուսկից աստղածև տարածվում են մի շարք ծառուղիներ հեռու ու հեռու, մինչև անհայտություն, մինչև մթություն:

Նստելով մի բարե նստարանի վրա, դիտում էի զմայլելի պանորաման և տխրում էի, միջտ տխրում: Թե ինչու — չգիտեի և չէի կարողանում բացատրել, միևնույն ժամանակ չունեի ուժ բաժանվելու այդ տարօրինակ, այդ անհասկանալի, այդ դաժան տխրությունից: Զգում էի մխայն, որ ես ունենալու եմ ծանր վիշտ, մի մեծ դժբախտություն: Ապագայում, երբ այդ դժբախտությունը վրա հասավ, այն ժամանակ հասկացա, թե ինչ նախազգուշացման հետևանք էր իմ թախիծը... Երբեմն Սեն-Կլուից վերադառնում էի ոտքով, անտառների և դալարազարդ մարգագետինների մաքուր օդը ծծելով: Ճամփին մեկ-մեկ մտնում էի Սեվրի ճշտապահ պետական գործարանը, որ հոչակված է իր ֆարֆորյա անոթներով: Դիտում էի երբեմնաճաք բրուտների վարպետությունը: Նրանց ճարպիկ մատների տակ մի կտոր կավը մի րոպեում դառնում էր սահնչելի վազա կամ սափոր: Ա՛հ, հրաշալի վարպետներ, դուք ձեր հայրենիքի պարծանքներից մեկն եք և ամենայն իրավամբ:

Քաղաքի մեջ հաճախում էի գրական ու գիտական կոնֆերանսները, հաղաքական միտինգները: Մանր ժողովի ոչ մի ելույթը բաց չէի թողնում: Սոցիալիզմի մեծ խարոգիչը, բուրժուազիայի սարսափն իր փառքի գագաթնակետումն էի այդ ժամանակները: Եթե Կլեմանսոն վագր էր, ժողովը առյուծ էր և նրա ամեհի ախոյանը: Բրիանին ևս չէր արժանացնում իր արհամարհանքի բարձրությանը: Պառլամենտը սարսափում էր նրա որոտալի ձայնից, երբ զգում էր իր հանցանքը կամ սխալը: Երբ նա բարձրանում էր իր տեղից, ամենքն անխտիր, թե՛ աջակողմյան, թե՛ ձախակողմյան կուսակցություններն ու կենտրոնը, լարում էին իրանց ուշադրությունը, արդյոք ժամանակի Ցիցերոնն ի՞նչ նոր փոթորիկ է պատրաստել տիրող հասարակարգերի փտող ու բայբայվող հիմքերի դեմ:

Ժողովը միջահասակ էր, թիկնեղ, ամրակազմ, նա նման էր ավելի կալիֆորնյան երկրագործի կամ ռուս մուժիկի, քան պրոֆեսորի, քան գիտնականի, որի պատմական էրուդիցիան ապշեցնում էր ունկնդիրներին: Բայց որքա՜ն մեղմ ու բարեհամբույր էր այդ արտաքուստ անտաշ մարդու դեմքի արտահայտությունը, ո՛րքան գրավիչ էր նրա պայծառ աչքերի փայլը, որ մարդու բյուրեղյա հոգին էր արտացոլում: Եվ ոչ մի կոպիտ դարձված, անձնավորություններէն ուղղված ոչ մի վիրավորական խոսք չէր թռչում նրա բերանից նույնիսկ կատաղության րոպեներին: Նրա կռիվը միջտ գաղափարական էր, միջտ տիրող օրենքների անարդարության ու ապականության դեմ: Այդ տեսակետից նա իր գաղափարակից Լաֆարգի հակապատկերն էր: Այդ էր պատճառը, որ ամենակատաղի հակառակորդներն անգամ պատկառանքով ու հարգանքով էին վերաբերվում դեպի նա, նրա յուրաքանչյուր ճառը փիլիսոփայական մտածողության և անհաղթելի տրամաբանության արդյունք էր, նրա սահնչելի էլոգանսը միջտ հիմնված էր անողոք փաստերի վրա, և նրա ամեհի ձայնի յուրաքանչյուր շեշտը ուղղված էր որոշ նշանի դեմ և երբեք չէր վրիպում նպատակից, ինչպես Դիանայի նետը: Երբ նա զգացումների թափից բորբոքվում էր, խոսքերը ժայթքում էին Վեզուվի լավայի պես, նրա մռնչող ձայնի դիապազոնին հետևում էին ձեռների այնպիսի ուժգին շարժումներ, որ երբեմն շապկի թևերն օդն էին ցնդում, բայց երբեք չէր ընկնում ինքնամոռացության մեջ, ինչպես այդ պատահում է շատ հափշտակվող հռետորների հետ: Մի անգամ սոցիալիստների մի հաշկերույթում, ուր ես ևս ներկա էի իմ բարեկամ Վասիլի Դավիդովիչ Ղորղանյանի հետ, Ժորեսը բարձրացավ խոսելու, նրա մոտ նստած էր Ժյուլ Գեդը, նա դարձյալ ոգևորվեց, դարձյալ նրա հուժկու բազուկները սկսեցին ճոճել օդի մեջ, դարձյալ շապկի թևերը օդը ցնդեցին, բայց այս անգամ արկածով — նրա ձեռը դիպավ Գեդի գլխին, խեղճ գիտնականը ցավ զգաց և, ետ նայելով, ժպտաց բուն փիլիսոփայի մեղմիկ ժպտով, որ բարձր մոքի արտացոլումն է: Ժպտաց և Ժորեսը, և արկածը փարատվեց ֆրանսիացու հոմերական էրիիջով:

Տասնուհինգ տարի անցած, երբ ես երկրորդ անգամ դարձյալ երկար ժամանակով Փարիզ էի եկել, Ժորեսին սպանող սրիկան ազատ շրջում էր փողոցներում խայտառակության դրոշմը ճակատին: Եվ ֆրանսիական բուրժուազիան

անտարակուսորեն արդարացնում էր ռերազործին: Սակայն հիշում եմ նրա ահն ու սարսափն այն պատմական օրը, երբ հանճարեղ սոցիալիստի անյուրը Մոնմարտրի գերեզմանոցից տեղափոխում էին Պանթեոն: Դա մի չտեսնված թափոր էր, ոչ պակաս փառահեղ, բան Գամբետտայի, բան Վիկտոր Հյուգոյի թաղման հանդեսը: Քառասուն բանվորներ, հսկայական կատաֆալկը պառլամենտի շինությունից դուրս բերելով, Սեն-Ժերմեն բուլվարի ամբողջ երկարությամբ տանում էին իրանց ուսերի վրա: Դիակին հետևում էին տասնյակ հազարավոր կարմիր դրոշակներ, թե որքան մեծ էր թափորին մասնակցողների թիվը — դժվարանում եմ ասել, բավական է նկատել, որ երբ դիակն արդեն հասել էր Պանթեոն և թաղման արարողությունը վերջանալու վրա էր, ամբոխի վերջին ծայրը դեռ պառլամենտի մոտ էր, այսինքն՝ առնվազն 3 կիլոմետր հեռավորության վրա:

Այդ օրը բուրժուազիան փախել էր Բաղաքից, ինչպես այդ լինում է ամեն անգամ, երբ նա սարսափում է ամբոխի ելույթից: Սեն-ժերմեն արիստոկրատիկ բուլվարի բոլոր բնակարանների լուսամուտները փակ էին: Ամբողջ ոստիկանությունը հեծելազորի հետ ոտի վրա էր: Իմ աչքերի առջև մի բանի բուրժուական բնակարաններ բարկոծվեցին մի խումբ ոստիկանների հետ: Մի բանի հարյուր բանվորներ ձերբակալվեցին:

Մյուս օրը բուրժուական լրագրները հեգնանքով գրեցին, թե թափորը բաղկացած էր 20-25 հազար մասնակցողներից, մինչդեռ առնվազը բսան անգամ ավելի էր:

IX

ՍՈՄԻԿՈՆ

Ֆրանսիացիները ունեն երկու ավանդական տոներ, որոնք վայելում են ոչ պակաս ժողովրդականություն, բան հուլիսի 14-ը, մեծ հեղափոխության տոնը:

Մեկն այդ տոներից կոչվում է Mardi gras, որ բարեկենդանյան կառնավալի վերջին օրն է, այն է՝ մեծ պասի առաջին երեքշաբթին, մյուսը կոչվում է Mi-careme և տոնվում է նույն պասի երրորդ շաբաթվա հինգշաբթի օրը:

Այդ օրը Փարիզի ազգաբնակությունը վաղ առավոտից սկսած մինչև երեկո զվարճանում է փողոցներում: Բարձր բուրժուազիան չի մասնակցում: Շատերը նույնիսկ հեռանում են Բաղաքից, ինչպես և հուլիսի 14-ի օրը: Առհասարակ բուրժուազիան ժողովրդական ցույցերից վախենում է այն պարզ պատճառով, որ նա բնազդաբար զգում է, թե ինքը խորապես ատված է ժողովրդից: Երբ մի որևէ հաստափոր և հաստապարանոց պարոն ասում է՝ «Ես արահամարհում եմ ամբոխը», անտարակույս ստում է: Նա Բաջություն չունի ասելու «վախենում եմ»: Եթե նա հավատացած լինի, որ ամբոխին երևալով — կարժանանա նրա համակրանքին, ուրախությամբ կընդունե նրա ծափերը ու կպարծենա անգամ նրանցով: Բայց նա շատ լավ գիտե, թե բանի-բանի կռուվներ պիտի սպառնան իրեն և բանի-բանի անոթի բերաններ պիտի անիծեն, եթե համարձակվի ցույց տալ ժողովրդի արյուն-Բրտինքով հղփացած իր կերպարանքը:

Mi-careme-ի օրը Սոմիկոն առավոտյան եկավ ինձ մոտ և խնդրեց, որ այդ օրը միասին անցկացնենք: Ես բավական ժամանակ էր նրան չէի հանդիպել մեր այցելած սրճարաններում, կարծում էի, Փարիզից հեռացել է:

— Որտե՞ղ էիր, — հետաքրքրվեցի ես:

— Գործ ունեի, հետո կպատմեմ, — պատասխանեց նա մի տեսակ խորհրդավորությամբ, որ ցույց էր տալիս, թե արտաքո կարգի մի բան է պատահել:

— Կառնավալին այստե՞ղ էիր:

— Այո:

— Տեսա:

— Տեսա՞ք:

— Ո՞նց էր:

— Չհավանեցի, դատարկ բան է: Քո ֆրանսիացիները տուտուց են: Մի մեծ եզ չաղացրել են դրել են ծաղիկներով զարդարված սայլի վրա ու փողոցներում պտտեցնում են խաչ ու խաչվառի պես: Մի բանի ուրիշ սայլեր էլ մասխարաներով լիք ետևից գնում են հարայ-հրոցներով, թե տեսեք-տեսեք, բեֆ ենք անում: Ախսո՞ս չէր մեր Թիֆլիսի դեյնոբան, որ այդ շան որդի Գալիցիևը արգելեց:

— Սոմիկո, այսօրվա տոնն էլ համարյա թե միևնույնն է, չարժե տեսնել:

— Ո՞նց թե նույնն է, — բարկացավ Սոմիկոն, — հապա աղջիկները:

— Ի՞նչ աղջիկներ:

— Ուրեմն դու չգիտե՞ս: Ասում են, այսօրվա համար Բաղաֆի այն մեծ բազարը, որ տեսանիք, մի շատ սիրուն աղջիկ պիտի ցույց տա: Ասում են այդ աղջիկը Փարիզի առաջին գեղեցկուհին է և պիտի թագուհու պատիվների արժանանա:

— Գիտեմ, Սոմիկո, կարդացել եմ լրագրներում: Թագուհու հետ միասին ընտրված են և մի խումբ շատ սիրուն աղջիկներ, որ պիտի ուղեկցեն նրան: Թագուհին իր շքախմբով և մեծ թափորով պիտի գնա հանրապետության նախագահի մոտ, արժանանա նրա համբույրին, պիտի նվեր ստանա և հետո երջի Բաղաֆի գլխավոր բուլվարներում:

— Դե որ գիտեք, էլ ինչո՞ւ եք տանը նստել:

— Բայց ի՞նչն է ձեզ հետաքրքրում: Թափո՞րը:

— Տո՛, ես թափոր-մափոր հնարողի հերն եմ անիծել, ինչիս է պետք: Ինձ հետաքրքրողն այդ թագուհին է և նրա ընկեր աղջիկները: Մի տեսնեիք, ինչ արմաղան բաներ են, որ այդհան գովում են:

Ես սիրում էի Սոմիկոյի ընկերությունը: Իհարկե, ոչ միշտ, այլ այն ժամանակ, երբ զգում էի գլուխս չհոգնեցնող մեկի ընկերության պահանջը: Այդպիսի մեկն էր Սոմիկոն: Հաճելի էր ինձ համար նրա խառնվածքի անմիջականությունը: Մարդն իր խելքով կյանքի բոլոր խնդիրները մի անգամ առմիշտ լուծել էր և այլևս իր գլուխը չէր հոգնեցնում և, որ ամենագլխավորն է, ոչ ոքի էլ չէր ձանձրացնում իր մտքի գործողությամբ: Երբեք նա ինձ չէր հոգնեցնում իր հարցերով և ոչ էլ հետաքրքրվում էր իմ կարծիքով այս կամ այն բանի մասին: Նա ուներ իր սեփական բարոյական ու մտավոր չափանիշը, որի արդարության և ճշգրտության վերաբերմամբ ոչ մի կասկած չուներ: Երբ խոսում էր, կարծես, ամենևին չէր հոգում, արդյոք լսողը ուշադի՞ր է, թե ոչ դեպի իր ասածները, և ես նրա ընկերության մեջ զգում էի միանգամայն ազատ: Կարող էի մնալ ամփոփված իմ մտքերի մեջ, առանց եղվելու նրա ներկայությունից: Երբեմն նույնիսկ չէի զգում նրա ներկայությունը: Ես մտածում էի, թե եթե մի մարդ իր գոյությամբ չի ձանձրացնում մյուսներին, ինքնըստինքյան չի կարող վատ համարվել: Մեզնից յուրաքանչյուրն ունե կյանքի վերաբերմամբ իր աշխարհայացքը, իր պահանջները, իր ճաշակը, ապրում է իր ստեղծած կամ հորինված հոգեկան աշխարհում, և, եթե մենք մեկզմեկու չխանգարենք մեր անկոչ միջամտությամբ, դրանով արդեն մասամբ կատարած կլինենք մեր մարդկային տարրական պարտականությունը:

Իհարկե, Սոմիկոն այնքան հիմար կամ թերևամիտ չէր, որ չհետաքրքրվեր իր տեսածներով: Բայց նրա մտածողության ալֆան և օմեգան կինն էր կամ, ավելի ճիշտն ասած, կնոջ մարմինը: Նրա փիլիսոփայությամբ՝ կյանքի մեջ չկար ավելի բարձր հանույք, քան կնոջ մարմնի տիրանալը: Այո՛, միայն և միմիայն մարմնին: Նա չէր հավատում, թե որևէ այր մարդ, եթե նա կատարյալ ապուշ չէ, կարող է բավարարվել կնոջ պղատոնական սիրով կամ անմարմին բարեկամությամբ:

— Ինչի՞ս է պետք, — ասում էր նա,- կնոջ հոգին կամ սիրտը, նրա խելքը կամ բարոյականությունը, եթե նրա մարմինն իմը չէ:

Միևչև Փարիզ գալը Սոմիկոն ճամփորդել էր Իտալիայում: Նրա հիշողության մեջ ամենից խորը տպավորվել էր Պոմպեյն իր բաղնիքների էրոտիկ ֆրեսկներով ու պատերի նկարներով: Այդ մասին նախսում էր առանձին ոգևորությամբ և հեղինակավոր գնահատողի լրջությամբ:

— Անցյալի մարդիկ ավելի լավ են վայելել կյանքի բաղցրությունը, բան մենք, — ասում էր նա փիլիսոփայական եղանակով, — հասկացել են, որ ամեն ինչ, գիտություն, փիլիսոփայություն, օրենքներ և արվեստներ, էլ չգիտեմ ինչ, չարժեն մի գեղեցիկ կնոջ համբույրին:

Ես, իհարկե, չէի հակաճառում նրան այդ մասին և եթե հակաճառեի էլ, ոչ մի կերպ չէի կարող դուրս բերել նրա գլխի մեջ ցցված բևեռը: Առհասարակ Սոմիկոն անուղղելիի մեկն էր: Հայ բուրժուազիայի միջին հավաբական տիպարն էր և միայն այդ տեսակետից հետաքրքրական և ուսանելի: Նա իր անհոդդոդդ համոզմունքով գտել էր կյանքի կվինտ-էսենցիան և վայելում էր:

Երբ մենք փողոց ելանք, օրվա տռնական երթն արդեն սկսվել էր: Գլխավոր բուլվարները, որոնցով պիտի «թագուհին» անցներ, վխտում էին բազմությամբ: Անցուդարձը դժվարացել էր, մենք հազիվ կարողանում էինք առաջ շարժվել: Մայթերն ու սալահատակներն արդեն ծածկվել էին գույնզգույն կոնֆետիների թանձր շերտերով: Սոմիկոն շտապեց իր կոնֆետիների առաջին տոպրակը դատարկել մի հաստամարմին կնոջ փարթամ կրծքի վրա: Դժբախտաբար, կինը տրամադիր չէր սովորական խաղը սիրալիր ընդունելու: Նա բարկացավ և հայհոյեց բարեկամիս, գոռալով «խոզ, ուղտ»: Անհուշտ փարիզուհի չէր: Սոմիկոն, չվիրավորվեց և, նոր տոպրակներ գնելով, սկսեց կոնֆետին սփռել աջ ու ձախ, իհարկե, բացառապես կանանց վրա: Նա շատ ուրախացավ, երբ տեսավ, որ այդ անհայտ աղջիկները ոչ միայն չեն բողոքում, այլև հաճույքով են ընդունում նրա կատակը: Ընդհանուր ծիծաղներին ու բրիջներին նա պատասխանում էր օդային համբույրներով և երինջի պես հրճվում էր, երբ կանայք իր սիրային ցույցերն ընդունում էին անուշ ժպիտներով կամ փոխադարձ օդային համբույրներով: Ես հավատացած էի, որ այդ պահին նա իրան զգում էր աշխարհի ամենաերջանիկ մարդը: Նա ուրախությունից բարձրածայն բրիջում էր, ինչպես ճժույգը մատակների մեջ: Շուտով նա իր վրա դարձրեց ամբոխի ուշադրությունն իր արտասովոր զվարթությամբ: Նրա երջանկությունը հասավ իր գագաթնակետին, երբ մի խումբ աղջիկներ, շրջապատելով նրան, խնդրեցին իրանց համար կոնֆետիներ գնել: Նա միանգամից գնեց մի տասնյակ տոպրակներ և բաժանեց: Անմիջապես աղջիկները հարձակվեցին նրա վրա ճանճերի պես, և նա մի րոպեում չքացավ իմ աչքից գույնզգույն թղթիկների հեղեղի մեջ: Նրա ցիլինդրը գլխից ընկել էր և պիտի տրորվեր ոտների տակ, եթե ես ժամանակին չկարողանայի այն վերցնել: Վերջապես, իմ օգնությամբ նա մի կերպ ազատվեց չարաճճիների ձեռքից որոնք, նրան բաց թողնելով, փախան և խառնվեցին ամբոխին:

— Վա՜հ, ինչ մնաց, որ խեղդեիր ինձ տո՛,-ասաց նա հևալով, — բայց մի երկուսին լավ պաչեցի:

Նա ձեռը տարավ ծոցի գրպանը, որ թաշկինակը դուրս բերի երեսի էրտինքը սրբելու համար և հանկարծ գոչեց.

— Վա՜, ի նչ եղավ, տո՛:

— Ի՞նչ պատահեց:

— Պորտմանես:

— Գողացա՞ն:

— Չկա, տո՛, թոցրին, — պատասխանեց նա, բոլոր գրպանները տնտղելուց հետո:

Նրա տրամադրությունն ավրվեց.

— Շուն-շան աղջիկներ, — արտասանեց նա, մի բանի ավելի գունավոր հիշողներ ևս ավելացնելով.

Շուտով նա սկսեց իմիճ իրան մխիթարել: Պորտմանի մեջ մեծ գումար չի եղել, ընդամենը 150 ֆրանկ:

— Լավ է, որ երեկ բանկից չվերցրի պերեվոդս, — ասաց նա ժպտալով, — ոչինչ, մոտս էլի մի բանի ոսկի կա, մինչև էգուց հերիք է:

— Իսկ ծխախոտի տո՞ւփդ, — հարցրի ես, զարմանալով, որ այդ մասին չմտածեց:

Նա մի փոքր շփոթվեց և կմկմալով պատասխանեց.

— Տո՞ւփս, հա՛, տուփս հյուրանոցումն եմ թողել... Ոչինչ, ոչինչ, Այդ ո՞ւր մնացին ֆռ գեղեցկուհիները, տո՛, — շտապեց ավելացնել նա, կարծես խուսափելով իմ հարցին պատասխանելուց:

Ես զգացի, որ նա ստում է:

Հեռվից երևաց թագուհու ամբիոնը: Օրվա հերոսուհին իր բարձրությունից աջ ու ձախ ծաղիկներ էր սփռում ամբոխի վրա, հաղթական ժպիտն երեսին, որպես երջանկագույնը բոլոր կանանցից: Զնայելով եղանակի բավական զգալի ցրտությանը, նա բարվոք էր համարել մրսել, բան բաղաքի կողմից ստացած իր մետաքսյա բաց վարդագույն ռոբածև զգեստը թաքցնել վերարկուի տակ: Հազարավորների միջից ընտրվածը տասնութ տարեկան մի աղջիկ էր բանվոր դասակարգից: Միջին ֆրանսուհու կատարելատիպն էր իր կազմվածքի նրբությամբ և դիմագծերի գեղեցկությամբ: Թեթև մետաքսյա թասակի տակիցնրա բաց շագանակագույն գանգուր մազերը, սփռվելով շուշանի նման ճերմակ ուսերի վրա, հազիվհազ սեղմում էին նրա բաց կուրծքը: Հոգեկան հաճույքից նրա այտերը կարմրել էին, և երկնագույն աչքերը պսպղում էին ադամանդների պես: Պակաս գեղեցկուհիներ չէին նրա ընկերուհիները: Նրանք թվով վեց էին և նույնպես ծաղիկներ էին ձգում ամբոխի վրա, փոխարենն աջից ու ձախից հետվող փնջիկները որսալով:

Ամբոխը ծափահարում էր «թագուհուն» առանց ջերմ ոգևորության, կարծես, բաղաքավարության մի պարտք կատարելու համար: Երիտասարդները տալիս էին իրանց գնահատականը երբեմն սրամիտ, հաճախ բանալ համեմատություններով: Ոմանք պարսավում էին ժյուրիի ճաշակը, մյուսները ընդհակառակը գովաբանում էին: Ծերունիները, մանավանդ պառավ կանայք, դժգոհ էին և պնդում էին, թե փարիզուհին կորցրել է իր առաջվա գեղեցկությունն ու նրբությունը և հիացմամբ էին հիշում անցյալի «թագուհիներին»: Նրանց ասելով, նույնիսկ ամբողջ տոնակատարությունը չունի իր վաղեմի շուքն ու հանդիսավորությունը:

— Այդպե՞ս էր միթե կայսրության ժամանակը, — ասում էր բովս կանգնած ութսուն տարեկան մի ծերունի, — ո՛չ, տիկիններ և պարոններ, մի վիճեք, հանրապետությունն ամեն ինչ աղավաղեց ու փչացրեց: Ֆրանսիան կործանվում է:

Սոմիկոն մի բանի վայրկյան հեղհեղակավոր հայացքով դիտեց գեղեցկուհիներին և, հառաչելով, ասաց.

— Է՛հ, ի՛նչ ասեմ, երանի այն տղամարդկանց, որ պիտի վայելեն այդ աղջիկներին: Թող մենք էլ գոնե ծաղիկներով զովացնենք մեր այրող սրտերը:

Ասաց և, անմիջապես գնելով մի խուրձ ծաղիկներ, վազեց դեպի թափորը: Զնայելով ոստիկանների արգելքին, նա կարողացավ մոտենալ «թագուհու» ամբիոնին և, ցիլինդրը վերցնելով, ծաղիկները ձեռքից ձեռք տվեց «թագուհուն»:

— Լսեցի՞ր, — ասաց նա անսահման հիմնագոհությամբ, — «մերսի», ասաց, «մե՛րսի»: Հիմա կարող եմ ասել, որ Փարիզում էլ բան չմնաց, որ չտեսնեի:

Շուտով ամբոխը մեզ հոգնեցրեց: Անոթի էինք: Մտանք Դյուվալի ճաշարանը:

— Դե՛հ — դարձա ես Սոմիկոյին, — Հիմա պատմեցեք, թե որտեղ էիք կորել, որ երկու շաբաթ չէիք երևում:

— Է՛հ, եղբայր, մի հարցնեմ, գլուխս փոթածոմի մեջ եմ գցել:

— Ի՞նչ է պատահել:

— Սիրահարվել եմ, — պատասխանեց Սոմիկոն անսովոր լրջությամբ:

— Դո՞ւմ, — գոչեցի ես, ծիծաղելով:

— Այո՛, ես ինձս, ինչո՞ւ եմ ծիծաղում, ես մա՞րդ չեմ:

— Բայց չէ որ դում սեր ասված բանը չեմ ընդունում և ծաղրում եմ այդ մասին խոսողներին:

— Հենց ցավն էլ այդ է, որ առաջ ծաղրում էի, իսկ հիմա չեմ կարող ծաղրել:

— Պատմեցեմ, տեսնենք:

— Պատմելու բան չկա: Պատահել եմ մի խելոք, կրթված, ինտելիգենտ կնոջ, ծանոթացել եմ ու խելքս կորցրել, պրծավ գնաց:

— Ֆրանսո՞ւհի է այդ կինը:

— Դեն կորցրեմ ձեր ֆրանսուհիներին, ասված սիրեմ, ես նրանցից կշտացա:

— Հապա ո՞վ է, ի՞նչ ազգից է:

— Լեհուհի է: Միլիոնատերի աղջիկ է: Հայրը Վարշավայում մանուֆակտուրայի մեծ ֆաբրիկա ունի:

— Օրիո՞րդ է:

— Ոչ:

— Ամուսի՞նը:

— Գվարդեյսկի օֆիցեր է:

— Այստե՞ղ է:

— Ոչ, դեռ չի եկել, շուտով գալու է:

— Լա՛վ, դուք ամուսնացած, նա ամուսնացած, այդ ո՞նց կլինի:

— Ես գիտե՞մ, որ ասեմ:

— Թե դուք սիրահարվել եք, այդ երևում է, բայց նա՞ էլ սիրում է ձեզ:

— Տո՛, ի՞նչ էիր ասում, ես տուտո՞ւց եմ, որ ինձս սիրեմ առանց սիրվելու:

— Հիմա այդ կինը ո՞րտեղ է:

— Գնացել է Նիցցա: Ե՛ս տարա նրան: Ինքը խնդրեց ուղեկցել, ես էլ գնացի հետը:

— Հապա դուք ինչո՞ւ վերադարձել եք, իսկ նա մնացել է այնտեղ:

— Որովհետև այդպես վճռեցինք անել, երկու շաբաթ միասին մնալուց հետո: Մարդուց հեռագիր ստացավ, որ արդեն ճանապարհ է ընկել Պետերբուրգից, անհարմար էր, որ ես մնայի Նիցցայում:

— Ձեր ծախո՞վ տարաք նրան Նիցցա:

— Այո՛: Ինքը չէր ուզում, որ փող ծախսեմ, ես խնդրեցի, աղաչեցի, մի կերպ համաձայնվեց:

— Սոմիկո, ճշմարիտն ասեք, այդ կինը ձեզնից փող վերցրե՞լ է ձեռապարտ:

— Տո՛, ի՞նչ եք ասում, ինչ ձեռապարտ, ասում եմ ձեզ միլիոնատերի աղջիկ է, Վարշավայում երկու մեծ տներ ունի, որ իբրև օժիտ հորից է ստացել: Միայն ամուսնու ուշաձալու պատճառով փողը մի ինչ պակասել էր: Ես ինքս համոզեցի, որ գոնե մի հինգ հարյուր ֆրանկ վերցնի ինչպես պարտք:

— Եվ վերցրե՞ց:

— Ո՛չ: Բարկացավ, վիրավորվեց: Բայց ես թախուն դրեցի նրա բարձի տակ և դուրս եկա: Հիմա խիղճս ինձ տանջում է, որ մի հազարանոց չդրեցի: Բայց վաղն էլի մի հինգ հարյուր կամ հազար ֆրանկ պիտի փոխադրեմ հեռագրով:

— Սոմիկո, մի՛ փոխադրեք, բավական է որքան տվել եք:

— Ինչո՞ւ:

— Հենց այնպես, ով գիտե ինչ է, ով է այդ կինը:

— Տո՛, ինչ թերահավատ մարդ եք, — բարկացավ Սոմիկոն — ահա՛ թե ով է, ինչ է…

Այս ասելով նա ծոցի գրպանից դուրս բերեց մի շբեղ այցետոմս ոսկեզօծ կողերով և տվեց ինձ:

«Բարոնեսսա Իրինա Սիգիզմունդովնա Ռեբլենս, ծնյալ Սենչուկովսկայա», — կարդացի ես և այցետոմսը վերադարձրի Սոմիկոյին:

— Հիմա հասկացաք ո՞վ է, բարոնեսսա, — ասաց նա հպարտությամբ: — Ես մի չտես մարդ չեմ, որ հափշտակվեմ առաջին պատահած կնոջով… Բա-րո-նես-սա, հանաք բան չի հասկացեք… Բարոնեսսա…

— Քանի՞ տարեկան է այդ բարոնեսսան:

— Քսանուր:

— Գեղեցի՞կ է:

— Անտիկա է:

— Լուսանկարն ունե՞ք:

— Դեռ ոչ: Խոստացել է հատկապես ինձ համար նկարվել և փոստով ուղարկել ծխախոտի տուփի հետ միասին:

— Ոնց թե ծխախոտի տուփիդ հետ, — զարմացա ես, — չէ որ դուք ասացիք, թե տուփը հյուրանոցումն եք թողել:

— Հա, դե խոսք էր, ասացի էլի՛… բայց թողել եմ բարոնեսսայի մոտ:

— Ինչո՞ւ:

— Ինքը խնդրեց: Ուզում է իր ամուսնը բոխլիանտով մակագրել նրա վրեն, ինչպես հիշատակ, էլի՛: Հը՛, ինչո՞ւ եք ծիծաղում…

— Ոչինչ, Սոմիկո, ոչինչ, ծիծաղս ձեզ չի վերաբերում, — պատասխանեցի ես, չկամենալով իմ կասկածները շատ էլ պարզել: — Թույլ տվեք խմել ձեր սիրահարության կենացը:

Սոմիկոն ոչ այնքան պարզամիտ էր, որքան դյուրահավատ, չնայելով իր խառնաուճուխինգ տարեկան հասակին: Զարմանալի էր, որ նրա վաճառական հայրը, թողնելով նրա համար բավական խոշոր հարստություն, մոռացել էր ավանդել նրան գեթ մի մասը իր գլխավոր հատկություններից — խորամանկությունից և ժլատությունից: Եվ, շնորհիվ այդ թերության, նրա որդին սպառնում էր կարճ ժամանակում վատնել խառաուն տարվա խաբեբայությամբ և խեղճերի ու ապիկարների արյուն-քրտինքով վաստակած հայրական ժառանգությունը: Այսպես էր հայ բուրժուազիայի նոր սերունդը:

Մի քանի օրից հետո Սոմիկոն նորեն անհետացավ: Ես երկար ժամանակ չէի հանդիպում և արդեն գրեթե մոռացել էի նրան, երբ մի գարնանային առավոտ տեսա Բուա դը Բուլոն ավենյուում: Նա հեռվից գալիս էր դեմուդեմ գլուխը կրծքին թեքած և, կարծես, անուշադիր դեպի շուրջը: Երբ, գլուխը բարձրացնելով, ինձ նկատեց, թվաց ինձ, որ մի տեսակ շփոթվեց: Նա փորձեց մի կերպ խուսափել հանդիպումից և շեղվեց իր ճանապարհից: Բայց ես մոտեցա նրան առանց նեղվելու: Նա իմ բարևն ընդունեց ոչ այնքան սառնությամբ, որքան այլայլվելով:

Մի քանի րոպե մենք ընթանում էինք իրար-իրար լուռ: Որքան ես հետաքրքրված լինեի գիտենալու, թե որտեղ է եղել և ինչ է արել իր մի ամսվա բացակայության ընթացքում, չկամեցա այդ մասին խոսք բանալ, լավ զգալով, որ վերջ ի վերջո նա ինքն է խոսելու: Այդպես էլ եղավ:

— Բիարրիցումն էի, — ասաց նա էթի տակ:

— Ինչո՞ւ էիք գնացել:

— Հենց այնպես, ճեփս տվեց՝ գնացի, — պատասխանեց նա մի եղանակով, որ թույլ չէր տալիս խոսակցությունը շարունակելու:

Վերջապես, նա ինքը ձանձրացավ լռությունից և ամեն ինչ պատմեց իր քնավորությանը հատուկ պարզությամբ: Հայտնվեց, որ բարոնեսսա կոչվածն ուրիշ ոչ ոք է եղել, եթե ոչ մեկն այն կոսմոպոլիտ ավանտյուրիստներից, որոնք տարեկան տասներկու ամիս թափառում են Եվրոպայում, անցնելով երկրից երկիր, հաղթից հաղթ, ամեն տեղ երևալով մի նոր անունով և նոր տիտղոսով: Նրանք գիտեն բոլոր եվրոպական լեզուները, լավ թե վատ խոսում են ազատ, և ոչ ոք չգիտե, թե իրո՞ք ինչ ազգից և որ երկրի ծնունդ են: Այդպիսի մեկն էր բարոնեսսան, լսելով Սոմիկոյի պատմածները, բայց ինքը Սոմիկոն համառում էր մնալ իր նախկին համոզման մեջ, այն է, թե բարոնեսսան իրապես բարոնեսսա է ու մեծահարուստ ֆաբրիկանտի դուստր:

— Իսկ փողե՞րը, — հարցրի ես, — ետ ստացա՞ք:

— Ո՛չ:

— Ծխախոտի տո՞ւփը:

— Մի՛ հարցնեք:

— Այնուամենայնիվ:

— Հազար ֆրանկը փոխադրելուց մի քանի օր հետո սիրտս կարոտեց, վճռեցի գնալ Նիցցա: Մոռծեցի, նրա մարդու հերն եմ անիծել, թող այնտեղ լինի, չեմ վախենում, պիտի անպատճառ տեսնեմ իմ սիրածին: Այո՛, այո՛, իմ սիրածին, զուր եք ծիծաղում: Գնացի և տեսա: Երբ նա ինձ ընդունեց հյուրանոցի սալոնում, մոտը նստած էր լպստած երեսով մի մարդ: Կարծեցի ամուսինն է: Նա ներկայացրեց ինձ այդ մարդուն, ասելով, թե իր եղբայրն է: Նա ասաց, թե ամուսինը Փարիզումն է մնացել մի շաբաթով և թե շուտով գալու է, հետո եղբայրը դուրս գնաց, և նա ինձնից ներողություն խնդրեց, որ իր պարոնն ուշացնում է:

— Դուք, իհարկե, ասացիք «ոչինչ» և նորից փող տվեցիք:

— Իսկ դուք ո՞րտեղից գիտեք այդ:

— Ենթադրում եմ: Ինչ֊ո՞ւ տվեցիք:

— Մոտս երեք հազար ֆրանկ կար, կեսը տվեցի նրան:

— Կեցցե՛ք, — ասացի ես ծիծաղելով: — Հետո՞:

— Հետո ներողություն խնդրեց, որ եղբոր գալու պատճառով այն օրը չի կարող ինձ հետ ազատ ժամանակ անցկացնել և խնդրեց, որ մյուսը օրը միասին նախաճաշենք և ամբողջ օրը զբոսնենք:

— Մյուս օրը, իհարկե, գնացիք:

— Երանի ոտս կոտրվեր, չգնայի — բարկացավ Սոմիկոն, պատառոտաղն ուժգին զարկելով ափսեին:

— Ձկար, հե՞:

— Ձկար տո՛, կորել էր:

— Ո՞րտեղ:

— Սատանան էլ չգիտեր որտեղ:

— Հասցեն չէ՞ր թողել հյուրանոցում:

— Չէր թողել: Հյուրանոցի վարիչին ու դռնապանին հարցուփորձ արի, ոչինչ, չգիտեին, միայն ենթադրեցին, որ գնացել է Բիարրից, որովհետև բազաժը երկու օր առաջ այնտեղ էր ուղարկել: Ես առանց երկար մտածելու անմիջապես գնացի Բիարրից:

— Հետո՞:

— Հինգ-վեց օր պտտեցի բոլոր հյուրանոցները, բոլոր պանսիոնները, ոչ բարոնեսսա կար և ոչ նրա եղբայրը:

— Այսինքն սիրականը և ավանտյուրայի ընկերը:

— Թող ձեր ասածը լինի, չեմ վիճում:

— Բայց դուք էլի չասացիք, ի՞նչ եղավ ոսկե տուփդ իր թանկագին ադամանդներով:

— Մորս նվերն իմ պսակադրության օրը, — արտասանեց Սոմիկոն, կրծքի խորքից արձակելով մի խորը հառաչանք:

— Տարա՞վ:

— Տարավ անիրավը, տարավ և լավ տարավ: Տալուս օրն աստված խելքս խլել էր ինձնից ու հիմարացրել:

— Միայն ա՞յդ օրը, Սոմիկո, միայն ա՞յդ օրը, — ասացի ես ոչ առանց կծու հեգնանքի:

— Այդ բոլորը ոչինչ, փողերս էլ, տուփս էլ, խելքս էլ, ինձ միայն մի բան է կատաղեցնում:

— Ի՞նչը:

— Այն, որ մինչև այդ բարոնեսսային հանդիպելս կին ասած բանը ինձ համար ուրիշ ոչինչ էր, եթե ոչ փողով գնելու մի ապրանք, այսօր լավը, վաղը վատը: Եվ հանկարծ մի օր խելքիս փչեց բացի մարմնից կնոջ մեջ փնտրել սիրտ, հոգի, խելք: Թյո՛ւ ֆռ տղամարդությանը, Սոմիկո, թյո՛ւ…

— Բայց ոչինչ, — հարեց նա մի բանի վայրկյան անցած, — թող դա լինի իմ առաջին և վերջին դասը, այսուհետև ինքը Եվան էլ չի կարող ինձ խաբել:

Մենք բաժանվեցինք իրարուց: Հետևյալ օրն իսկ նրան տեսա բոլորովին մոռացած իր բարոնեսսայիի և առաջվա պես ուրախ ու կենսախինդ: Միայն ասաց, թե կարոտել է իր ընտանիքին և փափագում է Կովկաս գնալ:

— Կգնամ երկու ամսով, կարոտս կառնեմ, ետևանն էլի կգամ, — ավելացրեց նա:

Նա չէր գուշակում, որ Փարիզը նրա համար պահած ուներ մի նոր արկած: Մեկն այն ինքնըստինքյան անհետ փորձանքներից, որոնք սակայն Սոմիկոյի տիպի մարդկանց կյանքում որոշ դարագլուխ են կազմում:

Վաղ առավոտ էր, երբ մի որ նրանից ստացա մի օդային նամակ: Նա գրում էր, թե, տկար լինելով, ինքը չի կարող ինձ մոտ գալ և խնդրում էր այցելել իրան մի «կարևոր գործի» համար: Ես շտապեցի գնալ: Նա պառկած էր անկողնում ճակատը թաշկինակով կապած և երեսը նկատվելու չափ ուռած ու տեղ-տեղ կապտած:

— Նստեցեք, եղբայր, նստեցեք ու լսեցեք: Բարեկամս եք, միայն ձեզ կարող եմ գլխիս եկած փորձանքը պատմել:

— Փորձա՞նք, — կրկնեցի ես զարմացած:

— Փորձանք, բա ինչ, չե՞ք տեսնում սիփաթս...

Եվ նա պատմեց: Նախընթաց օրը նա մեծ բուլվարներից մեկի վրա, մի փոքրիկ սրճարանում տեսնում է մի շատ «համեստ ու համակրելի դեմքով» կին և իսկույն ծանոթանում է հետը, հրավիրում է ճաշի: Կինն ընդունում է նրա հրավերը մի փիչ դժվարությամբ, ասելով, թե ամուսին ունի և չի կարող իրան շատ էլ ազատ պահել: Ճաշից հետո Սոմիկոն նրան տանում է ցիրկ և կեսգիշերին հրավիրում է իր նոմերը:

Կինը չի համաձայնվում գնալ երդվելով, թե իր կյանքում հյուրանոցի երես չի տեսել, թե ինքը բնակարան ունի, եթե պարոնը շատ է փափագում գիշերը նրա հետ անցկացնել, կարող են այնտեղ գնալ:

— Իսկ ամուսի՞նդ, — հարցնում եմ ես, — շարունակեց Սոմիկոն: — «Ամուսինս, ասում է, հինգ օրով գործով գնացել է Դիժոն»: Ես, իհարկե, ուրախությամբ ընդունում եմ նրա հրավերը: Գնում ենք: Իսկ որ՝ երեք սենյակից բաղկացած մի օրինավոր բնակարան բավական ճաշակով կահավորված, մինչև անգամ պիանինոյի պես մի բան էլ մի անկյունում: Քեֆս բացվում է, սկսում եմ սիրաբանել, գրկել, համբուրել ոչ ինչպես մի պոռնիկի, այլ ինչպես մի օրինավոր ընտանեկան կնոջ: Նա էլ ինձ է համբուրում, բայց մի փիչ կոտրատվելով և դժվարությամբ: Երդվում է, որ առաջին անգամն է թույլ տալիս իրանմի ուրիշ տղամարդի հետ սիրաբանելու, որ ես շատ եմ դուր եկել նրան, առաջինն եմ, որ արժանանում եմ նրա համակրությանը և այլն: Մեկ էլ հանկարծ, գրկիցս դուրս թռչելով, սարսափած գոչում է.

— Ա՛յ դժբախտություն, նա գալիս է, նա գալիս է:

— Ո՞վ է գալիս, — հարցնում եմ:

— Ամուսինս, չե՞ս լսում ոտների ձայնը:

— Բայց չէ՞ որ ամուսինդ Դիժոնումն է, — գոռում եմ ես կատաղած, զգալով, որ այստեղ անպատճառ մի սատանայություն կա:

— Լռիր, մի գոռա, — սաստում է ինձ շան աղջիկը, — շուտ արա թաքնվիր, ես նրան կտանեմ մյուս սենյակ, դու մի կերպ դուրս կսլկվես:

— Ես հիմարի պես վերցնում եմ գլխարկս ու վերարկուս և մտնում եմ անկողնակալի տակ:

Այդտեղ ես չկարողացա ծիծաղս զսպել և փռթկացի:

— Ծիծաղեցեք, եղբայր, ծիծաղեցեք, — չվիրավորվեց Սոմիկոն, — ունեք իրավունք, բայց լսեցեք մինչև վերջը: — Տան աղջիկը բաց արավ դռները, մարդը ներս մտավ: Տունչս զսպած սպասում եմ, թե ինչպիտի լինի և անկողնակալի տակից մտիկ եմ անում գող կատվի պես: Տեսնում եմ, որ մարդը հարբած է, ոտքի վրա երերվում է: Նա գոռում է «Ո՞ւմ հետ էիր, ասա, ո՞րտեղ թաքցրիր սիրականիդ»: Սատանայի ծնունդը երդվում է, թե «ոչ ոք չկա, թե սիրական չունի» և, միևնույն ժամանակ վազում կանգնում է անկողնակալի առջև, պարզ հասկացնելով մարդուն, թե որտեղ եմ թաքնված: «Հե՜յ, այդտեղ է ուրեմն», — գոռում է մարդը և, կնոջը մի կողմ հրելով, թեքվում է և ձեռքիցս բռնելով, ինձ դուրս է քաշում: Դողդողալով ոտքի եմ կանգնում: Առջևս կանգնած է մի հսկա տղամարդ, թիկունքն իմնից երկու անգամ լայն և ռևոլվերը ձեռքին: Ես էլ ուզում եմ ռևոլվերս դուրս բերել, չկա: Հասկանում եմ, որ սատանի ծնունդը սիրաբանության ժամանակ, ճարպկությամբ դուրս է բերել գրպանիցս: Ինչ անեի դատարկ ձեռներով: Հանկարծ վրես մի ուժ եկավ, կրծքին խփեցի, ընկավ: Տան աղջիկը ետևիցս բռնեց ձեռներս, մարդը վեր կացավ ընկած տեղից և, տուր որ կտաս: Տեսնում ես էլի՛, ինչ երկարացնեմ, մարդ ու կին ինձ կողոպտեցին ոտքից մինչև գլուխ: Վերցրին փողերս էլ, ոսկե ժամացույցն էլ, ոսկե շղթայով մատանիս էլ, ռևոլվերս էլ, ամեն ինչ...

— Եվ դուք վերադարձաք հյուրանոց ո՞տքով:

— Ու այդ մեկը պետք է խոստովանել, կառքի փող տվեցին, քսան ֆրանկ:

— Այժմ ի՞նչ եք մտադիր անել, — հարցրի ես:

— Ոչինչ:

— Ինչպե՞ս թե ոչինչ: Պետք է հայտնել ոստիկանությանը:

— Տո՛ ի՜նչ եք ասում, ո՞ւմ դեմ գանգատվեմ, անիծվածների ոչ անունը գիտեմ, ոչ տան նոմերը և ոչ էլ փողոցը:

— Այնուամենայնիվ այդպես թողնել չի կարելի, պետք է հայտնեք ոստիկանությանը:

— Գի՞ժ եք ի՛նչ է, դուք ուզում եք, որ անունս ընկնի լրագրների բերանը, ամենքը կարդան և վաղ թե ուշ Թիֆլիս գնա և կնոջս ու երեխաներիս ականջին հասնի: Շնորհակալ եմ, ես ձեր ասած տուտուցներից չեմ, որ այդ թույլ տամ:

Արդարև, ներկա դեպքում բարեկամս տուտուց չէր, և ես համաձայնվեցի նրա հետ:

— Ավելի լավ է,-ավելացրեց նա, — մի քանի օր հյուրանոցից դուրս չգամ, մինչև որ երեսիս կապույտներն անցնեն: Հետո վեր կկենամ ու հա՜յդա Կովկաս: Չէ՛, եղբա՛յր, ես քո Փարիզից կշտացա:

— Երևի էլ Փարիզ չեք գալ, չէ՞:

— Իհարկե, չեմ գալ, գի՞ժ եմ:

Մի շաբաթ անցած Սոմիկոն ինձ հեռագրեց, թե գնում է և խնդրեց վերջին անգամ իր հետ տեսնվեմ: Ես ուղեկցեցի նրան մինչև կայարան:

Հրաժեշտի վերջին րոպեին նա ասաց.

— Գիտե՞ք, եղբայր, սիրտս տխրում է, որ Փարիզից հեռանում եմ:

— Եվ ափսոս, որ էլ չեք ուզում մեկ էլ տեսնել:

— Նետ, բրատ, շալիշ, կգամ, էլի կգամ, ամեն տարի, — գոչեց նա,- ցտեսությո՛ւն:

X

ՉՎԻՑԵՐԻԱՅՈՒՄ

Փարիզ գալուս առաջին ամառը, այն է 1906 թվականին, որոշեցի մի կամ երկու ամսով ընտանիքիս հետ տեղափոխվել Ժվիցերիա:

Ո՞վ չի կարդացել կամ լսել այդ երկրի բնական գեղեցկության և ժողովրդի բարեուվարքի մասին անվերջ դրվատներ: Յուրաքանչյուր ճամփորդ, հայտնիներից սկսած մինչև հայ ուսանողը, մի տեսակ սրբազան պարտականություն է համարել իր հիացման տուրքը նրան վճարելու: Գրիգոր Արծրունին մի տարի այնտեղ ապրելուց հետո «Մշակ»-ի բանասիրական բաժինը չորս-հինգ ամիս զբաղեցրեց Ժվիցերիայի փառաբանությամբ: Կարդալով նրա նկարագրությունները, ես այն տպավորությունն էի ստացել, թե աշխարհը չունի ավելի գեղեցիկ վայր, ավելի կուլտուրական ժողովուրդ, ավելի մաքուր ու բարոյական վարքուբարքեր, բան այդ, ինչպես ինքն էր ասում, «օրհնած» երկիրը:

Փարիզից մինչև Ժնև Դիժոն քաղաքի վրայով ընդամենը տասը ժամվա ճամփա է երկաթուղով: Ես վերցրի գիշերային գնացքը, և լուսաբացին արդեն սահմանագլխումն էինք: Պոնտառլիե կայարանում գնացքը փոխվում է: Ճամփորդները ժամանակ ունեն դալարազարդ սարալանջի վրա, բաց օդում, առավոտյան արեգակի առաջին ախորժալի շողերի տակ զվիցերիական գովաբանված կաթն ու սերը կամ սուրճը ճաշակելու և իրենց ագահ հայացքը հագեցնելու գունագեղ լեռների ու դեղնագույն ապառաժների սահնչելի տեսարաններով:

Ժնևը փոքրիկ քաղաք է 130 հազար բնակիչներով: Չի կարելի ասել, որ Ժան-Ժակ Ռուսոյի և Պոադիեի ծննդավայրն ունի մի առանձին գեղեցկություն, բայց, շինված լինելով բնության զմայլելի ծոցում, նա մի բացառիկ համայփ է ներշնչում ճամփորդին: Դա գլխավորապես նրա առջև տարածված Լեմանի լիճն է, մանավանդ Ռոն գետը: Ես ոչ մի երկրում չեմ տեսել ջրերի այդչափ պայծառ ու գվարթ գույն, որչափ այդ լճի և այդ գետի մեջ: Ռոնի ջուրը, կարծես, ներկված է արվեստական բաց մանիշակագույն ներկով: Մարդ մի արտասովոր ուրախություն է զգում, նայելով նրա ընթացքին, և թվում է, թե տեսածն երազ է:

Մենք, իհարկե, Ժնևում չպետք է մնայինք: Եկել էինք լեռների հստակ օդը շնչելու և Փարիզի աղմուկից ու իրարանցումից հոգնած մեր ներվերին հանգստություն տալու: Մի օրվա մեջ ես ժամանակ չունեցա հետաքրքրվելու Ժնևի փոքրիկ թանգարանով, նրա թատրոններով և ոչ նրա մոնումենտներով: Միակ բանը, որ գնացի տեսնելու, Կալվինի հիմնած համալսարանն էր, այն էլ արձակուրդների պատճառով փակ էր: Գնացի կոֆե «Լիրիկ», որ հայ ուսանողների սիրած սրճարանն էր, ոչ ոքի չհանդիպեցի: Փարիզից հետո Ժնևն ինձ թվաց մի կիսամայի գյուղաքաղաք:

Շոգենավ նստելով, ուղևորվեցինք Լոզան: Բարեկամ մարդկանց ասելով, ավելի հարմար էր այնտեղ ընտրել մի լեռնային պանսիոն:

Նավային ճամփորդությունը Ժվիցերիայում ամենահաճելի զբոսանքն է: Ջուրն ու հողը իրարու հետ մրցելով, մերթ մեկն է գրավում հայացքդ, մերթ մյուսը: Չգիտես, որն է ավելի համայիչ մարգարտագույն Լեմանի ջրերի անթիվ ձկնիկների խա՞ղը, թե՞ ափերի կանաչազարդ պարտեզները, այգիներն ու մարգերը գյուղական մաքուր տնակներով: Ինքը շոգենավը պակաս հետաքրքրական չէ ճամփորդների բազմությամբ և բազմատեսակությամբ: Ինչպես ամենուրեք, այստեղ ևս գերազանցում են անգլիացիները և ամերիկացիները: Շատ քիչ ֆրանսիացիներ և իտալացիներ են երևում: Նրանք կարիք չունեն Ժվիցերիա գալու, նրանց հայրենիքի ամառանոցները պակաս զմայլելի չեն: Ֆրանսիա, Իտալիա, և Ժվիցերիա, երեք երջանիկ բույրեր գրավել են Եվրոպայի ամենագեղեցիկ վայրերը և մրցում են իրարու հետ:

Հաճախ լսում եմ ռուսերեն լեզու, մեծ մասամբ հրեական առոգանությամբ: Նրանք են ամենից բարձրաձայն խոսում և ամենից զորեղ շարժումներ անում:

Լոզանում, ժամանակավորապես տեղավորվելով մի պանսիոնում, որդիներիս ուղարկեցի լեռները լրագրական հայտարարությունների ցուցմունքով մի հարմար և գրպանի համապատասխան պանսիոն ընտրելու:

Լոզանը Ժնևից երկու անգամ փոքր է թե՛ տարածությամբ և թե՛ բնակիչների թվով: Բայց նա ևին խաղաբ է, ուստի և ավելի յուրատեսակ և, եթե կամենաբ, ավելի գեղեցիկ իր զառիվեր փողոցներով, տների հնադարյան ոճով ու սիրուն աղբյուրներով:

Մեծ չէ Զվիցերիայի տարածությունը, ընդամենը 41 հազար քառակուսի կիլոմետր, այսինքն՝ Խորհրդային Հայաստանից միայն մի երրորդական չափով ավելի: Նրա բնակչության թիվն այն ժամանակ 3 միլիոն 700 հազար էր: Իր պատմության ընթացքում այդ երկիրն էլ տառապել է, ինչպես Հայաստանն իր անցյալում, և շատ է տառապել: Սկզբի դարերում նա կոչվել է Հելվեցիա կամ հելվետների երկիր, ապա հաջորդաբար ընկել է հռովմեացիների, բուրգոնդների և ֆրանկների իշխանության տակ: Այնուհետև եկել է Ավստրիայի բռնակալությունը և տիրել է մինչև տասնուերեքերորդ դարի վերջը, երբ ժողովուրդը, այլևս չկարողանալով կրել իր տիրող պետության անողոք ներկայացուցիչների դաժանությունները, ապստամբվել է: Զվիցերիան այդ ապստամբության հերոսությունը, ինչպես հայտնի է, մարմնացրել է Վիլհելմ Տելլի առասպելական անձնավորության մեջ, որի պաշտամունքն այսօր էլ այնքան զորեղ է երկրում և կմնա, քանի որ գոյություն ունի այդ ժողովուրդը: Ապստամբության առաջին հետևանքն է եղել Լյուցերն, Տյուրիխ, Գլարիս, Զյուգ և Բեռն կանտոնների իրարու միանալն ու մի ֆեդերասիոն կազմելը: Շարունակելով իայլ ու իայլ ձեռք բերել իր ժողովրդի կատարյալ ազատությունը, տասնհինգերորդ դարում ֆեդերասիոնը կովել է Կառլոս անխոհեմի և Մաքսիմիլիան կայսեր դեմ: Այս վերջինը ստիպված է եղել Բալի դաշնագրությամբ ճանաչել կանտոնների ազատությունը, որոնց թիվն ավելացել էր մինչև տասներեքի: Բայց Զվիցերիան, որպես անկախ պետություն, ճանաչվել է միայն տասնյոթերորդ դարի կիսին Վեսթվալիայի դաշնագրությամբ: Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցությամբ նա հայտարարվել է «Հելվեցյան հանրապետություն», և միևնույն ժամանակաշրջանում երկիրը դարձել է ֆրանկո-ավստրիական և, ավելի ուշ, ֆրանկո-պրուսական պատերազմների թատերաբեմը: Վերջապես, 1803 թվականին, Նապոլեոն առաջինի կամքով և Վիեննայի դաշնագրությամբ Հելվեցյան միասնական հանրապետությունը դարձել է ֆեդերալ հանրապետություն:

Այժմյան Զվիցերիան ունի 22 կանտոն: Ամեն մի կանտոն իր ներքին գործերի վերաբերմամբ անկախ է և ունի տեղական առանձին կառավարություն: Երկրի կենտրոնական, այսինքն՝ ֆեդերալ վարչության տեղը Բեռնն է, Զվիցերիայի մայրաքաղաքը: Գործադիր իշխանությունը ֆեդերալ խորհուրդն է, որի նախագահը միաժամանակ և ֆեդերացիայի նախագահն է: Օրենսդրական մարմինը բաղկացած է երկու խորհուրդներից՝ ազգային և պետական:

Երկիրը բաղկացած է երեք մասերից — ֆրանսիական, գերմանական և իտալական: Լեզվի պատճառով մեզ համար իհարկե, գերադասելի էր ֆրանսիական Զվիցերիան:

Երկու օր փնտրելուց հետո գտանք մեր ցանկության և միջոցներին համապատասխան մի պանսիոն Լոզանի շրջակա լեռնային դաշտավայրում, ծովի մակերեսից 900-1000 մետր բարձրության վրա:

Պանսիոնն անուշ էր, բայց մաքուր և էժան, հինգ հոգու համար երեք ընդարձակ և լուսավոր սենյակներ, ուտելիքով հանդերձ, օրական 20 ֆրանկ (8 ռուբլի ոսկով): Առավոտյան մեզ տալիս էին սերով սուրճ, սպիտակ հաց, պանիր, կարագ կամ ձու, մեղր կամ մուրաբա, իսկ կաթ որքան ցանկանայինք: Կեսօրվա նախաճաշը բաղկացած էր երկու տեսակ կերակրից, մեկը միս, մյուսը բանջարեղեն և դարձյալ սուրճ, իսկ ճաշն իրիկնադեմին հինգ տեսակից՝ ապուր, միս, ձուկ, բանջարեղեն, անուշեղեն կամ միրգ:

Պանսիոնի տերը մի գյուղական ընտանիք էր — մարդ ու կին և երկու դեռահաս աղջիկներ: Կինը, չնայելով իր կոշտ ու կոպիտ արտաքինին, վերին աստիճանի հեզ և սակավախոս մի էակ էր միշտ սիրալիր ժպիտն երեսին: Մարդը, ընդհակառակը, բավական տաժված ու հղկված արտաքինով, բայց բնավորությամբ կոպիտ, բծախնդիր և, ըստ երևույթին, կռվասեր մեկն էր, հենց առաջին օրերը նա ցուցադրեց իր կոպտությունը մի քանի անտեղի նկատողություններով ու պահանջներով: Ես երկու դեպքերում կարողացա ինձ զսպել, բայց երրորդ անգամ, մտածելով, որ եթե թույլ լինեմ, մարդը շատ հեռուն կգնա, վճռեցի մի անգամ ու միշտ ցույց տալ նրան իր տեղը: Ես նրա գոռոցին պատասխանեցի իմ ձայնի ոչ պակաս դիապազոնով: Մարդն անմիջապես լռեց և բթի տակ ինչ-որ փնթփնթաց:

Այնուհետև նա մեր վերաբերմամբ զգույշ էր և աշխատում էր ինձ չհանդիպել, թեև մոտովս անցնելիս չէր մոռանում բարևելու:

Այդ միակ օրինակը, իհարկե, ինձ չէր կարող խանգարել շատ շուտով տեսնելու և համոզվելու, որ զվիցերիացիները առհասարակ վերին աստիճանի հանգիստ և խաղաղասեր ժողովուրդ են: Թեև շատ են սիրում խոսել պատերազմների և կռիվների մասին և մի բիչ էլ պարծենկոտ են: Երբեմն նրանք վախկոտ են ծաղրվելու չափ: Առանձնապես նրանք վախենում են իտալացիներից, որոնք կազմում են ճանապարհներ շինող բանվորների մեծամասնությունը: Յուրաքանչյուր իտալացի իր գրպանում ունի մի դանակ և չի վարանում տեղի ու անտեղի ցույց տալ այդ դանակը, մանավանդ, երբ հարբած է, իսկ հարբում են իտալացի բանվորները շատ հաճախ:

Ես վճռել էի, բանի որ գեղեցիկ բնության ծոցումն եմ, ոչ գրել և ոչ կարդալ: Ինձ համար ամեն մի տեսարան մի դիրք էր և ամեն մի դեմք մի ամբողջ մարդկություն: Առավոտից մինչև երեկո որդիներիս հետ կատարում էի երկարատև զբոսանքներ: Այցելում էի շրջակա գյուղերը, մտնում էի անտառները, իջնում էի ձորերը, բարձրանում էի լեռնային շալեները, այնտեղ վայելելու Զվիցերիայի հրաշալի կաթն ու սերը և հիանալի գյուղացիների տոկուն ու համառ աշխատասիրությամբ:

Հազիվ թե գտնվի մի ուրիշ երկիր, ուր ոտով ճամփորդելն այնքան դյուրին և հաճելի լինի, որքան Զվիցերիայում: Դուք կարող եք, մի փոքրիկ ճամփարկղ վերցնելով, մեն-մենակ անցնել երկրի մի ծայրից մինչև մյուսը, միանգամայն վստահ, որ ձեզ ոչ մի վտանգ չի սպառնում, բացի ձեր այս կամ այն անխոհեմությունից: Անցնելով գյուղից գյուղ կամ կանտոնից կանտոն, եթե հոգնել եք, ձեր հանգստության համար ամենուրեք կա գյուղական մի փոքրիկ հյուրանոց, որ օքերժ է կոչվում: Այնտեղ կարող եք և՛ գիշերել, և՛ կերակրվել մի չնչին վարձով:

Զվիցերիայում մեծ ճանապարհի ավազակություն չկա, չկա և խուլիգանություն, որ այնքան սովորական է մյուս երկրներում: Հետևաբար ձեր անձը և գրպանն այդ կողմից միանգամայն ապահով են վտանգներից: Անտառների խորքերում դուք, բացի նապաստակներից և ճագարներից, չեք հանդիպի ոչ մի գազանի: Զկան թունավոր սողուններ: Գոնե ես, հինգ ամառ անցկացնելով Զվիցերիայում, ոչ միայն չհանդիպեցի, այլև չլսեցի նրանց մասին: Բայց մի բան, որ ինձ զարմացրեց, թռչունների բացակայությունն է անտառներում: Գալով գողությունների, այնքան հազվագյուտ են, որ չարժե նրանց մասին խոսել, մանավանդ, որ նրանք բուն զվիցերիացիների ձեռով չեն կատարվում: Զվիցերիայում շատ մեծ է սեփականության կուլտը: Գյուղից գյուղ անցնելով, դուք հանապարհների եզրերում հանդիպում եք բազմաթիվ զանազան մրգերով ծանրաբեռնված ծառերի: Ոչ մի պահապան աչք չի հսկում նրանց, և հասուն պտուղները թափվել են գետնի վրա: Ով է նրանց տերը -չգիտես, բայց գիտես, որ սեփականություն է, ուրեմն մասնավորի համար անձեռնմխելի: Ամենահանդուգն մանուկն անգամ չի համարձակվում ուրիշի ծառից միրգ պոկել: Եվ նրան զսպողը ոչ այնքան չորս ֆրանկ տուգանքն է, որքան ամոթի զգացումը և ծնողների հանդիմանությունը:

Ով չի կամենում կամ չի կարող ոտով ճամփորդել, նրա տրամադրության տակ են երկաթուղիները ու շոգենավերը: Քառասուն ֆրանկ վճարելով, դուք ունեք իրավունք ամբողջ կես ամիս ճամփորդել թե՛ երկաթուղով և թե շոգենավով ուր կամենաք և որքան կամենաք:

Մեր պանսիոնում կենդանիները բոլորն էլ բնության սիրահարներ էին և օտարերկրացիներ զանազան ազգություններից: Նախաճաշի և ճաշի ժամանակ մեր զրույցների առարկան գլխավորապես երկրի գեղեցիկ տեսարաններն էին: Ի միջի այլոց, կար մի զվիցերիացի ինչ-որ արհեստավոր, որ իր ասելով տասնյոթ անգամ բարձրացել էր Մոնբլանի գագաթը: Իհարկե, ամենքից ավելի հետաքրքրությամբ նրա պատմածները էին լսվում: Նա մի բանի անգամ ալպինիստներ էր առաջնորդել, ոչ ըստ պաշտոնի, այլ, ինչպես ինքն էր ասում, «ի սեր արվեստի»:

Մի անգամ, երբ նա նկարագրում էր իր կրած դժվարությունները ու վտանգները, կինս հարցրեց.

— Ի՞նչ հաճույք եք զգում, պարոն, բարձրանալով լեռան գագաթը այդքան դժվարությունների ու տանջանքների գնով:

— Օ՜հ, տիկին, — պատասխանեց մարդը ոգևորվելով, — դուք երևակայել չեք կարող այդ հաճույքը: Դա անկարագրելի է: Ամեն անգամ, երբ հասնում եմ լեռան վերջին բարձրությանը և նստում եմ մի սառցակույտի կամ ժայռի վրա, թվում է ինձ, որ բոլոր մահկանացուներից ամենաերջանիկն ես եմ, որովհետև միակն եմ այդ բարձրության վրա: Ինձ հետ շատ էչերն են կարողացել լեռան գագաթին հասնել: Մեծամասնությունը կես ճամփից ետ է դարձել, ոմանք նույնիսկ վերջին կետին մոտեցած: Պատահել են և ողբերգական արկածներ իմ աչքերի առջև: Հիշում եմ երեք երիտասարդ խոլանդացիների կործանումն, իրանց մանկական ինքնավստահության և անխոհեմության շնորհիվ: Ես նրանց ապահով առաջնորդել էի մինչև նախավերջին կետը: Այդտեղ նրանք սկսեցին արհամարհել իմ առաջնորդությունը և ցուցմունքները: Կամեցան ինձնից առաջ տեսնել գագաթը, ով գիտե, գուցե հետո իրանց հայրենակիցների մոտ պարծենալու համար: Եվ կործանվեցին երեքն էլ: Նրանցից երկուսը եղբայրներ էին:

— Եվ ի՞նչ արիր դուք, երբ մենակ մնացիր:

— Իջա վար օգնություն բերելու: Թշվառների դիակը գտանք մի ժայռի տակ, երեքն էլ արյունաշաղախ, այլանդակված:

Մարդը մի փոքր լռեց և ապա, հառաչելով, ավելացրեց.

— Բայց, չնախատեք ինձ, տիկին, եթե մի բան անկեղծորեն խոստովանեմ ձեզ:

— Ասացեք:

— Այն պահին, երբ ընկերներիս հետ փնտրում էի կործանվածներին, ինձ պատահել էր մի հանցավոր միտք, ափսոս, որ այս անգամ ես զրկվեցի իմ բարձրագույն հաճույքից, այսինքն՝ Մոնբլանի գագաթը ողջունելուց:

— Այո՛, ճիշտ որ հանցավոր միտք:

— Ինչ արած, տիկի՛ն, երևի, նախախնամության օրենքն է, մարդը կա և կմնա միշտ էգոիստ:

Ես տեսնում էի, որ երջանիկ ալպինիստի պատմվածքները խորապես ազդում են որդկերանցս վրա և հուզում են նրանց, մանավանդ Արմենին:

Մի անգամ ալպինիստը հարցրեց նրանց.

— Կկամենա՞ք Մոնբլան բարձրանալ:

— Այո՛, այո՛, — կրկնեցին անմիջապես երկուսը միասին:

Ես ծիծաղեցի, կինս գունատվեց:

— Երբե՛ք, երբե՛ք ես թույլ չեմ տալ, — գոչեց նա այնպես ահաբեկված, որ, կարծես, իր զավակները արդեն ժայռերի ու սառույցների վրա են:

— Մի՛ վախեցեք, տիկին, — ծիծաղեց զվիցերիացին բարեսրտաբար, — ես նրանց Մոնբլանի գագաթը չեմ առաջարկում, այլ միայն մի մասը, դիցուք կեսը կամ մի երրորդականը: Դա շատ դյուրին մի էքսկուրսիա է, որ երեխաներն անգամ կարող են կատարել:

— Ձեր առաջնորդությամբ, իհարկե, — ասացի ես:

— Ո՛չ պարո՛ն, կարիք չկա, որ ես առաջնորդեմ: Դուք ինքներդ կարող եք նրանց ուղեկցել: Մեծ բան չէ: Խոսքս Մոնբլանի հաչակավոր սառցարահների մասին է: Դա մի զմայլելի էքսկուրսիա է ձեզ համար էլ վերին աստիճանի հետաքրքրական:

Եվ նա իսկույն, մատիտ ու թուղթ վերցնելով, գրեց ու նկարեց մարշրուտը: Ես հրապուրվեցի, որդիներս ուրախացան: Ի՜նչ ավելի մեծ հաճույք կա, քան զավակներիդ հաճույք պատճառելը:

Հետևյալ առավոտ իսկ, մի կերպ հաղթահարելով կնոջս ընդդիմադրությունը վերցրի որդիներիս և իջա Լոզան: Այնտեղից Ժնևի վրայով երկաթուղով անցանք բարձր — Սավուա: Գնացինք Շամոնի: Դա ալպինիստների սովորական ելակետն է, մի գյուղ Մոնբլանի ստորոտում, գլխավորապես հյուրանոցներից բաղկացած: Տեղ հասանք երեկոյան: Եղանակը մառախլապատ էր, թեթևակի անձրևում էր, վախեցանք, միգուցե մեր փոքրիկ էքսկուրսիան չհաջողվի: Գիշերեցինք հյուրանոցներից մեկում, հետևյալ օրն ամբողջովին գործադրելու նպատակով: Առավոտյան հագիվ լույսը բացվել էր, երբ ոտքով ճանապարհ ընկանք: Հակառակ մեր սպասածին, եղանակը պարզվել էր, արեգակը լուսավորում էր Մոնբլանն այնքան պայծառ, որ ծյուների մակերեսը պսպղում էր բյուրավոր ալմաստներով: Թվում էր, որ մենք մի հարյուր հայլ հեռավորության վրա ենք և շուտով կհասնենք այնտեղ:

Կազմվել էր մեզ նման էքսկուրսանտների մի մեծ խումբ: Կային և մի բանի ալպինիստներ: Նրանցից յուրաքանչյուրը իր մեջքի վրա կրում էր պարանով լի մի տոպրակ և երկար պարան: Երևի նրանք պիտի բարձրանային գագաթը: Նրանք ունեին երեք առանձին առաջնորդներ, իսկ մերը մի հոգի էր միայն: Շամոնիից մինչև սառցարաններները երկու կամ երեք ժամվա ճամփա է, նայելով էքսկուրսանտի ընթացքի արագությանը: Այն ժամանակ դեռ չէր ավարտված այժմյան էլեկտրագիծը, որ այնքան թեթևացրել է վերելքը: Որդիներս ուրախությունից թռչկոտում էին: Նրանց հետ մրցում էր մոտ հինուն տարեկան մի մարսելցի, նա շարունակ բարբառում էր, էրէջում և վազվզում տասը տարեկան մանկան պես: Եր ջանի՛կ մարդ:

Սառցարանը գտնվում էր ծովի մակերեսից 2200 մետր բարձրության վրա: Հետևելով մյուսների օրինակին, մենք ես գնեցինք մի-մի զույգ կոշտ գուլպաներ և հագանք մեր կոշիկների վրա, որպեսզի սառույցների վրա չսայթաքենք: Միայն մի մոտ հասն-հասներկու տարեկան, սևաչյա, սևահեր և գեղեցիկ աղջիկ արհամարհանքով մերժեց իրան առաջարկված գուլպաները և վազեց դեպի սառցարանը բաց կոշիկներով: Նա չէր վախենում սայթաքումից: Այսքանը բավական էր, որ թեթևսոլիկ մարսելցին անմիջապես հափշտակվեր այդ աղջկանով և այլևս նրանից չհեռանար: Այն սառցարանը, որ պիտի անցնեինք, ուներ մոտ մի կիլոմետր լայնություն: Սկզբում մենք ընթանում էինք դյուրությամբ և աներկյուղ, չնայելով մեր առաջնորդի նախազգուշացումներին: Բայց շուտով մեր գուլպաները տրորվելով — մաղվեցին, սահեցին մեր ոտներից և ընկան: Շարունակեցինք հայլել ավելի դանդաղ և զգուշությամբ:

Սառցարանը տափակ չէր և ոչ էլ հարթ: Նույն լեռնալանջն էր, միայն հարի փոխարեն սառցյա խորդուբորդներ, ձորակներ և բլրակներ: Դժվարագույնն այդ բլրակները բարձրանալն էր, մանավանդ իջնելը: Աջ ու ձախ բացված էին կապտագույն ջրերով լեցուն փոքրիկ խորխորատներ: Բավական էր մի անզգույշ հայլ, մի թեթև սահում, և մարդ կարող էր վար թավալվել: Ո՞վ գիտե ով կարով էր նրան վեր հանել, և կենդանի կհանե՞ր արդյոք: Համենայն դեպս ինչ թե շատ խոր փոսի մեջ ընկնողի ջարդոտվելն անխուսափելի էր:

Սառցարանը սկսվում է Մոնբլանի անհամարելի բարձունքից մի լայնարձակ ձորի ուղղությամբ և վար իջնելով մի որոշ տեղ, ընդհատվում է, բայց կանգ չի առնում: Զվիցերիացիները ասում էին, որ նա աստիճանաբար երկայնանում է և կարող է շուտով սպառնալ ստորոտի գյուղերին ու ագարակներին: Պատմում էին, որ եղել են դեպքեր, երբ ամբողջ գյուղեր են կործանվել սառցային հոսանքների տակ: Սառույցները մշտական չեն, խորհում նրանք հալչում են, և փոխարենը վերի մակերեսը ծածկվում է նորանոր շերտերով: Սառցարանի տակից հոսող ջրերը կազմում էին ամբողջ գետակներ, որոնցով գյուղացիները ոռոգում են իրանց այգիներն ու ագարակները: Առհասարակ Մոնբլանը, հակառակ չոր ու ցամաք Արարատի, վերին աստիճանի բարեբեր լեռն է, շնորհիվ իր ջրերի առատության: Այդ տեսակետից նրա հետ մասամբ կարող է մրցել միայն մեր Արագածը:

Տեղ-տեղ ինչ-որ բարի մարդիկ սառցային բլրակների վրա երկաթյա բահերով փորում էին աստիճաններ՝ անցնողների ընթացքը դյուրացնելու համար: Ցուրաքանչյուր էքսկուրսանտ տալիս է նրանց իր տուրքը — չորս-հինգ սու — ոչ

ավելի: Այն ժամանակ Զվիցերիայում առհասարակ ամեն բան անհամեմատ է ժան էր Ֆրանսիայի վերաբերմամբ: Այժմ հակառակն է ֆրանսիական ֆրանկի անկմանպատճառով:

Մի սառցային սանդուղքով բարձրանալիս, թեթևամտություն ունեցա ետ նայելու, գլուխս պտտեց, ոտներս դողացին, և մնացի իմ տեղում զամված: Երկյուղը կաշկանդել էր ինձ, չէի կարողանում շարժվել: Որդիներս մոտեցան, և նրանց օգնությամբ բարձրացա վեր ու իջա մյուս կողմը:

Մի բլրակ բարձրանալիս մարսելցին, հետևելով սևաչյա օրիորդին, սայթաքեց և ընկավ ձորակի մեջ: Բարեբախտաբար ձորակը խորը չէր և ոչ էլ այնքան լայն, որ նրա բավական գեր մարմինը ներս ընդգրկեր: Մարդը մնաց սրածայր բեկորների մեջ ինչպես թակարդ ընկած աղվես: Առաջնորդն իր ալպենճտոկի և պարանի օգնությամբ նրան դուրս բերեց ձորակի բերնից անվնաս: Սակայն նրա ինքը բավական ջարդվել էր և երեսն արյունոտվել: Մի բան, որ նրան չխանգարեց կրկնակի եռանդով հետամուտ լինելու սևաչյա օրիորդին, աշխատելով կես խայլ անգամ ետ չմնալ նրանից: Դա նրա կողմից կատարյալ հերոսություն էր, աչքի առջև ունենալով նրա պատկառելի տարիքը և այծյամի պես բլրակից բլրակ և ձորակից ձորակ ոստոստող աղջկա թեթևությունը:

Լավ չեմ հիշում, բայց կարծեմ մոտ մի ժամ տևեց մեր անցքը: Եվ ամենից առաջ անցնողը դարձյալ սևաչյա աղջիկն եղավ: Նա արդեն դարձել էր մեր ամբողջ խմբի ուրախության և համակրանքի առարկան: Իսկ խեղճ մարսելցին չարաչար խանդում էր, երբ որևէ մեկը մոտենում էր աղջկան, թեկուզ կին լիներ մոտեցողը:

Ո՞վ էր այդ զմայլելի աղջիկը: Հազիվ այդ հարցը տվել էի ինձ, երբ նա ինքը հանկարծ մոտեցավ և ասաց ռուսերեն.

— Պարոն, կարծեմ, դուք կովկասցի եք:

— Այո՛:

— Իսկույն գուշակեցի ձեր արտասանությունից, — շարունակեց նա ժպտալով և իր գեղեցիկ ճակատից ետ վանելով գանգուր ու թանձր մազերը:

— Ներեցե՛ք, իսկ դուք ո՞ր երկրից եք, — հարցրի ես:

— Ես նույնպես կովկասցի եմ:

— Ո՞ր ազգությունից:

— Վրացուհի եմ, պարոն, Քութաիսից:

— Ճամփորդուհի՞ եք:

— Ոչ, այնպես, մի թեթև զբոսանք եմ կատարում: Ես ուսանողուհի եմ ժնևում:

— Ի՞նչ եք ուսանում:

— Հասարակական գիտություններ:

— Ներեցեք, ձեր ազգանո՞ւնը:

— Բաբրածե: Իսկ ձե՞րը:

Ես ասացի:

— Ա՛ա՛, — գոչեց օրիորդը, — ուրախ եմ ծանոթանալ: Ես ձեր մասին կարդացել եմ կովկասյան լրագրերում: Իմ հայուհի ընկերները գրականության մասին խոսելիս հաճախ հիշում են ձեր անունը: Գիտեք, ես միշտ կովկասցու

հանդիպելիս ուրախանում եմ: Չէ՞ որ մենք հայրենակիցներ ենք: Ասացեք, ե՞րբ պետք է մեր երկիրը Չվիցերիա դառնա, — հարցրեց նա, հանկարծ դառնալով մտամփոփ:

— Կդառնա, օրիորդ, կդառնա և ավելի առաջ կերթա, — գոչեցի ես մի տեսակ ներշնչված և հուզված:

— Ես էլ հավատում եմ, — արտասանեց օրիորդը նույնպես զգացված:

Նույն պահին, տեսնելով, որ ինքը մի բանիսից ետ է մնացել, ասաց.

— Ներեցե՛ք:

Եվ անմիջապես վազեց առաջ: Մինչև մենք խոսում էինք, մարսելցին տասը բայլ հեռվում սպասում էր օրիորդին, իր կարճ ծխամորճն ատամներով կրծոտելով և ոտները գետնին զարկելով, որպես անհամբերության նշան: Նրա ճարպոտ ու կարմիր երեսը փայլում էր արեգակի շողերի տակ: Երբ օրիորդը, առանց նրա վրա ուշադրություն դարձնելու, անցավ, իսկույն վազեց ետևից, ինչպես որսկան շուն: Հանկարծ օրիորդը կանգ առավ, ետ վազեց և ասաց.

— Աղաչում եմ, պարոն, պատվիրեցեք ձեր որդիներին, որ այդ ապուշ մարսելցուն զբաղեցնեն, նա ինձ ձանձրացրեց իր պարծենկոտությամբ:

Եվ լոպե չանցած, նա ամենքին առաջեց այնպես, որ խեղճ մարսելցին այլևս չէր կարող իր գեր մարմինը նրա ետևից քաշ տալ:

Ջորության ճամփան քարքարոտ էր և լեցուն սրածայր ապառաժներով: Պետք է բարձրանայինք մի լեռան կուրծքը և անցնեինք հակառակ կողմ վար իջնելու համար, նախքան բարձրանալը, կանգ առանք մի փայտյա տնակի առջև և թարմ կաթով ու սերով կազդուրվեցինք: Գործնական Չվիցերիան գիտե որտեղ է ավելի գնահատելի իր բերքը:

Ուղին գծված էր ուղղահայաց և շատ բարձր ժայռի վրա: Ամենայն իրավմամբ նա կոչվում էր Manvais-Pas (վատ քայլ — վտանգավոր ճանապարհի նա այնքան նեղ էր, որ պիտի անցնեինք մեկ-մեկ, իրարու ետևից, կռունկների պես: Երկրի հոգատար կառավարությունը խոհեմություն էր ունեցել ժայռի կրծքով անցկացնելու երկաթյա պարան՝ ճամփի ամբողջ երկարությամբ: Մենք գնում էինք աջ ձեռով պարանը բռնած: Ձախ կողմը հիսուն մետր խորությամբ անդունդ էր, ուսկից բացվում էր մի ուրիշ անդունդ ավելի խոր: Մեզնից չորս օր առաջ այդ ուղիի վրա պատահել էր մի դժբախտ դեպք: Երկու ռուս երիտասարդ կանայք, մեկն օրիորդ, մյուսը երկու երեխաների մայր, Ժնևում իրանց ընկերների հետ գրազ են բռնում, թե սառցապանն ու Manvais-Pas -ն կառող են անցնել գիշերով և առանց առաջնորդի: Նրանց աջողվում է առաջինն անցնել անվտանգ, բայց երկրորդն անցնելիս երեխաների մայրը հանկարծ պոկվում է ժայռից և վար ընկնում: Խեղճ օրիորդը մինչև լույս մնում է ժայռի վրա, օգնություն գոռալով: Միայն լուսաբացին գյուղացիները, լսելով նրա ձայնը, գալիս են և թվառ կնոջ դիակը դուրս են բերում անդնդից: Մեր առաջնորդը ցույց տվեց մեզ նրա անկման տեղը:

Ես գնում էի մյջին շարքում, շարունակ ետ ու առաջ նայելով, որդիներիս հետևելու համար: Հանկարծ նկատեցի, որ երկրորդ որդիս չկա: Կանգ առա և, ինձ հետևողներին չխանգարելու համար, ամուր սեղմվեցի ժայռին, որպեսզի թույլ տամ նրանց առաջ անցնելու: Մոտեցավ ավագ որդիս գունատ ու հուզված:

— Պապա, Արմենը չի երևում, ես վախենում եմ, մի գուցե ընկել է.

Մենք աղաղակեցինք «Արմե՛ն, Արմե՛ն» ոչ մի ձայն: Ես սարսափեցի: Վերջին ամիսներին այդ զավթր ու կայտառ պատանին դարձել էր մտամոլոր, լուռ ու մռայլ: Վայրկենաբար ինձ կայծակեց մի չար կասկած: Ուժասպառ հենվեցի երկաթե պարանին, որպեսզի չընկնեմ, նույն վայրկյանին Ռուբենը գոչեց.

— Ահա՛ նա, ահա՛, նայի՛ր ցած.

Ես նայեցի: Նա գնում էր վարի ձորով, որ սառցարանի ուղղությամբ տանում էր դեպի մի վիհ: Գնում էր շտապ քայլերով, գլուխը կրծքին թեքած, առանց աջ ու ձախ նայելու: Հայր ու որդի աղաղակեցինք մեր ձայների ամբողջ ուժով «Արմե՛ն, Արմե՛ն»...

Նա, մեր ձայնից սթափվելով, կանգ առավ վիհից հազիվ մի բսան քայլ հեռավորության վրա: Մենք ձեռով նշան արինք ետ դառնալու: Նա ուշադրություն չդարձրեց, բայց և տեղից չշարժվեց առաջ գնալու: Ռուբենը շտապեց, վար իջավ ձորը և նրա թևից բռնելով, բերավ մեր ուղին: Այդ վայրկյանից, իմ պատվերով, նա իր եղբորից չէր բաժանվում, քայլ առ քայլ հետևելով նրան:

Ապագայում, երբ պարզվեց թշվառ պատանու հիվանդությունը, ես շատ անգամ եմ մտածել և, այսօր էլ երբ հյուսերս վաղուց են խորտակված մտածում եմ այդ չարագուշակ վայրկյանների մասին, բայց երբեք չեմ հարցրել և չեմ կամեցել գիտենալ, արդյոք նա սխալմամբ էր իր ճամփից շեղվել, թե... գիտակցաբար...

Manvais-Pas-ն անցանք անվտրձանք, իջանք մի ձոր: Մեր առջև բացվեց մեկը Զվիցերիայի նշանավոր տեսարաններից — մի շատ բարձր ջրվեժ, որ մոնչալով՝ ժայռի բեկորները թավալում էր կատաղի զորությամբ: Մենք կանգ առանք ջրվեժի ստորոտում և երկար ժամանակ հիացմամբ դիտում էինք բնության հրաշալիքը, ուշադրություն չդարձնելով, որ, ջուրը զարնվելով վարի ապառաժներին, բարձրանում է վեր և մեզ հեղեղում անձրևի տարափով:

Իջանք Շամոնի հոգնած ու ուժասպառ: Նույն ժամին գնացք նստեցինք վերադառնալու:

Մինչև Ժնև օրիորդ Բաբրածեն մեզ հետ էր: Նա կարողացել էր, վերջապես, ազատվել մարսելցու ձանձրալի ընկերությունից:

— Ես նրան հավատացրի, — ասաց օրիորդը, — որ դուք իմ մորեղբայրն եք և շատ բարկացել եք, որ ես թույլ եմ տալիս մի օտարականի ինձ հետամուտ լինելու:

— Ի՞նչ է սպասում նա ձեզանից, — հարցրի ես:

— Երևակայեցեք, առաջարկում էր, որ ես իր հետ ամուսնանամ: Հավատացնում էր, որ ինքը հայտնի կոմերսանտ է, Մարսելի նշանավոր հարուստներից մեկը, որ բարի մարդ է, առատաձեռն: Գլխավորն այն է, որ անվերջ պարծենում էր իր բաջությամբ և անվեհերությամբ: Երդվում էր, թե երեք անգամ ճամփորդել է Ալժիրիայի խորբերում որպես որսորդ, թե երկու առյուծ է սպանել, երեք վագր, թե կարող է ինձ ցույց տալ նրանց խրտվիլակները, եթե ես համաձայնվեմ նրա հետ Մարսել գնալ: Նա խոսում էր, խոսում, ես մոխումս ծիծաղում էի, նայելով նրա ուռած փորին: Կարո՞ղ եք երևակայել մեր ամուսնությունը, — շարունակեց օրիորդը բարձրածայն ծիծաղելով - ես բսանումեկ տարեկան, նա իմ հորից հինգ տարով ծեր: Ի՛նչ կասեն իմ ընկերուհիները. գիտեք նա հավատաց, որ դուք իմ մորեղբայրն եք: Նա միևնույն անգամ ուզում էր ձեզ հետ խոսել իմ մասին և ձեր թույլտվությունը խնդրել, որ ես ամուսնանամ նրա հետ: Հետաքրքրական է գիտենալ, դուք ի՞նչ պատասխան կտայիք նրան, եթե ես կատակի համար թույլ տայի ձեզ հետ խոսելու:

— Ես նրան կասեի, որ դուք մի անհման ծաղիկ եք, որին ձեր գեղեցիկ հայրենիքը երբեք չի համաձայնվիլ իր ձեռից բաց թողնելու:

— Ի՛նչ է: Դուք Եվրոպա եկել եք կոմպլիմանտներ սովորելո՞ւ, այդ լավ չէ,-արտասանեց օրիորդը կես կշտամբանքով ու կես կատակով: — Վերջը լսեցեք: Ես նրան ասացի, որ կովկասցիները կանանց վերաբերմամբ շատ խիստ են, որ նրանք թույլ չեն տալ կատակներ անելու: Ասացի, որ դուք շատ վտանգավոր մարդ եք, եթե համաձայնվի ձեզ հետ իմ մասին խոսելու, գործը կարող է արյունահեղությամբ վերջանալ: Ես մոխումս ծաղրում էի նրան, բայց երևակայեցեք, առյուծների ու վագրերի հետ կռվող մարդը վախեցավ:

— Մի՞թե:

— Այո՛, այո՛, վախեցավ, հավատացնում եմ ձեզ, թեև պարծեցավ, ասելով, որ մարսելցիները արյունհեղությունից վախեցող մարդիկ չեն:

Մենք օրիորդ Բաբրածեի հետ բաժանվեցինք բարեկամաբար: Նա խոստացավ մի օր գալ մեր պանսիոնը կնոջս հետ ծանոթանալու համար: Մենք էլ խոստացանք նրան այցելել Ժնևում: Բայց, ինչպես սովորաբար այդ տեսակ պատահական ծանոթությունները վերջանում են, ոչ նա և ոչ մենք կատարեցինք մեր խոստումը:

Այնուամենայնիվ այսօր էլ օրիորդ Բաբրածեի ուրախ ու պայծառ կերպարանքը վառ է իմ հիշողության մեջ:

Ես շաբաթն երկու անգամ որդիներիս հետ կամ մենակ էլեկտրական երկաթգծով իջնում էի վար, Լոզանից կամ Վեվեից վայելելու Լեմանի համայքը: Մի օր ամբողջ ընտանիքով գնացինք Մոնտրեո, որ Ձվիցերիայի սիրուն ձմեռանոցներից մեկն է: Մեզ հետաքրքրողը նրանցից ոչ հեռու գտնվող Շիլլիոնի բանտն էր, որ Ձվիցերիայի Բաստիլոնն է համարվում: Ի՜նչ սոսկալի վայր: Կարծես միջնադարյան բռնակալությունն իր ոճիրը մարդկային ազատության դեմ ավելի անամոթաբար շեշտելու համար է հոչակավոր բանտը տեղավորել Լեմանի ափերից գեղեցկագույնի վրա: Անշուշտ Սավոյայի բռնակալ Կառլոս երրորդը չէր կարող գուշակել, որ մի օր կգա պոեզիան և Բայրոնի հանճարեղ գրչով նախատինքի կնիքը կդրոշմի նրա ճակատին, անմահացնելով ժնևյան հայրենասեր Բոնիվարի անունը «Շիլլոնի կալանավորը» անվան ներքո: Բանտը շինված է ուղիղ ջրի ափին, բայց ներքին հարկը ջրի մեջ չէ, ինչպես սխալմամբ նկարագրում է Բայրոնը:

Հազարավոր ճամփորդներ են ամեն ամառ այցելում այդ բանտը, հարկավ, մեծ բանաստեղծի մռայլ նկարագրությամբ հափշտակված: Եվ շատերը շտապում են իրանց անունը փորագրել կամ գրել նրա պատերի ու սյուների վրա:

Մի ապառաժի վրա ամենատեսանելի մի տեղ Բառոդ մետր խոշորությամբ սև տառերով գրված էր.

Պոռոշանց:

Մենք ոչ գրիչ էինք բերել, ոչ փորագրիչ մեր անունն անմահացնելու համար: Բավականացանք միայն մեր հարգանքը մատուցանելով թշվառ կալանավորի հիշատակին:

XI

ՍՈՐԲՈՒՆՈՒՄ: Հ... Ա-ՆԸ: ԻՇԽԱՆՈՒՀԻՆԵՐԸ: ՄԱԳԱԶԻՆՆԵՐԻ ՀՐԱՊՈՒՑՐԸ

Փարիզի մթնոլորտն ինձ արբեցրել էր: Թվում էր, որ այսուհետև ինձ համար այլևս դժվար պիտի լինի շնչել մի ուրիշ օդ:

Հայրենիքի կարոտը չէացել էր, թեև նա առաջ էլ մի առանձին տեղ չուներ իմ հոգում: Երբեմն նույնիսկ մտածում էի, ունե՞մ արդյոք հայրենիք, և պատասխանը միշտ լինում էր բացասական: Այո՛, այո՛, ասում էի ես ինձ, ես հայրենիք չունեմ, այն անգնահատելի գանձը, որ բոլոր ազգերի բոլոր մարդկանց պարծանքն է: Եվ զարմանում էի, որ այդ պարզ ու պայծառ իրողությունը նոր եմ տեսնում կամ ավելի ճիշտ ասած, նոր եմ զգում:

Կովկասից ստացվող տխուր լուրերը (իսկ նրանք միշտ տխուր էին, միշտ հուսահատական) մի-մի աստիճան իջեցնում էին իմ սերը դեպի այդ երկիրը, որ ինձ կյանք էր ավել: Ջկար այլևս ինքնադատապարտումը, որ մի ժամանակ այնպես կրծոտում էր իմ սիրտը: Այժմ ես իմ Եվրոպա տեղափոխվելը համարում էի միանգամայն իրավացի ու խելացի:

Բարեկամներս ինձ գրում էին.

— Վերադարձիր հայրենիք, ի՞նչ գործ ունիս օտարության մեջ:

Խե՜ղճ մարդիկ, նրանք դեռ շարունակում էին մնալ մոլորության մեջ, թե հայրենիք ունեն:

Իմ պատասխանն անփոփոխ միևնույնն էր:

— Կվերադառնամ, երբ զավակներս կավարտեն իրենց ուսումը:

Կեղծում էի, իհարկե, ոչ միայն վերադառնալու փափագ չունեի, այլև մի տեսակ սարսափով էի մտածում, թե մի օր ստիպված պիտի լինեմ վերադառնալու: Ի՞նչ կա այդ կիսավայրենի, այդ հնից հեռացած, նորին չհասած երկրում: Ի՞նչ, բացի միջժողովրդյան խռովություններից, կռիվներից, կոտորածներից: Առանձին ատելությամբ հիշում էի մանավանդ հայ միջավայրը, նրա ընկերային կյանքի երկպառակությունները, ինտրիգները, բարեկամը բարեկամի, եղբայրը եղբոր ոտների տակ փորելը: Ա՛հ, ինչ լավ կլիներ, եթե կարողանայի մոռանալ այդ անցյալը, խորտակել իմետևից բոլոր կամուրջները, վերածնվեի ու նոր կյանք սկսեի, նոր սկզբունքներով, նոր խելքով, նոր ճաշակով:

Այո՛, այստեղ, Եվրոպայում այն չէ, ինչ որ այնտեղ, ասիական խավար երկրում: Այստեղ մտքի աշխատավորս ապրում է համամարդկային կյանքով: Այստեղ՝ գիտությունների, արվեստների, մարդկային հոգու և մտքի նրբացման բոլոր հնարավորությունների ոստանում: Վերջապես, այստեղ իմ միտքն ազատ է ներքին ու արտաքին կապանքներից, և ես իմ էության, իմ հվիրական խոհերի տերն ու տիրակասն եմ: Այստեղ ես ունեմ բոլոր միջոցներն ամբողջովին հվիրվելու գրականությանը, միմիայն գրականությանը, առանց որևէ վերապահումների: Այստեղ ոչ ոք ժամանակ-անժամանակ չի խուժիլ իմ բնակարանը, որպեսզի տակն ու վրա անի իմ գրասեղանը, գրավի իմ ձեռագիրները ու հնտիմ նամակները, որպեսզի իր լկտի մատներով էրէրի իմ ուղեղը փնտրելու համար՝ չկա՞ արդյոք նրա հատակում որևէ հանցավոր միտք ցարի կամ նրա սպասավորների դեմ:

Այսպես էի մտածում և այդպես զգում, այնինչ այլ էր իրողությունը: Մթնոլորտով արբեցած, ես ինձ խաբում էի անգիտակցաբար: Ես ուզում էի աշխատել, զգում էի մի բան գրելու, մի բան ստեղծագործելու պահանջ, և ավա՜ղ, չէի կարողանում: Պատահե՞լ է ձեզ երազում տեսնել ձեր սիրո առարկային, որից երկար ժամանակ է բաժանվել եք: Դուք, իհարկե, ուրախանում եք, ուզում եք հարձակվել նրա վրա, գրկել, համբուրել, բայց չեք կարողանում, ուղղակի անզոր եք: Ինչ-որ մի բան խանգարում է ձեզ: Ձեր ձեռքերն առաջ չեն շարժվում, ձեր շրթունքները մնում են օդի մեջ կախված, երևույթը հանկարծ չհանում է, և դուք արթնանում եք մի դառը կսկիծ ձեր սրտում: Այս վիճակումն էի ես: Փորձում էի մի բան գրել և գրում էի, բայց ոչ մի էջ ոչ մի տող չէր գոհացնում ինձ, պատռում էի գրածս, ինքս իմ դեմ զայրացած, նորեն գրում էի և միշտ միևնույնը, շաբաթներ և ամիսներ շարունակ:

Վերջապես, երկար ջանքերից հետո, ես հոգնեցի հոգեպես ու մտավորապես, կարող եմ ասել նույնիսկ ֆիզիկապես, այն աստիճան, որ սկսեցի զգալ մի տեսակ զզվանք դեպի գիր ու գրականություն ասված բանը:

Ժամանակս ինչ թե շատ օգտավետ գործադրելու համար որոշեցի հաճախել Սորբոնի ազատ դասախոսությունները, ոչ որպես իսկական ուսանող - այդ չէր սազիլ իմ տարիքին - այլ այնպես, որպես սիրող, դիլետանտ: Ընտրեցի երեք առարկաներ՝ պատմություն, փորձնական հոգեբանություն և... դարձյալ անխուսափելին... գրականություն, էականն այն է, որ ինձ համար պարզապես հաճելի էր նախաճաշից հետո օրվա մեջ երկու-երեք ժամ նստել մի կիրք հասարակության մեջ, ուր պակաս չէինք իմ հասակի մարդիկ: Հաճելի էր լսել ու հիանալ փրանսերեն լեզվի երաժշտությամբ ու նրբությամբ, մանավանդ, երբ դասախոս Իպոլիտ Տենի և Բրյունետեռի արժանավոր հաջորդ, ժամանակի լավագույն գրական ճննադատ էմիլ Ֆագիեն էր կամ հեղինակավոր պատմագիր Օլարը, այդ բարձրահասակ, վայելչակազմ և գեղեցկադեմ ծերունին:

Կար մի վոլբահասակ կաղ պրոֆեսոր: Մարթա էր նրա անունը: Երբեմն նրա դասախոսություններին էլ գնում էի: Այդ ժամանակ նրա դասախոսության նյութն էր լատինական պերճախոսությունը (eloquence latine): Ինձ համար ամենից համակրելի պրոֆեսորն այդ մարդն էր: Արտիստ էր բառիս լավագույն իմաստով, արտիստ իր ձևերով, շարժումներով, ձայնի ելևէջներով, դիմախաղով: Այս կամ այն կլասիկ հեղինակից հատվածներ արտասանելիս նա ոգևորվում էր ինչպես կրակոտ դերասան, մերթ նստելով, մերթ ոտքի ելնելով, բայց երբեք նյութից չէր շեղվում և ունկնդրին չէր

ճանճրացնում ավելորդմանրամասնություններով: Ես լսում էի նրան ոչ որպես պրոֆեսորի, այլ որպես տաղանդավոր դերասանի, որի խաղն ինձ պատճառում էր գեղարվեստական հաճույք:

Առհասարակ ամեն մի ֆրանսիացի բեմախոս, լինի նա միտինգային հռետոր թե պրոֆեսոր, պաղլամենտի անդամ թե վաստաբան, նախ և առաջ դերասան է: Նույնիսկ եկեղեցական քարոզիչները Բոսյուեի օրերից սկսած, դերասաններ են: Բայց միայն այդ չէ ֆրանսիացի բեմախոսի արժանավորությունը: Նա օժտված է զարմանալի ընդունակությամբ՝ ամենաչոր և ծանծրալի նյութն անգամ դարձնել գբաղեցուցիչ ու հետաքրքրական: Նա իր բնական հումորով, անսպասելի սրախոսություններով ու համեմատություններով գիտե ամենաչոր նյութին տալ գեղարվեստական ձև և երանգավորում:

— Չէի՞ֆ կամեճալ արդյոք լսել Դարսոնվալին,-դարձավ ինձ մի օր մի ռուսահայ երիտասարդ Հ. Ա.-ն անունով: - Այսօր նա խոսելու է Մարկոնիի նոր գյուտի, անթել հեռագրի մասին:

— Ուրախությա՛մբ, — ասացի ես:

Գնացինք ճշանավոր ֆիզիկոսի բանախոսությունը լսելու:

Ես նոր էի ծանոթացել Հ. Ա. -ի հետ, և նա առաջին վայրկյանից իսկ հետաքրքրել էր ինձ իր մի խանի գրեթե բացառիկ հատկություններով: Երեսուն տարին արդեն բոլորած, նա իսկի իրան համարում էր «հավիտենական ուսանող» և չէր վիրավորվում, երբ ուրիշներն էլ այդ ածականով էին դիմում իրան: Ոչ բարձրահասակ, նրբակազմ, եվրոպական կեցվածքը կատարելապես յուրացրած, նա նման էր ավելի մի ֆրանսիացու կամ իտալացու, քան հայի: Արդարև, ես կյանքումս շատ քիչ եմ հանդիպել հայերի մեջ այնքան բարեձև, բարեկիրթ և, միևնույն ժամանակ, այնքան բազմակողմանի զարգացած մեկին, որպիսին էր այդ «հավիտենական ուսանողը»: Տարեցը տասներկու ամիս նա թափառում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր, ամենուրեք ուսումնասիրելով բանգարանները, գրադարանները, այցելելով թատրոնները: Նա ուներ այնքան մտավոր պաշար գիտությունների վերաբերմամբ, որ, եթե մի քիչ պատրաստվեր, կարող էր որևէ առարկայի համալսարանական դասախոս լինել և ուր կամենար, որովհետև տիրում էր 3 — 4 եվրոպական լեզուների հավասար չափով: Եվ սակայն նա «հավիտենական ուսանողի» ածականը գերադասում էր պրոֆեսորի տիտղոսից:

Այդ օրն ինձ համար պարզվեց Հ. Ա.-ի մի ուրիշ ձիրքը, որի մասին մինչև այդ գաղափար չունեի: Երբ Դարսոնվալը ավարտեց իր բանախոսությունը, Ա-ն գրեթե ստիպելով ինձ տարավ բեմ և ծանոթացրեց նրա հետ:

— Պարոն Ա-ն ձեր հայրենակի՞ցն է, — հարցրեց ինձ անվանի ֆիզիկոսը:

— Այո՛, մենք միևնույն երկրից ենք, — պատասխանեցի ես:

— Խնդրում եմ, մի լավ կշտամբել նրան:

— Ինչո՞ւ համար, վարպե՛տ:

— Ծուլության, պարո՛ն, ծուլության և անհոգության համար: Ձեր հայրենակիցը բնությունից օժտված է գիտնականի ընդունակություններով: Նա նույնիսկ գյուտարարի ձիրք ունի, ինչպես այդ ցույց են տալիս նրա մի խանի հնարները: Եթե համառությամբ աշխատե, հավատացած եմ, որ մի օր էլ նա Մարկոնիի նման կտա ինձ մի նոր բանախոսության նյութ: Այո՛, այո՛, բարեկամս, — շարունակեց ֆրանսիացին, դառնալով Ա.-նին, — զուր եք շփոթվում ու կարմրում ամոթխած աղջկա պես: Դուք իսկապես չգիտեք գնահատել ձեր ձիրքը, որ ինձ համար անվիճելի է: Դա, եթե կամենամ, մի տեսակ ոճիր է ձեր կողմից գիտությունների վերաբերմամբ:

Արտասանելով այդ խոսքերը, ծերունին ներողություն խնդրեց և սկսեց իր ապարատները ժողովել:

Երբ մենք դուրս եկանք սրահից, ես հանդիմանեցի Ա.-ին, որ ինձնից միևչև այդ օրը թաքցրել էր իր փորձերը ֆիզիկայի ասպարեզում:

— Դատարկ բաներ են, — ասաց նա, ժպտալով, — Դարսոնվալը բարեսիրտ մարդ է և բարեկամաբար գերագնահատում է իմ աշակերտական աշխատանքները:

— Այնուամենայնիվ ես պահանջում եմ, որ դուք ինձ ծանոթացնեք այդ աշխատանքների հետ:

Եվ Ա.-ը բացատրեց: Հիշում եմ նրա երկու գյուտը, մեկը մի փոքրիկ մեքենա էր, որ տեղում գործածվող գազը ապահովում էր պայթումից, մյուսը մի գործիք էր ռազմանավային թնդանոթների նիշը ստուգելու և անփոփոխ պահելու համար: Մասնագետ չլինելով, իհարկե, չեմ կարող ասել, թե ինչ արժեք ունեին այդ գյուտերը, բայց երևի ֆրանսիական կառավարությունը մի բան տեսել էր նրանց մեջ, որ Ա.-ին տվել էր հեղինակի արտոնություն և պաշտոնական բյուջետեում հրատարակել էր նրա անունը:

Հ. Ա.-ն ինձ ցույց տվեց Գերմանիայի, Անգլիայի, նույնիսկ Ամերիկայի զանազան գործարաններից գրավոր առաջարկներ՝ իր գյուտերը վաճառելու: Ոչ մի առաջարկի նա չէր պատասխանել և չէր ուզում պատասխանել:

— Այդ անհերելի անհոգություն է, — ասում էի ես, — ապագայում կարող եք զղջալ: Բախտն ամեն օր չի ժպտում մարդուն:

Նրա հայրն եղել էր վաճառական և, մեռնելով, իր երեք որդիներին թողել էր բավական խոշոր ժառանգություն: Նա ամեն ամիս Բաֆվից կանոնավորապես ստանում էր իր բաժինը ժառանգական եկամուտների և ապրում էր անհոգ, բնավ չմտածելով ապագայի մասին: Եվ դա նրա դժբախտությունն էր, իր համար անհասկանալի ու անզգալի:

Քսան տարի անցած ես մի ձմեռային օր հանդիպեցի Հ. Ա.-ին Խորհրդային Միության բաղաքներից մեկում: Նա եկել էր այնտեղ երկու օրով և, լսելով իմ մասին, ուտպել էր ինձ հետ տեսնվելու: Նա արդեն ծերացել էր և զարմանալի կերպարանափոխվել, նախկին անփույթ ու զվարթ տաղանդավոր ու ծույլ, սրամիտ ու զվարճախոս, ընտիր ընկեր և պղերգ աշխատավոր մարդուց մնացել էր մի ստվեր: Մեր հանդիպումն եղավ շատ կարճատև, ընդամենը բառորդ ժամ: Նա ինձ ոչինչ չասաց իր ներկա վիճակի մասին, ես էլ ավելորդ համարեցի հարցնել: Ինձ համար ամեն ինչ պարզվեց հենց առաջին վայրկյանին, երբ մի ժամանակվա փրանտին տեսա մաշված ու զզզված վերարկուի մեջ:

Ես միայն փորձեցի խոսք բանալ մեր անցյալ բարեկամության մասին և առհասարակ հիշել Փարիզը: Բայց առաջին իսկ բառերից նա կտրեց իմ խոսքը, ասելով.

— Թողնենք, թողնենք, ես ամաչում եմ իմ անցյալից: Մնաք բարով:

Ասաց և, ձեռս ամուր սեղմելով, ուտպեց հեռանալ: Ո՞ւր է նա այժմ, չգիտեմ: Ես ափսոսում եմ, որ նա ներկա նյութական նեղ վիճակում չէր այն ժամանակ, երբ նրա բնածին ձիրքերն իրանց թարմության և ստեղծագործական ուժի մեջ էին:

Սովորություն է դարձել ասել, թե նյութական անապահովությունը մտավոր աշխատավորի ճակատագրական չարիքն է: Այս ընդհանրացած կարծիքը շատերն ընդունում են որպես անվիճելի ճշմարտություն և հաճախ նրան են վերագրում այս կամ այն աշխատավորի անբեղմնավորությունը, այնինչ հարյուրավոր օրինակներ կարելի է բերել աշխատանքի բոլոր ճյուղերից, ապացուցանելու համար, որ շատ դեպքերում չբավորությունն է եղել ստեղծագործության խթանը: Ճիշտ է, նյութական կարիքը երբեմն ստեղծագործ տաղանդի բնականոն զարգացման ու ծավալման դեմ հարուցանում է խոչընդոտներ, բայց բյուր անգամ ավելի դյուրին է այդ խոչընդոտները խորտակել ու անցնել, քան հաղթահարել հարստության չարիքն, այն է՝ մտավոր աշխատավորի մեղկությունը: Երբ մի ստեղծագործող կարիք չունի իր և իր մերձավորների վաղվա ապրուստի մասին մտածելու, երբ մանավանդ նա ունի ավելին — հարստություն, շատ անգամ թուլանում է նրա աշխատասիրության ու եռանդի ուժը, ուրեմն և ստեղծագործելու փափագը:

Երբ ես հարվածում էի Հ. Ա-ճի անվութությունը և պղերգությունը, նա ինձ պատասխանում էր մոտավորապես այս խոսքերով.

— Ինչո՞ւ համար աշխատեմ, բանի որ բախտս ինձ հովանավորում է, բանի որ ես ունեմ կյանքի բոլոր բարիքները վայելելու հնարավորություն, շնորհիվ իմ հայրական ժառանգության: Փառքի, համբավի, մարդկանց հիացման և երախտագիտությա՞ն համար: Իհարկե, հաճելի է լինել հարգանքի ու երկրպագության առարկա, բայց ես վստահ չեմ, որ մի օր կարող եմ դառնալ Էդիսոն կամ Մարկոնի, ինչո՞ւ ուրեմն երիտասարդ կյանքս մաշեմ լաբորատորիայում, ինչո՞ւ իմ ներկայի երջանիկ ժամերը զոհաբերեմ ապագայի կասկածելի փառքին:

Ահա ինչու ես հավատացի նրա անկեղծությանը, երբ ասաց.

— Ես ամաչում եմ իմ անցյալից:

***

Սորբոնի դասախոսություններեն ինձնից շատ մեծ ժամանակ չէին խլում — օրական երկու կամ երկուսուկես ժամ:

Այն էլ ասեմ, որ ես շատ էլ ճշտապահ ու ջանասեր ունկնդիր չէի և հաճախ բարվոք էի համարում տանը զբաղվել ընթերցանությամբ կամ անել ավելի հաճելին — շարունակել իմ սովորական թափառումները:

Այս անգամ գնում էի Փարիզի ավելի հեռավոր շրջակայքը — Վերսայլ, Ֆոնտենբլո, Անգիեն:

Վերսայլը տուրիստներին գրավում է Լյուդովիկոս 14-ի ոսկեզօծ պալատով և իր զմայլելի պարտեզով, մանավանդ այն օրերին, երբ բաց են թողնվում հուշակավոր շատրվանների ջրերը: Պալատին կցված է մի հարուստ թանգարան, ուր կան, ի միջի այլոց, Ֆրանսիայի պատմությանը վերաբերյալ շատ ճշտանվոր նկարներ և արձաններ: Մի անգամ երբ դիտում էի այդ թանգարանը, աչքիս ընկավ մի փոքրիկ կիսանդրի, որի տակ փորագրված էր՝ «Լևոն վեցերորդ, Կիլիկիայի թագավոր»: Ես կանգ առա ապշած. կյանքումս այդչափ հակագեղարվեստական և այլանդակ գործ չէի տեսել: Չգիտեմ ինքը թագավորն է եղել այդ աստիճանի տգեղ, թե անշնորհիք անդրիագործի երևակայությունն է նրան այսպես ստեղծագործել, համենայն դեպս միանգամայն իրավացի էր բովս կանգնած այն ռուս աղջիկը, որ հանկարծ բարձրաձայն արտասանեց. Боже мой! Как он похож на обезьяну…

Ֆոնտենբլոն հայտնի էր իր սմանչելի անտառներով և Ֆրանսուա առաջինի պալատով, ուր 1814 թվականին Նապոլեոնը ստորագրեց իր պատմական հրաժարականը:

Անգիե՞ը: Դա մի փոքրիկ բաղաք է կամ, ճիշտն ասած, ավան, որ չունի ոչ մի պատմական կամ ժամանակակից արժեք: Սակայն այն ժամանակ այնտեղ կար մի բան, որ Փարիզից շատ շատերին էր գրավում: Դա փոքրիկ լճի վրա գրահակիր նավի ձևով կառուցված ոչ շքեղ և ոչ գեղեցիկ մի տուն էր: Մի տուն, որ շատ տներ էր բանդել և շատ կյանքեր անբախտացրել: Կարճ ասած, դա խաղատուն էր, ուր թույլատրված էին ազարտ խաղի բոլոր տեսակները և որի մուտքը օրինական ձևով ապահովված էր ոստիկանական խույզերից ու արբավներից:

Ես լսել էի այդ տան մութ պատմությունը, բնական է, որ հետաքրքրվեցի նրանով: Պատահեց այնպես, որ երկու կովկասցի ծանոթ տիկիններ ինձ առաջարկեցին ընկերանալ իրանց: Նրանք շատ անգամ էին այնտեղ եղել իրենց բախտը փորձելու համար և ամեն անգամ որևէ ծանոթ տղամարդի հետ:

— Գիտե՛ք, — ասացին նրանք, — առանց կավալերի ուղեկցության մեզ համար ամոթալի է խաղատուն մտնելը:

Երկուսն էլ թե ծագումով և թե ամուսնությամբ իշխանուհիներ էին: Մեկը հազվագյուտ գեղեցկուհի էր, թեև բավական թառամած: Մյուսը գեր էր և վաղաժամ ճերմակած մազերով, բայց տակավին գրավիչ իր զարմանալի գեղեցիկ աչքերով և դեմքի թարմությամբ:

Երբ մենք մտանք խաղատան առաջին սրահը, ուր տեղի ուներ Petits chevaux կոչված խաղը, երբ ծանոթներիս հայացքն ընկավ կանաչ սեղանի վրա կրուպիեի թիով այս ու այն կողմ փոխադրվող ոսկե լուիդորներից. նրանց աչքերը շողշողացին: Իրարու երեսի նայելով, միաժամանակ և լուռ բաց արին իրենց քսակները:

Եվ սկվեցին խաղալ, լուիդոր լուիդորի ետևից ձգելով սեղանի վրա:

Ես մի կողմ հաշվեցի, որ չխանգարեմ նրանց. վաղուց գիտեի, որ խաղին չմասնակցողը ներվայնացնում է մասնակցողին, երբ կանգնում է կամ նստում նրա հով, մանավանդ երբ խորհուրդներ է տալիս: Բայց ես կարիք չունեի մոտիկից դիտելու, արդեն հեռվից նրանց շարժումներից ու դեմքերի արտահայտությունից կարելի էր անսխալ գուշակել բախտի խաղը, ոչ մի դրության մեջ և ոչ որևէ պայմանում մարդն այնքան ճշգրիտ ուսումնասիրելի չէ, որքան խաղի մեջ, մանավանդ երբ խաղն ազատ է: Այստեղ է, որ նա անգիտակցաբար դրսևորում է իր բնավորության ամենաթաքուն գծերը: Տեսաբանն առանձնապես հետաքրքրական է, երբ խաղացողը կին է: Ես նկատել եմ, որ խաղի ժամանակ այդ մարդն անհամեմատ ավելի հանդուրժելի, ավելի համբերողամիտ և սառնարյուն է, քան կին մարդը: Տարվելու դեպքում կինը դառնում է դյուրագրգիռ, բծախնդիր, գրեթե կռվարար: Նրա դեմքի գծերը փոխվում են, բթի պնչերը լայնանում ու դողդողում, պարանոցի ջղերը կապտում են ու ձգվում լարերի պես, ձայնը հնչում է սուր, անախորժ: Նա օգտվում է խաղընկերների ամենաչնչին սխալից, որպեսզի նրանց վերագրի իր բախտի թշնամությունը: Տանելու ժամանակ նա մարմնացած կեղծիք է: Նա ուրախ է և ուզում է իր ուրախությամբ վարակել ուրիշներին էլ: Նա տեղի-անտեղի ծիծաղում է, բրիջում է նույնիսկ շողոմորթում է դիմացինին, և թվում է, որ այդ պահին պատրաստ է ամենքի հետ գրկախառնվել…

Կես ժամ անցած իշխանուհիներն անհայտացան: Ես անցա հաջորդ սրահը: Այնտեղ նրանք նստած էին թղթախաղի սեղանի հով և chemin de fer էին խաղում: Նախանաշի ժամանակ էր. հրավիրեցի, մերժեցին: Խաղը հափշտակել էր նրանց: Ստիպված էի սպասել մի ամբողջ ժամ, թափառելով սրահից սրահ հուզված ու այլայլված ամբոխի մեջ: Վերջապես, նրանք երևացին: Գունատ էին ինչպես դիակ, ղողում էին սառցահարների պես: Հարցնելն ավելորդ էր. երկուսն էլ տարվել էին մինչև վերջին լուիդորը: Իհարկե, ես նրանց չկտամբեցի և ի՞նչ իրավունքով այդ անեի, սակայն այդպիսի դեպքերում կշտամբանքն այնքան ազդեցիկ չէ, որքան լռությունը:

Ձերմակահեր իշխանուհին ասաց մյուսին.

— Այժմ ես ի՞նչ պիտի պատասխանեմ խեղճ Նորայիս, առավոտյան ես նրան խոստացա այսօր անպատճառ նրա համար նոր կոշիկներ ու գլխարկ գնել:

Նորան նրա տասներկու տարեկան աղջիկն էր — միակ զավակը:

— Ամուսինս գրում է, թե մայիսից առաջ չի կարող ինձ փող ուղարկել, — շարունակեց նա, — կնշանակե երկու ամիս էլ պարտքով ապրիր. գոնե խելք ունենայի բնակարանիս տրիմեստրը վճարեի հետո խաղալ:

Իսկ ես այժմ բացի ձմեռվա մուշտակիցս ոչինչ չունիմ Mont de piete տանելու. — գանգատվեց թառամած գեղեցկուհին: — Եղբայրս գրում է, որ գյուղացիներն էլի ըմբոստացել են և չեն ուզում իրենց կապալավարձը վճարել:

Նրանք ավելի նողկանքի էին արժանի, քան կարեկցուցության, նրանք վատնում էին գյուղացու դառը էրտինքի վաստակը:

Մի շաբաթ անցած, մի առավոտ ես նրանց հանդիպեցի մեծ բուլվարների վրա: Շեղ խանութներից մեկի առջև կանգնած՝ նրանք մոլոր հայացքով դիտում էին ցուցափեղկի արդուզարդերը:

— Երկրակից, — դարձավ ինձ ճերմակահեր իշխանուհին, — դուք ունիք շատ հարուստ ծանոթներ, մի՞թե չեք կարող համոզել նրանցից մեկին, որ մեզ փոխարինաբար տա գոնե տասը հազար ֆրանկ: Տոկոսների մասին չենք սակարկիլ. որքան պահանջի, կտանք:

— Եթե այդ գումարն այսօր-վաղը չգտնեմ, — ավելացրեց նախկին գեղեցկուհին, — ստիպված կլինեմ ոճիր գործել:

Թե ինչ ոճիր - չասաց:

Ես, իհարկե, հրաժարվեցի այդ տեսակ միջնորդությունից, պատճառաբանելով, որ իմ հարուստ ծանոթները բոլորն էլ վերին աստիճանի ժլատ են ու ֆարասիրտ: Ես միայն թույլ տվեցի ինձ ասել.

— Տիկնիներ, որքան ինձ հայտնի է, երկուսդ էլ ունիք այնչափ եկամուտ, որ կարող եք առանց փոխառության էլ ապրել ուր կամենաք...

— Ուր կամենանք, այո՛, — պատասխանեց նախկին գեղեցկուհին, — գուցե Ռուսիայում կամ Կովկասում, բայց ոչ Փարիզում:

— Ինչո՞ւ:

— Ահա ինչու, — ասացին միաձայն երկուսն էլ, ցույց տալով շեղազարդ ցուցափեղկի վրա հաշակով դասավորված վերջին մոդայի գլխարկները և կանացի այլ ու այլ պերանիներ...

— Եվ դրա համա՞ր էիք դուք փորձում ձեր բախտր Անգիեհի խաղատանը:

— Իհարկե:

— Բայց չէ՞ որ, ինչպես ասում եք իներերդ, մինչև այժմ մի զույգ ձեռնոցների փող չեք տարել, ինչո՞ւ եք շարունակում խաղալ:

— Բախտը փոփոխական է, այսօր չենք տանում, մի օր կարող ենք տանել:

— Կարող է պատահել, — շարունակեցի ես դիտմամբ, որպեսզի ավելի մերձենամ նրանց մտայնությանը, — միայն ցավալի է, որ խաղացողի այդ սովորական հույսը շատ թանկ է նստում ձեզ ոչ միայն նյութապես, այլև, բարոյապես:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով, — գոչեց ճերմակահեր իշխանուհին:

— Այն, որ ձեր ինքնասիրությունը տառապում է:

— Ի՞նչպես:

— Ինձ ասացին, որ դուք երեք օր սրանից առաջ դիմել եք մի բոմվեցի հավթարդյունաբերողի, փոխառություն եք խնդրել, և նա մերժել է ձեզ:

Երկու իշխանուհիները շփոթվեցին ու կարմրեցին:

— Այո ճիշտ է, — ասացին նրանք, մի փոքր տատանվելուց հետո, — բայց ինչո՞ւ եք կարծում, որ մի նախկին խանութպանի, մի անկիրթ ռամիկի, մի լիրբ բուրժուայի մերժումը մեզ կարող է վիրավորել: Մենք արհամարհում ենք այդ տեսակ մարդկանց:

— Ցանկալի է գիտենալ, ձեր ամուսիննե՞րն էլ նույնը կասեին, եթե այդ անկիրթ ռամիկի, այդ նախկին մրգավաճառի մերժումը նրանք ստանային:

— Նրանք ավելին կանեին, — գոչեց նախկին գեղեցկուհին, — գոնե իմ ամուսինը կթքեր լրբի երեսին:

— Իսկ իմ ամուսինը, — ավելացրեց ճերմակահերը, — կապտակեր նրան, ինչպես մի անգամ ապտակեց մի հայտնի վաճառականի, որ համարձակվել էր նրա մուրհակը նոտարին հանձնելու:

Թուխն ու ապտակը, հարգելի իշխանուհիներ, — ասացի ես, չկարողանալով զսպել իմ հեգնանքը, — ծայրահեղ վրդովմունքի ամենագոհեմիկ արտահայտությունն է, իսկ արհամարհանքն արտահայտվում է լռությամբ և անտարբերությամբ: Ինձ շատ լավ հայտնի է, հարգելի տիկիններ, որ ազնվականությունն ատում է և թշնամաբար է վերաբերվում բուրժուազիային, բայց արհամարհանք ես չեմ տեսնում, որովհետև արհամարհողը երբեք չի դիմում արհամարհվածի օգնությանը, այն ինչ ես գիտեմ հարյուրավոր դեպքեր, երբ ազնվականի ավանդական և դասակարգային գոռոզությունը խոնարհվել է և խոնարհվում է խանութպանի գոհեկության առջև: Մի՛ վրդովվեք, հարգելի իշխանուհիներ, ես ձեզ ամենևին չեմ մեղադրում, որ ներկա նեղ դրության մեջ դիմել եք մի վաճխառուի օգնությանը, դա մի հանցանք չի, միայն թե…

— Մենք օգնություն չենք խնդրել, — զարմացած ընդհատեց խոսքս եերմակահեր իշխանուհին, — այլ փոխառություն:

— Մենք այդ անպիտանին առաջարկեցինք իբրև գրավական մեր կալվածքի մի մասը:

— Եվ նա այնուամենայնիվ մերժե՞ց: Ներեցեք, այդ ինձ. մի բիչ զարմացնում է:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ազնվականության հողային կալվածքն այժմ կապիտալիզմի ամենահամեղ յուղապատառն է: Այդպես օրինակ, Բաֆվի նավթարդյունաբերողների համար այժմ չկա ավելի հրապուրիչ երազ, քան տիրանալ ազնվականության հողերին և ոմանք նրանցից արդեն տիրացել են: Ցանկալի է գիտենալ այդ անպիտանն ինչո՞վ բացատրեց իր մերժումը:

— Նա ասում է՝ քերեք ձեր ամուսինների կողմից լիազորություն, հանձնեցեք ինձ ձեր կալվածային փաստաթղթերը, այն ժամանակ միայն ձեզ փող կտամ: Կարո՞ղ եք երևակայել ինչ ավազակ է, համարձակվում է մեր ազնիվ խոսքին չհավատալ:

Եվ պատկառելի տիկինները մի շարք ոչ այնքան փափուկ հիշոցներ ուղղելով բոլոր կապիտալիստների հասցեին մտան մեծ մագազինները մեկը, համածայն իրենց ամենօրյա սովորության:

Փարիզի շքեղ խանութները մի տեսակ գայթակղության տաճարներ են կանանց համար: Կինը ինչ հասակի ևս լինի, կամքի անսովոր զորություն պիտի ունենա, որպեսզի անտարբեր անցնի մի պճնազարդ վիտրինայի առջևով, մանավանդ, երբ նա Rue de la Paix-ի, համայն աշխարհին տոն ու հաճախ տվող այդ փոքրիկ փողոցի վրա է: Ես ինքս, կին չլինելով, բանի-բանի անգամ կանգ եմ առել և բռպեներով հիացել կանանց արդուզարդի ու գեղեցկության համար շռայլված մեկը մյուսից հրապուրիչ արվեստներով և բանի անգամ լսել եմ նայող կանանց հառաչանքները, որպես վիշտ, որ չեն կարող գնել իրանց հավանածը:

Ունիվերսալ մագազիններում առավոտից մինչև երեկո պտտող հարյուր հազարավոր բազմության մեջ կան շատ շատերը, որ գնողներ չեն: Նրանք եկել են իրանց կանացի հետաքրքրությանը հագուրդ տալու համար: Բաժանմունքից բաժանմունք անցնելով և բոլոր հարկերը բարձրանալով, նրանք վերցնում են գեղեցիկ իրերը, տնտղում են, փորձում են ամրությունը, նայում են գնին և ետ դնում, միշտ հառաչելով, միշտ անիծելով իրանց բսակի անզորությունը: Երբեմն հմայքը մթագնում է մեկի կամ մյուսի ուղեղը, և ահա գայթակղությունը պաշարեց թշվառին: Կան անուղղելի գողեր, որոնց հանցանքը համարվում է հիվանդություն: Կլեպտոմանիա է այդ հիվանդության անունը: Զարմանալի է, որ նրանով վարակված են գլխավորապես կանայք և այն էլ բուրժուա դասակարգից: Օրենքն ավելի ներողամտաբար է վերաբերվում այդ «հիվանդներին»: Այդերը գիտեն իրենց կանանց այդ թուլությունը, և շատ անգամ նրանք, որոնք հարուստ են, հրապարակորեն չհայտառակվելու համար, զգուշացնում են խանութպաներին.

— Բարեկամ, իմ կինը հիվանդ է, հիշողությունը թույլ է, կարող է հանկարծ մոռացմամբ մի բան վերցնել ու թաքցնել, բարի եղեք չհիշեցնել նրան այդ անմեղ սխալը, հաշիվն ուղարկեցեք ինձ, ես արժեքը կվճարեմ:

Եվ վճարում է. ի՛նչ փույթ, որ «սխալմամբ» գողացված իրը երբեմն ոչ մի բանի պետք չէ:

Մեծ մագազիններում ապրանքները թափված են խուրձերով ու բլուրներով, ինչպես ցորենն ու գարին մեզ մոտ: Թվում է, որ ոչ ոք չի հսկում նրանց, և յուրաքանչյուր անցորդ իր հավանած իրը կարող է վերցնել ու դնել գրպանը: Թվում է, բայց այդպես չէ: Կան հատուկ նշանակված գործակալներ, որոնց պաշտոնն է Արգոսի աչքերով հետևել հաճախորդներին, և այնպես, որ ոչ ոք չզգա կամ չնմարի նրանց ներկայությունը: Երբ գողությունը կատարվում է, գործակալն իսկույն ևեթ չի բռնում գողին, այլ թույլ է տալիս նրան դուրս գալ խանութից, անցնել մի կամ երկու վողոց, և հետևելով նրան, հանկարծ մոտենում է ու գլխարկը վերցնելով բաղաքավարի ձևով ասում է.

— Տիկին, կարծեմ, դուք մի փոքր առաջ «Գալըրի Լաֆայետ»-ումն էիք, ճի՞շտ է:

— Այո՛:

— Բարեհաճեցեք հետևել ինձ: Դիրեկտորը հրավիրում է ձեզ իր գրասենյակը:

Եթե տիկինը կամ օրիորդը համառի, առաջին պատահած ոստիկանական գործակալի տրամադրության տակ է:

Դիրեկտորի գրասենյակում գողին խուզարկում են, անմիջապես ձերբակալում են ու դատարանին հանձնում: Պատիժը սովորաբար լինում է մի քանի օրվա կամ շաբաթվա բանտարկություն և չորս հինգ հարյուր ֆրանկի տուգանք:

Այդպիսի դժբախտություն իմ ժամանակ պատահեց կովկասցիներից երեքի հետ: Մեկը պատկառելի տարիքով մի տիկին էր բուրժուա ընտանիքից: Մյուս երկուսը բույրեր էին, ինտելիգենտ հոր զավակներ, որ Փարիզ էին եկել կրթություն ստանալու: Տիկինը գողացել էր մի ոսկե ժամացույց, իսկ բույր օրիորդները երկուական մետաքսյա կանացի շապիկներ: Օրիորդների համար տուգանք վճարեց և երաշխավորությամբ նրանց բանտից ազատեց մի բարեսիրտ ֆրանսուհի, իսկ տիկնոջը դատարանում հաջողությամբ պաշտպանեց մի հայ աղջիկ, որ նոր էր ավարտել Փարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այն էլ ասեմ, որ այդ տաղանդավոր աղջիկը եղավ երկրորդ կին-փաստաբանը ամբողջ Ֆրանսիայում, մի լեհուհի օրիորդից հետո: Դժբախտաբար շուտով նա վախճանվեց թոքախտից, նա Թիֆլիսից էր, մի համեստ ընտանիքի զավակ...

XII

ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ԳԱՂՈՒԹԸ: ՀԻՆԸ ԵՎ ՆՈՐԸ: ԱՆԴՐԱՆԻԿԸ:

ԳՐԻԳՈՐ ՋՈՀՐԱԲԸ

Այն տարիները (1905 — 1910 թթ.), որոնց վերաբերվում է հիշողությունների ներկա մասը, Փարիզի հայ գաղութն այնքան ստվար և այնքան խայտաբղետ չէր, որքան այժմ, իմպերիալիստական պատերազմից հետո: Այժմյան գաղութը ոչ միայն իր խոշոր բանակով է տարբերվում անցյալի գաղութից, այլև բնութագրով: Ես իր ժամանակին կաշխատեմ տալ նրա նկարագիրը, իսկ առայժմ մի քանի խոսք անցյալի մասին:

Հայտնի է, որ դարերից ի վեր հայ գաղթականության, մանավանդ, հին ու հեռավոր գաղթականության (Հնդկաստան, Եգիպտոս, Եվրոպա) կարապետը վաճառական տարրն է եղել, և օտարները նրա բարոյական նկարագրով են գաղափար կազմել հայ ժողովրդի վարքուբարքերի, հոգեկան կարողությունների ու մտավոր ձգտումների վերաբերմամբ: Այդ մասին ես իմ գրական գործունեության ընթացքում գրել եմ մեկից ավելի անգամ, ուստի այստեղ ավելորդ եմ համարում ասածներս կրկնել:

Փարիզի նախապատերազմյան հայ գաղութը բաղկացած էր երեք տարրերից — վաճառականներից, ուսանողներից և արհեստավորներից, որոնց թվումն են հաշվում և արվեստագետներին:

Ես միանգամայն ծիծաղելի աշխարհայեցողության արդյունք եմ համարում այն ընդհանրացած կարծիքը, թե հայ վաճառականությունը հեռավոր երկրներում կուլտուրական դեր է կատարել: Խնդիրն այն է, թե ով ինչպես է ըմբռնում կուլտուրա ասված բանը: Եթե մի վայրկյան հաշտվենք այն տղայական կարծիքի հետ, թե մի մատուռ կառուցանելը, մի

տպաբան բանալը, մի բանի կրոնական կամ վաճառականական բովանդակությամբ գրքեր հրատարակելը կուլտուրական գործ է, ի՞նչպես կարող ենք մոռանալ այն ծանր ու տխուր հակակշիռը, թե օտարները հայ ժողովրդի բարոյական պատկերի մասին այնքան վատ և մեզ համար վերին աստիճանի վիրավորական գաղափար են կազմել միայն և միմիայն վաճառականության շնորհիվ: Այդ մասին ես ունեմ հարյուրավոր ապացույցներ և օրինակներ, որոնք կարող են մի ամբողջ հատորի նյութ դառնալ: Այստեղ ես կբավականանամ միայն մի նորագույն փաստով, որ ինքնըստինքյան ավելի բան բնորոշ է: Դեպքը տեղի ունեցավ սրանից ընդամենը հինգ-վեց տարի առաջ Հյուսիսային Ամերիկայում: Մի ինչ-որ հայ գործավաճառ, որի անունը դժբախտաբար մոռացել եմ, մի ամերիկյան դատավորի եղբորը վաճառում է խաբեբա գներով մի բանի գործեր: Երբ խաբեբայությունը բացվում է, և ամերիկացին ուզում է գործերը, երկու կողմերից ընդունված պայմանով, այն է 25 տոկոսի զիջումով վերադարձնել վաճառողին, հայ վաճառականի ախորժակը բորբոքվում է, և նա մերժում է ապրանքը ետ ընդունել, չբավականանալով 25 տոկոս շահով: Ամերիկացին առժամանակ լռում է: Գալիս է մի օր, երբ հայ վաճառականը պարտավոր է վերցնել ինչ-որ առևտրական վկայագիր, կառավարությունը մերժում է տալ նրան այդ վկայագիրը, այլ խոսքով ասած գրկում է նրան առևտրականի իրավունքից: Գործը դրանով չի վերջանում, հարց է ծագում, արդյոք հայերն առհասարակ ունե՞ն իրավունք առևտրով պարապելու կամ Ամերիկայում ապրելու, այլ խոսքով ասած, նրանք ճերմա՞կ ցեղ են, թե՞ սևամորթ: Հարցը դրվում է պարբերական մամուլի մեջ: Եվ ահա Ամերիկայի հայ վաճառականները հարկադրվում են իրենց բակերը լայն բանալ՝ հայոնի գիտնականներ, փաստաբաններ, նույնիսկ պատմաբաններ վարձելու, որ ապացուցանեն, թե հայերը սևամորթ կամ կարմրամորթեր չեն: Եթե այդ զարմանալի ճշմարտությունը չապացուցվեր, ամերիկյան ամբողջ հայությունը, որի 95 տոկոսը բանվորներ են, պետք է հալածանքի ենթարկվեր կամ վտարվեր Ամերիկայից:

Ա՞յս է արդյոք հայ վաճառականության կուլտուրական դերը օտար երկրներում, թե այն ողորմելի գրոշները, որ նա մերթ ընդ մերթ գոհում է այս ու այն «ազգային» կամ «հասարակական» նպատակով, այն էլ իր կաշին փրկելու համար:

Փարիզի հայ գոհարավաճառները և հնավաճառները իրենց բարոյական նկարագրով գրեթե նույնն են, ինչ-որ Ամերիկայի գործավաճառները կամ առհասարակ բոլոր վաճառականները — «կորզիր առանց միջոցների խտրության»: Կա մի թեթև տարբերություն հների և նորերի մեջ, այն էլ չգիտեմ հօգուտ որ կողմի: Հին սերնդի վաճառականը տակավին կրոնասեր է, աստվածավախ և դեռ չի դադարել մտածել իր «հոգու փրկության» մասին: Նա ամեն կիրակի եկեղեցի է գնում, մոմ է վառում, աղոթում է, «երկնային դատավորից» թողություն է աղերսում շաբաթվա ընթացքում իր գործած երևելի և գաղտնի մեղքերի համար: Ջատիկ և ջրօրհնեք օրերին չի մերժում օրհնություն բաժանող սեմնավորին իր տանն ընդունել և «աջահամբույր» տալ: Երբեմն նա եկեղեցուն էլ է մի բան նվիրում՝ մի արծաթե սկիհ, մի մոմկալ, մի գործ կամ դրանց նման մի իր, բայց պայմանով, որ պատարագիչ բահանան իր կիրակնօրյա բարոզում բարձրածայն հիշատակե այդ մասին «ի գիտություն հայ բրիստոնեից հավատացելոց»: Իհարկե, նա այդ պայմանը պարտավորական չի համարում, բայց պատարագիչը շատ լավ է ուսումնասիրել նրա հոգեբանությունը և գիտե, որ եթե չհիշատակի, չփառաբանի «ազնվազարմ» նվիրատվի «առատաձեռնությունը», չափազանց կվիրավորե նվիրատվին և կզրկվի նրա հովանավորությունից: Հայ բահանան հայ վաճառականի կամակատար գործակալն է, հայ վաճառականը հայ բահանայի կթան կովն է: Հոգեբանական տեսակետից նրանք Սիամի զույգն են, միասին ծնվել են և միասին էլ մեռնելու են:

Մի անգամ ես մի բան տեսա Փարիզի եկեղեցում, որի նմանը մինչև այդ օրը չէի տեսել ոչ մի տեղ: Պատարագը վերջացել էր, բայց ժամավորները չէին ցրվում: Եկեղեցում մեռել չկար, հետաքրքրվեցի՝ գիտենալ ի՞նչ արտառո կարգի բան է պատահել:

— Մի՞թե չգիտեք, — պատասխանեց իմ հարցին ամենայն լրջությամբ մի նորածև հագնված երիտասարդ զարմացած, — այսօր տոնվում է Մ... խան... Ն...-ի ծննդյան յոթանասնամյակը:

— Ո՞վ է այդ Ն...ն:

— Մի հայտնի գոհարավաճառ, պարսկահպատակ, ահա տեսնո՞ւմ եք, այն բարձրահասակ ծերունին է:

Եվ նա ցույց ավեց ինձ օրվա հերոսին, որը կանգնած էր իր կնոջ հետ բարեկամներով շրջապատված, կեղծ համեստության ժպիտը երեսին: Մարդը հոբելյար էր:

— Բայց ի՞նչ կապ ունի այդ մարդու ծննդյան տարեդարձը եկեղեցու հետ:

— Ի՞նչպես չէ, հարուստ է:

— Հետո՞:

— Պահանջել է, որ եպիսկոպոսը հանդիսավոր մաղթանք կատարե իր կյանքի հարատևության համար:

«Նա հարուստ է». ահա մի մոգական բառ, որ առանձին շեշտով ու զգացմամբ է արտասանում գաղթական հայը:

Մաղթանքը կատարվեց, եպիսկոպոսը դրվատեց գոհարավաճառի բխիստոնեական ջերմեռանդությունը, «մարդկային ու ազգային» առաքինությունները: Հանդիսականներն, իրարու հրելով ու բոթելով, շտապեցին շնորհավորել օրվա հերոսին և հետո գնացին նրա ճաշկերույթը վայելելու:

Պատահում է, որ այս կամ այն գոհարավաճառը կամ հնավաճառը հանկարծ ժամանակակից «ջենտլմենություն» է անում, մեկ էլ տեսար խելքին փչեց, վերցրեց իր կամ կնոջ անունից կանանց ադհատախնամ կամ կրթական ընկերությանը ուղարկեց մի գումար որպես նվեր: Ընկերության վարչությունը շտապում է այդ մասին շնորհակալությամբ ազդարարել ռամկավար, դաշնակցական կամ հնչակյան որևէ լրագրում, և խմբագրության են էլ չի վարանում իր գովասանական խոսքը պարգևել նվիրատվին: Իհարկե «ազգային» կոչված «գործիչները» չեն մոռանում մերթ ընդ մերթ անհանգստացնել այն ամեհիին, որոնց խակը որոշ ծանրություն ունի, գալիս են երեք-չորս հոգով և դրամ աղերսում այս կամ այն «ազգօգուտ» գործի համար: Այդ ժամանակ «բարեգործի» առանց այդ էլ մռայլ դեմքը մթագնում է, հոնքերը կիտվում են, և նա սկսում է ֆնճռատել ու պարսավել, անպատճառ պարսավել «ազգային գործերն ու գործիչներին», ցույց տալու համար, թե ինքն էլ մի բան գիտե, և թող դիմողները չկարծեն, թե մի տգետի կամ մի տխմարի մոտ են եկել: Հետո նա գանգատվում է, թե վերջին ժամանակներս առևտուրն ընկել է, «կրիզ է» և այլն և այլն: Բայց ազգային գործիչները շատ լավ են ճանաչում նրան, գիտեն, որ մարդը ստում է, և նրա օձիքը բաց չեն թողնում մինչև որ մի բան կորզեն: Եվ կորզում են:

Հին սերունդը, հավատալով «հանդերձյալ աշխարհի» գոյությանը և նրա «ահեղ դատաստանին», զգում է իր մեղքերը և երբեմն այն աստիճան, որ անձնական ապաշխարանքն ու աղոթքները բիչ է համարում իր մեղավոր հոգու փրկության համար և ահա մահվան անկողնում նրա աչքերի առջև ցցվում է Բեհեզբուղի ահեղ կերպարանքը: Սարսափը պաշարում է նրան, ի՞նչ անի, որ հանգիստ փչի իր հոգին: Միջոցը միևնույնն է և մնակն ամենուրեք, նախահայրերից ավանդված և սրբագործված — կաշառել աստծուն: Եվ նա կաշառում է, հազար ու մի զրկողություններով, անեծքներով, թուխ ու մրով վաստակած հարստության մի մասը կտակելով մի որևէ բարեգործական նպատակով կամ որևէ եկեղեցու: Թող սերնդե-սերունդ հիշատակվի նրա անունը, թող մանավանդ եկեղեցում օրհնվի ուխառաբանվի, գուցե դրանով նրա հոգին ազատվի տարտարոսի տանջանքներից: Ես չգիտեմ, ազատվում է նրա հոգին, թե չէ, գիտեմ, որ նրա անունը դրոշմվում է եկեղեցու ճակտին:

Այդպես է հին սերնդի վաճառականը: Նա ունի և մի ուրիշ հատկություն, ոչ պակաս բնորոշ: Ընտանեկան կյանքում նա, իհարկե, բռնակալ է, բայց ոչ իր հոր կամ պապի չափ պարզ, համարձակ: Թող նա լինի ծայր աստիճան կամակոր ու պնդագլուխ, բայց չէ՞ որ նա ապրում է եվրոպական միջավայրում, այն էլ Փարիզում: Չէ՞ որ իր հոր կամ պապի փափախի կամ ֆեսի փոխարեն գլխին ցիլինդր է դրել, չէ՞ որ որոշ չափով պիտի ենթարկվե միջավայրի բարքուվարքերին: Ի՞նչ կմտածի ֆրանսուհի խոհարարուհին կամ նաժիշտը, եթե նա բռունցքը բարձրացնե իր կնոջ ու զավակների գլխին, կամ գոռա նրանց վրա արևելյան կոպտությամբ և հայհոյե զազրելի որակումներով, չէ՞ որ կարող է դառնալ և՛ ծաղրելի, և՛ զազրելի: Բայց և այնպես նա անզոր է տակավին իր մեջ վերջնապես մեռցնելու պապերից

ժառանգած վայրենի բնազդը, և ահա նա իր մագիլները փաթաթում է թավշով: Նա չի ծեծում, բայց նախատում է, չի հայհոյում, բայց անիծում է, պահելով նրան հավիտենական ահ ու սարսափի մեջ:

Սխալ է ասել, թե իր ընտանիքի վերաբերմամբ նա ժլատ է, ընդհակառակը, նրա առատաձեռնությունը երբեմն զարմացնում է միամիտներին, որոնք չգիտեն իրերի խորքը թափանցել: Նա թույլ է տալիս իր կնոջը զուգվել և զարդարվել վերջին մոդայով, սեփական օթոմոբիլ ունենալ, թատրոններ ու օպերաներ հաճախել, ձիարշավներ գնալ, կուրորտներ այցելել և այլն: Այդպես է պահանջում միլիոնատիրոջ վարկն ու համբավը, այդպես է պահանջում մարդկանց ստորագույն բնազդը — նախանձը: Առհասարակ նախանձ շարժելը նրա բարձրագույն հաճույքն է: Նա հրճվում է, տեսնելով թույլերի և անաջողների անզոր չկամությունը:

Ես մի ֆանի անգամ ներկա եմ եղել, այսպես կոչված, հայկական տարեկան պարահանդեսներին: Ամենից շեղ համարվում է «Հայուհյաց ընկերության» երեկույթը: Արդարև, շեղ՝ բայց ոչ իր ներքին բովանդակությամբ կամ երեկույթ կազմակերպողների արտիստական հնարագիտությամբ և ճաշակով, այլ իր արտաքին շռայլությամբ, ուզում եմ ասել խանութպանային շուքով: Ոչ մի տեղ այնքան մեծարժեք ադամանդներ և զանազան գունավոր գոհարներ չեմ տեսնիլ, որքան այդ երեկույթներում: Պատճառը պարզ է - ներկա են խոշոր ու մանր գոհարավաճառների կանայք ու աղջիկները, որոնցից յուրաքանչյուրը մի-մի գոհարեղենի խանութային ցուցափեղկ է: Նման ցուցափեղկեր ես Բաքվի մի ժամանակվա երեկույթներում էլ եմ տեսել միայն մի տարբերությամբ. այնտեղ կանայք գոհարները դուրս էին բերում իրենց զզրոցներից, իսկ այստեղ իրենց ամուսինների կամ հայրերի խանութներից: Սակայն թե այնտեղ և թե այստեղ մարդ չգիտեր, որն է ավելի ծիծաղելի, ճաշակի կատարյալ գռեհկությո՞ւնը, թե՞ մեշչանական ցուցամոլությունը:

Մի փոքր այլ պատկեր է ներկայացնում նոր սերունդը: Նա արդեն բավականաչափ յուրացրել է ֆրանսիական բարքուվարքերի արտաքինը: Ասում եմ արտաքինը, վասնզի անհնարին է միանգամից ազատվել ատավիզմի օրենքներից: Ճշմարիտ է, նա ամեն կերպ աշխատում է ցույց տալ իր, այսպես ասած, եվրոպականությունը, ուզում եմ ասել կուլտուրականությունը, ստեպ-ստեպ կրկնում է առաջնակարգ թատրոնների անունները, այցելում է գեղարվեստական սալոնները, հաղվում է նշանավոր նկարիչների ու արձանագործների անունները, խոսում է նույնիսկ երաժշտությունից ու գրականությունից, բայց այդ բոլորի տակ դիտող աչքից չի վրիպում հոգեկան խեղճությունը կամ ամայությունը: Նոր սերունդը նույնչափ ցուցամոլ է, որչափ հին, գուցե մի ֆիչ էլ ավելի: Եթե հինը կարող էր պարծենալ իր ադամանդներով, իր առերես համեստությամբ, կասկածելի բարեգործությամբ, նորը հպարտ է իր օթոմոբիլով, իր վիլլայով, հայտնի կուրորտների այցելությամբ, երբեմն որսորդությամբ և մանավանդ իր օտարազգի կապերով կամ ծանոթություններով. վերջին դեպքում նա հրճվանքով հիշում է զանազան մարքիզների, դուքսերի, հուչակավոր դերասանուհիների, երգիչ ու երգչուհիների, պարուհիների, մոդային գրիզետկաների անունները: Ես ծանոթ էի մի մարգարտավաճառի հետ, որ այդ տեսակետից ամենատիպիկն էր, թեև մի ֆիչ կարիկատուրային: Նա իր հյուրերի ներկայությամբ ժամանակ առ ժամանակ վերցնում էր հեռախոսի փողը, որևէ համար է ասում և արտասանում, «Ալո, ալո, այդ դո՞ւք եք, իմ թանկագին բարեկամ, լսեցեք» և այլն: Եվ, փողը բերնից մի վայրկյան հեռացնելով, դառնում էր իր հյուրերին. «Արտաքին գործոց մինիստրի օգնականն է» կամ «Հոլանդիայի դեսպանն է» և այլն և այլն: Այդ մարգարտավաճառի մասին ինձնից ավելի մոտիկ ճանաչողներն ասում էին. «Մի՛ հավատաք, սուտ է այդ բոլորը, տելեֆոնի մոտ ոչ ոք չկա»:

Ուսանողների մասին երկար խոսելու հյութ չունեմ: Թվով նրանք այնքան փոքր էին և այնպես իրարուց բաժանված, որ չեմ կարող ասել, թե որևէ հասարակական արժեք էին ներկայացնում: Մեծամասնությունը թուրքահայեր էին և ռուսահայերի վերաբերմամբ իրենց չափազանց զուսպ էին պահում: Իրենց կողմից ռուսահայ ուսանողներն էլ մի առանձին հակում չունեին դեպի թուրքահայ ուսանողները, և առհասարակ երկու տարրերի մեջ զգացվում էր մի տեսակ սառնություն, նույնանման սառնություն չէր նկատվում ռուսահայ և վրացի ուսանողների մեջ. ընդհակառակը, նրանք աշխատում էին իրարու մերձենալ և կազմել որևէ միություն: Այս նպատակով, մի ֆանի եռանդուն անձանց ջանքերով կազմվեց «Կովկասյան» անունով ընկերության պես մի բան, որ դժբախտաբար շատ կարճ կյանք ունեցավ, այն է մեկ թե

երկու շատ անշուշ կովկասյան երեկույթ տալուց և ընդամենը մեկուկես տարի մի աղխատիկ ընթերցարան պահելուց հետո հայհայվեց:

Նման անջատություն տիրում էր և՛ փոքրաթիվ արհեստավորների ու արվեստագետների մեջ: Թե՛ մեկ, թե՛ մյուս տարի անձինք զբաղված էին յուրաքանչյուրն իր գլխի հոգսով, չկար որևէ արհեստակցական գիտակցություն կամ նույնիսկ իրարու բարոյապես աջակցելու փոխադարձ ձգտում կամ ցանկություն: Կային ինչ թե շատ շնորհիվով նկարիչներ, արձանագործներ, երգիչներ, բայց խոշոր տաղանդներ տակավին բացակայում էին, բացի օֆորտիստ Էգդար Շահինից, որ սակայն վաղուց գերազանցել էր, այսպես ասած, հայկական մասշտաբը, ուզում եմ ասել, գրեթե համաեվրոպական անուն էր վաստակել: Այժմյան տաղանդավոր արձանագործ Գյուրժանը, որ այն ժամանակ Հակովբ Գյուրջյան էր, տակավին աշակերտ էր և չափազանց ոգևորված Օգյուստ Ռոդենով, թեև նրա մի շարք գործերը, որոնց թվում և իմ դստեր Մարգարիտի կիսարձանն արդեն ընդունվել էին երկու սալոններում և արժանացել էին մամուլի ու այցելուների ուշադրությանը: Կային երկու խոշոր ապագա խոստացող երգիչներ՝ Մուղինյան, որ շուշեցի էր, և Շահմուրադյան, որ մշեցի էր: Երկուսն էլ սխանչելի տենորներ էին. Շահմուրադյանը դրամատիկ, Մուղինյանը լիրիկ: Առաջինը կոնսերվատորիան ավարտեց փառավոր ֆիներությամբ, սակայն չգիտեմ ինչու կարողացավ մնայն մի սեզոն երգել մեծ օպերայում, այնուհետև սկսեց թափառել որպես կոնցերտանտ և այժմ էլ թափառում է Փարիզից մինչև Եգիպտոս, Ամերիկա և Կալիֆորնիա, իսկ Մուղինյանը կոնսերվատորիան չավարտած թոռխտից վախճանվեց:

Խոսելով Փարիզի այն ժամանակվա հայ գաղութի մասին, ես չեմ կարող մոռացության տալ իմ այն հայրենակիցներին, որոնք ժամանակավորապես այցելուներ էին, գալիս էին մեկ կամ մի քանի ամսով որպես ճամփորդներ կամ գործավորներ: Այդ տեսակետից առաջին տեղն էին գրավում դարձյալ, այսպես որակված, ազգային գործիչները, ուզում եմ ասել դաշնակցականները, հնչակյանները և այլ կուսակցություններ, մանավանդ առաջիններ: Դրանց համար Փարիզը ժնևից հետո երկրորդ ուխտատեղին էր: Յուրաքանչյուրն ուզում էր անձամբ բախել Ժոռեսի կամ Պրեսանսեի դռները, մի բան, որ նրանց աչքում հավասար էր բարձրագույն հաղաքական գործունեության:

Հիշում եմ 1907 — 1908 թվականները, մանավանդ Թուրքիայի հեղափոխության նախօրյակը, հեղափոխության օրերը և հետհեղափոխության ամիսները: Դաշնակցականների և հնչակյանների շարքերում տիրում էր մի արտասովոր իրարանցում: Թվում էր, որ այդ մարդիկ ինչ-որ խոշոր գործ են կատարում կամ երևակայում են, թե կատարում են: Հաճախ աչքի էին ընկնում Ավետիք Ահարոնյանը, Խաչատուր Մալումյանը, Միքայել Հովհաննիսյանը և մի շարք ուրիշներ, որոնց չէի հանդիպում: Հիշում եմ մի օր, նստած էի Մինաս Չերազի հետ «Սուիթե» սրճարանի վարի հարկում: Հանկարծ աղմկալի խոսակցությամբ ներս խուժեցին մի բանի դաշնակցականներ, որոնց թվում էր և Խաչատուր Մալումյանը: Նրանց հետ էր և հայտնի թուրք հեղափոխական Ահմեդ Ռիզան: Նրանք շտապ քայլերով բարձրացան սրճարանի վերին հարկը և այնտեղ փակվեցին մի առանձին սենյակում:

— Եկել են Թուրքիայի ճակատագիրը որոշելու, - ասաց Մինաս Չերազը կծու հեգնությամբ:

Խե՜ղճ մարդ: Ես նկատեցի, որ նա իր հոգու խորքում վիրավորված և վշտացած է, որ ինքը մոռացության է տրված այդ մարդկանց կողմից:

Ճիշտ այդ օրերին էր, որ մի անգամ նույն սրճարանում ինձ մոտեցավ մոտ հառասունհինգ տարեկան մի սևահեր տղամարդ հաստ բեղերով, առնական, կարող եմ ասել, գեղեցիկ դեմքով ու թուրքահայ բարբառով հարցրեց.

— Դուք պարոն Շիրվանզադե՞ն եք:

— Այո, — պատասխանեցի ես:

— Թույլ տվեք ծանոթանալ — Անդրանիկ:

— Մեր անվանի հերոսը, — հարցրի ես ամենայն լրջությամբ:

— Ա՜հ, վազ անցեք, — գոչեց Անդրանիկն առանց կեղծ համեստության, — ես մի պարզ մահկանացու եմ:

Այսպես թե այնպես, ես ուրախ էի ծանոթանալ այն մարդու հետ, որի մասին այնքան լսել էի ու կարդացել: Ապագայում ես անախորժություն ունեցա այդ մարդու հետ ընդհարվելու, իմ մի սխալ հասկացված դարձվածքի պատճառով: Այդ մասին ես կխոսեմ առանձին, երբ ժամանակը կգա:

— Ի՞նչով կարող եմ ծառայել ձեզ, պարան Անդրանիկ, — հարցրի ես, հրավիրելով նրան մի բաժակ սուրճի:

— Ծառայության խնդիր չկա, — ասաց նա, — ես կփափագեի միայն, որ դուք որպես մեկն իմ հայտնի հայրենակիցներից, լսեիք իմ գանգատը դաշնակցության դեմ: Ես չափազանց վրդովված եմ:

— Ի՞նչ է պատահել, — հետաքրքրվեցի ես խորապես, որովհետև մինչև այդ ես Անդրանիկին համարում էի մոլեռանդ դաշնակցական:

— Մի գարշելի տրամադրություն, մի զազրելի ապերախտություն, չգիտեմ ինչպես որակել, — գոչեց նա, իր երկաթյա բռունցքը զարնելով մարմարյա սեղանին այնպես ուժգին, որ իր սուրճի դատարկ գավաթը վար ընկավ և փշրվեց:

Նա բացատրեց: Պարզվեց, որ դաշնակցությունը նրան Փարիզ է ուղարկել հարյուր հրացան գնելու, տալով նրան մի զինագործարանի հասցեն: Անդրանիկն այդ գործարանի հրացանները չի հավանել և ընտրել է մի ուրիշ գործարան և նրանից է գնել հրացաններ, կանխավ որոշված արժեքից մի ինչ ավելի ծախսելով: Այժմ դաշնակցության Ժնևի բյուրոն մերժում է տալ նրան գների տարբերությունը, և մարդն ընկել է նեղ դրության մեջ:

Բայց գլխավորն այդ չէ, — շարունակեց Անդրանիկն ավելի ու ավելի հուզվելով: — Փույթ չէ, որ այսօր ես նույնիսկ հյուրանոցին վճարելու միջոց չունեմ, փույթ չէ, որ ստիպված եղա դիմել Վառմշապուհ Խահանայի օգնությանը: Խնդիրն այլ է և ավելի կարևոր:

Նա պատմեց, որ ինքը եղել է մի հասարակ արհեստավոր — տոկար, (այսպես էլ ասաց — տոկար), սիրել է իր հայրենիքը, տառապել է թուրքահայ ժողովրդի տառապանքներով, զգացել է, որ մի բանով պետք է նրան օգտակար լինեի բայց չի գիտցել ինչպես: Ինքն իրանց հեղափոխական «հորջորջողները» մի օր նրան համոզել են ապստամբվել թուրք կառավարության դեմ և զենք բարձրացնել: Եվ նա ապստամբվել է, ժողովելով իր շուրջը մի խումբ անձնվերներ:

— Իհարկե, ես խենթ չէի, որ չգիտենայի, թե հայ ազգն իր բոլոր ուժերով ու կարողությամբ չի կրնար տապալել Սուլթան-Համիդին հզոր կայսրությունը, — ավելացրեց Անդրանիկը դառն հեգնությամբ, — բայց դաշնակցականներն ինձ հավաստիացրել էին, թե եվրոպական պետությունները, տեսնելով մեր ազատագրական շարժումը, կշտապեն մեզի օգնելու: Այս տեսակետից առանձին ջանքեր էին գործադրում մանավանդ Ժնևում պատսպարված շեֆերը: Նրանք շարունակ թելադրում էին ինձ կռվել, կոտորել, աղմկել, կրկնելով՝ «մեր ազգի փրկությունը մոտենում է, մի հուսահատվիր»: Եվ ես կռվում էի, կոտորում, սակայն ավա՜ղ, եթե ես մի տեղ կոտորում էի մի բանի տասնյակ ժանդարմներ, անդին, մի ուրիշ տեղ թրքական զորքերն ու համիդականները թալանում ու այրում էին տասնյակ գյուղեր ու կոտորում էին հարյուրավոր-հազարավոր խաղաղ գյուղացիներ: Իսկ օգնությունը Եվրոպայից հապաղում էր ու չէր գալիս...

Ես բերեցի Անդրանիկի ասածների ընդհանուր բովանդակությունն առանց մանրամասների, մի կողմ թողնելով նրա մի շարք ինքնուրույն որակումները դաշնակցության մասին: Երբ նա լռեց, ես առանց հեգնանքի և անկեղծորեն ասացի.

— Եվ դուք այնուամենայնիվ շարունակում էիք հավատալ, որ Եվրոպան պիտի գա մի օր, այո՞:

— Այո՛, հավատում էի, որովհետև այնտեղ հայրենիքում չկար մեկը, որ ինձ բացատրեր ճշմարտությունը: Ես մթության մեջ էի, ես մոլորված էի... ճշմարտությունն ինձնից թաքցնում էին:

— Իսկ ա՞յժմ:

— Այժմ: Ա՛հ այդ է, որ ես փափագ զգացի ձեզի ըսելու: Այժմ իմ աչքերը բացվել են հոս գալուցս հետո: Այժմ պարզ տեսնում եմ, որ այդ բոլորը սուտ է եղել, խաբեբայություն: Այժմ ինձ համար կասկածից դուրս է, որ ոչ մի եվրոպական պետություն անկեղծորեն շահագրգռված չէ մեզի իրական օգնություն ցույց տալու, ուր մնաց Թուրքիայի հետ կռվելու:

— Բայց ինչո՞վ եք բացատրում դաշնակցականների վարմունքը, ի՞նչ շահ ունեին նրանք ձեզ մոլորեցնելու:

— Շա՞հ, — կրկնեց Անդրանիկն այն կծու ու կսկծալի ծիծաղով, որ խորապես դառնացած ու վշտացած հոգու խորքից է գալիս: — Դաշնակցությանը գործ էր հարկավոր, իրական, շոշափելի գործ, թող այդ գործը լիներ մի ամբողջ ժողովրդի կործանումը: Նրա ջերմ ցանկությունն էր աղմկել, աղմկել, փոթորիկ բարձրացնել թեկուզ այդ փոթորիկը լիներ մի փոքրիկ, մի խաղաղ լճի մեջ: Նրան հարկավոր էր մի որևէ շարժում, մի որևէ դղրդոց այնտեղ, Թուրքիայում, որպեսզի թե՛ Կովկասում և թե՛ այստեղ Եվրոպայում գոռա ու աղաղակել. «Ահա տեսե՛ք, տեսե՛ք, ես գործ եմ կատարում, դրամ տվեք»: Տվեք, որ իմ շեֆերն ապրեն խաղաղ Եվրոպայի ամենագեղեցիկ վայրերում, և որպես դիպլոմատներ զորավորների դռները մաշեն ու ազգի ինքնասիրությունը ոտնատակ անեն:

Ինձ համար նորություն չէին Անդրանիկի ասածները դաշնակցության հոգի գործունեության մասին: Նորությունն այդ մարդու հուսախաբությունն էր. մի մարդու, որ իր ամբողջ կյանքը նվիրել էր մի անհուսալի գործի և այժմ տեսնում էր, որ ինքը խաբված է եղել: Պարզ է, որ մարդ հոգով տառապում էր:

Մեր խոսակցությունը երկար չտևեց: Անդրանիկը վրդովված էր անսահման և երբեմն իր որակումների մեջ դաշնակցության դեմ հասնում էր ծայրահեղության, չխնայելով ոչ մի ածական, իսկ ես չէի ուզում կրակի վրա յուղ թափել: Ահա ինչու, ես զգացի մի տեսակ հոգեկան թեթևություն, երբ այդ պահին սրճարան մտավ դաշնակցության նախկին շեֆ բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքյանը, նա, որ դառնացած բաժանվել էր իր նախկին ընկերներից ու գաղափարներից, թեև բավականաչափ խուսափում էր նրանց մասին վատ խոսելուց: Ես Անդրանիկին ծանոթացրի նրա հետ և ինքս շտապեցի հեռանալ: Պարզ էր, որ նրանք իրարու լավ կհասկանային, բան ես...

Շուտով վրա հասավ թուրքական հեղափոխությունը:

— Չէի՞ք կամենալ արդյոք այցելել երիտասարդ թուրքերի ճշանավոր պարագլուխ Ահմեդ Ռիզային և շնորհավորել նրանց հաղթությունը, — դարձավ մի օր ինձ Միհաս Չերազը, որ խաղաբագիտական ձևականություններին վաղուց էր ընտելացել և խստիվ հետևում էր նրանց:

— Ինչո՞ւ չէ, — պատասխանեցի ես, — բայց ասացեք, դուք համոզո՞ւմ եք, որ այդ այդպես կոչված հեղափոխությունը կարող է բարերար լինել թե՛ Թուրքիայի և թե՛ առանձնապես հայ ժողովրդի համար:

— Դժվար է ասել: Համենայն դեպս կարծում եմ, որ սահմանադրական կարգերն ավելի վատ չպիտի լինեին մեզ համար, քան կարմիր սուլթանի կառավարությունը: Մենք այնքան տանջվել ենք, որ մի այդպիսի անսպասելի փոփոխություն Թուրքիայի կյանքում չի կարող մեզ մի նոր հույս չներշնչել...

Մենք գնացինք Ահմեդ Ռիզայի մոտ: Նա կենում էր Լատինական արվարձանի անշուք հյուրանոցներից մեկում: Ես այդ մարդու հետ ծանոթ չէի, բայց գրեթե ամեն օր տեսնում էի նրան Soufflet սրճարանում: Ես շատ ուրախ եմ, որ այդ օրը նա հյուրանոցում չէր, և մենք թողնինք մեր այցետոմսերը:

Ուրախ եմ, որովհետև երբ վերադառնում էինք, Չերազն ասաց.

— Գիտեք, կրսեն, որ Ահմեդ Ռիզա մի օր ըսեր է, եթե Սուլթան Համիդ իր կենաց մեջ մի աղվոր բան ըրեր է, ատիկա հայերուն կոտորածն է:

— Հապա ինչո՞ւ այդ ինձ չասացիք նրա մոտ գնալուց առաջ, — գոչեցի ես վրդովված, — չէ՞ որ մենք պիտի սեղմեինք այդ մարդու ձեռը:

Ջերազը լռեց, զգալով իր սխալը:

Ապագայում, երբ ֆրանսիական լրագրներում կարդացի, որ Ահմեդ Ռիզան Կ. Պոլիս ժամանելով, իր առաջին պարտքն է համարել ներկայանալ Սուլթան Համիդին և նրա ձեռը համբուրել, ասելով. «Դուք մեր հայրն եք», պարզվեց, որ իրավ մեկը մյուսի ժառանգն է և որ դժվար է «Ժեռն թուրքերից» լավ բան սպասել: Այդպես էլ եղավ, ապաբախտ ժողովուրդը նորեն ենթարկվեց հալածանքների ու կոտորածների ոչ պակաս արյունռուշտ, բան սուլթանի օրերին:

Հիշում եմ դաշնակցականներին հեղափոխության առաջին օրերին Փարիզում և Ժնիցերիայում: Կլիներ շատ ծիծաղելի այդ մարդկանց ոգևորությունը, եթե չլիներ այնքան ցավալի ու ողբալի: Այն ի՜նչ պարծենկոտություն էր, որ պաշարել էր մեծից սկսած փոքրին: Ոմանք, որոնց անունները չեմ ուզում այստեղ հիշեի այն աստիճան էին հափշտակվել, որ կարծես թուրքական հեղափոխությունը իրանք էին կատարել: Կային այնպիսիները, որ այդպես էլ ասում էին, մինչդեռ ամբողջ աշխարհը գիտեր, որ նույնիսկ Ահմեդ Ռիզան չի ունեցել ոեալ մասնակցություն կատարված հեղափոխության մեջ, և վերջինի, բուն ղեկավարներն եղել են Էնվեր բեյը, որ գերմանական ծագում ուներ, Նազի բեյը, որ ալբանացի էր և Շեֆկեթ փաշան, որ արաբ էր:

Մի օր Արշակ Զոպանյանն ինձ ծանոթացրեց պոլսահայ հայտնի վիպագիր Գրիգոր Զոհրաբի հետ: Նա Փարիզ էր եկել անձնական գործերով: Դա մոտ 45 տարեկան մի տղամարդ էր, միջահասակ, ամրակազմ, լի բացառիկ եռանդով և պատանեկան աշխուժությամբ: Խրոխտ և կտրուկ լեզու ուներ, ինչպես և գրիչ: Թրքական նորընտիր պառլամենտի անդամ էր, ճշանավոր փաստաբան և տաղանդավոր հռետոր:

Ես Գրիգոր Զոհրաբին ճանաչում էի հեռուեն, կարդացել էի նրա գեղեցիկ պատմվածքները Կ. Պոլսի կյանքից: Ուղղությամբ ռեալիստ էր, ուներ շատ սիրուն ոճ, միանգամայն զերծ պոլսական սեթևեթանքից և ավելորդ ու հակագեղարվեստական պերանքից:

Զոհրաբն իմ մասին գրել էր մի, թե մի բանի ոգևորիչ հոդվածներ, չեմ հիշում Կ. Պոլսի որ հայ լրագրում այն ժամանակ, երբ Աբելյան-Արմենյան թատերախումբը մեծ հաջողությամբ խաղում էր այնտեղ մեծմասամբ իմ պիեսները — «Պատվի համար» և «Եվգինե»: Ես ուրախ էի ծանոթանալ Զոհրաբի հետ: Երբ փորձեցի խոսել իր երկերի մասին, նա ամենայն պարզությամբ և առանց շինծու համեստության ասաց.

— Ես ամատեռ (գրասեր) մըն եմ, ուրիշ ոչինչ:

Զոհրաբը լավատես էր թրքական հեղափոխության բարերար արդյունքների մասին, հույսեր ուներ թրքահայ ժողովրդի ազատագրման վրա: Նա լսել անգամ չէր ուզում Արշակ Զոպանյանի և իմ հոռետես առարկությունները: Արդեն աղմկալի մթնոլորտը շատ էր արբեցրել ամենքին, որոնց թվում և Գրիգոր Զոհրաբի նման լրջամիտ և խոհուն մարդկանց:

Բայց, ավա՜ղ, նա էլ Սիամանթոյի, Վարուժանի, Ակնունու և մի շարք մտավորականների պես իր լավատեսության գոհը դարձավ: Տասնումեկ տարի անցած, երբ ես Պոլսումն էի (1919 թվականի վերջին ամիսներին), լսեցի նրա ողբերգական վախճանի պատմությունը զանազան բերաններից տարբեր բովանդակությամբ: Թե ինչպես էր նա սպանվել, ինչպես էին մյուսները սպանվել, այդ մասին ոչ ոք չուներ ճշգրիտ տեղեկություն: Պատմում էին, թե Սիամանթոն, Վարուժանը և մյուսները աքսորվել էին Այաշ, իսկ Զոհրաբը մի ուրիշ, ավելի հեռավոր վայր, թե առաջիններին մի ինչ-որ դաշտում գնդակահարել են, իսկ թե որտեղ և ինչպես է սպանվել Զոհրաբը, հայտնի չէ: Զարմանալին այն է, որ Զոհրաբի նույնիսկ ձերբակալության լուրերը տարբերվում էին իրարուց: Առաջ եմ բերում զանազան վարիանտներից մեկը, որ, աչքի առաջ ունենալով Զոհրաբի ըմբոստ և համարձակ բնավորությունը, ինձ ավելի հավանական է թվում: Պատասխանատվությունը թողնում եմ պատմողների վրա:

Այն օրը, երբ ձերբակալվում են Զոհրաբի ընկերները, իրիկնադեմին նա գնում է թրքական ներքին գործերի մինիստր Թալաաթ բեյի մոտ, որի մտերիմ բարեկամն է եղել: Նա, որպես պառլամենտի անդամ, Թալաաթ բեյից բացատրություն

է պահանջում: Տեղի է ունենում բուռն վիճաբանություն: Թալաաթը խուսափում է Զոհրաբի հարցերին պատասխան տալուց:

— Մի մոռանաք, բե՛յ, որ դուք կարող եք պատասխանատվության ենթարկվել, — զոչում է Զոհրաբը զայրացած:

— Հետաքրքրական է, ո՞վ կարող է ինձ պատասխանատվության ենթարկել, — հարցնում է Թալաաթը հեգնանքով:

— Թեկուզ ես, որպես պառլամենտի անդամ, — պատասխանում է Զոհրաբը, ձեռը սեղանին զարնելով:

Վիճաբանությունը երկար չի տևում: Զոհրաբը զայրացած հեռանում է:

Հետևյալ օրն առավոտյան կանուխ նա ձերբակալվում է իր տանը և անմիջապես աքսորվում:

Ես փակում եմ այս տխուր էջը, ընթերցողիս ներվերս խնայելու համար:

XIII

ԱՐՄԵՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Մի չարաբախտ օր նա համալսարանից վերադարձավ գունատ ու հուզված և ասաց.

— Պապա՛, ես չեմ կարող ճնշություն տալ:

Եվ, գրերն ու տետրակները ձգելով մի կողմ, պառկեց բազմոցի վրա:

— Ինչո՞ւ, — հարցրի ես անհանգիստ:

— Ուղեղս չի գործում:

Նա իրավաբանական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող էր, ճնշություն պիտի տար երրորդին ու վերջինն անցնելու: Տասնուինը տարեկան գեղեցիկ, ընդունակ, աշխատասեր ու աշխույժ պատանի էր: Նրա ապագայի վրա ծնողները մեծ հույսեր ունեին:

Վերջին ամիսները տղան օր-օրի վրա նիհարում էր, դառնալով ինքնամփոփ և մտահոգ, թեև տակավին պահում էր իր բնածին հումորը և մարդկանց վատ հատկություններ ծաղակոծելու ընդունակությունը: Ի՞նչ էր պատահում — չգիտեինք: Նրա դեմքի աճող գունատությունը, նրա մերթ ընդ մերթ ամենաչնչին պատճառով գրգռվելը թե՛ մայրն ու թե՛ ես վերագրում էինք ներվերի հոգնածությանը հարատև պարապմունքներից: Կույր էինք կատարելապես. չէինք նկատում, որ դժբախտությունը թունավոր օձի նման լուռ ու անշշուկ սողում է մեր խաղաղ ու գրեթե երջանիկ կյանքի մեջ:

Ես խնդրեցի Ֆնդըզլյան ազգանունով մի երիտասարդ ու համակրելի բժշկի՝ տանել որդուս հայտնի նեվրոպատոլոգներից մեկի մոտ ճնշելու: Նա տարավ: Գիտնականը, որի անունը այսօր չեմ հիշում, ասաց, թե անհանգստանալու պատճառ չկա, թե պատանու ներվերը հոգնել են, թե անհրաժեշտ է, որ նա միաժամանակ թողնե իր զբաղմունքները, նույնիսկ գրեր կարդալը, հանգստանա և ամեն օր սառը բաղնիք ընդունե Շարկոյի սիստեմով:

Բայց մի ներքին ձայն ինձ ասում էի: թե պատանու դրությունն ավելի լուրջ ու ավելի սպառնալի է, քան ներվերի հոգնածությունը: Այդպես էլ եղավ, ո՛չ Շարկոն, ո՛չ երկամսյա անգործ թափառումները, ո՛չ մայրական անսահման հոգացողությունը հանգստի ու սնունդի մասին չօգնեցին հիվանդին: Քանի գնում, այնքան պատանին մոայլվում էր ու խորասուզվում ինքն իր մեջ: Մի օր նկատեցի, որ նրա գեղեցիկ աչքերի բիբերը շեղվել են:

Շուտով նա դարձավ միանգամայն լռակյաց և անուշադիր դեպի շրջապատը: Կարծես մի սև ձեռ փակել էր նրա հոգու, նրա մտքի, անգամ նրա լսելիքի դռները:

Մի օր նա մտահոգություն ունեցավ: Նա խոսում էր ինքն իրան, մերթ բարկացած, մերթ ծիծաղելով վիճաբանում էր ինչ-որ երևակայական հակառակորդների հետ: Մի ուրիշ օր նա պնդում էր, թե մեր սեղանատան առաստաղը ծակվել է, և այնտեղից նայում են հարևանները: Թշվա՜ռ, թշվա՜ռ պատանի:

— Ո՛չ, ո՛չ,- գոչեց մայրը հուսահատ ձայնով, — մեր զավակը կործանվում է, ասա, ի՞նչ պիտի անել...

Գիտեի՞...

— Պապա՛, — ասաց հիվանդը մի երեկո, հանկարծ արթնանալով մղձավանջից... ինձ վրա հույս մի դնիր, ես կորած մարդ եմ: Եթե առողջանամ անգամ, դարձյալ ինձ օգնել չեմ կարող:

Ի՞նչ պատահեց, ի՞նչպես նա այդքան պարզ ու պայծառ զգաց իր գլխին եկած չարիքը:

Այդ օրն եղավ ամենաթշվառ իմ կյանքում: Նա գիտեր, որ ես տառապում եմ, բայց մի՞թե չգիտեր, որ ինձ համար թանկ էր ոչ նրա օգնությունը, այլ առողջությունը, միմիայն առողջությունը, թեկուզ նա լիներ վատթարագույնն աշխարհի բոլոր զավակներից:

Ես չգիտեի անձայն արտասվել: Արցունքը խեղդում էր ինձ, ես հեծկլտում էի երեխայի պես: Շատ անգամ գիշերները բաց էի անում ննջարանիս լուսամուտը — գլուխս դուրս էի բերում դեպի գավիթ և այնպես էի լալիս: Ես չէի ուզում, որ հիվանդը կից սենյակից լսե իմ ձայնը:

Մենք ամեն կերպ աշխատում էինք թաքցնել նրանից մեր վիշտը: Բայց այդ անհնարին էր, գոնե ինձ համար: Կապարյա ծանրություն ընկել էր սրտիս վրա, ճնշում էր, ճնշում, և ես մնայն և միմիայն հեծկլտանքով կարող էի կրել այդ ծանրությունը: Ես սիրում էի Արմենին հոգույս ամբողջ կարողությամբ, որովհետև նա խելոք էր, որովհետև նա ժուժկալ էր, բարոյական, մաքուր ինչպես նորեկ ձյունն Արագածի գագաթին: Մտավորապես նա զարգացած էր ավելի, քան իր տարիքն էին թույլ տալիս: Նա խորապես հավատում էր սոցիալիզմի վերջնական հաղթությանը և մարդկության մերձակա երջանկությանը:

Ես ողբում էի ոչ միայն որդուս թշվառությունը, այլև կնոջս տանջանքը, և ավելի, քան իմը: Խե՜ղճ կին, ի՞նչով կարող էի նրան մխիթարել: Իր գոյության ամբողջ իմաստը նա պարփակել էր երեք զավակներիև միայն նրանց մեջ: Նրանց ապագա երջանկության հավատով էր նա ստոյիկյան համբերությամբ կրել կյանքի դառնություններն ու հայ գրողի հազար ու մի զրկանքները: Այժմ նա զրկվում էր իր երեք հույսերի մեկից: Նա ինձ նման բարձրածայն չէր [illegible]. նա իր վիշտը կրում էր լուռ ու անմռունչ, և ես զգում էի, որ նրա հոգու կսկիծն ավելի սուր է, քան իմը, երբեմն նա խուլ գիշերներին վեր էր կենում անկողնից, անլսելի ֆայլերով անցնում էր կից սենյակը, ուր պառկած էր հիվանդը, որ տեսնե՞ ննջած է նա, թե արթուն, տանջվո՞ւմ է արդյոք: Ապա վերադառնում էր լուռ ուրվականի պես և կրկին ու կրկին հանդարտիկ լալիս: Նա կարծում էր, թե ես ննջած եմ: Արդարև, ես ինձ ննջած էի ձևացնում, որպեսզի ավելի չհուզեմ նրան:

Հաճախ ես մտաբերում էի Օգյուստ Ռոդենի խոսքերը. «Երբ տեսնում ես մերձավորիդ ծանր տանջանքը և գիտես, որ ոչնչով չես կարող օգնել, ըո վշտի մեջ զգում ես մի տեսակ սփոփանք, այդ այն է, որ դու գիտակցում ես կյանքի խորհ իմաստը»:

Ես զգում էի կյանքի անիրավ ու դաժան փիլիսոփայությունը, բայց սփոփանք, ավա՜ղ, չէի գտնում: Անհուստ հետևյալ ստեղծագործողը խոսում էր իր մտքի խորությունից և ոչ դաժան կյանքի իրական իմաստությունից:

Ամառն արդեն սկսվել էր: Երրորդ անգամ մենք տեղափոխվեցինք Զվիցերիա, այս անգամ, իհարկե, ոչ նախկին տրամադրությամբ: Մի բանի ֆրանսիացի ու զվիցերիացի ականավոր բժիշկների խորհուրդով Արմենին տեղավորեցինք Լյուցերն կանտոնի մի սանատորիայում, «Կատր կանտոն» գեղեցիկ լճի մոտ, իսկ մենք մեզ համար ընտրեցինք դարձյալ Վո կանտոնի էժանագին պանսիոններից մեկը:

Ես տակավին վերջնականապես չէի կորցրել հավատս՝ մի օր թշվառ որդուս բուժված տեսնելու, ինչս ինձ խաբելով էի մաքառում վերահաս դժբախտության դեմ: Այդպես է մարդկային բնույթը, երբեմ մենք միանգամից չենք հաշտվում մեր գլխին եկած չարիքի հետ և մեր սնոտի հույսերը դնում ենք նույնիսկ անհեթեթ հրաշքների վրա, իսկ երբ ընտելանում ենք չարիքին, զգում ենք, որ այնման կարճատես և այնման թեթևամիտ ենք եղել:

Շաբաթը մեկ կամ երկու անգամ այցելում էի Արմենին: Ոչ մի փոփոխություն չէի տեսնում նրա ոչ միայն հոգեկանի, այլև ֆիզիկականի մեջ: Նա մեծ դժվարությամբ էր պատասխանում իմ սովորական հարցերին, ավելի հաճախ ամենևին չէր պատասխանում, և ես վախենում էի ծանծրացնել նրան: Ինքը ոչ մի հարց չէր տալիս ինձ ոչ իր մոր, ոչ եղբոր և ոչ էրոջ մասին: Կարծես, նրանք այլևս գոյություն չունեին նրա համար, այնչափ արդեն հեռացել էր իրական աշխարհից: Մի օր նա ինձ ասաց.

— Պապա՛, դուրս բեր ինձ այստեղից, տար մի ուրիշ պանսիոն:

— Ինչո՞ւ, — հարցրի ես ուրախ ու կես զարմանալով նրա անսպասելի պահանջից:

— Այս պանսիոնը թանկ է:

— Ի՞նչ գիտես, որ թանկ է, — շարունակեցի ես դիտմամբ, որպեսզի ավելի խոսեցնեմ նրան:

— Դու օրական երեսուն ֆրանկ ես տալիս, դա շատ է, շատ-շատ ֆեզ համար..

— Այդ մասին դու մի հոգար, սիրելի՛ս, դա իմ գործն է:

Նա լուեց ու իր պաղ հայացքը դարձրեց դեպի անորոշ տարածություն, դեպի ով գիտե ինչ մթություն: Ա՜հ, որքան կկամենայի թափանցել մտքով այն անհասկանալի աշխարհը, ուր դեգերում էր նրա տառապող հոգին:

Մի ուրիշ անգամ նա, հառաչելով, ասաց,

— Ի՞նչ տխուր է այստեղ...

Մենք նստած էինք սանատորիայի առջև տարածված փոքրիկ ու գեղեցիկ պարտեզի մի ծայրում, մի փայտյա կանաչ նստարանի վրա: Այդտեղից երևում էր կանտոնի զմայլելի տեսարաններից մեկը: Սանատորիան տեղավորված էր մեծ լճի ափին, որ մի կողմից ոչ այնքան բարձր լեռ էր, մյուս կողմից շատ բարձր ժայռ՝ դեպի լիճը: Զվիցերիացիք ասում էին, որ այդ լեռան վրա է Վիլհելմ Տելլը իր ընկերների հետ երդվել ապստամբության դրոշ բարձրացնել ավստրիական բռնակալության դեմ:

Ժայռն ուղղահայաց էր: Նրա ստորոտը ողողվում էր լճի ալիքներով: Նայեցի վար, և մի չար միտք հանկարծ հարվածեց ինձ: Ինչո՞ւ այդտեղ ես տեղավորել այդ կեսհիվանդանոցը, ինչո՞ւ պարտեզը շրջապատված չէ որևէ ցանկապատով:

Իհարկե, այդ հարցերը երեխայական էին, բանի որ ոչ մի վտանգ չկար, բայց ես այնուամենայնիվ վախեցա որդուս համար: Ով գիտե ինչ միտք կարող է ծագել նրա հիվանդ ուղեղի մեջ, երբ նա մենակ է: Այդ մտքի ազդեցությամբ ես վայրկենաբար վճռեցի վերցնել նրան և տանել մեզ մոտ: Բայց հարկավոր էր ստանալ նրա մոր համաձայնությունը, առանց որի ես ոչ մի բայլ չէի անում հիվանդի վերաբերմամբ:

— Նիցա, — ասացի նույն օրը երեկոյան կնոջս, — Արմենը սանատորիայում տխուր է, լավ չի՞ լինիլ, որ նրան բերենք մեզ մոտ: Միևնույն է, նա այնտեղ չի բժշկվում:

Կինս համաձայնվեց: Հետևյալ օրն իսկ Արմենին տեղափոխեցի պանսիոն, հակառակ բժիշկների խորհրդին՝ ընտանիքի մեջ չպահել նրան:

Օրն երկու անգամ ես նրա հետ զբոսնում էի: Տանում էի նրան շրջակա գյուղերը, մերձակա ոչ շատ բարձր լեռները, ձորերն ու անտառները: Չէի աշխատում ընդհատել նրա լռությունը, որ այնքան ծանր ու այնքան դառն էր ինձ համար: Թող ապրե իր մռայլ աշխարհում, միգուցե ավելի բորբոքեմ նրա մոքերը:

Մի օր, երբ երկար զբոսանքից հետո պանսիոն էինք վերադառնում, հանկարծ երկինքը սկսեց որոտալ, թեև անձրև չէր գալիս:

— Ա՜հ, — անցավ իմ մտքով, — երանի կայծակը զարներ ինձ ու այդ թշվառին և կործաներ երկուսիս էլ:

Գրեթե նույն վայրկյանին մեզնից հազիվ մի տասը քայլ հեռու կայծակն անհկարագրելի որոտով ընկավ հեռագրական սյուներից մեկի վրա: Օդի զորավոր շարժումից մենք ընկանք գետն ի վրա, բայց ես զգացի, որ վտանգից փրկված եմ: Ոտքի ելնելով, որդիս սկսեց վազել: Ինքնապաշտպանության զգացումը դեռ չէր մարել նրա մեջ. նա փախչում էր վտանգից: Մինչև պանսիոն հասնելն անձրևը մեզ թրջեց մինչև մեր ոսկորները:

Այս փոքրիկ դեպքը ես պատմեցի, ցույց տալու համար, թե երբեմն կյանքի մեջ ինչ տարօրինակ զուգադիպումներ են լինում: Արդյոք այդպիսի զուգադիպումներից չե՞ն առաջացել շատերը մեր նախապաշարումներից:

Այլևս Զվիցերիան կորցրել էր իր նախկին հրապույրն ինձ համար: Ես միանգամայն անտարբեր էի դեպի նրա բնական գեղեցկությունները և դեպի նրա կենցաղը: Իհարկե, մի ուրիշը կարող էր աշխատանքի մեջ մոռանալ իր վիշտը: Բայց ես այդքան ուժ չունեի, աշխատանքը փախչում էր ինձնից: Հիշում եմ, մի ամբողջ շաբաթ ջանացի մի խոշոր գործ սկսել, առաջին իսկ էջերից գործը թվաց ինձ իմ կարողությունից վեր: Փորձեցի գրել փոքրիկ պատմվածքներ, դարձյալ անհաջող: Գրում էի, ջնջում, իբրև թե փոփոխում, իբրև թե շտկում, միևնույնն էր, բան չէր դուրս գալիս: Տեղն է ասել, որ ես առհասարակ շատ մեծ դժվարությամբ էի գրում և այժմ էլ նույնն է, բայց այս անգամ, կարծես, ձեռս շղթայակապվել էր: Ես գրած թերթերս իրարու ետևից պատռում էի ու կատաղած դեն շպրտում: Ասում եմ կատաղած, վասնզի ճիշտ որ կատաղում էի, այնքան վրդովեցուցիչ էր ինձ համար սեփական ապիկարության գիտակցությունը: Մի՞թե ուղեղս ցամաքել էր:

Նույն անպտղաբեր օրերը շարունակվեցին և Փարիզում, երբ վերադարձանք այնտեղ հիսունօրյա բացակայությունից հետո:

Արմենի դրությունը բանի գնում, այնքան վատթարանում էր: Եկավ այն դժբախտ ժամանակը, երբ այլևս անհնար էր հոգեկան հիվանդին տանը խնամել: Նա մերթ ընդ մերթ կատաղության նշաններ էր ցույց տալիս: Նա մեզ չէր լսում, ժամանակ-անժամանակ վազում էր փողոց և խառնվում էր ամբոխին: Ես անմիջապես դուրս էի գալիս նրա ետևից և քայլ առ քայլ հետևում էի նրան. միգուցե որևէ վտանգավոր բան թույլ տա իրան կամ որևէ արկածի հանդիպե:

Նրա սովորական զբոսավայրն էր Լյուքսեմբուրգ պարտեզը, որ մեր բնակարանից հեռու չէր: Այդտեղ էր, որ առաջին անգամ տեսա այն ֆրանսուհի աղջկան, որով նա հափշտակված էր, ինչպես ինձ ասաց նրա ընկերներից մեկը, իրավաբանական ֆակուլտետի մի հայ ուսանող:

Աղջիկը մոտեցավ Արմենին, ինչ-որ ասաց նրան, ինչ-որ լսեց նրանից և շուտով հեռացավ չափազանց տխրած դեմքով և գլուխն երերալով: Նա բավական սիրուն էր, շատ երիտասարդ, ոչ ավելի քան 18 տարեկան: Հագնված էր համեստ, բայց փարիզուհու ժամանակակից ոճով ու ճաշակով: Նա թևի տակ բռնած ուներ մի բանի գրքեր ու տետրակներ: Կռահեցի, որ Սորբոնի ուսանողուհիներից էր, և ենթադրությունս ճշտվեց:

— Դուք ճանաչո՞ւմ եք այդ աղջկա ծնողներին,- հարցրի ես մի օր Արմենի ընկերոջը:

— Ճանաչում եմ, բայց ծանոթ չեմ:

— Ովքե՞ր են:

— Հայրը պրոֆեսոր է, եղբայրը կարծեմ ուսանող: Պարզվեց, որ աղջիկն իր կողմից նույնպես հափշտակված է Արմենով, բայց թե որ աստիճանի է հասել փոխադարձ հափշտակությունը, չկարողացա գիտենալ: Ինձ հայտնի էր միայն Արմենի բարոյական արտասովոր մաքրությունը… Կյանքի ապականության համար նա տակավին մնացել էր անծեռնմխելի…

Շուտով այդ աղջիկը չմացավ հորիզոնից. այլևս ես նրան չէի տեսնում: Եե՛ղճ պատանի. դա եղավ նրա կյանքում առաջին և վերջին հափշտակությունը կնոջով:

Ես նրան տեղավորեցի Փարիզի շրջակայքում մի մասնավոր ընտանիքում, ուր կային մի քանի նման հիվանդներ: Ես չունեի միջոց նրան մի որևէ սանատորիայում տեղավորելու:

Ես դադարել էի հաճախել Սորբոնի դասախոսությունները: Մի պահ մտածեցի, արդյոք ժամանակը չի՞ Կովկաս վերադառնալ երեք տարի բացակայելուց հետո: Բայց կային մի քանի լուրջ պատճառներ, որոնք խանգարում էին մեզ այդ անելու: Նախ Արմենի հիվանդությունը: Մեզ համար շատ ծանր էր նրան հայրենիք բերել իր ներկա դրության մեջ: Մի քանի պրոֆեսորներ հավատացնում էին, թե նրա ուղեղը տակավին վերջնապես խավարված չէ, թե կարող է առողջանալ, թե նման դեպքեր շատ են եղել, և վերջ ի վերջո հիվանդները փրկվել են: Եվ մեզ համար ավելի դյուրին էր կառչել այդ սնոտի հավատին, քան լսել մի ռուս բժշկի համարձակ կարծիքը, թե հիվանդի համար փրկություն չկա: Ֆրանսիական մտայնության ծայրահեղ նրբազգացություն, որ երբեմն թույլ չի տալիս դառը ճշմարտությունը մարդու երեսին ասել միանգամից և խորտակել նրա պատրանքը: Երկրորդ պատճառը Ռուբենի և Մարգարիտի ուսումն էր: Մնում էր երկու տարի ևս, որ նրանք ավարտեին, մեկը Լիեժի համալսարանը, մյուսը Ժենեվոնի լիցեյը:

Եվ այդպես, որոշեցինք այդ երկու տարիները էլ անցկացնել Փարիզում: Տարտամ գրական փորձերի և հոգնած մտայնության տարիներ: Ժամանակիս մեծ մասը վատնում էի դրսերում, ինչս ինձ հուսադրելով, թե կյանք եմ ուսումնասիրում և դա ինձ մի օր պետք կգա:

XIV

ՀԱՃԵԼԻ ԵՎ ԱՆԱԽՈՐԺ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Մեծ մասամբ կարդում ու գրում էի սրճարաններում, երբ գրելու պահանջ էի զգում: Գրեթե այնտեղ գրեցի երկու պիես «Կործանվածը» և «Ավերակների վրա» ու մի քանի պատմվածքներ:

Գարնան և ամառվա ամիսներին օր չէր անցնում, որ չհանդիպեի մի նորեկ կովկասցու: Soufflet սրճարանում ես դարձել էի մի տեսակ կենտրոնական դեմք և տեղեկատու: Ծանոթ թե անծանոթ ամեն ոք այնտեղ էր գալիս ինձ տեսնելու:

Մի օր հանդիպեցի «Մշակ»-ի այն ժամանակվա խմբագիր Ալեքսանդր Քալանթարին: Նա Փարիզ էր եկել որպես գյուղատնտես՝ ինչ-որ համագումարում մասնակցելու: Զնայելով մեր երբեմնի փոխադարձ սառը հարաբերություններին, ես այդ մարդուն հարգում էի: Տեղն է ասել, որ ես նրան ճանաչում էի շատ վաղուց, դեռ յոթանասնական թվականների վերջերից և ոչ միայն իրան, այլև իր յոթ եղբայրներին և ծնողներին, որոնց ամբողջ Բաքուն անվանում էր «հայրիկ» և «մայրիկ»: Հարգում էի Ալեքսանդրի կիրթ, վերին աստիճանի մեղմ և համբերատար բնավորությունը: Որպես հրապարակախոս նա, իհարկե, Գրիգոր Արծրունի չէր, ուզում եմ ասել չուներ նրա գրչի թափն ու ավյունը: Բայց դրա փոխարեն նա օժտված էր ոչ պակաս արժեքավոր հատկություններով, որոնցից մեկը հազվագյուտ էր այն ժամանակվա հայ հրապարակախոսների միջավայրում, այն է՝ անսահման զգաստություն բանակռվի մեջ: Նա երբեք իր հակառակորդների վերաբերմամբ չէր գործածում անզուսպ լեզու, երբեք չէր վիրավորում նրանց անձնավորությունը կամ անհատական հետիմ կյանքը: Հակառակորդներն այդ աննման հատկությանը ճգնում էին նսեմացնել, անվանելով նրան երկչոտություն: Բայց ես, որ ճանաչում էի Ալեքսանդրի ծնողներին և իմ պատանեկան տարիներն ապրել էի նրանց հարևանության մեջ Բաքվում, չնայելով մեր փոխադարձ սառնությանը, հակված էի նրա

զգաստությունը վերագրել իր ընտանեկան կրթությանը: Այն ժամանակվա Բաքվի նման ասիական կոշտ ու կոպիտ միջավայրում «հայրիկի» և «մայրիկի» բարի ու մեղմ բնույթը և ընդհանուրի կողմից վայելած հարգանքը բացառիկ երևույթներ էին:

Մեր երկարամյա ծանոթության ընթացքում ես միայն մի անգամ Ալեքսանդր Քալանթարին տեսա կատաղության չափ վրդովված: Եթե չեմ սխալվում, Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերության անդամների տարեկան ընդհանուր ժողովն էր քաղաքային ինքնավարության դահլիճում: Նիստը բացվելուց առաջ, չգիտեմ ինչ առիթով, նրա և Ավետիք Արասխանյանի մեջ ծագեց բուռն վիճաբանություն: «Մուրճ»-ի խմբագիրը «Մշակ»-ի խմբագիր Քալանթարից պակաս մեղմաբարո մարդ չէր: Բայց հանկարծ, միանգամայն անսպասելի, երկուսն էլ միաժամանակ բռնկվեցին և սկսեցին, թեև ոչ այնքան բարձր ձայնով, իրարու հասցեին ուղղել այնպիսի լուտանքներ և փողոցային հիշոցներ, որոնց նմանը ես երբեք, երբեք ոչ մեկի և ոչ մյուսի բերանից չէի լսել:

— Ա՛յ տղա, — գոչեց Ղազարոս Աղայանը, — զոկերը գժվեցին:

Եվ, մեջ ընկնելով, նա իր հուժկու ձեռներով բաժանեց կռվողներին:

Ես հաճույքով Ալեքսանդր Քալանթարի հետ անցկացրի մի քանի ժամեր: Նա ինձ հաղորդեց մեկը մյուսից ավելի տխուր լուրեր:

— Այժմ դաշնակցության դեմ կազմվել է թուրքերի մուսաֆաթը, — ավելացրեց նա դառը հեգնանքով, — և երկու ազգությունների դժոխային հարաբերությունները սպառնում են ավելի բարդանալ: Խորհուրդ եմ տալիս այժմ Կովկաս չվերադառնալ, որպես գեղարվեստական անբռնազբոսիկ գրող դուք ունեք իրավունք այստեղ մնալու հանուն ստեղծագործող մտքի ազատության...

Մի օր էլ հանդիպեցի մի ժամանակվա «Тифлиский вестник» անունով լրագրի խմբագիր Կոնստանտին Բեհբությանին: Ութսունական թվականների սկզբին այդ լրագրում տպվել էին իմ մի քանի անստորագիր թղթակցությունները Բաքվից: Իշխանական ծագում ուներ մարդը և չէր տատանվում պարծենալ իր ազնվական տիտղոսով, չնայելով իր մտքի բավականաչափ սրությանը: Իր ժամանակին նա, ոչ առանց ձիրքի, թե՛ բերանացի և թե՛ գրչով կռվել էր ցարերի կովկասյան աժանների դեմ: Վերջին նրա պայքարն եղավ հայտնի խուլիգան, պրովոկատոր հայակեր բանաստեղծ Վելիչկոյի դեմ, որ «Кавказ» պաշտոնական լրագրի խմբագիրն էր... Այնուհետև նա լռեց, և այժմ ծառայում էր Ալեքսանդր Մանթաշյանի մոտ չգիտեմ ինչ պաշտոնով: Մի անգամ ես նրա հետ ընդհարվել էի Թումանովների «Новое обозрение» լրագրի խմբագրատանը: Այնուամենայնիվ ես հարգանքով ընդունեցի նրա բարևը: Օտարության մեջ հայրենակիցները դյուրությամբ են մոռանում իրանց անցյալ փոխադարձ գժտությունները, մանավանդ, եթե հակառակորդները գիտեն կյանքին նայել մի քիչ փիլիսոփայական աչքերով:

Մի ուրիշ իշխան Ալ... Ար... Էրկ... անունով, որին նույնպես հանդիպեցի Souffet սրճարանում, քմահաճույքի և ինքնաերկրպագման մարմնացումն էր: Նա այնպես էր պահում իրան, որ կարծես, Մարսից էր վայր ընկել: Նա ոչինչ և ոչինչ չէր հավանել Ֆրանսիայում և զարմանալի ապլոմբով քննադատում և պարսավում էր, անպայման պարսավորում ամեն ինչ, որ տեսել էր և տեսնում էր: Պետք է ասել, որ այդ տիպի մարդիկ ինձ ծանոթ էին վաղուց: Ռուսիայից, մանավանդ Կովկասից եկողների մի որոշ մասն այդպես էր, և ես նրանց չէի սիրում, որովհետև կեղծում էին միամիտներին ցույց տալու համար, թե ավելի գիտեն և ավելի նուրբ ճաշակ ու մտավոր պահանջներ ունեն, քան ուրիշները: Եթե այդպես լիներ, այդ մարդիկ մի անգամ Ֆրանսիան ու Փարիզը տեսնելով, այլևս ցանկություն չէին ունենա տեսնելու, մինչդեռ գրեթե ամեն տարի նրանք վազում էին այնտեղ:

Շատ տիպիկ և ուսումնասիրության արժանի էր մեկն իմ հայրենակիցներից: նրա անունն էր Հովսեփ Գուլիշամբարով: Նա եկել էր Պետերբուրգից Փարիզում առմիշտ հաստատվելու համար:Պաշտոնաթող չինովնիկ էր «իսկական պետական գաղտնի խորհրդականի» տիտղոսով և մասնագիտությամբ ինժեներ-տեխնոլոգ: Տակավին առողջ ու կայտառ ծերունի էր մոտ վաթսուն տարեկան: Պաշտոնական գործուղումներով շատ ճամփորդած մեկն էր թե՛ Ռուսիայում և թե՛

Եվրոպայում և Ամերիկայում: Մի ժամանակ ցարական կառավարությունն, առանց նրա հետ կանխավ խորհրդակցելու, Բաքվի և Գրոզնիի նավթահանքերի վիճակը չէր կարգագրում: Բոլոր սպեկուլյանտները նրան ճանաչում էին ու երկրպագում, սակայն ֆչերին էր նա ցույց տալիս իր հովանավորությունը: Բացի ռուսականներից, նա պարգևատրված էր գրեթե բոլոր եվրոպական պետությունների շքանշաններով: Փարիզ եկավ թե չէ, նրա առաջին գործն եղավ նոր հագուստեր պատվիրել և յուրաքանչյուր հագուստի օձիքին կպցնել ֆրանսիական պատվո շքանշանի կարմիր լաթի կտորը: Նյութապես միանգամայն ապահով մարդ էր, ուներ իր աստիճանին վայել թոշակ և կլորիկ գումար բանկում: Լատինական արվարձանում նա իր համար վարձեց մի կոկլիկ բնակարան և ինքը կահավորեց իր ճաշակով:

Թվում էր, թե մարդն ամեն ինչ ունի և կարող է իր ծերության տարիներն անցկացնել անհոգ:

— Գիտե՞ք, — ասաց նա ինձ հանկարծ մի օր,- ես ուզում եմ իմ կյանքին վերջ տալ:

— Ինչո՞ւ, — հարցրի ես անտարբեր, կարծելով, թե մարդը կատակ է անում:

— Հենց այնպես, ձանձրացել եմ: Ձեզ անհավատալի է թվում ասածս, բայց ես լուրջ եմ ասում, ես այլևս ապրել չեմ ուզում:

— Բայց պատճա՞ռը:

— Պատճառն իմ անցյալն է: Նսեցեք, երբ ես նայում եմ ետ, դեպի իմ անցած ուղին, ինքս ինձնից զզվում եմ:

— Այդ դիրքը, այդ աստիճանները և այդքան շքանշաններ ստանալուց հետո՞:

— Մի ծաղրեք ինձ ձեր մտքում, գիտեմ, որ այդ բոլորը ձեզ համար դատարկ բաներ են, որովհետև դուք գրող եք, իսկ ձեզ նմանները ինձ նմաններին չեն սիրում և ունեն իրավունք չսիրելու: Բայց լսեցեք, քառասուն տարի միտք ու հոգի եմ մաշել և ծառայել արքունի ցարերի կառավարությանը և զանազան սպեկուլյանտների գրպանին: Ինչո՞ւ: Որովհետև ես հիմար էի, այո՛, այո՛, հիմար. մի՛ հակառակեք: Իմ ամբողջ կյանքում ես ունեցել եմ միայն մի բիչ թե շատ լուսավոր վայրկյան: Այդ այն տարիներն էին, երբ, դուք պիտի հիշեք, ես Բաքվում հրատարակում ու խմբագրում էի մի փոքրիկ լրագիր...

— «Бакинские известия», թե՞...

— Դրա նման մի բան: Ես այսօր զղջում եմ, որ այնտեղ չմնացի, գոնե կարող էի ասել, որ ես իմ ուժերի չափ ծառայում եմ հասարակական շահերին, որ ես այսպես թե այնպես, մի միավոր էի և ոչ այսօրվա զրոն: Նսեցե՛ք, ես անկեղծ եմ ասում, ես նախանձում եմ ձեզ, որ ծառայել եք և ծառայում եք մեր ազգի կուլտուրական կրթության: Այո՛, այո՛, դուք ունիք իրավունք պարծենալու, որ զուր չեք վատնել ձեր կյանքը, իսկ ես ոչ...

Նա լուեց և այլևս ոչինչ չասաց:

Այդ օրից նա ամեն երեկո ինձ հանդիպելիս նույնն էր կրկնում՝ «Պիտի վերջ տամ իմ կյանքին»: Ես կարծում էի, որ նա խելագարվում է: Բարեբախտաբար, այդ չպատահեց: Ձպատահեց և ինքնասպանությունը: Շուտով նա թողեց իր կոկլիկ բնակարանը, տեղափոխվեց Կովկաս: Ձեմ հիշում որքան ժամանակ անցած՝ կովկասյան լրագրներում կարդացի նրա մահվան ազդարարությունը և մի փոքրիկ լուր, թե հանգուցյալը իր թանկագին գրադարանը կտակել է հայոց բարեգործական ընկերությանը...

***

Հիշում եմ երկու անախորժ ծանոթություններ:

Մի երեկո ինձ մոտեցավ Գոգոլի Դերժիմորդայի կերպարանքով մի մարդ իր կնոջ հետ և հարցրեց.

— Դուք ճանաչո՞ւմ եք Թախտաճյանին:

— Այո՛, — պատասխանեցի ես:

Թախտաճյանը (անունը մոռացել եմ) մի շատ պատկառելի մարդ էր հեղափոխական ոգով տոգորված, (որին չպիտի չփոթել դաշնակցական Թախտաճյանի հետ): Ես նրան հարգում էի:

— Կինս նրա ազգականն է, — շարունակեց Դերժիմորդան, ուզում է նրան տեսնել, չգիտե՞մ արդյոք նրա հասցեն:

— Ոչ, բայց նա ամեն երեկո գալիս է սրճարան, գուցե այսօր էլ գա, սպասեցեք, եթե կարող եք:

— Դժբախտաբար ժամանակ չունեինք, եթե գա, բարի եղեք նրա հասցեն հարցնելու: Մենք վաղը դարձյալ կգանք: Թույլ տվեք ծանոթանալ. Քութախի զինվորական հահանգապետ Սլավոչինսկի...Յտեսությո՛ւն:

Ես այդ տխրահռչակ ժեներալի դաժանությունների մասին շատ բան էի լսել վրացի ուսանողներից: Քութախի ամբողջ ազգաբնակչությունը սարսափով և զզվանքով էր խոսում այդ գազրելի սատրապի մասին: Հետևյալ երեկո նա եկավ: Ես դեռ չէի հանդիպել Թախտաճյանին:

— Ափսոս, — ասաց հահանգապետը, — գուցե վաղը գա, գիտեք, մենք շատ կարևոր գործ ունենք նրա հետ, ասացեք իրան, բայց մենք մի անգամ էլ կգանք: Հուսով եմ իմ ազգանունը հիշում եք:

— Ինչպես չէ, ձեր ազգանունն է Սվոլոչինսկիյ, — ասացի ես, դիտմամբ աղավաղելով նրա անունը:

Մարդը ցնցվեց, նայեց ինձ ոտից մինչև գլուխ կատաղի հայացքով, բայց ոչինչ չասաց: Հետևյալ օրը նա չեկավ, և ես այլևս չհանդիպեցի նրան:

— Դուք նրան իր իսկական անունն եք տվել, — ասացին վրացի ուսանողները, երբ դեպքը պատմեցի նրանց:

Նրանք չորս հոգի էին, չորսն էլ «գաղափարական» վարժուհիներ, չորսն էլ սևահեր, գրեթե սևամորթ, չորսն էլ պատկառելի տարիքով, թեև տակավին օրիորդներ: «Իրարու նմանները միանում են», — ասում են ֆրանսիացիք և զուր չեն ասում: Ինչու էին Փարիզ եկել — չհարցրի, համենայն դեպս համաշխարհային ցուցահանդեսի ապրանք չէին: Գուցե եկել էին իրանց ճաշակը նրբացնելու, երևի Փարիզի կյանքից այնման հուզումնալի ռոմաններ կլանելուց հետո: Եվ նրբացնում էին, ագահությամբ յուրացնելով բուլվարային հյուրիների ազատ ձևերն ու շարժումները: Այս տեսակետից առանձին ջանք և ընդունակություն էր ցույց տալիս ամենից կրտսերը, նա, որ կլիներ մոտ ֆառասուն տարեկան: Սրճարանի տերբասում նստելով մի աթոռի վրա, նա մինչև ծնկները բաց ոտները ցցում էր մի ուրիշ աթոռի վրա, կոթնում էր մի երրորդին և բարձրածայն էրէջում էր առանց որևէ պատճառի: Մյուսները չէին ֆռվում պրոֆեսոր Միխայել Թամամշյանի և իմ ներկայությամբ պատմել ցինիկ անեկդոտներ: Այդ ի՞նչ էր, Փարիզն էր նրանց խելագարեցրել, թե հենց խելագար էլ եկել էին:

Ես զայրանում էի, զայրանում էր նամանավանդ դյուրագրգիռ Թամամշյանը, չնայելով, որ մեր կյանքում նման և ավելի զմայլելի բաներ էինք տեսել ու լսել: Բայց ոչ ես և ոչ էլ նա չէինք արտահայտում մեր զայրույթը, հարգելով չորս վարժուհիների պատկառելի կոչումը: Վերջապես, մի անգամ պրոֆեսորը, չկարողանալով այլևս իրան զսպել, ասաց.

— Հարգելի մանկավարժուհիներ, Փարիզը մարդկային լավագույն և վատագույն բարբերի խառնուրդն է, աշխատեցեք այս բառից չտանել այն անպետ ապրանքը, որը վաղը ձեր հայրենիքում ամոթով դեն պիտի շպրտեք...

Բարեբախտաբար չորս վարժուհիները շուտ ավարտեցին իրանց դասընթացքը և շուտով ուղևորվեցին Իտալիա:

Մի օր ինձ մոտ եկավ «Աղբյուր-Տարազի» խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարյանը: Դա ինձ համար անսպասելի չէր. ով մի բանի տարիներ ապրել է Եվրոպայում, անկարելի է, որ մի բանի անգամ հանդիպած չլինի այդ մարդուն, միևնույն է Ֆրանսիայում, թե՛ Շվիցերիայում, Գերմանիայում, թե՛ Իտալիայում:

Ես ճանաչում էի Տիգրան Նազարյանին դեռ այն ժամանակից, երբ նա Թիֆլիսի չեմ մտաբերում որ բանկում վարում էր հաշվապահի պաշտոն, այսինքն ութսունական թվականներից: Այսպես կոչված հայ գրական-հասարակական ասպարեզում ես չեմ ճանաչել մի ուրիշը, որ ունենար այդ մարդու չափ բանիմաց կյանքի սանձը բռնելու ու հեծնելու: Ճշմարիտ է, շատ փոքր էր նրա Պեգասը և ոչ թևավոր, բայց բավական էր նրա միջակությունն ամենուրեք սլացնելու և ամենուրեք հայլեցնելու իր տակր լուսավորությամբ:

Այն ժամանակվա հայ իրականության տեսակետից հետաքրքրությունից զուրկ չէ Տիգրան Նազարյանի խմբագիր-հրատարակիչ դառնալու պատմությունը: Երբ նա ծառայում էր բանկում, երևակայել չէր կարող, թե ինչ պատվի պիտի արժանանա: Մի օր նրա մոտ է գալիս ուսուցիչ Գաբրիել Միրզոյանը, որի մասին գրել եմ իմ ներկա հիշողությունների առաջին մասում, և ասում է.

— Տիգրան Նազարյան, կկամենա՞ք լինել խմբագիր-հրատարակիչ մի մանկական ամսագրի:

Տիգրանը, որ այդ ժամանակ զբաղված էր համարակալով, նայում է Միրզոյանի դեմքին զարմացած:

— Այո՛, խմբագիր-հրատարակիչ, — կրկնում է ուսուցիչը իր հաստ ընչացիցի ու երկայն մորուքի միջից արձակելով մի հեգնական ժպիտ: — Թույլ տվեք բացատրել, ես ու հայտնի մանկավարժ ու մանկական գրող Ղազարոս Աղայանը որոշել ենք մի ամսագիր հրատարակել մանուկների համար: Մենք գիտենք, որ կառավարությունը մեզ հրատարակման իրավունք չի տալ, որովհետև բաղաքական տեսակետից կասկածելի ենք նրա աչքում, ուստի վճռեցինք դիմել ձեզ, համոզված լինելով, որ այդ իրավունքը ձեզ կտրվի: Դուք կլինեք պաշտոնական խմբագիր-հրատարակիչ, իսկ կգրենք ու կխմբագրենք մենք: Համաձա՞յն եք:

Տիգրան Նազարյանը երկար չի մտածում և, համարակալն արհամարհանքով մի կողմ դնելով, պատասխանում է.

— Համաձայն եմ:

Շուտով նա ստանում է հրատարակության իրավունքը և դառնում է խմբագիր-հրատարակիչ «Աղբյուր» ամսագրի: Բայց նա դրանով չի բավականանում: Ի՜նչ մեծ բան է մանուկներին դաստիարակել, ինչո՞ւ չի կարելի հանձն առնել և հասակավորների կրթությունը: Եվ ահա նա սկսում է աշխատել այդ ուղղությամբ և ստանում է «Տարազ» շաբաթաթերթի իրավունքը: Ինչո՞ւ «Տարազ» և ոչ ուրիշ, մի պատշաճ անուն: Որովհետև Տիգրան Նազարյանը խելոք մարդ է, նա գիտե, որ եթե ուրիշ անուն տար շաբաթաթերթին, կառավարությունից թույլտվություն չէր ստանալ: Տարազ կնշանակե հագուստի ձև, ու թերթը պիտի լինի կար ու ձևի ուղեցույց — Журнал для мод կամ Модный журнал, մի անմեղ բան, որ կապ չունի գրականության, հրապարակախոսության, մանավանդ բաղաքականության հետ: Արդարև, «Տարազ»-ի առաջին համարները լույս են տեսնում զանազան կանացի զգեստների, գլխարկների և մանեկեհների նկարներով: Դժբախտաբար, հրապարակախոս հռչակվելու փափագը մի անգամ առ միշտ թունավորել է Տիգրան Նազարյանին: Ճշմարիտ է, նրա երկու պարբերականները միասին վերցրած հարյուր բաժանորդ չունեն, բայց փաստը մնում է փաստ, Տիգրան Նազարյանը խմբագիր-հրատարակիչ է: Մի բանի գովասանական հոդվածներով և ակնարկներով նա կարողանում է գրավել Գրիգոր Արծրունու բարեկամությունը, և «Մշակ»-ը նրան վերցնում է իր թևերի տակ:

Շուտով Գաբրիել Միրզոյանը Տիգրան Նազարյանի համար դառնում է ձանձրալի: Նա կարողանում է ազատվել այդ հավակնոտ մարդու ընկերությունից, իսկ Ղազարոս Աղայանի հետ շարունակում է իր բարեկամությունը:

Մեռնում է Գրիգոր Արծրունին, նրա ժառանգները գժտվում են Տիգրան Նազարյանի հետ, խեղճ մարդը զրկվում է «Մշակ»-ի հովանավորությունից: Բայց Տիգրան Նազարյանն այն մարդկանցից չի, որոնք այդպիսի չնչին բաներից հուսալքվում են: Նա ունի զարմանալի ընդունակություն ծաղրի, անարգանքի և կոպտությունների դեմ մաքառելու, ոչ այնքան գրչով, որքան լռությամբ և համբերությամբ: Նրա գրիչը ուժ չունի, նա նույնիսկ գրել էլ չգիտե, չեմ ասում

տաղանդավոր կամ սրամիտ, այլ առանց բերականական սխալների: Այդ մասին նա չի հոգում և չհոգաց մինչև իր կյանքի վերջը:

— Այս անգամ ի՞նչ միսսիայով եմ Եվրոպա եկել, — հարցրի ես Տիգրան Նազարյանին, վասնզի նա տարեները երկու-երեք անգամ վազում էր Եվրոպա միշտ մի որևէ առաքելությամբ:

Նա գրպանից դուրս բերեց շեղ թղթի վրա տպված մի հրավիրագիր և ցույց տվեց ինձ հպարտությամբ: Դա ինձ համար նորություն չէր, նման հրավիրագրերեր Տիգրան Նազարյանն իր ծոցում ուներ տասնյակներով, որովհետև եվրոպական ոչ մի երկրում չէր մոռացել մտնել պարբերական մամուլի բյուրոները և թողնել այնտեղ «Աղբյուր-Տարազի» խմբագրության հասցեն: Նա ասում էր.

— Ես միակն եմ հայ խմբագիրների մեջ, որ պատիվ ունիմ հրավիրվելու համաշխարհային կոնգրեսներին:

Եվ ճիշտ էր ասում: Մի բան նա համառորեն թաքցնում էր, նույնիսկ իր մերձավոր բարեկամներից, այն, թե ինչ նյութական միջոցներով է տարեները տասներկու ամիս Եվրոպայում ճամփորդում այն ժամանակ, երբ «Աղբյուր-Տարազ»-ի խմբագրությունը հավիտենական նյութական կարիքի մեջ էր և իր օձիքը չէր կարողանում ազատել գրաբարներից: Մի անգամ ես փորձեցի նրան այդ հարցը տալ: Նա ինձ պատասխանեց.

— Տեսնո՞ւմ եմ այս փողկապը, Մարսելումն եմ գնել վաթսուն սանտիմով:

Թշնամիները ասում էին, թե նա զբաղվում է գաղտնի սպեկուլյացիայով, թե նա այս է անում, այն է անում: Ես նկատել եմ Տիգրան Նազարյանի մեջ վաճառականի ձիրք ու ձգտում, բայց չունիմ ոչ մի փաստ նրա վաճառականության կամ սպեկուլյացիայի:

Հայ մամուլի ասպարեզում մի փոքրիկ միավոր էր Տիգրան Նազարյանը, նա չուներ ձիրք ոչ հրապարակախոսի, ոչ ֆելիետոնիստի, ոչ բրոնիկյորի, բայց եռանդուն էր, անսահման եռանդուն, բարեսիրտ և միշտ պատրաստ հասարակական գործերում այս կամ այն կերպ օգտակար լինելու, մանավանդ ազետների ժամանակ: Հիշում եմ, ինչպես նա պատերազմի տարիներին ջերմաչափը կոնատակին դրած, վազվզում էր դեսուդեն, դրամ հանգանակում, մթերք ժողովում գաղթականներին ճաշ ու թեյ մատակարարելու կամ ինչպես ինքն էր ասում՝ «հրատապ օգնություն մատուցանելու»:

ՆԿԱՐՉՈՒՀԻՆ: ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ: ՎԵՐԱԴԱՐՁ

Ես նրան հանդիպեցի Ջվիցերիայում: Նա եկել էր իր հոր հետ Լիոն քաղաքից և տեղավորվել նույն պանսիոնում, ուր մենք սովորաբար իջևանում էինք:

Շուտով իմացա, որ ծերունին ջութակագործ է և Լիոնում ունե մի մեծ արհեստանոց մի բանի տասնյակ վարպետներով, իսկ աղջիկը նկարչուհի: Այդ վերջինը ես իմացա հենց առաջին նախաճաշի ժամանակ, երբ նա, ուտելը թողած, իր albomում շտապ-շտապ նկարեց Մարգարտի գլուխը: Դա բավական բարձրահասակ, նրբակազմ, սիրուն մի աղջիկ էր: Առանձնապես գրավիչ էին նրա մեղմ ձևերը, մելոդիկ ձայնը և մանավանդ փղոսկրեգույն կանոնավոր ատամները, որ սրա ժպիտներին տալիս էին մի բացառիկ հրապույր:

Կարո՞ղ էի մի այդպիսի էակով չհետաքրքրվել, որքան ևս ուղեղս ու սիրտս գրավված լինեին անբուժելի հայրական վշտով: Ե՞ս, որ առհասարակ այնքան դյուրազգաց և, չեմ ամաչում ասել, թուլամորթ էի կանանց վերաբերմամբ: Ե՞ս, որի որոնող տեսողությունը գրեթե վիրավորված էր ամեն օր հանդիպելով գվիցերուհիներին, զմայլելի երկրի այդ ոչ զմայլելի կանանց: Արդարև, ինչո՞ւ այդքան տգեղ են գվիցերուհիները:

Մի օր ճաշի միջոցին նա ինձ հարցրեց.

— Դուք նկարի՞չ եք:

— Ո՛չ, օրիորդ:

— Գուցե երաժիշտ եք:

— Ներեցեք, օրիորդ, ես միայն երաժշտության երկրպագու եմ:

— Բայց անկարելի է, որ դուք չունենաք առնչություն այս կամ այն արվեստի հետ:

— Դուք չեք սխալվում, — միջամտեց կինս իր սեռին հատուկ անհամբերությամբ, ամուսինս բելետրիստ է:

— Ա՜հ՜, տեսա՞ք ինչպես գուշակեցի, — գոչեց օրիորդը, ուրախանալով, որ մասամբ չէր սխալվել: — Ի՞նչ լեզվով եք գրում:

— Հայերեն լեզվով:

— Դժբախտաբար ես այդ լեզուն չգիտեմ: Բայց ես հայերի մասին շատ եմ լսել և կարդացել:

— Ցանկալի է գիտենալ — ի՞նչ եք լսել կամ կարդացել, — հետաքրքրվեց կինս:

— Օ՜օ՜, տիկի՛ն, շատ տխուր բաներ: Դուք շատ դժբախտ ազգ եք, ձեզ շարունակ հալածում են ու կոտորում Թուրքիայում:

— Ինչպես հրեաներին Ռուսիայում, — ավելացրեց օրիորդի հայրը:

Ես լռեցի: Ինձ համար առհասարակ այդ ուղղությամբ օտարների հետ խոսելը վերին աստիճանի անախորժ, նույնիսկ վիրավորական էր: Թվում էր ինձ, որ ես նրանց աչքում նսեմանում եմ, ոչնչանում: Իմ ազգի խեղճությունն ես իմն էի համարում և կաբեկցության դեմ ավելի էի վրդովվում, քան ատելության և վիրավորանքի դեմ:

Երևի նրբազգաց ֆրանսուհին գուշակեց իմ դժկամությունը: Նա շտապեց խոսակցության նյութը փոխել.

— Արդյոք ձեր երկերը ֆրանսերեն թարգմանվա՞ծ են, — հարցրեց նա:

— Մի քանիսը, այո՛:

— Ես կկամենայի կարդալ: Ես առհասարակ սիրում եմ կարդալ արևելյան ազգերի գրականությունը: Բարի եղեք ինձ տալու ձեր երկերի հրատարակչի հասցեն:

— Կարիք չկա, օրիո՛րդ, ես ինքս կտամ ձեզ իմ գործերից մի երկուսը:

— Ավելի լավ, տվե՛ք…

Բախտի բերմամբ հետս վերցրել էի «Ջար ոգին» Աբշակ Զոպանյանի և «Արտիստ»-ը ու «Ցաթման և Ասադը» Սերժ դ՛Էրմինիի թարգմանությամբ: Նույն երեկո իսկ այդ գործերը տվեցի օրիորդին:

Հետևյալ օրը նա ասաց.

— Գիտեք, պարոն, ձեր շնորհիվ ես գիշերը լուսացրի անքուն:

— Բայց, օրիորդ…

— Այո՛, ձեր շնորհիվ: Ես ձեր գործերը կարդացի միահգամից, անընդհատ: Կարծում եմ, դրանից ավելի մեծ կոմպլիմենտ չի կարելի անել մի հեղինակի:

— Խորապես զգացված եմ, օրիո՛րդ, — ասացի ես, իրավ զգացված: — Ձեր կարծիքն ինձ համար շատ թանկ է:

— Գիտեմ, ես առանձնապես հավանեցի «Արտիստ»-ը: Շատ համակրելի է ձեր Լևոնը:

Հետևյալ օրն օրիորդը դարձավ ինձ.

— Ես մի խնդիր ունեմ ձեզնից:

— Հրամայեցե՛ք, օրիորդ:

— Թույլ տվեք ձեր պատկերը նկարել յուղաներկով: Ես վաղուց էի ուզում խնդրել ձեզ այդ մասին: Ուրեմն համաձա՞յն եք, — շտապեց ավելացնել օրիորդը, օգտվելով իմ լռությունից:

Անշուշտ նա զգաց, որ ես ուրախ եմ իր առաջարկությանը: Բայց ինձ համար հետաքրքրականն այնքան նրա գործը չէր, որքան անձնավորությունը: Ես ուրախ էի, որ առիթ պիտի ունենամ մի քանի օր ժամերով լսելու նրա մելոդիկ ձայնը: Բացի դրանից, ինչո՞ւ թաքցնել, իմ մեջ շոյված էր տղամարդու անխուսափելի փափագը՝ դուր գալ կնոջը: Մի փափագ, որից զերծ չէ ոչ մի մահկանացու և ոչ մի հասակում, որքան էլ փարիսեցիները հակառակը պնդեն...

— Ո՞րտեղ եք մտադիր աշխատելու, օրիո՛րդ, — հարցրի ես:

— Իմ սենյակում, իհարկե, եթե բարեհաճեք նեղություն կրել բարձրանալու: Դուրսը, պարտիզում կամ ագարակում անցորդները ինձ խանգարում են աշխատելու, մանավանդ երեխաները, նրանք միշտ շրջապատում են ինձ, երբ ես նկարում եմ:

Հետևյալ օրը որոշված ժամին գնացի նրա սենյակը, որ մի հարկով բարձր էր իմնից: Նա արդեն ամեն ինչ պատրաստել էր և վրձինը ձեռին ինձ էր սպասում: Հակառակ իմ սպասածին՝ մենակ չէր, ներկա էր և նրա հայրը: Ես մոռացել էի, որ այդ մոտ վաթսուն տարեկան կայտառ ծերունին առհասարակ անբաժան էր իր աղջկանից և ամենուրեք հետևում էր նրան, նույնիսկ նկարելու ժամանակ: Ինձ դուր չէր գալիս այդ մարդն իր խոժոռած դեմքով և պարզ ակնոցի տակից նայող սուր և անդուրեկան աչքերով: Նա իմ բարևին ընդունեց ֆրանսիացուն հատուկ բազմավարությամբ, բայց ոչ նույն ֆրանսիացուն հատուկ սիրալիրությամբ: Ես ուշադրություն չդարձրի դրա վրա: Ի՞նձ ինչ, թող ինչքան ուզում է մնա, եթե նրա աղջիկն այդ կամենում է: Բայց շուտով նկատեցի, որ նկարչուհին մի տեսակ նեղվում է և շատ էլ հանգիստ չի աշխատում: Արդարև, դժվար էր նրա համար չնեղվայնանալ, երբ ամեն անգամ երեսը ետ դարձնելիս տեսնում էր ծերունու խոժոռ դեմքը ու նրա սուր աչքերը, ճերմակ ու թանձր հոնքերի տակից:

Շուտով ես ինքս էլ սկսեցի նեղվել: Ծերունին իմ աչքում դարձավ մի տեսակ ռուսական ժանդարմ: Նրա ներկայությունը խանգարում էր ինձ ազատ խոսել ինչի մասին ևս լիներ, թեկուզ նյութը արվեստներին կամ գրականությանը վերաբերվեր:

Այդպես շարունակվեց երեք օր: Օրիորդի աշխատանքն առաջ էր ընթանում շատ դանդաղ: Ես նկատում էի, որ նա ավելի շատ մտածում ու դիտում է, քան նկարում: Երբեմն նա վրձինը ձեռին մոտենում էր լուսամուտին, նայում էր դուրս առանց մի բան արտասանելու: Վերջապես, չորրորդ օրը, հազիվ գործը վերսկսած, մի կողմ նետեց վրձինն ու ասաց.

— Ներեցե՛ք, պարո՛ն, այսօր ես ինձ վատ եմ զգում, աշխատել չեմ կարող:

— Հետաձգի՛ր վաղվան, Ժաննետ, հետաձգի՛ր վաղվան, — արտասանեց ծերունին, մի ծուռ հայացք ձգելով ինձ վրա:

Նրա ձայնն ինձ թվաց այնքան անախորժ ու գրգռեցուցիչ, որքան երաժշտական ու ախորժալուր էր նրա աղջկա ձայնը:

Ես ոտքի ելա և դուրս գնացի:

Հետևյալ օրն եկա դրականապես վճռած՝ հրաժարվել նկարվելուց: Այս անգամ ծերունին չկար:

— Օրիո՛րդ, — ասացի ես ամենայն հանգստությամբ, — երեկ ես նկատեցի, որ դուք դժվարանում եք աշխատել: Անկասկած, այսուժեն ձեզ չի տրամադրում, եկեք թողնենք այդ գործը և...

— Ուրեմն դուք չե՞ք հավանում իմ գործը, — ընդհատեց խոսքս նկարչուհին վշտացած, — բայց դուք դեռ չեք տեսել ձեր պատկերը, իսկ ես դեռ շատ պիտի աշխատեմ նրա վրա: Հուսով եմ, որ իմ գործը չի ձախողիլ:

— Ներեցե՛ք, օրիո՛րդ, ես այդ չէի ուզում ասել: Խոսքս ձեր հոր մասին է: Նա ձեզ խանգարում է աշխատել, ես զգում եմ ձեր նեղսրտումը...

— Հասկանում եմ, պարո՛ն, — արտասանեց օրիորդը հեգնական ժպիտով: — Երեկ ես նկատեցի, որ իմ հոր ներկայությունը որքան ինձ, նույնքան էլ ձեզ է ներվայնացնում: Անշուշտ դուք էլ ինձ նման չգիտեք թաքցնել ձեր տրամադրությունը ինչպես արտիստ: Ես խոսեցի հորս հետ: Այսուհետև նա ինձ չի խանգարիլ: Բարի եղեք նստելու ձեր տեղը, ես շարունակում եմ...

Եվ, իրավ, ծերունին այլևս չէր գալիս: Ես նրան տեսնում էի միայն նախաճաշի ու ճաշի միջոցներին: Արտաքինից չէր երևում, որ նա բարկացած լիներ իմ կամ իր աղջկա դեմ:

Նրա բացակայության երկրորդ օրն իսկ բացվեց օրիորդի կաշկանդված լեզուն: Առանց նեղվելու նա սկսեց զանգատվել իր հոր դեմ անսպասելի դառը խոսքերով: Պարզվեց, որ այդ մարդը որպես հայր դաժանության չափ մանրակրկիտ ու խստապահանջ է: Ինքը լինելով անաղարտ կաթոլիկ, աշխատել էր իր երկու աղջիկներին կրթել իր հոգով: Նա նրանց մանուկ հասակից տվել է եզուիտական դպրոց, այնտեղ ուսանելու ու կրթվելու մեհաստանի հովանավորությամբ:

— Մայրս հակառակ է եղել, կամենալով, որ մենք կրթվենք աշխարհային դպրոցում, բայց, ավա՜ղ, անողորմ մահը շատ կանուխ է մեզ զրկել նրա պաշտպանությունից: Ինձ թվում է նույնիսկ, որ նրա վաղաժամ մահվան պատճառը հայրս է եղել: Եվ դա մեկն է այն պատճառներից, որոնք ինձ խանգարում են սիրել նրան այնպես, ինչպես յուրաքանչյուր զավակ պարտավոր է սիրել իր հորը: Ավելին կասեմ, ես միևնույն անգամ չեմ կարողանում նրան հարգել բավականաչափ: Ա՜հ, մի մեղադրեք ինձ, որ այսպես եմ խոսում, անշուշտ դուք գիտեք ինչ ասել է արտիստ. նա երբեք չգիտե իր լեզուն կաշկանդել ինչ-որ ավանդություններով ու նախապաշարումներով: Ի՜նչ փույթ, որ նա իմ հայրն է, ես չեմ կարող կեղծել... Պարո՛ն, այժմ ես բանուոր տարեկան եմ, — շարունակեց օրիորդը մի բիչ լռելուց հետո, — դուք կարող եք զարմանալ, որ դեռ չեմ ամուսնացել: Իհարկե, յուրաքանչյուր օրիորդի վերջնական նպատակը է այս կամ այն կերպ իր կյանքը կապել որևէ մեկի հետ: Բայց ես չեմ ուզում իմ ազատությունը շղթայել այնպես, ինչպես մեծ հույսս: Խե՜ղճ Էլիզ, նա այժմ դառնագին զղջում է, որ, ենթարկվելով իր հոր ցանկությանն ու թախանձանքին, ամուսնացավ մի չսիրած մարդու հետ: Մի մարդու, որ այսօր անամոթաբար դավաճանում է նրան...

— Ինչպես ամեն մի տղամարդ իր կնոջը, — չկարողացա զսպել ինձ:

— Այո՛, այո՛, իրավացի եք ամեն մի տղամարդ, — գոչեց օրիորդը հուզված, — գուցե և ամեն մի կին՝ իր ամուսնուն: Բայց իմ վրդովմունքը դրա դեմ չէ, այլ ուրիշ բանի: Երբ կինը խաբվում է իր ամուսնուց իր սխալ ընտրության պատճառով, դրությունն այնքան ողբալի չէ, որքան այն ժամանակ, երբ նա կրում է ուրիշի, թեկուզ իր հարազատ ծնողի, մեղքի պատիժը: Բայց թողնենք էրոջս: Նրա դրությունն անուղղելի է, քանի որ արդեն երկու զավակների մայր է: Բայց ե՞ս, ես չեմ ուզում նրա ճամփով գնալ: Ես արտիստ եմ, գուցե թույլ ձիրքով կամ բոլորովին անձիրք, բայց հոգով ու սրտով անվիճելի արտիստ: Ես ատում եմ բուրժուական տափակ կյանքը և նրա բոլոր կանոնները: Ես կարող եմ սիրել միայն արտիստին ինչ արվեստի ևս ծառայի նա: Ահա այս բանն է, որ հայրս չի հասկանում, թեև նրա գործն արտիստների հետ է: Նա երևակայում է, թե իրան է միայն տրված իմ բախտի մասին մտածելու պարտքը...

Եվ, օրիորդը, ավելի ու ավելի զգացվելով, շարունակեց,

— Պարո՛ն, մի զարմանաք, որ ես հանկարծ վճռեցի բանալ իմ հոգին ձեր առջև: Չգիտեմ ինչու մեր ծանոթության առաջին իսկ օրից դուք ինձ հավատ ներշնչեցիք, իսկ երբ կարդացի ձեր «Արտիստ»-ը, մտածեցի՝ ահա մեկը, որի հետ

կարող եմ խոսել պարզ, համարձակ և անկեղծ: Բացի այդ, պարո՛ն, դուք օտարազգի եք, ես համոզված եմ, որ իմ խոստովանությունը չեք տարածիլ այստեղ, կտանեք ձեզ հետ ձեր հեռավոր հայրենիքը: Գիտեմ, պարո՛ն, ես լսել ու կարդացել եմ, որ օտարազգիները այն գաղափարն ունեն ֆրանսիացի կնոջ մասին, թե նա գործնական է, միևչև անգամ շահամոլ, թե նա սիրում է միայն հարստությունը, դիրքը, տիտղոսը, թե նրա համար մի գեղեցիկ վիլլա Դովիլում կամ Նիցցայում ավելի մեծ արժեք ունի, քան մարդը, նրա հոգին, նրա խելքը, սիրտը, սերը: Չգիտեմ, գուցե Փարիզի կանայք այդպես են, բայց մենք գավառացիներս դեռ ապրում ենք ռոմանտիկ երազներով: Լավ է այս թե վատ, չեմ ուզում այդ մասին մտածել, բայց դրա հակառակը խորթ է իմ հոգուն, իմ ձգտումներին, իմ ճաշակին: Պարո՛ն, ահա երեք տարի է, որ ինձ հետամուտ է մի հարուստ ֆաբրիկանտ, որի ինքնահավան կերպարանքն ինձ ուղղակի հողկանք է ներշնչում: Հայրս ինձ շարունակ համոզում է, որ ես համձայնվեմ այդ մարդու հետ ամուսնանալ, նա միևչև անգամ սպառնում է զրկել ինձ իմ օժիտից և դուրս վռնդել իր տնից, եթե չհամձայնվեմ: Իհարկե, ես մտածում եմ նրա դեմ, բայց խոստովանվում եմ, հոգնել եմ, շատ եմ հոգնել, ուժերս դավաճանում են ինձ: Այժմ ես սարսափով եմ մտաբերում, որ շուտով պիտի վերադառնամ Լիոն: Չգիտեմ ինչ պիտի պատահի ինձ...

Արտասանելով վերջին խոսքերը, Ժաննետը վրձինը ձեռից բաց թողեց, վազեց դեպի իր անկողնակալը, որ դրված էր սենյակի խորքում, գլուխը դրեց բարձի վրա և հեկեկաց...

Մի պահ ես մնացի լուռ և անշարժ: Չգիտեի ինչ անել կամ ինչ ասել, ինչ խոսքով հանգստացնել հուզված աղջկան: Որքան անակնկալ, նույնքան և թանկ էր ինձ համար նրա խոստովանությունը: Համակրանք, կարեկցություն, սեր դեպի նա, ատելություն դեպի ծերունին, ամեն ինչ խառնվել ու շփոթվել էր իմ հոգու մեջ: Մի բան պարզ և աներկբայելի էր ինձ համար — օրիորդի անկեղծությունը: Չկար նրա խոստովանության մեջ կոկետության կամ ցուցականության ոչ մի նշույլ, նա խոսում էր արտիստի տառապող հոգու թելադրությամբ: Այդ վայրկյաններին նա մի տեսակ Լևոն էր իմ աչքում, «Արտիստ»-ի Լևոնը: Ես ուրախ էի, հպարտ, որ այդքան հավատ էի ներշնչել այդ օտարազգի աղջկան: Այդ հավատն ինձ համար բյուր անգամ ավելի թանկ էր, քան եթե նա փաթաթվեր իմ պարանոցին և իր սերն արտահայտեր: Ահա ինչու այդ պահին ես խոսք տվեցի ինձ՝ երբեք չխախտել նրա մեջ այդ հավատը:

Վերջապես, ես ուշիս ժողովեցի, մոտեցա նրան, թույլ տվեցի ինձ գրկել նրա գեղեցիկ գլուխը և համբուրել: Նա ինձ չընդհմտրեց, ընդհակառակն ամուր սեղմեց իմ ձեռը բուռն բարեկամական երախտագիտությամբ:

Այդ օրից մենք տեսնվում էինք ավելի հաճախ: Ճաշից հետո, երեկոները, երբ ծերունին պառկում էր ննջելու իր սենյակում, ես գնում էի Ժաննետի սենյակը իր ցանկությամբ, և մինչև ուշ գիշեր զրույց էինք անում արվեստների և գրականության մասին: Նա բավականաչափ կարդացել էր, համենայն դեպս ֆրանսիական հին ու նոր գրականությանը ծանոթացել էր լիովին: Մերթ ընդ մերթ մեր զրույցներն ընդհատվում էին փոխադարձ համբույրներով, որոնք իմ խղճի վրա ոչ մի արատ չեն թողել, վասնզի մաքուր էին, և այսօր ես այդ զմայլելի երեկոները մտաբերում եմ մի տեսակ հաճելի թախիծով, նաև հպարտությամբ: Նրանք իմ անցյալի երազներից մեկն էին, լավագույն երազներից:

Ութ տարի անցած մի բոլորովին տարբեր բովանդակությամբ երկ գրելիս, հանկարծ անդրադարձա այդ երազին: Ընթերցողը, եթե հետաքրքրվում է, թող կարդա «Ալինա» վիպակի վերջին էջը, մնայն վերջինը...

Ժաննետան ավարտեց իմ կերպանկարը և միայն այն ժամանակ թույլ տվեց ինձ նրան նայելու: Չգիտեմ այդ գործը մի ուրիշի աչքում կարող էր ունենալ գեղարվեստական արժեք, բայց չվարանեցի շռայլել իմ գովասանքները, որովհետև գործը Ժաննետինն էր, ուրեմն և անբննադատելի ինձ համար:

— Թույլ տվեք, որ այս պատկերը մնա ինձ մոտ որպես հիշատակ մեր բարեկամության, — ասաց նկարչուհին:

Ի՞նչ կարող էի ասել:

Մի շաբաթ անցած նա իր հոր հետ ուղևորվեց Լիոն, իսկ մենք հետևյալ օրը վերադարձանք Փարիզ: Հրաժեշտի օրը մենք փոխանակեցինք մեր հասցեները և խոստացանք իրարու հետ կանոնավոր թղթակցել:

Ես սպասում էի, որ առաջինը նա լինեի գրողը, վախենալով մի գուցե նա զղջա, որ խոստացել է գրելու: Ես չսխալվեցի, շուտով Լիոնից ստացա մի ընդարձակ նամակ, գրված զարմանալի գրական ոճով: Նամակը տոգորված էր թախիծով և հոռետեսությամբ: Բովանդակությունը նույնն էր-գանգատ հոր դեմ կծու խոսքերով և նկարագրությունն իր հոգեկան տվայտանքների: Նա գրում էր, թե իր առջև տեսնում է միայն երկու ճանապարհ-կամ իր ճակատագիրը ենթարկել ծերունու համառ պահանջին ու ամուսնանալ չսիրած մարդու հետ և կամ ինքնասպանությամբ վերջ տալ իր կյանքին: Ես նրան հիշեցրի մի երրորդ ճանապարհ՝ զգալով հանդերձ, որ նա մյուսներից ոչնչով ավելի դյուրին չէր, այն է՝ բաժանվել հորից և փորձել արվեստի օգնությամբ կամ դասեր տալով պահպանել իր գոյությունը:

Մոտ երեք ամիս շարունակվեց մեր փոխադարձ նամակագրությունն ավելի ու ավելի ջերմ բարեկամական բովանդակությամբ: Վերջապես, ես մի անգամ չստացա իմ նամակի պատասխանն ամբողջ երկու շաբաթ: Մտածեցի միգուցե որևէ մի անզգույշ դարձվածքով վշտացրել կամ վիրավորել եմ նրան: Գրեցի մի նոր նամակ, բացատրություն խնդրեցի, դարձյալ պատասխան չստացա: Այդ արդեն դառն էր և վիրավորական իմ ինքնասիրության համար:

Ի՞նչ էր նշանակում այդ լռությունը:

Գաղտնիքը պարզվեց հաջորդ ամառը Ջվիցերիայում:

Վերջին ձմեռն էինք անցկացնում Փարիզում: Ջանազան հանգամանքներ, առաջին հերթին, իհարկե, նյութական պակասությունը, թույլ չէին տալիս նորեն հետածգելու մեր վերադարձը Կովկաս: Բացի դրանից, բժիշկները խորհուրդ էին տալիս Արմենին հեռացնել Փարիզից:

Նրանք ասում էին.

— Գուցե հայրենի միջավայրը բարերար ազդեցություն ունենա նրա վրա:

Ես այդ հույսը չունեի, բայց ճիշտ է, որ ասում են, թե ծովում խեղդվողը օձին էլ է փաթաթվում:

Մի օր «Մշակ» լրագրում կարդացի իմ երեսնամյա գրական գործունեության մասին մի հոդված, որտեղ հիշում եմ, Ալեքսանդր Աբելյանի ստորագրությամբ: Հեղինակն առաջարկում էր հասարակությանը՝ տոնել իմ հոբելյանը: «Մշակ»-ը թերևսբար չէր վերաբերվել առաջարկին: Դա անսպասելի էր ինձ համար, աչքի առջև ունենալով, որ դեռ Արծրունու օրերից այդ լրագիրը բարեկամական զգացմունքներ չէր ունեցել իմ վերաբերմամբ:

Ինձ համար այդ ուշադրությունը, իհարկե, ուներ որոշ արժեք, բայց լավ գիտենալով, թե ինչ ողորմելի բան է հայ գրողի հոբելյանը այն ժամանակվա մթնոլորտում և հիշելով ռուս հայտնի բելետրիստ Գլեբ Ուսպենսկու սրամիտ խոսքը՝ юбилей, это мавзолей, ես պատրաստ էի հրապարակորեն հրաժարվել հոբելյարի պատվից. և կհրաժարվեի, եթե համոզված լինեի, որ իմ համեստությունը կհամարվի անկեղծ: Բացի դրանից, չէ՞ որ հիվանդ որդուս խնամելը որոշ նյութական զոհաբերություն էր պահանջում ինձնից… Ես բարվոք համարեցի լռել և թողնել, որ գործն ընթանա իր բնական ճամփով, առանց իմ միջամտության:

Հրաժեշտիս առիթով Փարիզի հայ մտավորականների մի խումբ ինձ պատվեց մի ճաշկերույթով, չեմ հիշում որ հյուրանոցում:

Ես աշխատում էի վերջին ամիսները Փարիզում անցկացնել հնարավորին չափ օգտավետ: Ի՞նչ կարող էր լինել ավելի իմաստալի, քան թանգարաններում թափառելը: Օր չէր անցնում, որ ես չայցելեի նրանցից որևէ մեկը: Այդտեղ, արտաքին աշխարհից կտրված, իմ հայրական անբուժելի վիշտը մի տեսակ սփոփանք էր գտնում, և ես կարողանում էի գեթ ժամանակավորապես հաղթահարել իմ հոգու կսկիծը իմ մտքի լարված գործողությամբ:

Որոշեցինք նախքան Կովկաս ուղևորվելը մի անգամ ևս գնալ Ջվիցերիա, և ահա հաջորդ ամառվա կեսին դարձյալ կանտոն Դը-Վոմն էինք և նույն պանսիոնում: Ես հույս ունեի այնտեղ հանդիպելու իմ նկարչուհուն, ինձ մեծ մտահոգություն էր պատճառել նրա լռությունը: Մի օր, վերջապես, եկավ նրա հայրը, բայց ավա՜ղ, ժանեետը չկար,

նրա փոխարեն ծերունին բերել էր իր մեծ աղջկան, երկու թոռնիկների հետ: Իմ խորին անհանգստությունը ողարկելով ծանոթի սովորական հետաքրքրությամբ, հարցրի.

— Իսկ օրիորդ Ժաննե՞տը: Նա չի՞ գալու:

— Օրիորդ ժաննետն այժմ տիկին Բլոնդել է, — պատասխանեց ծերունին երջանիկ ծնողի ժպիտով:

— Ուրե՛մն… — արտասանեցի ես մեխեհաբար և կանգ առա, զգալով իմ հարցի մանկական անիմաստությունը:

— Այո՛, ամուսնացավ, — շեշտեց ծերունին, — կարող եմ ինձ շնորհավորել:

— Իհարկե, ամբողջ հոգով: Բայց ո՞վ և ի՞նչ գործի մարդ է ամուսինը:

— Լիոնի խոշոր ֆաբրիկանտներից մեկը: Նրա գործարանում հազարից ավելի բանվորներ են աշխատում:

Երջանիկ հայրն ինձ ծանոթացրեց իր ավագ դստեր հետ, որ ոչ մի նմանություն չուներ Ժաննետի հետ: Ես կկամենայի նրա հետ խոսել Ժաննետի մասին, բայց ճիշտ այդ օրը պատահեց մի անախորժ դեպք: Ահա նա, —

Մեր պանսիոնի բարի տիրուհին սովորություն ուներ կիրակի և տոն օրերին մեզ հյուրասիրել սովորականից ճաշից դուրս որևէ հավելվածով: Այս անգամ նա Ժնևից թե Լիոնից բերել էր մի անուշ խմորեղեն— մի տեսակ կարկանդակ: Հետևյալ առավոտ լույսը չբացված, պանսիոնում սկսվեց մի անսովոր աղմուկ և իրարանցում: Ենթադրելով, որ հրդեհ է ծագել, ես շտապեցի մերոնց արթնացնել և շուտով հագնվել: Կինս դուրս վազեց և, իսկույն վերադառնալով, ասաց՝

— Ասում են ամբողջ պանսիոնը թունավորվել է:

— Եվ ես, — արտասանեցի ես, նույն վայրկյանին սիրտս խառնվեց, գլուխս պտտվեց ու թուլացած ընկա անկողնակալիս վրա:

Անմիջապես հեռախոսվեց ժնև: Մի ժամ չանցած այնտեղից եկավ շրջանի բժիշկն անհրաժեշտ դեղերով, հետո էլ մի կաթոլիկ քահանա: Պարզվեց, որ թունավորումն առաջացել է երեկվա կարկանդակից, որովհետև թունավորվել էին նրանք, որ կերել էին այդ խմորեղենից: Թունավորվածների մեջ էր և մի երիտասարդ հայ վարդապետ՝ Մեսրոպ Մաֆսուդյան անունով: Նա էջմիածնից էր և ժնև եկել էր ինչ-որ ուսանելու: Նա այնքան վախեցել էր, որ չէր դադարում աղաղակել՝ «Բ՛ժիշկ, բժիշկ, փրկեցե՛ք ինձ, ես մեռնում եմ»: Սակայն այդ օրը նրան մահ չէր վիճակված: Նա ապրեց մի տասը տարի էլ և մեռավ իր հայրենիքում, բոլորովին տարբեր հիվանդությունից: Պանսիոնը դատարկվեց: Բոլորը ցրվեցինք, տանելով իրենց հետ թունավորվածներին: Մնացինք միայն մենք: Բժիշկն ասաց.

— Քիմիական անալիզից պարզվել է, որ թույնը եղել է կարկանդակի ժիլեի մեջ, իսկ առաջացել է նա պղնձի ժանգից:

Ամբողջ մի շաբաթ ես տառապում էի մեջքիս անտանելի ցավերից: Թվում էր ինձ, որ մեկը երկաթե ուղելիճով ողնաշարս դուրս է գջլում: Հետզհետե ցավերը թուլացան, դադարեցին: Ինձ պաշարեց մեռելային թախիծ, կյանքը ինձ համար դարձավ անտանելի: Բայց այդ էլ երկար չտևեց:

Ժնևից ինձ տեսնելու եկան մի խումբ հայ ուսանողներ: Իմ թունավորման լուրը նրանք կարդացել էին Կ. Պոլսի լրագրերում: Ոմանք կարծել էին, որ ես մահամերձ եմ կամ արդեն մահացել եմ: Կարո՞ղ էին զուշակել, թե ես դեռ երկար պիտի ապրեմ:

Մի ամիս բժշկվելուց հետո ես, մեծ որդիս ու աղջիկս (կինս ու հիվանդ որդիս չէին թունավորվել) բոլորովին կազդուրվեցինք և Զվիցերիայից Իտալիայի վրայով ուղևորվեցինք Կովկաս, հինգ տարվա բացակայությունից հետո: